

Սերգեյ Վահանի Առաքելյան

Պետիկ Վահանի Մկրտչյան

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՈՐԱԿՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ



ԵՐԵՎԱՆ  
2020

ՍԵՐԳԵՅ ՎԱՀԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ  
ՊԵՏԻԿ ՎԱՀԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՈՐԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հեղինակներ՝

**Առաքելյան Ս.Վ.** – իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Արդարադատության  
ակադեմիայի ռեկտոր, ԵՊՀ քրեական իրավունքի  
ամբիոնի պրոֆեսոր

**Մկրտչյան Պ.Վ.** – Արդարադատության ակադեմիայի  
գիտահետազոտական և ծրագրամեթոդական  
աշխատանքների կազմակերպման բաժնի ղեկավար

Գրախոսներ՝

**Գաբուզյան Ա.Հ.** – իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քրեական  
իրավունքի ամբիոնի վարիչ

**Մարգարյան Ա.Ռ.** – իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ  
իրավագիտության ֆակուլտետի ղեկանի տեղակալ



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԵՐԵՎԱՆ  
2020

ՀՏԴ 343.9(07)  
ԳՄԴ 67.5g7  
Ա 706

***Երաշխավորվել է հրատարակության Արդարադատության  
ակադեմիայի գիտական խորհրդի կողմից***

Ա 706 **Հանցագործությունների որակման հիմնախնդիրները:  
Մենագրություն / Ս.Առաքելյան, Պ.Մկրտչյան: – Եր.:  
Արդարադատության ակադեմիա, 2020. – 400 էջ:**

Մենագրությունում տեսական աղբյուրների, ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների դատական ակտերի, ինչպես նաև ներպետական և արտասահմանյան երկրների դատական պրակտիկայի այլ նյութերի հիման վրա վերլուծվել են հանցագործությունների որակման հասկացությունը, նշանակությունը, սկզբունքները, փուլերը, կանոնները, հանցագործությունների որակման իրավաբանական հիմքը, քննարկվել են քրեական իրավունքի առանձին ինստիտուտների, մասնավորապես՝ չավարտված հանցավոր գործունեության, հանցագործությունից կամովին հրաժարվելու, հանցագործությունների բազմակիության, եզակի բարդ հանցագործություններից դրանց սահմանազատման, քրեաիրավական նորմերի մրցակցության և հանցակցության որակման նորմատիվ ու դոկտրինալ կանոնները: Վեր են հանվել քրեական իրավունքի առանձին ինստիտուտների իրավադրույթների կիրառման որոշ հիմնախնդիրներ, ներկայացվել են քննարկվող ինստիտուտների հետագա կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

Սույն հրատարակությունը կարող է օգտակար լինել արդարադատության իրականացման գործառնությունում ներգրավված անձանց, Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների, իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների, դասախոսների և քրեական իրավունքի հիմնախնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար:

ISBN 978-9939-9240-4-5

ՀՏԴ 343.9(07)  
ԳՄԴ 67.5g7

© Առաքելյան Ս.Վ., 2020  
© Մկրտչյան Պ.Վ., 2020  
© Արդարադատության ակադեմիա, 2020

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	5
<b>ԳԼՈՒԽ 1. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ.....</b>	<b>8</b>
1.1. Հանցագործությունների որակման հասկացությունը, նշանակությունը, փուլերը, սկզբունքները և կանոնները .....	8
1.2. Հանցակազմը՝ որպես հանցագործությունների որակման իրավաբանական հիմք .....	28
<b>ԳԼՈՒԽ 2. ՉԱՎԱՐՏՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՄՈՎԻՆ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՈՐԱԿՈՒՄԸ .....</b>	<b>36</b>
2.1. Հանցագործությունների ավարտի պահի որոշումը.....	36
2.2. Հանցագործության նախապատրաստության որակումը.....	44
2.3. Հանցագործության փորձի որակումը.....	48
2.4. Հանցագործությունից կամովին հրաժարման որակումը.....	76
2.5. Որակման առանձնահատկությունները սուբյեկտիվ սխալի դեպքում .....	88
<b>ԳԼՈՒԽ 3. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻՈՒԹՅԱՆ ՈՐԱԿՈՒՄԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ ԵԶԱԿԻ ԲԱՐԴ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ .....</b>	<b>112</b>
3.1. Հանցագործությունների բազմակիության որոշումը .....	112
3.2. Հանցագործությունների համակցության որակումը .....	114
3.3. Հանցագործությունների համակցության սահմանազատումը եզակի բարդ հանցագործություններից .....	128

ԳԼՈՒԽ 4. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՈՒՄԸ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ .....	213
4.1 Քրեաիրավական նորմերի մրցակցության հասկացությունը, տեսակները և սահմանազատումը հարակից ինստիտուտներից .....	213
4.2. Քրեաիրավական նորմերի բովանդակային մրցակցություն .....	217
4.3. Քրեաիրավական նորմերի ժամանակային (տեմպորալ) մրցակցություն .....	254
ԳԼՈՒԽ 5. ՀԱՆՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐԱԿՈՒՄԸ.....	276
5.1. Որակումն ըստ հանցակցության ընդհանուր հատկանիշների.....	276
5.2. Հանցակցության սահմանազատումն առնչակցությունից .	294
5.3. Հանցակցի տեսակի որակումը .....	302
5.4. Հանցակցության ձևի որակումը.....	327
5.5. Շարունակվող հանցագործություններում հանցակցության որակման առանձնահատկությունները.....	356
5.6. Հանցակցի սահմանազանցման որակումը .....	358
5.7. Չհաջողված հանցակցության որակումը .....	367
5.8. Հանցակցի կամովին հրաժարման որակումը.....	375
5.9. Հատուկ սուբյեկտով (կատարողով) հանցագործություններում հանցակցության որակումը .....	381

## ՆԱԽԱԲԱՆ

Քրեական օրենքի կիրառման բազմաբովանդակ և բազմաշերտ համակարգում իր ուրույն կարևորությամբ առանձնանում է հանցագործությունների որակումը: Քրեական արդարադատության իրականացման գործառույթում ներգրավված անձինք իրենց գործունեության ընթացքում պարբերաբար բախվում են կատարված արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու խնդրին: Այն ծագում է յուրաքանչյուր քրեական գործի քննության ընթացքում և ուղեկցում քրեական դատավարության բոլոր փուլերը:

Հանցագործությունների որակումը՝ որպես քրեական արդարադատության անկյունաքար, պատկերավոր կերպով, նմանեցվում է հիվանդության ախտորոշմանը: Դրա սխալ իրականացման դեպքում ակնկալվող բացասական արդյունքն անդառնալի կարող է լինել ոչ միայն կոնկրետ անձի, այլև խմբի ու համակարգի համար:

Հատկանշական է, որ ազգային քրեական իրավունքում գործող ՀՀ քրեական օրենսգրքի դրույթների հիման վրա հայերենով շարադրված հանցագործությունների որակման հիմնահարցը լուսաբանող շատ, թե քիչ համապարփակ աշխատությունը 2009թ. հրատարակված Մ.Վ.Գրիգորյանի «Հանցագործությունների որակման գիտական հիմունքները» ուսումնական ձեռնարկն է<sup>1</sup>, որը, կարելի է ասել, հաջողությամբ կատարել է իր առջև դրված խնդիրը, սակայն, այլևս հնացած է:

Արդի շրջանում ՀՀ քրեական օրենսդրությունում կատարված փոփոխությունները, քրեական իրավունքի գիտության զարգացումն ու դատական պրակտիկայի կատարելագործումը նոր պահանջներ են առաջադրում հանցագործությունների որակմանը, ինչն առաջ է բերում հիմնախնդրային նշանակության բարդ և տարաբնույթ հարցեր, որոնք պահանջում են քրեական իրավունքի տեսության ու օրենսդրության ժամանակակից միտումներին համապատասխան հայեցակարգային նոր կառուցակարգերին ու ինստիտուտներին համահունչ լուծումներ:

---

<sup>1</sup> Տե՛ս Գրիգորյան Մ.Վ. Հանցագործությունների որակման գիտական հիմունքները: Ուսումնական ձեռնարկ, Երկրորդ լրացված վերահրատարակություն: Եր.: ՀՌՀ Հրատ., 2009, 358 էջ:

Վերջին ժամանակներում ՀՀ քրեական օրենսդրությունում կատարված բազմաթիվ փոփոխությունները վկայությունն են այն բանի, որ օրինաստեղծ գործունեության մեջ ներգրավված մարմիններն ու պաշտոնատար անձինք քրեաիրավական նորմերի կառուցվածքն ու բովանդակությունը սահմանելիս ոչ միշտ են հաշվի առնում հանցագործությունների որակման նորմատիվ և դոկտրինալ կանոնները: Արդյունքում դժվարանում, երբեմն, նույնիսկ, անհնար է դառնում որակման միասնական կանոնների սահմանման և դրանով պայմանավորված՝ միասնական պրակտիկա ձևավորելու հնարավորությունը:

Միևնույն ժամանակ, հանցագործությունները որակելիս քրեական իրավունքի առանձին ինստիտուտների իրավադրոյթների մեկնաբանման և կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ իրավակիրառողի գիտելիքի պակասը, քրեաիրավական նորմերի կիրառման գիտականորեն հիմնավորված մոտեցումների չիմացությունը, ինչպես նաև քրեական օրենսդրության անկատարությունը երբեմն հանգեցնում են *praeter legem* (ի լրումն օրենքին) կամ *contra legem* (օրենքին հակառակ) իրավակիրառման:

Այսպիսով, վերոգրյալը և քրեական իրավունքի ու դատական պրակտիկայի զարգացումն արդիականացրել են նոր աշխատություն ունենալու անհրաժեշտությունը, որն իր մեջ կամփոփի քրեական իրավունքի առանձին ինստիտուտների որակման ժամանակակից տեսագործնական նշանակության հիմնախնդիրները և դրանց գիտականորեն հիմնավորված լուծումները:

Մենագրությունում տեսական աղբյուրների, ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների դատական ակտերի, ինչպես նաև ներպետական ու արտասահմանյան երկրների դատական պրակտիկայի այլ նյութերի հիման վրա վերլուծվել են հանցագործությունների որակման հասկացությունը, նշանակությունը, սկզբունքները, փոփերը, կանոնները, հանցագործությունների որակման իրավաբանական հիմքը, քննարկվել են քրեական իրավունքի առանձին ինստիտուտների, մասնավորապես՝ չավարտված հանցավոր գործունեության, հանցագործությունից կամովին հրաժարվելու, հանցագործությունների բազմակիության, եզակի բարդ հանցագործություններից դրանց սահմանազատման, քրեաիրավական նորմերի

մրցակցության և հանցակցության որակման նորմատիվ ու դոկտրինայի կանոնները: Վեր են հանվել հանցագործությունները որակելիս քրեական իրավունքի առանձին ինստիտուտների իրավադրույթների կիրառման որոշ հիմնախնդիրներ, ներկայացվել են քննարկվող ինստիտուտների հետագա կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

Մենագրության հիմնական առանցքում հանցագործությունները որակելիս քրեական իրավունքի առանձին ինստիտուտների կիրառման արդի հիմնախնդիրներն են և դրանց լուծմանն ուղղված որակման կանոնների սահմանումը: Հանցակազմերի գիտագործնական մեկնաբանությունը տրվել է՝ ելնելով որակման հիմնախնդիրների դիրքերից:

Մենագրությունում առաջարկվող կանոնները չեն հավակնում բացարձակ ճշմարտություն և վերջնական համարվել: Նպատակը քրեաիրավական որակում իրականացնող սուբյեկտների համար տեսականորեն իմաստավորված ուղղվածությունն ապահովելն է՝ հանցագործությունները որակելիս քրեական իրավունքի առանձին ինստիտուտների իրավադրույթների մեկնաբանման և կիրառման առումով:

Մենագրության հետագա մշակումներում նյութի գիտագործնական արժեքն առավել բարձրացնելու տեսանկյունից ակնկալվում է նաև քրեական արդարադատության իրականացման գործառույթում ներգրավված անձանց և ոլորտի այլ մասնագետների մասնակցությունը՝ վերջիններիս գործունեության ընթացքում ի հայտ եկած որակման հիմնախնդիրները հեղինակներին հասու դարձնելու իմաստով:

Այսպիսով, մենագրության ընդգծված առանձնահատկությունները հիմք են տալիս հուսալու, որ աշխատությունն իր արժանի տեղը կգտնի քրեական իրավունքի գիտագործնական ուղղվածության ներկայիս աշխատանքների կողքին: Աշխատությունը կարող է օգտագործվել ուսումնական գործընթացներում, գիտահետազոտական և իրավակիրառ գործունեության շրջանակներում:



## ԳԼՈՒԽ 1.

### ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

#### 1.1. Հանցագործությունների որակման հասկացությունը, նշանակությունը, փուլերը, սկզբունքները և կանոնները

Պետության քրեական քաղաքականության արդյունավետ իրականացման և քրեաիրավական սկզբունքների անխոչընդոտ իրացման տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի հանցավոր արարքների հստակ և ճշգրիտ որակումը:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»*: Մեջբերված իրավակարգավորումից հետևում է, որ հանցավորին քրեական պատասխանատվության ենթարկելու և վերջինիս պատասխանատվության բովանդակությունն ու ծավալը որոշելու համար անհրաժեշտ է անպայմանորեն պարզել և մատնանշել խախտված քրեաիրավական արգելքը, և այդ արգելքը պարունակող հանցակազմի այն բոլոր հատկանիշները, որոնց համապատասխանում է անձի կատարածը: Այդպիսի նպատակին հասնելը հնարավոր է դառնում հանցագործությունների որակման միջոցով<sup>2</sup>:

Ասվածով պայմանավորված՝ հասարակական հարաբերությունների կապակցությամբ քրեական իրավունքի նորմերի կիրառումն անհնար է՝ առանց կատարված արարքում այն հատկանիշների հավաստման, որոնք նկարագրված են քրեական օրենքում: Այս տրամաբանական ընթացակարգն անվանվում է հանցագործությունների որակում: Ընդ որում, որակման սկզբնական փուլում, երբ դեռևս հայտնի չէ՝ կատարվածն արդյոք հանցագործություն է, թե՛ ոչ, ճիշտ կլիներ օգտագործել ոչ թե հանցագործության, այլ, ընդհանրապես, *արարքի որակում* եզրույթը, որի արդյունքում հետևություն կարվեր

<sup>2</sup> Ст'ю Савельева В.С. Основы квалификации преступлений. М.: Проспект, 2015, էջ 5:

այն քրեական օրենքով արգելվածների շարքը դասելու (կամ դա բացառելու) վերաբերյալ: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով հնարավոր եզրութաբանական շփոթը, այստեղ և հետագայում կօգտագործենք «հանցագործությունների որակում (արարքի քրեաիրավական գնահատական)» հասկացությունը՝ բացահայտելով նաև գործունեության տվյալ տեսակի ճյուղային բովանդակությունը:

Մասնագիտական գրականության մեջ հանցագործությունների որակման հասկացության վերաբերյալ հանդիպում են իրարից տարբերվող, երբեմն իրարամերժ սահմանումներ: Ընդհանուր մոտեցման համաձայն՝ հանցագործությունների որակումը<sup>3</sup> բնորոշվում է որպես տրամաբանական գործընթաց, որի պարագայում քրեական օրենքը կիրառվում է օբյեկտիվ իրականության մեջ տեղի ունեցած հանրորեն վտանգավոր արարքի նկատմամբ: Այսինքն՝ այս գործընթացի արդյունքում տեղի է ունենում իրականության փաստի և քրեական օրենքի հատկանիշների համադրում և դրանց համապատասխանության հավաստում: Այլ կերպ ասած՝ *հանցագործության որակումը կատարված արարքի կազմի (իրավաբանական նշանակություն ունեցող հատկանիշների) և քրեաիրավական նորմով սահմանված հատկանիշների (հանցակազմի) համապատասխանության հաստատումն է:*

Հանցավոր արարքների որակման գործընթացի ֆունդամենտալ հիմքը հանցագործությունների որակման ընդհանուր տեսությունն է, որը կոնկրետանում է հանցագործության առանձին տարրերի, հանցավոր գործունեության զարգացման փուլերի և հանցակցության ձևերի կապակցությամբ:

Միևնույն ժամանակ, քրեական օրենքի կիրառումը հնարավոր է միայն քրեական դատավարությունում սահմանված համապատասխան ընթացակարգի շրջանակներում: Հետևաբար, որակման արդյունքը՝ որպես դրա անխզելի տարր, անպայմանորեն իր ամրագրումն է ստանում դատավարական փաստաթղթերում՝ հղում պարունակելով քրեական օրենքի կոնկրետ հոդվածին (հոդվածի մասին կամ կետին): Ասվածը հստակ արտացոլում է հանցագործություննե-

---

<sup>3</sup> Ռուսերեն՝ «квалификация», անգլերեն՝ «qualification» եզրույթներն առաջացել են լատիներեն «qualificatio» (qualis՝ ինչպիսի, ինչ որակի, և facere՝ անել) բառից:

րի որակման երկու անբաժանելի ասպեկտները՝ *նյութաիրավականը* և *դատավարականը*:

Քրեական օրենքի կիրառման ընթացքում, ասվածով պայմանավորված, հանցագործությունների որակումը կարելի է դիտարկել երկու իմաստով. 1) որպես **գործընթաց**, որի ժամանակ հավաստվում են կատարված արարքում հանցագործության համապատասխան հատկանիշները, և 2) որպես այդ գործընթացի **արդյունք**<sup>4</sup> ՀՀ քր. օր.-ի կոնկրետ հոդվածին (հոդվածի մասին կամ կետին) հղման տեսքով: Դրանց միջև կապող օղակը քրեական մեղադրանքի բանաձևն է, որը ներառում է կատարված արարքի փաստական կողմի և դրան տրված իրավաբանական գնահատականի նկարագիրը: Բացի այդ՝ մեղադրանքը հանցակազմը կոնկրետ հանցագործության հանգամանքների և այն կատարած անձի հետ կապող դատավարական միջոցն է, և այդ պատճառով էլ այն կարելի է դիտարկել որպես հանցակազմի հատկանիշների դատավարական արտահայտություն, որից ածանցյալ է նաև քրեական արդարադատության իրականացման գործառույթը<sup>4</sup>:

Ինչպես նշվեց, հանցագործությունների որակման միջճյուղային բնույթը թույլ չի տալիս իրարից բաժանելու այս հասկացության նյութական և դատավարական ասպեկտները: Հանցագործությունների որակման հիմքում ընկած են արարքի իրավաբանական հատկությունները, որոնք բնութագրում են այն որպես հանցագործություն: Այդ իսկ պատճառով «որակում» եզրույթը նախ և առաջ կրում է նյութաիրավական բովանդակություն՝ միևնույն ժամանակ պայմանավորելով քրեադատավարական այն նորմերի բովանդակությունը, որոնցում դրսևորվում է քրեական և քրեադատավարական իրավունքների միջճյուղային փոխկապվածությունը:

«Քրեաիրավական արգելքի բովանդակությունը, – նկատում է Ի.Բ. Միխայիլովսկայան, – որոշում է իրավաբանական նշանակություն ունեցող իրադարձությունը, որի հաստատումն անհրաժեշտ է հետևություն անելու այն մասին, թե սահմանված արգելքներից որն է խախտվել: Այդ տեսակի հատկանիշները հանդես են գալիս որպես հանցակազմի հատկանիշներ և ուղղորդիչ նշանակություն են ունե-

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Գ.Ճաղարյանի և մյուսների վերաբերյալ 24.08.2012թ. թիվ ԵՇԴ/0002/01/11 գործով որոշումը:

նում կոնկրետ քրեական գործով ապացուցման առարկան սահմանելիս»<sup>5</sup>: Ապացուցման առարկայի՝ օրենքում ամրագրված տիպական թվարկումը յուրաքանչյուր գործով ճշգրտվում և լրացվում է հանցագործության քրեաիրավական որակմանը համապատասխան: Սա նշանակում է, որ կատարված իրադարձությունը (ինչպես ամբողջությամբ, այնպես էլ դրա յուրաքանչյուր հանգամանքն առանձին վերցված) յուրաքանչյուր դեպքում պետք է հետազոտել՝ հաշվի առնելով քրեական օրենքով նախատեսված կոնկրետ հանցակազմի հատկանիշները<sup>6</sup>:

Քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում բացակայում է հանցագործությունների որակման հասկացության վերաբերյալ որևէ իրավական նշում: Թերևս այդ հասկացության առանձին տարրերի վերաբերյալ հետևության կարելի է հանգել օրենքի այն համատեքստի վերլուծությունից, որում այդ հասկացությունն օգտագործվում է: Մասնավորապես, որոշ հոդվածներում իրավաբանական որակումը ենթադրվում է՝ առանց այդ եզրույթը մատնանշելու: Այս իրադրությունը թելադրում է որոշել հանցագործությունների որակման հասկացության թե՛ քրեաիրավական և թե՛ քրեադատավարական հարակից հասկացությունների հարաբերակցության հարցը:

Նախ և առաջ հարկ է անդրադառնալ «*հանցագործությունների որակում*» և «*քրեական օրենքի կիրառում*» հասկացությունների հարաբերակցությանը: Հանցագործությունների որակումը քրեական օրենքի կիրառման ձևերից մեկն է, որի արդյունքում քրեական օրենքի կոնկրետ նորմը «կապվում է» կատարված արարքին: Քրեական օրենքի կիրառում հասկացությունը ներառում է նաև ընթացակարգային գործունեությունը, որն իրականացվում է անձին քրեական պատասխանատվությունից ազատելիս, դատարանի կողմից պատիժ նշանակելիս, ինչպես նաև քրեական իրավունքի այլ հարցեր լուծելիս: Այսպիսով, կարելի է նկատել, որ քրեական օրենքի կիրառում հասկացության բովանդակությունն առավել լայն է, քան հան-

<sup>5</sup> Տե՛ս Михайловская И.Б. Настольная книга судьи по доказыванию в уголовном процессе. М.: ТК Велби; Проспект, 2006, էջ 192:

<sup>6</sup> Տե՛ս ՀՀ Վճարել դատարանի՝ Ս.Սարանյանի վերաբերյալ 2011թ. դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշումը:

ցագործությունների որակում հասկացությունն ինքնին: Չնայած, հարկ է փաստել, որ իրավակիրառ գործունեության յուրաքանչյուր տարր անխզելիորեն կապված է իրավաբանական որակում հասկացության հետ, քանզի այն կանխորոշում է քրեաիրավական ներգործության հիմքը և ուրվագծում դրա սահմանները:

Իր հերթին, հանցագործությունների որակումը փոխկապակցված է այնպիսի քրեադատավարական հասկացությունների հետ, ինչպիսիք են «մեղադրանքը» և «մեղադրանքի ծավալը»:

Քրեական վարույթում հանցագործության դեպքը քրեական օրենքի հոդվածին կապող, այսպես կոչված, սկզբնական դատավարական փաստաթուղթը քրեական գործ հարուցելու մասին որոշումն է: ՀՀ քր. դատ. օր.-ի 182-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ պետք է նշվի քրեական օրենքի այն հոդվածը, որի հատկանիշներով հարուցվում է գործը:

Բացի քրեական գործ հարուցելու մասին որոշումից՝ արարքի քրեաիրավական գնահատականն իր արտահայտությունն է գտնում նաև անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշման, մեղադրական եզրակացության, դատավճռի և այլ դատավարական փաստաթղթերի մեջ: Իսկ քրեական վարույթում արարքի իրավաբանական որակումը կարող է փոփոխվել (լրացվել) մեղադրանքը փոփոխելու (լրացնելու) քրեադատավարական կառուցակարգը գործադրելու միջոցով<sup>7</sup>:

Հանցագործության որակման գործընթացում իրավակիրառողից պահանջվում է, ընդհանուր առմամբ, պատասխանել հետևյալ հարցերին, որոնք վերաբերում են կատարված հանրորեն վտանգավոր արարքին և դրա նկատմամբ կիրառման ենթակա քրեաիրավական նորմերին՝

- կատարվածն արդյո՞ք հանցագործություն է, թե՞ իրավունքի այլ ճյուղի նորմերով կարգավորվող հարաբերություն կամ այլ բնույթի իրավախախտում,

---

<sup>7</sup> Հանցագործությունների որակման և հանցագործությունների որակումը փոփոխելու (լրացնելու) քրեադատավարական հարցերը դուրս են սույն ուսումնասիրության առարկայի շրջանակներից: Ուստի, նշված հարցերին այս աշխատության շրջանակներում մանրամասն անդրադարձ չի կատարվում:

- եթե կատարվածը հանցանք է, ապա քրեական օրենսգրքի Հատուկ մասի ո՞ր կոնկրետ հոդվածով նկարագրված հանցագործության հանցակազմի հատկանիշներին է համապատասխանում,
- ենթակա են արդյո՞ք կիրառման ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի այն նորմերը, որոնցով կարգավորվում են չարտված հանցագործության, հանցակցության, հանցագործությունների բազմակիության հարցերը և այլն,
- արդյո՞ք քրեական գործող օրենքն է ենթակա կիրառման,
- արդյո՞ք առկա չէ քրեափրավական նորմերի մրցակցություն կամ կոլիզիա,
- արդյո՞ք անձի արարքում առկա չէ իրավաբանական կամ փաստական սխալ,
- արդյո՞ք քրեական օրենքի հոդվածում սահմանված հասկացությունները որոշակի են, և դրանց իրավաբանական մեկնաբանումը չի առաջացնում տարրնկալում:

Նշված հարցերին պատասխանելով՝ իրավակիրառ մարմինը կամ պաշտոնատար անձը կարող է որոշել հանցագործության սուբյեկտի արարքի քրեափրավական գնահատականը, իսկ մեղադրանքի բանաձևում նշել քրեական օրենքի այն հոդվածը (հոդվածի մասը կամ կետը), որը ենթակա է կիրառման կոնկրետ հարաբերության նկատմամբ:

Քրեական իրավունքի տեսության մեջ, կախված որակումն իրականացնող սուբյեկտից, ինչպես նաև դրա իրավաբանական նշանակությունից, հանցագործությունների որակումը բաժանվում է *պաշտոնականի (լեզայի) և ոչ պաշտոնականի (դոկտրինայի)*:

**Պաշտոնական (լեզայ)** որակումը քրեական գործի շրջանակներում պետության կողմից լիազորված անձի (վարույթ իրականացնող մարմնի՝ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի) կատարած որակումն է, որն ունի իրավաբանական ուժ և ենթադրում է կոնկրետ իրավական հետևանքներ ինչպես հանցագործություն կատարելու մեջ կասկածվող կամ մեղադրվող անձի, այնպես էլ քրեական վարույթի այլ մասնակիցների համար: Հանցագործության պաշտոնական որակումն իրականացվում է քրեական գործի քննության ընթացքում քրեորեն պատժելի կոնկրետ արարքի կա-

պակցությամբ, հստակ որոշակի դատավարական ձևի և բովանդակության սահմաններում:

Կախված քրեական դատավարության փուլից՝ պաշտոնական որակումը բաժանվում է մինչդատականի (իրականացվում է նախնական քննության ընթացքում) և դատականի (իրականացվում է դատարանում գործի քննության ընթացքում, այդ թվում՝ վերանայման վարույթներում):

Հարկ է արձանագրել, որ հանցագործությունների պաշտոնական որակումն անպայմանորեն իր իրավական ամրագրումն է ստանում համապատասխան դատավարական ակտերում (պաշտոնական փաստաթղթերում. քրեական գործ հարուցելու մասին որոշում, մեղադրական եզրակացություն, դատավճիռ և այլն) և առաջացնում է կոնկրետ իրավունքներ ու պարտականություններ այդ ակտի հասցեատերերի համար:

**Ոչ պաշտոնական (դոկորինալ)** որակումն այլ սուբյեկտների (մասնագետների, առանձին քաղաքացիների, գիտական հոդվածների հեղինակների, ուսանողների, ՁԼՄ ներկայացուցիչների և այլ) կողմից կատարված որակումն է, որը չունի իրավաբանական ուժ և չի առաջացնում իրավական հետևանքներ: Ոչ պաշտոնական որակման արդյունքները կիրառվում են գիտակրթական, ինչպես նաև օրենքների կատարելագործման և օրենսդրությամբ պայմանավորված իրավակիրառական խնդիրները հաղթահարելու նպատակով:

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում է նաև հանցագործությունների **կիսապաշտոնական** որակումը: Օրինակ՝ մեր երկրում այն իրականացվում է ՀՀ դատախազության կոլեգիայի կողմից: Մասնավորապես, Կոլեգիան իր նիստերում ընդունում է որոշումներ, որոնք առնչվում են նաև հանցագործությունների որակման հարցերին:

Հանցագործությունների ճշգրիտ որակումից է կախված մի շարք **քրեահրավական** և **քրեադատավարական** նորմերի և ինստիտուտների կիրառման հնարավորությունը և իրավաչափությունը: Մասնավորապես՝ այն ընդունված է համարել պետության բացասական արձագանք հանցավոր արարքներին, որոնց ճշգրիտ և ամբողջական որակումն ապահովում է նշանակվող պատիժների օրինական և արդարացի լինելը: Բացի այդ, հանցագործությունների որա-

կումն ունի բազմակի գործառույթներ՝ կապված քրեական գործի հարուցման, խափանման միջոցների ընտրության, քրեական գործերի ընդդատության, քննչական ենթակայության, քրեական դատավարությունում հետապնդման իրականացման կարգի որոշման (հանրային կամ մասնավոր), ռեցիդիվի գնահատման, քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու, դատվածության, համաներման և քրեափրավական ու քրեադատավարական մի շարք այլ ինստիտուտների կիրառման հարցերի հետ:

Հանցագործության ճշգրիտ որակումն ունի նաև կարևոր **կրիմինալոգիական** նշանակություն, քանի որ այն թույլ է տալիս հստակ դիտարկել հանցավորության վիճակը, կառուցվածքն ու շարժընթացը: Վերջինս էլ իր հերթին հնարավորություն է տալիս իրականացնել հիմնավոր կանխատեսումներ, պլանավորել և ձեռնարկել հանցավորության և, մասնավորապես, դրա տարբեր տեսակների կանխմանն ուղղված միջոցառումների մշակումն ու արդյունավետ իրականացումը:

Միևնույն ժամանակ, հանցագործությունների ճշգրիտ որակումն արդարադատության անկյունաքարերից մեկն է: Հետևաբար, հանցագործությունների սխալ որակումը խարխուլում է արդարադատության հիմքերը, հանգեցնում քրեական օրենքի ոչ նպատակային կիրառման, ինչն էլ իր հերթին՝ *հասարակական կյանքի արհեստական քրեականացման (կրիմինալացման)*: Ավելին, հանցագործությունների սխալ որակման բացասական հետևանքները շոշափում են ոչ միայն կոնկրետ քրեական գործով անցնող անձանց իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը, այլև բացասաբար են ազդում ամբողջ արդարադատության համակարգի հեղինակության վրա, արգելակում են քրեափրավական և քրեադատավարական սկզբունքների իրացումն ու խնդիրների լուծումը: Այս ամենն էլ ի վերջո հանգեցնում է պետության քրեական քաղաքականության ոչ ճիշտ և անարդյունավետ իրականացմանը՝ դրան բնորոշ խիստ բացասական հետևանքներով:

Հանցագործությունների պաշտոնական որակումը՝ որպես բարդ գործընթաց, բաժանվում է մի քանի փուլերի: Որպես այդպիսիք ընդունված է հասկանալ կիրառման ենթակա քրեափրավական նորմերի ընտրության գործընթացի բաղկացուցիչ մասերը: Մասնավորա-



պես, պաշտոնական որակման գործընթացն առնվազն անցնում է հետևյալ **երեք փուլերը**.

1. Այն *փաստի հավաստումը*, որ կատարվածը հանցագործություն է: Տվյալ փուլն սկսվում է արարքի այն փաստական հանգամանքների որոշումից, որոնք իրավական նշանակություն ունեն արարքի քրեաիրավական գնահատականի տեսանկյունից: Այդպիսի հանգամանքներն ընդունված է դասակարգել երկու խմբի՝ 1) հանգամանքներ, որոնք հանդես են գալիս որպես քրեական օրենսգրքում նկարագրված հանցակազմի հատկանիշներ, և 2) այլ հանգամանքներ, որոնք չեն պարունակում հանցակազմի հատկանիշներ, սակայն կարևորվում են քրեաիրավական նշանակություն ունեցող այլ հարցերի (պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող, մեղմացնող հանգամանքներ, քրեական պատասխանատվությունից ազատելու համար արժևորվող հանգամանքներ և այլն) լուծման տեսանկյունից:

2. Հաջորդը հանցագործության փաստի հատկանիշների որակման տարատեսակ *վարկածների և հարակից հանցակազմերի վերհանման* փուլն է: Տվյալ դեպքում, նշված հանգամանքներով պայմանավորված՝ ընտրվում է այն քրեաիրավական նորմը (քրեական օրենսգրքի հոդվածը, հոդվածի մասը կամ կետը), որն առավել լրիվությամբ է ընդգրկում կատարված արարքը և արտացոլում դրա սոցիալական նշանակությունը: Մինչդեռ, եթե այդ արարքը նկարագրված չէ քրեական օրենսգրքի Հատուկ մասում, ապա կատարվածը չի կարող որակվել որպես հանցագործություն:

3. Որակման վերջին փուլում իրականացվում է հանցագործության դեպքի փաստական հանգամանքների և ընտրված քրեաիրավական նորմի հատկանիշների *համադրում*, դրանց *համապատասխանության հավաստում* և դատավարական փաստաթղթերում (քրեական գործ հարուցելու մասին որոշում, անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, մեղադրական եզրակացություն, դատավճիռ և այլն) *ամրագրում*: Ընդ որում, հանցագործության փաստակազմի և քրեաիրավական համապատասխան նորմում նկարագրված հանցակազմի հատկանիշների համադրումը տեղի է ունենում հետևյալ հաջորդականությամբ. օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը, սուբյեկտիվ կողմը:

Հանցագործությունների որակման վերոհիշյալ եռափուլ բաժանումը, սակայն, պայմանական է և ներկայացնում է սոսկ հանցագործության որակման գործընթացի պարտադիր բաղադրատարրերը: Իրական գործունեությունում այդ հերթականությունը կարող է փոփոխվել. իրավակիրառողը հնարավոր է մի քանի անգամ դիմի կոնկրետ իրադարձության կապակցությամբ քրեաիրավական նորմի «փորձնական կիրառմանը», մինչև չգտնվի այն նորմը, որը պետք է կիրառվի տվյալ հարաբերությունների կապակցությամբ: Նկարագրված իրավիճակներում վարույթային գործունեությունը համակցվում է մտավոր-տրամաբանականի հետ, ինչի կանոնակարգումը վարույթային նորմերով չի կարող իրականացվել: Քրեադատավարական և նյութաիրավական համապատասխան նորմերի համակցությունը, սակայն, ուղղություն է տալիս այդ գործունեությանը և որոշում դրա վերջնական նպատակը, որն օբյեկտիվանում է քրեական օրենսգրքի կոնկրետ հոդվածին (հոդվածի մասին կամ կետին) հղում կատարելով:

Միաժամանակ, հանցագործությունների որակումը հիմնվում է մի շարք ղեկավար գաղափարների, ելակետային դրույթների վրա, որոնք ենթարկվում են որոշակի համընդհանուր իրավական պահանջներին: Մասնավորապես, հանցագործությունների որակման ֆունդամենտալ հիմք են հանդիսանում իրավունքի համընդհանուր (համաիրավական), կոնկրետ ճյուղային, ինչպես նաև այն սկզբունքները, որոնք որոշում են կատարված արարքի քրեաիրավական գնահատականի բազային պահանջները (հանցագործությունների որակման հատուկ կանոններ): Այս սկզբունքների միջոցով ապահովվում են քրեաիրավական նորմերի իրացման հիմնավորվածությունն ու իրավաչափությունը: Հանցագործությունների որակումը՝ որպես քրեական օրենքի կիրառման ինքնուրույն ձև, առանձնանում է նաև իրեն ներհատուկ սկզբունքների համակարգով, որոնք, լինելով ղեկավար, ելակետային դրույթներ, ամրագրված են ոչ միայն քրեական օրենսգրքում, այլև իրավունքի այլ ճյուղերում:

Հանցագործության որակման **հատուկ սկզբունքներն են.**

1. **Օբյեկտիվության (իսկության) սկզբունքը**, որը ենթադրում է, որ որակումը պետք է իրականացվի անաչառ՝ բազմակողմանի և լրիվ ուսումնասիրելով գործի քննության ընթացքում արարքի օբյեկ-

տիվ և սուբյեկտիվ հատկանիշների վերաբերյալ ձեռք բերված փաստական տվյալները: Այս սկզբունքը հանցագործությունների որակմանն առաջադրում է հետևյալ պահանջները.

- *Իրավակիրառ ակտում, որում տրվում է արարքի քրեաիրավական գնահատականը, պետք է օբյեկտիվորեն արտացոլվեն գործի այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք քրեաիրավական նշանակություն ունեն:* Եթե իրավակիրառ մարմինը կամ պաշտոնատար անձը արարքի քրեաիրավական գնահատականը հիմնավորում են ակնհայտ անհիմն կամ խեղաթյուրված փաստական հանգամանքներով, ապա այդպիսի որակման արդյունքը կլինի սխալ:
- *Արարքի քրեաիրավական գնահատականի վերաբերյալ հետևությունները պետք է համապատասխանեն գործի փաստական հանգամանքներին և չհակասեն դրանց:* Եթե իրավակիրառ մարմինը կամ պաշտոնատար անձն արարքին քրեաիրավական գնահատական է տալիս՝ խեղաթյուրելով կամ սխալ մեկնաբանելով քրեական գործի փաստական տվյալները, ապա այդպիսի որակումը կլինի սխալ, ոչ օբյեկտիվ:
- *Հանցագործության որակումը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա:* Քրեաիրավական գնահատականի հիմքում կարող են դրվել միայն այնպիսի փաստական տվյալներ, որոնց հավաստիությունը կասկած չի հարուցում՝ ապացուցվածության չափանիշը վեր է հիմնավոր կասկածից:
- *Հանցագործության փաստին տրվող քրեաիրավական գնահատականը պետք է լինի անաչառ և բազմակողմանի:* Իրավակիրառ մարմինը կամ պաշտոնատար անձը հանցագործությունը որակելիս պետք է խուսափեն մեղադրական թեքումից՝ ուշադրություն դարձնելով ոչ միայն այն հանգամանքներին, որոնք վկայում են անձի կողմից իրեն մեղսագրվող հանցանքը կատարելու մասին, այլև նրանց, որոնք բացառում են հանցագործության կատարման փաստը, կամ վկայում առավել մեղմ հանցանքի մասին: Իրավակիրառական սխալները՝ կապված արարքի միակողմանի գնահատականի հետ, կարող են ունենալ ամենալուրջ բացասական հետևանքները, այդ թվում՝ հանգեցնել անմեղ անձի անհիմն դատապարտման:

2. **Լրիվության սկզբունքը**, ըստ որի պահանջվում է հանցակազմ պարունակող յուրաքանչյուր արարքի և արարքում առկա բոլոր հանցակազմերի հստակ և ամբողջական որակում: Տվյալ սկզբունքի ուղղակի պահանջն է, որ առանց քրեաիրավական գնահատականի չմնա և ոչ մի արարք, որն իր մեջ ինքնուրույն հանցակազմ է պարունակում: Վերջինիս իրականացումն ապահովվում է հետևյալ պարտադիր պահանջների պահպանմամբ.

- *Եզակի բարդ հանցագործության դեպքում կատարվածը քրեաիրավական գնահատականի պետք է արժանանա դրա բոլոր բաղադրիչների հաշվառմամբ:* Այսպես, շարունակվող հանցագործության պարագայում դատավարական ակտի (անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, մեղադրական եզրակացություն, դատավճիռ և այլն) նկարագրական-պատճառաբանական մասում պետք է արտացոլվեն բոլոր բաղադրիչ արարքները: Հանցավորի կողմից քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված երկրնտրելի արարքներից մի քանիսը կատարվելու դեպքում որակման է ենթակա ամբողջ արարքը՝ չնայած քրեական պատասխանատվության ենթարկելու համար բավարար է դրանցից առնվազն մեկի կատարումը: Նմանապես՝ քր. օր.-ի Հատուկ մասի հոդվածում նկարագրված երկու կամ ավելի հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման դեպքում իրավակիրառ ակտի նկարագրական-պատճառաբանական մասում պետք է արտացոլվեն դրանք բոլորը:
- *Եթե անձի արարքը միաժամանակ պարունակում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի միևնույն մասի տարբեր կետերով նախատեսված մի քանի որակյալ հատկանիշներ, ապա հանցավորին պետք է մեղսագրվի այդ որակյալ հատկանիշներից յուրաքանչյուրը:* Այս դեպքում կատարվածը չի ձևավորում հանցագործությունների համակցություն: Այս մոտեցումը թույլ է տալիս քրեաիրավական գնահատական տալ բոլոր որակյալ հատկանիշներին՝ այդպես ապահովելով հանցագործության լրիվ որակումը:
- *Եթե անձի մեկ արարքը միաժամանակ պարունակում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի միևնույն հոդվածի տարբեր մա-*

սերով նախադասված հանցագործությունների հատկանիշներ (հիմնական, ծանրացնող և (կամ) առավել ծանրացնող), ապա իրավակիրառ ակտի նկարագրական-պատճառաբանական հատվածում պետք է արտացոլվեն արարքում առկա բոլոր ծանրացնող հանգամանքները, չնայած նրան, որ որակման բանաձևում նշվում է հողվածի միայն այն մասը, որի սանկցիան առավել խիստ է: Այլ խոսքով՝ տվյալ դեպքում հանցագործությունը որակվում է միայն ծանրացնող (կամ առավել ծանրացնող) հանգամանքը նախատեսող մասով, սակայն նախաքննական մարմինն անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման և մեղադրական եզրակացության մեջ, իսկ դատարանը՝ դատավճռի նկարագրական հատվածում պարտավոր են արտացոլել արարքում առկա բոլոր ծանրացնող հանգամանքները, ինչը թույլ է տալիս ամբողջությամբ գնահատել հանցագործության հանրային վտանգավորությունը և մեկից ավելի ծանրացնող հանգամանքների առկայությունը հաշվի առնել պատիժ նշանակելիս<sup>8</sup>:

- Եթե հանցագործությունը կատարվել է հանցակցությամբ, ապա քրեաիրավական գնահատականի պետք է արժանանան հանցակիցներից յուրաքանչյուրի արարքները, ինչպես նաև հանցագործության մեջ նրանցից յուրաքանչյուրի դերակատարությունը:
- Եթե անձի կողմից կատարվել են հանցագործությունների համակցություն կազմող հանցանքներ, ապա քրեաիրավական գնահատականի պետք է արժանանա դրանցից յուրաքանչյուրը՝ անկախ կատարված հանցանքների քանակից ու տեսակից, ինչպես նաև այդ հանցագործություններից յուրաքանչյուրի համար սահմանված պատժի տեսակից ու խստության աստիճանից:

3. **Ճշգրտության սկզբունքը**, որը կոչված է ապահովելու արարքի քրեաիրավական գնահատականի արդյունքների անհրաժեշտ և բավարար կոնկրետությունը, ինչը ենթադրում է որակման հետևյալ պահանջները.

- Հանցագործությունների որակման բանաձևում պետք է արտացոլվի քրեական օրենսգրքի Հատուկ մասի այն հողվածը, հողվածի մասը կամ կետը, որը պատասխանատվություն է նախադե-

<sup>8</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Գ. Ոսկանյանի վերաբերյալ 31.10.2014թ. թիվ ԵԷԴ/0119/01/13 գործով որոշումը:

*սում կատարված հանցագործության համար: Դատավարական փաստաթղթերում քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի, հոդվածի մասի կամ (և) կետի վրա այդպիսի հղման բացակայությունը կամ սխալ հղումը գնահատվում է որպես քրեական օրենքի սխալ կիրառում՝ իր հնարավոր բացասական հետևանքներով:*

- Եթե հանցավորը կատարել է չավարտված հանցագործություն, ապա կատարվածի որակման բանաձևում պետք է արտացոլվի նաև ՀՀ քր. օր.-ի 34-րդ (հանցափորձը) կամ 35-րդ (հանցագործության նախապատրաստությունը) հոդվածը:*
- Եթե հանցանքը կատարվել է հանցակցությամբ, ապա հանցակիցների (բացառությամբ կատարողի և համակատարողների) արարքները որակելիս պետք է հղում կատարվի ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածի համապատասխան մասին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հանցանքը կատարվել է կազմակերպված հանցավոր խմբի կամ հանցավոր համագործակցության կողմից: Հանցակցությամբ կատարված արարքը որակելիս իրավախախտման փաստը պետք է կոնկրետացվի յուրաքանչյուր հանցակցի մասով, իսկ դրա հանգամանքները՝ անհատականացվեն: Այսինքն՝ հանցակցությամբ կատարված հանցագործությունները որակելիս դատավարական փաստաթղթերի նկարագրական-պատճառաբանական մասում պետք է հստակ մատնանշվի, թե հանցանքը կատարելիս ինչ բնույթի և աստիճանի մասնակցություն է ունեցել հանցակիցներից յուրաքանչյուրը: Այլ խոսքով՝ այդ փաստաթղթերում պետք է նկարագրվի, թե յուրաքանչյուր հանցակից ինչ կոնկրետ հանցավոր արարք (գործողություն կամ անգործություն) է կատարել և ինչ բնույթի մասնակցություն է ցուցաբերել հիմնական հանցանքը կատարելու գործում:*
- Եթե քրեական օրենսգրքի Հատուկ մասի կիրառման ենթակա հոդվածը, հոդվածի մասը կամ կետը ենթարկվել են փոփոխության, հանցագործությունը որակելիս անհրաժեշտ է նշել քրեական օրենքի համապատասխան խմբագրությունը (այսինքն՝ թե արարքը որակելիս, որ խմբագրությամբ օրենքն է կիրառվել՝ անդրադառնալով նաև քրեական օրենքի հետադարձ ուժի հարցին): Քրեաիրավական նորմերի փոփոխության դեպքում հան-*

ցագործությունները որակելիս նշված պահանջի չպահպանումը կարող է վկայել այն մասին, որ իրավակիրառողն անհրաժեշտ ուշադրություն չի դարձրել քրեաիրավական նորմերի տեմպորալ մրցակցության հարցերին (նորմերը, որոնք գործել են հանցանքը կատարելիս, և նորմերը, որոնք գործում են որակման վերաբերյալ որոշում կայացնելիս):

- *Եթե քրեական օրենքի կիրառման ենթակա հոդվածի (հոդվածի մասի) դիսպոզիցիան բլանկետային է, ապա իրավակիրառ ակտի նկարագրական հատվածում պետք է հստակ և կոնկրետ նշվի բլանկետային այն նորմը, որը խախտվել է:*
- *Եթե քրեական օրենքի Հատուկ մասի կիրառման ենթակա հոդվածը նախատեսում է այլընտրանքային հատկանիշներ (այլընտրանքային արարքներ, հետևանքներ, շարժառիթներ, որակյալ հատկանիշներ և այլն), իրավակիրառ ակտի նկարագրական-պարճառաբանական հատվածում պետք է մանրամասն նշվի, թե երկընտրելի հատկանիշներից կոնկրետ որն է (որոնք են) մեղսագրվում հանցավորին: Այսպես, օրինակ՝ անձին ՀՀ քր. օր.-ի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունը մեղսագրելիս դատավարական փաստաթղթում պետք է հստակ պարզաբանվի, թե տվյալ հոդվածի դիսպոզիցիայում թվարկված արարքներից (ապօրինի ձեռք բերել, իրացնել, պահել, փոխադրել կամ կրել) որը կամ որոնք է կատարել հանցավորը, և հանցագործության որ առարկաների (հրազեն, բացի ողորկափող հրազենից և դրա փամփուշտներից, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր) կապակցությամբ են կատարվել դրանք: Ասվածից հետևում է, որ անթույլատրելի է անձին մեղսագրել հանցակազմի այն այլընտրանքային հատկանիշները, որոնք փաստացի բացակայում են նրա արարքում: Նշված պահանջը հավասարապես վերաբերում է հանցակազմի որակյալ այլընտրանքային հատկանիշներին, որոնք նախատեսված են քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածում՝ որպես որակյալ հանցակազմի հատկանիշներ:*

4. **Սուբյեկտիվ մեղսայնացման սկզբունքը**, որը ենթադրում է, որ անձի արարքում այս կամ այն հանցակազմի հատկանիշների առ-

կայությունը հավաստելու համար *անհրաժեշտ է բացահայտել և հաշվի առնել հանցավորի դրսևորած մեղքի ձևը, դիտավորության բովանդակությունը և ուղղվածությունը*, այսինքն՝ արդյո՞ք հանցավորը գիտակցել է իր արարքում համապատասխան հանցակազմի յուրաքանչյուր հատկանիշի առկայությունը, թե՞ ոչ: Այս հարցի բացասական պատասխանը բացառում է քննարկվող նորմով անձի արարքի որակման իրավաչափ հնարավորությունը:

5. **Կրկնակի մեղսայնացման արգելքի սկզբունքը**, որը բխում է non bis in idem (կրկնակի դատապարտման անթույլատրելիության) հանրաճանաչ սկզբունքից: Վերջինս բացառում է մեկ արարքի համար անձի կրկնակի դատապարտումը: Կրկնակի դատապարտման անթույլատրելիության սկզբունքին ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Դ.Բաբայանի գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) նույն արարքի համար կրկին անգամ դատվելու անթույլատրելիության (non bis in idem) սկզբունքը հիմնարար տեղ է զբաղեցնում ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված պաշտպանության համակարգում, որի հիմքում ընկած է մեղքը քաված լինելու կանխավարկածը, և այն իրենից ներկայացնում է նույն արարքի համար նույն անձին կրկին քրեական հետապնդման չենթարկելու, չդատապարտելու, չպատժելու երաշխիք: Ընդ որում «նույն արարքի համար» ձևակերպումը նշանակում է, որ կրկնակի դատապարտման անթույլատրելիության առարկան պետք է ընկալվի ոչ թե հանցանքի իրավական որակման, այլ փաստական նկարագրության իմաստով»<sup>9</sup>: Այն դեպքում, երբ եզակի հանցագործությունը որակվում է հանցագործությունների համակցությամբ (օրինակ՝ հաշվի չեն առնվում քրեաիրավական նորմերի մրցակցության կամ հանցագործությունների համակցության որակման կանոնները և այլն), վտանգվում է նույն հանցագործության համար անձին կրկին անգամ դատապարտելու անթույլատրելիության (non bis in idem) սկզբունքը:

Ասպետ, օրինակ՝ «նույն արարք»-ի առկայության մասին վկայում են հիմնական, ծանրացնող և առավել ծանրացնող հանցակազմերի շարադրման օրենսդրական տեխնիկայի առանձնահատկություննե-

<sup>9</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Դ. Բաբայանի վերաբերյալ գործով 08.06.2012թ. թիվ ԿԴ1/0043/01/11 որոշումը:



րը: ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներում հանցակազմի որակյալ տեսակները շարադրված են հետևյալ կերպ՝ «Նույն արարքը, որը կատարվել է (...) [խոշոր կամ առանձնապես խոշոր չափերով]»: Վերոշարադրյալից հետևում է, որ «նույն արարք» եզրույթը վերաբերում է համապատասխան հոդվածի առաջին մասում նկարագրված (հիմնական) հանցագործությանը, որն ամբողջությամբ արտացոլվում է նաև հոդվածի ծանրացնող (առավել ծանրացնող) հանգամանքներում, սակայն առանձնանում է լրացուցիչ հանգամանքի առկայությամբ, ինչը հիմնական հանցակազմը վեր է ածում որակյալի: Այսինքն՝ օրենսդիրը, նախատեսելով նույն արարքի վտանգավոր տեսակը և դրա համար ավելի խիստ պատիժ սահմանելով, արդեն իսկ դրանում հաշվի է առնում և արտացոլում այդ արարքի վտանգավորությունը: Հետևաբար, անթույլատրելի է արարքը որակել հոդվածի բոլոր մասերով՝ հանցագործությունների համակցության կանոններով: Ուստի, նախապատվությունը պետք է տալ ծանրացնող հանգամանքներով այն հանցակազմին, որն առավել ամբողջական է արտացոլում կատարված հանցագործության բոլոր հատկանիշները<sup>10</sup>:

**6. Չփարատված կասկածները հոգույր հանցանք կադարած անձի մեկնաբանելու սկզբունքը**, որը բխում է անմեղության կանխավարկածի անկյունաքարային հիմնադրույթ՝ չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու կանոնի իմպերատիվ պահանջից: Ընդ որում՝ քննարկվող սկզբունքը վերաբերում է ոչ միայն անձի մեղավորությանն ընդհանրապես, այլև մեղքի ձևին կամ տեսակին, հանցակազմի յուրաքանչյուր տարրին և հատկանիշին, մեղադրանքի առանձին դրվագներին, հանցագործությանը անձի մասնակցության բնույթին և աստիճանին, պատասխանատվությունը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներին և այլն: Պետք է նկատի ունենալ, սակայն, որ հանցագործությունների որակման նշված սկզբունքը քրեական վարույթի ոչ բոլոր փուլերում է, որ պետք է ունենա նույնօրինակ դրսևորում: Օրինակ՝ քրեական գործի հարուցման հարցի լուծման փուլում, կարծում ենք, պետք է գործի նման կասկածները հոգույր լիարժեք քննության իրականացման մեկնա-

<sup>10</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Գ. Ոսկանյանի վերաբերյալ 31.10.2014 թ. թիվ ԵԷԴ/0119/01/13 գործով որոշումը:

բանելու սկզբունքը: Այս մոտեցումը պայմանավորված է այն իրողությամբ, որ հանցագործության հատկանիշների առկայության վերաբերյալ ողջամիտ կասկածների դեպքում պետք է հարուցվի քրեական գործ (քրեական վարույթը բացառող հանգամանքների բացակայության դեպքում), քանի որ նման կասկածները կարող են վերացվել միայն բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության միջոցով, ինչն էլ հնարավոր է հարուցված քրեական գործի պայմաններում<sup>11</sup>:

Այսպիսով՝ հանցագործությունների որակման սկզբունքները հիմնարար, ղեկավար դրույթներ են, որոնց վրա կառուցվում և հիմնվում է հանցագործությունների որակման տեսությունը: Այս սկզբունքների հաշվառմամբ, քրեական իրավունքի գիտությունը մշակել է հանցագործությունների որակման որոշակի կանոններ, որոնք հնարավորություն են տալիս իրավակիրառողին ճիշտ կողմնորոշվելու քրեական գործերի քննության ընթացքում այս կամ այն փաստակազմերին քրեաիրավական գնահատական տալիս: Այդ կանոններն ընդունված է դասակարգել **ընդհանուրի** (վերաբերում են մեկ անձի կողմից կատարված առանձին հանցագործությունների որակմանը) և **հատուկի** (կիրառվում են չավարտված հանցավոր գործունեության, հանցակցության, հանցագործությունների բազմակիության, քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում հանցագործությունները որակելիս):

Հանցագործությունների որակման կանոնները նորմատիվ հանձնարականներ կամ համընդհանուր ճանաչում ստացած դոկտրինալ դրույթներ են, որոնք որոշում են քրեաիրավական նորմի ընտրությունը և դրա արդյունքների ամրագրումը կատարվածին իրավական գնահատական տալիս: Հանցագործությունների որակման կանոնների դասակարգման հիմքերը կարող են տարբեր լինել:

Կախված **կիրառման ոլորտից**՝ դրանք դասակարգվում են երեք խմբի.

1) *հանցագործության որակման ընդհանուր կանոններ*, որոնք կրում են համընդհանուր բնույթ և կարող են կիրառվել ցանկացած հանցագործության քրեաիրավական գնահատական տալու ժամանակ:

---

<sup>11</sup> Տե՛ս նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Ս. Գևորգյանի վերաբերյալ 30.08.2017թ. թիվ ԼԴ/0018/11/16 որոշումը:

նակ (դրանք են՝ որակման կանոններն ըստ հանցակազմի տարրերի. ըստ հանցագործության օբյեկտի, օբյեկտիվ կողմի, սուբյեկտի և սուբյեկտիվ կողմի),

2) *հանցագործության որակման հատուկ կանոններ*, որոնք կիրառվում են որոշակի խումբ հանցագործությունները որակելիս (չավարտված հանցավոր գործունեության, հանցագործությունների բազմակիության, հանցակցությամբ կատարվող հանցագործությունների որակման կանոնները),

3) *հանցագործությունների որակման մասնավոր կանոններ*, որոնք արտացոլում են առանձին հանցատեսակների որակման առանձնահատկությունները (օրինակ՝ սպանության, գողության որակման առանձնահատկությունները և այլն):

Կախված **աղբյուրներից, որոնցում ամրագրված են հանցագործությունների որակման կանոնները**, ընդունված է պայմանականորեն տարբերակել.

1) *հանցագործությունների որակման նորմատիվ կանոններ* (այսպես կոչված, ոչ տիպային իրավունքի նորմերը), որոնք կարևոր դեր են խաղում իրավական կարգավորման մեխանիզմում և իրենց ամրագրումն են ստացել նորմատիվ իրավական ակտերում և այլ իրավաբանական աղբյուրներում,

2) *հանցագործությունների որակման ոչ նորմատիվ կանոններ*, որոնք իրենց օրենսդրական ձևակերպումը թեև չեն ստացել որևէ իրավական ակտում, սակայն կիրառվում են իրավակիրառ պրակտիկայում (օրինակ՝ բաղկացական հանցագործությունների կամ քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում հանցագործությունների որակման կանոնները և այլն):

Հարկ ենք համարում նաև անդրադառնալ **հանցագործությունների որակման կանոնների աղբյուրներին**: Դրանք են.

1) *Քրեական օրենսդրությունը*: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում ամրագրվել են որակման միայն որոշակի խումբ ընդհանուր և հատուկ կանոններ (օրինակ՝ քր. օր.-ի 12-րդ, 13-րդ, 33-րդ 39-րդ հոդվածները և այլն), որոնք գիտության մեջ արդարացիորեն գնահատվում են որպես քրեական օրենքի ոչ բավարար կարգավորումներ:

2) *Քրեական դատավարության օրենսգիրքը*: Քրեական դատավարության որոշ դրույթներ մասնակցում են հանցագործությունների որակման գործընթացի կանոնակարգմանը՝ լրացնելով որակման քրեաիրավական դրույթները և հանդես գալով որպես դրանց իրացման քրեադատավարական խողովակ:

3) *«Սահմանադրական դատարանի և «Վճռաբեկ դատարանի որոշումները*: «Քրեական օրենսգրքում նախատեսված որակման կանոնների ոչ բավարար կանոնակարգումների պայմաններում «Բարձր» դատարանների որոշումներում արտահայտված դիրքորոշումներով ձևակերպված կանոնները կարևոր դեր և նշանակություն են ձեռք բերում: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում սահմանել է հանցագործությունների որակման ընդհանուր, հատուկ և մասնավոր կանոններ, որոնք արժեքավոր նշանակություն են ունեցել (և այժմ էլ ունեն) պրակտիկայի միասնականացման և իրավակիրառողին հանցագործությունների ճշգրիտ որակմանն ուղղորդելու տեսանկյունից: Իր հերթին, Սահմանադրական դատարանի կողմից բլանկետային նորմերի փոփոխության դեպքում քրեական օրենքին հետադարձության շնորհելու կանոն սահմանելը վճռորոշ նշանակություն ունեցավ այդ ոլորտում տարամեկնաբանությունները բացառելու իմաստով, և կանխորոշվեց մի շարք քրեական գործերի ելքը<sup>12</sup>:

4) *Քրեական իրավունքի դոկտրինը*: Մինչ այժմ հանցագործությունների որակման որոշ կանոններ շարունակում են մնալ դոկտրինալ մակարդակում (այսինքն՝ իրենց ամրագրումը չեն ստացել ո՛չ քրեական օրենսգրքում, ոչ էլ դատական մեկնաբանություններում): Իրավակիրառ պրակտիկայի համար հատկապես մեծ արժեք են ներկայացնում հանցագործությունների որակման դոկտրինալ այն կանոնները, որոնք վերաբերում են նոր քրեականացված արարքների որակման առանձնահատկություններին, կամ դատական պրակտիկայում հանդիպող ոչ միակերպ և հակասական կանոնների վերլուծությանը և ընդհանրացմանը:

Ամփոփելով նշենք, որ, դիտարկելով հանցագործությունների որակման կանոնների նորմատիվ և ոչ նորմատիվ աղբյուրները, կա-

---

<sup>12</sup> Տե՛ս «Սահմանադրական դատարանի 16.04.2019թ. թիվ ՍԴՈ-1453 որոշումը»:

րելի է նկատել, որ այդպիսի բազմազանությունն, ինքնին, օբյեկտիվորեն հիմնավորված է, քանզի մեկ աղբյուրի շրջանակներում հնարավոր չէ կենտրոնացնել հանցագործությունների որակման բոլոր կանոնները, ինչպես երբեմն առաջարկվում է մասնագիտական գրականության մեջ<sup>13</sup>: Թերևս կարելի է ասել, որ որակման ընդհանուր և հատուկ կանոնների ներառումը կողիֆիկացված քրեական օրենքում (մեկ աղբյուրի շրջանակներում) թույլ կտա ապահովելու դրանց համաձայնեցվածությունը և համակարգվածությունը, և, անշուշտ, կօգնի առավել որոշակի դարձնել քրեաիրավական կարգավորման համակարգը: Ինչ վերաբերում է առանձին հանցատեսակների որակման կանոններին (հանցագործությունների որակման մասնավոր կանոններ), ապա քրեական օրենսգրքում դրանք ամրագրելն աննպատակահարմար է, քանի որ այդ կանոնները կրում են «երկրորդական» բնույթ և ածանցվում են հանցագործությունների իրավական որակման ընդհանուր կանոններից:

## **1.2. Հանցակազմը՝ որպես հանցագործությունների որակման իրավաբանական հիմք**

Հանցագործությունների որակումն, ինչպես արդեն նշվել է, վերջնարդյունքում հղում է պարունակում քրեական օրենսգրքի կոնկրետ հոդվածին (հոդվածի մասին կամ կետին): Կարելի է նկատել, որ իրավաբանական նշանակություն ունեցող հանգամանքների ծավալը հանցագործությունների որակումը կարող էր վերածել բարդ և խրթին գործընթացի, եթե չլիներ օրենսդրական այնպիսի «կառույցը», ինչպիսին *հանցակազմն է*:

Ուշագրավ է, որ XVI դարից ի վեր «հանցակազմ» եզրույթը կրում էր զուտ դատավարական բովանդակություն և նշանակում էր հանցագործության նյութական հետքերի համակցություն: Միայն XVIII դարի վերջում այն տեղափոխվեց նյութական իրավունքի հարթություն և սկսեց հասկացվել որպես հանցագործության՝ օրենքով նկարագրված հատկանիշների ամբողջություն:

<sup>13</sup> Տե՛ս Идрисов Н.Т. Правила квалификации преступлений: понятие, виды, проблемы правового регулирования: Автореф. дис. канд. юрид. наук. Самара, 2009, էջ 8:

Քրեական իրավունքի դոկտրինում և դատական պրակտիկայում «հանցակազմ»-ը՝ որպես հանցագործության օրենսդրական կեցության ձև, բնորոշվում է որպես հանրորեն վտանգավոր արարքի՝ քրեական օրենսգրքով սահմանված օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների համակցություն, որոնց առկայությունը թույլ է տալիս տվյալ հանրորեն վտանգավոր արարքը ճանաչել որպես հանցագործություն: Որպեսզի հանրորեն վտանգավոր արարք կատարած անձը ենթարկվի քրեական պատասխանատվության, անհրաժեշտ է հավաստել, որ նրա կատարած արարքում առկա են քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները:

Հանցագործությունների որակման ընդհանուր տեսության մեջ առկա է վեճ այն մասին, թե հանցագործությունների որակման ժամանակ, մի կողմից, համադրվում են կատարված արարքի հատկանիշները և, մյուս կողմից՝ *հանցագործության՝, թե՛ հանցակազմի հատկանիշները*: Այս վեճը, իհարկե, արդյունք է քրեական իրավունքի գիտության մեջ երկար տարիներ ընթացող «հանցակազմ» հասկացության վերաբերյալ ընթացող բանավեճի, որն իր վերջնական բովանդակությամբ առաջ է քաշում տեսության և օրենսդրության մեջ «հանցակազմ» հասկացության անհրաժեշտության և նպատակահարմարության հարցը: Գիտնականների մի մասի կարծիքով, «հանցակազմ» հասկացությունից հրաժարումը կրեթի նշված ոլորտի պարզեցմանը, և որ այս հասկացության առկայությամբ գործնական ոչ մի խնդիր չի լուծվում: Այդ պատճառով որոշ երկրներ, մասնավորապես՝ Վրաստանը և Բելառուսը, օրենսդրական մակարդակով հրաժարվել են «հանցակազմ» հասկացությունից:

Չանդրադառնալով քրեաիրավական գիտության մեջ «հանցակազմ» հասկացության պահպանման անհրաժեշտության վերաբերյալ առկա մոտեցումներին, հարկ ենք համարում նշել, որ որակման գործընթացում հանցակազմի նշանակությունը չափազանց մեծ է: Նախ, հանցագործությունները որակելիս պետք է վեր հանվի և հաստատվի հանցակազմի ու կատարված արարքի հատկանիշների համապատասխանությունը, քանի որ արդեն իսկ հանցակազմի հատկանիշների նույնականացումը բավարար է արարքում հանցագործության առկայությունը հավաստելու համար: Բացի այդ, հանցագործության դեպքը քրեաիրավական գնահատականի արժանացնե-

լիս որակման կիրառելի կանոնը ընտրելու համար անհրաժեշտ է ճիշտ «կարդալ» և մեկնաբանել հանցագործության օրենսդրական նկարագրությունը (հանցակազմը): Եվ վերջապես, որակման գլխավոր հարցերից մեկի (այն, թե կատարվածը մեկ միասնական բարդ հանցագործություն է, թե՞ հանցագործությունների համակցություն) լուծումը մեծ մասամբ պայմանավորված է հանցագործության օրենսդրական ձևակերպմամբ, որը ոչ այլ ինչ է, քան հանցակազմը:

Այսպիսով՝ հանցակազմն այն գործիքն է, որը թույլ է տալիս որոշել տվյալ հանրորեն վտանգավոր արարքի իրավաբանական կառուցվածքը և կատարել եզրահանգում այն մասին, որ կատարվածը հանցագործություն է: Այլ խոսքով՝ հենց հանցակազմն է հանդիսանում հանցագործությունների որակման իրավաբանական հիմքը, իսկ դրա կառուցվածքն այն բանալին, որի միջոցով բացվում է դեպի որակման ճշգրիտ կանոնը տանող դուռը:

Այս առումով տեսագործական հետաքրքրություն է ներկայացնում «*հանցակազմ*» և «*Հատուկ մասի հողվածի դիսպոզիցիա*» հասկացությունների հարաբերակցության հարցը:

Քրեական իրավունքի տեսության մեջ միասնություն չկա այն հարցում, թե ինչպես են իրար հետ հարաբերակցվում Հատուկ մասի հողվածի դիսպոզիցիան և համապատասխան հանցագործության հանցակազմը: Այս առումով կարելի է համաձայնել այն գիտնականների հետ, ովքեր գտնում են, որ հանցակազմը, որպես կանոն, ավելի լայն է դիսպոզիցիայի տեքստից: Քրեական իրավունքի Հատուկ մասի հողվածի դիսպոզիցիան մատնանշում, հիշատակում կամ նկարագրում է հանցագործությունը, բայց չի բովանդակում հանցակազմի բոլոր հատկանիշները: Քրեական օրենսգրքի Հատուկ մասում հնարավոր չէ գտնել մի դիսպոզիցիա, որն ամբողջությամբ կարտացոլի հանցակազմի բոլոր հատկանիշները: Այստեղից պետք է եզրակացնել, որ հանցակազմը շատ ավելի խոր և լայն հասկացություն է, քան քրեական օրենսգրքի Հատուկ մասի հողվածի դիսպոզիցիան:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հանցակազմը, հետևաբար՝ հանցագործության որակման բովանդակությունը, որոշվում է ոչ միայն ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հողվածի դիսպոզիցիայի սահմաններում, այլև քրեական իրավունքի այլ ինստիտուտներ:

րի, մասնավորապես՝ Ընդհանուր մասի դրույթների շրջանակներում: Բանն այն է, որ ՀՀ քր. օր.-ի Հատուկ մասի կոնկրետ հոդվածի կիրառումը հնարավոր է միայն Ընդհանուր մասի այն հոդվածների միաժամանակյա հաշվառմամբ, որոնք առնչվում են հանցակազմի հատկանիշներին, մասնավորապես, հանցագործության սուբյեկտին և սուբյեկտիվ կողմին, չավարտված հանցավոր գործունեությանը, հանցակցությանը և այլն:

Սա պայմանավորված է նաև այն իրողությամբ, որ ՀՀ քրեական օրենսգրքը կառուցված է իրավունքի պանդեկտ համակարգին բնորոշ գծերով (ընդհանուրից դեպի հատուկը), ինչը ենթադրում է որ միայն Հատուկ կամ միայն Ընդհանուր մասի դրույթները բավարար չեն հասարակական հարաբերությունների իրավակարգավորման համար: Ընդ որում, Հատուկ մասում օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթների բացակայությունը չի նշանակում, որ դրանք չեն հանդիսանում հանցակազմի տարրեր: Հետևաբար, արարքի ճիշտ որակման համար անհրաժեշտ է հաշվի առնել հանցակազմի ինչպես քրեական օրենսգրքի Հատուկ, այնպես էլ ընդհանուր մասում ամրագրված հատկանիշները: Բացի այդ՝ շատ հաճախ հանցակազմի հատկանիշները չեն սահմանափակվում միայն քրեական օրենսգրքի շրջանակներում և կարգավորվում են բլանկետային իրավական ակտերով: Այս կապակցությամբ դժվար է համաձայնել այն հեղինակներին, ովքեր հանցագործությունների որակման հասկացությունը սահմանելիս այն կապում են կատարված արարքի և քրեական օրենքի *միայն Հարուկ մասով* նախատեսված հանցակազմի նույնության հաստատման հետ:

Այսպիսով, ձևավորելով իրավաբանական նշանակություն ունեցող հատկանիշների հստակ, որոշակի համակարգ, հանցակազմը պարզեցնում է հանցագործությունների որակման գործընթացը, անգամ, եթե այդ հատկանիշները չեն սահմանափակվում միայն քրեական օրենքի հոդվածի դիսպոզիցիայում, այլ ամրագրվում են դրա բլանկետային հատվածներում:

Անհերքելի է, որ իրականությունում կատարվող հանցագործության իրավաբանական նշանակություն ունեցող հատկանիշների պարզումը և վեր հանումն անհրաժեշտ պայման են հավաստի ու ճշգրիտ որակման հասնելու համար: Սակայն պետք է արձանագրել,



որ հանցագործության ոչ բոլոր հատկանիշներն են, որ կարող են ունենալ քրեաիրավական նշանակություն՝ ազդելով արարքի որակման վրա: Արարքի իրավաբանական գնահատականի տեսանկյունից իրավական նշանակություն կարող է տրվել միայն այն հատկանիշներին, որոնք միաժամանակ նկարագրված են համապատասխան հանցակազմում: Ուստի՝ իրավակիրառողի խնդիրն է պարզել և առանձնացնել այն հատկանիշները, որոնք նշանակություն ունեն կատարվածին քրեաիրավական գնահատական տալու տեսանկյունից, և, միևնույն ժամանակ, անտեսել այն հատկանիշները, որոնց նշանակությունն արարքի որակման գործընթացում պասիվ է, այսինքն՝ դուրս է հանցակազմի նկարագրման շրջանակներից:

Քրեական իրավունքի գիտությունը սահմանում է բոլոր հանցագործությունների համար եզակի ընդհանուր կառուցվածք և դրա հիման վրա առանձնացնում հիմնական հատկանիշների խումբ. օբյեկտ, սուբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտիվ կողմ: Հանցակազմը պարունակում է այնպիսի հատկանիշների համակարգ, որոնք անհրաժեշտ են և բավարար արարքը որպես հանցանք որակելու և այլ հանցագործություններից սահմանազատելու համար: Այս հատկանիշների համակարգն իր ամբողջության մեջ կազմում է կոնկրետ հանցագործությունը:

Հարկ է նկատել նաև, որ հանցավոր արարքների յուրաքանչյուր տեսակի համար այդ հատկանիշների կոնկրետ բովանդակությունը խիստ յուրահատուկ է և անհատական: Իհարկե, հնարավոր է նաև առանձին հատկանիշների համընկնում: Բայց, այնուհանդերձ, համակցության մեջ այդ հատկանիշները կազմում են խիստ որոշակի, անհատական, տեսակային հասկացություն: Ասվածի ճշմարտացիության ապացույց է այն, որ քրեական օրենսգրքում չկան ու չեն կարող լինել երկու հանցակազմեր, որոնք միմյանց կհամընկնեն և նույնական կլինեն հատկանիշների ողջ համակցությամբ: Այս ուսմունքը ելակետային նշանակություն ունի հանցագործությունների որակման տեսանկյունից, այլ խոսքով՝ հանդես է գալիս որպես դրա իրավաբանական հիմնավորում:

Իրականության փաստի և քրեական օրենքով նախատեսված հատկանիշների համադրումն իրականացվում է որոշակի մեթոդի կիրառմամբ, որը մշակվել է քրեական իրավունքի և քրեական դա-

տավարության տեսություններում և ստուգվել իրավակիրառ պրակտիկայում: Դրա էությունը հանցակազմի բոլոր հատկանիշների և քրեական գործի փաստական տվյալների համադրումն է, որը, որպես կանոն, իրականացվում է հետևյալ հաջորդականությամբ. օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ:

Հարկ է նկատել, սակայն, որ հանցագործության փաստի մասին հայտնի դառնալու սկզբնական հատվածում հնարավոր է, որ հանցագործության օբյեկտն ակնհայտ չլինի: Օրինակ՝ դեպքի վայրում դիակի հայտնաբերումը կարող է վկայել, որ տեղի է ունեցել կա՛մ սպանություն, կա՛մ դժբախտ պատահար, կա՛մ ինքնասպանություն, կա՛մ առողջությանը ծանր վնասի պատճառում, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ, կա՛մ ճանապարհային երթևեկության կանոնների խախտմամբ վրաերթ, կա՛մ հանկարծամահություն և այլն: Այսինքն՝ փաստին սկզբնական քրեաիրավական գնահատական տալիս հնարավոր է, որ հանցագործության օբյեկտի որոշումը դժվար լինի, ինչը բնական է:

Քանի որ հանցագործության օբյեկտը ոչ թե փաստական հանգամանքն է, այլ քրեական օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերությունների համակցությունը, հետևաբար՝ դրա որոշումը պետք է իրականացվի գործի փաստական տվյալների վերլուծության միջոցով:

Հնարավոր է, ինչը հաճախ պատահում է, որ քրեական օրենքով արգելված արարքի որակման սկզբնական փուլում (օրինակ՝ քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելիս) ենթադրյալ հանցանք կատարած անձը, հետևաբար՝ նաև արարքը կատարելու սուբյեկտիվ կողմի հարցերը, վարույթն իրականացնող մարմնի համար դեռևս անհայտ լինեն, ինչը, կարելի է ասել, օբյեկտիվ խոչընդոտ է հանցագործության դեպքին ճշգրիտ քրեաիրավական գնահատական տալու համար: Սակայն գոյություն ունեցող փաստական հանգամանքների հիման վրա իրավակիրառողի ենթադրությունները, որ կատարվածը հանցագործություն է, դեպքի առնչությամբ առաջ քաշվող ընդհանուր վարկածն է: Իսկ սկզբնական փուլում հանցագործության որակումն ընդհանուր, սկզբնական վարկածի որակումն

է, ինչը հետագայում կարող է ճշգրտվել և լրացվել գործի ընթացքում ձեռք բերված փաստական հանգամանքների հիման վրա:

Արարքում հանցակազմի հատկանիշների հավաստումից հետո հանցագործության որակումը մտնում է հաջորդ փուլ: Վերջինիս շրջանակներում բացահայտվում են հանցավոր արարքի սեռային հատկանիշները, հաստատվում է հանցավոր ոտնձգության սեռային օբյեկտը և քրեական օրենսգրքի համապատասխան գլուխը, որում ընդգրկված է կատարված արարքը:

Հետագայում որակման գործընթացն ավելի է կոնկրետանում, և այն իրականացնող սուբյեկտը ստուգում է կատարված արարքի կոնկրետ փաստակազմի և քրեական օրենսգրքում նկարագրված հանցագործության հատկանիշների համապատասխանությունը: Այնուհետև, շարունակաբար բացահայտելով և գնահատելով գործի փաստական հանգամանքները՝ իրավակիրառողը ստուգում է առաջ քաշված վարկածները: Ընդ որում, քրեական գործի քննության արդյունքում ի հայտ եկած փաստական հանգամանքները կարող են հաստատել կամ հերքել սկզբնական որակումը: Ի հայտ եկած փաստական հանգամանքները, որոնցով ճշգրտվում, լրացվում են քննության առարկա գործի փաստերը, կարող են հանգեցնել արարքի քրեահրավական որակման փոփոխության, լրացման և այլն: Այն փաստական հանգամանքները, որոնք համապատասխանում են հանցագործության հանցակազմի հատկանիշներին, պետք է հաստատվեն ճշգրիտ և լրիվ, քանի որ այդ հանգամանքներից որևէ մեկի չհաստատվելը համահավասար է համապատասխան հանցակազմի բացակայությանը:

Անկախ քրեահրավական գիտության մեջ և պրակտիկայում գերակշռող մոտեցումից՝ որոշ դեպքերում հանցագործության որակման և քննության գործընթացը կարող է իրականացվել ցանկացած հաջորդականությամբ: Մի դեպքում այն նպատակահարմար է սկսել հանցագործության սուբյեկտի հատկանիշների (օրինակ՝ զինծառայության դեմ ուղղված կամ պաշտոնեական հանցագործությունների պարագայում), մյուս դեպքում՝ օբյեկտիվ հատկանիշների պարագաբանումից, երբ հանցագործության սուբյեկտը անհայտ է (օրինակ՝

ուրիշի գույքի գաղտնի հափշտակության պարագայում), երրորդ դեպքում՝ հանցավոր ոսնձգության օբյեկտի պարզաբանումից (օրինակ՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների պարագայում): Ցանկացած դեպքում, անկախ հանցակազմի հատկանիշների հավաստման գործընթացի հաջորդականությունից, դրա տարրերի բովանդակությունն ուղղորդվում է որակման համար նշանակություն ունեցող հատկանիշների (որոնք նկարագրված են քրեական օրենքում և ազդեցություն են ունենում արարքի քրեաիրավական գնահատականի վրա) որոնմանը:

Այսպիսով՝ հանցագործությունների իրավական բովանդակությունը շատ ավելի լայն է, քան արտացոլված է դրա վերջնական հղմամբ, քանի որ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի կիրառման փաստի արձանագրումը միաժամանակ նշանակում է արարքի այնպիսի իրավաբանական հատկանիշների հավաստում, առանց որոնց հնարավոր չէ կիրառել այդ հոդվածը (սուբյեկտի քրեական պատասխանատվության տարիքի հասած լինելը, մեղսունակությունը, մեղքի որոշակի ձևի առկայությունը, քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների բացակայությունը և այլն): Քրեական օրենսդրության նորմերը կիրառող անձի խնդիրն է բացահայտել այն հատկանիշները, բաղադրամասերը, որոնք կազմում են տվյալ տեսակի հանցագործության օրենսդրական մոդելը կամ, որ նույնն է, հանցակազմը:

Հարկ է արձանագրել նաև, որ հանցակազմի հատկանիշների բացահայտումն ու հավաստումը կատարվում են գործող օրենսդրության շրջանակներում: Ուստի, եթե քրեական օրենքում օրենսդիրը որևէ ձևով չի նկարագրել հանցավոր արարքի այս կամ այն հատկանիշը (հատկանիշները), ապա միանգամայն անթույլատրելի է դրա փոխարեն «հորինել» հանցակազմի բացակայող այդ հնարավոր «տարրը»:

## ԳԼՈՒԽ 2.

### ՉԱՎԱՐՏՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՄՈՎԻՆ ՀՐԱԺԱՐԿԵԼՈՒ ՈՐԱԿՈՒՄԸ

#### 2.1. Հանցագործությունների ավարտի պահի որոշումը

Իրավակիրառ պրակտիկայում հաճախ անհրաժեշտություն է առաջանում որոշելու ոչ միայն ավարտված հանցագործության քրեաիրավական գնահատականը, այլև որակել անձի՝ ավարտին չհասցրած հանցավոր գործունեությունը: Հանցագործությունների որակման արդի հիմնախնդիրների շարքում հատուկ ուշադրության են արժանի անձի չավարտված հանցավոր գործունեության քրեաիրավական գնահատականի հարցերը:

ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում ձևակերպված հանցակազմերի բովանդակությունից հետևում է, որ հոդվածների դիսպոզիցիաներում նկարագրված են ավարտված հանցագործություններ: Օրենսդրական համապատասխան ձևակերպման համաձայն՝ *ավարտված հանցագործություն է համարվում այն արարքը, որը պարունակում է քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները* (ՀՀ քր. օր.-ի հոդված 33-ի 1-ին մաս):

Ավարտված հանցագործության այս բնորոշումը ստեղծում է տպավորություն, որ չավարտված հանցագործության մասին կարելի է խոսել բոլոր այն դեպքերում, երբ անձի արարքում առկա չեն քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները<sup>14</sup>:

---

<sup>14</sup> Ավարտված հանցագործության օրենսդրական այս բնորոշումը չի կարելի հաջողված համարել, քանի որ այստեղ պետք է ոչ թե խոսք գնա քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված հանցագործության մասին ընդհանրապես, այլ շեշտվի հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը: Հակառակ դեպքում, կարող է հանցավորի կատարածը պարունակի քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները, սակայն հանցանքը որակվի որպես չավարտված, քանզի առկա չեն լինի նրա *դիտավորությամբ ընդգրկված* կոնկրետ հանցակազմի բոլոր հատկանիշները:

Ավանդաբար չավարտված հանցանք ընդունված է համարել *հանցագործության նախապատրաստությունը և հանցափորձը*<sup>15</sup>: Այս հետևությունն ուղղակիորեն բխում է նաև ՀՀ քր. օր.-ի հոդված 33-ի 2-րդ մասից: Բացի այդ, հանցագործության նախապատրաստությունը և հանցափորձը պայմանականորեն կոչվում են նախնական հանցավոր գործունեություն, ինչը նշանակում է, որ հանցավոր արարքը նշված դեպքերում կատարվում է մինչև ավարտված հանցագործությունը և այն ավարտելու համար:

Նախնական հանցավոր գործունեությունն իրենից ներկայացնում է հանցավոր մտադրության իրականացման փուլեր, որոնք իրարից տարբերվում են օբյեկտիվ կողմով և վտանգավորության աստիճանով: Հանցավոր գործունեության յուրաքանչյուր նախորդ փուլը կլանվում է հաջորդում, և կատարվածի որակման բանաձևում իր արտահայտությունն է գտնում միայն այն փուլը, որին հասել կամ որում խափանվել է անձի հանցավոր վարքագիծը: Ուստի, հանցագործության որակման տեսանկյունից իրավական նշանակություն ունի նախնական հանցավոր գործունեության միայն այն փուլի որոշումը, որում ընդհատվել և ավարտին չի հասցվել հանցանքը:

Հանցագործության իրավաբանական ավարտի որոշումն ուղղակիորեն պայմանավորվում է դրա օրենսդրական ձևակերպման առանձնահատկություններով: Հետևաբար, կատարված արարքում չավարտված հանցագործության հատկանիշների առկայությունը հավաստելու և կատարվածը ճշգրիտ քրեաիրավական գնահատականի արժանացնելու համար նախ և առաջ անհրաժեշտ է լուծել հարցն այն մասին, թե օրենքի տեքստում ինչ կերպ են նկարագրված այս կամ այն հանցանքի իրավաբանական հատկանիշները:

Ընդունված մոտեցման համաձայն, ըստ օրենսդրական նկարագրման եղանակի, հանցակազմերը լինում են *նյութական, ձևական և հարված (հարած)*:

---

<sup>15</sup> Որոշ հեղինակներ չավարտված հանցագործություն են համարում ոչ միայն հանցագործության նախապատրաստությունը և հանցափորձը, այլև հանցագործությունից կամովին հրաժարումը: Տե՛ս, օրինակ՝ Назаренко Г.В. Русское уголовное право. Курс лекций. М., 2000, էջ 117, Семернева Н.К. Квалификация преступлений (части Общая и Особенная). Научно-практическое пособие. М., 2010, էջ 88 և այն:

**Նյութական հանցակազմերով** հանցագործություններում ավարտված հանցանքի առկայությունը կապվում է օրենքում նշված կամ միանշանակորեն ենթադրվող որոշակի հետևանքների առաջացման հետ: Այլ խոսքով՝ *նյութական հանցակազմերով հանցագործություններն ավարտված են համարվում, երբ հանցավոր արարքի արդյունքում վրա է հասնում օրենքով նախատեսված հանրորեն վրանգավոր հետևանքը և դրանց միջև առկա է լինում հստակ պատճառական կապ:* Օրինակ՝ սպանությունը նկարագրված է նյութական հանցակազմով, քանի որ այն ավարտված է համարվում օրենքով նկարագրված հանրորեն վտանգավոր հետևանքը՝ անձի մահը, վրա հասնելու դեպքում:

Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ, մի դեպքում, հանրորեն վտանգավոր հետևանքները օրենսդրի կողմից կարող են ուղղակիորեն նկարագրված լինել հողվածում՝ որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշ: Օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 185-ի 1-ին մասով գույքը դիտավորյալ ոչնչացնելու կամ վնասելու համար քրեական պատասխանատվությունը կապվում է *զգալի չափերի վնաս պատճառելու* հետ: Կամ՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 112-ի 1-ին մասում սպառիչ թվարկված են հանրորեն վտանգավոր հետևանքները. *մարմնական վնասվածքը կամ առողջությանը պատճառված այլ ծանր վնասը, որը վրանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ (...):*

Մեկ այլ դեպքում՝ Հատուկ մասի հողվածներում կարող է ուղղակիորեն չշեշտվել հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման փաստը, բայց միանշանակ ենթադրվել: Օրինակ՝ գողության հանցակազմում (ՀՀ քր. օր.-ի հոդված 177) նկարագրված են միայն հանցավորի արարքի հատկանիշները:

Դրա հետ մեկտեղ, այս հանցագործության ավարտի պահը կապվում է *գույքի սեփականատիրոջը կամ այլ օրինական տիրապետողին գույքային վնաս պատճառելու* հանգամանքի հետ: Մասնավորապես՝ տվյալ հանցակազմի օրենսդրական ձևակերպման մեջ պատճառված վնասի մասին ուղղակի նշումը բացակայում է, իսկ դրա պատճառումը ենթադրվում է որպես սեփականատիրոջից կամ գույքի այլ տիրապետողից գույք հափշտակելու արդյունք:

Բացի այդ, եթե քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածը բովանդակում է երկու կամ ավելի պարտադիր հետևանքներ, ապա հանցագործությունն ավարտված կհամարվի այդ բոլոր հետևանքներն առաջանալու դեպքում: Երբ պարտադիր հետևանքներից մեկը չի առաջանում, դիտավորյալ հանցագործությունների պարագայում արարքը որակվում է որպես չավարտված հանցագործություն: Անզգույշ հանցագործություններում, երբ չի առաջանում երկու կամ ավելի պարտադիր հետևանքներից առնվազն մեկը, արարքը չի որակվում տվյալ հոդվածով: Կատարվածը, սակայն, կարող է որակվել այն հոդվածով, որը փաստացի առկա է անձի արարքում: Այսպես, օրինակ՝ հանցավորի արարքը կորակվի ՀՀ քր. օր.-ի 321-րդ հոդվածով (կապի ուղիները վնասելը), եթե կապի ուղիների պահպանության կանոնները խախտելու հետևանքով վնասվեն միջազգային կապի մալուխային ուղիները և առաջանա կապի ընդհատում: Հետևաբար, երբ կապի ուղիների պահպանության կանոնները խախտելու հետևանքով թեև վնասվում են միջազգային կապի ուղիները, սակայն չի առաջանում կապի ընդհատում, անձի արարքը չի կարող որակվել ՀՀ քր. օր.-ի 321-րդ հոդվածով: Տվյալ իրավիճակում կատարվածը, համապատասխան այլ հատկանիշների առկայության դեպքում, կարող է որակվել, օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 186-րդ հոդվածով (զույքն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը):

Մինչդեռ, եթե քրեական օրենսգրքի հոդվածում այդ հետևանքները նկարագրված են երկընտրելի ձևով, ապա դրանցից միայն մեկի առաջանալը բավարար է հանցանքն ավարտված ճանաչելու համար: Օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 373-րդ հոդվածի 2-րդ մասը՝ որպես արարքի այլընտրանքային հետևանքներ, նախատեսում է *մարդու առողջությանը ծանր վնասի պատճառումը, ուղեվարկային տրանսպորտի ոչնչացումը կամ այլ ծանր հետևանքներ:*

Այսպիսով, այն դեպքում, երբ ՀՀ քր. օր.-ի Հատուկ մասի կոնկրետ հոդվածում նկարագրված կամ միանշանակորեն ենթադրվող հետևանքներն ընդհանրապես չեն առաջանում հանցավորի կամքից անկախ հանգամանքներով կամ առաջանում են նվազ ծավալով, քան հանցավորի դիտավորությամբ ընդգրկվածն էր, ապա, համապատասխան հատկանիշների առկայության դեպքում, կատարվածը որակվում է որպես չավարտված հանցագործություն:



Ասվածը նշանակում է, որ *հանցագործության ավարտի պահի որոշման համար առաջնահերթ ուշադրություն է պետք դարձնել կատարվածի իրավաբանական (օրենքում նկարագրված), այլ ոչ իրական կամ փաստացի հետևանքների առաջացմանը:*

**Ձևական հանցակազմերում** հանցագործության ավարտի պահը կապվում է քրեական օրենքի կոնկրետ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված գործողության (անգործության) կատարման հետ: Տվյալ պարագայում հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված արարքի (գործողության, անգործության) կատարումը, օրենսդրի կարծիքով, ինքնին վտանգավոր է և վնաս է պատճառում քրեաիրավական պաշտպանության օբյեկտին կամ ստեղծում է այդպիսի վնաս պատճառելու իրական սպառնալիք: Դրանով պայմանավորված՝ կատարվածը որակելիս անհրաժեշտ է հաշվի առնել արարքի ծավալները, քանզի հոդվածի դիսպոզիցիան ոչ միշտ է, որ տալիս է դրա ամբողջական նկարագիրը:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ ձևական հանցակազմերով հանցագործություններն ընդունված է համարել չավարտված, երբ հանցավորն իր կամքից անկախ հանգամանքներով չի կատարում կամ ամբողջությամբ չի կատարում հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված արարքը (արարքները): Օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 183-ով նախատեսված է ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալն առանց հափշտակելու նպատակի: Տվյալ դեպքում անձի գործողությունները չավարտված հանցագործություն (հանցափորձ) կորակվեն, եթե դրանք ուղղված լինեն ավտոմեքենային առանց հափշտակելու նպատակի ապօրինաբար տիրանալուն, սակայն ավտոմեքենայի դուռը բացելիս կամ ազդանշանային համակարգն անջատելիս վերջինս բռնվի:

Ձևական կառուցվածքով հանցակազմերում հանցագործության ավարտի պահի որոշումն ունի որոշակի առանձնահատկություններ: Այսպես՝ եթե, մի դեպքում, ձևական հանցակազմով հանցագործությունն ավարտված որակելու համար անհրաժեշտ է, որ կատարվի Հատուկ մասի հոդվածում նկարագրված մեկ կոնկրետ գործողություն (անգործություն), ապա, մյուս դեպքում՝ հանցագործության ավարտման համար պետք է կատարվեն մեկից ավելի արարքներ: Այս պատճառով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել եզակի բարդ

այն հանցագործությունների օրենսդրական կառուցվածքի առանձնահատկություններին, որոնք նկարագրված են ձևական հանցակազմերով:

Քրեական իրավունքի տեսությունը և դատական պրակտիկան ընդունելի են համարում հանցագործությունների որակման այն կանոնը, ըստ որի՝ *երկրնստերի արարքներով նկարագրված ձևական հանցակազմերով հանցագործություններն ավարտված են համարվում հանցավորի կողմից այդ արարքներից առնվազն մեկը կատարելու դեպքում*: Ասվածի օրինակ է ՀՀ քր. օր.-ի հոդված 268-ով նախատեսված հանցագործությունը (թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի): Տվյալ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված թեկուզ մեկ գործողությունն ամբողջությամբ կատարելու դեպքում արարքը պետք է որակվի որպես ավարտված հանցագործություն (անգամ, եթե այլ արարքները հանցավորի կամքից անկախ հանգամանքներով ավարտին չհասցվեն): Օրինակ՝ երբ անձը, առանց իրացնելու նպատակի, ձեռք է բերում և պահում է զգալի չափերի թմրամիջոց, և փոխադրելիս ձերբակալվում է իրավասահ մարմնի աշխատակիցների կողմից, վերջինիս արարքը որակվում է ՀՀ քր. օր.-ի հոդված 268-ով՝ որպես ավարտված հանցագործություն: Այսինքն, երկրնստերի արարքներով հանցագործությունների պարագայում *փորձ (նախապատրաստություն) կարող է արձանագրվել այն դեպքերում, երբ անձին չի հաջողվում ընդհանրապես կամ ամբողջ ծավալով իրականացնել երկրնստերի արարքներից և ոչ մեկը*:

Մինևույն ժամանակ, երբ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված են պարտադիր կատարման ենթակա երկու կամ ավելի արարքներ, *հանցագործությունն ավարտված կհամարվի այդ բոլոր արարքները կատարելու դեպքում*: Այսպես, օրինակ՝ բռնաբարության ավարտված հանցակազմն առկա կլինի միայն այն դեպքում, երբ հանցավորը և՛ սեռական հարաբերություն ունենա տուժողի հետ, և՛ բռնություն գործադրի կամ սպառնա դա գործադրել վերջինիս կամ այլ անձի նկատմամբ կամ օգտագործի տուժողի անօգնական վիճակը: Այլ խոսքով, եթե նման դեպքերում հանցավորը չի կատարում հոդվածի դիսպոզիցիայում

նկարագրված պարտադիր համարվող բոլոր գործողությունները, ապա ավարտված հանցագործության մասին խոսք գնալ չի կարող:

**Հարված հանցակազմերում** հանցագործության ավարտի պահը տեղափոխված է առավել վաղ փուլ: Այս հանցակազմերով նախատեսված հանցագործություններն ավարտված որակելու համար բավական է օրենքում նկարագրված այն արարքի կատարումը, որն, ըստ էության, հանցագործության նախապատրաստություն է ենթադրում:

Օրենսդրական նկարագրման եղանակով հատված են կաշառք ստանալու կամ տալու (<< քր. օր.-ի հոդվածներ 311 և 312), բանդիտիզմի (հոդված 222) հանցակազմերը և այլն: Օրինակ՝ կաշառք ստանալն ավարտված է համարվում այն պահից, երբ պաշտոնատար անձը *ստանում կամ պահանջում է* դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն *կամ տրափս է այդպիսիք ստանալու խոստում կամ ընդունում է առաջարկը՝* անկախ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու հանգամանքից:

Այս առումով որոշ հեղինակներ գտնում են, որ հատված հանցակազմով նախատեսված հանցագործության փորձ հնարավոր չէ, քանզի տվյալ դեպքում «փորձը» արդեն իսկ ենթադրում է ավարտված հանցագործություն<sup>16</sup>: Տվյալ մոտեցմանը, սակայն, դժվար է համաձայնել: Բանն այն է, որ օբյեկտիվ իրականության մեջ դրսևորված հանցագործության բնույթով պայմանավորված, այս հանցակազմով նկարագրված հանցագործության փորձ ևս հնարավոր է: Այսպես, մի դեպքում, հանցագործության փորձը տեղի է ունենում այն ժամանակ, երբ հանցագործության օբյեկտիվ կողմը (արարքը) չի կատարվում ամբողջությամբ: Օրինակ՝ բանդա ստեղծելու համար անձանց հավաքագրելուն ուղղված գործողությունները չեն հաջողվում անձի կամքից անկախ հանգամանքներով: Մյուս դեպքում՝ երբ առկա է *փաստական սխալ*: Օրինակ՝ հանցավորը սխալմամբ կաշառքի առարկան հանձնում է պաշտոնատար չհանդիսացող անձի, կամ որպես բանդա ստեղծված կայուն խմբին պատկանող զենքը անպիտան (անսարք) է լինում և այլն:

<sup>16</sup> Տե՛ս Пудовочкин Ю.Е. Учение о преступлении: избранные лекции. М., 2010, էջ 169:

Առանձին դեպքերում Հատուկ մասի դիսպոզիցիան կառուցված է այնպես, որ հանցագործությունների *ավարտի պահը լուծվում է տեսական աղբյուրների կամ դատական պրակտիկայի ամփոփման միջոցով*: Այլ կերպ ասած՝ քրեական օրենսգրքում նախատեսված որոշակի հանցագործությունների ավարտի պահը որոշվում է այն եզրույթների քրեաիրավական բովանդակության բացահայտմամբ, որով նկարագրվում են հանրորեն վտանգավոր արարքները: Օրինակ՝ որոշ հողվածներում օգտագործվում են *խոչընդոտել, ներգրավել, հափշտակել, հարկադրել, մասնակցել, տիրանալ* և նման այլ եզրույթներ: Վերջիններիս քրեաիրավական բովանդակությունը բացահայտելու և արարքը ճիշտ որակելու համար անհրաժեշտ է հիմնվել դրանց վերաբերյալ տեսության մեջ կամ դատական պրակտիկայում առկա մեկնաբանությունների վրա:

Մասնագիտական գրականության մեջ տարբեր տեսակետներ են արտահայտվել հատկապես *հափշտակության ավարտի պահի կապակցությամբ*: Դատական պրակտիկայում, սակայն, ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից այս եզրույթի բովանդակության բացահայտումը, կարծես, մեղմեց առկա վեճերը<sup>17</sup>: Վճռաբեկ դատարանի դիրքորոշման<sup>18</sup> համաձայն՝ *հափշտակությունը ավարտված է համարվում այն պահից, երբ հանցավորը գույքը վերցնելուց, իրենը կամ մեկ ուրիշինը դարձնելուց հետո այն տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունենում*: Միևնույն ժամանակ, երբ

---

<sup>17</sup> Տե՛ս Դ.Ղամբարյանի և մյուսների գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 13.09.2013թ. թիվ ԵԿԴ/0087/01/12 որոշման 31-րդ կետը:

<sup>18</sup> Գ.Մանգասարյանի վերաբերյալ 24.12.2018թ. թիվ ՍԴ1/0070/01/17 գործով անդրադառնալով քր. օր.-ի հողված 238-ով նախատեսված՝ զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի կամ պայթուցիկ սարքերի հափշտակությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում պարտադիր հանդիսացող և Վճռաբեկ դատարանի կողմից սահմանված հափշտակության որոշ հատկանիշներ (ապօրինի, անհատույց վերցնելը, հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը, շահադիտական դրդումներով կատարվելը) չեն կարող պարտադիր դիտարկվել հափշտակության հատուկ տեսակների, այդ թվում՝ զենքի հափշտակության դեպքում: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հափշտակությունների՝ անհատույց լինելուն և շահադիտական դրդումներով կատարելուն:

անձը ապօրինաբար տիրանում է ուրիշի գույքին, սակայն, մինչև տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն ունենալը, ձերբակալվում է իրավապահ մարմնի աշխատակիցների կողմից, ապա խոսք է գնում չավարտված հափշտակության մասին:

Հարկ է արձանագրել, որ հանցագործությունների որակման գործընթացում նախնական հանցավոր գործունեության փուլի ճիշտ որոշումն էական նշանակություն ունի ինչպես տվյալ փուլի քրեաիրավական արժեքավորման, այնպես էլ անձի նկատմամբ կոնկրետ պատիժ նշանակելու տեսանկյունից:

## 2.2. Հանցագործության նախապատրաստության որակումը

ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ *հանցագործության նախապատրաստություն է համարվում ուղղակի դիտարկությամբ հանցանք կատարելու համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելը կամ հարմարեցնելը, ինչպես նաև դիտարկությամբ այլ պայմաններ ստեղծելը, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել այդ անձի կամքից անկախ հանգամանքներով:*

Մեջբերված իրավադրույթի վերլուծությունից հետևում է, որ հանցագործության նախապատրաստությունը դիտարկությամբ արարք է, որը հանցագործության հաջող կատարման համար պայմաններ է ստեղծում: Տվյալ հասկացությունը սահմանող նորմից հետևում է նաև, որ այն դրսևորվում է հետևյալ արարքներից որևէ մեկի կատարմամբ՝ ա) հանցանք կատարելու համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելով, բ) հանցանք կատարելու համար միջոցները կամ գործիքները հարմարեցնելով, գ) հանցանք կատարելու համար այլ պայմաններ ստեղծելով:

Հանցագործության **միջոց կամ գործիքն** արտաքին աշխարհի այն իրերն են, որոնց միջոցով հեշտացվում է հանցավոր ոտնձգության կատարումը, կամ որոնք օբյեկտիվորեն կարելի է օգտագործել հանցանքի անմիջական կատարման համար:

Հանցագործության միջոց կամ գործիք **ձեռք բերելը** ցանկացած եղանակով (օրինական, անօրինական) այդպիսիք հայթայթելն է:

Հանցագործության գործիքները և միջոցները **հարմարեցնել է** համարվում դրանց կառուցվածքի և ձևի այնպիսի փոփոխությունը, որն անհրաժեշտ է հանցավոր ոտնձգության համար:

Առավել լայն հասկացություն է **հանցանք կատարելու համար այլ պայմաններ ստեղծելը**, որը կարող է ընդգրկել տարաբնույթ գործողություններ (անգործություն), որոնք անհրաժեշտ են հանցագործությունը հետագայում կատարելու համար: Նախապատրաստական գործունեության այս ձևին են դասվում այնպիսի գործողությունները, որոնք չեն կարող բնորոշվել որպես միջոցներ և գործիքներ ձեռք բերել կամ հարմարեցնել, բայց որոնց կատարմամբ հանցավոր ոտնձգության համար անհրաժեշտ և իրական պայմաններ են ստեղծվում<sup>19</sup>:

Գործնականում քիչ չեն դեպքերը, երբ անձը մի հանցանք կատարելու համար իրականացնում է մեկ այլ հանցագործություն, որն իրենից կատարվելիք հանցավոր արարքի նախապատրաստություն է ներկայացնում: Այլ խոսքով, երբ անձի՝ հանցագործության նախապատրաստություն ներկայացնող արարքը միաժամանակ պարունակում է ինքնուրույն ավարտված հանցագործության հատկանիշներ:

Այս առումով հարկ է արձանագրել, որ, *եթե անձի նախապատրաստական արարքները միաժամանակ ուղղված են քրեաիրավական պաշտպանության մեկ այլ օբյեկտի դեմ և պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի մեկ այլ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, ապա դրանք պետք է արժանանան լրացուցիչ քրեաիրավական գնահատականի*: Օրինակ՝ եթե անձն առանձնապես խոշոր չափերի խարդախություն կատարելու նպատակով կեղծում է պաշտոնական փաստաթղթեր և ձերբակալվում իրավապահ մարմնի աշխատակիցների կողմից՝ չկարողանալով օգտագործել դրանք, ապա նրա արարքը ենթակա է որակման ինչպես ՀՀ քր. օր.-ի հոդված 325-ի 1-ին մասի, այնպես էլ հոդված 178-ի 3-րդ մասի 1-ին կետի համակցությամբ:

Այսպիսի իրավիճակներին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու համար գործնականում միշտ անհրաժեշտ է բացահայտել և հաշվի առնել հանցավորի նպատակաուղղվածության հարցը: Այսինքն՝ այն, թե ինչ նպատակով է անձի կողմից իրականացվել հանցագործության նախապատրաստություն համարվող այս կամ

---

<sup>19</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Դ.Ղամբարյանի և մյուսների գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԿԴ/0087/01/12 որոշման 29-րդ կետը:

այն արարքը: Հետևաբար, հանցավոր համապատասխան վարքագիծը ճիշտ որակելու, հնարավոր սխալներից խուսափելու նկատառումներով, հանցագործության համար պայմաններ ստեղծելը՝ որպես հանցագործության նախապատրաստություն որակելիս, առանցքային նշանակություն ունի նախապատրաստվող հանցագործության սուբյեկտիվ հատկանիշների հստակ բացահայտումը: Ավելին, կատարված արարքների նկատմամբ անձի սուբյեկտիվ վերաբերմունքի անտեսումը կարող է հանգեցնել կրկնակի (ավելցուկով) մեղսայնացման, ինչն անթույլատրելի է:

Գործնականում նման դեպքեր հաճախ պատահում են, երբ կոնկրետ հանցավոր նպատակի հասնելու համար անձի կողմից տևական ժամանակ ձեռնարկվում են զանազան և բազմաթիվ նախապատրաստական գործողություններ: Նման իրավիճակներում կատարվածը որակելիս կիրառվում է այն կանոնը, ըստ որի՝ *նույն անձի կողմից միասնական դիտարկությանը ընդգրկված, ժամանակային ոչ մեծ խզումով պարբերական արարքները, որոնք ուղղված են միևնույն նպատակին՝ քրեաիրավական պաշտպանության միևնույն օբյեկտի դեմ ուղղված լինելու համար պայմաններ ստեղծելուն, իրենցից ներկայացնում են մեկ հանցագործություն և լրացուցիչ չեն որակվում: Դրանք իրենցից ներկայացնում են մեկ հանցագործություն և պետք է որակվեն եզակի հանցագործության կանոններով:* Այսպես, օրինակ՝ ուրիշի առանձնապես խոշոր չափերի գույքը հափշտակելու նպատակով անձը մեկ շաբաթ ամեն օր այցելում է տուժողի բնակության վայր և զննում տարածքը, հարց ու փորձ անում հարևաններին, դիտարկում մարդկանց շարժը, փախչելու հնարավոր ուղիներ գծում, ընտրում է հանցավոր մտադրության իրականացման հարմար ժամանակ և այլն: Թեև նկարագրված իրավիճակում անձի յուրաքանչյուր գործողություն ինքնին հանցագործության նախապատրաստություն է ենթադրում, սակայն միասնական դիտարկությանը ընդգրկված լինելով՝ հետապնդում է մեկ նպատակ: Այդ իսկ պատճառով նման վարքագիծը ենթակա է որակման որպես եզակի հանցագործություն՝ տվյալ դեպքում, առանձնապես խոշոր չափերի հափշտակության նախապատրաստություն:

Միևնույն ժամանակ, *եթե անձի մեկ հանցագործության համար պայմաններ ստեղծելուն ուղղված արարքներից յուրաքանչյուրը*

քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված ինքնուրույն հանցակազմ է պարունակում, ապա դրանք բոլորը պետք է արժանանան ինքնուրույն քրեափրավական գնահատականի: Օրինակ՝ եթե անձը սպանություն կատարելու նպատակով հափշտակում է հրազենին համալրող դետալներ և դրանցից ապօրինի պատրաստում հրազեն, սակայն այդ պահին բռնվում է իրավապահ մարմնի աշխատակիցների կողմից, ապա նրա արարքները ենթակա են որակման ՀՀ քր. օր.-ի հոդվածներ ինչպես 35-104-ով, այնպես էլ 238-ով և 236-ով:

Հանցագործության որակման տեսանկյունից կարևոր է, որ անձի կողմից ստեղծվող պայմաններն ուղղված լինեն կոնկրետ, այլ ոչ վերացական կամ հավանական հանցանքի կատարմանը: Այս հանգամանքով պայմանավորված, քրեական օրենսգիրքը հանցագործության նախապատրաստությունը՝ որպես չավարտված հանցագործության տարատեսակ, տարբերակում է անձի՝ քրեորեն ոչ պատժելի հանցավոր դիտավորության բացահայտումից:

**Տևող** հանցագործություններում նախապատրաստություն հնարավոր է միայն մինչև համապատասխան պարտականությունների կատարումից խուսափելու առաջին ակտը կատարելն սկսելը: Օրինակ՝ երբ հրազեն ապօրինի ձեռք բերելու պայմանները համաձայնեցնելիս անձը ձերբակալվում է իրավապահ մարմինների կողմից:

Անհրաժեշտ է նկատել, որ նախապատրաստությունը՝ որպես հանցագործության փուլ, քրեորեն պատժելի է միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների պարագայում (ՀՀ քր. օր.-ի հոդված 33-ի 2-րդ մաս): Հետևաբար, ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների նախապատրաստությունը հանցագործություն չէ:

Միևնույն ժամանակ, հանցագործության նախապատրաստություն *հնարավոր է ցանկացած կառուցվածքով հանցակազմերում:*

Սուբյեկտիվ կողմից հանցագործության նախապատրաստությունը բնութագրվում է միայն *ուղղակի դիտավորությամբ:* Այսինքն՝ հանցավորը գիտակցում է, որ ձեռք է բերում միջոցներ կամ գործիքներ կամ դրանք հարմարեցնում է կամ ստեղծում է այլ պայմաններ հանցանքը կատարելու համար, և ցանկանում է կատարել դա:

Հանցագործության նախապատրաստությունը՝ որպես դիտավորյալ հանցանքի կատարման փուլ, առկա է միայն այն դեպքում,



երբ հանցագործությունն ընդհատվել և ավարտին չի հասցվել հանցավորի կամքից անկախ հանգամանքներով:

Հանցագործության նախապատրաստության որակման բանաձևում արտացոլվում է նաև ՀՀ քր. օր.-ի հոդված 35-ը: Այսինքն, տվյալ դեպքում անձի արարքը որակվում է ՀՀ քր. օր.-ի Հատուկ մասի համապատասխան հոդվածով՝ հղում կատարելով քր. օր.-ի հոդված 35-ին:

### 2.3. Հանցագործության փորձի որակումը

ՀՀ քր. օր.-ի հոդված 34-ի համաձայն՝ *հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով:*

Չավարտված հանցագործության տվյալ տեսակն առկա է այն դեպքում, երբ քրեաիրավական պաշտպանության տակ գտնվող օբյեկտի դեմ ոտնձգությունն սկսվում է, նշված օբյեկտին վնաս պատճառելու իրական սպառնալիք է ստեղծվում, սակայն հանցավորի կամքից անկախ հանգամանքներով փաստացի վնաս հասցնելը տեղի չի ունենում կամ պատճառվում է նախատեսածից տարբերվող վնաս: Այլ խոսքով՝ հանցափորձի դեպքում հանցագործության սուբյեկտն սկսում է կատարել կամ մասամբ կատարում է քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված այս կամ այն հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող գործողությունը կամ անգործությունը, սակայն հանցագործությունն ավարտին չի հասցնում իր կամային գործողությունների հետ չկապված հանգամանքների ուժով:

Հանցափորձը, կապված անձի կողմից կատարված գործողության (անգործության) բնույթի և այն հանգամանքի հետ, թե հանցավորն իրենից կախված ինչ է արել հանցագործությունը մինչև վերջ հասցնելու համար, լինում է երկու տեսակ՝ **1) ավարտված** և **2) չավարտված:**

Հանցափորձը համարվում է ավարտված, երբ *հանցավորը գիտակցում է, որ իրենից կախված ամեն ինչ արել է հանցագործությունն ավարտին հասցնելու համար:* Օրինակ՝ հանցավորը տուժ-

դին սպանելու նպատակով կրակոց է արձակում վերջինիս ուղղությամբ՝ պատճառելով կյանքին վտանգ սպառնացող մարմնական վնասվածք, սակայն մահը վրա չի հասնում ժամանակին ցուցաբերած բժշկական օգնության շնորհիվ և այլն:

Չավարտված հանցափորձի դեպքում *հանցավորն իր կամքից անկախ հանգամանքներով չի կատարում իրենից կախված ամեն ինչ՝ հանցագործությունն ավարտելու համար*: Օրինակ՝ հանցավորը տուժողին սպանելու նպատակով ցանկանում է կրակոց արձակել վերջինիս ուղղությամբ, բայց զենքն անսարք է լինում և այլն:

Քրեական իրավունքի տեսության մեջ առանձնացվում է նաև «անպետք» հանցափորձը, որն իր հերթին բաժանվում է երկու տեսակի՝ **1) հանցափորձ անպետք օբյեկտի դեմ և 2) հանցափորձ անպետք միջոցների օգտագործմամբ**:

Անպետք հանցափորձի առաջին տեսակն առկա է այն դեպքում, երբ *անձն իր բոլոր գործողություններն ուղղում է որոշակի օբյեկտի, բայց այդ գործողությունները, թույլ տված սխալի հետևանքով, իրականում չեն ուրնագում այդ օբյեկտի դեմ և դրան վնաս չեն պատճառում*: Այլ խոսքով՝ տվյալ դեպքում օբյեկտին վնաս չի հասցվում այն պատճառով, որ հանցագործության առարկան կորցրած է լինում իր հատկանիշները, այսինքն՝ կա՛մ որպես այդպիսին գոյություն չունի, կա՛մ էլ առարկան հանցավորի պատկերացրածից ցածր արժեք է ներկայացնում: Օրինակ՝ անձը հափշտակում է շրջանառությանից դուրս եկած փողեր, կամ սպանելու դիտավորությամբ կրակոց է արձակում դիակի վրա՝ կարծելով, որ տուժողը քնած է և այլն:

Մինչդեռ անպետք միջոցներով հանցափորձն առկա է այն ժամանակ, երբ *հանցավորը գիտակցում է իր կողմից օգտագործվող հանցագործության գործիքի կամ միջոցի լիարժեք լինելը հանցագործությունը մինչև վերջ հասցնելու համար, սակայն պարզվում է, որ դրանք անպետք են*: Օրինակ՝ երբ թույնի փոխարեն տուժողին տրվում է հասարակ դեղ կամ վիտամին, կամ զենքը, որից հանցավորը ցանկանում է կրակոց արձակել տուժողի ուղղությամբ, անսարք է լինում և այլն:

Չնայած օրենքը հնարավորություն է տալիս հանցափորձի համար անձին քրեական պատասխանատվության ենթարկել՝ անկախ հանցագործության տեսակից, այնուհանդերձ յուրաքանչյուր կոնկ-

րետ դեպքում անհրաժեշտ է հաստատել, որ չավարտված արարքը համապատասխանում է հանրային վտանգավորության այնպիսի մակարդակի, որը թույլ է տալիս այն ինքնին գնահատել որպես հանցագործություն:

Օրենսդիրը հանցագործության փորձը ձևակերպելիս հատուկ շեշտադրել է, որ այն արարք է, որն **անմիջականորեն ուղղված է** հանցանքի կատարմանը (<< քր. օր.-ի հոդված 34): Այսպիսի բնորոշումը, մի կողմից, թույլ է տալիս հանցագործության փորձը տարանջատել հանցագործության նախապատրաստությունից, մյուս կողմից՝ հնարավոր է դարձնում դրա սահմանազատումն ավարտված հանցագործությունից:

Չավարտված հանցավոր գործունեության որակման գործընթացում խիստ կարևորվում է հանցափորձը հանցագործության նախապատրաստությունից հստակ սահմանազատելու հարցը: Այս կապակցությամբ հարկ է արձանագրել, որ հանցագործության նախապատրաստությունը և հանցափորձը միմյանցից տարբերվում են օբյեկտիվ կողմի առանձնահատկություններով՝ կատարված գործողության (անգործության) բնույթով և հանցավոր մտադրության իրականացման աստիճանով: Մասնավորապես, հանցագործության նախապատրաստության ժամանակ հանցագործության օբյեկտի նկատմամբ անմիջական ներգործություն առկա չէ: Չավարտված հանցագործության այս տեսակը որոշակի պայմաններ է ստեղծում, որոնք ուղղված են հանցանքի կատարմանը: Մինչդեռ, հանցափորձի ժամանակ հանցավոր ոտնձգության օբյեկտի վրա անմիջական ներգործություն է տեղի ունենում, ստեղծվում է դրան վնաս պատճառելու իրական վտանգ, սակայն հանցավոր հետևանքները վրա չեն հասնում:

Այս առումով հանցափորձ կորակվեն ոչ միայն այն արարքները, որոնք նկարագրված են քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում, այլև նրանք, որոնք անմիջականորեն նախորդում են դրանց, հանդիսանում վերջիններիս բաղկացուցիչ մասը և չեն կարող առանձնացվել (օրինակ՝ մարմնական վնասվածք հասցնելու համար դանակը գրպանից հանելը, սպանության նպատակով հրազենից նշան բռնելը և այլն): Միևնույն ժամանակ, այն գործողությունները, որոնք օրենքում նկարագրված արարքների

բաղկացուցիչ մաս չեն և օբյեկտիվ կողմի հատկանիշ չեն հանդիսանում, կարող են որակվել միայն որպես հանցագործության նախապատրաստություն (օրինակ՝ հանցագործության վայր ժամանելը, ապագա զոհին հետևելը և այլն):

Այսպիսով, արարքը հանցափորձ որակելու համար պարտադիր է հանցավորի կողմից այնպիսի արարքների կատարումը, որոնք անմիջականորեն ունենում են քրեափրավական պաշտպանության ներքո գտնվող օբյեկտի դեմ և կազմում են տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը կամ դրա մասը: Մինչդեռ հանցագործության նախապատրաստության ժամանակ քրեափրավական պաշտպանության ներքո գտնվող օբյեկտի դեմ անմիջական ունենալու վտանգ առկա չէ, իսկ հանցավորի գործողությունները (անգործությունը) սահմանափակվում են այնպիսի պայմանների ստեղծմամբ, որոնք անմիջականորեն ուղղված են հանցավոր արարքի կատարմանը<sup>20</sup>:

Ավաճը ենթադրում է նաև, որ հանցագործության համար պայմաններ ստեղծելուն ուղղված արարքները (հանցագործության նախապատրաստություն) անմիջականորեն հանցանքը կատարելուն ուղղված արարքներից (հանցագործության փորձ) տարանջատելիս անհրաժեշտ է հաշվի առնել քրեական օրենքի Հատուկ մասի դիսպոզիցիայում բովանդակված հանցագործության օբյեկտիվ կողմի նկարագրման սահմանները: Բանն այն է, որ անձի արարքները, որոնք կազմում են ավարտված հանցագործության օբյեկտիվ կողմը կամ դրա մասը, վկայում են հանցանքի կատարմանը դրանց անմիջական ուղղվածության մասին:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունները փաստում են, որ երբեմն հանցափորձը հանցագործության նախապատրաստությունից տարանջատումն ուղեկցվում է որակման սխալներով: Այդ համատեքստում Վ.Դ.Մուլանովն արդարացիորեն նկատում է, որ իրավակիրառ մարմինը կամ պաշտոնատար անձը երբեմն մերժում է այս կապակցությամբ տեսության մեջ առաջ քաշված մոտեցումներն ու առաջարկությունները: Այսպես՝ տեսաբանների շրջանում թերևս անվիճելի է այն թեզը, որ կնոջ անօգնական վիճակն

---

<sup>20</sup> Այս մասին տե՛ս նաև ՀՀ Վճարել դատարանի՝ Դ.Ղամբարյանի վերաբերյալ 13.09.2013թ. թիվ ԵԿԴ/0087/01/12 գործով որոշումը:

օգտագործելով կատարվող բռնաբարությունների օբյեկտիվ կողմը մեկնարկում է սեռական ակտը սկսվելով: Անձին անօգնական վիճակի հասցնելուն ուղղված հանցավորի արարքները, ինչպես նաև հանցանքի կատարման համար պայմաններ ստեղծելը (օրինակ՝ տուժողին մերկացնելը), չեն ընդգրկվում այս եղանակով կատարվող բռնաբարության օբյեկտիվ կողմում: Մինչդեռ շատ իրավակիրառողներ, գրում է Վ.Դ.Մուխանովը, ենթադրում են, որ անօգնական կնոջ բռնաբարության համար պայմանների ստեղծումը (պահպանակի օգտագործումը, տուժողի հագուստը հանելը) անհրաժեշտ է որակել որպես բռնաբարության փորձ, և ոչ թե բռնաբարության նախապատրաստություն<sup>21</sup>, ինչը սխալ է:

Գործնական կարևոր նշանակություն ունի նաև տևող ու շարունակվող հանցագործություններում հանցափորձի հնարավորության հարցի վերլուծությունը:

**Տևող** հանցագործություններում արարքի կատարման սկզբնական պահը արդեն իսկ պարունակում է ավարտված հանցագործության բոլոր հատկանիշները: Չնայած դրան՝ թեև այս հանցագործությունները հանցակազմի կառուցվածքով ձևական են, բայց, ընդհանուր կանոնի համաձայն, հանցափորձ այս պարագայում ևս հնարավոր է: Հարկ է նկատել, սակայն, որ տևող հանցագործություններում հանցափորձ, որպես կանոն, հնարավոր է այն դեպքում, երբ հանցագործության օբյեկտիվ կողմը, մասնավորապես՝ դրա պարտադիր հատկանիշ հանրորեն վտանգավոր արարքը, չի կատարվում ամբողջությամբ: Այսպես՝ եթե անձը զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով զորամասի պարիսպը հաղթահարելիս բռնվում է, ապա նրա արարքը պետք է որակվի որպես դասալքության փորձ (<< քր. օր.-ի հոդված 34-362):

**Շարունակվող** հանցագործություններում հանցափորձի հնարավորությունը պարզաբանելու համար, նախ և առաջ, հարկ է հասկանալ այս հանցավոր արարքների ավարտի պահը: Հանցագործության տվյալ տեսակը, ընդունված մոտեցման համաձայն, ավարտված է համարվում, երբ կատարվում է անձի միասնական դիտավորության մեջ ընդգրկված հանցավոր արարքներից վերջինը: Ուստի,

---

<sup>21</sup> Ст'ю Молчанов Д.М. Актуальные проблемы уголовного права: Общая часть / Отв. ред. А.И. Парог. М., 2015, էջեր 84-85:

երբ հանցավորն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողանում ավարտին հասցնել իր հանցավոր մտադրությունը՝ կատարելով դիտավորությամբ ընդգրկված բոլոր արարքները, կարող է առաջ գալ չավարտված հանցագործության հարցը:

Հարկ է արձանագրել, որ շարունակվող հանցագործություններում հանցափորձ հնարավոր է, երբ հանցավորի կատարած արարքների և նրա դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության կազմի մեջ առկա է իրավական անհամապատասխանություն: Օրինակ՝ անձը միաբնույթ արարքներով ցանկանում է հափշտակել առանձնապես խոշոր չափերի գույք, սակայն հափշտակում է խոշոր չափերի: Տվյալ իրավիճակում վերջինիս արարքը, այլ ծանրացնող հանգամանքների բացակայության դեպքում, պետք է որակվի որպես առանձնապես խոշոր չափերի գույքի հափշտակության փորձ:

Մինչդեռ, երբ թեև չեն կատարվում հանցավորի դիտավորությամբ ընդգրկված արարքներից բոլորը, սակայն կատարվածն ինքնին տեղավորվում է հանցավորի դիտավորությամբ ընդգրկված հանցագործության կազմի սահմաններում, արարքը որակվում է որպես ավարտված հանցագործություն: Այս պարագայում խոսքն այն մասին է, որ չկատարված արարքներն իրենց բնույթով չունեն իրավական նշանակություն և անգամ կատարվելու դեպքում չեն կարող ազդել արարքի քրեաիրավական գնահատականի վրա:

Այսպես՝ երբ անձը ցանկանում է հափշտակել յոթ հարյուր հազար դրամ արժողության գույք, սակայն պարզվում է, որ հափշտակվածն արժեք վեց հարյուր հազար դրամ, ապա անձի արարքը չի կարող որակվել որպես մտադրված հանցագործության փորձ, քանզի այդ անհամապատասխանությունն էական չէ: Այսինքն՝ դա չունի քրեաիրավական նշանակություն այն պատճառով, որ հափշտակության հանցակազմերի տեսանկյունից ինչպես յոթ, այնպես էլ վեց հարյուր հազար դրամը համարվում են խոշոր չափ և տեղավորվում հանցավորի կողմից գիտակցված հանցակազմի հատկանիշի սահմաններում: Ուստի՝ տվյալ դեպքում անձի արարքը պետք է որակվի որպես ավարտված խոշոր չափերի հափշտակություն:

Այսպիսով, կարելի է ասել, որ *շարունակվող հանցագործության նպատակից, հանցավորի դիտավորության բովանդակությունից, մեղքի ձևից և տեսակից (կոնկրետացված, չկոնկրետացված) կախ-*

ված՝ այն որակվում է կա՛մ որպես հանցագործության փորձ, կա՛մ ավարտված հանցագործություն:

**Վերաճող հանցագործությունների** դեպքում, երբ մի հանցագործությունը, անձի դիտավորության փոխակերպման արդյունքում, վեր է աճում, որպես կանոն, առավել վտանգավոր հանցագործության, փորձ հնարավոր է, եթե հանցագործությունը վերաճելուց հետո իրականացվում է վերաճած հանցագործության օբյեկտիվ կողմի որոշակի գործողություն (անգործություն), սակայն մտադրված հանցագործությունը մնում է անավարտ: Օրինակ՝ երբ գողություն կատարելիս անձը, գիտակցելով, որ նկատվել է, դիմում է փախուստի, իր հետ տանելով հափշտակված գույքը, սակայն մինչև այն օգտագործելու կամ տնօրինելու իրական հնարավորություն ունենալը ձերբակալվում է, նրա արարքը պետք է որակել որպես կողոպուտի փորձ:

Մինչդեռ, եթե անձի դիտավորությունը թեև վերափոխվում է առավել ծանր հանցագործության, սակայն վերջինս չի հասցնում իրականացնել վերաճած հանցագործության օբյեկտիվ կողմի բովանդակություն կազմող որևէ գործողություն, ապա կատարվածը որակվում է որպես սկզբնական հանցագործության փորձ: Այսպես, երբ գողություն կատարելիս անձը, գիտակցելով, որ նկատվել է, փորձում է դիմել փախուստի, սակայն նրան չի հաջողվում, և նա անմիջապես ձերբակալվում է, կամ տեսնելով, որ նկատվել է, նետում է հափշտակված գույքն ու փախչում, ապա նրա արարքը պետք է որակվի որպես գողության փորձ:

Վերաճող հանցագործություններում չավարտված հանցագործության որակման հետաքրքրական օրինակ է հետևյալ իրավիճակը. անձը, օրինական հիմքերով ուրիշի բնակարանում գտնվելիս, ննջասենյակից հափշտակում է *չորս հարյուր հազար*, իսկ աշխատասենյակից՝ *երկու միլիոն յոթ հարյուր հազար* ՀՀ դրամ: Այնուհետև, տեսնելով տուժողին և հասկանալով, որ նկատվել է, *երկու միլիոն յոթ հարյուր հազար* ՀՀ դրամը, իր կամքով չպայմանավորված, թողնում է և փախչում՝ իր հետ տանելով միայն *չորս հարյուր հազար* ՀՀ դրամը: Այստեղ հարց է ծագում՝ ինչպե՞ս պետք է որակվի հանցավորի արարքը. որպես փաստացի կատարած կողոպուտ, առավել որակյալ գողության փորձ, թե՞ առավել որակյալ հանգամանքով

կողոպուտի փորձ: Այս կապակցությամբ գտնում ենք, որ, քանզի դադարել է հանցավորի գործողությունների գաղտնիության գործոնը, և այն վերածվել է բացահայտի, և, միևնույն ժամանակ, չի կատարվել մտադրված հանցագործությունը, սակայն իրականացվել է վերաճած հանցագործության օբյեկտիվ կողմը, արարքը պետք է որակել որպես *առանձնապես խոշոր չափերով կողոպուտի փորձ*:

Հանցագործության որակման ընդհանուր տեսության մեջ մշակվել է հանցափորձի որակման կանոնների որոշակի համակարգ, որոնք ուղենիշ են ծառայում հանցավոր արարքներին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու համար: Ընդհանուր առմամբ այդ կանոնները հանգում են հետևյալին. *եթե չի կատարվում հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ արարքն ամբողջությամբ կամ չի առաջանում հանցավորի համար ցանկալի հետևանքը, ապա արարքը որակվում է ըստ դիտավորության ուղղվածության, այսինքն՝ որպես դիտավորության ընդգրկված հանցագործության փորձ*: Օրինակ՝ անձը զոհի ուղղությամբ նշան բռնելիս ձեռքակալվում է կամ արձակում է կրակոց, սակայն վրիպում է: Նկարագրված իրավիճակներում անձի արարքը պետք է որակվի որպես սպանության փորձ (ՀՀ քր. օր.-ի հոդված 34-104):

Այն դեպքերում, երբ անձի համապատասխան գործողությունը (անգործությունը) չի հանգեցնում քրեական օրենսգրքի Հատուկ մասի կոնկրետ հոդվածով, հոդվածի մասով կամ կետով նախատեսված հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացմանը, ավարտված հանցագործության մասին անհնար է խոսել: Մինչդեռ, *երբ հանցագործության փորձի ժամանակ առաջանում են այնպիսի հետևանքներ, որոնք ոչ թե հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված, այլ մեկ ուրիշ ավարտված հանցագործության հատկանիշներ են, իրավիճակը կարող է փոխվել*:

Տեսության մեջ այդ կապակցությամբ չկա միասնական մոտեցում: Հեղինակներից ոմանք<sup>22</sup> կարծում են, որ այն դեպքում, երբ անձի արարքի արդյունքում առաջանում են այնպիսի հետևանքներ, ո-

---

<sup>22</sup> Տե՛ս, օրինակ՝ Козлов А.П. Учение о стадиях преступления. СПб., 2002, էջ 152, Редин М.П. Преступления по степени их завершенности. М., 2006, էջ 176, Сабитов Р.А. Теория и практика уголовно-правовой квалификации. М., 2013, էջ 316:



րոնք ընդգրկված չէին հանցավորի դիտավորությամբ, կատարվածը պետք է որակվի միայն որպես հանցագործության փորձ: Մյուսների կարծիքով՝ նկարագրված իրավիճակներում հանցավորի արարքը պետք է որակել հանցանքների համակցությամբ՝ որպես հանցափորձ և ավարտված հանցագործություն<sup>23</sup>:

Չհավակնելով բացահայտել տեսական գրականության մեջ արտահայտված բոլոր կարծիքները՝ գտնում ենք, որ նկարագրված իրավիճակներում կատարվածը ճիշտ քրեաիրավական գնահատականի արժանացնելու համար որպես ելակետ պետք է ընդունվի այն, թե այդպիսի հետևանքներ առաջացնելիս ինչպիսի՞ օբյեկտի դեմ է եղել ոտնձգությունը, ի՞նչ բնույթի և չափի վնաս է պատճառվել և այդ վնասը մեղքի ի՞նչ ձևով է պատճառվել: Այլ կերպ ասած՝ նկարագրված իրավիճակներում կատարվածը ճիշտ քրեաիրավական գնահատականի արժանացնելու համար պետք է հաշվի առնվեն հանցավոր ոտնձգության օբյեկտը, պատճառված վնասի բնույթը և չափը, ինչպես նաև առաջացած հետևանքների նկատմամբ հանցավորի դրսևորած մեղքի ձևը:

Այսպես, եթե հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված օբյեկտին դիտավորությամբ ավելի փոքր վնաս է պատճառվում, քան մտադրվածն էր, ապա դա *կլանվում է անձի դիտավորությամբ ընդգրկված հանցագործության փորձի մեջ և ինքնուրույն չի որակվում*: Օրինակ՝ եթե հանցավորը ցանկանում է տուժողի առողջությանը պատճառել ծանր, սակայն պատճառում է միջին ծանրության վնաս, ապա կատարվածը որակվում է որպես դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու փորձ, իսկ տուժողի առողջությանը պատճառված փաստացի վնասը չի արժանանում ինքնուրույն քրեաիրավական գնահատականի:

Եթե հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված օբյեկտին դիտավորությամբ (անուղղակի) ավելի մեծ վնաս է պատճառվում, քան մտադրվածն էր, ապա *կատարվածը պետք է որակվի որպես ավարտված առավել ծանր հանցագործություն*: Օրինակ՝ եթե հանցա-

---

<sup>23</sup> Տե՛ս, օրինակ՝ Толмачев О. Квалификация преступлений при частичной реализации умысла // Российская юстиция, 2000, № 12, էջ 31, Назаренко Г.В., Ситникова А.Н. Неоконченные преступления. Монография. М.: Ось-89, 2003, էջեր 127-130:

վորը տուժողի առողջությանը ցանկանում է պատճառել թեթև, սակայն անուղղակի դիտավորությամբ պատճառում է ծանր վնաս, ապա կատարվածը պետք է որակել միայն որպես առողջությանը ծանր վնասի ավարտված պատճառում:

Եթե հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված օբյեկտին անզգուշությամբ ավելի փոքր վնաս է պատճառվում, քան մտադրվածն էր, ապա *կատարվածը պետք է որակվի հանցանքների համակցությամբ*: Օրինակ՝ եթե հանցավորը ցանկանում է տուժողի առողջությանը պատճառել ծանր, սակայն անզգուշությամբ պատճառում է միջին ծանրության վնաս, ապա կատարվածը որակվում է որպես առողջությանը ծանր վնաս պատճառելու փորձ և անզգուշությամբ միջին ծանրության վնասի պատճառում:

Մեկ այլ օրինակում՝ հանցավորը սպանելու դիտավորությամբ շենքի պատշգամբից նշան է բռնում ներքևում գտնվող զոհի ուղղությամբ, սակայն արմունկով հանկարծակի դիպչում է բազրիքին դրված ծաղկամանին, այն գցում է տուժողի գլխին՝ վերջինիս առողջությանը պատճառելով ծանր վնաս: Հանցավորը, կարծելով, որ տուժողը մահացել է, հեռանում է: Այս դեպքում կատարվածը պետք է որակվի որպես սպանության փորձ և անզգուշությամբ առողջությանը ծանր վնասի պատճառում:

Միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ, եթե հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված օբյեկտին վնաս չի պատճառվում կամ պատճառվում է ավելի փոքր չափով, և հանցավորը, գիտակցելով տվյալ իրավիճակում մտադրված հանցանքը հաջողությամբ ավարտին հասցնելու իրական հնարավորությունը, դադարեցնում է իր հանցավոր գործողությունները (անգործությունը), ապա, համապատասխան հատկանիշների առկայության դեպքում, նրա արարքը *պետք է քննարկվի հանցագործությունից կամովին հրաժարվելու ինստիտուտի համատեքստում* (այս մասին հաջորդիվ):

Եթե հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված օբյեկտին անզգուշությամբ ավելի մեծ վնաս է պատճառվում, քան մտադրվածն էր, ապա *արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ*: Օրինակ՝ անձը ցանկանում է տուժողի առողջությանը պատճառել թեթև, սակայն անզգուշությամբ պատճառում է ծանր վնաս: Տվյալ դեպքում հանցավորի արարքը պետք է որակվի

հանցանքների համակցությամբ՝ որպես անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառել և առողջությանը թեթև վնաս պատճառելու փորձ:

Եթե, հանցավորի դիտավորության մեջ ընդգրկվածից բացի, վնաս է պատճառվում (ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անզգուշությամբ) նաև մեկ այլ օբյեկտի, ապա *արարքը որակվում է հանցագործությունների համակցությամբ*<sup>24</sup>: Օրինակ՝ հանցավորը սպանելու դիտավորությամբ կրակոց է արձակում տուժողի ուղղությամբ, սակայն վրիպում է և անզգուշությամբ վնասում վերջինիս ավտոմեքենայի թափքը: Տվյալ դեպքում հանցավորի արարքը պետք է որակվի որպես սպանության փորձ և գույքի անզգուշությամբ վնասում (հանցակազմի համապատասխան հատկանիշների առկայության դեպքում):

Թերևս այս առումով բացառություն են կազմում կյանքը և առողջությունը: Տվյալ պարագայում, թեև, գործ ունենք քրեաիրավական պաշտպանության տարբեր օբյեկտների հետ, այնուհանդերձ, երբ անձը ցանկանում է սպանություն կատարել, սակայն տուժողի առողջությանը պատճառում է միջին ծանրության վնաս, ապա վերջինս կլանվում է սպանության փորձի մեջ և ինքնուրույն չի որակվում:

Պարզապես հարկ է արձանագրել՝ երբ հանցագործության փորձի ժամանակ առաջանում են այնպիսի հետևանքներ, որոնք ոչ թե հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված, այլ մեկ ուրիշ ավարտված հանցագործության հատկանիշներ են, և հանցավորը դրանց նկատմամբ դրսևորում է անզգուշություն, ապա կատարվածը կարող է որակվել հանցանքների համակցությամբ, միայն, եթե անզգուշությամբ այդպիսի վնաս պատճառելը՝ որպես ինքնուրույն հանցագործություն, նախատեսված է քրեական օրենսգրքում:

Ինչպես վերը նշվեց՝ *անձի դիտավորության բովանդակության (դիտավորությամբ ընդգրկված հանցագործության կազմի) և հան-*

---

<sup>24</sup> Թերևս բացառություն են կազմում այն դեպքերը, երբ այլ օբյեկտին վնաս պատճառելը նախատեսված է տվյալ հանցակազմում որպես հատկանիշ (որակյալ կամ առավել որակյալ): Օրինակ՝ երկու կամ ավելի անձի սպանությունը (<< քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ), կամ հանցակազմի հատկանիշ է անզգուշությամբ որևէ ծանր հետևանք առաջացնելը և այլն:

ցավոր արդյունքի (փաստացի նրա կողմից կատարված հանցագործության կազմի) միջև անհամապատասխանության առկայության դեպքում, վերջինիս արարքը կարող է որակվել որպես համապատասխան հանցագործության փորձ, միայն, երբ այդպիսի անհամապատասխանությունը կրի քրեաիրավական բնույթ և ունենա նշանակություն արարքի որակման տեսանկյունից: Այսպես՝ եթե անձը ցանկանում է կատարել երկու անձի սպանություն, սակայն նրան հաջողվում է կյանքից զրկել միայն մեկին, ապա նրա արարքը պետք է որակվի որպես երկու կամ ավելի անձանց սպանության փորձ (ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 34-104-ի 2-րդ մասի 2-րդ կետ): Մինչդեռ, եթե հանցավորը ցանկանում է կյանքից զրկել երեք կամ ավելի անձի, սակայն նրան հաջողվում է սպանել միայն երկուսին, ապա արարքը պետք է որակվի որպես ավարտված երկու կամ ավելի անձանց սպանություն, քանի որ հանցավորի կատարած արարքն իր մեջ, արդեն իսկ, պարունակում է սպանության որակյալ տվյալ հանգամանքի բոլոր հատկանիշները: Այլ խոսքով՝ եթե առաջին դեպքում անձի դիտավորության բովանդակության և հանցավոր արդյունքի միջև անհամապատասխանությունը կրում է իրավական բնույթ, ապա երկրորդ իրավիճակում՝ այդպիսի անհամապատասխանությունն արարքի որակման տեսանկյունից չունի որևէ նշանակություն: Թեև հանցավորը չի հասնում վերջնական նպատակի իրագործմանը, այնուհանդերձ, նրա փաստացի կատարածը պարունակում է իր դիտավորությամբ ընդգրկված հանցագործության իրավաբանական կազմի բոլոր հատկանիշները:

Չավարտված հանցագործությանը քրեաիրավական գնահատական տալու գործընթացում կարևոր է նկատի ունենալ, որ, եթե հանցակազմերը կառուցելիս որևէ հատկանիշ օրենսդրի կողմից չի արժևորվել և քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածում չի նախատեսվել որպես հանցակազմի (որակյալ կամ արտոնյալ) հատկանիշ, ապա, չնայած հանցավորի դիտավորությամբ ընդգրկված լինելուն, չի կարող վկայել չավարտված հանցագործության մասին: Օրինակ՝ եթե անձը ցանկանում է երկու անձից կողոպուտ կատարել, սակայն նրան հաջողվում է կողոպտել միայն մեկին, ապա նրա արարքը, այլ ծանրացնող հանգամանքների բացակայության դեպքում, պետք է որակվի որպես հասարակ կողոպուտ: Բանն այն է, որ

«հանցանքը երկու անձանց նկատմամբ կատարելը» նախատեսված է որպես կողոպուտի հանցակազմի որակյալ հատկանիշ:

Մեկ այլ օրինակում՝ անձը ցանկանում է սպանություն կատարել «Մարգոլին ՄՅՄ» տեսակի հրազենով, սակայն հանցանքը կատարելիս պարզվում է, որ այն անսարք է, և անձը որպես սպանության գործիք է օգտագործում դանակը: Այս իրավիճակում, քանի որ հանցագործության գործիքի տեսակն ինքնին չի արժևորվել օրենսդրի կողմից, և որպես պարտադիր հատկանիշ չի նախատեսվել սպանության հանցակազմում, տվյալ անհամապատասխանությունն արարքի որակման տեսանկյունից չի կարող ունենալ որևէ իրավական նշանակություն: Նկարագրված իրավիճակում անձի արարքը պետք է որակել որպես ավարտված սպանություն:

Կա՛մ, երբ անձը, օրինակ՝ ցանկանում է ապօրինի իրացնել զգալի չափերի երկու առանձին տեսակի թմրամիջոց (ասենք՝ բուպրոբենորֆին և մարիխուանա), սակայն կարողանում է իրացնել միայն մեկը: Քանի որ կոնկրետ թմրամիջոցի տեսակը օրենսդրի կողմից չի նախատեսվել Հատուկ մասի հոդվածում որպես հանցակազմի իրավաբանական հատկանիշ, ուստի՝ անկախ նրանից, թե հանցավորին քանի տեսակի թմրամիջոց է հաջողվել իրացնել, նրա արարքը, այլ ծանրացնող հատկանիշների բացակայության դեպքում, պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի 266-րդ հոդվածի առաջին մասով՝ որպես ավարտված հանցագործություն:

Նկարագրված իրավիճակում չավարտված հանցագործության մասին կարող է խոսք գնալ՝ պայմանավորված հանցակազմի այլ հատկանիշով (օրինակ՝ առարկայի չափով): Այսպես՝ անձը միասնական դիտավորությամբ ցանկանում է ապօրինի իրացնել երկու առանձին տեսակի (օրինակ՝ բուպրոբենորֆին և մարիխուանա) թմրամիջոց, որոնցից մեկը *զգալի*, իսկ մյուսը՝ *առանձնապես խոշոր չափերի*, սակայն նրան հաջողվում է իրացնել միայն զգալի չափերի թմրամիջոցը, իսկ երկրորդն (առանձնապես խոշոր չափերի թմրամիջոցը) իրացնելիս ձերբակալվում է իրավապահ մարմնի աշխատակիցների կողմից: Քանի որ թմրամիջոցի չափը ՀՀ քր. օր.-ի 266-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշ է (որակյալ, առավել որակյալ), ուստի՝ հանցավորի դիտավորության մեջ դրա ընդգրկված լինելու, սակայն նրա արարքում բացակայելու դեպքում

կհանգեցնի չավարտված հանցագործության: Մասնավորապես, նշված իրավիճակներում հանցավորի արարքն անհրաժեշտ է որակել ՀՀ քր. օր.-ի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով՝ որպես առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցի ապօրինի իրացման փորձ: Իսկ ապօրինի իրացված զգալի չափերի թմրամիջոցի ավարտված հանցագործության փաստը պետք է կլանվի հանցավորի դիտավորությամբ ընդգրկված առավել ծանր հանցագործության փորձի մեջ և ինքնուրույն չի կարող որակվել: Մինչդեռ, նախաքննական մարմինն անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման և մեղադրական եզրակացության մեջ, իսկ դատարանը՝ դատավճռի նկարագրական հատվածում պարտավոր են արտացոլել այդ հանգամանքը, ինչը թույլ կտա ամբողջությամբ գնահատել հանցագործության հանրային վտանգավորությունը և արդարացի պատիժ նշանակել:

*Մեկ նպատակին ուղղված անձի միասնական դիտավորությամբ ընդգրկված պարբերական արարքները, որոնք անմիջականորեն ուրնձգում են քրեաիրավական պաշտպանության միևնույն օբյեկտի դեմ, եթե չեն հաջողվում անձի կամքից անկախ հանգամանքներով, չեն կարող կազմել համակցություն:* Այսպես, օրինակ՝ անձը սպանություն կատարելու նպատակով կրակոց է արձակում այլ անձի ուղղությամբ, սակայն վրիպում է: Հաջորդ օրը տվյալ անձը նույն նպատակով կրկին կրակոց է արձակում միևնույն զոհի ուղղությամբ, սակայն կրկին վրիպում է: Երրորդ օրը զոհի ուղղությամբ նշան բռնելիս հանցավորը ձերբակալվում է իրավապահ մարմնի աշխատակիցների կողմից: Նկարագրված իրավիճակում, թեև հանցավորի յուրաքանչյուր արարք իր մեջ պարունակում է սպանության ավարտված հանցափորձի հատկանիշներ, սակայն, քանզի դրանք ընդգրկված են միասնական դիտավորությամբ և հետապնդում են միևնույն նպատակը, ուստի՝ պետք է դիտվեն որպես մեկ հանցագործություն և որակվեն եզակի բարդ հանցագործության (շարունակվող) կանոններով, այսինքն՝ որպես մեկ սպանության փորձ:

Գիտագործնական հետաքրքրություն է ներկայացնում նաև այն դեպքերի որակումը, երբ անձի դիտավորությամբ միաժամանակ ընդգրկված են լինում քրեական օրենսգրքի Հատուկ մասի միևնույն հոդվածի միևնույն մասի տարբեր կետերով նախատեսված որակյալ

հանգամանքներ, սակայն փաստացի կատարվածում դրանցից որոշները բացակայում են: Այլ խոսքով՝ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի միևնույն մասով նախատեսված մի որակյալ հատկանիշի կապակցությամբ անձի հանցավոր դիտավորությունն իրականացվում է, իսկ մյուսի (մյուսների)՝ նկատմամբ՝ մնում է անավարտ: Այս կապակցությամբ որակման կանոն է առաջարկվել ՀՀ դատախազության կոլեգիայի 2017թ. մարտի 3-ի որոշմամբ, համաձայն որի՝ «(...) այն դեպքերում, երբ հանցավորի գործողություններն իրենց մեջ ընդգրկում են ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մի քանի որակյալ դարձնող հանգամանքներ, օրինակ՝ երբ անձի հանցավոր ոտնձգությունը (նախնական դիտավորությունը) ուղղված է լինում շահադիպական դրդուններով երկու կամ ավելի անձանց կյանքից զրկելուն, սակայն արդյունքում մահ է պատճառվում նրանցից միայն մեկին, ճիշտ կլինի, որպեսզի արարքը որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և համապատասխան որակյալ դարձնող հանգամանքով (բերված օրինակի պարագայում՝ նաև 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով) (...):»: Կարծում ենք, սակայն, եթե հանցավորի դիտավորությամբ ընդգրկված քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի միևնույն մասի տարբեր կետերով նախատեսված ծանրացնող հանգամանքներից կատարվում է միայն մեկը, ապա անձի արարքի որակման բանաձևում չի կարող արտացոլվել չավարտված հատկանիշը՝ որպես ավարտված, իսկ արարքն այդ ծանրացնող հատկանիշով հանցագործության փորձ որակելը տրամաբանական չէ, քանի որ արդեն իսկ առկա հոդվածի միևնույն մասով նախատեսված այլ ծանրացնող հատկանիշով ավարտված հանցակազմը:

Ուստի՝ մեր կարծիքով, եթե անձի դիտավորությամբ միաժամանակ ընդգրկված են քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի միևնույն մասի տարբեր կետերով նախատեսված որակյալ հանգամանքներ, սակայն փաստացի կատարած արարքում առկա է դրանցից միայն մեկը (կամ ոչ բոլորը), ապա նրա արարքը պետք է որակվի միայն այն ծանրացնող հանգամանքով (հանգամանքներով)՝ որպես ավարտված հանցագործություն, որը (որոնք) փաստացի առկա է (են) անձի արարքում: Օրինակ՝ երբ անձի հանցավոր ոտնձգությամբ

յունն ուղղված է լինում շահադիտական դրդումներով երկու կամ ավելի անձանց կյանքից զրկելուն, սակայն արդյունքում մահ է պատճառվում նրանցից միայն մեկին, ապա արարքը պետք է որակվի միայն ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով՝ որպես շահադիտական դրդումներով կատարված ավարտված սպանություն: Կա՛մ, օրինակ՝ երբ անձը ցանկանում է բնակարան ապօրինի մուտք գործելով (ՀՀ քր. օր.-ի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետ) առանձնապես խոշոր չափերի (նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ) հափշտակություն կատարել, սակայն փաստացի կատարում է բնակարան ապօրինի մուտք գործելով խոշոր չափերի (նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ) հափշտակություն, ապա նրա արարքը պետք է որակվի միայն ՀՀ քր. օր.-ի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով՝ միայն որպես բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված հափշտակություն:

Միաժամանակ՝ նախաքննական մարմինն անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման և մեղադրական եզրակացության մեջ, իսկ դատարանը՝ դատավճռի նկարագրական հատվածում պարտավոր են արտացոլել արարքում առկա բոլոր ծանրացնող (առավել ծանրացնող) հանգամանքները, այդ թվում՝ հանցավորի դիտավորությամբ ընդգրկված, սակայն նրա կամքից անկախ հանգամանքներով չիրականացվածները: Դա թույլ կտա ամբողջությամբ գնահատել հանցագործության հանրային վտանգավորությունը և անձի դիտավորությամբ ընդգրկված բոլոր ծանրացնող հանգամանքների առկայությունը հաշվի առնել պատիժ նշանակելիս:

Մինչդեռ, երբ հանցավորի դիտավորությամբ ընդգրկված են քր. օր.-ի միևնույն հոդվածի *տարբեր մասերով* նախատեսված ինչպես ծանրացնող, այնպես էլ առավել ծանրացնող հանգամանքներ, որոնցից միայն մեկի կապակցությամբ է իրականացվում հանցավոր դիտավորությունն ամբողջությամբ, ապա հնարավոր են որակման հետևյալ իրավիճակները.

Ա. Եթե հանցավորի դիտավորությունն իրականացվում է միայն հանցակազմի որակյալ հատկանիշի կապակցությամբ (առավել որակյալի կապակցությամբ՝ ոչ), ապա *արարքը որակվում է որպես առավել որակյալ հատկանիշով հանցագործության փորձ*: Օրինակ՝



Եթե անձը մտադրվում է, պաշտոնեական դիրքն օգտագործելով, առանձնապես խոշոր չափերի խարդախություն կատարել, սակայն պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ այն իրականացնում է խոշոր չափերով, ապա արարքը պետք է որակել որպես առանձնապես խոշոր չափերի խարդախության փորձ (<< քր. օր.-ի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ):

Բ. Եթե հանցավորի դիտավորությունն իրականացվում է միայն հանցակազմի առավել որակյալ հատկանիշի կապակցությամբ (որակյալի կապակցությամբ մնում է անավարտ), ապա *ավարտված առավել որակյալը կլանում է չավարտված որակյալը, իսկ արարքը որակվում է որպես ավարտված առավել որակյալ հատկանիշով հանցագործություն*: Օրինակ՝ եթե անձը մտադրվում է կազմակերպված խմբի կազմում խոշոր չափերի խարդախություն կատարել, սակայն այդ կազմակերպված խումբն այն իրականացնում է զգալի չափերով, ապա արարքը պետք է որակվի միայն որպես կազմակերպված խմբի կողմից կատարված խարդախություն (<< քր. օր.-ի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ):

Չավարտված հանցավոր գործունեությունը, մասնավորապես՝ հանցագործության փորձը որակելու տեսանկյունից առանցքային նշանակություն ունի հանցավորի դրսևորած մեղքի ձևը և տեսակը<sup>25</sup>: Այսպես՝ հանցագործության փորձի (ինչպես և հանցագործության նախապատրաստության) սուբյեկտիվ կողմը բնութագրվում է **միայն ուղղակի դիտավորությամբ**: Այսինքն՝ հանցավորը գիտակցում է, որ ինքն իրականացնում է տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը, և ցանկանում է կատարել այն: Հարկ է նշել, որ նյութական հանցակազմերով հանցագործությունների դեպքում հանցավորը պետք է նաև նախատեսի հանրորեն վտանգավոր հետևանքները և ցանկանա դրանց վրա հասնելը:

---

<sup>25</sup> Հարկ է նկատել, որ ժամանակի մեջ և տարածության վրա ցանկացած հանցագործություն (ինչպես դիտավորյալ, այնպես էլ անզգույշ)՝ որպես անձի գործունեության ինքնուրույն դրսևորում, ունենում է որոշակի փուլային զարգացում (տե՛ս Козлов А.П. Неоконченное преступление: Учеб. пособие. Красноярск, 1999, էջ 21): Սակայն << քրեական գործող օրենսգիրքն արժևորում է միայն այն հանցագործության փուլերը, որոնք կատարվում են ուղղակի դիտավորությամբ:

Ըստ սուբյեկտիվ կողմի՝ հանցագործության փորձը որակելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև հանցավորի դիտավորության ուղղվածությունը և հանցակազմի հատկանիշների նկատմամբ դրսևորված որոշակիության (կոնկրետացվածության) աստիճանը: Այս կապակցությամբ պետք է նկատի ունենալ հետևյալը.

Այն դեպքում, երբ հանցանք կատարելիս անձն ունենում է անորոշ դիտավորություն, արարքը որակվում է ըստ փաստացի վրա հասած հետևանքների: *Անորոշ դիտավորության դեպքում, երբ չի առաջանում անձի դիտավորությամբ ընդգրկված հանցավոր հետևանքներից ոչ մեկը, արարքը ենթակա է որակման որպես հնարավոր ամենամեղմ հանցագործության փորձ:* Օրինակ՝ եթե անձը մտադրվում է ցանկացած չափերի (զգալի և ավելի) խարդախություն կատարել, սակայն չի առաջանում որևէ վտանգավոր հետևանք, արարքը ենթակա է որակման որպես զգալի չափերի խարդախության փորձ:

Միևնույն ժամանակ, երբ անձի անորոշ դիտավորությունն ընդգրկում է վտանգավոր հետևանքների մի ամբողջ համալիր՝ *ինչպես հանցավոր, այնպես էլ ոչ հանցավոր*, ապա, հանցավոր հետևանքները չառաջանալու դեպքում, *խոսք չի կարող գնալ չավարդված հանցագործության մասին:* Ընդ որում, տվյալ անձը պետք է ազատվի քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարածն այլ հանցակազմ չի պարունակում: Օրինակ՝ երբ անձնական գործածության համար անձը ցանկանում է ձեռք բերել ցանկացած չափի (մանրից մինչև առանձնապես խոշոր) մարիխուանա տեսակի թմրամիջոց: Տվյալ դեպքում, կախված անձի կողմից փաստացի ձեռքբերված մարիխուանա տեսակի թմրամիջոցի չափից՝ նրա արարքը պետք է որակվի կա՛մ որպես հանցագործություն, կա՛մ՝ վարչական իրավախախտում: Մինչդեռ, եթե նման իրավիճակում անձին ընդհանրապես չի հաջողվում ձեռք բերել, կամ վերջինս ձեռք է բերում մանր չափի թմրամիջոց, ապա խոսք չի կարող գնալ չավարտված հանցագործության մասին: Բանն այն է, որ նրա արարքում կրացակայի ՀՀ քր. օր.-ի 268-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմը (թմրամիջոցի զգալի չափը տվյալ հանցագործության հիմնական հանցակազմի պարտադիր հատկանիշ է):

Քրեական իրավունքի տեսության մեջ հանցավորի չկոնկրետացված դիտավորությունը շատ հաճախ կապվում է հանցավոր հետևանքի հետ: Անհրաժեշտ է արձանագրել, սակայն, որ հանցավորը չկոնկրետացված դիտավորություն կարող է դրսևորել հանցակազմի տարբեր հատկանիշների կապակցությամբ: Օրինակ՝ հանցագործության առարկայի, վերջինիս չափի, հանցագործության կատարման եղանակի, տեղի, ժամանակի և այլն: Հետևաբար, երբ անձի դիտավորությունը հանցակազմի որևէ հատկանիշի նկատմամբ լինում է չկոնկրետացված, նրա արարքը որակվում է՝ ըստ փաստացի կատարված հանցավոր արդյունքի:

Մինևույն ժամանակ, այն դեպքում, երբ հանցագործության որևէ հատկանիշ, մասնավորապես, հանցագործության առարկան հանցակազմի պարտադիր հատկանիշ է, դա պետք է գիտակցվի հանցավորի կողմից: Հակառակ պարագայում տվյալ հանցագործությունը, այդ թվում՝ չավարտված, չի կարող մեղսագրվել անձին: Այս կապակցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը Ս.Ռևազյանի վերաբերյալ թիվ ՎԲ-112/07 գործով արձանագրել է. «(...) Քաղաքացու անձնագիրը կամ կարևոր այլ փաստաթուղթ հափշտակելը սուբյեկտիվ կողմից բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով որակելու համար անհրաժեշտ է, որպեսզի անձը գիտակցի, որ հափշտակում է հատկապես կարևոր անձնական փաստաթղթեր և ցանկանում է կատարել դա: ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվությունը վրա է հասնում միայն անձնագիրը կամ կարևոր այլ փաստաթուղթը հափշտակելու ուղղակի դիտավորության ապացույցների առկայության դեպքում: Տուժողի գույքի փոխարեն սխալմամբ կարևոր անձնական փաստաթղթեր հափշտակելը պետք է որակվի որպես անձնական գույքի հափշտակության փորձ: Եթե այդ փաստաթղթերը հափշտակվել են այլ իրերի հետ, օրինակ՝ գտնվել են հափշտակված հագուստի գրպանում, ապա արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով կարող է որակվել միայն այն դեպքում, եթե հանցավորը տեղյակ է, որ իրերի հետ հափշտակում է նաև կարևոր փաստաթղթեր: Ինքնըստինքյան հափշտակված իրերի մեջ անձնագրի կամ կարևոր այլ փաստաթղթերի գտնվելը, եթե չի պարզվել դրանք հափշտակելու

դիտարկությունը, ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով պատասխանավորություն առաջ բերող հանգամանք չէ:

Այսպիսով՝ անձնական իրերի հետ կարևոր անձնական փաստաթղթերի հափշտակությունը, եթե բացակայում է այդ փաստաթղթերը հափշտակելու դիտարկությունը, չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով»<sup>26</sup>:

Մինչդեռ, երբ հանցանք կատարելիս անձի դիտարկությունը որոշակի է (պարզ կոնկրետացված), այսինքն՝ ուղղված է կոնկրետ հանցանքի կատարմանը, ապա հանցավոր նպատակին չհասնելու դեպքում, նրա արարքը որակվում է ըստ դիտարկության ուղղվածության՝ որպես դիտարկությամբ ընդգրկված հանցագործության փորձ:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, իր մի շարք որոշումներում անդրադառնալով սպանության ավարտված հանցավորձը դիտարկությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելուց սահմանազատելու հարցին, արձանագրել է.

«(...) [Կ]արարվածը սպանության փորձ որակելու համար անհրաժեշտ է, որ հանցավորն ունենա անձին կյանքից զրկելու պարզ կոնկրետացված (նախապես կամ հանկարծակի առաջացած) դիտարկություն, ինչը հնարավոր է պարզել գործի հանգամանքների համակողմանի վերլուծության արդյունքում՝ հարկապես ուշադրություն դարձնելով հանցավորի՝ նախքան հանցագործությունը, հանցանքի ընթացքում և դրանից հետո դրսևորած վարքագծին: (...) սպանության փորձը դիտարկությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելուց սահմանազատելու համար առաջնային նշանակություն ունի վնասվածքներ հասցնելու պահին հանցավորի դիտարկության ուղղվածության բացահայտումը: Մասնավորապես, եթե սպանության փորձի ժամանակ հանցավորի դիտարկությունն ուղղված է տուժողին կյանքից զրկելուն, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարելիս դիտարկությունն ուղղված է տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելուն, կամ հանցավորը հետևանքների նկատմամբ դրսևորում է չկոնկրետացված դիտարկություն:

<sup>26</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Ս.Ռևազյանի վերաբերյալ 13.07.2007թ. թիվ ՎԲ-112/07 գործով որոշումը:

*Հանցավորի դիտարկության ուղղվածության հարցը լուծելիս անհրաժեշտ է ելնել հանցագործության բոլոր հանգամանքների համակցությունից և հաշվի առնել, մասնավորապես, հանցավոր արարքի կատարման եղանակը, վնասվածքներ հասցնելիս օգտագործվող գործիքները, մարմնական վնասվածքների քանակը, բնույթը և տեղակայումը (օրինակ՝ մարդու կենսականորեն կարևոր օրգանների վնասումը), շարժառիթն ու նպատակը, ինչպես նաև հանցավորի և տուժողի վարքագիծը հանցագործությանը նախորդող և հաջորդող պահերին, նրանց փոխհարաբերությունները, հանցավորի կողմից հանցավոր գործողությունների դադարեցման պատճառները և այլն: Միայն վերոնշյալ հանգամանքների համադրման և վերլուծության հիման վրա է հնարավոր բացահայտել դիտարկության ուղղվածությունը և դրա տեսակները, ինչն էլ իր հերթին կհանգեցնի կատարված արարքին քրեաիրավական ճիշտ գնահատական տալուն»<sup>27</sup>:*

Միաժամանակ, եթե հանցանք կատարելիս անձի դիտարկությունը երկրնտրելի կոնկրետացված է, այսինքն՝ ուղղված է այս կամ այն կոնկրետ հետևանքի առաջացմանը, ապա ցանկալի հետևանքներից ոչ մեկը չառաջանալու դեպքում հանցավորի արարքը պետք է որակել որպես դիտարկությամբ ընդգրկված ամենաթեթև հանցագործության փորձ: Օրինակ՝ եթե հանցավորը, դանակով հարվածելով տուժողի որովայնին, նախատեսում է կա՛մ տուժողի մահը, կա՛մ նրա առողջությանը ծանր վնաս պատճառելը, և եթե հետևանքներից ոչ մեկը չի առաջանում, նրա արարքը պետք է որակել ՀՀ քր. օր.-ի 34-112-րդ հոդվածներով՝ որպես տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելու փորձ:

Մինչդեռ, եթե հանցագործության նպատակը նշված է որպես հանցակազմի հատկանիշ (այդ թվում՝ ծանրացնող հանգամանք), ապա հանցանքն այդ նպատակով կատարելը որակվում է որպես ավարտված հանցագործություն՝ անկախ նրանից, թե հանցավորն իրականում հասել է տվյալ նպատակին, թե՛ ոչ: Այսինքն՝ այդ նպա-

---

<sup>27</sup> Տե՛ս, mutatis mutandis, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Ս.Հունիկյանի գործով 2008 թվականի փետրվարի 29-ին կայացված թիվ ՎԲ-11/08, Ա.Բաղդասարյանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ին կայացված թիվ ԵԷԴ/0168/01/10, Գ.Մանուկյանի գործով 2015 թվականի օգոստոսի 28-ին կայացված թիվ ԵԱՆԴ/0110/01/12 որոշումները:

տակին չհասնելու դեպքում հանցավորի արարքը չի որակվում որպես չավարտված հանցագործություն: Օրինակ՝ եթե անձը կատարում է սպանություն տուժողի մարմնի մասերի կամ հյուսվածքների օգտագործման նպատակով, ապա, անկախ տուժողի մարմնի մասերը կամ հյուսվածքներն օգտագործելու հանգամանքից, հանցավորի արարքը պետք է որակել որպես տուժողի մարմնի մասերը կամ հյուսվածքները օգտագործելու նպատակով կատարված սպանություն (ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետ):

Անձի՝ ավարտին չհասցված հանցավոր գործունեության որակման հիմնախնդիրների շարքում իր տեսագործնական նշանակությամբ առանձնանում է նաև այն իրավիճակների որակումը, երբ հանցավոր շղթայի մյուս կողմում՝ որպես օպերատիվ-հետախուզական միջոցառման մասնակից, օպերատիվ աշխատակիցն է կամ ներդրյալ գործակալը: Օրինակ՝ հարց է առաջանում, թե ինչպես պետք է որակվի թմրամիջոց իրացնողի արարքն այն դեպքում, երբ ՕՀՄ-ի շրջանակներում, որպես թմրամիջոցի գնորդ, հանդես է գալիս ներդրյալ գործակալը: Մասնագիտական գրականության մեջ առաջարկվում է նման իրավիճակները որակել որպես հանցափորձ, կոնկրետ դեպքում՝ թմրամիջոցի ապօրինի իրացման փորձ, քանի որ տվյալ դեպքում թմրամիջոցի շրջանառությունը դադարում է համարվել ապօրինի<sup>28</sup>:

Մինչդեռ, դժվար է համաձայնել այս մոտեցմանը, քանզի նշված առարկաների ապօրինի իրացման համար ձեռքբերողի գործողությունների իրավաչափությունը դուրս է քննարկվող հանցակազմերի շրջանակից: Տվյալ դեպքում առանցքային է իրացնող սուբյեկտի գործողությունների ոչ իրավաչափ լինելը և իրացում համարվող արարքի ամբողջ ծավալով իրականացումը: Թմրամիջոցի փոխանցումն, ինքնին, իրացում է, իսկ այն ձեռք բերելիս ներդրյալ գործակալի կամ օպերատիվ աշխատակցի իրավաչափ գործողություններն այդ իրացումը չեն դարձնում օրինական, ոչ էլ ընդհատում են իրացում համարվող գործողության ընթացքը: Ուստի, գտնում ենք, որ նման դեպքերում անձի արարքը չավարտված հանցագործություն

---

<sup>28</sup> Տե՛ս, օրինակ՝ Актуальные проблемы уголовного права. Курс лекций / Под ред. О.С. Капинус. М: Проспект, 2019, էջ 171:

որակելը արդարացված չէ, քանզի այն պարունակում է ավարտված հանցագործության բոլոր հատկանիշները:

Հանցագործությունների որակման տեսանկյունից առանձին հետաքրքրություն և տեսագործնական կարևոր նշանակություն է ներկայացնում *մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություններում չավարտված հանցավոր գործունեության (հանցագործության նախապատրաստության և հանցափորձի) հնարավորության հարցը*: Այս կապակցությամբ իրավաբանական գրականության մեջ կարծիքները չեն համընկնում: Քրեագետներից ոմանք գտնում են, որ, քանզի քրեական օրենսգրքում չավարտված հանցավոր գործունեություն հնարավոր է միայն ուղղակի դիտավորության պարագայում, հետևաբար, մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություններում խոսք չի կարող լինել հանցափորձի, առավել ևս՝ հանցագործության նախապատրաստության մասին<sup>29</sup>:

Մյուսները նկատում են, որ չավարտված հանցավոր գործունեություն հնարավոր չէ մեղքի երկու ձևով կատարվող այն հանցագործություններում, որոնց օրենսդրական նկարագրման եղանակը երկու հետևանքներով (անմիջական, հեռավոր) նյութական հանցակազմերն են: Այսպիսի կառուցվածքով հանցակազմերի պարագայում հանցագործության անմիջական հետևանքը հանդես է գալիս որպես հեռավոր, ոչ անմիջական առավել ծանր հետևանքի պատճառ<sup>30</sup>: Հետևաբար, պատճառի բացակայությունն ինքնին հանգեցնում է նաև հետևանքի բացակայության, ինչը տեսականորեն անտրամաբանական է դարձնում հանցագործության նախապատրաս-

---

<sup>29</sup> Տե՛ս, օրինակ՝ Сабитов Р.А. Теория и практика квалификации уголовно-правовых деяний: М., 2003, էջ 90:

<sup>30</sup> Յու.Ե. Պուդովոլսկինը, օրինակ՝ նշում է, որ այդպիսի հանցափորձ հնարավոր է և՛ ըստ էության, և՛ այն պատճառով, որ օրենսդիրը մեղքի երկու ձևով կատարվող հանցագործությունները համարել է դիտավորյալ հանցագործություններ (տե՛ս Пудовочкин Ю.Е. Учение о преступлении: избранные лекции. М., 2010, էջ 173): Այս մոտեցումը պաշտպանում է նաև ՌԴ դատական պրակտիկան: Այսպես՝ ՌԴ Գերագույն դատարանն անփոփոխ է թողել Ֆախրետդինովի վերաբերյալ կայացված դատավճիռը, որով նա մեղավոր էր ճանաչվել մի խումբ անձանց կողմից անչափահասի բռնաբարության փորձի համար, որն անզուգույնությամբ առաջացրել էր տուժողի մահ (տե՛ս Бюллетень Верховного Суда Российской Федерации. 1998. № 8):

տությունը կամ հանցափորձը հանցակազմի այնպիսի կառուցվածք ունեցող հանցագործություններում, որոնց դասական օրինակ կարելի է համարել ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով նկարագրվածը:

Նշված հեղինակների կարծիքով, սակայն, իրավիճակն այլ է մեղքի երկու ձևով կատարվող այն հանցագործություններում, որոնց հիմնական հանցակազմի օրենսդրական նկարագրման եղանակը ձևական է, իսկ հանրորեն վտանգավոր հետևանքները հանդես են գալիս որպես հիմնական հանցակազմը ծանրացնող (առավել ծանրացնող) հանգամանք: Նկարագրված կառուցվածք ունեցող հանցակազմներում որակյալ հետևանքի պատճառ հանդիսացող հանրորեն վտանգավոր արարքը համարվում է հիմնական հանցակազմի պարտադիր հատկանիշը:

Այդպիսի արարքները որակյալ հանցակազմով նկարագրված հանրորեն վտանգավոր հետևանքի պատճառ կարող են հանդիսանալ ոչ միայն այն դեպքում, երբ հասցվում են ավարտին, այլև՝ երբ կատարվում են մասամբ: Որպես օրինակ դիտարկվում է բռնաբարության հանցակազմը, որի փորձի դեպքում հանցավորի կողմից հնարավոր են կիրառվել բռնության այնպիսի մեթոդներ, որոնք ինքնին, անկախ սեռական ակտի կատարումից, կարող են հանդիսանալ որակյալ հետևանքի առաջացման պատճառ, ասենք՝ տուժողի առողջությանն անզգուշությամբ ծանր վնաս կամ մահ պատճառելու ձևով:

Ենթադրվում է, որ քննարկվող կառուցվածքն ունեցող հանցակազմներում հանցագործության նախապատրաստությունը չի կարող որակյալ հետևանքի առաջացման պատճառ լինել: Հետևաբար, անկախ մեղքի երկու ձևով կատարվող հանցագործությունների օրենսդրական նկարագրման եղանակից, հանցագործության նախապատրաստություն այս հանցագործություններում հնարավոր չէ: Իսկ ինչ վերաբերում է հանցափորձին, ապա, ինչպես նշվեց, որոշ տեսաբանների կարծիքով, այն հնարավոր է մեղքի երկու ձևով կատարվող այն հանցագործություններում, որի հիմնական հանցակազմը կառուցվածքով ձևական է, և տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող արարքի մասնակի կատարումն անգամ կարող է



պայմանավորել որակյալ հետևանքների առաջացումը, որոնց նկատմամբ հանցավորը դրսևորում է անզգուշություն<sup>31</sup>:

Մինչդեռ դժվար է համաձայնել տեսական գրականության մեջ արտահայտված այս վերջին մոտեցմանը: Քննարկվող հիմնախնդրի առումով հարկ է նկատել, որ չավարտված հանցավոր գործունեություն, մասնավորապես, հանցափորձ հնարավոր չէ մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություններում ոչ թե այդ հանցագործությունների օրենսդրական նկարագրման եղանակի պատճառով (այսինքն՝ հիմնական հանցակազմը նյութական է, թե՛ ձևական), այլ այդ հանցագործությունների հանցակազմերի բովանդակությամբ պայմանավորված: Բանն այն է, որ մեղքի երկու ձևով կատարվող հանցագործությունները հանդես են գալիս որպես հիմնական հանցակազմը ծանրացնող հանգամանք՝ որակյալ հատկանիշ: Ուստի՝ կարծում ենք, որ մեղքի երկու ձևով կատարվող հանցագործության առկայության դեպքում միշտ անհրաժեշտ է հանցագործության հիմնական հանցակազմի բոլոր հատկանիշների առկայությունը:

Այլ կերպ ասած՝ մեղքի երկու ձևով կատարվող հանցագործությունը յուրաքանչյուր անգամ ենթադրում է տվյալ հանցագործության հիմնական հանցակազմի առկայություն: Հետևաբար, երբ բացակայում է հանցագործության հիմնական հանցակազմը, կամ առկա է չավարտված տեսքով, խոսք չի կարող գնալ մեղքի երկու ձևով կատարվող հանցագործության մասին:

Բացի այդ՝ հանցագործության հեռավոր, ոչ անմիջական նպատակը, որը նկարագրված է որակյալ հանցակազմով, պատճառ է հիմնական հանցակազմում նկարագրված ամբողջ արարքի, այլ ոչ դրա մի մասի: Օրինակ՝ բռնաբարության հանցակազմի պարագայում, որտեղ անզգուշությամբ տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ առաջացնելը հանդես է գալիս հանցակազմի որակյալ հատկանիշ (<< քր. օր.-ի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ): Մասնավորապես, այն ձևակերպված է հետևյալ կերպ՝ «(...) 2. Բռնաբարությունը, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ»: Այստեղից կարելի է ողջամտորեն ենթադր-

---

<sup>31</sup> St'u Пудовочкин Ю.Е., նշված աշխատ., էջ 173:

րել, որ որակյալ հատկանիշ՝ տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ առաջացնելը արդյունք է ոչ թե բռնաբարության օբյեկտիվ կողմը կազմող պարտադիր արարքներից մեկի, օրինակ՝ բռնության, այլ ամբողջ արարքի՝ բռնաբարության: Ուստի, եթե չի կատարվում բռնաբարություն, այսինքն՝ չի ավարտվում բռնաբարության հիմնական հանցակազմով նկարագրված արարքը, ապա խոսք չի կարող գնալ բռնաբարության որակյալ հատկանիշը և դրա արդյունք հանդիսացող հետևանքը, կոնկրետ դեպքում՝ տուժողի մահը, անձին մեղսագրելու մասին:

Մինևույն ժամանակ, սակայն, հարց է առաջանում՝ ինչպե՞ս որակել կատարվածն այն իրավիճակներում, երբ հանցագործության հիմնական հանցակազմում նկարագրված արարքը, թեև կատարվում է մասնակի, սակայն դրա արդյունքում առաջանում է այնպիսի հետևանք, որը տվյալ հանցագործության հիմնական հանցակազմը ծանրացնող հանգամանքներով զուգորդված հանցակազմի հատկանիշ է, և որի նկատմամբ հանցավորը դրսևորում է անզգուշություն: Այս դեպքում, կարծում ենք, կատարվածը պետք է ձևավորի հանցագործությունների համակցություն: Նկարագրված իրավիճակում՝ եթե անձին չի հաջողվում տուժողին բռնաբարել, սակայն գործադրված բռնության արդյունքում վերջինս, հանցավորի դրսևորած անզգուշության հետևանքով, զրկվում է կյանքից, ապա կատարվածը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի 34-138-րդ (բռնաբարության փորձ) և 109-րդ (անզգուշությամբ մահ պատճառել) հոդվածներով նախատեսված հանցագործությունների համակցությամբ:

Հարկ է նշել նաև, որ քրեական իրավունքի տեսության մեջ շարունակում է վիճահարույց մնալ այն հարցը, թե հնարավոր է արդյո՞ք հանցագործության նախապատրաստություն և հանցափորձ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ և հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ կատարվող հանցագործությունների պարագայում:

Մասնավորապես, վերը նշված հարցի կապակցությամբ քրեագետների մի մասը գտնում է, որ քննարկվող հանցագործությունների պարագայում չավարտված հանցավոր գործունեություն (հանցագործության նախապատրաստություն կամ հանցափորձ) հնարավոր

չէ<sup>32</sup>, իսկ մյուսների կարծիքով՝ հնարավոր<sup>33</sup>: Մինչդեռ, այդ խնդիրը լուծելու համար, կարծում ենք, հարկ է պարզել, թե սուբյեկտիվ կողմից մեղքի ո՞ր ձևով են կատարվում քննարկվող հանցագործությունները:

Այդ առումով քրեագետների մի մասը գտնում է, որ անհրաժեշտ միջոցների սահմանազանցման դեպքում վնասը հասցվում է միայն անուղղակի դիտավորությամբ, քանի որ պաշտպանություն իրականացնողը ձգտում է միայն կանխել ոտնձգությունը և չի ցանկանում վնաս պատճառել ոտնձգողին<sup>34</sup>: Այս տեսակետի հետ դժվար է համաձայնել:

Առավել համոզիչ է թվում այն մոտեցումը, որի համաձայն՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման դեպքում սուբյեկտը երկու նպատակ է հետապնդում. ա) հիմնական՝ խափանել ոտնձգությունը, և բ) միջանկյալ, որպես հիմնական նպատակին հասնելու միջոց՝ ոտնձգողին վնաս պատճառել, որի շնորհիվ սուբյեկտն իրականացնում է օրենքով պաշտպանվող շահերի պաշտպանությունը<sup>35</sup>:

Ինչ վերաբերում է հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ կատարված հանցագործությունների սուբյեկտիվ կողմին, ապա տեսական գրականության մեջ այդ կապակցությամբ նշվում է, որ դրանք կատարվում են միայն անուղղակի դիտավորությամբ<sup>36</sup>: Սա բացատրվում է նրանով, որ նշված ինստիտուտը կանոնակարգող քրեական օրենքի հողվածում որպես անձին բռնելու նպատակ է նկարագրված ոչ թե նրա սպանությունը կամ առողջությանը ծանր վնաս պատճառելը, այլ ի-

<sup>32</sup> Տե՛ս Нафиев С.Х., Мухамедзянов И.А. Квалификация преступлений. Казань, 1999, էջեր 57-58, Попов А.Н. Преступления против личности при смягчающих обстоятельствах. СПб., 2001, էջ 390:

<sup>33</sup> Տե՛ս Назаренко Г.В., Ситникова А.И. Неоконченное преступление и его виды. Монография. М., 2003, էջ 42:

<sup>34</sup> Ткаченко В. Понятие и виды покушения на преступление // Вопросы теории и практики применения уголовного закона: Межвузовский Сборник. Красноярск, 1990, էջեր 49-50:

<sup>35</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Դասագիրք բուհերի համար: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 334:

<sup>36</sup> Տե՛ս Попов А.Н., նշված աշխատ., էջ 408:

րավասու մարմիններին հանձնելը կամ նրա կողմից հանրության համար նոր վտանգավոր արարք կատարելու հնարավորությունը խափանելը: Այսինքն, հանցանք կատարած անձին բռնելիս նրան վնաս պատճառելը ևս հանդես է գալիս որպես միջանկյալ նպատակ, որն ուղղված է հիմնական նպատակի՝ հանցանք կատարած անձին իրավասու մարմիններին հանձնելու կամ նրա կողմից հանրության համար նոր վտանգավոր արարք կատարելու հնարավորությունը խափանելու իրագործմանը:

Ասվածով պայմանավորված՝ կարելի է փաստել, որ ինչպես անհրաժեշտ պաշտպանության, այնպես էլ հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Հետևաբար՝ այս հանցագործությունների պարագայում ևս հնարավոր է, որ անձի արարքը որակվի որպես չավարտված հանցագործություն:

Ուշագրավ է տվյալ հարցի քննարկումը հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարվող հանցանքների (<< քր. օր.-ի հոդվածներ 105-րդ և 114-րդ) պարագայում: Այս կապակցությամբ կարելի է համաձայնել Ս.Վ.Բորոդինի այն կարծիքին, որ նշված հանցագործությունները չեն կարող նախապես պլանավորվել, հետևաբար՝ անձի դիտավորյալ նախապատրաստական գործողությունները, ըստ էության, բացառում են քննարկվող նորմերի կիրառումը<sup>37</sup>:

Այսպիսով, եթե հանցագործությունը կատարվում է հանկարծակի ծագած աֆեկտավորված դիտավորությամբ, ապա դրա նախապատրաստություն անհնար է պատկերացնել:

Ինչ վերաբերում է այս հանցագործություններում հանցափորձի հնարավորությանը, ապա հարկ է նկատել, որ, քանզի հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարվող հանցագործությունները կարող են կատարվել նաև ուղղակի դիտավորությամբ, ուստի՝ հանցափորձ տվյալ պարագայում ևս հնարավոր է: Ասվածը ցայտուն դրսևորվում է հետևյալ օրինակում. Տուժողի հակաիրավական վարքագծով պայմանավորված՝ հանցավորը, գտնվելով հոգեկան խիստ հուզմունքի վիճակում, սպանելու դիտավորությամբ մի քանի անգամ

---

<sup>37</sup> Ст'и Бородин С.В. Ответственность за убийство: квалификация и наказание по российскому праву. М.: Юрист, 1994, էջ 113:

կրակոց է արձակում նրա կենսական կարևոր օրգաններին, սակայն ժամանակին ցուցաբերած բժշկական օգնության շնորհիվ վերջինիս կյանքը հնարավոր է լինում փրկել:

Չավարտված հանցավոր գործունեությունը որակելու համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ դրա պարտադիր հատկանիշ է հանցագործության օբյեկտիվ անավարտությունը, այսինքն՝ այն, որ **հանցագործությունն ավարտին չի հասցվում հանցավորի կամ-քից անկախ հանգամանքներով** (ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 34-րդ և 35-րդ): Այդ հանգամանքները կարող են կրել ինչպես օբյեկտիվ (այլ անձանց միջամտությունը, բնության ուժեր, շենքերի կամ այլ կառույցների արգելք հանդիսանալը և այլն), այնպես էլ սուբյեկտիվ (անպատրաստ, ոչ վճռական կամ անփորձ լինելը և այլն) բնույթ: Մինչդեռ, երբ անձը հետ է կանգնում իր հանցավոր մտադրության իրականացումից իր կամքով և հրաժարվում հանցագործությունն ավարտին հասցնելուց, կարող է առաջ գալ արարքը հանցագործությունից կամովին հրաժարում որակելու հարցը:

Այսպիսով՝ նախնական հանցավոր գործունեության փուլի որոշումը կարևոր նշանակություն ունի հանցագործության կատարումից կամովին հրաժարվելու հանգամանքը հավաստելու և կամովին հրաժարման նախորդած վարքագիծը որակելու համար:

#### **2.4. Հանցագործությունից կամովին հրաժարման որակումը**

Հանցագործությունից կամովին հրաժարման օրենսդրական բնորոշումը բովանդակում է ինչպես դրա հասկացությունը, այնպես էլ իրավաբանական էությունը: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Հանցագործությունից կամովին հրաժարում է համարվում անձի կողմից հանցագործության նախապարաստությունը կամ հանցափորձը կամ անմիջականորեն հանցանք կատարելուն ուղղված գործողությունը (անգործությունը) դադարեցնելը, եթե անձը գիտակցել է հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը*»:

Հարկ է նկատել, որ չավարտված հանցագործության հարցի լուծումը կամ անձի քրեական պատասխանատվությունից ազատելն անհնար է առանց հանցագործությունից կամովին հրաժարման էության և կիրառման պայմանների առանձնահատկությունների

բացահայտման: Հանցագործությունից կամովին հրաժարման դեպքում անձի արարքում բացակայում է հանցագործության հանցակազմը, և արարքն ինքնին չի համարվում հանցագործության տարատեսակ (բացակայում են ինչպես ավարտված, այնպես էլ չավարտված հանցագործության հատկանիշները): Հանցագործությունն ավարտին հասցնելուց կամովին հրաժարված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում (ՀՀ քր. օր.-ի հոդված 36-ի 2-րդ մաս):

*Կատարվածին քրեաիրավական գնահատական տալու համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ քրեական օրենքը թույլ է տալիս գնահատել կամովին հրաժարումը և անձին ազատել քրեական պատասխանատվությունից միայն այն հանցագործության համար, որի կատարմանն ուղղված էր նրա դիտարկությունը: Այն դեպքում, երբ անձի կատարած արարքը միաժամանակ պարունակում է այլ հանցագործության հանցակազմի հատկանիշներ (ավարտված կամ չավարտված), դրանք պետք է արժանանան ինքնուրույն քրեաիրավական գնահատականի: Օրինակ՝ եթե անձը սպանություն կատարելու համար հափշտակում է հրազեն և ապօրինի կրում այն, և հետո կամովին հրաժարվում սպանություն կատարելուց, ապա վերջինս կազատվի քրեական պատասխանատվությունից սպանության համար, սակայն պետք է պատասխանատվության ենթարկվի հրազենի հափշտակության և հրազենն ապօրինի կրելու համար (ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 235-րդ և 238-րդ):*

*ՀՀ Վճռաբեկ դատարանը, վերլուծելով հանցագործությունից կամովին հրաժարման ինստիտուտի էությունը, Գ.Մանուկյանի վերաբերյալ թիվ ԵԱՆԴ/0110/01/12 գործով սահմանել է այն իրավաչափության պայմանները, որոնց համաժամանակյա առկայության դեպքում անձի կողմից հանցագործությունն ավարտին չհասցնելը կարող է դիտվել որպես կամովին հրաժարում: Մասնավորապես՝ հիշյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է. «(...) հանցագործությունից կամովին հրաժարումն առկա է, եթե անձը հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը դադարեցնում է՝*

ա) վերջնականապես, այլ ոչ թե ավելի նպաստավոր պայմաններում հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով,

բ) ժամանակին, այսինքն՝ մինչև հանցագործության ավարտման պահը»,

գ) կամովին՝ իր ազատ կամարտահայտության արդյունքում, այլ ոչ թե անհաղթահարելի խոչընդոտների հետևանքով,

դ) գիտակցելով հանցագործությունը մինչև վերջ հասցնելու փաստացի հնարավորության առկայությունը»:

**ա. Հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը վերջնականապես, այլ ոչ թե ավելի նպաստավոր պայմաններում հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով դադարեցնելը:**

Կամովին հրաժարման կարևոր բնութագրիչ է դրա վերջնական (անվերապահ) լինելը: Հանցագործությունից վերջնական հրաժարումը չի ենթադրում, որ անձն իր հանցավոր գործունեությունը դադարեցնում է ժամանակավորապես, արարքի կատարման համար ավելի հարմար պահ կամ առիթ ընտրելու, նոր գործիքներ կամ միջոցներ ձեռք բերելու, այլ հանցակիցներ ներգրավելու և համանման այլ նկատառումներով:

Միաժամանակ, վերջնական հրաժարումը ենթադրում է, որ անձն անվերապահ հետ է կանգնում իր հանցավոր մտադրությունն ավարտին հասցնելուց և հրաժարվում կրկնել ոտնձգությունը՝ քրեաիրավական պաշտպանության միևնույն օբյեկտի դեմ:

**բ. Հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը ժամանակին, այսինքն՝ մինչև հանցագործության ավարտման պահը դադարեցնելը:**

Հանցագործության կամովին հրաժարման պարագայում արարքը չպետք է կատարվի ամբողջ ծավալով: Հենց այդ պատճառով օրենսդիրը կամովին հրաժարման հնարավորությունը տեսնում է միայն չավարտված հանցագործության պարագայում: Հանցագործության ավարտից հետո կամովին հրաժարումը բացառվում է: Այս դեպքում խոսք կարող է գնալ գործուն գղջալու մասին («Քր. օր.-ի 72-րդ հոդված):

Ժամանակին լինելը նշանակում է նաև, որ անձը չի կատարել այն գործողությունները, որոնք նա անհրաժեշտ է համարել հանցավոր ոտնձգությունն իրականացնելու համար: Այս կապակցությամբ տեսական գրականության մեջ վեճերի տեղիք է տվել այն հիմնախնդիրը, թե հնարավոր է արդյոք ավարտված հանցափորձից կամովին հրաժարում:

Քրեագետների մեծ մասի կարծիքով, ավարտված հանցափորձի փուլում բացառվում է կամովին հրաժարումը: Նրանք համարում են, որ այս փուլում հանցավորն օբյեկտիվորեն և գիտակցաբար արել է անհրաժեշտ ամեն ինչ՝ հետևանքներն առաջացնելու համար: Դրան հակառակ՝ հեղինակների մյուս մասը գտնում է, որ կամովին հրաժարումը հնարավոր է նաև հանցագործության այս փուլում, եթե կատարված գործողությունները դեռևս չեն հանգեցրել հանրորեն վտանգավոր հետևանքների: Կամովին հրաժարումն այս դեպքում պետք է դրսևորվի այնպիսի գործողություններում, որոնք ուղղված են հանրորեն վտանգավոր հետևանքները կանխելուն կամ թույլ չտալուն<sup>38</sup>:

«Հ իրավակիրառ ոլորտում այս հարցի կապակցությամբ վեճերը հարթելու և միասնական պրակտիկա ձևավորելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը Գ.Մանուկյանի վերաբերյալ գործով արձանագրել է. «(...) չավարտված հանցափորձի դեպքում հանցագործությունից կամովին հրաժարումը, որպես կանոն, խնդիրներ չի առաջացնում: Մասնավորապես, երբ անձը չի իրականացրել բոլոր գործողությունները (անգործությունը) հանցանքն ավարտելու համար ու գիտակցում է, որ հանցագործությունն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է շարունակել արարքի կատարումը կամ կատարել նոր արարք, սակայն իր կամքով դադարեցնում է համապատասխան գործողությունը կամ անգործությունը, ապա ենթակա չէ քրեական պատասխանատվության հանցագործությունից կամովին հրաժարվելու հիմքով, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում:

Մինչդեռ ավարտված հանցափորձի պարագայում, երբ անձը կատարել է բոլոր անհրաժեշտ գործողությունները հանցագործությունը

<sup>38</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Դասագիրք բուհերի համար: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջեր 253-254:



մինչև վերջ հասցնելու համար, սակայն այն չի ավարտվել իր կամքից անկախ հանգամանքներով, կամովին հրաժարումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ հանրորեն վրանգավոր հետևանքի՝ մահվան առաջացման համար պահանջվում է որոշակի ժամանակահատված, և անձն իր ակտիվ վարքագծով կանխում է այդ հետևանքը: Ընդ որում, անհրաժեշտ է, որ մահվան առաջանալը կամ չառաջանալը պայմանավորված լինի անձի կամքով, վերջինս պահպանի վերահսկողությունն արարքի և հետևանքի միջև պատճառական կապի զարգացման ողջ ընթացքի նկատմամբ, հնարավորություն ունենա ցանկացած պահի միջամտելու ու կանխելու մահվան վրա հասնելը (օրինակ՝ դանդաղ ներգործող թույն փալուց հետո փախուցի և հակաթույն, սպանելու նպատակով փունջը հրդեհելուց հետո մարում է հրդեհը՝ նախքան այն կհասցներ փարածվել ու փրկում է փուժողի կյանքը և այլն):

Վակառակ պարագայում, երբ բոլոր անհրաժեշտ գործողությունները կատարելուց հետո համապատասխան վրանգավոր հետևանքների առաջանալը կամ չառաջանալը դուրս է հանցավորի վերահսկողության շրջանակներից, պայմանավորված է ոչ միայն նրա կամքով, այլև նրա կամքից անկախ բազմաթիվ այլ հանգամանքներով (օրինակ՝ ժամանակին ցուցաբերված բժշկական միջամտության շնորհիվ կյանքը փրկելու դեպքում), ապա կամովին հրաժարումը բացառվում է:

Վերոշարադրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սպանության ավարտված և չհաջողված հանցափորձից հետո հանցանքն ավարտին հասցնելուց հրաժարվելը, նույնիսկ եթե հանցավորն իրական հնարավորություն է ունեցել այն հասցնելու մինչև վերջ, չի կարող հանցագործությունից կամովին հրաժարում համարվել: Տվյալ դեպքում փաստացի կատարված արարքն իր մեջ արդեն իսկ պարունակում է ավարտված հանցափորձի բոլոր օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, հետևաբար անձը չի կարող ազատվել իր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձի համար քրեական պատասխանատվությունից: Չհաջողված հանցափորձից հետո հանցանքն ավարտին հասցնելուց հրաժարվելը գործով առկա այլ հանգամանքների հետ միասին

(օրինակ՝ օգնություն կանչել, հիվանդանոց տեղափոխել և այլն) կարող են գնահատվել որպես մեղմացնող հանգամանք և հաշվի առնվել դատարանի կողմից պատիժ նշանակելիս»:

**գ. Հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը կամովին՝ ազատ կամաարտահայտության արդյունքում, այլ ոչ թե անհաղթահարելի խոչընդոտների հետևանքով դադարեցնելը:**

Կամովին լինելը նշանակում է, որ հանցագործությունը դադարեցնելու որոշումն անձը կայացնում է իր կամքով: Հանցագործությունը դադարեցնելու հարկադրականությունը բացառում է դրա կամավորությունը: Հանցագործությունը դադարեցնելու հարկադրականության հարցի լուծումը դժվարանում է, երբ բացակայում է ֆիզիկական ներգործությունը հանցավորի վրա, և առկա է միայն կողմնակի անձանց միջամտության և հանցավորին մերկացնելու սպառնալիք:

Այս հարցի ճիշտ լուծման համար տարբերակվում են **իրական (ռեալ)** և **վերացարկված (աբստրակտ)** սպառնալիքները: Միջամտության (մերկացնելու, ֆիզիկական ներգործության) սպառնալիքը՝ որպես իրողություն, հարկադրանքի գործոն է (ոչ թե հոգեբանական, այլ սոցիալական իմաստով), որը թելադրում է հանցագործությունը դադարեցնելու նպատակահարմարությունը՝ դրա շարունակության անօգտակարության պատճառով՝ կապված մերկացվելու և այլնի հետ: Այսպես՝ եթե հանցագործությունն սկսած անձը դադարեցնում է այն, նկատելով, որ տուժողին օգնության են հասնում ոստիկանության աշխատակիցները, ապա հանցագործությունից հրաժարվելու հարկադրականության ուժով հանցագործության դադարեցումը չի կարող կամավոր համարվել:

Մինչդեռ այն իրավիճակում, երբ գողության նպատակով անձը մուտք է գործում ուրիշի բնակարան, բայց հիշում է, որ այդ նույն փողոցում է գտնվում ոստիկանության բաժինը և դա հանգեցնում է պատասխանատվության չենթարկվելու ցանկության պատճառով հանցագործությունը դադարեցնելու որոշում կայացնելուն, ապա առկա է կամովին հրաժարում, քանի որ այս կամ այն վայրում ոստիկանության բաժնի առկայությունը պատասխանատվության ենթարկվելու իրական երաշխիք չէ: Եթե այդ իրավիճակում անձը

դադարեցնում է հանցագործությունը, ապա այդ որոշումը չի կարող թելադրված լինել մերկացվելու սպառնալիքով: Իրականում հանցագործությունը դադարեցնելու շարժառիթը պատասխանատվության՝ հասարակության գոյության համար անհրաժեշտ սոցիալական արժեքի գիտակցումն է: Իսկ հիշողությունը՝ խորհելու և իր վարքագիծը ռեալ գնահատելու առիթ է, ուստի՝ նման պայմաններում հանցագործությունը դադարեցնելը պետք է համարել կամավոր<sup>39</sup>:

Այս կապակցությամբ բերենք պրակտիկայից մի օրինակ. տուն վերադառնալիս անձը նկատում է ճանապարհին կայանված ավտոմեքենա, և հանկարծակի ծագած դիտավորությամբ մուտք է գործում մեքենայի սրահ՝ ձայնարկիչը հափշտակելու նպատակով: Քանդում է ձայնարկիչի պտուտակները, և այն դուրս հանելիս, ավտոմեքենայի հետևի նստատեղին նկատելով ոստիկանական համազգեստ, տեղն է դնում այն և սկսում ամրացնել պտուտակները: Հարց է ծագում՝ նկարագրված իրավիճակում արդյո՞ք առկա է հանցագործությունից կամովին հրաժարում:

Տվյալ դեպքի կապակցությամբ, կարծում ենք, պետք է տարբերակել հետևյալը.

- Եթե անձը, նկատելով ոստիկանի համազգեստը, հասկացել է իր կողմից հանցանքը ավարտին հասցնելու անհնարինությունը՝ կապված ոստիկանի վերադառնալու և իրեն բացահայտելու հետ, և մերկացվելու, պատասխանատվության անխուսափելիության գիտակցումից դրդված՝ տեղն է դրել ձայնարկիչը և ամրացրել պտուտակները, ապա նրա կողմից հանցագործության դադարեցումը չի կարող գնահատվել կամովին:
- Մինչդեռ, եթե անձը, թեև նկատում է ոստիկանի համազգեստը, սակայն, գնահատելով իրադրությունը, հասկանում է, որ ամեն դեպքում հանցանքն հաջողությամբ ավարտին հասցնելու բոլոր նախադրյալներն առկա են, բայց այդ համազգեստը ստիպում է իրեն խորհել սեփական վարքագծի մասին, ինչն էլ հանգեցնում է պատասխանատվության չենթարկվելու ցանկության պատճառով հանցագործությունը դադարեցնելու որոշում կայացնելուն,

<sup>39</sup> Տե՛ս Գրիգորյան Մ.Վ. Հանցագործությունների որակման գիտական հիմունքները: Ուսումնական ձեռնարկ: Երկրորդ, լրացված վերահրատարակություն: Եր.: ՀՌՀ Հրատ., 2009, էջեր 233-234:

ապա նման պայմաններում անձի կողմից հանցագործությունն ավարտին չհասցնելը պետք է գնահատվի որպես կամովին:

**դ. Հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը դադարեցնելը՝ գիտակցելով հանցագործությունը մինչև վերջ հասցնելու փաստացի հնարավորության առկայությունը:**

Կամովին հրաժարումը ենթադրում է նաև, որ անձը դադարեցնում է սեփական գործողությունները (անգործությունը) հանցանքը հաջողությամբ ավարտին հասցնելու օբյեկտիվ հնարավորության գիտակցման պայմաններում: Այդպիսի հնարավորությունը կարող է բացակայել, օրինակ, երբ անձը դադարեցնում է հանցավոր ոտնձգությունը այնպիսի խոչընդոտների հանդիպելու պատճառով, որոնց հաղթահարումը հաշվի չէր առել հանցանքը սկսելիս (օրինակ՝ բռնաբարությունը սկսելիս հանցավորը տեղեկանում է տուժողի մոտ առկա վարակիչ հիվանդության մասին, կամ գողություն կատարելիս նկատում է տեսահսկող սարքը և այլն):

Պրակտիկայում երբեմն դժվար է լինում կամովին հրաժարումը տարբերակել հանցավորի կամքից անկախ հանցագործությունն ավարտին չհասցնելուց, երբ ի հայտ են գալիս այնպիսի հանգամանքներ, որոնք թեև դժվարացնում, սակայն ամբողջովին չեն բացառում անձի հնարավորությունը՝ հանցանքն ավարտին հասցնելու: Օրինակ՝ համակարգչային տեխնիկա հափշտակելու նպատակով անձը մտնում է պահեստարան, քաջ գիտակցելով, որ հանցակիցն իրեն սպասում է դրսում՝ հափշտակվածն ավտոմեքենայով տեղափոխելու համար: Հանկարծ վերջինս տալիս է պայմանական ազդանշան, որը նշանակում է, որ ավտոմեքենա չի կարողացել գտնել: Այս իրավիճակը ստեղծում է հանցանքը հաջողությամբ ավարտին հասցնելու պրակտիկ անհնարինություն:

Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ ի հայտ եկած հանգամանքները, եթե հանցավորի համոզմամբ ենթակա են հաղթահարման, թեկուզ, լրացուցիչ ջանքեր գործադրելու արդյունքում, սակայն անձը սեփական ցանկությամբ դադարեցնում է հանցավոր ոտնձգությունը (չնայած կարող էր շարունակել), առկա է կամովին հրաժարում: Այդ իսկ պատճառով հանցագործությունից կամովին չի կարող համարվել այն հրաժարումը, որը թեև կայացվել է անձի

կողմից ինքնուրույն, սակայն եղել է հանցավոր մտադրությունն ավարտին հասցնելու օբյեկտիվ անհնարինության արդյունք:

Հանցագործությունը հաջողությամբ շարունակելու և մինչև վերջ հասցնելու փաստացի հնարավորության գիտակցումը բնութագրում է հանցագործության սուբյեկտիվ կողմը: Դա ենթադրում է, որ, եթե, նույնիսկ, օբյեկտիվորեն հնարավորություն չի եղել հանցագործությունն ավարտին հասցնել, սակայն անձը կարծել է, թե ինքն ունի այդպիսի հնարավորություն և դադարեցրել է հանցանքի կատարմանն ուղղված գործողությունները, ապա կամովին հրաժարումն առկա է:

Ասվածը կարող է վերաբերել այն դեպքերին, երբ հանցանք կատարող անձը, ՕՀՄ իրականացնող իրավապահ մարմինների հսկողության տակ գտնվելով, ինքնուրույն կայացնում է որոշում և ավարտին չի հասցնում հանցագործությունը: Այստեղ կարևորը, ինչպես արդարացիորեն նկատում է Ն.Ֆ.Կուզնեցովան, անձի կողմից հանցանքը հաջողությամբ ավարտին հասցնելու հանգամանքը գիտակցելու փաստի հավաստումն է<sup>40</sup>:

Մինևույն ժամանակ, կամովին կարող է համարվել հանցագործությունից անձի հրաժարումն այն իրավիճակներում, երբ հանցավոր գործունեությունը դադարեցնելու նախաձեռնությունը գալիս է երրորդ անձից, որը կարողանում է համոզել անձին հետ կանգնել իր հանցավոր մտադրությունն ավարտին հասցնելուց: Էական է, որ «կատարողը» անձամբ գիտակցի հանցագործությունն ավարտին հասցնելու իրական հնարավորությունը, երբ, տեղի տալով ուրիշի հորդորներին կամ խնդրանքներին, ինքնուրույն որոշում է ընդունում հանցագործությունից կամովին հրաժարվելու մասին:

Հանցագործությունից հրաժարման հատկանիշների առկայությունը հաստատելու և հանցագործության նախապատրաստությունից կամ հանցափորձից այն սահմանազատելու համար անհրաժեշտ է համակողմանիորեն վերլուծել և գնահատել քրեական գործի նյութերը, ինչպես նաև ուսումնասիրել անձի՝ հանցագործությունից հրաժարվելու հոգեբանական պատճառները, ինչը թույլ կտա պար-

---

<sup>40</sup> Ст'ю Кузнецова Н.Ф. Ответственность за приготовление к преступлению и покушение на преступление по советскому уголовному праву. М., 1958, էջ 160:

զել, թե այդպիսի հրաժարումը եղել է կամավոր, թե՞ հարկադրված, վերջնական, թե՞ ժամանակավոր և այլն:

Համատեղ հանցավոր գործունեության պարագայում հանցակիցների կամովին հրաժարումն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնց անդրադարձ կկատարվի սույն աշխատանքի համապատասխան հատվածում:

***Այսպիսով կարելի է առանձնացնել չավարտված հանցավոր գործունեության որակման հետևյալ կանոնները.***

1. Չավարտված հանցավոր գործունեության որակումը պետք է հստակ արտացոլի այն փուլը, որում ընդհատվել և ավարտին չի հասցվել հանցագործությունը՝ հղում պարունակելով ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ կամ 35-րդ հոդվածներին:
2. Եթե հանցագործությունը որակելիս չի հաստատվել մեղքի ուղղակի դիտավորության ձևը, ապա հանցավորի արարքը չի կարող գնահատվել որպես չավարտված հանցագործություն:
3. Հանցավոր գործունեության յուրաքանչյուր նախորդ փուլ կլանվում է հաջորդի մեջ և ինքնուրույն չի որակվում:
4. Անձի նախապատրաստական այն գործողությունները, որոնք միաժամանակ ոտնձգում են քրեափրավական պաշտպանության մեկ այլ օբյեկտի դեմ և պարունակում են ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի մեկ այլ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, պետք է արժանանան լրացուցիչ քրեափրավական գնահատականի:
5. Մեկ հանցագործության համար պայմաններ ստեղծելուն ուղղված անձի արարքներից յուրաքանչյուրը, եթե ինքնուրույն հանցակազմ է պարունակում, պետք է նույնպես արժանանան ինքնուրույն քրեափրավական գնահատականի:
6. Անձի միասնական դիտավորությամբ ընդգրկված պարբերական արարքներն՝ ուղղված քրեափրավական պաշտպանության միևնույն օբյեկտի դեմ ոտնձգելու համար պայմաններ ստեղծելուն, ժամանակային ոչ մեծ խզումով, իրենցից ներկայացնում են մեկ հանցագործություն և լրացուցիչ չեն որակվում:

7. Վերաճող հանցագործությունների դեպքում, երբ մի հանցագործությունը, անձի դիտավորության փոխակերպման արդյունքում վեր է աճում, որպես կանոն, առավել վտանգավոր հանցագործության, փորձ հնարավոր է, եթե հանցագործությունը վերաճելուց հետո իրականացվում է վերաճած հանցագործության օբյեկտիվ կողմի որոշակի դրսևորում: Մինչդեռ, եթե անձի դիտավորությունը թեև վերափոխվում է առավել ծանր հանցագործության, սակայն վերջինս չի հասցնում իրականացնել վերաճած հանցագործության օբյեկտիվ կողմի բովանդակություն կազմող որոշակի գործողություններ, ապա նրա արարքը որակվում է որպես սկզբնական հանցագործության փորձ:
8. Անձի դիտավորությամբ ընդգրկված հանցագործության և հանցավոր արդյունքի միջև անհամապատասխանության առկայության դեպքում, վերջինիս արարքը կարող է որակվել որպես համապատասխան հանցագործության փորձ միայն, երբ այդպիսի անհամապատասխանությունը կրի քրեաիրավական բնույթ և ունենա նշանակություն արարքի որակման տեսանկյունից:
9. Եթե հանցակազմերը կառուցելիս որևէ հատկանիշ օրենսդրի կողմից չի արժևորվել և քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածում չի նախատեսվել որպես հանցակազմի հատկանիշ (որակյալ, արտոնյալ), ապա հանցավորի արարքում այդպիսի հատկանիշի բացակայությունը, չնայած նրա դիտավորությամբ ընդգրկված լինելուն, չի կարող վկայել չավարտված հանցագործության մասին:
10. Անձի միասնական դիտավորությամբ ընդգրկված պարբերական արարքները, որոնք անմիջականորեն ուղղված են քրեաիրավական պաշտպանության միևնույն օբյեկտի դեմ, եթե չեն հաջողվում անձի կամքից անկախ հանգամանքներով, չեն կարող կազմել համակցություն:
11. Եթե անձի դիտավորությամբ միաժամանակ ընդգրկված են քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի միևնույն մասի տարբեր կետերով նախատեսված որակյալ հանգամանքներ,

սակայն փաստացի կատարած արարքում առկա է դրանցից միայն մեկը (կամ ոչ բոլորը), ապա նրա արարքը պետք է որակվի միայն այն ծանրացնող հանգամանքով (հանգամանքներով) ավարտված հանցագործություն, որը փաստացի առկա է անձի արարքում:

12. Չավարտված հանցավոր գործունեությունը որակվում է ըստ հանցավորի դիտավորության ուղղվածության: Եթե հանցագործության փորձի ժամանակ անձի փաստացի կատարած արարքը պարունակում է նվազ վտանգավոր հանցագործության հատկանիշներ, որոնք հանցավորի դիտավորության իրականացման մասն են կազմում, ապա արարքը չի որակվում հանցագործությունների համակցությամբ:
13. Կոնկրետացված դիտավորության պարագայում ցանկալի հանցավոր արդյունքին չհասնելու դեպքում հանցավորի արարքը ենթակա է որակման որպես հանցագործության փորձ՝ կախված դիտավորության ուղղվածությունից:
14. Չկոնկրետացված դիտավորության պարագայում հանցավոր հետևանք չառաջանալու դեպքում անձի արարքը որակվում է որպես նրա դիտավորության մեջ ընդգրկված հանցագործություններից ամենաթեթևի փորձ: Միևնույն ժամանակ, երբ անձի անորոշ դիտավորությունն ընդգրկում է վտանգավոր հետևանքների մի ամբողջ համալիր՝ ինչպես հանցավոր, այնպես էլ ոչ հանցավոր, հանցավոր հետևանքները չառաջանալու դեպքում, խոսք չի կարող գնալ չավարտված հանցագործության մասին, իսկ տվյալ անձը պետք է ազատվի քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարածն այլ հանցակազմ չի պարունակի:
15. Եթե հանցանք կատարելիս անձի դիտավորությունը երկընտրելի կոնկրետացված է, այսինքն՝ ուղղված է այս կամ այն կոնկրետ հետևանքի առաջացմանը, ապա ցանկալի հետևանքներից ոչ մեկը չառաջանալու դեպքում, հանցավորի արարքը պետք է որակել որպես նրա դիտավորությամբ ընդգրկված ամենաթեթև հանցագործության փորձ:
16. Ձևական հանցակազմերի պարագայում հանցագործության փորձ կարող է լինել ինչպես փաստական սխալի, այնպես էլ այն



դեպքերում, երբ հանցավորին չի հաջողվում իրականացնել հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ համարվող արարքն ամբողջությամբ:

17. Քրեական օրենքի հոդվածի դիսպոզիցիայում երկրնտրելի արարքներից որևէ մեկն ամբողջությամբ կատարելը բացառում է անձի արարքը որպես հանցագործության փորձ որակելը, նույնիսկ այն դեպքում, երբ այդ արարքներից մյուսը (մյուսները) կատարվել է մասամբ:
18. Եթե որպես հանցակազմի հիմնական կամ որակյալ հատկանիշ է նշված հանցագործության նպատակը, ապա այդ նպատակի չիրագործումը չի կարող վկայել չավարտված հանցագործության մասին:
19. Եթե հանցագործության նախապատրաստությունը պարունակում է մեկ այլ ինքնուրույն ավարտված հանցագործության հատկանիշներ, ապա արարքը որակվում է հանցագործությունների համակցությամբ:
20. Հանցագործությունից կամովին հրաժարումը ենթակա է քրեաիրավական գնահատականի միայն այն դեպքում, երբ անձի փաստացի կատարածը պարունակում է քրեական օրենսգրքի այլ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ:

## **2.5. Որակման առանձնահատկությունները սուբյեկտիվ սխալի դեպքում**

Ավարտված և չավարտված հանցագործությունները միմյանցից սահմանազատելու, անձի՝ ավարտին չհասցված հանցավոր գործունեությունը ճշգրիտ քրեաիրավական գնահատականի արժանացնելու տեսանկյունից խիստ կարևորվում են նաև սուբյեկտիվ սխալի դեպքում արարքի որակման հարցերը: Ընդ որում, «Քրեական գործող օրենսգրքում այդ կապակցությամբ որևէ իրավակարգավորում նախատեսված չէ: Ուստի, նշված հարցերի քննարկումը և լուծումը շարունակում է մնալ դոկտրինալ և դատական մեկնաբանությունների մակարդակում:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը՝ որպես անձի հոգեբանական գործունեության ոլորտ, կարող է ուղեկցվել իրավական նշանա-

կության սխալներով, որոնք քրեական իրավունքի գիտության մեջ անվանվում են սուբյեկտիվ սխալ (կամ՝ պարզապես սխալ):

Սխալն անձի ոչ ճիշտ պատկերացումն է իր հանրորեն վտանգավոր արարքի օբյեկտիվ հանգամանքների և դրա հակաիրավականության վերաբերյալ: Քրեական իրավունքի տեսության մեջ տարբերակում են սխալի երկու տեսակ՝ **իրավաբանական** և **փաստական**<sup>41</sup>:

#### **Ա. Իրավաբանական սխալը:**

Սխալի տվյալ տեսակը, որը մասնագիտական գրականության մեջ երբեմն կոչվում է սխալ՝ իրավունքի մեջ, անձի ոչ ճիշտ պատկերացումն է իր գործողության (անգործության) քրեական հակաիրավականության կամ ոչ հակաիրավականության և իրավաբանական հետևանքների առնչությամբ: Իրավաբանական սխալն ունի հետևյալ դրսևորումները.

1. **Անձը կարծում է, որ իր կատարած արարքը հանցավոր է, մինչդեռ քրեական օրենքում այդ արարքը նախատեսված չի լինում (կարծեցյալ հանցագործություն):** Տվյալ դեպքում խոսք չի կարող գնալ անձի քրեական պատասխանատվության մասին, քանզի կատարվածը հանցագործություն չէ:

2. **Անձը կարծում է, որ իր կատարած արարքը հանցավոր չէ, մինչդեռ այդ արարքը նախատեսված է լինում քրեական օրենքով՝ որպես հանցագործություն:** Տվյալ դեպքում կատարված հանցանքի համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում «օրենքի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից» (ignorantia non est argumentum) հանրահայտ կանոնի հիման վրա:

Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ հանցավորի սխալ պատկերացումներն իր արարքի քրեական հակաիրավականության վերաբերյալ նշանակում է, որ անձը գիտակցում է կատարված արարքի բոլոր փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի

---

<sup>41</sup> Ներկայումս գիտական ուսումնասիրություններն առանձնացնում են իրավաբանական և փաստական սխալների մինչև քառասուն հնարավոր տեսակ, չնայած դրանցից շատերն իրենցից ներկայացնում են զուտ տեսական հետաքրքրություն և իրավակիրառ պրակտիկայի կարիքների բավարարման տեսակետից չունեն որևէ նշանակություն:

հատկանիշ են, սակայն կարծում է, որ այդ արարքը նախատեսված չէ քրեական օրենսգրքում՝ որպես հանցագործություն: Մինչդեռ, եթե անձը չի գիտակցում իր կատարած արարքի որևէ հատկանիշ, որը համապատասխան հանցակազմը ձևավորող պարտադիր բաղադրատարր է, ապա, անկախ արարքի հակաիրավականության վերաբերյալ նրա սխալ պատկերացումից՝ դրա կատարումը չի կարող մեղսագրվել վերջինիս: Բանն այն է, որ նման դեպքում գործ կունենանք ոչ թե իրավաբանական սխալի, այլ օբյեկտիվ մեղսանացման հետ, ինչն անթույլատրելի է ՀՀ քր. օր.-ի հոդված 9-ի իմաստով:

Այսպես, օրինակ՝ Վ.Աղաջանյանը դատապարտվել է այն բանի համար, որ 2009 թ. օգոստոսի 31-ին ապօրինի կերպով կրել է սառը զենք հանդիսացող, գործարանային արտադրության ընդհանուր նշանակության որսորդական դանակ: Առաջին ատյանի դատարանը նրա նկատմամբ կայացրել է արդարացման դատական ակտ այն պատճառաբանությամբ, որ վերջինիս գործողություններում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմը, և տվյալ դեպքում Վ.Աղաջանյանի դիտավորությունն ուղղված չի եղել սառը զենք կրելուն: Նա չի գիտակցել իր գործողության՝ հանրության համար վտանգավոր բնույթը, չի նախատեսել հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և չի ցանկացել դրանց վրա հասնելը:

Վերաքննիչ դատարանը, բեկանելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, արձանագրել է, որ ամբաստանյալ Վ.Աղաջանյանը, թեկուզև վաճառելու նպատակով, բայց, ձեռքին պահելով որսորդական դանակը, ապօրինի կրել է այն: Բացի այդ, ամբաստանյալը գիտակցել է իր գործողության՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար վտանգավոր հետևանքները և ցանկացել դրանց վրա հասնելը:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ **այն հանգամանքը, որ ամբաստանյալը չի իմացել, որ վաճառակերպում ազատ վաճառվող դանակները կարող են սառը զենք հանդիսանալ, վերջինիս չի ազատում պարասխանաբնույթից, քանի որ օրենքի չիմացությունն անձին չի ազատում պարասխանաբնույթից** (ընդգծումը մերն է):

Առաջին ատյանի դատարանի դատական ակտի բեկանման հիմքում Վերաքննիչ դատարանի կողմից այդպիսի փաստարկ դնելը, ըստ էության, օբյեկտիվ մեղսայնացման ուշագրավ օրինակ է: ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմի պարտադիր հատկանիշ է հանցագործության առարկան (տվյալ դեպքում՝ սառը զենքը), և եթե հանցավորը, թեև իր ցանկությամբ (կամքով) կրում է այդ առարկան, սակայն չի գիտակցում դրա սառը զենք լինելը, կամ այդ առարկան՝ որպես սառը զենք, դուրս է գտնվում հանցավորի դիտավորության սահմաններից, ապա այդ հանցագործությունը (ՀՀ քր. օր.-ի 235-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված) չի կարող մեղսագրվել վերջինիս: Նկարագրված իրավիճակում գործ ունենք ոչ թե անձի կողմից քրեական օրենքի չիմացության, այլ հանցակազմի հատկանիշը չգիտակցելու փաստի հետ (փաստական սխալ):

Ուստի, կարելի է ասել, որ անհիմն է Վերաքննիչ դատարանի այն փաստարկը, որ «եթե ամբաստանյալը չի իմացել, որ վաճառակեփում ազատ վաճառվող դանակները կարող են սառը զենք հանդիսանալ, վերջինիս չի ազատում պատասխանատվությունից, քանի որ օրենքի չիմացությունն անձին չի ազատում պատասխանատվությունից»<sup>42</sup>: Այս փաստարկը չի բխում սուբյեկտիվ մեղսայնացման սկզբունքի էությունից, և նկարագրված իրավիճակը կապ չունի իրավաբանական սխալի հետ (իրավաբանական սխալն առկա կլիներ այն դեպքում, երբ անձը գիտակցեր, որ իր կողմից կրվող առարկան հանդիսանում է սառը զենք, սակայն կարծեր, որ կատարածը նախատեսված չէ քրեական օրենսգրքում՝ որպես հանցագործություն):

ՀՀ Վճռաբեկ դատարանը, Հեղինե Գալստյանի վերաբերյալ գործով 2015 թվականի հունիսի 5-ին կայացված թիվ ԼԴ/0051/01/14

---

<sup>42</sup> Տե՛ս Վ.Աղաջանյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0345/01/09 գործը: Սույն գործով Վճռաբեկ դատարանը, հաստատված փաստերի հիման վրա, գտել է, որ Վ.Աղաջանյանը գիտակցել է իր կողմից սառը զենք կրելու փաստը, ինչպես նաև դրա հանրային վտանգավորությունը, և սառը զենքը կրել է իր ցանկությամբ (կամքով), այլ ոչ թե անկախ իր ցանկությունից կամ հակառակ իր ցանկության, և ուժի մեջ է թողել Վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ մերժելով վճռաբեկ բողոքը:

որոշմամբ, անդրադարձել է իրավաբանական սխալի՝ «օրենքի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից» սկզբունքին այն համատեքստում, թե անձին ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացրած չլինելու հանգամանքն արդյոք կարող է սուտ մատնության համար առաջադրված մեղադրանքում նրան արդարացնելու հիմք հանդիսանալ: Սույն գործով Վճռաբեկ դատարանն արձանագրել է. «(...) սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված լինելը այս հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ չէ: Քրեական օրենսդրության որևէ այլ դրույթ նույնպես չի սահմանում սուտ մատնության համար քրեական պատասխանատվության առկայության մասին անձին նախազգուշացնելը՝ իբրև պատասխանատվության ենթարկելու պարտադիր պայման: Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ քրեական պատասխանատվության մասին նախազգուշացնելու վերաբերյալ կանոնին, ապա այն քրեադատավարական պահանջ է, որը տարածվում է հանցագործությունների մասին հաղորդումների գրանցման դատավարական կարգի նկատմամբ: Այն չի սահմանում և չի էլ կարող սահմանել (ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ և 7-րդ հոդվածներ), որ քրեական պատասխանատվության մասին նախազգուշացնելու դատավարական պահանջի խախտումը բացառում է սուտ մատնության համար անձի քրեական պատասխանատվությունը: Քննարկվող քրեադատավարական կանոնը կիրառելի է այն դեպքում, երբ անձը հանցագործության մասին հաղորդումն անմիջականորեն ներկայացնում է իրավասու մարմիններին: Մինչդեռ հաղորդումները կամ հայտարարությունները կարող են ի սկզբանե ներկայացված չլինել վարույթն իրականացնող մարմիններին, ինչպես նաև ուղարկվել փոստի միջոցով: Նման դեպքերում օբյեկտիվորեն հնարավոր չէ անձին նախազգուշացնել սուտ մատնության համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Բացի այդ, վերոշարադրյալ քրեադատավարական պահանջը նաև սուտ մատնության հանցակազմի սուբյեկտիվ կողմի առկայությունը կամ բացակայությունը որոշելու չափանիշ ծառայել չի կարող: Հետևաբար, ինքնին այդ պահանջի խախտումը չի կարող

բացառել սուպ մատնություն կատարելու դիտարկության առկայությունը: Ուստի սուպ մատնության համար քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը ողջամտորեն չի կարող պայմանավորվել դրա առկայության մասին անձին նախազգուշացնելու հանգամանքով: Վերոշարադրյալը, իհարկե, չի ենթադրում, որ քննարկվող դատավարական պահանջի նախատեսումն ինքնանպատակ է. մասնավորապես, այն ուղղված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված՝ քրեական դատավարության խնդիրների իրացման արդյունավետությունը բարձրացնելուն: Որպես պարտադիր պահանջ՝ քննարկվող քրեադատավարական կանոնը պետք է պահպանվի իրավասու մարմնի կողմից, իսկ այն չպահպանելը՝ որպես օրինականության սկզբունքի խախտում, կարող է համապատասխան իրավական հետևանքներ առաջացնել խախտում թույլ տրված պաշտոնատար անձի համար (օրինակ՝ կարգապահական պատասխանատվություն): Միևնույն ժամանակ անձին սուպ մատնության համար քրեական պատասխանատվության ենթարկելը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով պայմանավորելը վերացական և պարտանքային կդարձնի քրեական դատավարության համասոցիալական այնպիսի խնդրի նախատեսումը, ինչպիսին է անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցագործությունից, ինչպես նաև այդ պաշտպանությունն ապահովելու պետության պարտականությունը, ինչն անթույլատրելի է: Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված չլինելու հանգամանքը չի կարող հանդիսանալ այդ հանցագործության համար անձի քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք: Այս դեպքում գործում է նաև «օրենքի չիմացությունը չի ազատում պատասխանատվությունից (ignorantia non est argumentum)» հանրահայտ սկզբունքը»<sup>43</sup>:

**3. Անձը սխալ պարկերացումներ է ունենում իր արարքի իրավաբանական հետևանքների՝ արարքի քրեաիրավական գնահատման հարցում:**

<sup>43</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Հեղինե Գալստյանի վերաբերյալ գործով 2015 թվականի հունիսի 5-ի թիվ Լ Դ/0051/01/14 որոշման 24-րդ կետը:

**տականի, պատժի տեսակների ու չափերի վերաբերյալ:** Նշված հանգամանքները չեն մտնում մեղքի առարկայական բովանդակության մեջ, և հանցավորի կողմից դրանց գիտակցումը պարտադիր չէ, հետևաբար՝ այդ կապակցությամբ անձի սխալ գնահատականը չի բացառում ո՛չ մեղքը, ո՛չ էլ հանցավոր արարք կատարելու համար վրա հասնող քրեական պատասխանատվությունը:

Իրավաբանական սխալի բոլոր դեպքերում ընդհանուր կանոնը հանգում է նրան, որ կատարվող արարքի իրավաբանական հատկությունների և իրավական հետևանքների առնչությամբ սխալ թույլ տվող անձի քրեական պատասխանատվությունը կախված է ոչ թե դրա սուբյեկտիվ գնահատականից, այլ օրենսդրի դիրքորոշումից, որն արտահայտված է քրեական օրենսգրքի կոնկրետ հոդվածներում: Իրավաբանական սխալը չի ազդում անձի արարքի քրեաիրավական գնահատականի հարցի լուծման վրա, այսինքն՝ որակման հարցերում իրավաբանական սխալն ունի չեզոք նշանակություն:

Կոնկրետ իրավահարաբերություններում վարքագծի թույլատրելի չափի ընտրության համար սուբյեկտի՝ տվյալ հարաբերությունը կարգավորող իրավունքի նորմերին ծանոթանալը և իմացությունը ընկալվում է որպես կանխավարկած: Եվ անձն է կրում դա չկատարելու բացասական հետևանքները: Այդ ամենն էլ պայմանավորում է իրավաբանական սխալի դեպքում անձի քրեական պատասխանատվության կանոնը:

Մինչդեռ, երբ անձն օբյեկտիվորեն զրկված է եղել տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նորմերին ծանոթանալու, այդ թվում՝ սահմանված քրեաիրավական արգելքների մասին տեղեկանալու հնարավորությունից, ապա ընդհանուր կանոնից պետք է կատարվի բացառություն: Մասնագիտական գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ տվյալ կանոնից կատարվող բացառությունները վերաբերում են այն դեպքերին, երբ անձը չի իմացել և չէր կարող իմանալ սահմանված քրեաիրավական արգելքների մասին (օրինակ՝ անմարդաբնակ, արտաքին միջավայրից կտրված վայրում գտնվելը), կամ իրավասու պետական մարմինը կամ պաշտոնատար անձը պաշտոնապես վստահեցրել են անձին, որ իր գործողություններն իրավաչափ են: Նկարագրված դեպքերում քրեաիրավական

արգելքներ խախտող անձը չպետք է ենթարկվի քրեական պատասխանատվության<sup>44</sup>:

#### **Բ. Փաստական սխալը:**

Տվյալ սխալն անձի ոչ ճիշտ պատկերացումն է այն փաստական հանգամանքների վերաբերյալ, որոնք կազմում են հանցակազմի օբյեկտիվ հատկանիշները և արտացոլում են հանցագործության որակական և քանակական հատկությունները: Սուբյեկտը կարող է սխալվել հանցագործության օբյեկտի (այդ թվում՝ հանցագործության առարկայի, տուժողի անձի), օբյեկտիվ հատկությունների (ներառյալ՝ հանցագործության գործիքների, միջոցների, եղանակի), պատճառական կապի, հանցագործության որակյալ և արտոնյալ հանգամանքների կապակցությամբ: Փաստական սխալն ունի իրավական նշանակություն անձի՝ քրեական պատասխանատվության հարցի լուծման տեսանկյունից և ազդում է արարքի որակման վրա:

Փաստական սխալի պարագայում անձի արարքի քրեաիրավական գնահատականի հարցը լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ առանցքային դրույթները, որոնք բխում են *սուբյեկտիվ մեղսայնացման սկզբունքի* էությունից՝

1) սուբյեկտիվ սխալի դեպքում անձի արարքը որակվում է ըստ դիտավորության ուղղվածության և բովանդակության, այսինքն՝ ելնելով նրանից, թե հանցանքը կատարելիս ինչին էր ուղղված անձի դիտավորությունը, ինչ էր ընդգրկված նրա գիտակցության մեջ.

---

<sup>44</sup> Տվյալ մոտեցումը տեղ է գտել նաև ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում, որի 31-րդ հոդվածի 1-ին մասի (առանց մեղքի վնաս պատճառելը) համաձայն՝ *քրեական օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձն արարքի հակահրավակականությունը չգիտակցելու հիմքով ենթակա չէ քրեական պատասխանատվության այն դեպքում, երբ պեղական մարմինը կամ նրա անունից հանդես եկող անձը կամ պաշտոնատար անձը սխալ տեղեկություն են տվել կամ սխալ են մեկնաբանել իրավական նորմը կամ իրավական ակտը պատշաճ կարգով չի տրամադրվել իրեն կամ այլ օբյեկտիվ հանգամանքների ուժով անձը հնարավորություն չի ունեցել գիտակցելու իր արարքի հակահրավակականությունը*: Այս մասին տե՛ս նաև՝ *Энциклопедия уголовного права. Том 4. «Состав преступления» / Отв. ред. В.Б. Малинин. СПб., 2005, էջ 772*:



2) եթե անձը գործել է անորոշ (չկոնկրետացված) դիտավորությամբ, ապա պատասխանատվությունը վրա է հասնում ըստ փաստացի կատարածի արդյունքի կամ փաստացի վրա հասած հետևանքների.

3) այն հանգամանքները, որոնք հիմնական կամ որակյալ հանցակազմի հատկանիշ են, չեն կարող մեղսագրվել անձին, եթե դրանք ընդգրկված չեն եղել վերջինիս դիտավորությամբ:

Կախված անձի սխալ պատկերացումների բովանդակությունից՝ ընդունված է առանձնացնել փաստական սխալի մի շարք տարատեսակներ: Դրանք են.

**Սխալն արարքի հանրային վրանգավորության կապակցությամբ**, որն իր հերթին կարող է ունենալ հետևյալ դրսևորումները.

1. *Անձը սխալմամբ կարծում է, որ իր արարքը հանրորեն վրանգավոր է, սակայն իրեն անհայտ պատճառներով այն կորցրած է լինում հանրային վրանգավորությունը:* Այսպես, օրինակ՝ անձը մուտք է գործում պահեստ և հափշտակում այնպիսի առարկաներ, որոնք պահպանման ժամկետն անցած լինելու պատճառով ենթակա էին ոչնչացման: Սխալի այս տեսակը չի ազդում մեղքի ձևի վրա, և արարքը շարունակում է մնալ դիտավորությամբ կատարված, սակայն քրեական պատասխանատվությունը վրա է հասնում ոչ թե ավարտված, այլ չավարտված հանցագործության համար, քանի որ հանցավոր մտադրությունը չի իրականացվում՝ քրեաիրավական պաշտպանության օբյեկտին փաստացի վնաս չի պատճառվում:

2. *Անձը սխալմամբ կարծում է, որ իր արարքն իրավաչափ է՝ չգիտակցելով դրա հանրային վրանգավորությունը:* Անձի այս պատկերացումները դրսևորվում են հանցագործության օբյեկտիվ կողմի այնպիսի փաստական հանգամանք չգիտակցելու մեջ, որը արարքին հաղորդում է հանրային վրանգավորություն: Սխալի այս տեսակը բացառում է դիտավորյալ մեղքի ձևը, իսկ եթե արարքը համարվում է հանցագործություն միայն դիտավորությամբ կատարվելու դեպքում, ապա բացառվում է նաև անձի քրեական պատասխանատվությունը: Օրինակ՝ անձի կողմից կեղծ փողեր իրացնելու դեպքում, որոնք վերջինս բարեխղճորեն համարում է իրական, բացառվում է քրեական պատասխանատվությունը: Սակայն, եթե օրենսդիրը արարքը հանցագործություն է համարում մեղքի ցանակացած

ծնով կատարվելու դեպքում, ապա դրա հանրային վտանգավորությունը չգիտակցելը չի բացառում անձի քրեական պատասխանատվությունը արարքն անզգուշությամբ կատարելու համար, եթե անձը պարտավոր էր և կարող էր գիտակցել արարքի հանրային վտանգավորությունը և նախատեսել դրա վտանգավոր հետևանքները:

**Սխալն օբյեկտի մեջ:**

*Հանցագործության օբյեկտի մեջ սխալն անձի ոչ ճիշտ պատկերացումն է հանցավոր ունեցողության օբյեկտի սոցիալ-իրավական էության կամ դրա քանակական կողմի վերաբերյալ: Սխալի այս տեսակի դրսևորման ձևերը և որակման կանոնները հանգում են հետևյալին.*

1. *Եթե հանցավորը սխալմամբ ենթադրում է, որ ունեցողն է մի օբյեկտի դեմ, սակայն փաստացի վնաս է պատճառում այլ՝ իր դիտարկությամբ ընդգրկվածին ոչ համարժեք օբյեկտին, ապա նրա արարքը ենթակա է որակման որպես դիտարկության մեջ ընդգրկված հանցագործության փորձ, այլ խոսքով՝ օբյեկտի մեջ սխալի այս տեսակը որակվում է ըստ հանցավորի դիտարկության ուղղվածության: Օրինակ՝ եթե անձը փորձում է հափշտակել թմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, սակայն փաստացի հափշտակվում է այդպիսիք չհանդիսացող դեղամիջոցներ, ապա նրա արարքը ենթակա է որակման ՀՀ քր. օր.-ի 34-269-րդ հոդվածի համապատասխան մասով կամ (և) կետով՝ որպես թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր հափշտակելու փորձ<sup>45</sup>:*

Հարկ է նկատել, որ, չնայած, տվյալ իրավիճակում հանցավորի դիտարկությամբ ընդգրկված օբյեկտին վնաս չի պատճառվում,

---

<sup>45</sup> Հանցագործությունների որակման այս կանոնը տեղ է գտել ՌԴ Գերագույն դատարանի պլենումի մի շարք որոշումներում: Մասնավորապես՝ «Հափշտակության, շորթման, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի ապօրինի շրջանառության վերաբերյալ գործերով դատական պրակտիկայի մասին» 2002թ. մարտի 12-ի № 5 որոշմամբ արձանագրվել է, որ, եթե անձը հափշտակել է անպիտան և գործառությանը նշանակությանը չձառայող հրազեն, դրան համալրող դետալներ, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր, գիտակցելով, որ դրանք սարքին են, ապա վերջինիս արարքը պետք է որակվի որպես այդ առարկաների հափշտակության փորձ:

սակայն վնասվում է քրեաիրավական պաշտպանության միանգամայն այլ օբյեկտ (ներկայացված օրինակում՝ սեփականության իրավունքի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները): Ստացվում է այնպես, որ հանցավորի փաստացի կատարած արարքն իր մեջ պարունակում է մեկ այլ ավարտված հանցագործության հատկանիշներ, սակայն կատարվածը որակվում է չավարտված հանցագործության կանոններով: Պարզապես, որակման այս կանոնի հիմքում ընկած է իրավաբանական ֆիկցիան, որի ուժով մի հանցագործությունը, որը փաստացի հասցվել է ավարտին, գնահատվում է որպես չավարտված<sup>46</sup>:

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ օբյեկտի մեջ սխալի այս տեսակի որակման քննարկվող կանոնը կիրառվում է միայն այն դեպքում, երբ հանցագործության օբյեկտի նկատմամբ հանցավորը դրսևորում է կոնկրետացված դիտավորություն: Հակառակ դեպքում, ինչպես արդեն նշվել է, անձի արարքը պետք է որակվի ըստ փաստացի առաջացած հետևանքի:

*2. Օբյեկտի մեջ սխալի հաջորդ տեսակը դրսևորվում է անձի կողմից այնպիսի հանգամանքներ չգիտակցելու մեջ, որոնք փոխում են օբյեկտի սոցիալ-իրավական նկարագիրը:* Օրինակ՝ տուժողի հղի կամ անչափահաս լինելը բարձրացնում են հանցագործության հանրային վտանգավորությունը և որոշ հանցակազմերի ծանրացնող հանգամանք են հանդիսանում՝ հանցագործության օբյեկտն առնելով առավել խիստ պաշտպանության տակ:

Օբյեկտի մեջ սխալի այս տեսակը կարող է ունենալ երկակի քրեաիրավական նշանակություն: Այսպես՝ եթե հանցավորը չի գիտակցում այդպիսի հանգամանքների առկայությունը, ապա հանցագործությունը ենթակա է որակման առանց այդ հանգամանքների: Մինչդեռ, եթե անձի դիտավորության մեջ ընդգրկված են այնպիսի փաստական հանգամանքներ, որոնց ուժով քրեաիրավական պաշտպանության օբյեկտն առնվում է առավել խիստ պաշտպանության տակ, սակայն իրականում այդ հանգամանքերը բացակայում են, ապա վերջինիս արարքը պետք է որակվի որպես դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձ:

<sup>46</sup> Այս մասին տե՛ս Энциклопедия уголовного права. Том 4. «Состав преступления» / Отв. ред. В.Б. Малинин. СПб., 2005, էջ 774:

Օրինակ՝ Գ-ն, իմանալով սիրուհու հղիության մասին, որոշում է ազատվել նրանից, քանի որ վերջինս սպառնում էր հղիության մասին պատմել Գ-ի կնոջը: Հետևելով զոհին, Գ-ն դարանակալում է շենքի մուտքի մոտ, սակայն, մթության մեջ սխալ կողմնորոշվելով, դանակահարում է իր սիրուհու քրոջը: Վերջինս հիվանդանոց տանելու ճանապարհին մահանում է կյանքի հետ անհամատեղելի վնասվածքի պատճառով: Նկարագրված իրավիճակում Գ-ի արարքը անհրաժեշտ է որակել ՀՀ քր. օր.-ի 34-104 հոդվածի 2-րդ մասով՝ որպես ակնհայտ հղի կնոջ սպանության փորձ:

3. Մխարը հանցագործության օբյեկտի քանակի կապակցությամբ կարող է ունենալ հետևյալ դրսևորումները.

ա) անձը կարծում է, որ ոտնձգում է միայն մեկ օբյեկտի դեմ, սակայն արդյունքում վնաս է պատճառում քրեաիրավական պաշտպանության մի քանի օբյեկտների,

բ) անձը կարծում է, որ ոտնձգում է երկու կամ ավելի օբյեկտների դեմ, սակայն վնաս է պատճառում քրեաիրավական պաշտպանության միայն մեկ օբյեկտին,

գ) անձը կարծում է, որ ոտնձգում է երկու կամ ավելի օբյեկտների դեմ, սակայն արդյունքում որևէ օբյեկտի վնաս չի պատճառվում:

Այսպես.

*Եթե անձը սխալմամբ ենթադրում է, որ ոտնձգում է միայն մեկ օբյեկտի դեմ, բայց արդյունքում փաստացի վնաս է պատճառվում քրեական օրենքով պաշտպանվող երկու կամ ավելի օբյեկտների, ապա կատարվածը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ՝ որպես ավարտված հանցագործություն այն օբյեկտի դեմ, որին ուղղված էր հանցավորի հիմնական դիտավորությունը, և անզգույշ հանցագործություն, եթե այլ օբյեկտին (օբյեկտներին) վնաս պատճառելիս անձը դրսևորել է անզգույշ մեղքի ձև (իհարկե, եթե այդ օբյեկտի դեմ անզգույշ ոտնձգությունը քրեորեն պատժելի է):*

Միաժամանակ, *եթե այլ օբյեկտին անզգույշությամբ վնաս պատճառելն այն դիտավորյալ հանցագործության որակյալ հատկանիշ է, որին ուղղված էր անձի հիմնական դիտավորությունը, ապա հանցավորի արարքը չպետք է որակվի հանցագործությունների համակցությամբ: Օրինակ՝ տան հրկիզումը, որն ուղեկցվել է այնտեղ գտնվող*

անձի մահով՝ այդ հետևանքի նկատմամբ հանցավորի անզգույշ մեղքի առկայության դեպքում, պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի 185-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

*Եթե անձի դիտավորությունն ուղղված է երկու կամ ավելի օբյեկտների դեմ ուրնձգելուն, սակայն փաստացի վնաս է պատճառվում դրանցից միայն մեկին, ապա հանցավորի արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ՝ որպես ավարտված հանցագործություն այն օբյեկտի դեմ, որին փաստացի վնաս է պատճառվել, և հանցագործության փորձ այն օբյեկտի (օբյեկտների) դեմ, որը (որոնք) չի (չեն) վնասվել: Այսպես, օրինակ՝ բնակարանի հրկիզումը այնտեղ գտնվող անձին սպանելու նպատակով, եթե այդ հետևանքը չի առաջացել նրա՝ բնակարանում չգտնվելու արդյունքում, պետք է որակվի որպես գույքի դիտավորյալ ոչնչացում (վնասում) և սպանության փորձ (ՀՀ քր. օր.-ի 185-րդ և 34-104-րդ հոդվածների համապատասխան մասերով կամ (և) կետերով):*

*Եթե անձի դիտավորությունն ուղղված է երկու կամ ավելի օբյեկտների դեմ ուրնձգելուն, սակայն արդյունքում ոչ մեկին վնաս չի պատճառվում, ապա կատարվածը ենթակա է որակման հանցագործությունների համակցությամբ՝ որպես հանցավորի դիտավորությամբ ընդգրկված քրեաիրավական պաշտպանության բոլոր օբյեկտներին վնաս պատճառելու փորձ: Օրինակ՝ եթե հանցավորը ցանկանում է հափշտակել հրազեն և առանձնակի արժեք ունեցող առարկաներ, սակայն հափշտակությունը կատարելիս ձերբակալվում է, ապա նրա արարքը պետք է որակվի հանցանքների համակցությամբ՝ որպես հրազենի հափշտակության փորձ (ՀՀ քր. օր.-ի հոդված 34-238-րդ) և առանձնակի արժեք ունեցող առարկաների հափշտակության փորձ (ՀՀ քր. օր.-ի հոդված 34-180-րդ):*

Թերևս բացառություն են կազմում այն դեպքերը, երբ հանցավորի դիտավորությամբ ընդգրկված երկու կամ ավելի օբյեկտները նկարագրված են մեկ հանցակազմում: Օրինակ՝ եթե անձը ցանկանում է ավազակություն կատարել՝ տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելով, սակայն մինչև հարձակում գործելը բռնվում է, ապա նրա արարքը պետք է որակվի որպես տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելով կատարված ավազակության փորձ (ՀՀ քր. օր.-ի 34-175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետ):

**Սխալն առարկայի մեջ:**

Հանցագործության առարկայի մեջ անձի սխալ պատկերացումների դեպքում որակումն իրականացվում է հետևյալ կանոններով.

1. *Անձի սխալ պատկերացումը հանցագործության առարկայի վերաբերյալ, որը չի ուղեկցվել հանցագործության օբյեկտի մեջ սխալով, չի կարող ունենալ որևէ իրավական նշանակություն և ազդել արարքի քրեաիրավական գնահատականի վրա:* Այս սխալի էությունն այն է, որ հանցավորը վնասը հասցնում է այն օբյեկտին, որին մտադրված էր, սակայն սխալվում է առարկայի հարցում: Օրինակ՝ եթե անձը ցանկանում է հափշտակել HP ֆիրմայի դյուրակիր համակարգիչ, սակայն սխալմամբ հափշտակում է նույն արժեքի Asus ֆիրմայի համակարգիչ, ապա կատարվածը պետք է որակվի որպես ավարտված հափշտակություն:

2. *Եթե հանցագործության առարկայի մեջ սխալն ուղեկցվում է հանցագործության օբյեկտի մեջ սխալով, ապա անձի արարքը որակվում է որպես մտադրված հանցագործության փորձ:* Այս դեպքում, հանցագործության առարկայով պայմանավորված, փոխվում է նաև քրեաիրավական պաշտպանության օբյեկտը, ինչն իր ազդեցությունն է ունենում փաստին տրվելիք քրեաիրավական գնահատականի վրա: Այսպես՝ եթե հանցավորը հրազենի փոխարեն հափշտակում է ատրճանակի կառուցվածքով կրակայրիչ՝ կարծելով, որ այն հրազեն է, ապա վերջինիս արարքը պետք է որակվի որպես հրազենի հափշտակության փորձ:

*Որակման նույն կանոնն է գործում այն դեպքում, երբ հանցավորը, թեև ուղնազում է մտադրված օբյեկտի դեմ, սակայն անմիջական ներգործություն չի ունենում այն առարկայի վրա, որն իր մտադրված հանցագործության հատկանիշն է և արտացոլում է դրա սոցիալ-իրավական էությունը:* Օրինակ՝ երբ անձը ցանկանում է առանձնակի արժեք ունեցող իր հափշտակել, սակայն սխալմամբ հափշտակում է այդպիսին չհանդիսացող գույք: Տվյալ իրավիճակում կատարվածը ենթակա է որակման ըստ դիտավորության ուղղվածության, այսինքն՝ որպես առանձնակի արժեք ունեցող առարկայի հափշտակության փորձ (ՀՀ քր. օր.-ի 34-180-րդ հոդվածներ):

3. *Եթե առարկայի չափը (զգալի, խոշոր, առանձնապես խոշոր) կամ պատճառված վնասի ծանրության աստիճանը հանցակազմի*

*հատկանիշ է, ապա այդ կապակցությամբ անձի սխալ պատկերացումների քրեաիրավական նշանակությունը հանգում է հետևյալին.*

Ա. Եթե անձը ձեռնամուխ է լինում հանցանքի կատարմանը, որի հանրորեն վտանգավոր հետևանքների համար՝ կախված վնասի չափից կամ ծանրության աստիճանից, օրենքն ավելի խիստ պատասխանատվություն է նախատեսում, և արդյունքում պատճառվում է ավելի նվազ վնաս, քան ընդգրկված է եղել վերջինիս դիտավորությամբ, ապա կատարվածը պետք է որակվի որպես մտադրված հանցագործության փորձ: Օրինակ՝ եթե անձը ցանկանում է խոշոր չափի գույք հափշտակել, սակայն սխալմամբ հափշտակում է զգալի չափի գույք, ապա նրա արարքը որակվում է որպես խոշոր չափերով կատարված հափշտակության փորձ:

Բ. Եթե օրենքը հանցակազմի հատկանիշի համար տարբերակում է ստորին և վերին սահման (օրինակ՝ հափշտակությունների դեպքում հանցագործության առարկայի խոշոր չափի ստորին և վերին սահմանները նախատեսված են հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից երեքհազարապատիկը չգերազանցող գումարը (արժեքը)), իսկ հանցավորը պատճառում է ավելի նվազ վնաս, քան ընդգրկված էր իր դիտավորությամբ, սակայն հանցակազմի տվյալ հատկանիշի (հիմնական, որակյալ, առավել որակյալ) սահմաններում, ապա կատարվածը պետք է որակվի որպես ավարտված հանցագործություն: Այսպես՝ եթե անձը ցանկացել է կատարել հափշտակություն, կարծելով, որ հափշտակվող գույքի արժեքը ութ հարյուր հազար դրամ է, սակայն հետագայում պարզվել է, որ այն արժեք վեց հարյուր հազար դրամ, ապա վերջինիս արարքը պետք է որակվի որպես ավարտված խոշոր չափերով հափշտակություն, քանի որ վեց հարյուր հազար դրամը, համաձայն ՀՀ քր. օր.-ի 175-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերության, համարվում է խոշոր չափ: Այսինքն՝ այդ չափը տեղավորվում է հանցակազմի որակյալ հատկանիշի սահմաններում՝ չնայած նրան, որ ավելի նվազ էր, քան անձի դիտավորության մեջ ընդգրկված գույքի արժեքը:

Նույնն է իրավիճակն այն դեպքում, երբ հանցավորը ցանկանում է սպանել երեք անձի, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով, կյանքից զրկում է երկուսին: Քանի որ երկու անձի սպանու-

թյունն ինքնին սպանության որակյալ հատկանիշի սահմաններում է և հանգեցնում է որակյալ սպանության ավարտված հանցակազմի, այսինքն՝ առկա են սպանության ծանրացնող հատկանիշով հանցակազմի բոլոր հատկանիշները, ուստի՝ հանցավորի արարքը պետք է որակվի որպես երկու անձի ավարտված սպանություն (<< քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2րդ մասի 1-ին կետ):

***Սխալը տուժողի անձի (ինքնության) մեջ:***

*Սխալը տուժողի անձի կապակցությամբ, եթե այն չի ուղեկցվում օբյեկտի մեջ սխալով, չի կարող ազդել որակման վրա:* Օրինակ՝ եթե հանցավորը ցանկացել է սպանել Ա-ին, սակայն սխալմամբ սպանել է Բ-ին, ապա վերջինիս արարքը պետք է որակվի որպես Բ-ի ավարտված սպանություն: Այստեղ յուրաքանչյուր պարագայում օբյեկտը մարդու կյանքն է: Ուստի՝ տուժողի անձի մեջ թույլ տրվող սխալը որակումը չի փոխում: Ինչպես նաև՝ հանցավորի սխալն այս դեպքում դրսևորվում է հանցակազմի ոչ պարտադիր հատկանիշի կապակցությամբ, ինչը չպետք է ազդի կատարվածի քրեաիրավական գնահատականի վրա:

*Եթե տուժողի անձի կապակցությամբ սխալն ուղեկցվում է հանցագործության օբյեկտի մեջ սխալով, ապա հանցավորի արարքը պետք է որակվի ըստ դիտավորության ուղղվածության:* Օրինակ՝ եթե անձը ցանկանում է սպանել պետական, հասարակական կամ քաղաքական գործչին, սակայն, վերջինիս վարորդին շփոթելով նրա հետ, սպանում է վարորդին: Քանի որ այս իրավիճակում հանցագործության տուժողի «անձը», որը տվյալ դեպքում հանցակազմի հատկանիշ է, պայմանավորում է նաև հանցագործության սոցիալ-իրավական էության փոփոխությունը, ուստի՝ հանցավորի արարքը պետք է որակվի ըստ դիտավորության ուղղվածության: Այսինքն՝ որպես դիտավորությամբ ընդգրկված հանցագործության փորձ:

***Սխալը որակյալ հանգամանքների կապակցությամբ:***

Որակյալ հանգամանքների մեջ սխալի էությունն այն է, որ *անձը չի գիտակցում այնպիսի հանգամանքի առկայությունը կամ բացակայությունը, որն ազդում է քրեաիրավական պաշտպանության օբյեկտի սոցիալ-իրավական բնութագրի վրա:*



Սխալի տվյալ տեսակի դրսևորման ձևերը և դրանց համապատասխան որակման կանոնները հետևյալն են.

1. *Եթե անձը հանցանք կատարելիս սխալմամբ գիտակցում է այնպիսի օբյեկտիվ հանգամանք, որը զգալիորեն բարձրացնում է տվյալ հանցագործության հանրային վրանգավորությունը, մինչդեռ այդ հանգամանքը փաստացի բացակայում է, ապա հանցավորի արարքը պետք է որակվի ծանրացնող հանգամանքով հանցագործության փորձ: Օրինակ՝ եթե հանցավորը կարծում է, որ բռնաբարում է տասնչորս տարին չլրացած անձի, մինչդեռ վերջինս հասած է լինում չափահասության տարիքի, ապա կատարվածը պետք է որակվի որպես տասնչորս տարին չլրացած անձի բռնաբարության փորձ (ՀՀ քր. օր.-ի 34-138-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ): Կամ՝ եթե անձը կարծում է, որ իրականացնում է բնակարան ապօրինի մուտք գործելով գողություն, մինչդեռ այն շինությունը, որտեղ նա մուտք է գործում, չի ծառայում որպես բնակարան: Տվյալ դեպքում հանցավորի արարքը, այլ առավել ծանրացնող հանգամանքների բացակայության դեպքում, պետք է որակվի որպես բնակարան ապօրինի մուտք գործելով գողության փորձ (ՀՀ քր. օր.-ի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետ):*

2. *Եթե անձը հանցանք կատարելիս չի գիտակցում ծանրացնող հանգամանքի առկայությունը, սակայն այն իրականում առկա է, ապա վերջինիս արարքը պետք է որակվի առանց ծանրացնող հանգամանքների ավարտված հանցագործություն: Օրինակ՝ եթե անձը բռնաբարում է անչափահասի՝ չգիտակցելով, որ վերջինիս տասնութ տարին լրացած է, ապա կատարվածը ենթակա է որակման որպես հասարակ բռնաբարություն: Որակման այս կանոնը բխում է ՀՀ քր. օր.-ի 29-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված այն իրավադրույթից, համաձայն որի՝ դիտավորյալ հանցագործության ծանրացնող հանգամանքների համար անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե նա գիտակցել է այդ հանգամանքները:*

**Սխալը հանցագործության եղանակի մեջ:**

*Սխալի տվյալ տեսակը քրեաիրավական նշանակություն ունի այն դեպքում, երբ միևնույն հանցավոր հետևանքի պատճառման համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում տարբեր հողվածներով՝ կախված հանցագործության եղանակից: Այլ խոսքով՝*

երբ հարակից հանցակազմերը իրարից սահմանազատելու համար հիմք է ծառայում հանցագործության եղանակը: Այսպես, օրինակ՝ գողությունը և կողոպուտը միմյանցից սահմանազատվում են ուրիշի գույքի հափշտակության եղանակով՝ գաղտնիությամբ կամ բացահայտությամբ:

Քանի որ հափշտակության դեպքում առաջնային չափանիշը անձի սուբյեկտիվ պատկերացումն է կատարված արարքի բնույթի վերաբերյալ, ուստի՝ կատարվածը ենթակա է որակման ըստ դիտավորության ուղղվածության: Օրինակ՝ եթե հանցավորը համոզված է եղել, որ գործել է գաղտնի, և ոչ ոք չի հասկացել իր կատարածի սոցիալ-իրավական նշանակությունը, ապա նրա արարքը պետք է որակվի որպես գողություն՝ անկախ նրանից, թե այլ անձինք օբյեկտիվորեն նկատել և գիտակցել են հանցավորի կողմից իրականացվող հափշտակության հանգամանքը, թե՛ ոչ: Սակայն պետք է նկատի ունենալ, որ որակման այս կանոնը գործում է այն դեպքում, երբ հանցավորի դիտավորությունը հանցագործության եղանակի կապակցությամբ կոնկրետ-որոշակի է: Մինչդեռ, եթե հանցավորը եղանակի նկատմամբ դրսևորում է չկոնկրետացված դիտավորություն, կատարվածը ենթակա է որակման ըստ փաստացի կատարվածի կամ փաստացի վրա հասած հետևանքի:

Եղանակի մեջ սխալն ազդում է արարքի քրեաիրավական գնահատականի վրա նաև այն դեպքում, երբ հանցագործության կատարման եղանակը հանդես է գալիս որպես հիմնական հանցակազմի որակյալ հատկանիշ (օրինակ՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված սպանությունը՝ ՀՀ քր. օր.-ի, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ):

#### ***Սխալը միջոցների մեջ:***

Սխալի այս տեսակն արտահայտվում է նրանում, որ *հանցանք կատարելու համար անձի կողմից ընտրված միջոցն իրականում տարբերվում է նախատեսվածից:* Այսպես.

1. Եթե անձը հանցանք կատարելու համար օգտագործում է նախատեսվածից տարբերվող այլ միջոց, որը, սակայն, նույնքան պիտանի է հանցավոր արդյունքին հասնելու համար, ապա սխալի այս տեսակը *որակման վրա չի ազդում, և անձի արարքը որակվում է որպես ավարտված հանցագործություն:* Օրինակ՝ անձը կարծում է,

որ սպանությունը կատարում է «SS» տեսակի ատրճանակից, սակայն պարզվում է, որ այն «Մակարով» տեսակի էր:

2. Եթե անձը հանցանք կատարելու համար օգտագործում է այնպիսի միջոց, որն իր սխալ պատկերացմամբ՝ ունակ չէր այդպիսի հետևանքներ առաջացնելու (որի ուժը նվազեցված է թվում), ապա *արարքը որակվում է որպես անզգույշ հանցագործություն*: Օրինակ՝ երբ մրգատու այգու սեփականատերը, այգին պաշտպանելու նպատակով, դրա ցանկապատի մետաղալարերին է միացնում էլեկտրական հոսանք՝ ենթադրելով, որ հոսանքի լարումը վտանգ չի ստեղծում այն մարդկանց կյանքի համար, ովքեր կդիպչեն դրան, սակայն մետաղալարին պատահական դիպչած անձը զոհվում է էլեկտրահարումից: Այս դեպքում քրեական պատասխանատվությունը վրա է հասնում անզգույշությամբ մահ պատճառելու համար (<< քր. օր.-ի հոդված 109-րդ):

3. Եթե անձը հանցանք կատարելու համար օգտագործում է անպիտան միջոցներ, որոնք իր կարծիքով պիտանի են, ապա նրա *արարքը պետք է որակվի որպես դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության փորձ*: Օրինակ՝ եթե անձը սպանություն կատարելու համար գործող թույնի փոխարեն օգտագործում է ժամկետանց միջոց, որով հնարավոր չէ մահ պատճառել, ապա վերջինիս արարքը պետք է որակվի որպես սպանության փորձ (<< քր. օր.-ի հոդված 34-104-րդ):

4. Եթե անձը, սնահավատության կամ անտեղյակության արդյունքում, հանցանք կատարելու համար օգտագործում է բացարձակ անպիտան միջոցներ, որոնք ակնհայտորեն ունակ չեն առաջացնելու հանրորեն վտանգավոր հետևանքներ, ապա նման դեպքերում նա *ենթակա չէ քրական պատասխանատվության*: Օրինակ՝ եթե մեկ ուրիշին կյանքից զրկելու համար օգտագործվում է կախարհանք, անեծք և նմանօրինակ այլ միջոցներ, որոնք ընդհանրապես ունակ չեն այդպիսի հետևանք առաջացնելու, ապա անձի արարքը չի կարող որակվել որպես հանցագործություն: Նման դեպքերում անձի գործողությունները կարող են գնահատվել որպես դիտավորության բացահայտում, ինչը պատժելի չէ քրեական իրավունքի տեսանկյունից:

**Սխալը պատճառական կապի զարգացման մեջ:**

Պատճառական կապի զարգացման մեջ սխալի էությունն այն է, որ *անձը, կատարելով հանցագործություն, մոլորվում է իր արարքի և հանրորեն վրանգավոր հետևանքները վրա հասնելու միջև պատճառահետևանքային կապերի զարգացման ընթացքի վերաբերյալ:*

Սխալի քննարկվող տեսակը չի ազդում անձի արարքի քրեաիրավական գնահատականի վրա այն դեպքում, երբ նրա դիտարկողյալ գործողությունների արդյունքում առաջանում է այն հետևանքը, որն ընդգրկված էր իր դիտարկությանը: Բերենք օրինակ. կենցաղային հարցերի շուրջ ծագած վեճի ընթացքում կինը ամուսնուն սպանելու նպատակով կացնի երկու հարված է հասցնում նրա գլխին, ինչի հետևանքով վերջինս մահանում է: Կինը, սխալմամբ կարծելով, որ ամուսինը դեռ չի մահացել, կախում է նրան: Տվյալ դեպքում կինը սխալվում է իր արարքի և հետևանքի միջև զարգացող պատճառական կապի կապակցությամբ՝ կարծելով, որ ամուսինը մահացել է կախելուց, այլ ոչ գլխին ստացած կացնի հարվածներից: Նկարագրված իրավիճակում, քանի որ հանրորեն վրանգավոր հետևանքն առաջացել է հենց հանցավորի արարքից, որով վերջինս նպատակադրվել էր այդպիսին պատճառել, ուստի՝ անկախ պատճառահետևանքային զարգացման կապակցությամբ անձի սխալից՝ կատարվածը պետք է որակվի որպես ավարտված սպանություն:

Մյուս դեպքերում պատճառական կապի զարգացման մեջ սխալը կարող է ազդեցություն ունենալ կատարված արարքի քրեաիրավական գնահատականի վրա: Ասվածը հնարավոր է այն իրավիճակներում, երբ հանցավորի դիտարկության մեջ ընդգրկված հանրորեն վրանգավոր հետևանքն առաջանում է ոչ թե այն արարքներից, որոնցով նա ցանկանում էր պատճառել այդ հետևանքը, այլ նրա մեկ ուրիշ արարքից: Տվյալ դեպքում *կատարվածը որակվում է որպես հանցավորի դիտարկության մեջ ընդգրկված հանցագործության փորձ և անզգույշ հանցագործություն՝ հետևանքն առաջացնելու մասով*, եթե անձն այդ հետևանքի նկատմամբ դրսևորել է անզգույշ մեղքի ձև:

Այսպես, օրինակ՝ Բ-ին սպանելու նպատակով Ա-ն կրակում է նրա վրա: Մտածելով, որ նա մահացել է՝ դիակը թաքցնելու նպատակով այրում է Բ-ի անշարժացած մարմինը: Գործի քննության ընթացքում

պարզվում է, որ Բ-ի մահը վրա է հասել ոչ թե հրազենային վիրավորումից, այլ կյանքի հետ անհամատեղելի այրվածքներ ստանալու արդյունքում: Նկարագրված իրավիճակում Ա-ի արարքը պետք է որակվի որպես սպանության փորձ և անզգուշությամբ մահ պատճառել (<< քր. օր.-ի 34-104-րդ և 109-րդ հոդվածների համակցությամբ):

Արարքը վերոհիշյալ դեպքում հանցագործությունների համակցությամբ որակելը սկզբունքային մոտեցում է ըստ մեղքի պատասխանատվության տեսանկյունից: Հանցավորի կողմից գիտակցաբար և իր կամքով կատարված բոլոր գործողությունները պետք է համապատասխան կարգով գնահատվեն հանցակազմի սուբյեկտիվ կողմի դիրքերից: Ընդ որում՝ առաջին գործողությունը և դրա հետևանքները կարող են ինչպես դիտավորյալ, այնպես էլ անզգուշ լինել: Գործողությունը կարող է ավարտված կամ չավարտված լինել: Հանցավորի երկրորդ գործողությունները, առնվազն, պետք է ընդգրկված լինեն մեղքի անզգուշ ձևով: Հակառակ դեպքում դրանք չեն կարող մեղսագրվել անձին (առկա կլինի պատահար)<sup>47</sup>:

Միևնույն ժամանակ, եթե անձը ցանկանում է իր արարքով որևէ վնաս պատճառել, սակայն պատճառահետևանքային կապի մեջ ընդգրկված երևույթները կանխում են վնասի առաջացումը, կամ այդ վնասն առաջանում է ոչ թե անձի արարքից, այլ ուրիշ պատճառներով, ապա *կատարվածը ենթակա է որակման որպես դիտավորությամբ ընդգրկված հանցագործության փորձ*: Օրինակ՝ հանցավորը տուժողին սպանելու համար թույն է լցնում նրա կերակուրի մեջ, սակայն տուժողը մահանում է ոչ թե թույնից, այլ կերակուրը շնչափողը փակելու հետևանքով:

Հարկ է նշել նաև, որ փաստական սխալից պետք է տարբերել այն դեպքերը, երբ անձի դիտավորության բովանդակության և հանցավոր արդյունքի միջև առկա է լինում անհամապատասխանություն, որը, սակայն, կրում է ձևական բնույթ և ունենում չնչին նշանակություն: Այսպես, օրինակ՝ անձը ցանկանում է սպանել զոհին, նրա գլխին կրակելու եղանակով, սակայն գնդակը դիպչում է վերջինիս

---

<sup>47</sup> Տե՛ս Գրիգորյան Մ.Վ. Հանցագործությունների որակման գիտական հիմունքները: Ոսումնական ձեռնարկ: Երկրորդ լրացված վերահրատարակություն: Եր.: ՀՌՀ հրատ., 2009., էջեր 216-217:

արտին ու գրկում նրան կյանքից: Կամ՝ անձը զոհին սպանելու դիտավորությամբ նրան զցում է վարար գետը՝ մտածելով, որ վերջինս կխեղդվի, սակայն գետն ընկնելիս զոհը գլխով հարվածում է քարին ու մահանում: Նկարագրված իրավիճակներում հանցավորի *արարքը պետք է որակվի որպես ավարտված սպանություն, քանի որ սուբյեկտի դիտավորության և հանցավոր արդյունքի անհամապատասխանությունը զուր ձևական է և չնչին*: Բացի այդ՝ նշված իրավիճակներում հանցավոր արարքի և հետևանքի միջև առկա է հստակ ու միանշանակ պատճառական կապ, և հանցավորից չի պահանջվում պատճառական կապի բովանդակության բոլոր մանրամասների գիտակցումը:

*Պատճառական կապի զարգացման մեջ սխալի տարատեսակ է հարվածի շեղումը կամ, ինչպես մասնագիտական գրականության մեջ երբեմն նշվում է, գործողության խտրորումը (aberratio ictus)<sup>48</sup>*: Այդ սխալն առկա է այն դեպքում, երբ փաստացի վնասը որոշակի հանգամանքների հետևանքով հասցվում է ոչ նրան, ում դեմ ուղղված էր հանցագործությունը: Օրինակ՝ հանցավորը, ցանկանալով սպանել Ա-ին, կրակում է նրա ուղղությամբ, սակայն վերջինս տեղաշարժվում է, և գնդակը դիպում է Բ-ին ու սպանում նրան: Նման դեպքերում կատարվածը պետք է որակվի որպես Ա-ի սպանության փորձ (նման իրադրության պայմաններում՝ հանրավտանգ եղանակով կատարված սպանության փորձ) և անզգուշությամբ մահ պատճառել կամ ավարտված սպանություն՝ կախված երկրորդ հանցավոր հետևանքի նկատմամբ անձի դրսևորած մեղքի ձևից (անզգուշություն կամ անուղղակի դիտավորություն):

***Սխալի տարատեսակ է նաև, այսպես կոչված, կարծեցյալ պաշտպանությունը:***

Կարծեցյալ պաշտպանությունը՝ պաշտպանություն է գոյություն չունեցող հանցավոր ոտնձգությունից: Սրա էությունն այն է, որ անձին սխալմամբ թվում է, թե տեղի է ունենում ոտնձգություն,

---

<sup>48</sup> Հետազոտողներից ոմանք գտնում են, որ հարվածի շեղումը փաստական սխալի տարատեսակ չէ, և այս երկու երևույթները չպետք է շփոթել: Անկախ նրանից, թե հարվածի շեղումը փաստական սխալի տարատեսակ է, թե՛ ոչ, որակման կանոնը դրանից չի փոխվում:

մինչդեռ իրականում այն բացակայում է: Այս դեպքում անձը կարող է սխալվել կատարվող արարքի հանրային վտանգավորության, ոտնձգողի անձի, ոտնձգության ավարտի պահի կապակցությամբ: *Կարծեցյալ պաշտպանության դեպքում որակումն իրականացվում է փաստական սխալի կանոններով*, որոնք հանգում են հետևյալին.

ա) եթե կատարվածի իրադրությունը հիմք է տվել ենթադրելու, որ տեղի է ունենում իրական ոտնձգություն, և պաշտպանության միջոցներ կիրառող անձը չի գիտակցում ու չէր կարող գիտակցել իր ենթադրության սխալականությունը, ապա նրա գործողությունները պետք է դիտել որպես անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարված (օրինակ՝ ոստիկանության աշխատակից Բ.-ն, որը երեկոյան ծառայություն էր իրականացնում, անցնելով բանկերից մեկի մասնաճյուղի կողքով, լսում է կնոջ բարձր ձայնը, որն օգնության է կանչում: Շտապելով այնտեղ՝ Բ.-ն նկատում է, որ մասնաճյուղի մուտքի դուռը բաց է, մթության մեջ մի քանի անգամ բացականչում է «կանգնի՛ր, կկրակե՛մ», և մեկ նախազգուշական կրակոց է արձակում: Որից հետո մի հաղթանդամ տղամարդ է կտրուկ դուրս գալիս նրա առջև: Բ.-ն, մտածելով, որ նա ավազակն է, կրակում է նրա ուղղությամբ և վնասում վերջինիս: Պարզվում է, որ այդ տղամարդը բանկի մասնաճյուղի անվտանգության աշխատակիցն էր, ով իր ծանոթուհուն հրավիրել էր այնտեղ և գինի հյուրասիրել: Իսկ երբ վերջինս ցանկացել էր գնալ, փորձել էր արգելել: Չնայած, նկարագրված իրավիճակում հանցավոր ոտնձգությունը բացակայում էր, սակայն ստեղծված իրադրությունը լիովին հիմք էր տալիս Բ.-ին կարծելու, որ գտնվում է անհրաժեշտ պաշտպանության վիճակում: Այլ խոսքով՝ կարծեցյալ պաշտպանվող Բ.-ն հնարավորություն չի ունեցել ճիշտ գնահատական տալու իրադարձություններին և գործել է առանց մեղքի),

բ) եթե պաշտպանության միջոցներ կիրառող անձը սխալմամբ ենթադրում է ոտնձգության առկայությունը, սակայն տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր գիտակցել, որ իրականում այն բացակայում է, ապա կարծեցյալ պաշտպանության ժամանակ վնաս պատճառելու դեպքում անձի արարքը պետք է որակվի որպես անզգույշ հանցագործություն (օրինակ՝ Ս.-ն ուշ երեկոյան գտնվելով պահակակետում, նկատում է մի մեքենա, որից իջնում է խիստ հար-

բաժ անձ և քայլում իր ուղղությամբ: Ա.-ն, այդ ուշ ժամին անձանթին տեսնելով, մի քանի անգամ բացականչում է, սակայն որևէ արձագանք չի ստանում: Դրանից հետո Ա.-ն մեկ նախազգուշական կրակոց է արձակում, սակայն անձանթը շարունակում է առաջանալ և ձեռքը պահել բաճկոնի աջ գրպանում: Նկատելով դա՝ Ա.-ն կրակում է և սպանում նրան: Հետագայում պարզվում է, որ այդ հարբած տղամարդը մոտենում էր պահակակետին՝ ջուր խնդրելու: Քանի որ ստեղծված իրադրությունն այնպիսին էր, որ Ա.-ն պարտավոր էր և կարող էր գիտակցել, որ իրական վտանգը բացակայում է, քանզի այդ անձանթ տղամարդու վարքագիծը՝ որևէ կտրուկ, հարձակողական կամ սպառնալից գործողության բացակայությունը, չէին կարող օբյեկտիվորեն հիմք տալ Ա.-ին կարծելու, որ առկա է ոտնձգություն, ուստի՝ Ա.-ի արարքը պետք է որակվի որպես անզգույշ հանցագործություն (<< քր. օր.-ի հոդված 109-րդ)),

զ) եթե անձը գործում է կարծեցյալ պաշտպանության վիճակում, և կատարվածի իրադրությունում չի գիտակցում ու չէր կարող գիտակցել իր ենթադրության սխալականությունը, սակայն կիրառած պաշտպանության միջոցներն ակնհայտորեն չեն համապատասխանում իրեն թվացող ոտնձգության բնույթին և վտանգավորության աստիճանին, ապա քրեաիրավական պաշտպանության օբյեկտին վնաս պատճառելու դեպքում նրա արարքը պետք է որակվի որպես անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում:

Հարկ է նշել նաև, որ անձի արարքում մեղավորության բացակայությունը որոշվում է ենթադրյալ ոտնձգությունը գնահատելու օբյեկտիվ և սուբյեկտիվ հնարավորության բացակայությամբ: Սակայն, եթե անձն այդ վտանգը չեզոքացնելուն ուղղված գործողություններում դիմում է այնպիսի միջոցների, որոնք ակնհայտորեն չեն համապատասխանում ենթադրվող ոտնձգության բնույթին և վտանգավորության աստիճանին, ապա նա դուրս է գալիս իրավաչափության սահմաններից, քանի որ այդպիսի վարքագիծը գնահատվում է որպես պաշտպանության սահմանների հանցավոր անցում: Ընդ որում, նման խնդիր առաջանում է նաև հանցանք կատարած անձին բռնելիս և ծայրահեղ անհրաժեշտության ժամանակ:



### ԳԼՈՒԽ 3.

## ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻՈՒԹՅԱՆ ՈՐԱԿՈՒՄԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ ԵԶԱԿԻ ԲԱՐԴ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

### 3.1. Հանցագործությունների բազմակիության որոշումը

Իրավակիրառ պրակտիկայում հազվադեպ չեն դեպքերը, երբ անձն իրականացնում է մեկից ավելի հանցագործություններ: Նման իրավիճակներն ընդունված է անվանել հանցագործությունների բազմակիություն: Տեսության մեջ և դատական պրակտիկայում հանցագործությունների բազմակիությունը բնութագրվում է որպես *անձի կողմից երկու կամ ավելի հանցագործությունների կատարում, որոնցից առնվազն երկուսի կապակցությամբ բացակայում են քրեաիրավական նշանակության հետևանքները բացառող հանգամանքները*:

Քրեական իրավունքի արդի գիտության մեջ հանցագործությունների բազմակիության ինստիտուտին բավականին լուրջ ուշադրություն է դարձվում, քանզի դրա շրջանակներում առաջ են գալիս իրավական բնույթի բարդ և տարաբնույթ հիմնախնդիրներ, որոնց մեջ առաջնահերթ նշանակությամբ առանձնանում են հանցավոր արարքների քրեաիրավական գնահատականի հարցերը:

Քննարկվող ինստիտուտի վերլուծությունը և համակարգային մեկնաբանությունը թույլ են տալիս վեր հանել հանցագործությունների բազմակիության բնութագրիչ հատկանիշները, որոնք հանգում են հետևյալին.

#### 1. Միևնույն սուբյեկտի կողմից երկու կամ ավելի ինքնուրույն հանցակազմ պարունակող արարքի կամ արարքների կատարում:

Բազմակիություն կարող են ձևավորել ինչպես առանձին պարզ, այնպես էլ առանձին բարդ, ինչպես ավարտված, այնպես էլ չավարտված, հանցավորի կողմից ինչպես միայնակ, այնպես էլ խմբի կազմում կատարված հանցագործությունները, ինչպես նաև այնպիսի հանցավոր արարքները, որոնցից մեկում անձը հանդես է գալիս որպես կատարող, իսկ մյուսում՝ կազմակերպիչ, դրդիչ կամ օժան-

դակող: Հանցագործությունների բազմակիությունը բացակայում է այն իրավիճակներում, երբ անձի կատարած նույնաբնույթ կամ նույնասեռ հակաիրավական արարքներն ամբողջության մեջ են միայն հանդիսանում հանցագործություն (եզակի բարդ հանցագործություն), իսկ առանձին վերցրած իրենցից ներկայացնում են այլ իրավախախտում (օրինակ՝ վարչական զանցանք):

**2. Կատարված հանցանքներից առնվազն երկուսը չպետք է կորցրած լինեն իրենց քրեաիրավական նշանակության հետևանքները:**

Այն դեպքերում, երբ անձի արարքին քրեաիրավական գնահատական տալիս, նրան քրեական պատասխանատվության ենթարկելիս պարզվում է, որ կատարված երկու հանցագործություններից մեկն ապաքրեականացվել է, կամ դրանցից մեկի համար նա օրենքով սահմանված կարգով ազատվել է քրեական պատասխանատվությունից, հանվել կամ մարվել է դատվածությունը, խոսք չի կարող գնալ հանցագործությունների բազմակիության մասին:

Հանցագործությունների բազմակիության մասին խոսք գնալ չի կարող նաև, երբ կատարված երկու հանցագործություններից մեկի կապակցությամբ առկա է քրեական վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված հիմքը (օրինակ՝ մասնավոր մեղադրանքով տուժողի բողոքի բացակայությունը):

Քրեագետների մի մասի կարծիքով, հանցագործությունների բազմակիության հատկանիշ է նաև **կատարված հանցանքներից առնվազն երկուսի իրավաբանական ձևակերպումը և ամրագրումը քրեադատավարական փաստաթղթերում** (անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, մեղադրական եզրակացություն, դատավճիռ և այլն)<sup>49</sup>: Խոսքը վերաբերում է հանցագործությունների պաշտոնական որակմանը:

Մեր կարծիքով, սակայն, նշված հանգամանքը կրում է զուտ դատավարական բնույթ: Մասնավորապես, համապատասխան որակ-

---

<sup>49</sup> Տե՛ս, օրինակ՝ Дуюнов В.К., Хлебушкин А.Г. Квалификация преступлений: законодательство, теория, судебная практика. Монография. М.: РИОР, 2019, էջ 115:

ման սխալը, որը կզրկի իրավակիրառողին հիշատակված դատավարական փաստաթղթերում հանցագործությունների բազմակիության իրավական ամրագրման հնարավորությունից, չի կարող հիմք տալ ասելու, որ օբյեկտիվ իրականության մեջ անձի հանցավոր արարքները չեն ձևավորել բազմակիություն:

Այսպիսով՝ վերը ներկայացված բնութագրիչներն այն պարտադիր իրավաբանական նշանակություն ունեցող հատկանիշներն են, որոնց համաժամանակյա առկայության դեպքում միայն կարող է խոսք գնալ հանցագործությունների բազմակիության մասին: Ուստի, դրանցից մեկի բացակայությունը կարող է վկայել, որ հանցավորի կողմից կատարվածը եզակի հանցագործություն է:

Ինչպես ժամանակակից քրեական իրավունքի գիտությունը, այնպես էլ ՀՀ քրեական գործող օրենսգիրքն առանձնացնում են հանցագործությունների բազմակիության հետևյալ տեսակները՝

*ա) հանցագործությունների ռեցիդիվ,*

*բ) հանցագործությունների համակցություն:*

Հանցագործությունների որակման, հարակից հանցակազմերը միմյանցից սահմանազատելու տեսանկյունից հանցագործությունների ռեցիդիվը որևէ նշանակություն չունի: Այլ կերպ ասած՝ ռեցիդիվի իրավական նշանակությունը հանցագործությունների որակման գործընթացում պասիվ է: Ուստի, այս աշխատության շրջանակներում հանցագործությունների ռեցիդիվի ինստիտուտի՝ որպես հանցագործությունների բազմակիության ինքնուրույն տեսակի էությանը և քրեաիրավական բովանդակությանն անդրադարձ չի կատարվի:

### **3.2. Հանցագործությունների համակցության որակումը**

ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի համաձայն, հանցագործությունների համակցություն է համարվում՝

*1) քրեական օրենսգրքով (փարբեր հոդվածներով կամ միևնույն հոդվածով կամ հոդվածի միևնույն կամ փարբեր մասերով կամ կետերով) նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, որոնցից ոչ մեկի համար անձը դատապարտված չի եղել.*

2) *այնպիսի մեկ գործողությունը (անգործությունը), որը պարունակում է քրեական օրենսգրքի երկու կամ ավելի հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ:*

Հանցագործությունների համակցության համար, բացի հանցագործությունների բազմակիությանը բնորոշ ընդհանուր հատկանիշներից, բնութագրական է նաև այն, որ **կատարված հանցագործություններից ոչ մեկի համար անձը չպետք է ենթարկված լինի քրեական պատասխանատվության:** Այլ խոսքով՝ հանցագործություններից ոչ մեկի կապակցությամբ չպետք է առկա լինի օրինական ուժի մեջ մտած դատավճիռ: Հակառակ դեպքում՝ կա՛մ կբացակայի հանցագործությունների համակցությունը, կա՛մ կգործեն դատավճիռների (կամ հանցանքների) համակցության դեպքում անձի նկատմամբ պատիժ նշանակելու կանոնները:

Այսպիսով, քրեական օրենքը տարբերակում է հանցագործությունների համակցության երկու տեսակ, որոնք քրեական իրավունքի տեսության մեջ և դատական պրակտիկայում ընդունված է անվանել *իրական* (<< քր. օր.-ի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ) և *իդեալական* (քր. օր.-ի 20-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ):

**Հանցագործությունների իրական համակցությունն** այն իրավիճակն է, երբ երկու կամ ավելի հանցագործություններ (նույնաբնույթ, տարաբնույթ, ավարտված, չավարտված, միայնակ կամ խմբի կազմում, որպես կատարող կամ այլ հանցակից) կատարվում են առանձին ինքնուրույն գործողություններով կամ անգործություններով, որոնցից առնվազն երկուսի համար պահպանվել են քրեաիրավական բնույթի հետևանքները: Համակցության տվյալ տեսակի համար, ի տարբերություն իդեալականի, բնութագրական է այն հանգամանքը, որ *երկու կամ ավելի հանցագործությունները կատարվում են երկու կամ ավելի ինքնուրույն արարքներով* (գործողությամբ կամ անգործությամբ):

Իրական համակցություն կարող են ձևավորել քրեական օրենսգրքի ինչպես միևնույն, այնպես էլ տարբեր հոդվածներով նախատեսված թե՛ միաբնույթ, թե՛ տարաբնույթ հանցագործությունները: Օրինակ՝ անձը կատարում է բռնաբարություն, հետո, խախտելով ճանապարհային երթևեկության կանոնները, վրատրթի է ենթարկում հետիոտնին՝ վերջինիս առողջությանը պատճառելով ծանր

վնաս (տարասեռ հանցագործություններ): Կամ՝ անձը կատարում է կողոպուտ և մի քանի օր հետո՝ ավազակային հարձակում (միասեռ հանցագործություններ): Կամ՝ անձը կատարում է սպանություն և օժանդակում է մեկ այլ սպանության կատարմանը, կամ պահեստարանից կատարում է գողություն, այնուհետև նախապատրաստում է այլ գողության կատարում (նույնաբնույթ հանցագործություններ) և այլն:

Իրական համակցության պարագայում հանցագործությունների որակման ընդհանուր կանոնի համաձայն՝ *կատարված հանցագործություններից յուրաքանչյուրը պետք է արժանանա ինքնուրույն քրեաիրավական գնահատականի և որակվի քրեական օրենսգրքի այն հոդվածներով (հոդվածի մասերով կամ կետերով), որոնց հատկանիշներին համապատասխանում է կատարված արարքներից յուրաքանչյուրը: Հանցագործությունների համակցություն կազմող չավարտված հանցագործությունների կամ հանցակցությամբ կատարված հանցագործությունների դեպքերում արարքը որակելիս անհրաժեշտ է ցույց տալ հանցագործությունն ավարտված չլինելու կամ հանցագործությանը որպես հանցակից մասնակցած լինելու հանգամանքները* (հղում կատարել ՀՀ քր. օր.-ի 34-րդ, 35-րդ կամ 38-րդ հոդվածներին և այլն):

**Հանցագործությունների իդեալական համակցությունը** բնութագրվում է անձի կողմից այնպիսի մեկ արարքի (գործողության կամ անգործության) կատարմամբ, որը պարունակում է քրեական օրենսգրքի երկու կամ ավելի հոդվածներով նախատեսված հանցակազմերի հատկանիշներ, և որոնցից առնվազն երկուսի համար պահպանվել են քրեաիրավական նշանակություն ունեցող հետևանքները: Օրինակ՝ անձը կրակ է բացում մարդկանց խմբի մեջ, որի արդյունքում մեկը սպանվում է, իսկ մյուսի առողջությանը պատճառվում է ծանր վնաս, կամ հրկիզում է տունը՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու և այնտեղ գտնվող անձին սպանելու նպատակով:

ՀՀ Վճռաբեկ դատարանը հանցագործությունների համակցությունը կանոնակարգող քրեաիրավական նորմը վերլուծության է ենթարկել Ա.Արծրունու գործով որոշման մեջ՝ իրավական դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ.

«(...) հանցագործությունների համակցությունը բնութագրվում է՝  
1) քանակական հատկանիշով (երկու կամ ավելի հանցանք կատարելը),

2) որակական հատկանիշներով, որոնք են՝

ա) տարաբնույթ, նույնական կամ համանման հանցանք կատարելը,

բ) համակցություն կազմող հանցանքների համար դատված չլինելը,

գ) համակցություն կազմող առնվազն երկու հանցանքների կատարումից հետո դրանց քրեաիրավական նշանակություն ունեցող հետևանքների, օրինակ՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների պահպանումը, (...)»<sup>50</sup>:

Վերահաստատելով և զարգացնելով այդ գործով որոշմամբ արտահայտած և վերը մեջբերված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը Գ.Ոսկանյանի վերաբերյալ թիվ ԵԷԴ/0119/01/13 գործով արձանագրել է, որ «(...) հանցագործությունների համակցությունը բազմակիության տեսակներից մեկն է (հանցագործությունների ռեցիդիվի հետ միասին), հետևաբար բնութագրվում է բազմակիությանը բնորոշ ընդհանուր հատկանիշներով: Այսպես, համակցության պարտադիր հատկանիշը միևնույն անձի կողմից երկու կամ ավելի ինքնուրույն հանցակազմ պարունակող արարքի կամ արարքների կատարումն է (նախատեսված ՀՀ քր. օր.-ի միևնույն կամ տարբեր հոդվածներով), որոնց նկատմամբ պահպանված են քրեաիրավական նշանակություն ունեցող հետևանքները:

ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ էության, առանձնացվում են համակցության երկու ինքնուրույն տեսակ՝

1) առանձին արարքներով կատարված, ՀՀ քրեական օրենսգրքի միևնույն կամ տարբեր հոդվածներով նախատեսված երկու և ավելի հանցագործություններ (իրական համակցություն),

2) մեկ արարքով կատարված, ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված երկու և ավելի հանցագործություններ (իդեալական համակցություն):

<sup>50</sup> Տե՛ս Արսեն Արայի Արժրունու գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԷԴ/0126/13/11 որոշման 22-րդ կետը:

Համակցության վերոնշյալ տեսակները փարբերվում են հանցավոր արարքների քանակով:

Այսպես, իրական համակցության դեպքում մեկից ավելի արարքներով կատարվում են երկու կամ ավելի հանցագործություններ, որոնցից յուրաքանչյուրին տրվում է ինքնուրույն քրեաիրավական գնահատական: ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ իրական համակցություն կազմող երկու կամ ավելի հանցանքները կարող են նախատեսված լինել ՀՀ քրեական օրենսգրքի՝

ա) փարբեր հոդվածներով,

բ) միևնույն հոդվածով,

գ) հոդվածի միևնույն կամ փարբեր մասերով կամ կետերով:

Մինչդեռ իդեալական համակցության դեպքում կատարվում է մեկ արարք, որն իր մեջ պարունակում է երկու կամ ավելի փարբեր հոդվածներով նախատեսված հանցագործության հատկանիշներ: Ընդ որում, հանցավոր արարքի անմիջական օբյեկտները չպետք է հարաբերվեն ինչպես ամբողջը և մասը, այլ պետք է լինեն փարբեր, ինքնուրույն իրավական հարաբերություններ:

Այսպիսով, եթե իրական համակցություն կարող են կազմել ինչպես միևնույն, այնպես էլ փարբեր հոդվածներով նախատեսված հանցանքները, ապա իդեալական համակցություն կարող են կազմել միայն փարբեր հոդվածներով նախատեսված հանցագործությունները: Այլ խոսքով՝ իդեալական համակցությունն առկա է, երբ քրեական օրենսգրքի փարբեր հոդվածներով նախատեսված հանցագործությունները կատարվում են մեկ արարքով»:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «(...) իրական համակցությունն առկա է, եթե՝

ա) կատարվել են միմյանց հետ միասնական դիտավորությամբ չկապված մեկից ավելի հանցավոր արարքներ,

բ) հանցավոր արարքները նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի միևնույն կամ փարբեր հոդվածներով,

գ) կատարված հանցագործությունների նկատմամբ պահպանված են քրեաիրավական նշանակություն ունեցող հետևանքները:

*Իդեալական համակցությունն առկա է, եթե՝*

*ա) կատարվել է մեկ հանցավոր արարք,*

*բ) արարքը պարունակում է երկու կամ ավելի տարբեր հողվածներով նախատեսված, ինքնուրույն հանցակազմեր պարունակող հանցագործությունների հատկանիշներ,*

*գ) կատարված հանցագործությունների նկատմամբ պահպանված են քրեաիրավական նշանակություն ունեցող հետևանքները»:*

Այսպիսով՝ իրական և իդեալական համակցությունների տարբերակման հիմքում հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ արարքի քանակական բաղադրիչն է. իրական համակցության դեպքում կատարվում են ինքնուրույն հանցակազմ պարունակող երկու կամ ավելի արարքներ, մինչդեռ իդեալականի պարագայում՝ մեկ արարք, որը պարունակում է քրեական օրենսգրքով նախատեսված երկու կամ ավելի հանցակազմերի հատկանիշներ: Ինչպես նաև այն, որ իրական համակցություն կազմող երկու կամ ավելի հանցանքները կարող են նախատեսված լինել << քրեական օրենսգրքի ինչպես տարբեր, այնպես էլ միևնույն հողվածներով, մինչդեռ իդեալական համակցության դեպքում կատարվում է մեկ արարք, որն իր մեջ պարունակում է երկու կամ ավելի տարբեր հողվածներով նախատեսված հանցագործության հատկանիշներ:

<< քրեական գործող օրենսդրության վերլուծությունը վկայում է, որ իդեալական համակցություն, որպես կանոն, ձևավորում են տարասեռ հանցագործությունները, որոնք ոտնձգում են քրեաիրավական պաշտպանության միանգամայն տարբեր օբյեկտների դեմ: Այդ օբյեկտները չեն հարաբերակցվում որպես ընդհանուրը և հատուկը կամ ամբողջն ու մասը, հակառակ դեպքում՝ կատարվածը որակվում է որպես եզակի հանցագործություն:

<Արց է ծագում՝ հնարավոր է արդյոք, որ նույնաբնույթ հանցագործությունները, որոնք նախատեսված են քրեական օրենսգրքի միևնույն հողվածով, կազմեն իդեալական համակցություն: Այս կապակցությամբ տեսական գրականության մեջ առկա մոտեցումները հակադրական են: Տվյալ հանգամանքը գլխավորապես պայմանավորված է օրենսդրական այն սահմանմամբ, որ իդեալական համակցություն են կազմում քրեական օրենսգրքի *երկու կամ ավելի հողվածներով* նախատեսված հանցագործությունները (<< քր. օր.-



ի 20-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ): Բանն այն է, որ տվյալ իրավակարգավորումը առանձին ուսումնասիրողների կողմից արժանանում է սահմանափակ մեկնաբանության, և չի ընդգրկում այն դեպքերը, երբ քրեական օրենսգրքի նույն հոդվածով նախատեսված են տարբեր հանցագործություններ<sup>51</sup>:

Տվյալ մոտեցմանը, սակայն, դժվար է համաձայնել: Իդեալական համակցություն կարող են կազմել ինչպես տարբեր հոդվածներով նախատեսված հանցանքները, այնպես էլ միևնույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված տարբեր հանցագործությունները (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 235-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը և այլն): Հետևաբար, կարելի է ասել, որ իդեալական համակցության դեպքում անպայման չէ, որ անձի՝ մեկ արարքով կատարված երկու կամ ավելի հանցագործությունները տարբերվեն քրեաիրավական պաշտպանության օբյեկտներով:

Այս առումով հարկ է արձանագրել այն ելակետը, որ տվյալ հանցագործություններից յուրաքանչյուրը պետք է կրի ինքնուրույն հանցավոր գործողության բնույթ, և դրանց միջև պետք է բացակայի մրցակցությունը: Այսինքն՝ այդ հանցագործությունները չպետք է հարաբերվեն ինչպես ամբողջը և մասը, կամ ընդհանուրն ու հատուկը և այլն: Ասպես՝ եթե անձը միաժամանակ ապօրինի իր վրա է կրում ակոսափող հրազեն և սառը զենք, ապա վերջինիս արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի 235-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 4-րդ մասով: Մեկ այլ օրինակում՝ եթե անձը միաժամանակ օգնություն ցույց չի տալիս լճում խեղդվող այն երեխային, որին պարտավոր էր խնամել, ինչպես նաև այդ երեխայի հետ խեղդվող մյուս երեխային, որին խնամելու պարտականություն նա չունի, ապա նրա արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի 128-րդ հոդվածի առաջին մասով և նույն հոդվածի երկրորդ մասով:

Եթե անձի կատարած արարքը միաժամանակ պարունակում է միևնույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված հանցագործությունների հանցակազմերի հատկանիշներ, որոնք իրենցից ինքնուրույն հանցագործություններ չեն ներկայացնում, այլ միևնույն հան-

---

<sup>51</sup> Ст'ю Корнеева А.В. Теоретические основы квалификации преступлений. Учебное пособие // <https://law.wikireading.ru/7004>:

ցակազմի հասարակ և ծանրացնող հանգամանքներով տեսակներն են, ապա իդեալական համակցությունը բացակայում է, իսկ հանցավորի արարքը պետք է որակվի քրեաիրավական նորմերի մրցակցության կանոններով<sup>52</sup>:

Հարկ է նկատել նաև, որ նեգատիվ հատկանիշներով հանցակազմերում, որոնցում ուղղակիորեն մատնանշված հանցակազմի առկայությունը բացառում է անձի արարքը քննարկվող հոդվածով որակելու հնարավորությունը, օրենսդրորեն իդեալական համակցության ձևավորման արգելք է սահմանված: Այսպես՝ ՀՀ քր. օր.-ի 184-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «1. Խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով սեփականատիրոջը կամ գույքի այլ տիրապետողին խոշոր չափերի վնաս պատճառելը, *եթե բացակայում են հափշտակության հատկանիշները (...)*»: Տվյալ հանցակազմի կիրառման համար, փաստորեն, անհրաժեշտ նախապայման է անձի արարքում հափշտակության հատկանիշների միաժամանակյա բացակայությունը: Հետևաբար՝ ՀՀ քր. օր.-ի 184-րդ և հափշտակության հանցակազմ պարունակող քր. օր.-ի համապատասխան հոդվածները (176-րդ, 177-րդ կամ 178-րդ և այլն) չեն կարող ձևավորել իդեալական համակցություն: Դրանք կարող են կազմել միայն իրական համակցություն:

Քրեական իրավունքի գիտության մեջ և դատական պրակտիկայում տարածված է այն մոտեցումը, որ *հանցագործությունների համակցությունը բացակայում է այն արարքների կատարման դեպքում, որոնք իրականացվում են նախկինում կատարված հանցագործության առարկայի կապակցությամբ*: Մասնավորապես, տվյալ մոտեցումը կիրառվում է այն իրավիճակներում, երբ անձը ոչնչացնում է իր կողմից նախկինում հափշտակված առարկան: Չնայած նրան, որ տվյալ դեպքում անձի արարքը համապատասխանում է ՀՀ քր. օր.-ի 185-րդ հոդվածով նախատեսված՝ ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմի հատկանիշներին:

---

<sup>52</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս սույն աշխատության՝ «Հանցագործությունների որակումը քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում» պարագրաֆում:

րին, միևնույնն է, կատարվածը որակվում է միայն որպես հափշտակություն<sup>53</sup>:

Հարկ ենք համարում նշել, որ դատախազաքննչական պրակտիկան ներկայումս ընթանում է այն ուղով, որ, երբ անձը հափշտակություն կատարելիս դիտարկությանը ոչնչացնում կամ վնասում է տուժողի զգալի չափերի գույքը, որը չի հանդիսանում հափշտակության առարկա (պատ, դուռ, փական, կահույք և այլն), ապա վերջինիս արարքը որակվում է հանցագործությունների համակցությամբ՝ որպես հափշտակություն և գույքը դիտարկությանը ոչնչացնել կամ վնասել:

Միևնույն ժամանակ, սակայն, նախկինում հափշտակված գույքի ոչնչացումը միայն որպես հափշտակություն որակելը որոշակի տեսանկյունից խնդրահարույց է թվում: Այսպես.

1. Հափշտակված գույքը դիտարկությանը ոչնչացնելու (վնասելու) հանգամանքն ակնհայտորեն դուրս է հափշտակության հանցակազմի սահմաններից: Ոչնչացնելու (վնասելու) պահին այդ գույքի հափշտակությունն ավարտված է ինչպես իրավաբանորեն, այնպես էլ փաստորեն, քանզի անձը հնարավորություն է ստանում ոչ միայն տիրապետելու և օգտագործելու այդ գույքը, այլև իրացնում է իր այդ հնարավորությունը: Տվյալ դեպքում անձի հետհանցավոր վարքագիծը, որն իրականացվում է հանցագործության ավարտից հետո, չի կարող գնահատվել որպես դրա բաղկացուցիչ<sup>54</sup>: Հետևաբար՝ հափշտակված գույքի նկատմամբ հանցավոր գործողությունները պետք է արժանանան ինքնուրույն քրեաիրավական գնահատականի:

2. Հափշտակությունը չի դադարեցնում անձի՝ այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, ինչը պահանջում է հանցավորից ձեռնպահ մնալ այնպիսի հետագա գործողություններից, որոնք կխոչընդոտեն սեփականատիրոջը իրացնելու այդ գույքի նկատ-

<sup>53</sup> Տե՛ս Безверхов А.Г. Имущественные преступления. Самара: Изд-во Самарского Ун-та, 2002, էջ 239, ինչպես նաև՝ Бойцов А.И. Преступления против собственности. СПб.: «Юрид центр Пресс», 2002, էջ 108:

<sup>54</sup> Տե՛ս Козлов А.П. Единичные преступления: понятие и классификация, квалификация. Красноярск, 2007, էջ 210:

մամբ իր իրավունքները<sup>55</sup>: Դեռ ավելին, հանցավոր արարքներն առաջացնում են պարտականություն ձեռնարկելու ակտիվ գործողություններ՝ վերականգնելու սեփականատիրոջ խախտված իրավունքները: Ասվածից հետևում է, որ հափշտակված գույքի ոչնչացումը (վնասումը) պետք է դիտել որպես սեփականության իրավունքի կրկնակի խախտում, որն իր հանրային վտանգավորությամբ հավասարազոր է հափշտակությանը, ինչը պահանջում է առանձին քրեաիրավական կարգավորում:

3. Քննադատվող մոտեցումն ընդունելի չէ նաև հափշտակված գույքի «հանցավոր» տնօրինման այլ ձևերի պարագայում: Մասնավորապես, այն կիրառելի չէ *հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու (փողերի լվացման)* հետ կապված հանցագործությունները որակելիս, երբ սկզբնական (պրեդիկատ) հանցագործության սուբյեկտը այնպիսի գործողություններ է կատարում այդ հանցագործության առարկայի նկատմամբ, որոնք նկարագրված են ՀՀ քր. օր.-ի 190-րդ հոդվածում: Օրինակ՝ եթե հանցավորն իր կողմից հափշտակված գույքի հանցավոր ծագումը քողարկելու նպատակով այն փոխարկում (կոնվերտացնում) կամ փոխանցում է այլ անձի, նրա արարքը ենթակա է որակման ինչպես հափշտակության կոնկրետ տեսակի համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմով, այնպես էլ՝ որպես փողերի լվացում:

Փոքր-ինչ շեղվելով բուն հիմնախնդրից՝ ցանկանում ենք արձանագրել, որ սկզբնական (պրեդիկատ) հանցագործության կատարողը նույնպես, ինչպես արդեն նշվել է, հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու (փողերի լվացման) սուբյեկտ է: Ընդ որում, սկզբնական հանցագործությանը նրա մասնակցության բնույթը կարող է տարբեր լինել (կատարող, համակատարող, կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող), ինչն արարքը ՀՀ քր. օր.-ի 190-րդ հոդվածով որակելու տեսանկյունից որևէ իրավական նշանակություն չունի:

---

<sup>55</sup> Տե՛ս Лопашенко Н.А. Преступления в сфере экономики: вторский комментарий к уголовному закону. – М.: Волтерс Клувер, 2007, էջ 255:

Ուշագրավ է, որ ՀՀ քր. օր.-ի 190-րդ հոդվածով նկարագրված արարքները կատարելու նախապես տրված խոստումը ձևավորում է հանցագործության օժանդակություն: Արդյունքում ստացվում է այնպես, որ սկզբնական (պրեդիկատ) հանցագործության կատարողին տրված խոստման իրականացումն ինքնին պարունակում է ՀՀ քր. օր.-ի 190-րդ հոդվածով նկարագրված հանցագործության հատկանիշներ և պահանջում ինքնուրույն որակում: Օրինակ՝ Ա.-ն, իմանալով, որ խոշոր կազմակերպության պահեստապետ Բ.-ն պատրաստվում է յուրացնել և վատնել իրեն վստահված կազմակերպության գույքի մի մասը, սակայն կամուկացի մեջ է, հանդիպում է նրան և առաջարկում իր օգնությունը, այն է՝ հափշտակված գույքը վերջինս փոխանցելու էր իրեն, իսկ ինքն իր ծանոթ անձանց շրջանակում ապրանքափոխանակման միջոցով թաքցնելու էր այդ գույքի հանցավոր ծագումը և այնպես էր անելու, որպեսզի Բ.-ի կատարածը երբևէ չբացահայտվի: Նկարագրվածը կատարվելու դեպքում Ա.-ի արարքը կպարունակի ինչպես յուրացման/վատման օժանդակության, այնպես էլ հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու (փողերի լվացման) անմիջական կատարման հանցակազմերի հատկանիշներ, որպիսի պայմաններում կատարվածը պետք է որակվի քննարկվող հանցագործությունների համակցությամբ (ՀՀ քր. օր.-ի 38-179-րդ և 190-րդ հոդվածներ):

Հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու (փողերի լվացման) քրեաիրավական բնութագրի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ տվյալ հանցագործությունը ոչ այլ ինչ է, քան առնչակցության ինքնուրույն դրսևորում (բացառությամբ այն դեպքերի, երբ հանցանքը կատարվում է պրեդիկատ հանցագործության սուբյեկտի կողմից): Մինչդեռ, ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված առնչակցության այլ ձևերի (նախապես չխոստացված պարտականան՝ քր. օր.-ի 334-րդ հոդված, հանցավոր ճանապարհով ստացված գույքի նախապես չխոստացված ձեռք բերման կամ իրացման՝ քր. օր.-ի 216-րդ հոդված, և այլն), փողերի լվացումը սկզբնական (պրեդիկատ) հանցագործության հետ ձևավորում է *հանցանքների համակցություն*:

Մեր այս դիրքորոշումը պայմանավորված է նաև այն իրողությամբ, որ ՀՀ քր. օր.-ի 190-րդ հոդվածով նկարագրված հանցա-

կազմը չի պարունակում որևէ նեգատիվ (բացասական) հատկանիշ, որն իր հղումով կբացառեր սկզբնական (պրեդիկատ) հանցագործության առկայությունը՝ այդպիսի ստեղծելով օրենսդրական արգելք համակցելու տվյալ հանցանքները (տվյալ հանցագործության հանցակազմում բացակայում է «Եթե դա նախապես խոստացված չի եղել» ձևակերպումը): Բացի այդ՝ պետք է արձանագրել, որ նեգատիվ հատկանիշներով վկայակոչող դիսպոզիցիաների որակման գործընթացում վկայակոչվող նորմի բացառումը վերաբերում է իդեալական համակցությունների դեպքերին: Մինչդեռ, օրինակ, իրական համակցության դեպքերում կատարվածը կարող է որակվել ինչպես այդ նորմով, այնպես էլ այդ նորմի դիսպոզիցիայում նկարագրված բացառվող նորմով:

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ պարտական, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաների ձեռք բերման կամ իրացման նախապես տրված խոստումը ոչ թե ֆիզիկական, այլ ինտելեկտուալ օժանդակություն է: Այլ կերպ՝ արարքն օժանդակություն որակելու համար այս դեպքերում չի պահանջվում խոստման ռեալ (իրական) կատարում: Այդ գործողությունների կատարման նախապես տրված խոստումն ինքնին, անկախ հանցավորի ունեցած նպատակից, որպես առանձին հանցավոր արարք, պատճառական կապի մեջ է գտնվում հիմնական հանցավոր արդյունքի հետ և ձևավորում հիմնական հանցագործության օժանդակություն: Իսկ այնուհետև դրան հաջորդող արարքները, որոնք նկարագրված են ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով, կախված հանցավորի մոտ առկա հատուկ նպատակի առկայությունից (այդ գույքի հանցավոր ծագումը թաքցնելու կամ խեղաթյուրելու, կամ որևէ անձի՝ իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից խուսափելուն օժանդակելու), *պետք է արժանանան ինքնուրույն քրեաիրավական գնահատականի*, այսինքն՝ որակվեն հանցագործությունների իրական համակցության կանոններով:

Համանման կերպով ինքնուրույն քրեաիրավական գնահատականի է արժանի հափշտակված հրազենի ապօրինի շրջանառությունը: Այսպես, հաշվի առնելով, որ հրազենի ապօրինի շրջանառությունը (ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը) հանդես է գալիս որպես ինքնուրույն հանցագործություն և դուրս է

գտնվում հրազենի հափշտակության ինքնուրույն հանցակազմի շրջանակներից՝ կատարվածը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ: Այսպես, օրինակ՝ եթե անձը հափշտակում է հրազեն, որից հետո փոխադրում, պահում կամ կրում է այն, ապա վերջինիս արարքը պետք է որակվի ինչպես հրազենի հափշտակություն (ՀՀ քր. օր.-ի հոդված 238), այնպես էլ հրազեն ապօրինի փոխադրել, պահել կամ կրել (ՀՀ քր. օր.-ի հոդված 235): Այստեղ, կարծես, գործ ունենք, այսպես կոչված, *հանցանքների անխուսափելի համակցության հետք*, քանզի դժվար է պատկերացնել իրավիճակ, երբ հրազենի հափշտակությունն առնվազն չի պարունակի այդ հրազենը կրելու, պահելու կամ փոխադրելու հանցակազմի հատկանիշները:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ ուրիշի գույքի հափշտակությունը և դրա հետագա ոչնչացումը (վնասումը) պետք է որակվեն հանցագործությունների համակցությամբ, ինչը թույլ կտա լիարժեքորեն ապահովելու սեփականության իրավունքի քրեաիրավական պաշտպանությունը և ձևավորելու հափշտակված գույքի «հանցավոր տնօրինման» քրեաիրավական գնահատականի միասնականությունը:

Մինևույն ժամանակ, սակայն, կարծում ենք, որ որակման այս կանոնը չպետք է գործի հափշտակված այն գույքի ոչնչացման (վնասման) դեպքում, որը *նպատակային օգտագործման* մեկ ակտի հետևանքով ոչնչանում է կամ կրում էական փոփոխություններ՝ կորցնելով իր սկզբնական հատկությունները (օրինակ՝ խմիչքի, սննդամթերքի, վառելիքի և այլն): Խոսքը, այսպես կոչված, սպառելի իրերի մասին է, որոնց նպատակային օգտագործումը հանգեցնում է դրանց ոչնչացման (վնասման): Այսպես, օրինակ՝ խանութից հափշտակված խմիչքի նպատակային օգտագործումը, որի արդյունքում ոչնչանում է դրա պարունակությունը, չի կարող լրացուցիչ որակվել նաև որպես գույքի հանցավոր ոչնչացում: Այլ խոսքով, նման դեպքերում արարքը պետք է որակվի միայն որպես հափշտակություն:

Հանցագործությունների որակման տեսության մեջ երբեմն նշվում է, որ *երկու հանցավոր արարքներ կատարելու դեպքում, երբ մեկը հանդես է գալիս որպես մյուսի կատարման նպատակ, հանցա-*

գործությունների համակցությունը բացակայում է: Այս մոտեցումը, որպես կանոն, կիրառվում է այն դեպքերում, երբ միևնույն անձը այլ հանցանք կատարելու նպատակով կեղծում է իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող պաշտոնական փաստաթուղթ և հետագայում օգտագործում է այն:

Գնահատելով այս մոտեցման տեսական հիմքերը՝ հարկ է նկատել, որ այն առաջին հերթին տրամաբանական հակասության մեջ է մտնում հանցակազմի մասին ուսմունքի հետ, քանզի չի կարող գոյություն ունենալ մի հանցակազմ, որը լռելյայն կերպով իր մեջ կապրունակի մեկ այլ հանցակազմի հատկանիշներ:

Բացի այդ՝ տվյալ պարագայում տեղի է ունենում խզում այն հանցագործությունների որակման կանոնների միջև, որոնք նկարագրող հանցակազմերի հատկանիշ է հանցագործության նպատակը՝ ապագայում ցանկալի այն արդյունքի վերաբերյալ սուբյեկտիվ պատկերացումները, որին ձգտում է հասնել անձը հանցանքի կատարմամբ<sup>56</sup>:

Մասնավորապես, եթե հանցանքը կատարելիս նպատակի գործնական իրականացումն այլ հանցագործության հանցակազմի հատկանիշներ է պարունակում, և այդ ցանկալի հանցավոր նպատակը դուրս է սկզբնական հանցագործության հանցակազմի շրջանակներից, ապա միանգամայն ակնհայտ է, որ այն պետք է արժանանա ինքնուրույն քրեաիրավական գնահատականի, այսինքն՝ որակվի հանցագործությունների համակցության կանոններով (այս մասին առավել մանրամասն կխոսվի հետագայում)<sup>57</sup>:

Համակցության բաժանումը իրականի և իդեալականի կարևոր նշանակություն է ձեռք բերում նաև քրեական պատասխանատվու-

---

<sup>56</sup> St'u Ивченко О.С. Проблемы мотива и цели убийства в уголовном праве России. Дис. ... канд. юрид. наук. М., 2002, էջ 8:

<sup>57</sup> Այս կանոնից բացառություն պետք է դիտել այն հանցակազմերը, որոնց օբյեկտիվ կողմը երկրնտրելի է, և որոնք նկարագրում են ինչպես կոնկրետ նպատակով կատարվող արարքը, այնպես էլ այդ նպատակի իրականացումը (օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 202-րդ հոդվածը՝ կեղծ փողեր կամ արժեթղթեր՝ *իրացնելու նպատակով* պատրաստելը կամ պահելը կամ դրանք *իրացնելը*):



թյան ենթարկելու վաղեմության ժամկետները հաշվարկելիս: Իդեալական համակցության դեպքում յուրաքանչյուր հանցագործության համար վաղեմության ժամկետի հաշվարկման սկզբնական պահը համընկնում է: Իրական համակցության ժամանակ, որպես կանոն, այդ պահը, տարբերվում է, քանի որ կախված է լինում կատարված հանցագործությունների միջև ժամանակային խզումից:

Բացի այդ՝ համակցության այս բաժանումը ազդում է նաև անձին քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու հարցի լուծման վրա: Այսպես՝ եթե օրենքը այդպիսի ազատումը կապում է առաջին անգամ հանցանք կատարած լինելու հանգամանքի հետ, ապա իրական համակցության դեպքում այդպիսի հնարավորությունն, ըստ էության, բացակայում է, մինչդեռ իդեալական համակցության դեպքում, այդ հնարավորությունն առկա է:

Հանցագործությունների բազմակիության որակման գործընթացում առաջնահերթ և կարևոր նշանակություն ունի նաև *հանցավոր արարքների համակցության սահմանազատումը եզակի բարդ հանցագործություններից*: Այս կապակցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ *յուրաքանչյուր դեպքում, ելնելով գործի փաստական հանգամանքներից, անհրաժեշտ է հանցագործությունների համակցության տեսակները սահմանազատել ինչպես միմյանցից, այնպես էլ եզակի (մեկ) հանցագործությունից*<sup>58</sup>:

### **3.3. Հանցագործությունների համակցության սահմանազատումը եզակի բարդ հանցագործություններից**

Քրեական օրենքի կիրառման գործընթացում պետական մարմինները և պաշտոնատար անձինք հաճախ բախվում են եզակի բարդ հանցագործություններին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու խնդրին: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունները և դատախազաքննչական մարմինների ներկայացուցիչների հետ անհատական զրույցները վկայում են, որ հանցագործություն-

<sup>58</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Գ. Ոսկանյանի վերաբերյալ 31.10.2014թ. թիվ ԵԷԴ/0119/01/13 գործով որոշումը:

ների որակման գործընթացում հանցանքների համակցությունը եզակի բարդ հանցագործություններից սահմանազատումը հաճախ ուղեկցվում է որակման բազմաթիվ սխալներով (ավելցուկով որակումներ, կրկնաորակումներ և այլն), ինչն էլ, իր հերթին, հանգեցնում է իրավական և սոցիալական բնույթի բազմաթիվ խնդիրների ու բարդությունների: Դրանով պայմանավորված՝ եզակի բարդ հանցագործությունների որակման կանոնների ուսումնասիրությունը և հանցագործությունների բազմակիությունից դրանց սահմանազատման հիմնախնդիրը շարունակում են մնալ արդիական:

Քրեական իրավունքի տեսության մեջ եզակի հանցագործությունները բնութագրվում են ձևով և բովանդակությամբ<sup>59</sup>:

*Ձևական-իրավաբանական* տեսանկյունից եզակի հանցագործություններն ընդունված է համարել արարքը (արարքները), որը (որոնք) պարունակում է (են) քրեական օրենսգրքով նախատեսված մեկ հանցագործության հանցակազմի հատկանիշներ: Այլ խոսքով՝ եզակի հանցագործությունը կատարվում է մեկ կամ մի քանի փոխկապակցված արարքներով, ունեցում է մեկ հիմնական օբյեկտի դեմ, պարունակում մեկ հանցակազմ և որակվում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի մեկ հոդվածով կամ հոդվածի մասով:

Ինչ վերաբերում է եզակի հանցագործության *բովանդակային* չափանիշին, ապա որպես այդպիսին ընդունված է համարել հանցակազմի տարրերի միջև փոխկապակցվածության առկայությունը, որը որոշվում է հետևյալ երեք տեսակի կապերի համաժամանակյա առկայությամբ.

ա) *գործառության կապը*, որը միավորում է ինչպես անձի մեկ հանցավոր արարքը, այնպես էլ մի քանի տարբեր հանցավոր արարքներ, որոնք հանդես են գալիս որպես մեկ հանցավոր արդյունքին հասնելու փուլ, եղանակ կամ միջոց,

բ) *պատճառահետևանքային կապը*, որը ներքին միասնություն է հաղորդում այն հանցագործությանը, որի արդյունքում վրա են հասնում մի քանի հանցավոր հետևանքներ,

---

<sup>59</sup> Տե՛ս Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений. М., 1972, էջ 278:

գ) *սուբյեկտիվ կապը*, որը, ընդհանուր կանոնի համաձայն, բնութագրվում է մեղքի միևնույն ձևով, իսկ դիտավորյալ հանցագործությունների դեպքում՝ նաև միևնույն նպատակով և շարժառիթով:

Գործառութային կապով առավել շատ աչքի են ընկնում մի քանի արարքներով կատարվող եզակի հանցագործությունները, որոնցից յուրաքանչյուրը կարող է ունենալ ինքնուրույն քրեաիրավական նշանակություն: Տվյալ դեպքում եզակի հանցագործություն համարվող ինքնուրույն արարքները հանդես են գալիս որպես հանցավոր արդյունքի հասնելու փուլեր, եղանակներ կամ միջոցներ:

Եզակի հանցագործություններին բնութագրական է նաև այն, որ դրանց բաղկացուցիչ մաս կազմող արարքները, որպես կանոն, կատարվում են մեղքի միևնույն ձևով: Եթե հանցավորը դիտավորությամբ վնաս է պատճառում, սակայն նրա արարքի արդյունքում առաջանում են նաև այլ հետևանքներ, որոնց նկատմամբ նա դրսևորում է անզգույշ մեղքի ձև, ապա սուբյեկտիվ կապը այդ հետևանքների միջև բացակայում է, իսկ կատարվածը կարող է կազմել հանցագործությունների բազմակիություն: Օրինակ՝ եթե հանցավորը սպանում է մեկ անձի, ինչի հետևանքով անզգույշությամբ մահ է պատճառվում նաև ուրիշին, ապա կատարվածը պետք է գնահատվի ոչ թե որպես եզակի հանցանք, այլ հանցագործությունների բազմակիություն (համակցություն):

Թերևս հարկ է փաստել, որ ասվածից բացառություն են կազմում մեղքի երկու ձևով կատարվող հանցագործությունները, որոնց պարագայում, անկախ դիտավորյալ հանցագործության և անզգույշությամբ վնաս պատճառելու միջև սուբյեկտիվ կապի բացակայությունից, օրենսդիրը՝ հաշվի առնելով կատարվածի օբյեկտիվ փոխկապակցվածությունը, դրանք համարում է եզակի հանցագործություն:

Եզակի դիտավորյալ հանցագործություններում իր արտահայտությունն է ստանում նաև հանցագործության նպատակի ու շարժառիթի միասնությունը: Այս հանցագործությունների պարագայում, եթե կատարած արարքները չեն համընկնում նպատակով կամ շարժառիթով, դրանցից յուրաքանչյուրին պետք է տրվի ինքնուրույն քրեաիրավական գնահատական: Օրինակ՝ եթե անձի կողմից դիտավորյալ նույնաբնույթ արարքները կատարվում են միևնույն նպա-

տակով և շարժառիթով, ապա կատարվածը, որպես կանոն, գնահատվում է որպես եզակի շարունակվող հանցագործություն: Միևնույն ժամանակ, եթե տվյալ արարքները կատարվում են տարբեր շարժառիթներով և հետապնդում միանգամայն տարբեր նպատակներ, ապա դրանցից յուրաքանչյուրը ձեռք է բերում ինքնուրույն քրեաիրավական նշանակություն, իսկ կատարվածը կազմում է հանցագործությունների համակցություն:

Այսպիսով, կատարված արարքների կամ վրա հասած հանցավոր հետևանքների միջև միայն օբյեկտիվ կամ միայն սուբյեկտիվ փոխկապվածությամբ հնարավոր չէ դատողություն անել եզակի հանցագործության առկայության կամ բացակայության մասին: Կատարվածը որպես եզակի հանցագործություն որակելու համար անհրաժեշտ է, որ միաժամանակ առկա լինեն այս երևույթի ինչպես բովանդակային, այնպես էլ ձևական-իրավաբանական բոլոր հատկանիշները:

Եզակի հանցագործությունները բաժանվում են *պարզի և բարդի*: Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ այսպիսի դասակարգման հիմքում հանցակազմերի օրենսդրական նկարագրման եղանակն է կամ հանցակազմերի կառուցվածքը: Այսպես, եզակի պարզ հանցագործությունը կատարվում է մեկ արարքով, մեղքի մեկ ձևով, ոտնձգում է մեկ հիմնական օբյեկտի դեմ, պարունակում մեկ հանցակազմ և որակվում քրեական օրենսգրքի մեկ հոդվածով կամ հոդվածի մասով: Իսկ եզակի բարդ հանցագործությունների դեպքում դրանց որևէ հատկանիշ (օրինակ՝ արարքները, հանրորեն վտանգավոր հետևանքները և այլն) բարդեցված է, այսինքն՝ արարքը նկարագրված է բարդ հանցակազմով: Ընդ որում, եզակի հանցագործությունը համարվում է բարդ ոչ միայն այն պատճառով, որ հանցակազմի որևէ հատկանիշ բարդեցված է, այլև օբյեկտիվ իրականությունում դրա դրսևորման առանձնահատկություններով պայմանավորված, մասնավորապես՝ մի քանի արարքներով կատարվելը և այլն<sup>60</sup>:

---

<sup>60</sup> Տե՛ս, օրինակ՝ Кузнецова Н.Ф. Проблемы квалификации преступлений. Лекции по спецкурсу «Основы квалификации преступлений» / Научн. ред. и предисл. акад. В.Н. Кудрявцева. М, 2007, էջ 279:

Եթե ելնենք այն մոտեցումից, որ եզակի պարզ ու եզակի բարդ հանցագործությունների տարբերակման հիմքում ընկած են հանցակազմերի օրենսդրական նկարագրման առանձնահատկությունները, ապա եզակի բարդ հանցագործությունների շարքից դուրս կմնան այնպիսի հանցագործություններ, որոնք, չնայած իրենց հանցակազմերի օրենսդրական նկարագրման պարզության, ձեռք են բերում նմանություն հանցագործությունների բազմակիության հետ, երբ կատարվում են մեկից ավելի արարքներով: Այսպես, օրինակ՝ գողությունը, որը նկարագրված է պարզ հանցակազմով (հիմնական հանցակազմը), կարող է կատարվել ինչպես մեկ, այնպես էլ մեկից ավելի արարքներով: Եթե գողությունը կատարվում է մեկ արարքով, ապա համարվում է եզակի պարզ հանցագործություն, իսկ եթե կատարվում է մեկից ավելի շարունակվող արարքներով, ապա այն անհրաժեշտ է համարել եզակի բարդ հանցագործություն, քանզի առերևույթ նմանվում է հանցագործությունների բազմակիությանը:

Եվ հակառակը՝ երբ, ըստ օրենսդրական նկարագրման, հանցագործության հանցակազմը բարդ է, իսկ փաստացի կատարվածն իրականում՝ պարզ: Օրինակ՝ երբ անձը կատարում է երկրորդ արարքներով նկարագրված հանցակազմի միայն մեկ արարքը:

Ասվածից հետևում է, որ եզակի հանցագործության պարզ կամ բարդ լինելը չի կարող միանշանակորեն որոշվել՝ դրա հանցակազմի օրենսդրական նկարագրումից ելնելով: Եզակի հանցագործության բարդ լինելը ոչ այնքան թաքնված է դրա հանցակազմում, որքան՝ այն իրականում գոյություն ունեցող երևույթ է: Պարզապես այստեղ չպետք է նույնացնել պարզ հանցակազմը և պարզ հանցագործությունը, ինչպես նաև բարդ հանցակազմն ու բարդ հանցագործությունը: Սրանք թեև փոխկապված, սակայն հարաբերականորեն ինքնուրույն քրեաիրավական բնույթ և նշանակություն ունեցող երևույթներ են:

Անհրաժեշտ է նկատել նաև, որ եզակի հանցագործությունն առերևույթ նմանվում է հանցագործությունների բազմակիությանը, երբ՝ ա) կատարվում է մեկից ավելի փոխկապակցված արարքներով, բ) կատարվում է մեկ արարքով, որը ոտնձգում է քրեաիրավական պաշտպանության մի քանի օբյեկտների կամ առարկաների դեմ, գ) առաջացնում է մի քանի հանրորեն վտանգավոր հետևանքներ կամ

դ) իրականացվում է հանցավոր արարքի տևական կատարմամբ: Այդ ամենով պայմանավորված՝ եզակի հանցագործությունները հանցանքների բազմակիությունից հստակ տարանջատելու համար անհրաժեշտ է հիմք ընդունել եզակի բարդ հանցագործությունների հետևյալ դասակարգումը.

1. *Բնույթով բարդ եզակի հանցագործություններ, որոնք պայմանավորված չեն հանցակազմի (պարզ կամ բարդ) կառուցվածքով՝*

ա) շարունակվող հանցագործություններ,

բ) տևող հանցագործություններ,

գ) վերաճող հանցագործություններ,

դ) տուժողների բազմաթվությամբ հանցագործություններ, որոնք նկարագրված չեն բարդ հանցակազմով:

2. *Բարդ (կամ, այսպես կոչված, կրկնակի արարքներով) հանցակազմով եզակի հանցագործություններ՝*

ա) հանցակազմի երկրնտրելի տարրերով հանցագործություններ,

բ) բաղկացական հանցագործություններ:

#### **Ա. Շարունակվող հանցագործություններ:**

XIX դարում Եվրոպական քրեական իրավունքի գիտության մեջ ձևավորվեց շարունակվող հանցագործությունների երեք հայեցակարգ (տեսություն). օբյեկտիվ, սուբյեկտիվ և դուալիստական (օբյեկտիվ-սուբյեկտիվ): Այս տեսություններից դուալիստականն իր տեղը գտավ և հետագա զարգացումն ապրեց հայրենական քրեական իրավունքի դոկտրինում և դատական պրակտիկայում<sup>61</sup>:

ՀՀ քրեական գործող օրենսգրքում շարունակվող հանցագործության իրավական բնորոշումը սահմանված չէ: Այն տրված էր ՀՀ 2003թ. քր. օր.-ի 21-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն՝ շարունակվող էր համարվում միասնական հանցավոր մտադրությամբ միավորված երկու կամ ավելի արարքներից բաղկացած հանցագործությունը: «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 23.05.11թ. ՀՕ-143-Ն օրենքով քրեական օրենսգրքի նշված հոդվածն ուժը կորցրած ճանաչվեց:

<sup>61</sup> Այս մասին տե՛ս նաև Ораздурдыев А.М. Эволюция учения о едином преступлении в уголовном праве. М., 2020, էջեր 415-446:

Հետևաբար, ՀՀ քր. օր.-ից վերացվեց նաև շարունակվող հանցագործության օրենսդրական ձևակերպումը:

ՀՀ Վճռաբեկ դատարանը Վ.Մկրտչյանի և մյուսների վերաբերյալ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԿԴ3/0034/01/15 գործով որոշման շրջանակներում փաստել է՝ «(...) թե՛ իրական համակցությունը, թե՛ շարունակվող հանցագործությունը դրսևորվում են մեկից ավելի արարքների կատարմամբ, հետևաբար կատարվող արարքներին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու հարցում կարևոր է դրանց տարանջատման հստակ չափանիշների սահմանումը: Շարունակվող հանցագործությունը բարդ (եզակի) հանցագործության տեսակ է, որը թեպետ դրսևորվում է որոշակի ժամանակային ընդմիջումներով կատարվող մեկից ավելի հակաիրավական արարքներով, այնուամենայնիվ դիտվում է որպես մեկ հանցագործություն և որակվում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի մեկ հոդվածով կամ հոդվածի մասով: Վերոնշյալը պայմանավորված է կատարվող արարքների միջև գոյություն ունեցող սերտ կապով, ինչը թույլ է տալիս դրանք գնահատել որպես մեկ ամբողջություն: Մասնավորապես, շարունակվող հանցագործությունը բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ այնպիսի հատկանիշներով, որոնցով տարանջատվում է հանցագործությունների իրական համակցությունից»<sup>62</sup>:

Միևնույն ժամանակ, սակայն, մասնագիտական գրականության և դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շարունակվող հանցագործության էության, բովանդակության կապակցությամբ առկա են տարատեսակ, երբեմն հակասական և իրարամերժ մոտեցումներ: Դրանով պայմանավորված՝ հաճախ խնդիրներ են առաջանում նաև համապատասխան հանցավոր արարքների որակման գործընթացում:

Մասնավորապես, քրեական իրավունքի գիտության մեջ չկա միասնություն այն հարցի կապակցությամբ, թե ինչպիսին է շարունակվող հանցագործության բաղադրիչ արարքների բնույթը: Քրեագետներից ոմանք կարծում են, որ շարունակվող հանցագործություն

---

<sup>62</sup> Նույնը տե՛ս նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Հ.Մարտիրոսյանի վերաբերյալ 06.06.2017թ. թիվ ԿԴ1/0006/01/15 գործով որոշման 12-րդ կետը:

կարող են կազմել միայն նույնական<sup>63</sup>, իսկ մյուսների կարծիքով՝ ինչպես նույնական, այնպես էլ միաբնույթ արարքները<sup>64</sup>:

Հարկ է արձանագրել նաև, որ ներկայումս ՀՀ Վճռաբեկ դատարանի պրակտիկան ընթանում է այն ճանապարհով, ըստ որի՝ շարունակվող հանցագործության բաղադրիչ են համարվում միայն այն արարքները, որոնք *նույնական* են: Այսպես, Ս.Ղամբարյանի և այլոց վերաբերյալ գործով Դատարանը նշել է. «(...) Շարունակվող հանցագործությունները բաղկացած են մեկից ավելի նույնական արարքներից, որոնցից յուրաքանչյուրը թեկուզև ինքնուրույն հանցակազմ է պարունակում, բայց ընդգրկված են միասնական դիրավորության մեջ, հետապնդում են մեկ ընդհանուր նպատակ, հետևաբար դիրավում են իբրև մեկ հանցագործություն, որն ավարտված է համարվում հանցավորի դիրավորությամբ ընդգրկված վերջին արարքի կատարման պահից: (...)»<sup>65</sup>:

---

<sup>63</sup> Տե՛ս Белокуров О.В. Проблемы квалификации хищения вверенного имущества. М., 2003, էջեր 81-82, Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений. 2-е изд., перераб. и доп. М., 2004, էջ 261, Черненко Т.Г. Множественность преступлений по российскому уголовному праву. Кемерово, 2007, էջ 20, Бабий Н.А. Множественность преступлений: квалификация и назначение наказания: науч. практ. пособие. М., 2008, էջ 8, Уголовное право. Общая часть: Учебник / Отв. ред. И.Я. Козаченко. 4-е изд., перераб. и доп. М., 2008, էջ 411, Чикин Д.С. Сложные единичные преступления: уголовно-правовая характеристика, проблемы квалификации и законодательного конструирования: Дис... к. ю. н. Краснодар, 2013, էջ 58:

<sup>64</sup> Տե՛ս, օրինակ՝ Караев Т.Э. Повторность преступления. М., 1983, էջ 10, Дёмин В.Ф. Социальная обусловленность законодательного конструирования единого сложного преступления и его квалификация: Автореф. дис. ... канд. юрид. наук. М., 1989, էջ 21, Кузнецова Н. Квалификация сложных составов преступлений // Уголовное право, 2000, № 1, էջ 32, Энциклопедия уголовного права. Т. 3. Понятие преступления. СПб., 2005, էջ 304, Козлов А.П. Единичные преступления: понятие, классификация, квалификация: Учеб. пособие. Красноярск, 2007, էջ 52, Силаев С.А. Объективные признаки продолжаемого преступления // Вестник Кемеровского государственного университета, 2013, № 3, էջեր 280-281.

<sup>65</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Ս.Ղամբարյանի և այլոց գործով 2014թ. մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշման 21-րդ կետը:



Վերահաստատելով և զարգացնելով մեջբերված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը Վ.Մկրտչյանի ու այլոց վերաբերյալ թիվ ԿԴ3/0034/01/15 և Հ.Մարտիրոսյանի վերաբերյալ թիվ ԿԴ1/0006/01/15 գործերով ընդգծել է, որ շարունակվող հանցագործության օբյեկտիվ հատկանիշը ենթադրում է, որ՝ «(...) կատարվող արարքները նույնական են, այսինքն՝ նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով: Ընդ որում, խոսքն իրավաբանական առումով նույնականության մասին է, իսկ փաստական կողմով արարքները կարող են միմյանցից տարբերվել (օրինակ՝ հրազենի ապօրինի ձեռքբերումն ու իրացումը փաստական հատկանիշներով թեպետ տարբերվում են, սակայն իրավաբանորեն դրանք նույնական արարքներ են, քանի որ միևնույն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի եղանակ են): Միևնույն ժամանակ, եթե կատարված արարքերը եղել են ոչ թե նույնական, այլ տարաբնույթ կամ միաբնույթ, կատարվածը չի կարող դիտվել որպես շարունակվող հանցագործություն և ենթակա է որակման հանցագործությունների համակցության կանոններով»:

Նկատի ունենալով վերոգրյալ իրավական վերլուծությունները և մասնագիտական գրականության մեջ շարունակվող հանցագործության բաղադրիչ արարքների բնույթի վերաբերյալ արտահայտված մոտեցումները՝ կարծում ենք, որ շարունակվող հանցագործություն, որպես կանոն, ձևավորում են նույնական արարքները, սակայն ասվածը չի բացառում, որ շարունակվող դիտվեն նաև միաբնույթ այն արարքները (օրինակ՝ գողություն, կողոպուտ, ավազակություն), որոնք օժտված են շարունակվող հանցագործությանը բնորոշ օբյեկտիվ և սուբյեկտիվ այլ հատկանիշներով:

Այսպիսով, դատական պրակտիկայի նյութերի և մասնագիտական ոլորտում իրականացված հետազոտությունների արդյունքների ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնելու շարունակվող հանցագործությունների բնութագրական հետևյալ հատկանիշները.

1. Շարունակվող հանցագործության կառուցվածքում կարող են ընդգրկվել ինչպես այնպիսի հակաիրավական արարքներ, որոնք, այլ դրվագներից մեկուսի, դիտվում են որպես ինքնուրույն հանցագործություն, այնպես էլ արարքներ, որոնք ինքնուրույն հանցակազմ

չեն պարունակում, կամ իրենցից ներկայացնում են այլ իրավախախտում, օրինակ՝ վարչական զանցանք: Այս գաղափարը որևէ կերպ չի հակադրվում ՀՀ քր. օր.-ի 3-րդ հոդվածին (քրեական պատասխանատվության հիմքը), քանի որ շարունակվող հանցագործության դեպքում քրեաիրավական գնահատական է տրվում ոչ թե շարունակվող հանցագործության բաղկացուցիչ արարքներին առանձին-առանձին, այլ՝ ընդհանուր հանցագործությանն ամբողջությամբ: Օրինակ՝ անձնական գործածության համար հանցավորի կողմից մեկից ավելի արարքներով առանձնապես խոշոր չափերի թմրամիջոց ձեռք բերելիս (ՀՀ քր. օր.-ի 268-րդ հոդվածի 3-րդ մաս) ձեռքբերման յուրաքանչյուր դրվագ կարող է պարունակել ինչպես թմրամիջոցի զգալի, խոշոր կամ առանձնապես խոշոր չափերի (ինքնուրույն հանցագործություն), այնպես էլ մանր չափերի (վարչական զանցանք) հատկանիշներ:

2. *Շարունակվող հանցագործությունը կատարվում է միաբնույթ փոխկապակցված արարքներով:* Ընդ որում, «միաբնույթ» եզրույթը պետք է հասկանալ քրեաիրավական իմաստով: Այսպես, օրինակ՝ բնակարանից հափշտակություն կատարելիս հանցավորը, մի դեպքում, կարող է բնակարան մուտք գործել պատուհանի ապակին կտրելով, մյուսում՝ մուտքի դռնից: Մեկ այլ դեպքում՝ գողոնը կարող է դուրս հանել պատուհանից նետելով, մյուս դեպքում՝ ընդհանուր մուտքից և այլն<sup>66</sup>: Թեև կրիմինալիստիկական տեսանկյունից այս գործողությունները միաբնույթ չեն և իրարից տարբերվում են փաստական կողմով, սակայն դրանք միաբնույթ են քրեաիրավական իմաստով:

Բանն այն է, որ հանցավոր արարքները համարվում են միաբնույթ ոչ միայն, եթե դրանց համար քրեական պատասխանատվությունը նախատեսված է քրեական օրենսգրքի միևնույն հոդվածով: Քրեաիրավական իմաստով այդպիսիք պետք է համարել ոչ միայն քրեական օրենսգրքի միևնույն հոդվածով կամ հոդվածի մասով և

---

<sup>66</sup> Ст'а Яни П.С. Неоднократное получение незаконного вознаграждения: совокупность преступлений, продолжаемое взяточничество // Уголовно-политические, уголовно-правовые и криминологические проблемы борьбы с современной преступностью и коррупцией: Сб. науч. тр. / Под ред. Н.А. Лопашенко. Саратов, 2009, էջ 60:

(կամ) կետով, այլև հարակից հանցակազմերով նախատեսված միասեռ հանցագործությունները (օրինակ՝ գողությունը, կողոպուտը, յուրացումը կամ վատնումը և այլն), ինչպես նաև վարչական իրավախախտումները (օրինակ՝ առանց իրացնելու նպատակի մանր չափերով թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունը և այլն):

Շարունակվող հանցագործության բաղադրիչ արարքների միաբնույթ լինելը որոշվում է երկու չափանիշով՝ *իրավաբանական և փաստական*: Հանցավոր արարքները համարվում են իրավաբանորեն միաբնույթ, եթե քրեական պատասխանատվությունը դրանցից յուրաքանչյուրի համար (որպես կանոն) նախատեսված է քրեական օրենսգրքի միևնույն հոդվածով: Դրանց փաստական միաբնույթությունը ենթադրում է այդ արարքների օբյեկտիվ հատկանիշների նմանություն (միատիպություն):

Բացի այդ՝ շարունակվող հանցագործության բաղադրիչ կարող են դիտվել նաև այն արարքները, որոնք նկարագրված են քրեական օրենսգրքի միևնույն հոդվածի տարբեր մասերում: Այսպես, օրինակ՝ հանցավորը, սկզբում ցանկանալով կողոպտել տուժողին և չհասնելով հաջողության, վերջինիս կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրում և հափշտակում նրա պայուսակը: Չնայած նրան, որ հանցավորի սկզբնական արարքը պարունակում է կողոպուտի հիմնական, իսկ երկրորդը՝ որակյալ հանցակազմի հատկանիշներ, այդ ամենը չի գրկում միևնույն նպատակին ուղղված բաղադրիչ արարքներն իրավաբանական միասնությունից: Ուստի, նշված իրավիճակը պետք է դիտվի շարունակվող հանցագործություն և որակվի միայն կողոպուտի որակյալ հանցակազմով (<< քր. օր.-ի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ):

3. *Շարունակվող հանցագործության բաղկացուցիչ արարքներն օբյեկտիվորեն փոխկապակցված են, ինչի հետևանքով դրանք գնահատվում են որպես հանցավորի վարքի որոշակի գիծ*: Համընդհանուր օբյեկտիվ չափանիշները, որոնք թույլ են տալիս արձանագրելու միաբնույթ արարքների միջև այդ փոխկապակցվածությունը, դրանց ուղղվածությունն է քրեաիրավական պաշտպանության միևնույն օբյեկտի դեմ: Ընդ որում՝ քրեաիրավական պաշտպանության միևնույն օբյեկտի նկատմամբ ոտնձգությունը կարող է իրականացվել

հանցագործության տարբեր առարկաների (տարբեր տուժողների) վրա ներագդելու միջոցով:

Դատական պրակտիկայում շարունակվող հանցագործության առանձին դրվագների միջև փոխկապակցվածությունը վեր հանելու և հաստատելու համար, բացի քրեաիրավական պաշտպանության միևնույն օբյեկտի դեմ ուղղված լինելուց, հաշվի են առնվում նաև օբյեկտիվ բնույթի այլ հատկանիշներ, մասնավորապես՝ հանցագործության եղանակը (միևնույն կամ նմանատիպ եղանակով), հանցավոր հետևանքի (արդյունքի) միասնականությունը և այլն: Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ շարունակվող հանցագործությունների տարբերի միջև փոխկապակցվածության մասին վկայող օբյեկտիվ հատկանիշները (հանցագործության միևնույն տեղը, ժամանակը, եղանակի միատիպությունը և այլն) չեն կրում համընդհանուր և բացարձակ բնույթ: Օրինակ՝ պետական դավաճանությունը, որն իրականացվում է պետական գաղտնիքի հրապարակման ձևով, կարող է կատարվել պետական գաղտնիք համարվող տեղեկություններն ինչպես էլեկտրոնային փոստով ուղարկելու, այնպես էլ դրանք օտարերկրյա կազմակերպությանը կամ դրանց ներկայացուցիչներին անձամբ հանձնելու կամ այլ եղանակներով, ընդ որում՝ ժամանակային խզումներով և տարբեր տեղերում, ինչը չի փոխում կատարվածի սոցիալ-իրավական էությունը՝ որպես շարունակվող հանցագործություն:

Դատական պրակտիկայի նյութերի ամփոփումը թույլ է տալիս որոշակի հանցատեսակների համար առանձնացնել նաև լրացուցիչ օբյեկտիվ հատկանիշներ, որոնք միասնության մեջ կարող են վկայել եզակի բարդ հանցագործությունների առանձին դրվագների փոխկապակցվածության մասին: Այսպես.

- կողոպուտի, գողության և ավազակության եղանակով կատարվող շարունակվող հափշտակությունների հատկանիշ է, որպես կանոն, «միևնույն աղբյուրից» պարբերական արարքներով կատարված լինելը,
- ՀՀ քր. օր.-ի 138-րդ և 139-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների շարունակվող բնույթի մասին կարող է վկայել այդ արարքները ժամանակային ոչ մեծ խզումով և միևնույն տուժողի նկատմամբ կատարելը,

- ՀՀ քր. օր.-ի 200-րդ, 311-րդ և 312-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունները կարելի է համարել շարունակվող այն դեպքում, երբ, օրինակ՝ կաշառքի առարկան մի քանի առանձին գործողություններով փոխանցվում կամ ստացվում է միևնույն անձի կողմից կամ կաշառքի առարկան փոխանցվում կամ ստացվում է մի քանի անձանց կողմից, սակայն այդ անձանց ընդհանուր շահից բխող միևնույն գործողությունը (անգործությունը) կատարելու համար,
- Հանցագործությունների համակցությունը բացակայում է, երբ ՀՀ քր. օր.-ի 182-րդ հոդվածով նախատեսված եղանակներով պարբերաբար մեկ կամ մի քանի անձանցից պահանջվում է հանձնել գույք, գույքի նկատմամբ իրավունք կամ կատարել գույքային բնույթի այլ գործողություններ, եթե այդ պահանջներն ընդգրկված են միասնական դիտավորությամբ և ուղղված են հանցագործության միևնույն առարկային տիրանալուն (որպես եզակի հանցագործություն պետք է որակվի անձի այն գործողությունները, որոնք ուղղված են տուժողի կողմից գույքի պարբերական փոխանցումների վերաբերյալ պահանջին):

Անհրաժեշտ է արձանագրել նաև, որ շարունակվող հանցագործության առկայության և դրա բաղադրիչ արարքների փոխկապակցվածության վերաբերյալ հետևության կարելի է հանգել մի քանի չափորոշիչների համակցության և գործի փաստական հանգամանքների համակողմանի վերլուծության հիման վրա, ինչը յուրաքանչյուր քրեական գործի պարագայում պահանջում է անհատական մոտեցում:

4. *Շարունակվող հանցագործության օբյեկտիվ հատկանիշ է նաև դրա բաղադրիչ արարքների միջև որոշակի ժամանակային խզման առկայությունը:* Կախված հանցագործության բնույթից և իրադրության այլ օբյեկտիվ գործոններից՝ բաղադրիչ արարքների միջև ժամանակային ընդհատումը կարող է տարբեր լինել (ժամ, օր, ամիս, նույնիսկ՝ տարի): Այնուամենայնիվ, ժամանակային խզման երկարատև բնույթը (օրինակ՝ օրացուցային տարին, որը բնորոշ է մասնավորապես, հարկային շարունակվող հանցագործություններին) չի կարող միանշանակորեն բացառել կատարվածը շարունակվող հանցագործություն որակելը: Հարկ է փաստել, որ շարունակվող

հանցագործության բաղադրիչ արարքների ժամանակային ընդհատումն այն օբյեկտիվ գործոնն է, որը կարող է վկայել այդ արարքների սուբյեկտիվ փոխկապվածության առկայության կամ բացակայության մասին: Ասվածով պայմանավորված՝ կարող է գործել հետևյալ օրինաչափությունը. որքան փոքր է միաբնույթ արարքների միջև ժամանակային խզումը, այնքան մեծ է շարունակվող հանցագործության առկայության հավանականությունը:

5. *Շարունակվող հանցագործության արարքերի փոխկապակցվածության սուբյեկտիվ չափանիշը բնութագրվում է հանցավորի մոտ միասնական դիտավորության (այն կարող է լինել միայն ուղղակի) և հանցավոր արդյունքին հասնելու ընդհանուր նպատակի առկայությամբ:* Այլ կերպ ասած՝ անձը պետք է նախնական մտադրություն ունենա կատարելու կոնկրետ հանցանքը մեկից ավելի, որոշակի ժամանակային ընդմիջումներով առանձնացված նույնական արարքներով: Շարունակվող հանցագործության դեպքում ուղղակի դիտավորության բնութագրիչ առանձնահատկությունը դրա միևնույն բնույթի մեջ է, որը պայմանավորված է ընդհանուր նպատակին ուղղված մեկից ավելի նույնաբնույթ արարքների կատարմամբ:

Շարունակվող հանցագործության պարագայում դիտավորությունը (անկախ դրա կոնկրետացվածության աստիճանից) պետք է լինի միասնական, ինչի շնորհիվ մեկից ավելի միաբնույթ արարքները գնահատվում են որպես մեկ ամբողջություն: Դրանով պայմանավորված՝ այս հանցագործություններում դիտավորության ինտելեկտուալ և կամային չափանիշները ձեռք են բերում առանձնահատուկ բովանդակություն: Մասնավորապես, դիտավորության ինտելեկտուալ չափանիշը հանգում է նրան, որ հանցավորը գիտակցում է կոնկրետ նպատակին հասնելու անհնարինությունը կամ աննպատակահարմարությունը մեկ արարքի կատարմամբ: Իսկ կամային չափանիշը դրսևորվում է նրանում, որ հանցավորը կոնկրետ նպատակին ցանկանում է հասնել աստիճանաբար (փուլ առ փուլ)՝ միաբնույթ արարքների պարբերական կատարմամբ:

Հարկ է առանձին ընդգծել, որ շարունակվող հանցագործության դեպքում մեկից ավելի միաբնույթ ոտնձգություններ կատարելու միասնական դիտավորությունն առաջանում է *մինչև դրանցից առա-*

*ջինի կատարումը*: Մինչդեռ, եթե նույնաբնույթ արարքներով իր հանցավոր գործունեությունը շարունակելու դիտավորությունը ծագում է հանցավորի կողմից մեկանգամյա հանցանքը հաջողությամբ կատարելուց հետո, ապա առաջին արարքը պետք է որակել որպես ինքնուրույն, իսկ հաջորդողները՝ շարունակվող հանցագործություն: Այլ խոսքով՝ շարունակվող հանցագործության դեպքում յուրաքանչյուր հաջորդ արարքը կատարելու դիտավորությունը ծագում է մինչև նախորդ միաբնույթ արարքը կատարելը կամ դրա ընթացքում: Մինչդեռ, եթե հաջորդ արարքը կատարելու դիտավորությունն առաջանում է նախորդ արարքը կատարելուց հետո, ապա շարունակվող հանցագործությունը բացակայում է, իսկ կատարվածը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ:

«Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով շարունակվող հանցագործության պարագայում միասնական դիտավորության դրսևորման ձևերին, արձանագրել է, որ. «շարունակվող հանցագործությունների դեպքում միասնական դիտավորությունը կարող է արտահայտվել հետևյալ կերպ՝

- շարունակվող հանցագործության մաս կազմող բոլոր արարքների և ընդհանուր հանցավոր արդյունքի նկատմամբ անձի դիտավորությունը կոնկրետացված է և առաջանում է նախքան առաջին արարքը կատարելը (դասական միասնական դիտավորություն),
- կատարվելիք հետագա արարքների նկատմամբ միասնական դիտավորությունն առաջանում է նախորդող արարքը կատարելու ընթացքում (վերածող միասնական դիտավորություն),
- ընդհանուր հանցավոր արդյունքի նկատմամբ հանցավորի դիտավորությունը թեպետ կոնկրետացված չէ, սակայն վերջինս ունի միասնական դիտավորություն՝ հանցագործության միևնույն անմիջական օբյեկտի դեմ ուղղվածությունն իրականացնելու մեկից ավելի նույնական արարքներով»<sup>67</sup>:

Հարկ է ընդգծել, որ սուբյեկտիվ հատկանիշի բացահայտումը կարևոր նշանակություն ունի հանցագործության ճիշտ քրեաիրա-

<sup>67</sup> Տե՛ս «Վճռաբեկ դատարանի՝ Վարդան Մկրտչյանի, Արբակ Առաքելյանի և Գրիշա Մուրադյանի վերաբերյալ 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԿԴ3/0034/01/15 գործով որոշման 13-14-րդ կետերը:

վական որակման հարցում, քանի որ արարքների նույնականությունը, ոտնձգության օբյեկտի, աղբյուրի և եղանակի միասնականությունը դեռևս հիմք չեն կատարվածը շարունակվող հանցագործությունն դիտելու համար: Այսպես՝ իրական համակցության պարագայում նույնպես կատարվող արարքները կարող են օժտված լինել շարունակվող հանցագործությանը բնորոշ օբյեկտիվ հատկանիշներով: Հետևաբար, նման դեպքերում շարունակվող հանցագործությունն իրական համակցությունից տարանջատելու հիմնական չափանիշը հանցավորի մոտ համապատասխան արարքները կատարելու միասնական դիտավորության առկայության հավաստումն է, և միաժամանակ, դիտավորության՝ ամեն արարքից հետո կրկին ծագած լինելու հավանականության բացառումը, ինչը յուրաքանչյուր դեպքում պետք է իրականացվի վարույթն իրականացնող մարմնի կողմից գործի հանգամանքների բազմակողմանի հետազոտման արդյունքում<sup>68</sup>:

Այսպես՝ ձկնաբուծական ֆերմայի տնօրենի հետ աշխատավարձը բարձրացնելու շուրջ ունեցած անհաջող զրույցից հետո աշխատակից Զ.-ն որոշում է հափշտակություններ կատարել: Ձկան խավիարի առաջին գողությունից հետո որոշ ժամանակով դադարեցնում է հափշտակությունը, քանի որ վախենում է, որ կատարվածը կբացահայտվի: Մի քանի օր հետո նա, հասկանալով, որ չի նկատվել, շարունակում է հանցավոր գործունեությունը: Նկարագրված իրավիճակում առկա է շարունակվող հանցագործություն:

Մեկ այլ օրինակում՝ թռչնաբուծական ֆերմայի աշխատակից Գ.-ն, իր ծննդյան միջոցառումը կազմակերպելու համար չունենալով բավարար դրամական միջոցներ, հափշտակում է ֆերմայի տասը հավ և վաճառում: Գործը բարեհաջող գլուխ բերելուց հետո որոշում է որդու ծննդյան միջոցառումը կազմակերպելու համար ևս դիմի նույն մեթոդին: Տվյալ դեպքում որդու ծննդյան միջոցառումը կազմակերպելու նպատակով հափշտակության դիտավորությունը ծագել է առաջին հափշտակությունը կատարելուց հետո միայն, ուստի՝ բացակայում է շարունակվող հանցագործությունը:

Ինչպես արդեն նշվել է, շարունակվող հանցագործության պարտադիր սուբյեկտիվ հատկանիշ է մեկ ընդհանուր (միասնական)

<sup>68</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի նույն որոշումը:



նպատակի առկայությունը, որին ձգտում է հասնել հանցավորը միաբնույթ արարքների պարբերական կատարմամբ: Ասվածի կապակցությամբ հարկ է արձանագրել նաև, որ, կախված հանցավոր արարքի կամ դրա հետևանքների նկատմամբ հանցավորի ունեցած պատկերացումներից, շարունակվող հանցագործությունում *ընդհանուր նպատակը* կարող է լինել.

- *կոնկրետացված (հստակ որոշակի)*, երբ հանցավորը, միասնական դիտավորությամբ իրականացնելով մեկից ավելի միաբնույթ արարքներ, ցանկանում է հասնել կոնկրետ արդյունքի (օրինակ՝ հափշտակել համակարգիչ, կատարել խոշոր չափերի գողություն, իրացնել առանձնապես խոշոր չափերի մարիխուանա տեսակի թմրամիջոց և այլն),
- *հարաբերական-որոշակի*, երբ անձը, ցանկանալով մեկից ավելի միաբնույթ արարքներով կատարել հանցագործություն, իր առջև դնում է այնպիսի նպատակ, որը չունի կոնկրետ որոշակի չափանիշներ (օրինակ՝ խարդախը խաղաքարտային տարբեր հնարքներով փորձում է խաբեությամբ տարբեր անձանցից հափշտակել որքան հնարավոր է շատ գումար, կամ՝ հանցավորը ուրիշի գրադարանից ամեն անգամ մեկական գիրք է գողանում՝ «մինչև կբռնեն» և այլն):

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կոնկրետացված նպատակի բացակայությունը չի զրկում կատարվածի բովանդակությունը ներքին միասնությունից, եթե կատարված մեկից ավելի միաբնույթ արարքները օժտված են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ փոխկապակցվածությամբ, որը վկայում է նրանց ուղղվածությունը քրեաիրավական պաշտպանության միևնույն օբյեկտի դեմ և ընդգրկված լինելը միասնական դիտավորությամբ:

6. Շարունակվող հանցագործությանը բնութագրական է ոչ միայն նպատակի միասնությունը, այլև շարժառիթը, որը, որպես կանոն, նույնպես կրում է միասնական բնույթ: Ինչպես արդարացիորեն նկատում է Ա.Մ.Օռագդուրդիևը՝ քանի որ սուբյեկտի շարունակական հանցավոր վարքագծի հիմքում ընկած է միասնական պահանջմունքը (կարիքը, հետաքրքրությունը), որը բնութագրում է արարքի կատարման ամբողջ գործընթացի կայունությունը, ապա շարունակվող հանցագործության բնութագրիչ հատկանիշների

թվին կարելի է դասել սուբյեկտի նախապես ձևավորված վարքագծի հիմքում ընկած միասնական շարժառիթը<sup>69</sup>:

Այսպիսով, ձևակերպելով շարունակվող հանցագործությունների որակման կանոնը կարելի է արձանագրել, որ *շարունակվող հանցագործությունը մեկ միասնական բարդ հանցագործության տեսակ է, որը ձևավորվում է միաբնույթ այնպիսի արարքներից, որոնց միջև, որպես կանոն, առկա է հարաբերականորեն ոչ մեծ ժամանակային խզում, և որոնք ուրիշում են, որպես կանոն, միևնույն անմիջական օբյեկտի դեմ, ընդգրկված են մեկ միասնական դիտարկությանը և հանդես են գալիս որպես մեկ ամբողջական հանցագործության առանձին օղակ: Միևնույն ժամանակ, եթե կատարված արարքները եղել են ոչ նույնական, այլ տարաբնույթ կամ միաբնույթ, ուղղված են եղել տարբեր անմիջական օբյեկտների դեմ, կատարվել են տարբեր աղբյուրներից, կապված չեն եղել միասնական դիտարկությանը, ինչպես նաև այն դեպքերում, երբ կատարված արարքները թեպետ եղել են նույնական և ուղղված են եղել միևնույն անմիջական օբյեկտի դեմ, սակայն ընդգրկված չեն եղել միասնական դիտարկությանը, այլ յուրաքանչյուր դեպքում դիտարկությունը ծագել է առանձին, կատարվածը չի կարող դիտարկել որպես շարունակվող հանցագործություն և ենթակա է որակման հանցագործությունների համակցության կանոններով:*

Բացի այդ, հանցագործությունների իրական համակցության կամ շարունակվող հանցագործության կանոնները կիրառելու և հանցավորի արարքներին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու համար քրեական վարույթն իրականացնող մարմինը հատուկ ուշադրություն պետք է դարձնի կոնկրետ հանցագործության օբյեկտին, կատարվող արարքների բնույթին, կատարման եղանակին, աղբյուրին, դիտարկության ու նպատակի առանձնահատկություններին<sup>70</sup>:

Հարկ է նկատել, որ, եթե շարունակվող հանցագործության բաղադրիչ արարքներից մեկը պարունակում է քրեական օրենսգրքի

<sup>69</sup> Տե՛ս Ораздурдыев А.М. Продолжаемое преступление по советскому уголовному праву: дис. ... канд. юрид. наук. Казань, 1984, էջ 9:

<sup>70</sup> Տե՛ս նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Վ.Մկրտչյանի և այլոց վերաբերյալ գործով 01.11.2016թ. ԿԴՅ/0034/01/15 որոշման 13-14-րդ կետերը:

Հատուկ մասի միևնույն հոդվածի ինչպես հիմնական, այնպես էլ ծանրացնող կամ առավել ծանրացնող հանգամանքով զուգորդված հանցակազմի հատկանիշներ, որը, ի տարբերություն մնացածի, առավել խիստ է պատժվում, ապա հանցավորի կատարած ամբողջ շարունակվող հանցագործությունը պետք է որակվի տվյալ հոդվածի այն մասով, որով պատասխանատվություն է նախատեսվում հանցանքը ծանրացնող (կամ առավել ծանրացնող) հանգամանքով կատարելու համար: Օրինակ՝ եթե անձը միասնական դիտավորությամբ զգալի չափերի գողություն է կատարում տուժողի առանձնատան բակից, մի քանի օր անց՝ վերջինիս ավտոտնակից, դրանից երկու օր հետո, ապօրինի մուտք գործելով նրա բնակարան, գողությունը կատարում է այնտեղից, ապա հանցավորի արարքը պետք է որակվի միայն առավել որակյալ նորմով՝ որպես բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողություն (<< քր. օր.-ի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետ)՝ չնայած նրան, որ վերջինիս միաբնույթ արարքները պարունակում են ինչպես գողության հիմնական, այնպես էլ որակյալ հանցակազմի հատկանիշները:

Եթե շարունակվող հանցագործության բաղադրիչ միաբնույթ արարքները պարունակում են քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով նկարագրված հանցակազմերի հատկանիշներ, որոնք տարբերվում են իրենց հանրային վտանգավորությամբ, ապա ամբողջ շարունակվող հանցագործությունը որակվում է այն նորմով, որի համար քրեական օրենսգրքով նախատեսված պատիժն առավել խիստ է՝ անկախ նրանից, թե այդ բաղադրիչ արարքը կատարվել է հանցավոր շղթայի սկզբում, մեջտեղում, թե՛ վերջում: Այսպես, օրինակ՝ եթե անձի՝ միևնույն անմիջական օբյեկտի դեմ միասնական դիտավորությամբ կատարված հափշտակություններից երեք դրվագն իրականացվել են գաղտնի եղանակով, երկուսը՝ բացահայտ, իսկ մեկը՝ ավազակության, ապա ամբողջ շարունակվող հանցագործությունը պետք է որակվի առավել խիստ պատասխանատվություն նախատեսող նորմով, այսինքն՝ որպես ավազակություն, անկախ նրանից, թե այդ ավազակության դրվագը շարունակվող հանցագործության հաջորդական արարքներից առաջինն է, երկրորդը, թե՛ վերջինը:

Գործնականում հնարավոր է, որ շարունակվող հանցագործության բաղադրիչ նույնական արարքներից մեկը (մի քանիսը) կատարման ընթացքում վերաճի առավել ծանր միաբնույթ հանցագործության, իսկ հետագա արարքները դարձյալ կատարվեն հետ վերաճած կերպով: Նման իրավիճակներում կատարվածը պետք է որակվի առավել ծանր վերաճած նորմով: Այսպես, օրինակ՝ անձը նպատակադրվում է ամբողջական մետաղական հաստոց պատրաստելու համար պարբերական արարքներով հարևան արտադրամասից գաղտնի հափշտակել դրա դետալները: Մտադրվածն առաջին անգամ հաջողելիս հանցավորը երկրորդ անգամը նկատվում է արտադրամասի պահակի կողմից, և, նրա առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով, հափշտակում է հաստոցի հերթական դետալը: Այնուհետև, օգտվելով առիթից, որ պահակը, ալկոհոլային հարբածության վիճակում քնած է, հերթական անգամ մուտք է գործում արտադրամասի տարածք և դարձյալ գաղտնի հափշտակում մնացած դետալները:

Նկարագրված իրավիճակում հանցավորի միասնական դիտավորությամբ ընդգրկված արարքներից երկուսը կատարվել են գաղտնի հափշտակության եղանակով, այսինքն՝ նույնական են, իսկ մեկը՝ միաբնույթ (կատարվել է ավազակությամբ): Հետևաբար, անկախ նրանից, թե շարունակվող հանցագործության վերաճած դրվագը հետագայում վեր է աճել առավել նվազ միաբնույթ հանցագործության, կատարվածը պետք է որակվի առավել ծանր հանցագործության վերաճած նորմով, այսինքն՝ որպես ավազակություն:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ավանդաբար մասնագիտական գրականության մեջ և իրավակիրառ ոլորտում իշխում էր այն մոտեցումը, որ շարունակվող հանցագործությանը բնորոշ է միայն դիտավորյալ մեղքի ձևը: Արդի շրջանում, սակայն, քրեական իրավունքի տեսության մեջ առանձնացվում է նաև **«անզգույշ շարունակվող հանցագործության»** գաղափարը: Այս առումով ուշագրավ է, որ, ի տարբերություն դիտավորյալ շարունակվող հանցագործության, որի հիմքում ընկած է մեկ նպատակին հասնելու հանցավորի միասնական դիտավորության առկայությունը, անզգույշ շարունակվող հանցա-

գործությունը բնութագրվում է հանցավորի մոտ երևույթի ընկալման միասնական սխալով<sup>71</sup>:

Ասվածը կարելի է մեկնաբանել նաև այն իմաստով, որ անհատի սխալ պատկերացումները երևույթի վերաբերյալ, որի արդյունքում վերջինիս դրսևորած պարբերական վարքագիծը պարունակում է այս կամ այն անզգույշ հանցագործության հանցակազմի հատկանիշները, պետք է դիտվեն որպես մեկ հանցագործություն և որակվեն եզակի բարդ հանցագործության կանոններով՝ անկախ այն հանգամանքից, կատարված արարքներից յուրաքանչյուրը պարունակում է տվյալ հոդվածով նկարագրված անզգույշ հանցագործության հանցակազմի հատկանիշները, թե՛ ոչ: Այսպես՝ պաշտոնեական անփութության դեպքում, երբ ժամանակային որոշակի խզումով անձի դրսևորած մեկից ավելի անզգույշ արարքներից յուրաքանչյուրը պարունակում է ՀՀ քր. օր.-ի 315-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, կատարվածը պետք է որակվի որպես մեկ եզակի բարդ հանցագործություն:

Օրինակ՝ պաշտոնատար անձի կողմից պաշտոնավարման երկու տարիների ընթացքում իրավական ակտերով իր վրա դրված կոնկրետ պարտականությունների՝ նյութական արժեքների պահպանության կանոնների թույլ տրված խախտումների արդյունքում, մի դեպքում, պետությանն անզգույշությամբ պատճառվում է երկու միլիոն, մյուս դեպքում՝ երեք միլիոն, իսկ երրորդ դեպքում՝ հինգ միլիոն ՀՀ դրամ գույքային վնաս: Չնայած նրան, որ ՀՀ քր. օր.-ի 315-րդ հոդվածով նկարագրված հանցագործության առկայության համար անհրաժեշտ է մեկ միլիոն դրամը գերազանցող վնասի առկայությունը (գույքային վնասի դեպքում), և նկարագրված իրավիճակում յուրաքանչյուր դրվագ ինքնուրույն հանցակազմ է պարունակում, այնուամենայնիվ անձի արարքն անհրաժեշտ է դիտել որպես մեկ շարունակվող անզգույշ հանցագործություն, և կատարվածը որակել ՀՀ քր. օր.-ի 315-րդ հոդվածով՝ հանցավորին մեղսագրելով պետությանը տասը միլիոն ՀՀ դրամ գույքային վնաս (ամբողջ վնասը) պատճառելու հանգամանքը:

---

<sup>71</sup> Ст'я Залов А.Ф. Уголовно-правовая характеристика продолжаемого преступления: на соиск. уч. степ. дис. кандидат юрид. наук. Тюмень, 2017, էջեր 88-93:

Միևնույն ժամանակ, պաշտոնեական անփութության դեպքում, երբ որոշակի ժամանակային խզումով ծառայության նկատմամբ անձի անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքը ներկայացնող պարբերական արարքները թեև առանձին-առանձին չեն պարունակում քննարկվող հոդվածով նկարագրված հանցակազմի հատկանիշները, սակայն միասնության մեջ, այնուամենայնիվ, համապատասխանում են ՀՀ քր. օր.-ի 315-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշներին, ապա դրանք պետք է դիտվեն որպես մեկ հանցագործություն և որակվեն նշված հոդվածով: Հակառակ դեպքում խոսք չի կարող գնալ նկարագրված արարքները կատարած անձի քրեական պատասխանատվության մասին, ինչը, մեր կարծիքով, արդարացված չէ:

Օրինակ՝ եթե վերը նկարագրված իրավիճակում պաշտոնատար անձի՝ նյութական արժեքների պահպանության կոնկրետ կանոնների թույլ տրված խախտումների արդյունքում մի դեպքում պետությանն անզուշույթյամբ պատճառվում է երեք հարյուր հազար, մյուս դեպքում՝ հինգ հարյուր հազար, իսկ երրորդում՝ յոթ հարյուր հազար ՀՀ դրամ գույքային վնաս, ապա կատարվածը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի 315-րդ հոդվածով՝ չնայած նրան, որ հանցավորի կատարած արարքներից յուրաքանչյուրն ինքնուրույն վերցրած չեն պարունակում ՀՀ քր. օր.-ի 315-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշներ:

#### **Բ. Տևող հանցագործություններ:**

Տևող հանցագործության՝ որպես եզակի բարդ հանցագործության ինքնուրույն տեսակի իրավաբանական ձևակերպումը ևս ազգային քրեական օրենսդրությունում բացակայում է: Քրեական իրավունքի գիտության մեջ և դատական պրակտիկայում այն հասկացվում է որպես *արարք, որը դրսևորվում է հանրորեն վրանգավոր գործողության կամ անգործության տևական անընդմեջ կատարմամբ*: Տևող հանցագործությունը սկսվում է հանրորեն վտանգավոր գործողության (օրինակ՝ զորամասն ինքնակամ լքելու) կամ անգործության (օրինակ՝ ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելու) կատարմամբ և ավարտվում կա՛մ հանցավորի կամքով և վերջինիս արարքի արդյունքում (մեղայականով ներկայանալով), կա՛մ իրավապահ մարմինների միջամտությամբ (օրինակ՝ հանցա-

վորին բռնելով), կա՛մ այլ հանգամանքների (տարիքը լրանալու և այլն) հետևանքով: Այս հանցագործությունը, ըստ էության, այն գործողությունը կամ անգործությունն է, որն ուղեկցվում է հանցավորի վրա դրված պարտականությունների տևական չկատարմամբ, ինչը բնութագրվում է մեկ տևող հանցագործության հանցակազմի անընդհատ իրականացմամբ:

Տևող հանցագործության էության և հատկանիշների բացահայտման համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ տևականորեն կարող են իրականացվել ինչպես չավարտված (օրինակ՝ հանցագործությանը տևական ժամանակով պատրաստվելը, պլաններ մշակելը, տեղեկություններ ձեռք բերելը և այլն), այնպես էլ ավարտին հասցված հանցագործությունները: Հանցակազմի իրականացման տևականությունը չպետք է հասկանալ այնպես, թե իբր հանրորեն վտանգավոր հետևանքները վրա չեն հասել:

Բարդ հանցագործության քննարկվող տեսակի առանձնահատկությունն այն է, որ *ավարտված հանցագործության փուլում այն շարունակում է կատարվել, փրկում է, բուն հանցավոր արդյունքը ձգվում է ժամանակի ընթացքում և փարածության մեջ՝ արդեն իսկ վրա հասած արդյունքում*: Ուստի, ինչ ժամանակահատվածում էլ՝ ուշ կամ շուտ, դադարի պարտականությունների կատարումից խուսափելը, հանցագործությունը համարվում է ավարտված: Պետք է նկատել, որ այս հանգամանքը կարևոր նշանակություն ունի հանցագործության իրավաբանական և փաստացի ավարտի պահերի տարբերակման, ինչպես նաև հանցագործությունից կամովին հրաժարման հնարավորության հարցը լուծելու տեսանկյունից:

«Քրեական օրենսգրքի վերլուծությունը հիմք է տալիս տևող հանցագործությունները բաժանել հետևյալ խմբերի.

- 1) հանցանքներ, որոնց կատարումը կապված է անձի կողմից պարտականությունները կատարելուց հրաժարվելու հետ,
- 2) հանցանքներ, որոնց կատարումը կապված է շրջանառությունից հանված կամ սահմանափակ շրջանառությամբ իրերի ապօրինի շրջանառության հետ,
- 3) հանցանքներ, որոնց կատարումը կապված է անձին ազատությունից ապօրինի զրկելու հետ:

Քրեական իրավունքի տեսության մեջ կարծիք է արտահայտվել, որ տևող հանցագործությունները որևէ աղերս չունեն հանցավոր արարքների բազմակիության հետ: Ասվածը բացատրվում է այն իրողությամբ, որ տվյալ հանցագործություններում պարտականությունների կատարումից խուսափելը կազմող մեկ ակտը, որը ձգվում է ժամանակի մեջ, երբեմն տարածության վրա, չի կարող ձևավորել բազմակիություն<sup>72</sup>:

Այս առումով հարկ է նկատել, որ, անշուշտ, տևող հանցագործությունը բնութագրող համապատասխան հանցակազմի տևական իրականացումը նշանակում է, որ այն կատարող անձը չի իրականացնում կրկնակի հանցավոր գործողություն (անգործություն): Մինչդեռ տևող հանցագործության այդ առանձնահատկությունը չի բացառում նրա արտաքին նմանությունը հանցագործությունների բազմակիության հետ (հակառակ դեպքում այն կհամարվեր եզակի պարզ, այլ ոչ եզակի բարդ հանցագործություն):

Իրավակիրառության ոլորտում հանցագործությունների բազմակիությունից տևող հանցագործությունը տարանջատելու անհրաժեշտությունը, որպես կանոն, առաջ է գալիս այն իրավիճակներում, երբ տևող հանցագործության *ավարտից* կամ դրա համար *դատապարտվելուց* հետո, անձը *շարունակում է* իրականացնել նույն հանցավոր գործունեությունը: Այսինքն՝ հանցավորի ձերբակալումից կամ դատապարտումից հետո վերջինս շարունակում է փաստացի իրականացնել տևող համարվող հանցագործության օբյեկտիվ կողմը: Այն դեպքում, երբ տևող հանցագործության *փաստացի* ավարտից հետո, հանցավորը դարձյալ շարունակում է իրականացնել օբյեկտիվ կողմի բովանդակությունը կազմող այս կամ այն գործողությունը (անգործությունը), տվյալ փաստը պետք է արժանանա լրացուցիչ քրեաիրավական գնահատականի: Օրինակ՝ երբ դատալիքը մեկ շաբաթ անցնելուց հետո ներկայանում է զորամաս, ինչից մեկ ամիս անց կրկին կատարում է դատալքություն:

Տվյալ խնդիրն առավել սրվում է, երբ հանցավորը բռնվելուց կամ այդ հանցագործության համար դատապարտվելուց հետո ևս շարու-

---

<sup>72</sup> Ст'ю Севастьянов А.П., Козлов А.П. Единичные и множественные преступления. СПб: Юрид центр пресс, 2011, էջ 83:



նակում է իրականացնել տևող հանցագործության օբյեկտիվ կողմը: Այսինքն՝ երբ փաստացի չի դադարեցվում տևող հանցագործության իրականացումը: Այսպես, օրինակ՝ անձը հանցավոր համագործակցությանը մասնակցելու համար դատապարտվելուց հետո չի դադարեցնում իր մասնակցությունն այդ համագործակցությանն անգամ ազատագրվման ձևով պատժի կրման ընթացքում:

Ասվածի կապակցությամբ հարկ է արձանագրել, որ անձի ձերբակալումը կամ վերջնական դատապարտումը ոչ միշտ են, որ հանգեցնում են տևող հանցագործության փաստացի ավարտման: Երբեմն օրենսգրքերում կամ դատական պրակտիկայում կիրառվում է, այսպես կոչված, իրավաբանական ֆիկցիա այն նպատակով, որ պեսզի այդպիսի հնարավոր լինի որոշելու տևող հանցագործության ավարտի պահը:

Այդ պահը, ինչպես արդեն նշվել է, սովորաբար կապվում է անձի բռնվելու, մեղայականով ներկայանալու կամ այլ հանգամանքների ուժով արարքը դադարելու հետ: Մինչդեռ հարց է առաջանում՝ այն դեպքում, երբ անձը բռնվելուց հետո շարունակում է իրականացնել տևող հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող այս կամ այն արարքը, ապա այն պե՞տք է արժանանա ինքնուրույն քրեաիրավական գնահատականի, թե՞ ոչ:

Ասվածը ցայտուն դրսևորվում է ՀՀ քրեական օրենսգրքի 223.1 հոդվածով նկարագրված հանցագործության օբյեկտիվ կողմի այն դրսևորման կապակցությամբ, որն է *քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ պահպանելը*: Առավել ևս, ենթադրվում է, որ գործնականում քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ պահպանող անձը բռնվելուց, նույնիսկ, այդ արարքի համար դատապարտվելուց հետո և պատիժը կրելու ընթացքում ևս հնարավոր է շարունակի պահպանել այդ կարգավիճակը:

Այս առումով մասնագիտական գրականությունում կարծիք է արտահայտվել, որ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ պահպանելը տևող հանցագործության յուրահատուկ դրսևորում է, որն ավարտվում է կա՛մ այդ կարգավիճակից անձին զրկելով (օրինակ՝ «օբչակի» գումարները ոչ նպատակային ծախսելու, իրեն վստահված տարածքում կարգուկանոն չհաստատելու հա-

մար նման կարգավիճակից կարգազուրկ արվելու հետևանքով), կա՛մ այն պահպանելու համար նրա վերաբերյալ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելով՝ մինչև դատվածությունը մարվելը կամ հանվելը: Վերջին դեպքում, եթե պարզվում է, որ այդ արարքի համար պատիժ կրող անձը քրեակատարողական հիմնարկում կատարել է «քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող» հասկացությանը բնորոշ գործողություններ, ապա նա ենթակա է պատասխանատվության ոչ թե դարձյալ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակը պահպանելու, այլ այդ արարքների համար: Օրինակ՝ եթե քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակը պահպանելու համար դատապարտված «օրենքով գողը» պատիժը կրելու ընթացքում կազմակերպի քրեական ենթամշակույթ կրող խմբավորման («գողական աշխարհի») հավաք կամ մասնակցի դրան, ապա քրեական պատասխանատվության կենթարկվի ՀՀ քր. օր.-ի 223.3-րդ հոդվածի 1-ին մասով՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու համար<sup>73</sup>:

Վերոգրյալից կարելի է ենթադրել, որ, հեղինակի կարծիքով, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակը պահպանելու համար դատապարտված անձը չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության այդ նույն կարգավիճակը շարունակ պահպանելու համար՝ մինչև նախորդ արարքի համար վերջինիս դատվածությունը մարվելը կամ հանվելը:

Այս մոտեցմանը, սակայն, դժվար է համաձայնել: Բանն այն է, որ հանցանքի համար անձի չհանված կամ չմարված դատվածությունը չի կարող բացառել տևող հանցագործության օբյեկտիվ կողմի շարունակական իրականացման համար անձի քրեական պատասխանատվությունը: Դեռ ավելին՝ տևող հանցագործության համար անձի պատիժը կրելու հանգամանքը ևս չի կարող խոչընդոտ հանդիսանալ տվյալ անձի կողմից այդ հանցանքի հետագա իրականացումը քրեաիրավական գնահատականի արժանացնելու համար:

---

<sup>73</sup> Տե՛ս Բիշարյան Կ. Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը: Գիտագործական մեկնաբանություններ: Եր.: Արդարադատության ակադեմիայի հրատ., 2020, էջեր 16-17:

Միևնույն ժամանակ հարկ է արձանագրել, որ տևող հանցագործության համար անձի դատապարտումը չի հանում քրեաիրավական պաշտպանության օբյեկտը հանցավոր իրադրության սահմաններից այն դեպքերում, երբ հանցավորը ոչ թե դադարեցնում, այլ շարունակում է այդ տևող հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող այս կամ այն գործողության (անգործության) անընդհատ իրականացումը<sup>74</sup>: Բացի այդ, անձի դատապարտումը չի զրկում տևող հանցագործության հետագա իրականացումն իր ինքնուրույն հանցավոր նշանակության բնույթից, ինչը պահանջում է լրացուցիչ որակում:

Նկարագրված իրավիճակներում, կարծում ենք, իրավակիրառողները պետք է ղեկավարվեն այն կանոնով, որ *տևող հանցագործության համար ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռը՝ որպես իրավաբանական ֆիկցիա, ավարտում է այդ հանցագործության տևականությունը, իսկ դրանից հետո անձի փաստացի գործողություններն՝ ուղղված այդ հանցանքը շարունակելուն, պետք է գնահատվեն որպես ինքնուրույն հանցագործություն*: Այս կանոնի հիմքում ընկած է այն գաղափարը, որ տևող հանցագործությունը դադարեցնող իրավաբանական փաստը՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, ամեն առումով (ինչպես իրավաբանորեն, այնպես էլ փաստորեն) ավարտում է տևող հանցագործությունը:

Դրանով պայմանավորված՝ տվյալ հանցագործությունը դադարեցվելու, այդ թվում՝ այդ հանցագործության համար դատապարտվելուց հետո տևող հանցագործության շարունակական իրականացումը պետք է արժանանա ինքնուրույն քրեաիրավական գնահատականի: Միաժամանակ, քրեական մեղադրանքը բովանդակող դատավարական փաստաթղթերում անձի կողմից իրականացված տևող հանցագործության ամբողջ ժամանակահատվածը պետք է ստանա իր իրավաբանական ամրագրումը: Իսկ վերջինիս դատապարտումից հետո այդ արարքի շարունակական իրականացման

---

<sup>74</sup> Հանցավոր իրադրության անընդհատության՝ որպես տևող հանցագործության հատկանիշի մասին տե՛ս Ораздурдыев А.М. Эволюция учения о едином преступлении в уголовном праве. М.: Юрлит., 2020, էջեր 361-414:

պարագայում խոսք կգնա ոչ թե նույն, այլ նոր արարքի մասին, որը պետք է որակվի առանձին<sup>75</sup>:

Վերոգրյալ կանոնը կիրառելի է նաև այն դեպքում, երբ պարտավոր անձը հրաժարվում է կատարել դատական ակտը՝ դրանում նշված ժամանակահատվածի ավարտից հետո: Օրինակ՝ ծնողի կողմից երեխային կամ տասնութ տարին լրացած անաշխատունակ զավակին դատարանի վճռով ապրուստի միջոցներ վճարելուց երեք ամսից ավելի չարամտորեն խուսափելու համար քրեական պատասխանատվության ենթարկվելուց հետո անձի կողմից իր զավակին նույն ժամանակահատվածում ապրուստի միջոցներ վճարելուց կրկին խուսափելը պետք է արժանանա լրացուցիչ քրեաիրավական գնահատականի:

Այս կապակցությամբ գտնում ենք, որ անհրաժեշտ է քրեական օրենքով հստակ ամրագրել տևող հանցագործությունը դադարեցնող հանգամանքները (դադարելու պահը), ինչը թույլ կտա իրավակիրառողին ճշգրիտ կողմնորոշվել, և կատարվածն արժանացնել հստակ քրեաիրավական գնահատականի:

Այսպիսով, կարելի է ձևակերպել տևող հանցագործության որակման հետևյալ կանոնը. *քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով նախատեսված իրավաբանորեն ավարտված գործողության (անգործության) տևական կատարումը կազմում է եզակի տևող հանցագործություն: Եթե համապատասխան գործողությունները (անգործությունը) փաստացի չեն դադարեցվում մեղավորի դատապարտումից հետո, ապա դրանք որակվում են որպես ինքնուրույն հանցագործություն:*

#### **Գ. Վերաճող հանցագործություններ:**

Քրեական իրավունքի գիտությանը և դատական պրակտիկային վաղուց հայտնի է, որ հանցավորի դիտավորության վերափոխման արդյունքում մի հանցագործությունը կատարման ընթացքում կարող

---

<sup>75</sup> Այս կապակցությամբ անհրաժեշտ է, որ նախաքննական մարմինն անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման և մեղադրական եզրակացության մեջ, իսկ դատարանը՝ դատավճռում, հստակ արձանագրեն այն կոնկրետ ժամանակահատվածը (տարին, ամիսը, օրը, ժամը), երբ սկսվել և երբ ավարտվել է տևող համարվող հանցագործությունը:

է վերաճել մեկ այլ, որպես կանոն, առավել ծանր հանցագործության: Նշված հանցագործությունը բարդ է, քանի որ կատարվում է մի քանի իրար հաջորդող հանցավոր արարքներով, ինչն առաջ է բերում էական նմանություն հանցագործությունների բազմակիության հետ: Դրանով պայմանավորված՝ դատական պրակտիկայում հանցագործությունների որակման որոշ սխալներ ի հայտ են գալիս վերաճող հանցագործությունները հանցագործությունների բազմակիությունից տարանջատելիս:

Վերաճող հանցագործությունները՝ որպես եզակի դիտելու առաջնահերթ նախապայմանը սկզբնական և վերաճած հանցանքների միջև սուբյեկտիվ կապի առկայությունն է՝ արտահայտված միասնական դիտավորությամբ, որը թեև հանցավոր գործունեության ընթացքում վերաճում է մեկ այլ հանցագործության, այնուհանդերձ մնում է միասնական: Այլ խոսքով՝ վերաճած հանցագործության կատարումը ոչ թե նոր առաջացած դիտավորության հետևանք է, այլ սկզբնական դիտավորության բովանդակության և ուղղվածության փոփոխության արդյունք:

Որոշակիացման գործընթացում կոնկրետ տեսակի վնաս պատճառելու դիտավորությունը, անձի գիտակցությամբ և կամքով պայմանավորված, վերափոխվում է մեկ այլ (առավել կամ նվազ վտանգավոր) վնաս պատճառելու վճռականության, որն արտահայտվում է անձի վարքագծում և առաջացնում դրան քրեաիրավական գնահատական տալու անհրաժեշտություն:

Հարկ է նկատել, որ դիտավորության նման շարժընթացը կարող է պայմանավորված լինել ինչպես անձնային գործոններով, այնպես էլ իրադրության փոփոխությամբ: Մասնավորապես, գողություն կատարելու դիտավորությունը կողոպուտի վերաճելը, որպես կանոն, դետերմինացվում է հանցանք կատարելու իրադրությամբ (օրինակ՝ հափշտակություն կատարելու վայրում գույքի սեփականատիրոջ հայտնվելը և այլն): Կամ՝ տուժողի առողջությանը վնաս պատճառելու դիտավորությունը նրան սպանելու դիտավորության կարող է փոխակերպվել տուժողի ագրեսիվության աճով կամ վերջինիս սահիստական հակումներով պայմանավորված: Դիտավորության բովանդակության փոփոխությունը նշված իրավիճակներում շարունակում է մնալ միասնական, ինչը վկայում է սկզբնական և վերջնական

հանցավոր արարքների միջև սերտ փոխկապակցվածության մասին, և բացառում կատարվածի որակումը որպես բազմակի հանցագործություններ:

Հարկ է արձանագրել, սակայն, որ հանցավոր գործունեության շարժընթացում անձի կողմից մեկ հանցագործություն սկսելով այլ հանցանք կատարելը կարող է գնահատվել որպես «վերաճում» միայն որոշակի նախապայմանների առկայության պարագայում: Այսպես՝ վերաճող հանցագործությունների էության և բնույթի ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել այն ընդհանուր նախապայմանները, որոնց համաժամանակյա առկայության դեպքում, միայն, արարքը կարող է գնահատվել որպես մեկ վերաճած հանցագործություն: Դրանք հանգում են հետևյալին.

1. Քանի որ վերաճող հանցագործության հիմքում ընկած է դի-նամիկ զարգացող դիտավորությունը, այս հանցագործություններին բնորոշ կարևոր հատկանիշ է *ինչպես սկզբնական, այնպես էլ հետագա հանցավոր գործունեության դիտավորյալ բնույթը*: Եթե դիտավորյալ հանցագործությունը հանգեցնում է լրացուցիչ ծանր հետևանքների, որոնց նկատմամբ հանցավորը դրսևորում է անզգույշ մեղքի ձև, ապա վերաճած հանցագործության մասին խոսք չի կարող գնալ: Այս իրավիճակներում մենք գործ ենք ունենում ոչ թե դիտավորության վերափոխման, այլ, այսպես կոչված, «մեղքի երկու ձևով» կատարվող հանցագործությունների հետ, որոնց պարագայում սկզբնական հանցագործության դիտավորությունը և օժանդակ հետևանքների նկատմամբ դրսևորված անզգույշ մեղքի ձևը կրում են ինքնուրույն նշանակություն:

Ընդ որում, դիտավորության վերափոխումից հարկ է տարբերել սկզբնական դիտավորությանը նոր հանցանք կատարելու «*դիտավորության միացումը*»: Այսպիսի «միացումը» հիմնականում տեղի է ունենում երկու իրավիճակներում: Առաջին՝ սկզբնական հանցանքը կատարելիս կարող են ի հայտ գալ այնպիսի խոչընդոտներ, որոնք *հաղթահարելու համար հանցավորը կատարում է նոր հանցագործություն* (հանցանքը, որն իրականացվում է այլ հանցանքի կատարումը հեշտացնելու նպատակով): Երկրորդ՝ նոր հանցագործությունը կատարվում է *սկզբնական հանցանքը թաքցնելու նպատակով* (հանցանքը, որն իրականացվում է այլ հանցանքը թաքցնելու նպա-

տակով): Նշված դեպքերում բացակայում է հանցագործությունների վերաճումը, և կատարված արարքները կրում են ինքնուրույն քրեաիրավական նշանակություն:

2. *Դիտավորության վերափոխում հնարավոր է մինչև սկզբնական հանցագործության փաստացի ավարտի պահը:* Այս հետևությունը պաշտպանվում է դատական պրակտիկայում, որն, առանձին դեպքերում, թույլ է տալիս վերաճում նաև իրավաբանորեն ավարտված հանցագործությունների դեպքում: Օրինակ՝ անձի առողջությանը դիտավորությամբ միջին ծանրության վնաս պատճառելը կարող է վերաճել սպանության դիտավորության, նույնիսկ, երբ առաջացել են սկզբնական հանցագործության՝ ՀՀ քր. օր.-ի 113-րդ հոդվածով նախատեսված հանրորեն վտանգավոր հետևանքները:

3. *Սկզբնական և հետագա հանցագործության միջև ժամանակային խզման բացակայությունը կամ աննշան լինելը:* Վերաճող հանցագործության այս հատկանիշը կարևոր տարբերակիչ է, որին պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձվի: Հանցագործության ընթացքում հանցավորի փոխակերպված դիտավորությունն իրականացվում է անմիջապես՝ դրա նոր ձեռք բերած ուղղվածության և բովանդակության համապատասխան: Սկզբնական և հետագա հանցագործության միջև ժամանակային խզման բացակայությունը կամ աննշան լինելը այն կարևոր ցուցիչն է, որը վկայում է հանցավորի սկզբնական դիտավորության վերափոխման, այլ ոչ սկզբնականի հետ չկապված նոր դիտավորության ձևավորման մասին:

4. *Մեկ հանցագործության վերաճումը մեկ ուրիշի հնարավոր է այն դեպքում, երբ ինչպես սկզբնական, այնպես էլ հետագա հանցագործությունները միասնականորեն ուղղված են միևնույն առարկայի կամ միևնույն փուժողի դեմ:* Հետևաբար, երբ հանցավորը ծեծում է մեկ անձի, այնուհետև հանկարծակի ծագած դիտավորության իրականացման արդյունքում մեկ ուրիշի առողջությանը դիտավորությամբ պատճառում է ծանր վնաս, վերաճումը բացակայում է, և կատարվածը ձևավորում է հանցագործությունների համակցություն:

Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ առանձին դեպքերում դիտավորությունը կարող է վերափոխվել ոչ միայն միևնույն տուժողին պատճառված վնասի աստիճանով, այլև հենց տուժող-

ների քանակով պայմանավորված: Օրինակ՝ երբ մեկ անձի սպանությունը կատարման ընթացքում վեր է աճում երկու կամ ավելի անձանց սպանության: Այս դեպքում կատարվածը որակելիս անհրաժեշտ է ղեկավարվել նաև տուժողների բազմաթվությամբ հանցագործությունների որակման կանոններով:

5. *Վերաճող հանցագործությունը կատարման ընթացքում ուրնձգում է միևնույն օբյեկտի, ընդ որում, որպես կանոն, միևնույն անմիջական (օրինակ՝ հասարակ կողոպուտը վեր է աճում առանձնապես խոշոր չափերի կողոպուտի) կամ տեսակային (օրինակ՝ ծեծը վեր է աճում առողջությանը դիտարկությամբ ծանր վնասի պատճառման) օբյեկտի դեմ:* Եթե հանցագործության կատարման ընթացքում, մի տեսակային օբյեկտի դեմ ոտնձգելուց հետո, հանցավորի մեջ առաջանում է միանգամայն այլ տեսակային օբյեկտի մեջ մտնող հասարակական հարաբերությունների դեմ ոտնձգելու դիտարկություն, ապա կատարվածն անհրաժեշտ է որակել հանցագործությունների համակցությամբ:

6. *Հանցագործությունը համարվում է եզակի վերաճող հանցագործություն այն դեպքում, երբ նվազ ծանր հանցագործությունը վեր է աճում առավել ծանր հանցագործության:* Սկզբնական և վերաճած հանցագործությունների հանրային վտանգավորության ձևական ցուցիչը, ընդհանուր առմամբ, համապատասխան քրեաիրավական նորմի սանկցիան է: Պետք է արձանագրել, սակայն, որ որոշ դեպքերում նորմի սանկցիան չի տալիս սկզբնական և հետագա հանցագործությունների համեմատելի վտանգավորության ճշգրիտ պատկերը (խոսքը վերաբերում է տվյալ հանցագործությունների դեպքում վերաճած հանցագործության վտանգավորության գնահատմանը): Այսպես, օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 176-րդ և 183-րդ հոդվածների սանկցիաների համեմատական վերլուծությունից կարելի է ենթադրել, որ առանց հափշտակելու նպատակի ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալը ծանրացնող հանգամանքներով կատարելն առավել վտանգավոր է, քան հասարակ կողոպուտը:

Վերաճող հանցագործությունները որակելիս սկզբնական և հետագա հանցագործությունների համեմատելի ծանրությունների



գնահատումը անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հանգամանքների հաշվառմամբ.

- սկզբնական և հետագա հանցանքների հանրային վտանգավորությունը պետք է գնահատվի՝ անկախ այս կամ այն ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքի առկայությունից կամ բացակայությունից,
- սկզբնական և հետագա հանցանքների հանրային վտանգավորությունը պետք է գնահատվի բոլոր կողմերից, չկոնկրետանալով միայն ձևական ցուցիչների վրա (նորմի սանկցիայի),
- նաև այլ հանգամանքներ, որոնցով կարելի է գնահատել այդ հանցանքների համեմատելի վտանգավորությունը:

Այսպիսով՝ վերոգրյալի հաշվառմամբ կարելի է ձևակերպել վերաճող հանցագործության որակման հետևյալ կանոնը. *վերաճող հանցագործությունը մեկ միասնական բարդ հանցագործության տեսակ է, որն առաջ է գալիս, երբ մի հանցագործությունը կատարման ընթացքում վերաճում է մեկ այլ, որպես կանոն, առավել ծանր հանցագործության, որոնց միջև ժամանակային խզումը բացակայում է կամ լինում է աննշան: Այդ հանցագործությունները կատարվում են մեկ միասնական դիտավորությամբ, ոտնձգում են, որպես կանոն, միևնույն անմիջական օբյեկտի դեմ և որակվում են որպես մեկ ամբողջական եզակի հանցագործություն:*

#### **Դ. Տուժողների բազմաթվությամբ հանցագործություններ:**

Հազվադեպ չեն դեպքերը, երբ անձի մեկ հանցավոր գործունեության հետևանքով վնաս է պատճառվում երկու կամ ավելի անձի: Դրանով պայմանավորված՝ քրեական օրենսգրքի Հատուկ մասի մի շարք հոդվածներում «հանցանքը երկու կամ ավելի անձի նկատմամբ կատարելու» հանգամանքը օրենսդրի կողմից նախատեսվել է որպես հանցակազմի որակյալ կամ առավել որակյալ հատկանիշ (օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 104-ի, 112-ի, 113-ի, 119-ի 2-րդ մասերի 1-ին կետեր, հոդված 123-ի 3-րդ մասի 1-ին կետ և այլն): Նշված դեպքերում տուժողների բազմաթվությամբ հանցագործությունները ձեռք են բերում եզակի բաղկացական հանցագործության հատկանիշներ (այս մասին առավել մանրամասն կխոսվի հետագայում):

Այս կապակցությամբ հարկ է արձանագրել, որ, եթե «հանցանքը երկու կամ ավելի անձի նկատմամբ կատարելը» նախատեսված է Հատուկ մասի հոդվածում որպես հանցակազմի հատկանիշ (որակյալ, առավել որակյալ), ապա անձի կողմից միասնական դիտավորությամբ մեկից ավելի արարքներով տվյալ հանցագործության կատարումը ձեռք է բերում շարունակվող հանցագործության բնութագիր, ինչը բացառում է ընդհանուր նպատակին ուղղված արարքները համակցությամբ որակելու հնարավորությունը: Միևնույն ժամանակ, շարունակվող հանցագործության հատկանիշների (օրինակ՝ միասնական դիտավորության և ընդհանուր նպատակի) բացակայության պայմաններում տվյալ հանցագործությունները կազմող յուրաքանչյուր արարք պետք է արժանանա ինքնուրույն քրեաիրավական գնահատականի:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ այս մոտեցումը քննադատվել է հանցագործությունների որակման ընդհանուր տեսության մեջ: Մասնավորապես, Ա.Վ.Կորնեևան գտնում է, որ անկախ հանցավորի միասնական դիտավորության առկայությունից կամ բացակայությունից՝ մեկ կամ մի քանի արարքներով «երկու կամ ավելի անձանց նկատմամբ» կատարված հանցագործությունը պետք է որակվի միայն քր. օր.-ի Հատուկ մասի հոդվածի համապատասխան մասով նախատեսված այդ ծանրացնող հատկանիշով: Քանի որ այդ հատկանիշն, ըստ հեղինակի, օրենսդրորեն հաշվի առնված համակցություն է, ուստի՝ չպետք է գնահատվի միասնական դիտավորության և նպատակի ընդհանրության հանգամանքը<sup>76</sup>:

Ըստ Կորնեևայի, հանցանքը երկու կամ ավելի անձանց նկատմամբ կատարելը՝ որպես հանցակազմի որակյալ հանգամանք, անձին կարող է մեղսագրվել ինչպես այն պարագայում, երբ երկու անձանց նկատմամբ կատարված հանցագործությունն ընդգրկված է եղել անձի միասնական դիտավորությամբ, այնպես էլ այդպիսի դիտավորության բացակայության դեպքում: Դրանով պայմանավորված՝ հնարավոր են հետևյալ իրավիճակները.

1) մեկ գործողությամբ և միասնական դիտավորությամբ ոտնձգություն է կատարվում երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

---

<sup>76</sup> Ст'у Корнеева А.В. Теория квалификации преступлений. Учебное пособие для магистрантов. М., 2018, էջ 83:

2) միասնական դիտավորությամբ ընդգրկված ինքնուրույն արարքներով ոտնձգություն է կատարվում երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

3) հանցավորի միասնական դիտավորությամբ չընդգրկված ինքնուրույն արարքներով ոտնձգություն է կատարվում երկու կամ ավելի անձանց նկատմամբ:

Առաջին իրավիճակում նկարագրված է օրենսդրորեն հաշվի առնված իդեալական համակցություն, իսկ մյուս երկու իրավիճակները վերաբերում են օրենսդրորեն հաշվի առնված իրական համակցության դեպքերին: Հետևաբար, անկախ միասնական դիտավորության առկայությունից կամ բացակայությունից՝ «երկու կամ ավելի անձանց նկատմամբ» կատարված հանցագործությունը պետք է որակվի միայն քր. օր.-ի Հատուկ մասի հոդվածի համապատասխան մասով նախատեսված այդ ծանրացնող հանգամանքով<sup>77</sup>:

«Հ դատական պրակտիկան ևս պաշտպանում է այդ մոտեցումը: Այսպես՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը, Արսեն Արծրունու վերաբերյալ 15.02.2013թ. թիվ ԵԷԴ/0126/13/11 գործով կայացրած որոշմամբ վերլուծության ենթարկելով հանցագործությունների բազմակիության քրեաիրավական ինստիտուտը, իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «(...) «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ի ՀՕ-143-Ն օրենքի ընդունումից հետո գործող ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով՝ հանցագործությունների համակցություն է հանդիսանում միևնույն հոդվածով կամ հոդվածի միևնույն մասով (մասերով) կամ կետով (կետերով) նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմում հանցանքը երկու կամ ավելի անձանց նկատմամբ կատարված լինելու հանգամանքը նախատեսված է որպես հանցակազմի որակյալ հատկանիշ: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ որպես երկու կամ ավելի անձանց սպանություն պետք է որակվեն ինչպես սուբյեկտիվ կողմից մեկ միասնական դիտավորության մեջ ընդգրկված երկու կամ ավելի անձանց սպանության, այնպես էլ սու-

<sup>77</sup> Տե՛ս Корнеева А.В. Теория квалификации преступлений, էջ 84:

բյեկտիվ կողմից միմյանց հետ չկապված դիտարկողությամբ կատարված երկու կամ ավելի անձանց սպանության (այլ կերպ ասած՝ նախկինում սպանություն կատարած անձի կողմից նոր սպանություն կատարելու) դեպքերը, եթե դրանցից ոչ մեկի համար անձը դատարարված չի եղել»: Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը արձանագրել է, «որ արարքը չի կարող գնահատվել որպես երկու կամ ավելի անձանց սպանություն մասնավորապես այն դեպքում, եթե դրան նախորդել կամ հաջորդել է սպանության արտոնյալ հանցակազմը (<< քրեական օրենսգրքի 105-րդ, 106-րդ, 107-րդ, 108-րդ հոդվածներ): Նման դեպքում արարքները ենթակա են ինքնուրույն որակման»<sup>78</sup>:

Հարկ է նշել, սակայն, որ դժվար է միանշանակ համաձայնել ներկայացված մոտեցմանը, քանզի այն, ըստ մեզ, հղի է խիստ վիճահարույց մի շարք պահերով: Մասնավորապես, երբ երկու կամ ավելի անձանց նկատմամբ հանցանքները կատարվում են միասնական դիտարկողությամբ չընդգրկված տարբեր արարքներով, ապա դրանք զրկվում են ներքին փոխկապվածությունից, որը, ինչպես արդեն նշվել է, հանդես է գալիս որպես եզակի հանցագործության անխզելի հատկանիշ: Ինչպես այդ կապակցությամբ արդարացիորեն նկատում է ակադեմիկոս Վ.Ն.Կուդրյավցևը, եզակի հանցագործության կարևորագույն հատկանիշ է այն, որ դրա տարրերը, որքան էլ որ միմյանցից տարբերվեն, միևնույնն է, դրանք անպայմանորեն գտնվում են ներքին փոխկապվածության մեջ<sup>79</sup>:

Ասվածից հետևում է, որ յուրաքանչյուր դեպքում ինքնուրույն ծագած դիտարկողությամբ տարածամանակյա արարքներով տարբեր անձանց նկատմամբ հանցավոր ոտնձգությունների դեպքում գործ ենք ունենում ոչ թե եզակի, այլ ինքնուրույն հանցագործությունների հետ, որոնց կապող միակ ընդհանուր հատկանիշը՝ դրանք միևնույն սուբյեկտի կողմից կատարվելն է: Այլ չափանիշ, որը կմխավորի այդ հանցանքները՝ հաղորդելով դրանց ներքին միասնություն, ասվածի պարագայում բացակայում է, ինչն, իր հերթին, քրեաիրավական

<sup>78</sup> Տե՛ս << Վճռաբեկ դատարանի՝ Ա.Արծրունու վերաբերյալ 15.02.2013թ. թիվ ԵԷԴ/0126/13/11 գործով որոշման կետ 24-ը:

<sup>79</sup> Տե՛ս Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений. М.: Юристъ, 2001, էջեր 239-240:

տեսանկյունից բացառում է կատարվածը գնահատել որպես եզակի հանցագործություն:

Վերոգրյալ համատեքստում անհրաժեշտ է արձանագրել, որ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմում հանցանքը երկու կամ ավելի անձանց նկատմամբ կատարելը նախատեսված լինելու հանգամանքը հանցագործությունների համակցությունը բացառողների շարքին դասելու իրավաչափ հիմքերը բացակայում են: Բանն այն է, որ կատարվածը քննարկվող ծանրացնող հանգամանքով որակելու համար այդ հանցագործությունների տարրերի միջև պետք է առկա լինի ներքին (սուբյեկտիվ) փոխկապվածություն, ինչը միմյանց հետ չկապված դիտավորությամբ տարաժամանակյա արարքներով կատարվելու դեպքում, անշուշտ, բացակայում է:

Պրակտիկայում հանցագործությունների որակման խնդիրն առավել է բարդանում, երբ անձի մեկ արարքով կամ ինքնուրույն արարքներով ոտնձգություն է կատարվում երկու կամ ավելի անձանց նկատմամբ, և այն հանցակազմում, որի հատկանիշներին համապատասխանում է հանցավորի արարքը, «հանցանքը երկու կամ ավելի անձանց նկատմամբ» կատարելը նախատեսված չէ որպես հանցակազմի հատկանիշ (որակյալ, առավել որակյալ): Օրինակ՝ երբ կատարվում է երկու կամ ավելի անձի բռնաբարություն կամ հանցավորը քրեական պատասխանատվության տարիքի հասած երկու կամ ավելի անչափահասի միաժամանակ ներգրավում է հանցանքի կատարմանը և այլն:

Այս դեպքերի առնչությամբ մասնագիտական գրականության մեջ առաջարկվել է ընդունել հանցագործությունների որակման այն թեզը, համաձայն որի՝ եթե քրեական օրենքի Հատուկ մասի հոդվածը «հանցանքը երկու կամ ավելի անձանց նկատմամբ» կատարելը չի նախատեսում որպես հանցակազմի որակյալ հատկանիշ, ապա կատարվածը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե հանցանքը երկու կամ ավելի անձանց նկատմամբ կատարելն ընդգրկված է եղել հանցավորի միասնական դիտավորությամբ և եղե՞լ է ընդհանուր նպատակի արդյունք, թե՞ ոչ:

Նշված հանցագործությունների պարագայում, երբ անձը միասնական դիտավորությամբ չընդգրկված ինքնուրույն արարքներով

նունձգություն է կատարում երկու կամ ավելի անձանց նկատմամբ, ապա եզակի բարդ հանցագործության հատկանիշները բացակայում են, իսկ կատարվածը կազմում է հանցագործությունների համակցություն: Օրինակ՝ կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում Ա-ն Բ-ի առողջությանը պատճառում է թեթև վնաս, իսկ երկու օր հետո շահադիտական դրդումներով թեթև վնաս է պատճառում նաև Գ-ի առողջությանը: Նկարագրված իրավիճակում Ա-ի արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ (<< քր. օր.-ի 117-րդ և 117-րդ հոդվածներ) <sup>80</sup>:

Դժվար է համաձայնել տվյալ մոտեցմանը, սակայն, այն իրավիճակներում, երբ անձը մեկ արարքով կամ միասնական դիտավորությամբ ընդգրկված մեկից ավելի արարքներով նունձգություն է կատարում երկու կամ ավելի տուժողների նկատմամբ: Այս կապակցությամբ պետք է նկատել, որ անձի միասնական դիտավորությամբ ընդգրկված մեկ հանցագործությունը չի կարող կազմել համակցություն: Բացի այդ՝ հանցանքը երկու անձի նկատմամբ կատարելու դեպքում, երբ Հատուկ մասի հոդվածում տվյալ հատկանիշը բացակայում է, արարքը հանցանքների համակցությամբ որակելու կանոնի ընդունումը չհիմնավորված նահանջ կլինի շարունակվող հանցագործության գաղափարից:

Միևնույն ժամանակ, այն դեպքերում, երբ «հանցանքը երկու կամ ավելի անձանց նկատմամբ» կատարելը նախատեսված չէ որպես հանցակազմի որակյալ հատկանիշ, կարելի է ասել, որ օրենսդրի կողմից այդ հանգամանքը չի դիտարկվել որպես տվյալ հանցագործության առավել վտանգավոր դրսևորում: Հետևաբար, քանզի այդ հանգամանքին չի տրվել որևէ իրավական նշանակություն, այն չի կարող հիմք հանդիսանալ կատարվածը հանցագործությունների համակցությամբ որակելու համար: Օրինակ՝ հանցավորը միասնական դիտավորությամբ սկզբում կողոպտում է Ա-ին, այնուհետև նրա առջևից գնացող Բ-ին, և եթե նրա արարքում բացակայում են կողոպուտի հանցակազմի այլ ծանրացնող հանգամանքները, ապա վեր-

---

<sup>80</sup> Ст'а Ю.Е. Пудовочкин, К.А. Волков. Проблемы квалификации множественности преступлений (обзор "круглых столов") // Уголовное право, 2015, № 4, էջ 138:

ջինիս արարքը պետք է որակվի որպես հասարակ կողոպուտ (<< քր. օր.-ի 176-րդ հոդվածի 1-ին մաս):

Այս կապակցությամբ Ն.Կ.Սեմերնյովան արդարացիորեն նշում է, որ տվյալ հանցագործության օբյեկտը ուրիշի սեփականությունն է, և այն փաստը, որ այդ գույքը պատկանում է մի շարք անձանց, փոփոխություն չի մտցնում ոտնձգության օբյեկտում: Նկարագրված օրինակում ընդլայնվում է միայն տուժողների շրջանակը (հանցագործության առարկան, այլ ոչ հանցագործության օբյեկտը): Ուստի, կատարվածը պետք է որակվի ոչ թե հանցանքների համակցությամբ, այլ որպես եզակի հանցագործություն: Ընդ որում, այդ հանցանքը երկու անձի նկատմամբ կատարելու հանգամանքը պետք է հաշվի առնվի նաև հանցավորի պատժի և պատասխանատվության անհատականացման հարցը լուծելիս<sup>81</sup>:

Իր հերթին, Վ.Ս.Սավելևը նշում է, որ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հիմնական հանցակազմի դիսպոզիցիաները, որպես կանոն, կառուցված են այնպես, որ դրանցում նկատի է առնվում *մեկ հանցավոր* և *մեկ տուժող*: Այսպես, օրինակ՝ եթե ասվում է՝ կողոպուտն ուրիշի գույքի բացահայտ հափշտակությունն է, ապա ենթադրվում է մեկ կողոպտիչ և մեկ կողոպտվող: Իսկ եթե տուժողները մեկից ավելին են, ապա այդ հանգամանքը պահանջում է լուծել հանցագործությունների համակցության հարցը: Այդպիսի համակցություն առկա է միայն այն դեպքում, երբ գործ ունենք առանձին հանցավոր դեպքերի հետ, որոնք իրար հետ կապված չեն փիլիսոփայական տեսանկյունից, ինքնուրույն են ժամանակի ընթացքում և տարածության մեջ, և այդ դրվագներից ոչ մեկի համար հանցավորը նախկինում չի դատապարտվել: Միևնույն ժամանակ, եթե հանցավորի միասնական դիտավորությամբ ընդգրկված հանցավոր ոտնձգության արդյունքում տուժում են միանգամից մի քանի անձ, ապա հանցագործությունների համակցությունը բացակայում է: Այսպես, օրինակ՝ երբ բնակարանից հափշտակվում են զանազան իրեր, որոնք պատկանում են այնտեղ ապրող տարբեր անձանց, ապա

---

<sup>81</sup> Семернёва Н.К. Квалификация преступлений (части общая и особенная). М.: Проспект, 2015, էջ 128:

հանցագործությունների համակցությունը բացակայում է, իսկ կատարվածը պետք է որակվի որպես եզակի հանցագործություն<sup>82</sup>:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ տուժողների բազմաթվությամբ ոչ բաղկացական հանցագործությունը եզակի բարդ հանցագործության տեսակ է, որի բնութագիրը և քրեաիրավական գնահատականի առանձնահատկությունները դեռևս անհրաժեշտ չափով չեն ստացել իրենց տեսական իմաստավորումը: Ինչպես մյուս եզակի բարդ հանցագործությունները, քննարկվող հանցավոր արարքներն ունեն տարբերակիչ հատկանիշներ, որոնք հանգում են հետևյալին.

1. Հանցավոր ոտնձգության՝ երկու կամ ավելի անձանց նկատմամբ ուղղված լինելը: Այս հատկանիշը չպետք է նախատեսված լինի հանցակազմում որպես որակյալ հատկանիշ (հանցագործությունների բաղկացական կառույցի բացակայություն):

2. Մեկ հանցավոր արարքի արդյունքում երկու կամ ավելի անձի վնաս պատճառելը (այս հասկացության լայն իմաստով), որով այս հանցագործությունը տարբերվում է եզակի շարունակվող հանցագործությունից:

3. Երկու կամ ավելի տուժողներին վնասի պատճառման ներքին փոխկապակցվածությունը, որը որոշվում է<sup>83</sup>

ա) մեկ արարքի և դրա մի քանի հետևանքների միջև պատճառական կապի առկայությամբ (սա համընդհանուր հատկանիշ է, որը բնորոշ է տուժողների բազմաթվությամբ ինչպես դիտավորյալ, այնպես էլ անզգույշ հանցագործություններին),

բ) սուբյեկտիվ փոխկապակցվածությամբ, որը դրսևորվում է հանցավորի միասնական դիտավորության առկայության, երկու կամ ավելի անձանց վնաս պատճառելու ուղղվածության, նպատակի և շարժառիթի միասնության մեջ և այլն (այս չափանիշները հատուկ

---

<sup>82</sup> Տե՛ս Савельева В.С. Основы квалификации преступлений. М.: Проспект, 2015, էջեր 46-47:

<sup>83</sup> Մեր կարծիքով, հանցագործության ներքին միասնությունը պահպանվում է նաև այն պարագայում, երբ հանցավորը միասնական դիտավորությամբ երկու կամ ավելի քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասի ներգրավում է միանգամից մի քանի հանցանքների կատարմանը:



են դիտավորյալ հանցագործություններին): Եթե հանցավորի սկզբնական դիտավորությունն ուղղված է եղել մեկ անձին վնաս պատճառելուն, իսկ մեկ ուրիշին վնասը պատճառվել է անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ, ապա սուբյեկտիվ կապը բացակայում է, ինչով պայմանավորված՝ կատարվածը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ:

4. Դիտավորյալ ոտնձգության դեպքում մի քանի անձանց պատճառված վնասը պետք է լինի *նույնական*: Մինչդեռ անզգուշ հանցագործությունների կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ առկա են երկու իրար հակադիր մոտեցումներ:

Առաջին մոտեցման համաձայն՝ *անզգուշ* հանցագործությունների դեպքում երկու կամ ավելի անձանց պատճառված վնասը կարող է լինել ինչպես նույնական, այնպես էլ *համասեռ* (օրինակ՝ մի անձի առողջությանն անզգուշությամբ ծանր վնաս պատճառելը և մյուս անձին անզգուշությամբ մահ պատճառելը)<sup>84</sup>: Ընդ որում, նշված մոտեցումը պաշտպանում է նաև ՌԴ դատական պրակտիկան<sup>85</sup>:

Մյուս մոտեցման պարագայում, անզգուշ հանցագործությունների դեպքում երկու անձանց վնասի պատճառումը եզակի հանցագործություն որակելը կապված է միայն պատճառված վնասի *նույնական* լինելու հետ: Միևնույն ժամանակ, երբ հանցավորի մեկ կամ մի քանի գործողությունների հետևանքով երկու կամ ավելի անձանց պատճառված վնասները ոչ թե նույնական են, այլ համասեռ կամ տարասեռ, կատարվածը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ<sup>86</sup>:

Մեր կարծիքով, առավել արդարացված է թվում առաջին մոտեցումը: Օրինակ՝ երբ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած ավտոմոբիլի կամ մեխանիկական այլ

---

<sup>84</sup> Տե՛ս, օրինակ՝ Квалификация преступлений: Уч. пособие / Под ред. докт. юрид. наук, проф. К.В. Ображиева и докт. юрид. наук, проф. Н.И. Пикурова. 2-е изд., перераб. и доп. М.: Юрлитинформ, 2019, էջեր 231-232:

<sup>85</sup> Տե՛ս Бюллетень Верховного Суда Российской Федерации, 2009, № 2:

<sup>86</sup> Տե՛ս Корнеева А.В. Теория квалификации преступлений: Учебное пособие для магистрантов. М., 2018, էջեր 81-82:

տրանսպորտային միջոցի վարորդի կողմից ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում միաժամանակ մի անձի առողջությանն անզգուշությամբ պատճառվում է ծանր վնաս, իսկ մյուսը զրկվում է կյանքից, ապա արարքը պետք է որակվի միայն ՀՀ քր. օր.-ի 242-րդ հոդվածի 2-րդ մասով: Իսկ անձի առողջությանն անզգուշությամբ ծանր վնաս պատճառելու փաստը պետք է կլանվի միևնույն հոդվածով նկարագրված առավել ծանր հանցագործությամբ և ինքնուրույն չորակվի, այլ հաշվի առնվի հանցավորի պատժի ու պատասխանատվության հարցը լուծելիս:

Այսպիսով, վերոհիշյալ պայմանների համաժամանակյա առկայության դեպքում երկու կամ ավելի անձանց նկատմամբ միաժամանակյա ոտնձգությունը պետք է որակվի որպես եզակի հանցագործություն: Հակառակ դեպքում կատարվածը ձևավորում է հանցագործությունների համակցություն: Չի կարելի չարձանագրել, սակայն, որ որոշ իրավիճակներում այսպիսի որակումը կարող է խոցելի լինել, քանի որ հնարավորություն չի լինի հանցավորի արարքին տալ այնպիսի քրեաիրավական գնահատական, որը համարժեք պատիժ կենթադրի: Բայցևայնպես, կարծում ենք, որ այդ հակասությունները կարելի է հաղթահարել՝ քրեական օրենսգրքի Հատուկ մասի կոնկրետ հոդվածներում (հոդվածի մասերում կամ կետերում) «հանցանքը երկու կամ ավելի անձի նկատմամբ կատարելու» հանգամանքը նախատեսելով որպես հանցակազմի հատկանիշ:

Ինչպես արդարացիորեն նկատում է Օ.Ս.Կապինուսը, տուժողների բազմաթվությամբ հանցագործությունների որակումը քրեական իրավունքի քիչ ուսումնասիրված հարցերից է: Այդ հարցերի գործնական լուծումները պահանջում են տեսական իմաստավորում, քանզի դրանց վերաբերյալ գիտականորեն հիմնավորված մոտեցումների բացակայությունը խարխլում է պրակտիկայի միասնականությունը և հանգեցնում իրավիճակային, երբեմն չհիմնավորված որակումների<sup>87</sup>:

Ասվածի կապակցությամբ տեսագործնական կարևորությամբ առանձնանում է տուժողների բազմաթվությամբ այն հանցագործու-

---

<sup>87</sup> St'u Капинус О.С. Проблемы квалификации преступлений с множественностью потерпевших // Вестник Академии Генеральной прокуратуры Российской Федерации, 2013, № 6, էջ 31:

թյունների որակումը, որոնց պարագայում հանցավոր ոտնձգության առարկայի դերում հանդես են գալիս տարբեր իրավական կարգավիճակ և բնութագիր ունեցող անձինք: Այլ կերպ ասած՝ ինչպես «ընդհանուր», այնպես էլ «հատուկ» տուժողներ:

Դատական պրակտիկայի և տեսական աղբյուրների ուսումնասիրությունները թույլ են տալիս վեր հանելու հանցագործություններում տուժողների բազմաթվության (քրեաիրավական իմաստով) հետևյալ տարբերակները.

- տուժողների միասեռ բազմաթվություն,
- տուժողների տարասեռ բազմաթվություն:

*Տուժողների միասեռ բազմաթվությունն* այն իրավիճակն է, երբ ոտնձգությունը կատարվում է միևնույն իրավական կարգավիճակն ունեցող երկու կամ ավելի տուժողների նկատմամբ, որի հատկանիշները նախատեսված են քրեական օրենսգրքի միևնույն հոդվածի միևնույն մասով: Նման իրավիճակներում կատարվածը, տուժողների բազմաթվությամբ հանցագործությունների վերոնշյալ չափանիշներին համապատասխանելու դեպքում, որակվում է որպես եզակի հանցագործություն (այս մասին արդեն խոսվել է): Օրինակ՝ եթե հանցավորը միասնական դիտավորությամբ միաժամանակ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն է գործադրում իշխանության երկու ներկայացուցչի նկատմամբ՝ կապված նրանց կողմից ծառայողական պարտականությունները կատարելու հետ, ապա կատարվածը ենթակա է որակման որպես մեկ եզակի հանցագործություն՝ ՀՀ քր. օր.-ի 316-րդ հոդվածի 2-րդ մասով:

*Տուժողների տարասեռ բազմաթվության* դեպքում հանցավոր ոտնձգությունն ընդգրկում է տուժողների այնպիսի շրջանակ, որոնք ունենում են ինչպես «հատուկ», այնպես էլ «հասարակ» կարգավիճակ: Այդ կապակցությամբ, կարծում ենք, անհրաժեշտ է տարբերակել հետևյալ իրավիճակները.

1. *Տարասեռ տուժողներ, որոնց հատկանիշները նախատեսված են քրեական օրենսգրքի միևնույն հոդվածի տարբեր մասերով:*

Եթե տարասեռ տուժողների հատկանիշները նախատեսված են քրեական օրենսգրքի միևնույն հոդվածի տարբեր մասերով (այսինքն՝ հիմնական հանցակազմը պատասխանատվություն է նախատեսում ընդհանուր բնույթի տուժողի նկատմամբ ոտնձգություն կա-

տարելու համար, իսկ որակյալ կամ առավել որակյալ հանցակազմը՝ հատուկ կարգավիճակ ունեցողի), ապա արարքը որակվում է միայն այն նորմով, որը պատասխանավորություն է նախատեսում նույն արարքը հատուկ կարգավիճակ ունեցող տուժողի նկատմամբ կատարելու համար: Օրինակ՝ եթե եվգենիկական փորձերն իրականացվել են միանգամից ինչպես չափահասի, այնպես էլ անչափահասի նկատմամբ, ապա կատարվածը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի 127.1.-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ միայն որպես անչափահասի նկատմամբ կատարված հանցագործություն: Տվյալ հանցանքը չափահասի նկատմամբ կատարելու հանգամանքը չի կարող ազդել արարքի որակման վրա: Մինչդեռ, նկարագրվելով մեղադրանքի ծավալում՝ այն հետագայում պետք է հաշվի առնվի հանցավորի պատժի և պատասխանատվության հարցը լուծելիս:

Այստեղ, ըստ էության, գործ ունենք քրեաիրավական նորմերի մրցակցության հետ, ինչին անդրադարձ կկատարվի հետագայում:

2. *Տարասեռ տուժողներ, որոնց հատկանիշները նախատեսված են քրեական օրենսգրքի միանգամայն տարբեր հոդվածներով:*

Եթե հանցավոր ոտնձգությունն իրականացվում է տարասեռ բազմաթվությամբ տուժողների նկատմամբ, որոնց հատկանիշները նկարագրված են քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով, ապա կատարվածը որակվում է հանցագործությունների համակցությամբ: Օրինակ՝ երբ հանցավորը դեպքի վայրում թե՛ իրեն բռնած անձի և թե՛ ոստիկանի առողջությանը պատճառում է ծանր վնաս և դիմում փախուստի: Նկարագրված իրավիճակում հանցավորի արարքը պետք է որակվի ինչպես ՀՀ քր. օր.-ի 316-րդ հոդվածի 2-րդ մասով, այնպես էլ ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդվածի համապատասխան մասով կամ կետով:

Տուժողների տարասեռ բազմաթվությամբ նկարագրված իրավիճակում փոփոխվում է քրեաիրավական պաշտպանության օբյեկտի սոցիալ-իրավական բնութագիրը և կատարվածն, ըստ էության, նույնանում է հանցագործությունների համակցության հետ: Այսինքն՝ ի տարբերություն միասեռ բազմաթվության, որի դեպքում հանցավոր ոտնձգությունը պահպանում է նույնօբյեկտ ուղղվածությունը, տուժողների տարասեռ բազմաթվության դեպքում փոխվում է ինչպես հանցավորի դիտավորության ուղղվածությունն ու բովանդակությունը:

նը, այնպես էլ ոտնձգության օբյեկտի քանակական չափանիշը, ինչը պահանջում է որակում հանցագործությունների համակցության կանոններով:

Քննարկվող հիմնախնդրի առնչությամբ հաջորդ առավել բարդ հարցադրումը հետևյալն է. *ինչպե՞ս պետք է որակվի կատարվածը, երբ անձին համապատասխան վարքագծին հարկադրելու համար բռնությունը գործադրվում է ոչ թե վերջինիս, այլ երրորդ անձի նկատմամբ*: Օրինակ՝ բռնաբարության կամ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների պարագայում հանցավորը տուժողի կամքը կոտրելու և հանցանքը հաջողությամբ կատարելու համար բռնություն է գործադրում վերջինիս մերձավոր ազգականի նկատմամբ:

Այս համատեքստում քրեագետներից ոմանք գտնում են, որ, երբ տուժողի համապատասխան վարքն ապահովելու նպատակով հանցավորը բռնություն է գործադրում երրորդ անձի նկատմամբ, կատարվածը պահանջում է լրացուցիչ որակում՝ երրորդ անձի նկատմամբ հանցավոր բռնություն գործադրելու մասով: Բանն այն է, որ անձի կամքի վրա ազդեցություն ունենալու նպատակով երրորդ անձի նկատմամբ բռնության կամ դրա սպառնալիքի գործադրումը հանցավոր վարքագծի մեխանիզմում իրականացնում է երկու գործառույթ. 1) այն ֆիզիկական կամ հոգեբանական հարկադրանք է երրորդ անձի նկատմամբ՝ *տուժողի դիմադրությունը կոտրելու և ցանկալի հանցավոր արդյունքի հասնելու համար* և 2) հոգեբանական հարկադրանք է հենց տուժողի նկատմամբ<sup>88</sup>:

Այս մոտեցմանը, սակայն, դժվար է միանշանակորեն համաձայնել: Բանն այն է, որ, եթե օրենսդիրը, քննարկվող հանցագործությունների հանցակազմերի հատկանիշ նախատեսելով բռնությունը կամ դրա գործադրման սպառնալիքը, չի կոնկրետացրել դրա առարկան (այսինքն՝ թե կոնկրետ ում նկատմամբ պետք է գործադրվի այդ բռնությունը կամ դրա սպառնալիքը), կամ պարտադիր չի համարել հենց կոնկրետ տուժողի նկատմամբ այդ բռնության գործադրումը, ապա նման իրավիճակներում հանցավորի արարքը պետք է

---

<sup>88</sup> Տե՛ս, օրինակ՝ Фаргиев И. Заметки к проекту Постановления Пленума Верховного Суда РФ «О судебной практике по делам о преступлениях против половой неприкосновенности и половой свободы личности» // Уголовное право, 2014, № 5, էջեր 98-100:

գնահատել ամբողջության մեջ և որակել որպես մեկ հանցագործություն նույնիսկ այն պարագայում, երբ նշված բռնությունը կամ դրա սպառնալիքը կիրառվել է երրորդ անձի նկատմամբ՝ նպատակ հետապնդելով հիմնական տուժողին հարկադրելու հանցավորի համար ցանկալի վարքածի: Այսպես, օրինակ՝ շորթման պարագայում, եթե, բռնություն գործադրելով, ուրիշի գույքն իրեն հանձնելու պահանջը հանցավորը ներկայացնում է ոչ թե այդ գույքի սեփականատիրոջը կամ դրա օրինական տիրապետողին, այլ մեկ ուրիշ՝ երրորդ անձի, ապա հանցավորի արարքը պետք է որակվի միայն ՀՀ քր. օր.-ի 182-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և այդ երրորդ անձի նկատմամբ բռնության փաստը պետք է կլանվի հիմնական հանցագործության մեջ և չարժանանա ինքնուրույն քրեաիրավական գնահատականի:

Ասվածը, սակայն, չի բացառում, որ քրեադատավարական իմաստով տուժող համարվի և ճանաչվի ոչ միայն հիմնական տուժողը, այլև այն երրորդ անձը, ում նկատմամբ բռնություն գործադրելով՝ հանցավորը հիմնական տուժողին հարկադրել է այս կամ այն վարքածի իրականացմանը:

**Ե. Հանցակազմի երկրնորելի տարրերով հանցագործություններ:**

Հանցակազմի երկրնորելի տարրերով հանցագործությունները ևս, իրենց կառուցվածքի առանձնահատկություններով պայմանավորված, նմանվում են հանցագործությունների բազմակիությանը: Տվյալ հանգամանքն առաջ է բերում նշված հանցագործությունները միմյանցից հստակ տարանջատելու անհրաժեշտություն:

Այս առումով նախ և առաջ հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքում երկրնորելի տարրերով հանցակազմերն ունեն հետևյալ դրսևորումները.

1. Հանցակազմը նկարագրված է *երկրնորելի առարկաներով կամ փոժողներով*: Օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 344-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում *դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին կամ դատական ակտերի հարկադիր կատարողին* զրպարտելու համար՝ կապված նախնական քննություն վարելու, դատարանի դատավճռի, վճռի կամ դատական այլ ակտի կատարման հետ:

2. Հանցակազմը նկարագրված է *երկրնտրելի արարքներով (գործողություններով կամ անգործություններով)*: Օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 235-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ապօրինի կերպով հրազեն, բացի ողորկափող հրազենից և դրա փամփուշտներից, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր *ծեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար*:

3. Հանցակազմը նկարագրված է *երկրնտրելի հեղինակներով*: Օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդվածի 1-ին մասով ուրիշի առողջությանը դիտավորությամբ պատճառված ծանր վնաս է համարվում այնպիսի վնասը, որը *վրանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ արտահայտվել է դեմքի անջնջելի այլանդակմամբ* և այլն:

4. Հանցակազմը նկարագրված է *օբյեկտիվ կողմի երկրնտրելի հատկանիշներով (եղանակներով, վայրերով, գործիքներով կամ միջոցներով)*: Օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 182-րդ հոդվածով որպես շորթման եղանակներ են նախատեսված անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող *տեղեկություններ հրապարակելու, ինչպես նաև անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքը* կամ անձի, նրա մերձավորի գույքը կամ այլ անձանց տնօրինության կամ պահպանության տակ գտնվող *գույքը ոչնչացնելու (վնասելու) սպառնալիքը*:

5. Հանցակազմը նկարագրված է *երկրնտրելի նպատակներով կամ շարժառիթներով*: Օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 309<sup>1</sup>-րդ հոդվածով, որպես խոշտանգման նպատակներ, նախատեսված են *տեղեկություն կամ խոսքովանություն ստանալը կամ որևէ արարքի համար պատժելը կամ որևէ արարք կատարելուն կամ դրա կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելը* և այլն:

Քրեական օրենսգրքում հանցակազմերը կարող են կառուցվել նաև այնպես, որ երկրնտրելի լինեն միաժամանակ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ մի քանի հատկանիշներ:

Երկրնտրելի տարրերով հանցագործությունները որակելիս անհրաժեշտ է ղեկավարվել այն կանոնով, համաձայն որի՝ *եթե*

*արարքը կամ արարքները պարունակում են հանցակազմի մեկ կամ մի քանի երկրնորելի հատկանիշներ, ապա հանցագործությունների բազմակիությունը բացակայում է, և կատարվածը որակվում է որպես մեկ եզակի հանցագործություն:* Այսպես՝ եթե հանցավորը միասնական դիտավորությամբ ապօրինի ձեռք է բերում, պահում, փոխադրում և կրում ակոսափող հրազեն, որը հետագայում ապօրինի իրացնում է, ապա կատարվածը ոչ թե կազմում է հանցագործությունների համակցություն, այլ պետք է որակվի որպես մեկ եզակի հանցագործություն (ՀՀ քր. օր.-ի հոդված 235-ի 1-ին մաս): Կամ՝ եթե հանցավորի միասնական դիտավորությամբ ընդգրկված արարքների հետևանքով տուժողին պատճառվում է և՛ տեսողության, և՛ խոսքի, և՛ լսողության կորուստ, որը զուգորդվել է ընդհանուր աշխատունակության մեկ երրորդից ավելի կայուն կորստով, ապա կատարվածը որակվում է որպես մեկ հանցագործություն (ՀՀ քր. օր.-ի հոդված 112-ի 1-ին մաս):

Այսպիսով, երկրնորելի հանցակազմի տարրերով հանցագործությունները որակելիս կիրառելի համընդհանուր կանոնը հետևյալն է. *եթե հանցավորի միասնական դիտավորությամբ ընդգրկված արարքները պարունակում են հանցակազմի երկու կամ ավելի երկրնորելի հատկանիշներ, ապա հանցագործությունների բազմակիությունը բացակայում է, և կատարվածը որակվում է որպես եզակի բարդ հանցագործություն:*

## **2. Բաղկացական հանցագործություններ:**

Օրենսդիրը, մեկ հանցակազմում մի քանի հանցավոր արարքների հատկանիշները միացնելով, ստեղծում է այնպիսի բարդ հանցակազմերի գոյության իրավաբանական հիմքը, որոնք քրեական իրավունքի գիտության մեջ ընդունված է անվանել բաղկացական<sup>89</sup>: Մասնագիտական գրականության մեջ այս հանցագործությունները երբեմն անվանվում են նաև «*օրենսդրորեն հաշվի առնված համակցություններ*», ինչը քրեական օրենսգրքի ներքին միասնություն կազ-

<sup>89</sup> Անձի կողմից քրեական օրենքով արգելված մի քանի արարքների կատարումը, քրեաիրավական նորմի կառուցվածքային առանձնահատկություններով և հանցակազմերի կառուցման օրենսդրական տեխնիկայով պայմանավորված, դիտվում է որպես եզակի հանցագործություն:



մող երկու կամ ավելի ինքնուրույն հանցակազմերի մեխանիկական միացման արդյունք է<sup>90</sup>:

Տեսության մեջ քննարկվող հանցանքները սահմանվում են նաև որպես *հանցագործություններ, որոնք բաղկացած են երկու կամ ավելի հանրորեն վրանգավոր արարքներից, որոնցից, յուրաքանչյուրն ինքնուրույն հանցակազմ է ներկայացնում, սակայն ներքին միասնության հետևանքով դիտվում են որպես մեկ հանցագործություն*<sup>91</sup>: Հարկ է նկատել, սակայն, որ նման պարագայում այսօրինակ հանցագործությունների շարքից անհիմն կերպով դուրս են մնում այնպիսիները, որոնց հանցակազմերը, թեև, երկու ինքնուրույն հանցավոր արարքների միացման արդյունք չեն, սակայն ինքնին կարող են դիտվել որպես բաղկացական և որակվել համապատասխան կանոններով: Այսպես, օրինակ՝ բռնաբարությունը, որը կատարվում է բռնություն կամ դրա սպառնալիք գործադրելով, կարող է դիտարկվել որպես բաղկացական հանցագործություն: Եթե տվյալ հանցագործությունը սահմանող հիմնական հանցակազմից (<< քր. օր.-ի 138-րդ հոդվածի 1-ին մաս) բացառենք «բռնություն, դրա սպառնալիք գործադրելու կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելու» հատկանիշը՝ որպես հանցանքի կատարման եղանակ, ապա բռնաբարության հանցակազմը՝ որպես առանձին, չի կարող հանցավոր համարվել: Ուստի՝ բաղկացական կարելի է համարել **այն հանցագործությունները, որոնց հանցակազմի հատկանիշ է մեկ այլ հանցանքի կատարումը**:

Տրված բնորոշումը, սակայն, միայն ընդհանուր գծերով է բացահայտում քննարկվող երևույթի էությունը՝ չարտացոլելով դրան ներհատուկ մի շարք հատկանիշներ: Ասվածով պայմանավորված՝ առաջանում է բաղկացական հանցագործության հատկանիշների լրացուցիչ պարզաբանման անհրաժեշտություն, որն ընդհանուր առմամբ հանգում է հետևյալին.

---

<sup>90</sup> Ընդ որում, բաղկացական հանցագործություն կարող են ձևավորել օրենսդրորեն հաշվի առնված ինչպես իրական, այնպես էլ իդեալական համակցությունները: Տե՛ս, օրինակ՝ Малков В.П. Совокупность преступлений: (Вопросы квалификации и назначения наказания). Казань, 1974, էջ 92:

<sup>91</sup> Տե՛ս, օրինակ՝ Сабитов Р.А. Теория и практика уголовно-правовой квалификации: научно-практическое пособие. М., 2013, էջ 186:

1. Բաղկացական հանցագործությունները կազմված են ինչպես երկու կամ ավելի ինքնուրույն հանցագործություններից, այնպես էլ այնպիսի մեկ հանցագործությունից, որի հանցակազմի հատկանիշ է քրեական օրենսգրքով նկարագրված մեկ այլ հանցագործությունը: Դրանք կարող են կատարվել ոչ միայն մեկ, այլև մեկից ավելի հանցավոր արարքներով: Մասնավորապես, ՀՀ քրեական գործող օրենսգրքի դրույթներին համապատասխան՝ եզակի հանցակազմերով հանցագործությունները կարող են կատարվել մեկ հանցավոր արարքով, որի արդյունքում կարող են առաջանալ ինքնուրույն հանցակազմ պարունակող մեկից ավելի հանրորեն վտանգավոր հետևանքներ: Ասվածի օրինակ կարող է ծառայել դիտավորությամբ **առողջությանը ծանր վնաս** պատճառելը, որն անզգուշությամբ առաջացրել է **տուժողի մահ** (ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետ):

2. Քննարկվող հանցագործությունների առանձնահատկություն է նաև առաջացած հանցավոր հետևանքների միջև **փոխկապակցվածությունն** ու **փոխպայմանավորվածությունը**: Ուստի, բաղկացական հանցագործության դրսևորումների օբյեկտիվ նախադրյալներն են.

ա) հանցավոր արարքների միջև **գործառությանին կապի առկայությունը**, որի պարագայում դրանցից մեկը հանդես է գալիս որպես մյուսի կատարման **եղանակ** (օրինակ՝ բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողությունը, կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով՝ անձի առևանգումը և այլն),

բ) պատճառահետևանքային կապը, ինչով պայմանավորված **մի հանցավոր արարքը** դետերմինացնում է **երկու հանրորեն վրանգավոր հետևանք**, որոնցից մեկը համարվում է հիմնական, իսկ մյուսը՝ ածանցյալ (օրինակ՝ առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելը, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ և այլն):

Թեև բաղկացական հանցագործությունների տարրերի փոխկապակցվածության սուբյեկտիվ արտահայտությունը միևնույն մեղքի ձևով կատարվելն է, սակայն բացառություն են կազմում մեղքի երկու ձևով կատարվող հանցագործությունները:

3. Քննարկվող հանցագործությունները ոտնձգում են քրեաիրավական պաշտպանության երկու կամ ավելի օբյեկտների դեմ: Այլ կերպ ասած՝ դրանց բնորոշ է **երկօբյեկտ** կամ **բազմօբյեկտ կառուցվածքը** (օրինակ՝ ավազակությունը և այլն):

4. Բաղկացական հանցագործություն է համարվում ոչ թե ցանկացած փոխկապակցված հանցավոր արարքների համադրությունը, այլ դրանց այն համակցումը, որը նկարագրված է **բարդ հանցակազմով**՝ որպես միասնական հանցագործություն: Այդպիսի բարդ հանցակազմի բացակայության պայմաններում անձի կողմից հանցանքների կատարումը, անգամ, եթե դրանց միջև առկա է օբյեկտիվ և սուբյեկտիվ սերտ փոխկապակցություն, ձևավորում է հանցագործությունների համակցություն (օրինակ՝ ավազակային հարձակում կատարելու համար հրազեն ապօրինի ձեռք բերելու դեպքում):

Հարկ է նշել նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքում բաղկացական հանցագործությունների կառույցները միաբնույթ չեն: Օրենսդրական կառուցվածքի առանձնահատկությունները բաղկացական հանցագործությունները դասակարգելու համար հանդես են գալիս որպես ինքնուրույն չափանիշներ: Դրանով պայմանավորված, կարելի է առանձնացնել նշված հանցագործությունների հետևյալ տեսակները՝

ա) հանցագործություններ, որոնց հանցակազմերում նկարագրված բաղկացուցիչ արարքը *հանդես է գալիս որպես մյուսի կատարման եղանակ կամ միջոց* (օրինակ՝ այն բոլոր հանցագործությունները, որոնց հանցակազմի հատկանիշ է բռնության գործադրումը),

բ) զուգակցված հանցագործություններ, որոնց հանցակազմերում առկա է *մեկ հանցագործությունը մյուսի հետ զուգակցված լինելու* մասին նշում (օրինակ՝ խուլիգանությունը, որը զուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով),

գ) հանցագործություններ, որոնց հանցակազմերը պարունակում են *լրացուցիչ հանցավոր հետևանքի առաջացում* (օրինակ՝ մեղքի երկու ձևով կատարվող հանցագործությունները),

դ) հանցագործություններ, որոնցում «*հանցանքը երկու կամ ավելի անձանց նկատմամբ կատարված լինելը*» նախատեսված է որպես

*հանցակազմի որակյալ (առավել որակյալ) հատկանիշ* (օրինակ՝ երկու կամ ավելի անձանց ազատությունից ապօրինի զրկելը, որը կարող է կատարվել ինչպես մեկ, այնպես էլ մեկից ավելի արարքներով):

Այսպիսով, օրենսդրական կառույցի առանձնահատկություններով պայմանավորված, բաղկացական հանցագործությունները նմանվում են հանցագործությունների համակցությանը, ինչն էլ այս երևույթները միմյանցից տարանջատելու անհրաժեշտություն է առաջացնում:

**Ընդհանուր կանոնի** համաձայն՝ բաղկացական հանցագործության դեպքում, որը պարունակում է երկու կամ ավելի եզակի հանցագործությունների հատկանիշներ, *բազմակիությունը բացակայում է*, և կատարվածը պետք է որակվի որպես մեկ հանցագործություն: Օրինակ՝ եթե ավազակային հարձակումն իրականացվում է բնակարան ապօրինի մուտք գործելով, ապա կատարվածը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, և լրացուցիչ որակում քր. օր.-ի 147-րդ հոդվածով չի պահանջվում: Կա՛մ, օրինակ՝ եթե առանց հափշտակելու նպատակի, հանցավորը ավտոմեքենային ապօրինի տիրանում է տուժողին կյանքի համար վտանգավոր սպառնալիք տալու եղանակով, ապա կատարվածը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի 183-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, և լրացուցիչ որակում քր. օր.-ի 137-րդ հոդվածով չի պահանջվում:

Որակման ընդհանուր կանոնից **բացառություն են** այն դեպքերը, երբ բաղկացական հանցագործության մեջ մտնող հանցավոր արարքը (բաղկացուցիչ արարքը) հավասար կամ առավել բարձր հանրային վտանգավորություն է ներկայացնում, քան ամբողջ բաղկացական հանցագործությունն ինքնին: Այսպես, *եթե բաղկացականի մաս հանդիսացող հանցավոր արարքի համար օրենքով նախատեսված է հավասար կամ ավելի խիստ պատիժ, քան ամբողջ բաղկացական հանցագործության համար, ապա կատարվածը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ* (այս մասին հաջորդիվ):

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունները և դատախազաքննչական մարմինների աշխատակիցների հետ անհատական

զրույցները վկայում են, որ հանցագործություններն ըստ կատարման եղանակի որակելիս հիմնական բարդությունն առաջանում է այն դեպքերում, երբ քրեական օրենսգրքի Հատուկ մասում այս կամ այն հանցագործությունը նկարագրված է որպես այլ հանցանքի կատարման եղանակ կամ միջոց: Նման իրավիճակներում առաջ է գալիս որակման գլխավոր հարցը. կատարվածը պետք է որակել որպես մեկ միասնական բարդ հանցագործություն՞, թե՞ հանցագործությունների համակցություն: Այս հարցի պատասխանը ևս կախված է նրանից, թե օրենքը ինչպիսի պատասխանատվություն է նախատեսում հանցագործության կատարման եղանակի՝ որպես ինքնուրույն հանցագործության համար:

Այսօրինակ հանցագործությունների որակման համար առաջնահերթ նախապայման է, այսպես կոչված, միջոց – հանցագործության և արդյունք – հանցագործության հարաբերակցության պարզումը: Դրանց հարաբերության բնույթը որոշելու համար անհրաժեշտ է հասկանալ, թե արդյո՞ք մի հանցագործության հատկանիշները ներառվում են մեկ այլ հանցագործության հանցակազմում, իսկ, եթե՝ այո, ապա ի՞նչ ծավալով (ամբողջությամբ, թե՞ մասամբ): Ասվածը պարզելու համար էլ անհրաժեշտ է հաշվի առնել կոնկրետ հանցակազմի օրենսդրական նկարագրման տեխնիկայի առանձնահատկությունները:

Այսպես, քրեական օրենսգրքի համակարգային վերլուծությունն ու քրեական իրավունքի գիտության մեջ բազմօբյեկտ հանցագործությունների որակման վերաբերյալ արտահայտած տեսակետները թույլ են տալիս առանձնացնելու միջոց – հանցագործության և արդյունք – հանցագործության հարաբերակցության հետևյալ երկու իրավիճակները.

ա) միջոց – հանցագործությունը հանդես է գալիս որպես արդյունք – հանցագործության հանցակազմի հատկանիշ,

բ) միջոց – հանցագործությունը, թեև ուղղակիորեն նկարագրված չէ արդյունք – հանցագործության հանցակազմում, սակայն օբյեկտիվ իրականության մեջ այն կարող է հանդես գալ որպես դրա կատարման միջոց (եղանակ):

Դժվար չէ նկատել, որ առաջին իրավիճակում խոսքն առնչվում է եզակի բարդ բաղկացական հանցագործությունների կառույցին, որ-

պիսի պայմաններում հնարավոր է երկու տարբերակ: Առաջին՝ երբ արդյունք – հանցագործությունն ամբողջությամբ կլանում է միջոց – հանցագործությունը, ըստ էության, գործ ենք ունենում քրեաիրավական նորմ – մասի և նորմ – ամբողջի մրցակցության հետ: Այդ դեպքում հանցագործությունների համակցությունը բացակայում է, իսկ կատարվածը որակվում է որպես եզակի հանցագործություն: Օրինակ՝ եթե կողոպուտը կատարվում է բնակարան ապօրինի մուտք գործելու եղանակով, ապա կատարվածը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի 176-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, և լրացուցիչ որակում ՀՀ քր. օր.-ի 147-րդ հոդվածով (բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը) չի պահանջվում: Իսկ երկրորդ տարբերակում՝ քրեաիրավական նորմերի մրցակցությունը բացակայում է, սակայն տեղի է ունենում միջոց-հանցագործության հանցակազմի հատկանիշների մասնակի կլանում արդյունք-հանցագործության հանցակազմում, ինչը պահանջում է հանցանքների համակցված որակում: Այսպես, օրինակ՝ եթե բնակարանի անձեռնմխելիությունը խախտվում է՝ տուժողի առողջությանը միջին ծանրության կամ ծանր վնաս պատճառելով, ապա կատարվածն անհրաժեշտ է որակել ՀՀ քր. օր.-ի 147-րդ հոդվածի 2-րդ մասով (բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը բռնություն գործադրելով) և 113-րդ (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը) կամ 112-րդ (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը) հոդվածներով (այս մասին հաջորդիվ):

Երկրորդ իրավիճակը, ինչպես վերը նշվեց, ներառում է այն դեպքերը, երբ միջոց – հանցագործությունն ուղղակիորեն նկարագրված չէ արդյունք – հանցագործության հանցակազմում (այսինքն՝ բացակայում է հանցագործության բաղկացական կառուցը), սակայն օբյեկտիվ իրականության մեջ այն կարող է հանդես գալ որպես այդպիսին (միջոց, եղանակ): Այս առումով հարց է ծագում. արդյո՞ք տվյալ դեպքում պետք է գործի միջոց – հանցագործության և արդյունք – հանցագործության որակման կանոնը, և կախված այդ հանցանքների կլանման աստիճանից (նախատեսված պատժի խստու-

թյունից)՝ կատարվածը որակվի կա՛մ համակցությամբ, կա՛մ որպես եզակի հանցագործություն:

Ասվածը ցայտուն կերպով արտահայտվում է այն օրինակում, երբ խարդախությունը կատարվում է իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող պաշտոնական կեղծ փաստաթուղթ օգտագործելու եղանակով: Մասնավորապես, հարց է առաջանում՝ նկարագրված իրավիճակում ինչպե՞ս պետք է որակվի կատարվածը. ՀՀ քր. օր.-ի 178-րդ հոդվածով և 325-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների համակցությամբ, թե՛ իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող պաշտոնական կեղծ փաստաթուղթ օգտագործելու փաստը պետք է կլանվի խարդախության հանցակազմում՝ որպես դրա կատարման եղանակ և ինքնուրույն չորակվի:

Այս կապակցությամբ Ն.Ֆ.Կուզնեցովան առաջարկում է. որոշելու համար այս կամ այն հանցագործությունը հանդիսանում է մեկ այլ հանցանքի կատարման միջոց (եղանակ) անհրաժեշտ է ելնել հանցագործության տեսակից: Եթե հանցանքը, որը կատարվել է մեկ այլ հանցագործության միջոցով, հավասար կամ առավել մեղմ է պատժվում, քան դրա միջոց-հանցագործությունը, ապա կատարվածը պետք է որակվի համակցությամբ<sup>92</sup>:

Քրեագետներից ոմանք էլ գտնում են, որ նման դեպքերում, որոշելու համար՝ կատարվածը եզակի հանցագործություն է, թե պահանջում է հանցագործությունների համակցված որակում, պետք է հաշվի առնել մեկ այլ չափանիշ ևս. ոտնձգության օբյեկտների համադրելիությունը: Բաղկացական հանցագործությունների բաղադրիչները չեն կարող դուրս գալ ոտնձգության տեսակային օբյեկտի շրջանակներից և ըստ կատեգորիայի ու դրան համապատասխան պատժելիության՝ չեն կարող ավելի վտանգավոր լինել միասնական բարդ հանցագործությունից<sup>93</sup>:

<sup>92</sup> Տե՛ս Кузнецова Н.Ф. Проблемы квалификации преступлений Лекции по спецкурсу «Основы квалификации преступлений». М., 2007, էջ 291:

<sup>93</sup> Տե՛ս, օրինակ՝ Գրիգորյան Մ.Վ. Հանցագործությունների որակման գիտական հիմունքները: Ոսումնական ձեռնարկ, երկրորդ լրացված վերահրատարակություն: Եր.: ՀՌՀ հրատ., 2009, էջեր 284-310:

Այլ խոսքով, նշված քրեագետներն արդյունք-հանցագործության և միջոց-հանցագործության որակման հարցը լուծելիս ելնում են այն գաղափարից, որ, անկախ նրանից, միջոց-հանցագործությունը նկարագրված է արդյունք հանցագործության հանցակազմում (հիմնական, որակյալ, առավել որակյալ), թե՛ ոչ, անհրաժեշտ է համեմատել միջոց- և արդյունք-հանցագործությունների սանկցիաները: Իսկ կախված այն բանից, թե ինչպիսին է դրանց սանկցիաների խստության տարբերությունը՝ կատարվածը որակել կա՛մ հանցանքների համակցությամբ, կա՛մ որպես եզակի հանցագործություն: Այսինքն՝ նրանք միջոց – հանցագործության և արդյունք – հանցագործության որակման հարցը լուծելիս պարտադիր չեն համարում արդյունք – հանցագործության հանցակազմում միջոց – հանցագործության հատկանիշների վերաբերյալ նշումի առկայությունը (բաղկացական կառույցի գոյությունը), և հնարավոր են համարում կատարվածը որպես եզակի հանցագործություն որակելը, նույնիսկ, երբ արդյունք – հանցագործության հանցակազմում բացակայում է միջոց – հանցագործության վերաբերյալ նշումը:

Այսպես, օրինակ՝ ակադեմիկոս Վ.Ն. Կուդրյավցևը գրում է, որ եթե հանցագործության եղանակը նախատեսվում է որպես ինքնուրույն հանցագործություն, ապա այն չի մեղսագրվում հիմնական հանցագործությունից առանձին: Այդպիսի որակումը նա կապում է նորմերի՝ ըստ ընդհանուրի և մասի դիալեկտիկայի մրցակցության, այլ ոչ թե միասնական բարդ բաղկացական հանցագործությունների հանցակազմերի առանձնահատկությունների հետ<sup>94</sup>:

Ասվածին համակարծիք է նաև Մ.Վ. Գրիգորյանը, ով գտնում է, որ եղանակ-հանցագործությունը, որպես կանոն, նշվում է քրեական օրենսգրքի համապատասխան նորմում, թեև ոչ միշտ անմիջակա-նորեն: Այսպես, օրինակ՝ պաշտոնեական դիրքն օգտագործելն այնտեղ, որտեղ այն ուղղակիորեն նախատեսված է, պաշտոնեական հանցագործությունների հանցակազմերի հետ համակցությամբ որակել չի պահանջվում: Սակայն այն դեպքում, երբ այդ եղանակը փաստորեն կիրառվում է, բայց հոդվածի դիսպոզիցիայում, իբրև հանցակազմի հատկանիշ, չի նշվում, կարող է ծագել նորմերի

<sup>94</sup> Ст'и Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений. Изд. 2-е. М.: Юристъ, 2001, էջեր 211, 229:



մրցակցության և հարակից հանցակազմերը տարանջատելու հարցը: Տվյալ իրավիճակներում, եթե պաշտոնեական դիրքն օգտագործելն ավելի ծանր հանցագործություն կատարելու եղանակ է, ապա կատարվածը որակվում է որպես միասնական բարդ հանցագործություն: Մինչդեռ, եթե պաշտոնեական դիրքն օգտագործելը հավասար կամ ավելի ծանր հանցագործություն է, քան հիմնականը, ապա այն պետք է որակել համակցությամբ<sup>95</sup>:

Մ.Վ. Գրիգորյանը գտնում է նաև, որ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ կեղծելը և օգտագործելը՝ որպես առավել մեծ հանրային վտանգավորություն ունեցող հանցագործություններում գրավոր խաբեության եղանակ, նույնպես կազմում են միասնական բարդ հանցագործություն, այլ ոչ թե կեղծիքի և համապատասխան արարքի համակցություն: Ըստ նրա՝ կեղծիքի միջոցով կատարվող հափշտակությունը խարդախություն է, իսկ պաշտոնեական դիրքը չարաշահելիս կատարվող կեղծիքը՝ վստահությունը չարաշահելու եղանակներից մեկն է: Կեղծիքը կարող է հարկերից խուսափելու, մաքսանենգության և բազմաթիվ այլ, առավել ծանր հանցագործություններ կատարելու միջոց լինել: Հետևաբար, եթե, օրինակ, խարդախությունը կատարվում է պաշտոնական կեղծ փաստաթուղթ օգտագործելու եղանակով, առաջարկվում է այդ կեղծիքի փաստը կլանել խարդախության հանցակազմում և լրացուցիչ չորակել<sup>96</sup>:

Դժվար է, սակայն, համաձայնել այս մոտեցմանը, քանզի այն, ըստ էության, հակադրության մեջ է մտնում հանցագործությունների բազմակիության, մասնավորապես, հանցանքների համակցության քրեաիրավական ինստիտուտի հետ և խախտում հանցագործությունների միջև դիալեկտիկական հարաբերությունները: Բացի այդ՝ քրեաիրավական նորմերի միջև մրցակցությունը պայմանավորող ոչ թե դրանցով նկարագրված հանցագործությունների միջև ընդհանուր կապի գոյությունն է, այլ այդ հանցանքների օրենսդրական նկարագրման և հանցակազմերի կառուցման օրենսդրական տեխնիկայի առանձնահատկությունները (այս մասին հաջորդիվ):

<sup>95</sup> Տե՛ս Գրիգորյան Մ.Վ. Հանցագործությունների որակման գիտական հիմունքները: Եր.: ՀՌՀ հրատ., 2009, էջեր 305-307:

<sup>96</sup> Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև՝ Курс уголовного права. В 5-ти т. Т. 3. М.: Зерцало-М, 2002, էջ 74:

Ասվածի կապակցությամբ հարկ է փաստել, որ *քրեական օրենսգրքում չկա և չի կարող լինել հանցագործության այնպիսի հանցակազմ, որը «լռելյայն» կերպով իր մեջ ներառի մեկ այլ հանցակազմի հատկանիշներ*: Ուստի, խնդրո առարկա հիմնախնդրի կապակցությամբ գտնում ենք, որ կատարվածի լրացուցիչ որակում չի պահանջվում միայն այն դեպքերում, երբ մեկ հանցանքն ուղղակիորեն նախատեսված է մյուս հանցագործության հանցակազմում (հիմնական, արտոնյալ, որակյալ)՝ որպես դրա պարտադիր հատկանիշ, և այդ ինքնուրույն հանցագործությունն առավել մեղմ է պատժվում, քան ամբողջ բաղկացական հանցագործությունն ինքնին: Մնացած դեպքերը պահանջում են որակում՝ հանցագործությունների համակցության կանոններով:

Այլ խոսքով՝ *միջոց-հանցագործությունը լրացուցիչ չի մեղսագրվում անձին միայն այն դեպքում, երբ այն ուղղակիորեն նկարագրված է արդյունք-հանցագործության հանցակազմում՝ որպես վերջինիս հատկանիշ (այսինքն՝ օրենսդրորեն հաշվի առնված համակցության պայմաններում) և առավել մեղմ է պատժվում, քան ամբողջ բաղկացական հանցագործությունը*: Մնացած բոլոր դեպքերում, երբ մի հանցագործությունը կատարվում է այնպիսի արարքի միջոցով, որը՝ որպես ինքնուրույն հանցագործություն, նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում և դուրս է գտնվում արդյունք-հանցագործության հանցակազմի նկարագրության շրջանակներից, կատարվածը պետք է որակվի հանցանքների համակցության կանոններով՝ անկախ նրանից, թե ինչպիսին է քրեական օրենսգրքով միջոց-հանցագործության և արդյունք-հանցագործության համար սահմանված պատիժների հարաբերությունը (առավել խիստ է, թե՛ առավել մեղմ):

Հետևաբար, օրինակ՝ եթե հափշտակությունը կատարվում է իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող պաշտոնական կեղծ փաստաթուղթ օգտագործելու կամ կեղծ փողեր, արժեթղթեր իրացնելու միջոցով, ապա կատարվածը, ՀՀ քր. օր.-ի 178-րդ հոդվածից բացի, անհրաժեշտ է որակել նաև ՀՀ քր. օր.-ի 325-րդ կամ 202-րդ հոդվածներով: Ասվածի կապակցությամբ հարկ է նաև նկատել, որ քննարկվող հանցագործությունները տարօրյեկտ են. ինչպես կեղծ փողեր կամ արժեթղթեր իրացնելը,

այնպես էլ իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող պաշտոնական կեղծ փաստաթուղթ օգտագործելը դուրս են խարդախության հանցակազմի շրջանակներից, իսկ խարդախությունն, իր հերթին, նկարագրված չէ ո՛չ ՀՀ քր. օր.-ի 202-րդ, ո՛չ էլ 325-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերում՝ որպես դրանց հատկանիշ: Ուստի, կատարվածը պահանջում է որակում՝ հանցանքների համակցության կանոններով:

Բաղկացական հանցագործությունների օրենսդրական ինքնուրույն կառուցվածքը հնարավորություն է տալիս գնահատելու նաև դրանում մեկ այլ հանցագործության նկարագրությունը: Ակնհայտ է, որ բաղկացական հանցագործությունների պարագայում տեղի է ունենում միջոց-հանցագործության և արդյունք-հանցագործության հանցակազմերի հատկանիշների կլանում: Ըստ այդմ, այսպիսի հանցագործությունների օրենսդրական կառուցվածքի առանձնահատկությունների հաշվառմամբ, կարելի է առանձնացնել կլանման երկու իրավիճակ՝ 1) լրիվ (ամբողջական) և 2) մասնակի:

Քրեական իրավունքի դոկտրինում և դատական պրակտիկայում ավանդաբար ընդունելի է այն մոտեցումը, ըստ որի՝ բաղկացական հանցագործության բաղադրիչ արարքների կլանման հարցը լուծելիս անհրաժեշտ է համեմատել հանցագործության-միջոցի և ամբողջ բաղկացական հանցանքի համար նախատեսված պատիժները: Համապատասխանաբար, քրեաիրավական նորմերի սանկցիաների համեմատական վերլուծությունից հնարավոր է լուծել հարցն այն մասին, թե այդ հանցակազմերի միջև կլանումը լրիվ է, թե՛ մասնակի:

Մասնավորապես, եթե արդյունք-հանցագործության համար քրեական օրենսգրքով նախատեսված պատիժն առավել խիստ է, քան միջոց-հանցագործության համար նախատեսվածն է, ապա օրենսդիրն այդ նորմերի հարաբերություններում ճանաչել է ամբողջական կլանման հնարավորությունը: Միևնույն ժամանակ, եթե միջոց հանցագործության համար քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը հավասար կամ առավել խիստ է, քան արդյունք-հանցագործության համար նախատեսվածն է, ապա տեղի է ունենում մասնակի կլանում, իսկ կատարվածը որակվում է հանցագործությունների համակցությամբ: Այստեղ գործում է այն տրամաբա-

նությունը, որ նման պայմաններում բաղկացական կառույցով նկարագրված արդյունք-հանցագործության հանցակազմը չի կարող ամբողջ ծավալով իր մեջ ներառել հավասար կամ առավել խիստ պատժվող միջոց-հանցագործության հանցակազմի բոլոր հատկանիշները, ինչը պահանջում է լրացուցիչ որակում:

Այսպես, եթե հանցանքի կատարման **եղանակն ինքնին հավասար կամ առավել վրանգավոր է** (հավասար կամ առավել խիստ է պատժվում), քան այն հանցագործությունը, որի կատարման համար կիրառվում է, ապա արարքը որակվում է **հանցագործությունների համակցությամբ**: Օրինակ՝ եթե անձին ազատությունից ապօրինի զրկելիս նրա առողջությանը պատճառվում է ծանր վնաս, ապա հանցավորի արարքը ենթակա է որակման ՀՀ քր. օր.-ի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 112-րդ հոդվածի 1-ին մասով:

Մինչդեռ այն դեպքում, երբ հանցանքի կատարման **եղանակն առավել վրանգավոր չէ** (քրեական օրենքով ավելի խիստ չի պատժվում), քան այն հանցագործությունը, որի համար կիրառվում է, ապա այն **կլանվում է հիմնական հանցակազմում և լրացուցիչ չի որակվում**: Օրինակ՝ եթե ազատությունից ապօրինի զրկելիս տուժողի առողջությանը պատճառվում է միջին ծանրության վնաս, ապա այդ բռնությունը՝ որպես հանցագործության եղանակ, կլանվում է անձին ազատությունից ապօրինի զրկելու հանցակազմում և ինքնուրույն չի որակվում: Այս դեպքում հանցավորի արարքը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի հոդված 133-ի 2-րդ մասի 2-րդ կետով:

Իրավիճակն այլ է, երբ հանցանքի կատարման եղանակը, որն ինքնին քր. օր.-ի մեկ այլ հոդվածով նկարագրված հանցագործություն է, Հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված է **կոնկրետ-որոշակի** ձևով: Այլ խոսքով՝ երբ դիսպոզիցիան բովանդակում է միակ կամ կոնկրետ եղանակի (եղանակների) վերաբերյալ նշում: Օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 359-րդ հոդվածի (զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում) 2-րդ մասի 4-րդ կետով՝ որպես տվյալ հանցագործության միակ եղանակ, նկարագրված է հանցանքը անձի առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնաս պատճառելով կատարելը: Հետևաբար, եթե տվյալ հանցանքը կատար-

վում է անձի առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնաս պատճառելով, ապա նշված հոդվածի 2-րդ մասն իր մեջ ներառում է ՀՀ քր. օր.-ի 113-րդ և 117-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների արդյունքում առաջացած հետևանքները, և կատարվածն այդ հոդվածների համակցությամբ չի որակվում:

Միևնույն ժամանակ, եթե ՀՀ քր. օր.-ի 359-րդ հոդվածով նախատեսված հանցանքը կատարվում է անձին ծեծելով (թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք պատճառելով), ապա կատարվածը կլանվում է ՀՀ քր. օր.-ի 359-րդ հոդվածի 1-ին մասով և լրացուցիչ ՀՀ քր. օր.-ի 118-րդ հոդվածով չի որակվում: Մինչդեռ, եթե զինձառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնների խախտումը կատարվում է անձի առողջությանը ծանր վնաս պատճառելով, ապա կատարվածը, 359-րդ հոդվածի 1-ին մասից բացի, պետք է լրացուցիչ որակվի ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդվածի համապատասխան մասով կամ կետով:

Հարկ է կրկին առանձնահատուկ նշել, սակայն, որ այն դեպքերում, երբ հանցագործության կատարման եղանակն ինքնին հանցավոր է (նախատեսված է քրեական օրենսգրքի միանգամայն այլ հոդվածով՝ որպես ինքնուրույն հանցագործություն) և դուրս է հիմնական հանցագործության (որի կատարման համար որպես եղանակ է հանդես գալիս մեկ այլ հանցագործությունը) հանցակազմի սահմաններից, ապա այն միշտ պետք է արժանանա ինքնուրույն քրեաիրավական գնահատականի: Այսպես, օրինակ՝ եթե հանցավորը մեկ այլ անձի կյանքից զրկելու դիտավորությամբ նրան ապօրինի ներարկում է (ապօրինի իրացնում է) թմրանյութ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, որի հետևանքով վերջինս մահանում է, ապա կատարվածը պետք է որակվի որպես թմրամիջոցի կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութի իրացում (ՀՀ քր. օր.-ի հոդված 266) և սպանություն (հոդված 104):

Այսպիսով, ձևակերպելով այն բաղկացական հանցագործությունների որակման կանոնը, որոնց հանցակազմի հատկանիշ է մեկ այլ հանցանքի կատարումը՝ որպես դրա կատարման եղանակ (միջոց), կարելի է ասել, որ կատարվածը որակվում է **միայն որպես եզակի հանցագործություն** այն դեպքում, երբ.

*ա) այդպիսի եղանակը (միջոցը) նկարագրված է բաղկացական հանցագործությունում՝ որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ,*

*բ) այդ եղանակի համար՝ որպես ինքնուրույն հանցագործություն, քրեական օրենսգրքում նախատեսված է առավել մեղմ պարտիժ, քան ամբողջ բաղկացական հանցագործության համար ինքնին:*

Ուշագրավ է, որ բավականին երկար ժամանակ դատախազաքննչական մարմինների պրակտիկան ընթացել է այն ուղով, որ հանցագործություններն ըստ կատարման եղանակի որակելիս, անկախ հանցակազմում տվյալ եղանակի մասին նշումից (բաղկացական հանցագործության կառույցի բացակայության պայմաններում), կատարվածը որակվում էր որպես եզակի հանցագործություն, եթե եղանակն ինքնին առավել խիստ չէր պատժվում: Որակման այդ կանոնը տարածվում էր նաև իրական համակցության իրավիճակների վրա: Ասվածի ցայտուն օրինակ են այն դեպքերը, երբ անձը ուրիշի գույքը հափշտակելու նպատակով բնակարան ապօրինի մուտք գործելու համար վնասում էր զգալի չափերի գույքը (օրինակ՝ մուտքի դուռը, երկաթյա ճաղավանդակը և այլն), որից հետո, բնակարան ապօրինի մուտք գործելով, կատարում էր հափշտակություն: Այս դեպքերը պրակտիկայում համատարած որակվում էին միայն որպես բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված հափշտակություն, իսկ հանցավորի կողմից տուժողի գույքը ոչնչացնելու կամ վնասելու փաստը չէր արժանանում որևէ իրավական գնահատականի:

Այս կապակցությամբ, իրավակիրառ պրակտիկայի միասնականությունը և տուժողի իրավունքների ու օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունն ապահովելու նպատակով, ՀՀ դատախազության կոլեգիայի 2017 թվականի հոկտեմբերի 27-ի որոշմամբ արդարացիորեն արձանագրվել է, որ «(...) գույք հափշտակելու համար գույք վնասելիս կամ ոչնչացնելիս անձը բոլոր դեպքերում գործում է ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ, և այն հավասարապես ընդգրկում է նաև նշված գույքը վնասելը կամ ոչնչացնելը: Անձը գիտակցում է, որ բնակարան ապօրինի մուտք գործելու համար վնասում է գույքը, նախատեսում է դրա արդյունքում տուժողին վնաս պատճառելը և ցանկանում է դա կամ առնվազն գիտակցա-

բար թույլ է տալիս: Իսկ վերը նշված փաստարկում խոսքն, ըստ էության, հանցավոր ոտնձգության նպատակի մասին է, որը ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը չի բացառում: Ավելին, գործնականում կիրառվող մոտեցումը չի ապահովում մարդու իրավունքների քրեաիրավական լիարժեք պաշտպանությունը և, օրինակ, 10.000 ՀՀ դրամ արժեքով գույքը հափշտակելու համար 1.000.000 ՀՀ դրամ արժեքով պատը քանդելու դեպքում քրեական օրենքի պաշտպանության տակ է առնվում բացառապես հափշտակված գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, իսկ կրած ավելի մեծ գույքային վնասը քրեաիրավական պաշտպանությունից դուրս է մնում»: Մինևույն ժամանակ, նկատի ունենալով վերագրյալը՝ Կոլեգիան տվյալ որոշմամբ սահմանել է որակման հետևյալ կանոնը. «այն դեպքում, երբ անձը բնակարան, պահեստարան կամ շինություն մուտք գործելով գողություն (ավազակություն, կողոպուտ) կատարելիս, այդ թվում՝ մուտք գործելու համար, դիտավորությամբ ոչնչացրել կամ վնասել է տուժողի զգալի չափերի գույքը, որը չի հանդիսացել հափշտակության առարկա (պատ, դուռ, փական, կահույք և այլն), ապա վերջինիս արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ որպես բնակարան (պահեստարան կամ շինություն) ապօրինի մուտք գործելով կատարված գողություն (ավազակություն, կողոպուտ) և գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը:

Այսպես, օրինակ՝ եթե անձն ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու նպատակով վնասում կամ ոչնչացնում է այլ գույք (դրամ հափշտակելու նպատակով կոտրում է բանկոմատ կամ պայթեցնում է չիրկիզվող պահարան), ապա համապատասխան հանցակազմի այլ հատկանիշների առկայության դեպքում հանցավորի արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ (ՀՀ քր. օր.-ի 177-րդ և 185-րդ հոդվածների համապատասխան մասերով կամ (և) կետերով), քանի որ գույքը դիտավորյալ ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմը դուրս է գողության հանցակազմի սահմաններից»<sup>97</sup>:

---

<sup>97</sup> Տե՛ս ՀՀ դատախազության կոլեգիայի 2017 թվականի հոկտեմբերի 27-ի որոշումը:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, սակայն, որ Կոլեգիայի որոշմամբ սահմանված՝ հանցագործությունների որակման նշված կանոնը պետք է կիրառվի ոչ միայն այն դեպքերում, երբ անձը բնակարան (պահեստարան կամ շինություն) ապօրինի մուտք գործելով է կատարում գողություն (ավազակություն, կողոպուտ), այլև այլ դեպքերում, այդ թվում՝ հասարակ գողության պարագայում: Բանն այն է, որ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմը դուրս է գտնվում հափշտակության հանցակազմերի շրջանակներից: Բացի այդ, նկարագրված դեպքերում գործ ունենք իրական համակցության հետ:

Միաժամանակ հարկ է նկատել, որ վերոհիշյալ իրավիճակներում խոսքը հափշտակության առարկա չհանդիսացող գույքի մասին է: Ինչ վերաբերում է հափշտակության առարկա գույքի հանցավոր տնօրինման որակմանը, ապա դրա առանձնահատկություններն արդեն իսկ վերը քննարկվել են:

«Քրեական օրենսգրքում՝ ըստ կատարման եղանակի որակյալ որոշ հանցակազմերի կառուցվածքում, նախատեսված է նաև հանցանքը **պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարելը**: Մինչույն ժամանակ, քր. օր.-ի՝ «Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունները» գլխում նախատեսված են առանձին հանցագործություններ, որոնք պաշտոնեական դիրքն օգտագործելու ինքնուրույն դրսևորումներ են (օրինակ՝ 308-րդ հոդվածով նախատեսված՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելը): Այս առումով հարկ է նշել, որ պաշտոնեական դիրքն օգտագործելն այն հանցագործություններում, որոնց հանցակազմերում այն նախատեսված է որպես որակյալ հատկանիշ, մի դեպքում կարող է որակվել որպես եզակի հանցագործություն, մյուսում՝ պաշտոնեական համապատասխան հանցագործության հետ համակցությամբ:

Նման իրավիճակներում **որակման կանոնը հետևյալն է.**

- եթե պաշտոնեական դիրքն օգտագործելն ավելի ծանր հանցանք կատարելու եղանակ է, ապա կատարվածը որակվում է որպես եզակի բարդ հանցագործություն,
- եթե պաշտոնեական դիրքն օգտագործելը հավասարապես կամ առավել խիստ է պարզվում, քան ամբողջ հանցագործությունը, որի կատարման համար օգտագործվում է այդ եղանակը, ապա



*կատարվածը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ:*

Այսպես, օրինակ՝ եթե գների չարաշահումը կատարվում է պաշտոնական դիրքն օգտագործելով, ապա կատարվածը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի 190.2. հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով: Միևնույն ժամանակ, եթե անձի կողմից, պաշտոնական դիրքն օգտագործվելով, խախտվում է այլ անձի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունը, ապա կատարվածը, համապատասխան հատկանիշների առկայության դեպքում, պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ՝ ՀՀ քր. օր.-ի 146-րդ հոդվածի 2-րդ մասով և 308-րդ հոդվածի 1-ին մասով:

Միևնույն ժամանակ հարկ է առանձնահատուկ ընդգծել, որ, եթե քրեաիրավական պաշտպանության օբյեկտը դուրս է գալիս ամբողջ բաղկացական հանցագործության կառույցի ոտնձգության օբյեկտի շրջանակներից, ապա այդ ոտնձգությունը պետք է արժանանա ինքնուրույն քրեաիրավական գնահատականի (այս պարագայում հաշվի չեն առնվում բաղկացական հանցագործության որակման կանոնները): Այլ խոսքով, եթե հանցակազմում բացակայում է քրեաիրավական պաշտպանության այս կամ այն **լրացուցիչ օբյեկտի** վերաբերյալ որևէ նշում, և հանցանքը կատարելիս օգտագործված եղանակը կամ միջոցը միաժամանակ ոտնձգում է նաև այլ օբյեկտի դեմ, ապա այդ փաստը պետք է լրացուցիչ որակվի:

Տվյալ մոտեցման պարագայում ելնում ենք նաև այն գաղափարից, որ, եթե այս կամ այն հանցագործությունը հանդիսանում է մեկ այլ հանցագործության եղանակ (միջոց), կատարվածը կարող է որակվել որպես եզակի հանցագործություն միայն բաղկացական հանցագործության կառույցի առկայության դեպքում: Այլ կերպ ասած, եթե հանցակազմը նախատեսում է հանցանքը տվյալ եղանակով կատարելու վերաբերյալ որևէ նշում (հիմնական, որակյալ, առավել որակյալ հատկանիշ): Մինչդեռ, եթե բացակայում է բաղկացական կառույցը (օրինակ՝ առկա է եզակի պարզ հանցակազմով հանցագործություն), և արարքը կատարվում է հանցավոր եղանակով, ապա կատարվածը ձևավորում է հանցագործությունների համակցություն (այս պարագայում բացակայում է նաև քրեաիրավա-

կան նորմերի մասի և ամբողջի մրցակցությունը): Այսպես՝ եթե հանցանքը կատարելիս կիրառվում է պաշտոնեական դիրքն օգտագործելու եղանակը, բայց հողվածի դիսպոզիցիայում բացակայում է դրա վերաբերյալ որևէ նշում, ապա ամեն դեպքում կատարվածը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ. Քրեական օրենսգրքի համապատասխան հողվածով, հողվածի մասով կամ (և) կետով և պաշտոնեական հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող համապատասխան հանցակազմով: Օրինակ՝ եթե քվեարկության գաղտնիությունը խախտվում է անձի կողմից իր պաշտոնեական լիազորությունները չարաշահելու եղանակով, ապա կատարվածը, համապատասխան այլ հատկանիշների առկայության դեպքում, պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի 154-րդ և 308-րդ հողվածներով նկարագրված հանցագործությունների համակցությամբ:

Որակման տվյալ կանոնը կիրառվում է նաև այն բաղկացական հանցագործությունները որակելիս, որոնց հանցակազմերի (որակյալ կամ առավել որակյալ) հատկանիշ է **բռնության գործադրումը**: Այսպես՝

- երբ բարդ բռնարարքային հանցագործության համար քրեական օրենսգրքով նախատեսվում է առավել խիստ պարիժ, քան այդ հանցանքի կատարման եղանակ համարվող բռնության համար է, արարքը որակվում է միայն բարդ հանցագործության համար պատասխանատվություն նախատեսող հողվածով (հողվածի մասով կամ կետով) և բռնության գործադրման փաստն առանձին չի որակվում (օրինակ՝ եթե բռնաբարությունը կատարվում է անձի առողջությանը դիտավորյալ թեթև կամ միջին ծանրության վնաս պատճառելով, ապա կատարվածը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի 138-րդ հողվածով):
- երբ բարդ բռնարարքային հանցագործության համար քրեական օրենսգրքով նախատեսված պարիժն առավել մեղմ է, քան գործադրված բռնության համար ինքնուրույն պատասխանատվություն նախատեսող հողվածի սանկցիան է, կամ հավասար դրան, ապա կատարվածը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ (օրինակ՝ եթե բռնաբարություն կատարելիս տուժողի առողջությանը դիտավորյալ պատճառվում է ծանր

վնաս, ապա կատարվածը, բացի ՀՀ քր. օր.-ի 138-րդ հոդվածից, անհրաժեշտ է որակել նաև ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով)<sup>98</sup>:

Ասվածով պայմանավորված՝ ինչպես արդեն նշվել է, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ բաղկացական հանցագործությունները որակելիս, որոշելու համար՝ կատարվածը եզակի հանցագործություն է, թե հանցագործությունների համակցություն, պետք է հաշվի առնել հետևյալ չափանիշը ևս. բաղկացական հանցագործությունների բաղադրիչները, ըստ կատեգորիայի ու դրան համապատասխան պատժելիության, չեն կարող ավելի վտանգավոր լինել միասնական բարդ հանցագործությունից կամ լինել դրան հավասար: Ընդ որում, այս կապակցությամբ բարդագույն խնդիրը, որն առաջ է գալիս, միջոց-հանցագործության և արդյունք-հանցագործության համար նախատեսված սանկցիաների խստությունը համեմատելու գիտականորեն հիմնավորված չափանիշների և կոնկրետ-որոշակի մեթոդիկայի բացակայությունն է: Այսինքն՝ ներկայումս քրեական իրավունքի դոկտրինում և դատական պրակտիկայում բացակայում են այն հստակ չափանիշները, որոնք հիմք ընդունելով, կարելի է ասել, որ միջոց-հանցագործությունը հավասար կամ առավել խիստ է պատժվում, քան դրա արդյունք-հանցագործությունը, և դա հիմք ընդունելով՝ լուծել որակման գլխավոր հարցը. կատարվածը որակել որպես մեկ եզակի հանցագործություն՝, թե՞ հանցագործությունների համակցություն:

Այսպիսով, հաշվի առնելով քրեական իրավունքում հանցագործությունների տեսակային հարաբերության վերաբերյալ առկա մոտեցումները, ինչպես նաև ՀՀ քր. օր.-ում պատիժ նշանակելու ընդհանուր կանոնները (61-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները)՝ կարելի է ներկայացնել հետևյալ ալգորիթմը, որի հաշվառմամբ հնարավոր է իրականացնել քրեաիրավական նորմերի սանկցիաների համեմատական վերլուծություն.

---

<sup>98</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս սույն աշխատության՝ «Հանցագործությունների որակումը քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում» պարագրաֆում:

- որոշել հանցագործության տեսակը,
- պարզել նորմի սանկցիայում ազատությունից զրկելու հետ կապված պատժատեսակի առկայությունը կամ բացակայությունը,
- գնահատել պատժի վերին սահմանը (առավելագույն չափը),
- գնահատել պատժի ստորին սահմանը (նվազագույն չափը),
- որոշել սանկցիայում լրացուցիչ պատժատեսակի առկայությունը,
- գնահատել լրացուցիչ պատժի պարտադիր լինելը:

Ներկայացված ալգորիթմի համաձայն՝ երկու հանցագործությունների սանկցիաներից առավել խիստ է այն, որը պատիժ է նախատեսում առավել ծանր հանցագործության համար: Միևնույն տեսակի հանցագործությունների պարագայում առավել խիստ կհամարվի այն սանկցիան, որը որպես պատժատեսակ է նախատեսում ազատությունից զրկելու հետ կապված պատիժ (պատիժներ): Այդօրինակ նորմերի սանկցիաներից առավել խիստ կհամարվի այն, որում նկարագրված պատժի վերին սահմանն առավել բարձր է: Միևնույն ժամանակ, այդ նորմերի սանկցիաներում նախատեսված պատիժների վերին սահմանների հավասարության դեպքում՝ առավել խիստ կհամարվի այն, որի ստորին սահմանն առավել բարձր է: Բացի այդ, քրեաիրավական նորմերի սանկցիաների խստությունը կարող է որոշվել դրանցում լրացուցիչ պատժի առկայության և դրա պարտադիր լինելու հանգամանքների հաշվառմամբ:

Հարկ է նկատել, որ հանցագործությունների որակման գործընթացում քրեաիրավական նորմերի սանկցիաների համեմատությունը կատարվում է ոչ միայն նորմերի մրցակցությունը հանցագործությունների համակցությունից տարանջատելու, այլև նոր քրեական օրենքին հետադարձություն շնորհելու հարցը լուծելու համար (այս մասին հաջորդիվ) և այլն:

Բաղկացական հանցագործությունները որակելիս միջոց - հանցագործության և արդյունք - հանցագործության համար նախատեսված պատիժների խստությունը համեմատելիս անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն այդ հանցագործությունների հիմնական հանցակազմերի սանկցիաներում նախատեսված պատիժները, այլև գնահատել տվյալ հանցագործությունների որակյալ և առավել որակյալ հանգամանքներով զուգորդված հանցակազմերի սանկցիաները: Այսպես, պրոֆեսոր Լ.Վ. Ինոգամովա-Խեզայը արդարացիորեն

նկատում է, որ արարքն անհրաժեշտ է որակել հանցագործությունների համակցությամբ, եթե նորմ - ամբողջն իր մեջ պարունակում է նորմ - մասի միայն հիմնական հանցակազմի հատկանիշները<sup>99</sup>:

Այս գաղափարի հետագա զարգացումը թույլ է տալիս ձևավորելու բաղկացական հանցագործության և դրա բաղադրիչ հանցագործության հիմնական, որակյալ և առավել որակյալ հանցակազմերի որակման հետևյալ կանոնները.

- եթե բաղկացական հանցագործության (արդյունք - հանցագործության) հիմնական հանցակազմը, սանկցիայի խստությամբ պայմանավորված, չի ներառում դրա բաղադրիչ հանցագործության (միջոց - հանցագործության) հիմնական հանցակազմի բոլոր հատկանիշները, ապա, անկախ բաղկացական հանցագործության որակյալ և առավել որակյալ հանցակազմերի սանկցիաների խստությունից, դրանցում չի կարող ներառվել բաղադրիչ հանցագործության հանցակազմը,
- եթե բաղկացական հանցագործության (արդյունք - հանցագործության) հիմնական հանցակազմը, սանկցիայի խստությամբ պայմանավորված, ներառում է դրա բաղադրիչ հանցագործության (միջոց - հանցագործության) հիմնական հանցակազմի հատկանիշները, ապա բաղկացական հանցագործության և դրա բաղադրիչ հանցագործության որակյալ և առավել որակյալ հանցակազմերի ծավալների համեմատությունն իրականացվում է դրանց սանկցիաները համեմատելու միջոցով:

Որակման այս կանոնների հիմքում ընկած է հանցակազմերի մասին ուսմունքի այն դրույթը, ըստ որի՝ հանցագործության որակյալ հանցակազմն իր մեջ բովանդակում է տվյալ հանցագործության հիմնական հանցակազմի բոլոր հատկանիշները, իսկ առավել որակյալը՝ ինչպես հիմնական, այնպես էլ որակյալ հանցակազմի բոլոր հատկանիշները:

Որպես օրինակ՝ դիտարկենք բռնաբարությունը (<< քր. օր.-ի հոդված 138) և դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը (<< քր. օր.-ի հոդված 112): Քննարկվող հոդվածների սանկցիաների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ

---

<sup>99</sup> St'u Иногамова-Хегай Л.В. Концептуальные основы конкуренции уголовно-правовых норм. - М.: Норма - Инфра-М, 2015, էջ 156:

բռնաբարության հիմնական հանցակազմը չի ներառում դիտավորությամբ մեկ ուրիշի առողջությանը ծանր վնաս պատճառելը: Բանն այն է, որ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հիմնական հանցակազմի սանկցիան առավել խիստ է, քան բռնաբարության հանցակազմինը: Հետևաբար, բռնաբարության ո՛չ որակյալ, ո՛չ էլ առավել որակյալ հանցակազմերը, անկախ սանկցիայի խստությունից, չեն կարող ներառել դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցակազմի հատկանիշները (ընդ որում՝ այդ հանգամանքը կոնկրետ կամ ընդհանուր կերպով նկարագրված չէ բռնաբարության ո՛չ որակյալ, ո՛չ էլ առավել որակյալ հանցակազմերում): Ասվածով պայմանավորված՝ եթե, օրինակ՝ տասնչորս տարին չլրացած անձի բռնաբարությունն իրականացվում է նրա առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելով, ապա կատարվածը, բացի ՀՀ քր. օր.-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետից, անհրաժեշտ է որակել 112-րդ հոդվածով՝ անկախ նրանից, որ 138-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նկարագրված հանցագործությունն առավել խիստ է պատժվում, քան 112-րդ հոդվածով (2-րդ մասի 11-րդ կետով) նախատեսվածը:

Այս առումով դժվար է համաձայնել այն գիտնականների հետ, ովքեր գտնում են, որ կատարվածը վերը նկարագրված իրավիճակում ներառվում է բռնաբարության առավել որակյալ հանցակազմի շրջանակներում և լրացուցիչ որակում՝ որպես անձի առողջության դեմ ուղղված հանցագործություն, չի պահանջվում<sup>100</sup>:

Հարկ է նկատել, սակայն, որ բաղկացական հանցագործության վերը նշված կանոնները գործում են, երբ միջոց – հանցագործությունը չի նկարագրվում (կոնկրետանում) բաղկացական հանցագործության (արդյունք-հանցագործության) ինչպես հիմնական, այնպես էլ որակյալ կամ առավել որակյալ հանցակազմերում: Մինչդեռ, եթե միջոց – հանցագործության հիմնական հանցակազմը, թեև, չի կլանվում արդյունք – հանցագործության հիմնական հանցակազմում, սակայն դրա որակյալ կամ առավել որակյալ հանցակազմերը ընդհանուր կամ կոնկրետ-որոշակի կերպով նկարագրում են այդ միջոց – հանցագործության հատկանիշները՝ դրանով ստեղծելով

<sup>100</sup> Տե՛ս, օրինակ՝ Иногамова-Хегай Л.В. Концептуальные основы конкуренции уголовно-правовых норм. М.: Норма - Инфра-М, 2015, էջ 162:

լրիվ կլանման հիմքերը, ապա կատարվածը որակվում է որպես եզակի հանցագործություն: Այսպես, օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 131-րդ հոդվածի (մարդուն առևանգելը) հիմնական հանցակազմը չի ներառում անձի առողջությանը ծանր վնաս պատճառելու հիմնական հանցակազմը (հոդված 112-ի 1-ին մաս): Միևնույն ժամանակ, հոդված 131-ի 2-րդ մասի 2-րդ կետը կլանում է անձի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու հանգամանքը և բացառում դրա լրացուցիչ որակումը:

Եթե մարդուն առևանգելիս նրա առողջությանը ծանր վնաս պատճառելը, սակայն, որոշակի հանգամանքով պայմանավորված, ՀՀ քր. օր.-ի հոդված 112-ի 2-րդ մասով նկարագրված որակյալ հանցակազմ է պարունակում, ապա կատարվածը, 131-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետից բացի, հարկ է որակել նաև 112-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխան կետով: Օրինակ՝ եթե անձին առևանգելիս նրա առողջությանը ծանր վնաս պատճառվում է հանցանքի կատարումը հեշտացնելու նպատակով, ապա կատարվածը, բացի ՀՀ քր. օր.-ի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետից, հարկ է որակել նաև 112-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով: Բանն այն է, որ ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված հանցանքն առավել խիստ է պատժվում, քան 131-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսվածն է:

Դիտարկվող հիմնախնդրի առնչությամբ ուշագրավ է այն հարցի քննարկումը, թե արդյո՞ք իրավաչափ է բաղկացական հանցագործության և դրա բաղադրիչ հանցագործության հանցակազմերում (որակյալ, առավել որակյալ) նկարագրված միևնույն հանգամանքների հաշվառումը և որակման բանաձևում արտացոլումը: Այսպես, օրինակ՝ երբ ավազակություն կատարելիս տուժողի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելն անզուգույնությամբ առաջացնում է տուժողի մահ: Մեր կարծիքով, տվյալ դեպքում կատարվածը պահանջում է ձևավորել հանցագործությունների համակցություն: Բանն այն է, որ տուժողին անզուգույնությամբ մահ պատճառելը դուրս է ավազակության հանցակազմի շրջանակներից: Ուստի, միայն դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելով կատարված ավազակության փաստին գնահատական տալով, չի իրականացվի տուժողի կյանքի իրավունքի ապահովմանն ուղղված

հասարակական հարաբերությունների քրեաիրավական պաշտպանությունը:

Միաժամանակ, սակայն, հարց է առաջանում, թե նման դեպքերում ինչպե՞ս պետք է որակվի հանցավորի արարքը. ՀՀ քր. օր.-ի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով, թե՞ 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 109-րդ հոդվածով: Մասնագիտական գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ կատարվածը քր. օր.-ի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով որակելը բերում է նրան, որ անձի առողջությանը ծանր վնաս պատճառելու փաստը երկու անգամ է արժանանում քրեաիրավական գնահատականի. մեկը՝ որպես ավազակության առավել որակյալ հատկանիշ, մյուսը՝ ինքնուրույն հանցագործություն: Մինչդեռ, կատարվածը 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 109-րդ հոդվածով որակելը թույլ է տալիս գնահատական տալ ինչպես ավազակություն կատարելիս տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելու, այնպես էլ վերջինիս անզգուշությամբ մահ պատճառելու փաստերին՝ չխախտելով կրկնակի մեղսայնացման արգելքի սկզբունքը<sup>101</sup>:

Տվյալ մոտեցմանը, սակայն, դժվար է միանշանակորեն համաձայնել: Բանն այն է, որ հանցագործությունների իդեալական համակցության օրենսդրական բնորոշումից հետևում է, որ կատարվածը որակելիս հանցավորի արարքում առկա հանցագործության յուրաքանչյուր հատկանիշ, որը նկարագրված է քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներում, պետք է գնահատվի և իր արտահայտությունը գտնի որակման բանաձևում:

Այս կապակցությամբ հարկ է փաստել, որ հանցագործության հանցակազմը պարզապես հատկանիշների հավաքածու չէ: Յուրաքանչյուր հատկանիշ, որը նախատեսված է այս կամ այն հանցակազմում, պետք է պարտադիր հաշվի առնվի, անկախ նրանից, կատարվածը եզակի հանցանք է, թե հանցագործությունների համակ-

---

<sup>101</sup> Տե՛ս, օրինակ՝ Марцев А.И., Токарчук Р.Е. Вопросы совокупного вменения разбоя или вымогательства и преступлений против жизни // Уголовное право, 2008, №2, էջեր 53-59, Зацепин А.М. Дополнительная квалификация преступления. Общие и специальные вопросы. Монография. М.: Проспект, 2019, էջեր 46-72:



ցություն: Ավելին՝ կատարված արարքում քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով նկարագրված միևնույն հատկանիշի առկայության դեպքում դրանցից մեկի մեխանիկական անտեսումն անթույլատրելի է:

Բազմօբյեկտ հանցագործությունների համակցության դեպքում հանցավորին պետք է մեղաազրվեն ինչպես միջոց – հանցագործության, այնպես էլ արդյունք – հանցագործության որակյալ հանգամանքները՝ անկախ նրանից, թե դրանք այդ հանցագործություններում համընկնում (նույնանում) են, թե՛ ոչ: Բանն այն է, որ օրենսդիրը, համապատասխան հանցակազմերը կառուցելիս, այդ հատկանիշներին ինքնուրույն իրավաբանական նշանակություն է տվել: Հետևաբար, երբ ավազակություն կատարելիս տուժողի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու արդյունքում անզգուշությամբ առաջանում է տուժողի մահ, *կատարվածն անհրաժեշտ է որակել ՀՀ քր. օր.-ի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով:*

Նկարագրված օրինակում ավազակության որակումը՝ ՀՀ քր. օր.-ի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 109-րդ հոդվածով, կարծում ենք, կլինի արդարացված, եթե ավազակության ընթացքում տուժողին անզգուշությամբ մահ պատճառելը ոչ թե պատճառական կապի մեջ գտնվի նրա առողջությանը դիտավորությամբ պատճառված ծանր վնասի հետ, այլ հանդիսանա հանցավորի այլ արարքի անզգույշ հետևանք, օրինակ՝ հրազենի հետ անփույթ վարվելու արդյունք և այլն:

***Զուգակցված հանցագործությունների որակումը:***

Եթե քրեական օրենսգրքում նկարագրված հանցակազմում առկա է *մեկ հանցագործությունը մյուսի հետ զուգակցված լինելու* մասին նշում, ապա բաղկացուցիչ հանցագործությունն առանձին չի որակվում, եթե դրա համար՝ որպես ինքնուրույն հանցագործություն, քրեական օրենսգրքով նախատեսված պատիժն առավել մեղմ է: Զուգակցված հանցագործության բաղկացուցիչ արարքը լրացուցիչ որակվում է միայն, եթե քրեական օրենսգրքում դրա՝ որպես ինքնուրույն հանցագործության համար նախատեսված պատիժը հավասար կամ առավել խիստ է:

Բաղկացական հանցագործության ինքնուրույն կառույց՝ **զուգակցված հանցագործությունների** որակման կանոնն<sup>102</sup> իր արտահայտությունն է գտել ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Կարեն Փալանջյանի և մյուսների վերաբերյալ գործով արտահայտած իրավական դիրքորոշման մեջ: Մասնավորապես, սույն գործով Դատարանն արձանագրել է.

«(...) Ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով զուգորդված խուլիգանությունն իր մեջ ընդգրկում է զգալի չափի գույքը դիտարկորությանը ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմը: Այսինքն՝ եթե խուլիգանությունը զուգորդվում է ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով, արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով լրացուցիչ որակելու անհրաժեշտություն չկա, եթե պատճառվել է զգալի չափերի վնաս, որը ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ համարվում է հանցագործության կատարման պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը): Խուլիգանական գործողությունների ընթացքում կատարված ավելի ծանր, քան խուլիգանությունն է, հանցագործությունները (դիտարկությանը առողջությանը ծանր վնաս պատճառելը, ծանրացուցիչ հանգամանքներում դիտարկությանը գույքը վնասելը կամ ոչնչացնելը), որոնք կատարվել են խուլիգանական գործողությունների ընթացքում, պետք է որակվեն խուլիգանության հետ համակցությամբ: Փաստորեն, եթե առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված՝ արարքը որակյալ դարձնող հատկանիշները, այն է՝ գույքը դիտարկությանը վնասելը կամ ոչնչացնելը կատարվել է հրկիզման, պայթյունի կամ հանրավրանգ այլ եղանակով, խոշոր չափերի վնաս է պատճառել, որը ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ համարվում է հանցագործության կատարման պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից երեքհազարապատիկը չգերազանցող գումարը (արժեքը) և այլն,

<sup>102</sup> Զուգակցական հանցագործությունների որակման մասին տե՛ս նաև սույն աշխատության՝ «Հանցագործությունների որակումը քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում» պարագրաֆում:

ապա արարքը ենթակա է որակման հանցագործությունների համակցությամբ»<sup>103</sup>:

**Բաղկացական այն հանցագործությունների որակումը, որոնց հանցակազմի հատկանիշ է ինքնուրույն հանցավոր հետևանքի առաջացումը:**

Սովետական քրեական իրավունքի դպրոցը, բաղկացական հանցագործություն ասելով, հասկանում էր միայն այն հանցանքները, որոնց հանցակազմերը բաղկացած էին երկու կամ ավելի ինքնուրույն հանցավոր արարքներից<sup>104</sup>: Եվ կարծես մեկ արարք և երկու հետևանք կամ ինքնուրույն հանցավոր հետևանք նկարագրող հանցակազմերը չէին դիտվում որպես այդպիսին: Սակայն, այս հանցագործությունների էության և քրեաիրավական բնութագրի ուսումնասիրությունը թույլ է տալիս, լրացուցիչ հանցավոր հետևանք պարունակող հանցագործությունները ևս դասել բաղկացական հանցագործությունների շարքին:

Ասվածը ցայտուն արտահայտվում է այն դիտավորյալ հանցագործությունների պարագայում, որոնց արդյունքում անզգուշությամբ պատճառված ոչ անմիջական հետևանքները հանդես են գալիս իբրև տվյալ հանցակազմի ծանրացնող հանգամանքներով զուգորդված հանցակազմի հատկանիշ: Խոսքը **մեղքի երկու ձևով** կատարվող հանցագործությունների մասին է<sup>105</sup>: Նման դեպքերում դիտավորյալ արարքի արդյունքում անզգուշ հետևանքի պատճառումը

<sup>103</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Կարեն Փալանջյանի և մյուսների վերաբերյալ 27.02.2007թ. թիվ ՎԲ-05/07 գործով որոշումը:

<sup>104</sup> Տե՛ս, օրինակ՝ Кудрявцев В.Н. Объективная сторона преступления. М., 1960, էջ 70, Пионтковский А.А. Учение о преступлении по советскому уголовному праву. М., 1961, էջ 646, Ораздурдыев А.М. Эволюция учения о едином преступлении в уголовном праве. М.: Юрлит., 2020, էջեր 310-311:

<sup>105</sup> Քրեական իրավունքի տեսության մեջ առանձնացվում է մեղքի երկու ձևով կատարվող հանցագործությունների հանցակազմերի երկու տեսակ. 1) երկու հետևանքներով (անմիջական, հեռավոր) *նյութական* հանցակազմեր (օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 112-ի 2-րդ մասի 14-րդ կետ) և 2) հանցագործության հիմնական հանցակազմի օրենսդրական նկարագրման եղանակը *ձևական է*, իսկ հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսվում են որպես հիմնական հանցակազմը ծանրացնող կամ առավել ծանրացնող հետևանք (օրինակ՝ հոդված 131-ի 3-րդ մասի 2-րդ կետ):

լրացուցիչ որակում չի պահանջում, քանի որ այն ընդգրկվում է մեղքի երկու ձևով կատարվող բաղկացական հանցագործության կառուցում՝ որպես որակյալ հատկանիշ: Օրինակ՝ եթե բռնաբարության հետևանքով տուժողին անզգուշությամբ մահ է պատճառվում, ապա կատարվածը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, և լրացուցիչ որակում ՀՀ քր. օր.-ի 109-րդ հոդվածով չի պահանջվում:

Հանցագործությունների որակման գործընթացում նաև **մեղքի երկու ձևով կատարվող հանցանքները հանցագործությունների իդեալական համակցությունից սահմանազատելու** անհրաժեշտություն է առաջանում: Բանն այն է, որ երկու դեպքում էլ խոսքը մեկ արարքի մասին է:

Մասնագիտական գրականության մեջ այս երկու երևույթների տարբերակումն իրականացվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներով: Մասնավորապես, նշվում է, որ մեղքի երկու ձևով կատարվող հանցագործությունների դեպքում արարքն իրականացվում է դիտավորությամբ, որի արդյունքում համապատասխանաբար առաջանում է երկու հետևանք: Անմիջական հետևանքը համարվում է ցանկալի կամ գիտակցաբար թույլ տրված, իսկ հեռավոր հետևանքները՝ ոչ ցանկալի: Այն հետևանքները, որոնց առաջանալուն ձեռնամուխ չի եղել հանցավորը, առաջանում են որպես սուբյեկտի կողմից դիտավորյալ կատարված արարքի հետագա զարգացման արդյունք: Այդպիսի հեռավոր հետևանքները կարող են մեղսագրվել անձին միայն այն դեպքում, եթե վերջինս գիտակցում է դրանց առաջանալու վերացական հնարավորությունը, սակայն ինքնավստահորեն հույս է ունենում, որ դրանք կկանխվեն, կամ ընդհանրապես չի նախատեսում իր արարքի հեռավոր հետևանքները, թեև, օգտագործվող գործիքից, միջոցից և հանցանքը կատարելու այլ հանգամանքներից դատելով, պարտավոր էր և կարող էր նախատեսել դրանք<sup>106</sup>:

Իդեալական համակցության դեպքում անձի կատարած արարքի արդյունքում միաժամանակ առաջանում են քրեական օրենսգրքի *տարբեր* հոդվածներով նախատեսված հանցավոր հետևանքներ, և

<sup>106</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Դասագիրք բուհերի համար: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջեր 209-213:

կատարվածը միաժամանակ որակվում է քրեական օրենսգրքի այն հոդվածներով, որոնց հատկանիշներին համապատասխանում է անձի արարքը: Բացի այդ՝ հարկ է նկատել, որ այն դեպքում, երբ մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություններում հեռավոր, ոչ անմիջական հետևանքը ինքնուրույն (քր. օր.-ի մեկ այլ հոդվածով նախատեսված) հանցագործության հետևանք է, և անձի կատարած արարքի հետ միասին կազմում է ինքնուրույն հանցագործություն, գործ ենք ունենում բաղկացական հանցակազմերի օրենսդրական նկարագրման մոդելի հետ: Դա ոչ այլ ինչ է, քան օրենսդրորեն հաշվի առնված համակցություն (տվյալ դեպքում՝ դիտավորյալ և անզգույշ հանցագործությունների իդեալական համակցություն):

Այսպիսով, մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություններն օրենսդրորեն հաշվի առնված իդեալական համակցություններ են, որոնց դեպքում արարքը որակվում է մեկ անգամ, մեկ հոդվածով՝ որպես եզակի հանցագործություն: Հանցագործությունների որակման տեսանկյունից այս դրույթի էությունն այն է, որ, անկախ արարքի արդյունքում առաջացած հետևանքների ինքնուրույն քրեաիրավական նշանակություն ունենալուց, կատարվածը որակվում է միայն այն հոդվածով, որով նկարագրված է մեղքի երկու ձևով հանցագործությունը: Այսինքն՝ անձի կատարած արարքն ամբողջությամբ տեղավորվում է տվյալ հանցակազմի շրջանակներում և որակվում որպես եզակի հանցագործություն:

Ասվածից հետևում է, որ մեղքի երկու ձևով կատարվող հանցագործության *օրենսդրական կառույցի բացակայության դեպքում*, երբ անձի դիտավորյալ հանցագործության արդյունքում առաջանում է օժանդակ հետևանք, որն ինքնուրույն հանցակազմ է ներկայացնում, և այդ հետևանքի նկատմամբ անձը ցուցաբերում է անզգույշ մեղքի ձև, *կատարվածը ձևավորում է հանցագործությունների իդեալական համակցություն*: Պատկերացնենք հետևյալ իրավիճակը. անձը տուժողի առողջությանը դիտավորությամբ միջին ծանրության վնաս է պատճառում, ինչը, տուժողի մոտ առկա հիվանդության հետևանքով, հանգեցնում է վերջինիս մահվան: Եթե հանցավորի կողմից տուժողի մահվան նկատմամբ դրսևորվի անզգույշ մեղքի ձև, կատարվածը անհրաժեշտ է որակել հանցագործությունների իդեալական համակցությամբ՝ ՀՀ քր. օր.-ի 113-րդ և 109-րդ հոդվածներով:

Բանն այն է, որ քր. օր.-ի 109-րդ հոդվածով նկարագրված անզգուշությամբ մահ պատճառելու հանցակազմը չի հանդիսանում ՀՀ քր. օր.-ի 113-րդ հոդվածով նկարագրված հիմնական հանցակազմը ծանրացնող հանգամանքներով զուգորդված հանցակազմի հատկանիշ, այսինքն՝ դուրս է դրա շրջանակներից: Հետևաբար, բացակայում է մեղքի երկու ձևով կատարվող հանցագործության հանցակազմը, և կատարված յուրաքանչյուր հանցանք պետք է արժանանա ինքնուրույն քրեաիրավական գնահատականի:

Այլ խոսքով՝ եթե քրեական օրենսգրքի Հատուկ մասում նկարագրված հանցակազմը չի նախատեսում հանցագործությունը մեղքի երկու ձևով կատարելու վերաբերյալ նշում, ապա անզգույշ հետևանքների պատճառումը չի կարող գնահատվել որպես դիտավորյալ հանցագործության բաղադրիչ (տարր): Ուստի՝ *եթե դիտավորյալ արարքի արդյունքում առաջանում է ինքնուրույն հանցակազմ պարունակող հետևանք, որի նկատմամբ հանցավորը դրսևորում է անզգույշ մեղքի ձև, և որը չի հանդիսանում փվյալ հանցագործության բաղադրիչ, ապա այն բոլոր դեպքերում պետք է արժանանա ինքնուրույն քրեաիրավական գնահատականի*: Այսպես, օրինակ՝ եթե խմբի կողմից նախնական համաձայնությամբ կատարվող ավազակային հարձակման ընթացքում անզգուշությամբ ծանր վնաս է պատճառվում տուժողի առողջությանը, ապա կատարվածը որակվում է հանցանքների համակցությամբ (ՀՀ քր. օր.-ի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 120-րդ հոդվածի 1-ին մասով)՝ անկախ այն հանգամանքից, որ քր. օր.-ի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործությունն առավել խիստ է պատժվում, քան 120-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվածը: Հանցավորի արարքն այդ հոդվածներից միայն մեկով որակելու դեպքում կխախտվի որակման լրիվության սկզբունքը և կիրականացվի նկարագրված ոտնձգության երկու օբյեկտներից միայն մեկի քրեաիրավական պաշտպանությունը:

Վերոհիշյալ կանոնի կիրառելիությունը դժվարություն չի հարուցում այն դեպքերում, երբ մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություններում հեռավոր, ոչ անմիջական հետևանքը հանցակազմերում նկարագրված է կոնկրետ-որոշակի (օրինակ՝ *անզգուշությամբ առաջացրել է փոժողի մահ, առողջության ծանր կամ միջին ծան-*

րության վնաս և այլն): Մինչդեռ, երբ դիտավորյալ հանցանքից առաջացած հեռավոր, ոչ անմիջական հետևանքները քրեական օրենքում նկարագրելու համար օրենսդիրն օգտագործում է արժեքավորվող հասկացություններ (գնահատողական կատեգորիաներ), օրինակ՝ *անզգուշությամբ այլ ծանր հետևանքներ առաջացնելը* և այլն, որակումն իրականացնող սուբյեկտի գործը էականորեն բարդանում է: Նման դեպքերում իրավակիրառողից պահանջվում է որոշել կոնկրետ հանցակազմի իմաստով այն արժեքավորվող հատկանիշների բովանդակությունը, որոնք օրենսդրի կողմից դրվել են այդ որակյալ հանցակազմերի ձևավորման հիմքում: Արժեքավորվող հատկանիշների բովանդակությունը բացահայտելիս հարկ է առաջնորդվել այն ընդհանուր ուղենիշներով, որոնք թույլ կտան վեր հանելու այդ արժեքները և կատարվածն արժանացնել ճիշտ քրեաիրավական գնահատականի<sup>107</sup>:

Լրացուցիչ հետևանքով<sup>108</sup> բաղկացական հանցագործությունները որակելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև հանցակազմում դրա նկարագրման առանձնահատկություններին: Քանզի հանցավոր հետևանքի օրենսդրական նկարագրման եղանակը կարող է պայմանավորել քրեաիրավական նորմի ճիշտ ընտրությունը և իրավակիրառողին կողմնորոշել այն հարցում՝ կատարվածը եզակի

---

<sup>107</sup> Նման դեպքերում պետք է ոչ միայն հաշվի առնել հետևանքի բնույթը, չափը կամ ծանրության աստիճանը, այլև ուշադրություն դարձնել մեղքի ձևին, որով պատճառվել է այդ հետևանքը:

<sup>108</sup> Հանցագործության հետևանքը բնութագրվում է երկու չափանիշով՝ բնույթով և չափով (ծանրության աստիճանով): Հանցագործության հետևանքների բնույթն արտահայտվում է պատճառվող վնասի հատկություններում ու որակում և ցույց է տալիս, թե հանցագործության օբյեկտի որ տարրերին է վնաս պատճառվում: Քրեական օրենսգրքի մի ամբողջ շարք հոդվածներում նախատեսված են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են չափը, պատճառված վնասը: Այդ տերմինների (տարրերի) օգտագործմամբ օրենսդիրը կառուցում է հանցագործության ինչպես հիմնական, այնպես էլ որակյալ և առավել որակյալ հանցակազմերը: Ընդ որում՝ «չափ» և «վնաս» հասկացություններն օգտագործում են այն հանցակազմերում, որոնցում հետևանքները հաշվարկային բնույթ են կրում:

հանցագործություն է, թե պահանջում է հանցագործությունների համակցված որակում:

Ասվածի կապակցությամբ անհրաժեշտ է նկատել, որ քրեական օրենքի Հատուկ մասի հոդվածում բաղկացական հանցագործություններում լրացուցիչ հետևանքը, որն ինքնուրույն հանցակազմ է պարունակում, կարող է նկարագրված լինել կոնկրետ-որոշակի (օրինակ՝ անզգուշությամբ տուժողի մահ առաջացնելը՝ հոդված 112-րդ, մաս՝ երկրորդ, կետ՝ 14-րդ և այլն) կամ այդ հետևանքները նկարագրելիս օգտագործվեն արժեքավորվող հասկացություններ<sup>109</sup> (օրինակ՝ *անզգուշությամբ ծանր հետևանքներ առաջացնելը*<sup>110</sup>՝ ՀՀ

---

<sup>109</sup> Արժեքավորվող հասկացություններով քրեաիրավական նորմի բովանդակությունը որոշելու օրենսդրի մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հնարավոր չէ ճշգրիտ որոշել և սահմանել այն հետևանքները, որոնք կարող են վրա հասնել տվյալ հանրորեն վտանգավոր արարքի արդյունքում: Միաժամանակ արժեքավորվող հասկացությունների գնահատումը և որոշումը որոշակի բարդություն է առաջացնում, ինչը պահանջում է առանձին ուշադրություն:

<sup>110</sup> Հարկ է նկատի ունենալ, որ քրեական օրենսգրքի որոշ հոդվածներում նախատեսված է «ծանր հետևանքներ առաջացնելը» (օրինակ՝ հոդվածներ 214, 240.1, 301.1, 341.2 և այլն), իսկ մյուսներում՝ «անզգուշությամբ ծանր հետևանքներ առաջացնելը» (օրինակ՝ հոդվածներ 127, 237, 251, 252 և այլն): Այն դեպքերում, երբ քր. օր.-ի Հատուկ մասի հոդվածում որպես որակյալ հանգամանք է նախատեսված ծանր հետևանքներ առաջացնելը՝ առանց անզգույշ մեղքի ձևի վերաբերյալ նշման, ենթադրվում է միայն դիտավորությունը: Հետևաբար, այդ հետևանքների նկատմամբ հանցավորի անզգույշ մեղքի դրսևորման դեպքում դրանք պետք է արժանանան ինքնուրույն քրեաիրավական գնահատականի: Մինչդեռ, եթե հոդվածում որպես որակյալ հանգամանք է նախատեսված անզգուշությամբ այլ ծանր հետևանքներ առաջացնելը, ապա այդ հետևանքների նկատմամբ դիտավորյալ մեղքի դրսևորման դեպքում կատարվածը պահանջում է միանգամայն այլ որակում: Միաժամանակ, քր. օր.-ում առկա են հանցակազմեր, որոնք ծանր հետևանքների առաջացումը, որպես որակյալ հանգամանքներ, նախատեսում են ինչպես դիտավորության, այնպես էլ անզգուշության պարագայում (օրինակ՝ հոդվածներ 253, 336, 352 և այլն): Այդ հանցակազմերի իմաստով ծանր հանդիսացող հետևանքները ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անզգուշությամբ պատճառվելու դեպքերում կլանվում են տվյալ հանցակազմերի համապատասխան մասի կամ կետի շրջանակներում:



քր. օր.-ի հոդվածներ 131-րդ, մաս՝ 2-րդ, կետ՝ 2-րդ, 252-րդ, մաս՝ 2-րդ, կետ՝ 4-րդ և այլն):

Այսպես. վերոգրյալի համատեքստում կարելի է առանձնացնել որակման հետևյալ կանոնները.

– Եթե բաղկացական հանցագործության բաղադրիչ հանցավոր հետևանքը նկարագրված է կոնկրետ-որոշակի, ապա այն առաջանալու դեպքում արարքը որակվում է որպես եզակի հանցագործություն: Օրինակ՝ եթե ապօրինի աբորտ կատարելու արդյունքում հանցավորն անզգուշությամբ մահ է պատճառում տուժողին կամ ծանր վնաս նրա առողջությանը, ապա կատարվածը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի 122-րդ հոդվածի 3-րդ մասով և լրացուցիչ որակում ՀՀ քր. օր.-ի 109-րդ կամ 120-րդ հոդվածներով չի պահանջվում:

– Եթե բաղկացական հանցագործությունների բաղադրիչ հանցավոր հետևանքը նկարագրված է ոչ թե կոնկրետ-որոշակի, այլ արժեքավորվող հասկացությունների (զնահատողական կատեգորիաների) միջոցով, ապա անհրաժեշտ է պարզել հետևյալը. քննարկվող հանցակազմի իմաստով ինքնուրույն հանցակազմ պարունակող հետևանքն ամբողջությամբ, թե՞ մասամբ է կլանվում բաղկացական հանցագործության հանցակազմում:

Տվյալ դեպքում ևս որպես առանցքային որոշիչ է հանդես գալիս քրեաիրավական համապատասխան նորմերի սանկցիաների համադրումը: Հետևաբար, պարզելու համար ինքնուրույն հանցակազմ պարունակող անզգույշ հետևանքներն ընդգրկվում են մեկ բաղկացական հանցագործության կառույցում, թե՛ ոչ, անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցադրմանը. ինչպիսի՞ն է բաղկացական հանցագործության և դրա բաղադրիչ հետևանք-հանցագործության միջև հարաբերության բնույթը (այսինքն՝ կլանումը լրի՞վ է, թե՞ մասնակի):

Մասնավորապես, այն դեպքում, երբ *բաղկացական հանցագործության համար քրեական օրենսգրքով նախատեսված պատիժն առավել խիստ է, քան դրա լրացուցիչ հետևանքի (բաղադրիչ հանցագործության) համար, ապա կատարվածը որակվում է որպես եզակի հանցագործություն: Մինչդեռ, եթե բաղկացական հանցագործություն ձևավորող լրացուցիչ հետևանքը (բաղադրիչ հանցագործու-*

*թյունը) հավասար կամ առավել խիստ է պատժվում, քան ամբողջ բաղկացական հանցագործությունն ինքնին, ապա կատարվածն անհրաժեշտ է որակել հանցագործությունների համակցության կանոններով:*

Այսպես, օրինակ՝ եթե համակարգչային սաբոտաժի արդյունքում տուժողի գույքն անզգուշությամբ ոչնչացվում կամ վնասվում է կամ նրան անզգուշությամբ մահ է պատճառվում, ապա կատարվածը կլանվում է ՀՀ քր. օր.-ի 253-րդ հոդվածում (հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ), և լրացուցիչ որակում ՀՀ քր. օր.-ի 186-րդ հոդվածով կամ 109-րդ հոդվածի 1-ին մասով չի պահանջվում: Միևնույն ժամանակ, եթե համակարգչային սաբոտաժն անզգուշությամբ հանգեցնում է երկու կամ ավելի տուժողների մահվան, ապա կատարվածը, ՀՀ քր. օր.-ի 253-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետից բացի, անհրաժեշտ է որակել նաև ՀՀ քր. օր.-ի 109-րդ հոդվածի 2-րդ մասով, քանի որ վերջինիս համար քրեական օրենսգրքով նախատեսված պատիժն առավել խիստ է, քան ՀՀ քր. օր.-ի 253-րդ հոդվածի 2-րդ մասով նկարագրված հանցագործության համար նախատեսվածն է:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ կարելի է սահմանել բաղկացական հանցագործությունների որակման հետևյալ կանոնը. *բաղկացական հանցագործության և հանցագործությունների բազմակիության սահմանազատումն իրականացվում է ամբողջ բաղկացական հանցագործության և դրա բաղադրիչ հանցագործության սանկցիաների համեմատության միջոցով: Եթե բաղկացական հանցագործությունն առավել մեղմ է պատժվում, քան դրա բաղադրիչ հանցագործությունը, ապա կատարվածը որակվում է որպես եզակի հանցագործություն: Մինչդեռ, եթե բաղկացական հանցագործություն ձևավորող բաղադրիչ հանցագործությունը հավասար կամ առավել խիստ է պատժվում, քան ամբողջ բաղկացական հանցագործությունն ինքնին, ապա անհրաժեշտ է հանցագործությունների համակցված որակում:*

Ամփոփելով՝ հարկ է նշել նաև, որ *հանցագործությունները որակելիս դժվարություններ են առաջանում հատկապես եզակի հանցագործություններն իդեալական համակցությունից տարանջատելու հարցերում, քանի որ երկու դեպքում էլ կատարվում է մեկ արարք: Այս կապակցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ*

«(...) իդեալական համակցությունը եզակի (մեկ) հանցագործությունից տարանջատելու հիմնական չափանիշն օրենսդրորեն ամրագրված այն պարտադիր պահանջն է, ըստ որի՝ իդեալական համակցություն կարող են կազմել միայն ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված երկու կամ ավելի հանցանքները: Այսինքն՝ եթե կատարված արարքը պարունակում է միևնույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված հանցագործության հատկանիշներ, ապա իդեալական համակցությունը բացակայում է, քանի որ վերջինիս դեպքում արարքը չի կարող որակվել մեկ քրեափրավական նորմով (...)»<sup>111</sup>:

Բացի այդ՝ հանցագործությունների բազմակիությունը եզակի բարդ հանցագործություններից տարանջատելիս և կատարվածը հանցանքների համակցությամբ որակելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև քրեափրավական նորմերի մրցակցության հարցերը: Բանն այն է, որ քրեափրավական նորմերի մրցակցության դեպքում հանցագործությունների որակման կանոնների համալիր իմացության պարագայում, միայն, հնարավոր կլինի կատարվածն արժանացնել ճշգրիտ քրեափրավական գնահատականի:

***Այսպիսով, վերոգրյալի հաշվառմամբ, կարելի է առանձնացնել հանցագործությունների համակցության որակման հետևյալ կանոնները.***

1. Հանցագործությունների համակցություն կազմող յուրաքանչյուր հանցանք պետք է արժանանա ինքնուրույն քրեափրավական գնահատականի և որակվի ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով, հոդվածի մասով և (կամ) կետով:
2. Հանցագործությունների իդեալական համակցության դեպքում որակումը, որպես կանոն, իրականացվում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի տարբեր հոդվածներով կամ նույն հոդվածի տարբեր մասերով, եթե դրանք պարունակում են ինքնուրույն հանցագործություններ:
3. Շարունակվող հանցագործությունը մեկ միասնական բարդ հանցագործության տեսակ է, որը ձևավորվում է նույնական այնպիսի

<sup>111</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Գարսևան Ոսկանյանի վերաբերյալ 31.10.2014թ. թիվ ԵԷԴ/0119/01/13 գործով որոշումը:

արարքներից, որոնց միջև, որպես կանոն, առկա է հարաբերականորեն ոչ մեծ ժամանակային խզում, և որոնք ուտնձգում են միևնույն օբյեկտի դեմ, ընդգրկված են մեկ միասնական դիտավորությամբ և հանդես են գալիս որպես մեկ ամբողջական հանցագործության առանձին օղակ: Միևնույն ժամանակ, եթե կատարված արարքները ոչ թե նույնական են, այլ տարաբնույթ կամ միաբնույթ, ուղղված են քրեաիրավական պաշտպանության միանգամայն տարբեր օբյեկտների դեմ, ընդգրկված չեն միասնական դիտավորությամբ, ինչպես նաև, երբ կատարված արարքները թեպետ եղել են նույնական և ուղղված են եղել միևնույն անմիջական օբյեկտի դեմ, սակայն ընդգրկված չեն եղել միասնական դիտավորությամբ (յուրաքանչյուր դեպքում դիտավորությունն առանձին է ծագել), կատարվածը չի կարող դիտվել որպես շարունակվող հանցագործություն և ենթակա է որակման հանցագործությունների համակցության կանոններով:

4. Վերաճող հանցագործությունը մեկ միասնական բարդ հանցագործության տեսակ է, որը ձևավորվում է մեկ հանցանքի կատարման ընթացքում, որպես կանոն, առավել ծանր հանցագործության վերաճելուց, և դրանց միջև բացակայում է ժամանակային խզումը կամ այն լինում է շատ աննշան, և որոնք ուտնձգում են միևնույն անմիջական օբյեկտի դեմ, ընդգրկված են մեկ միասնական դիտավորությամբ և որակվում են որպես մեկ ամբողջական հանցագործություն: Այս դեպքերում կատարվածը որակվում է առավել վտանգավոր հանցագործության համար պատասխանատվություն նախատեսող հոդվածով:
5. Եթե քրեական օրենսգրքի հոդվածը չի նախատեսում «հանցանքը երկու կամ ավելի անձանց նկատմամբ» կատարելու հանգամանքը՝ որպես հանցակազմի որակյալ հատկանիշ, ապա միասնական դիտավորությամբ երկու կամ ավելի անձանց նույնական վնասի պատճառումը պետք է որակվի որպես եզակի հանցագործություն:
6. Եթե եզակի տևող հանցագործության բաղադրիչ հանդիսացող գործողությունները (անգործությունը) փաստացի չեն դադարեցվում մեղավորի դատապարտումից հետո, ապա դրանք որակվում են որպես ինքնուրույն հանցագործություն:

7. Եթե հանցավոր արարքը պարունակում է հանցակազմի երկու կամ ավելի երկրնտրելի հատկանիշներ, ապա հանցագործությունների բազմակիությունը բացակայում է, և կատարվածը որակվում է որպես եզակի բարդ հանցագործություն:
8. Բաղկացական հանցագործությունների և հանցագործությունների բազմակիության սահմանազատումն իրականացվում է ամբողջ բաղկացական հանցագործության և դրա բաղադրիչ հանցագործության սանկցիաների համեմատության միջոցով: Եթե բաղկացական հանցագործությունն առավել խիստ է պատժվում, քան դրա բաղադրիչ հանցագործությունն ինքնին, ապա կատարվածը որակվում է որպես եզակի հանցագործություն: Մինչդեռ, եթե բաղկացական հանցագործություն ձևավորող բաղադրիչ հանցագործությունը հավասար կամ առավել խիստ է պատժվում, քան ամբողջ բաղկացական հանցագործությունը, ապա անհրաժեշտ է հանցանքների համակցված որակում:
9. Մեղքի երկու ձևով կատարվող հանցագործությունների դեպքում դիտավորյալ արարքի արդյունքում անզգույշ հետևանքի պատճառումը, որը նկարագրված է այդ հանցագործության հանցակազմում որպես հատկանիշ (ծանրացնող կամ առավել ծանրացնող հանգամանք), լրացուցիչ որակում չի պահանջում: Միևնույն ժամանակ, մեղքի երկու ձևով կատարվող հանցագործությունների օրենսդրական կառույցի բացակայության դեպքում, երբ անձի դիտավորյալ հանցագործության արդյունքում առաջանում է օժանդակ հետևանք, որն ինքնուրույն հանցակազմ է ներկայացնում, և այդ հետևանքի նկատմամբ անձը դրսևորում է անզգույշ մեղքի ձև, կատարվածը ձևավորում է հանցագործությունների իդեալական համակցություն:
10. Եթե ինքնուրույն հանցակազմ պարունակող արարքը (հանցագործություն - նախապատրաստություն, միջոց - հանցագործություն, հետևանք - հանցագործություն) դուրս է գալիս բաղկացական հանցագործության կառույցի շրջանակներից, ապա այն պետք է արժանանա ինքնուրույն քրեաիրավական գնահատականի: Այս պարագայում հաշվի չեն առնվում բաղկացական հանցագործության որակման կանոնները:

#### ԳԼՈՒԽ 4.

### ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՈՒՄԸ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

#### 4.1 Քրեաիրավական նորմերի մրցակցության հասկացությունը, տեսակները և սահմանազատումը հարակից ինստիտուտներից

Իրավակիրառ պրակտիկայի բարդագույն խնդիրներից է քրեաիրավական նորմերի մրցակցության հաղթահարումը: Դրա անհրաժեշտությունն առաջանում է, երբ քրեաիրավական պաշտպանության ենթակա հարաբերությունը միաժամանակ ընկնում է երկու կամ ավելի նորմերի գործողության տիրույթ, որոնցից, սակայն, միայն մեկին է նախապատվություն տրվում այդ հարաբերությունը կարգավորելու համար:

Քրեաիրավական նորմերի մրցակցություն կարող է առաջանալ քրեաիրավական հարաբերությունների տարբեր փուլերում. անձի քրեական պատասխանատվության հիմքը որոշելիս (հանցագործությունները որակելիս), քրեական պատասխանատվությունից ազատելիս, պատիժ նշանակելիս կամ պատժից ազատելիս և այլն: Այս ձեռնարկում անդրադարձ կկատարվի քրեաիրավական նորմերի մրցակցության միայն այն հիմնախնդիրներին, որոնք ի հայտ են գալիս հանցագործությունները որակելիս:

Տվյալ գործընթացում քիչ չեն այն դեպքերը, երբ հանցավորի կատարած արարքն՝ իր հատկանիշներով, միաժամանակ համապատասխանում է քրեական օրենսգրքի երկու կամ ավելի հոդվածներով նախատեսված հանցակազմերի հատկանիշներին: Միևնույն ժամանակ, քրեաիրավական նորմերի մրցակցությունն անհրաժեշտ է տարբերակել հանցագործությունների համակցությունից: Բանն այն է, որ և՛ բազմակիության նշված տեսակի, և՛ քրեաիրավական նորմերի մրցակցության պարագայում կատարվածը համապատասխանում է քրեական օրենսգրքի մեկից ավելի նորմերի հատկանիշներին: Մինչդեռ, ի տարբերություն հանցագործությունների համակցության, որի պարագայում առկա են երկու կամ ավելի ինքնուրույն որակումներ պահանջող հանցագործություններ, քանզի քր. օր.-ի որևէ նորմ ամբողջությամբ չի արտացոլում այդ հանցագործություն-

ներից ոչ մեկի հատկանիշները, քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում առկա է մեկ հանցագործություն, և քրեական օրենսգիրքը, այնուամենայնիվ, պարունակում է այնպիսի նորմ, որն ամբողջությամբ նկարագրում է կատարվածի բոլոր հատկանիշները: Ուստի՝ հանցագործությունների համակցության և քրեաիրավական նորմերի մրցակցության սահմանազատման համար անհրաժեշտ է պարզել՝ առկա է երկու կամ ավելի հանցագործություն՞ն, թե՞ կատարվածը մեկ հանցագործություն է, որի համար օրենսդիրը, հաշվի առնելով հանցագործության այս կամ այն հատկանիշի առանձնահատկությունը, քրեական օրենսգրքում նախատեսել է առանձին նորմ:

Նորմերի մրցակցությունն անհրաժեշտ է տարբերել նաև, այսպես կոչվող, հարակից հանցակազմերի հարաբերությունից: Հարակից հանցակազմերը մի կողմից պարունակում են այնպիսի հատկանիշներ, որոնք ընդհանուր են, մյուս կողմից՝ որոնցով տարբերվում են միմյանցից<sup>112</sup>: Այդ հանցակազմերից մեկը պարունակում է այնպիսի հատկանիշ, որը բացակայում է մյուսում, և հակառակը: Այսպես՝ գողության և կողոպուտի հանցակազմերում առկա են ուրիշի գույքի հափշտակության ընդհանուր հատկանիշներ, սակայն գողության հանցակազմում առկա է «գաղտնիության» հատկանիշը, որը կողո-

---

<sup>112</sup> Հարակից հանցակազմերով հանցագործությունները սահմանազատելիս պետք է հաշվի առնել հետևյալ կանոնները.

1. Սահմանազատումը պետք է իրականացվի միայն հանցագործության հանցակազմի հատկանիշներով: Հանցակազմի տարրերը չպետք է հաշվի առնվեն:
2. Հանցակազմի յուրաքանչյուր հատկանիշ պետք է բաժանվի երկու տարբերակի: Դրսևորման տարբերակները պետք է ունենան մեկ մակարդակի ընդհանրացում:
3. Հարցադրման պատասխանը պետք է լինի կատեգորիկ՝ այո կամ ոչ:
4. Գծապատկերը կառուցելիս ընդհանուր հատկանիշներից պետք է անցում կատարվի մասնավորի:
5. Միևնույն հատկանիշը չպետք է կրկնվի գծապատկերի տարբեր մակարդակներում:
6. Եթե գծապատկերը պատշաճ կառուցվի և հարցադրման պատասխանները լինեն ճիշտ, ապա հարակից հանցակազմերի տարանջատումը կլինի ճշգրիտ:

պուտի հանցակազմում բացակայում է, իսկ կողոպուտի հանցակազմում առկա է «բացահայտության» հատկանիշը, որն իր հերթին բացակայում է գողության հանցակազմում<sup>113</sup>:

Մինչդեռ, քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում նորմերից միայն մեկն ունի այնպիսի հատկանիշ, որը բացակայում է մյուսում: Մրցակցող նորմերը կարելի է ներկայացնել որպես հարակից հանցակազմեր, եթե նրանցից մեկը լրացվի «պակասող» բացասական հատկանիշով: Օրինակ՝ եթե պաշտոնեական դիրքի չարաշահման հանցակազմում ավելացվի այնպիսի հատկանիշ, ինչպիսին է «բացառությամբ կաշառք ստանալու դեպքերի», ապա այդ երկու մրցակցող նորմերը ձեռք կբերեն հարակից հանցակազմերի ձև<sup>114</sup>:

Քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում հանցագործությունների որակման հարցերը դիտարկելիս հարկ է նկատել, որ մրցակցող նորմերը հարաբերակցվում են որպես ամբողջը և դրա մասը, կամ՝ որպես ընդհանուրն ու հատուկը: Դրանով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում հաղթահարելու մրցակցությունը և ընտրելու այն քրեաիրավական նորմը, որն ավելի կոնկրետ և ամբողջական է արտացոլում կատարված հանցավոր արարքի իրավական կողմն ու սոցիալական նշանակությունը<sup>115</sup>:

Այսպես, օրինակ՝ իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի համար վտանգավոր բռնություն գործադրելը՝ կապված նրա ծառայողական գործունեության կատարման հետ, որի արդյունքում վերջինիս առողջությանը դիտավորությամբ պատճառվել է ծանր վնաս, համապատասխանում է ինչպես ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, այնպես էլ 316-րդ հոդվածի 2-րդ մասով

---

<sup>113</sup> Տե՛ս Горелик А.С. Конкуренция уголовно-правовых норм. Красноярск, 1996, էջ 7:

<sup>114</sup> Տե՛ս Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений. М.: Юристъ, 2001, էջ 215:

<sup>115</sup> Քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում անձի արարքը մրցակցող նորմերի համակցությամբ որակելն անթույլատրելի է: Սա խախտում է կրկնակի մեղսայնացման արգելքի սկզբունքը, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել non bis in idem (կրկնակի դատապարտման անթույլատրելիության) սկզբունքի խախտման:



նախատեսված հանցագործության հանցակազմի հատկանիշներին: Այս հանցագործությունը որակելիս իրավակիրառողը պետք է կողմնորոշվի. կատարվածը որակել նշվածներից միայն մեկ քրեաիրավական նորմով, թե՛ հանցագործությունների համակցությամբ (այս մասին հաջորդիվ):

Հարկ է ընդգծել, որ քրեաիրավական նորմերի մրցակցությունը ոչ թե վերացական հասկացություն է, այլ կոնկրետ իրավակիրառ իրավիճակ: Ինչպես արդարացիորեն նշվում է իրավաբանական գրականության մեջ, «քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում չպետք է կատարվի վերացական (աբստրակտ) հարցադրում այն մասին, թե մրցակցող նորմերից ո՞րն է միշտ ենթակա կիրառման: Հարցադրումը պետք է ձևակերպվի այլ կերպ. ո՞ր նորմին է համապատասխանում հանցագործությունը, և տվյալ կոնկրետ դեպքում՝ ո՞ր նորմն է ենթակա կիրառման»<sup>116</sup>: Այլ խոսքով՝ «քրեաիրավական նորմերի միջև մրցակցությունը չի առաջանում կոնկրետ իրավիճակից և գործի փաստական հանգամանքներից կտրված»<sup>117</sup>:

Քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում հանցագործությունների որակման բարդությունները պայմանավորված են նաև այն իրողությամբ, որ ՀՀ քրեական գործող օրենսգրքում նախատեսված չեն նորմերի մրցակցությունը կանոնակարգող առանձին կարգավորումներ: Թեև իրավակիրառ պրակտիկայում այս հարցերի իրավական կարգավորումն իրականացվել է՝ դիմելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթներին<sup>118</sup>, սակայն դրանում տեղ գտած կանոնակարգումները, կրելով ընդհանուր բնույթ, ոչ ամբողջական են կարգավորում քրեաիրավական նորմերի մրցակցության հարցերը: Դատաքննչական պրակտիկայում դրա առանձին դրսևորումների կարգավորումն իրականացնելու համար հիմք են ընդունվել քրեական իրավունքի գիտության, այդ թվում՝ հանցագործությունների որակման ընդհանուր տեսության մեջ առաջ քաշված առավել ընդունելի մոտեցումները:

<sup>116</sup> Տե՛ս Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений, էջ 215:

<sup>117</sup> Տե՛ս Шакин В.Б. Конкуренция и коллизия уголовно-правовых норм // Сибирский юридический вестник, 2001, № 1, էջեր 68-71:

<sup>118</sup> «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածով սահմանված են իրավական կոլիզիաների լուծման կանոնները:

Հարկ է արձանագրել նաև, որ հանցագործությունները որակելիս քրեաիրավական նորմերի մրցակցությունը հաճախակի պատահող երևույթ է: Ուստի պատահական չէ, որ, կախված նրանից, թե նորմերի մրցակցության որ տեսակն է առկա, ընդունված է տարբերակել քրեաիրավական նորմերի մրցակցությունը հաղթահարելու որոշակի կանոններ:

Մասնավորապես, մրցակցող նորմերի բնույթից ելնելով՝ քրեական իրավունքի գիտության մեջ առանձնացվում են քրեաիրավական նորմերի մրցակցության հետևյալ տեսակները<sup>119</sup>.

1. **Բովանդակային մրցակցություն**, որն առաջանում է այն նորմերի միջև, որոնք միմյանցից տարբերվում են հանցաձևավորող հատկանիշների բովանդակությամբ: Քրեաիրավական նորմերի մրցակցության այս տեսակն ունի հետևյալ դրսևորումները՝

- 1) ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցություն,
- 2) հատուկ նորմերի մրցակցություն,
- 3) մասի և ամբողջի մրցակցություն:

2. **Ժամանակային (տեմպորալ) մրցակցություն**, որն առաջանում է տարբեր ժամանակներում քրեաիրավական նորմերի գործողության հետևանքով:

#### 4.2. Քրեաիրավական նորմերի բովանդակային մրցակցություն

##### 1. Ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցություն:

Քրեաիրավական ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցությունն առաջանում է այն դեպքում, երբ քրեական օրենսգրքում ընդհանուր հանցակազմից առանձնացվում է դրա մասնավոր դրսևորումը՝ *որպես հատուկ հանցակազմ*: Հատուկ հանցակազմն ընդգրկում է ընդհանուր հանցակազմի բոլոր հատկանիշները, սակայն պարունակում է նաև այլ առանձնահատուկ հատկանիշ: Այսինքն՝ հատուկ նորմով նախատեսված հանցակազմը տեղավորվում է ընդհանուր հանցակազմի «շրջագծում», սակայն տարբերվում է նրանով, որ բովանդակում է որևէ հատկանիշ, որի մասին ուղղակի նշումն ընդհանուր նորմում բացակայում է: Այլ խոսքով, ընդհանուր

<sup>119</sup> Հարկ է նշել, որ տեսական գրականության մեջ չկա միասնական մոտեցում քրեաիրավական նորմերի տեսակների դասակարգման վերաբերյալ:

քրեաիրավական նորմով պատասխանատվություն է նախատեսվում հանցագործությունների որոշակի տեսակների, իսկ հատուկով՝ դրա մասնավոր դրսևորումների համար:

Այսպես, օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում սպանության, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը՝ սպանության առանձին (հատուկ) տեսակների համար, որոնք, հանցակազմի որևէ հատկանիշի (ոտնձգության առարկայի քանակ, բնույթ, հանցագործության եղանակ, շարժառիթ և այլն) առանձնահատկությամբ պայմանավորված, առավել բարձր հանրային վտանգավորություն են ներկայացնում: Այսինքն, ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ծանրացուցիչ հանգամանքներով սպանությունները պարունակում են սպանության հիմնական հանցակազմի բոլոր հատկանիշները, սակայն դրա համեմատ համարվում են հատուկ:

Ինչպես արդեն նշվել է, հատուկ նորմերի օրենսդրական ձևավորումը կարող է իրականացվել հանցակազմի մեկ կամ մի քանի հատկանիշների մասնավորեցման միջոցով: Այդ իսկ պատճառով՝ հատուկ և ընդհանուր նորմերի մրցակցություն կարող է առաջանալ հանցակազմի յուրաքանչյուր հատկանիշով պայմանավորված: Այսպես, օրինակ՝ հափշտակության ընդհանուր հանցակազմերից, որպես հատուկ նորմ, առանձնացվում է առանձնակի արժեք ունեցող առարկաների հափշտակությունը: Ուստի, հանցագործության առարկայով պայմանավորված, եթե հափշտակված գույքն առանձնակի արժեք ներկայացնող է, ապա հանցավորի արարքը պետք է որակվի միայն հատուկ նորմով (ՀՀ քր. օր.-ի 180-րդ հոդվածով):

Հնարավոր են դեպքեր, որ հանցագործության առարկան պայմանավորի նորմերի մրցակցությունն՝ ըստ հանցագործության օբյեկտի: Այսպես, օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում նախատեսված 238-րդ հոդվածը (զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելը կամ շորթելը) հատուկ նորմ է հանդիսանում «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում նախատեսված հափշտակությունների (հոդվածներ 175-181) և շորթման (հոդված 182) ընդհանուր նորմերի համար: Ուստի, եթե հափշտակվում կամ շորթվում է հրազեն, պայ-

թուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր, ապա անկախ դրանց՝ ինքնուրույն գույքային արժեք ներկայացնելու հանգամանքից, հանցավորի արարքը պետք է որակել միայն ՀՀ քր. օր.-ի 238-րդ հոդվածով (հիարկե, հանցակազմի համապատասխան այլ հատկանիշների առկայության դեպքում):

Միևնույն ժամանակ, մոր կողմից նորածին երեխայի սպանության համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմը (ՀՀ քր. օր.-ի հոդված 106) սպանության ընդհանուր նորմի նկատմամբ մասնավորեցվել է միանգամից մի քանի առանձնահատուկ հատկանիշներով. հանցագործության տուժողով (նորածին երեխա), օբյեկտիվ կողմով (ծննդաբերության ժամանակ կամ դրանից անմիջապես հետո), սուբյեկտով (երեխայի՝ 14 տարին լրացած մայրը) և սուբյեկտիվ կողմով (հոգեճնշող վիճակը կամ մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարումը):

Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը (աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելը) քր. օր.-ի 230-րդ հոդվածով նկարագրվածից (լեռնահանքային, շինարարական կամ այլ աշխատանքների կատարման ընթացքում անվտանգության կանոնները խախտելը) սահմանազատելու համար անհրաժեշտ է ելնել նրանից, թե կոնկրետ ինչպիսի աշխատանքներ են կատարվել և անվտանգության ինչ բնույթի կանոններ են խախտվել: Եթե այդ կանոնների խախտումը թույլ է տրվել լեռնային, շինարարական կամ այլ աշխատանքների կատարման ընթացքում, և խախտված կանոններով կանոնակարգվում են այդ աշխատանքները, ապա կատարվածը անհրաժեշտ է որակել միայն քր. օր.-ի 230-րդ հոդվածով: Ինչպես նաև՝ եթե ատոմային էներգետիկայի օբյեկտներում հրդեհի առաջացման պատճառ է հանդիսացել պատասխանատու անձի կողմից ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների տեղաբաշխման, նախագծման, կառուցման, վերանորոգման, վերակառուցման, շահագործման կամ շահագործումից հանելու, վերագործարկման, միջուկային և ռադիոակտիվ նյութերի տեղափոխման, պահպանման կամ օգտագործման ընթացքում անվտանգության կանոնների խախտումը, ինչի հետևանքով մարդու առողջությանն անզուգույթյամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս, մահ կամ այլ ծանր հետևանք-

ներ, ապա կատարվածը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի 227-րդ հոդվածի համապատասխան մասով և լրացուցիչ որակում քր. օր.-ի 232-րդ հոդվածով (հրդեհային անվտանգության կանոնները խախտելը) չի պահանջվում:

Հարկ է նկատի ունենալ, որ հանցագործությունների որակման գործընթացում մրցակցող նորմերից հատուկն ընտրելիս, որպես ելակետ, չպետք է ընդունվի քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայում նշված պատժի տեսակի կամ չափի խստությունը, քանզի միշտ չէ, որ հատուկ նորմը սանկցիայի խստության առումով գերազանցում է ընդհանուրին: Այլ խոսքով՝ միշտ չէ, որ հատուկ նորմն առավել խիստ պատիժ է նախատեսում, քան ընդհանուրը:

Կարելի է առանձնացնել նաև քրեաիրավական նորմերի մրցակցության քննարկվող տեսակի հետևյալ դրսևորումները.

- *Հիմնական և որակյալ (ծանրացնող) նորմերի մրցակցություն:* Որակյալ է համարվում այն նորմը, որը պարունակում է այնպիսի հատկանիշ, ըստ որի՝ բարձրանում է արարքի հանրային վտանգավորությունը և առավել խիստ պատիժ է նախատեսվում: *Երբ անձի արարքում միաժամանակ առկա են և՛ հիմնական, և՛ որակյալ նորմերով նախատեսված հանցագործության հատկանիշներ, այն որակվում է միայն որակյալ նորմով:* Օրինակ՝ եթե կատարվում է անչափահասի առևանգում, ապա արարքը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով:
- *Հիմնական և արտոնյալ (մեղմացնող) նորմերի մրցակցություն:* Արտոնյալ է համարվում այն նորմը, որը պարունակում է այնպիսի հատկանիշ, ըստ որի՝ նվազում է արարքի հանրային վտանգավորությունը և առավել մեղմ պատիժ է նախատեսվում: *Երբ անձի արարքում միաժամանակ առկա են և՛ հիմնական, և՛ արտոնյալ նորմերով նախատեսված հանցագործության հատկանիշներ, այն որակվում է միայն արտոնյալ նորմով:* Օրինակ՝ եթե հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ կատարվում է սպանություն, ապա արարքը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի հոդված 107-ով:

Ընդհանուրի նկատմամբ հատուկ նորմը կարող է նախատեսված լինել քրեական օրենսգրքի Հատուկ մասի ինչպես միևնույն հոդվա-

ծի տարբեր մասերով, այնպես էլ տարբեր հոդվածներով: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքում առավել մրցատարողունակ են «Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում նախատեսվածները: Այս գլխի երեք նորմերը՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելը (հոդված 308), պաշտոնեական լիազորություններն անցնելը (հոդված 309) և պաշտոնեական անփութությունը (հոդված 315), հանդես են գալիս որպես ընդհանուր նորմեր, որոնց հատուկ դրսևորումներն առկա են օրենսգրքի ինչպես նույն, այնպես էլ այլ գլուխներում: Օրինակ՝ պաշտոնեական լիազորությունը չարաշահելու հատուկ նորմերով նախատեսված տեսակներ են պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը (հոդված 311), որը նախատեսված է նույն գլխում, ինչպես նաև քննիչի կողմից ապացույցներ կեղծելը (հոդված 349), որը նախատեսված է «Արդարադատության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում:

Ընդհանուր և հատուկ նորմերի մրացակցություն է առաջանում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի (բռնությամբ զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելը) և 309.1.-րդ (խոշտանգումը) հոդվածներով նկարագրված նորմերի դեպքում, երբ հանցագործության սուբյեկտի դերում հանդես է գալիս պաշտոնատար անձը: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ խոշտանգման և բռնությամբ զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու հանցակազմերի հիմնական տարբերությունն այն է, որ խոշտանգման դեպքում արարքը կատարվում է հատուկ նպատակով, մինչդեռ բռնություն գործադրելով պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքում այդպիսի նպատակի առկայություն չի պահանջվում: Ուստի, խոշտանգման հանցակազմն առկա կլինի, եթե ֆիզիկական ուժեղ ցավը կամ հոգեկան ուժեղ տառապանքը պատճառվի հետևյալ նպատակներից առնվազն մեկով՝ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու կամ այն արարքի համար պատժելու, անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով: Նշված նպատակների բացակայության դեպքում արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի հոդված 309-ով՝ որպես պաշտոնեական լիազորությունների անցում:

ՀՀ քր. օր.-ի 309-րդ հոդվածով պետք է որակվեն նաև այն դեպքերը, երբ պաշտոնատար անձը, թեև հետապնդում է վերոհիշյալ նպատակներից առնվազն մեկը, բայց գործադրած բռնությունը չի հատում ֆիզիկական ցավի կամ հոգեկան տառապանքի «ուժեղության» պահանջվող շեմը: Իհարկե, խոսքը չի վերաբերում այն դեպքերին, երբ գործով ձեռք բերված ապացույցներով հիմնավորվում է, որ հանցավորի դիտավորությունն ուղղված է եղել տուժողին հենց ուժեղ ֆիզիկական ցավ կամ հոգեկան տառապանք պատճառելուն, որպիսիք չեն առաջացել հանցավորի կամքից անկախ հանգամանքներում: Նման դեպքերում արարքը հարկ է որակել ոչ թե ՀՀ քր. օր.-ի 309-րդ հոդվածով, թեև նկարագրված արարքը պարունակում է այդ հոդվածի բոլոր հատկանիշները, այլ որպես խոշտանգման փորձ՝ հիմք ընդունելով անձի դիտավորության ուղղվածությունը և իր կամքից անկախ հանգամանքներում հանցագործությունն ավարտին հասցնելու անհնարինությունը:

Այլ խոսքով՝ խոշտանգումն, ըստ էության, պաշտոնեական լիազորություններն անցնելու առանձին դրսևորում է, որը նախատեսված է հատուկ նորմով: Հետևաբար, եթե պաշտոնեական լիազորություններն անցնելը դրսևորվել է խոշտանգման ձևով, արարքը պետք է որակել վերոհիշյալ հատուկ նորմով՝ որպես խոշտանգում<sup>120</sup>:

Այսպիսով, ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության դեպքում հանցագործության որակման կանոնը հետևյալն է. *եթե անձի արարքը միաժամանակ պարունակում է ընդհանուր և հատուկ նորմով նախատեսված հանցագործության հանցակազմի հատկանիշներ, ապա հանցագործությունների համակցությունը բացակայում է, և հանցավորի քրեական պատասխանատվությունը վրա է հասնում միայն հատուկ նորմով: Այլ խոսքով, ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության դեպքում նախապատվությունը տրվում է հատուկ նորմին՝ հանցավորի արարքը որակվում է միայն դրանով: Այս կանոնը բխում է իրավունքի հանրաճանաչ այն սկզբունքից, համաձայն որի՝ հատուկ (պարտիկուլյար) օրենքը չեղարկում է ընդհանուր օրենքի գործողությունը (lex specialis derogate legi generali): Այլ կերպ*

<sup>120</sup> Տե՛ս նաև Գալյան Ա., Թումասյան Դ., Նիկողոսյան Ա. Խոշտանգման քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները: Ոստմնական ձեռնարկ: Եր., 2018, էջեր 34-36:

ասած՝ ընդհանուր և հատուկ (պարտիկուլյար) նորմերի միջև հարաբերությունները հիմնված են *in toto jure genus per speciem derogatur* (սեռայինը (ընդհանուրը) վերացվում է տեսակայինի (հատուկի) կողմից) հանրաճանաչ սկզբունքի վրա, ուստի՝ պարտիկուլյար նորմը գերակայում է<sup>121</sup>:

Ընդհանուր և հատուկ նորմերի հարաբերակցության հարցը դիտարկելիս անհրաժեշտ է նշել նաև, որ ընդհանուր նորմն իր մեջ ամբողջությամբ ընդգրկում է այն արարքը, որը նախատեսված է հատուկ նորմով (նորմերով): Այդ իսկ պատճառով՝ քրեաիրավական հատուկ նորմի ապաքրեականացումն, ինքնին, չի հանգեցնում այդ նորմով նախատեսված հանցավոր արարքի լրիվ ապաքրեականացման: Տվյալ դեպքում, պարզապես, հանցավոր արարքը «տեղափոխվում է» ընդհանուր նորմի գործողության տիրույթ:

Հարկ է նկատի ունենալ նաև, որ ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցությունը բացակայում է այն դեպքում, երբ հատուկ դիտարկվող նորմը դուրս է գտնվում ընդհանուր նորմի շրջագծից: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 223.1-րդ հոդվածը, ի թիվս այլի, պատասխանատվություն է նախատեսում քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ պահպանելու համար: Միևնույն ժամանակ, քննարկվող հոդվածի երկրորդ մասը սահմանում է քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցողի հասկացությունը, ըստ որի՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող (օրենքով գող կամ քրեական հեղինակություն) է համարվում այն անձը, որը, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն, համարվում է հեղինակություն և քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացման համար տալիս է հրահանգներ, ինչպես նաև կազմակերպում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կամ մասնակցում է դրանց կամ կազմակերպում կամ իրականացնում է դրանական միջոցների հավաքագրում (այդ թվում՝ մոլախաղերի միջոցով) կամ տնօրինում է քրեական ենթամշակույթ

---

<sup>121</sup> St' u Анцилотти Д. Курс международного права. Том первый: Введение – Общая теория / Перевод с четвертого итальянского издания А.Л. Сакетти и Э.М. Фабрикава / Под ред. Д.Б. Левина. М., 1961, էջ 108:



կրող խմբավորման միջոցով ստացված անօրինական օգուտը կամ կատարում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանն ուղղված այլ գործողություններ:

Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմի տվյալ դրսևորման (քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ պահպանելը) դեպքում անձին մեղսագրվող հանրորեն վտանգավոր վարքագիծը (արարքը) «օրենքով գողի» կամ «քրեական հեղինակության» կարգավիճակ կրելն է, «քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող» հասկացության շրջանակներում նկարագրված գործողությունների կատարման հնարավորություն ունենալը՝ այդպիսի կարգավիճակ ստանալուց հետո քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամների կողմից նման կարգավիճակով ընդունված, իսկ հանրության առանձին շրջանակներում՝ նման կարգավիճակով հայտնի լինելու պայմաններում: Այլ կերպ ասած՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ պահպանելը տևող հանցագործության յուրահատուկ դրսևորում է, որն ավարտվում է կա՛մ այդ կարգավիճակից անձի զրկվելով (օրինակ՝ «օբշակի» գումարները ոչ նպատակային ծախսելու, իրեն վստահված տարածքում կարգուկանոն չհաստատելու համար նման կարգավիճակից կարգազուրկ արվելու հետևանքով), կա՛մ այն պահպանելու համար նրա վերաբերյալ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելով՝ մինչև դատվածությունը մարվելը կամ հանվելը<sup>122</sup>:

Նշվում է նաև, որ քննարկվող հոդվածի 2-րդ մասով նախատեսված կոնկրետ գործողությունների կատարումը ձևավորում է ինքնուրույն հանցակազմեր՝ նախատեսված ՀՀ քր. օր.-ի 223.2.-րդ (քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելը կամ ղեկավարելը), 223.3-րդ (քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելը կամ ներգրավելը) հոդվածներով: Ուստի, առաջարկվում է՝ քրեաիրավական նորմերի մրցակցության կանոններով քրեական

---

<sup>122</sup> Տե՛ս Բիշարյան Կ. Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը: Գիտագործական մեկնաբանություններ: Եր., 2020, էջեր 16-17:

աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից այդպիսի գործողությունների կատարումը որակել միայն հատուկ հանցակազմերով (« քր. օր.-ի 223.2 հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով, 223.3-րդ 3-րդ մասի 5-րդ կետով)<sup>123</sup>:

Առաջ անցնելով՝ ցանկանում ենք արձանագրել, որ, եթե ելնում ենք այն գաղափարից, ըստ որի՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ պահպանելը տևող հանցագործություն է, և այդ հանցանքի ու « քր. օր.-ի 223.2.-րդ, 223.3-րդ հոդվածներով նկարագրված հանցանքների ժամանակային սահմանները չեն համապատասխանում միմյանց, այսինքն՝ այդ տևող հանցագործության ընթացքում քր. օր.-ի 223.2.-րդ, 223.3-րդ հոդվածներով նկարագրված հանցագործությունները կատարվում և ավարտվում են, մինչդեռ անձը շարունակում է պահպանել քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակը, ապա կատարվածը պետք է որակվի հանցանքների համակցությամբ: Այլ խոսքով՝ եթե « քր. օր.-ի 223.2.-րդ, 223.3-րդ հոդվածներով նկարագրված հանցանքներն իրենց շրջագծից դուրս են թողնում քր. օր.-ի 223.1.-րդ հոդվածով նկարագրված հանցանքը, և իրավական տեսանկյունից ինչպես իրավաբանորեն, այնպես էլ փաստորեն համարվում ավարտված, մինչդեռ քր. օր.-ի 223.1.-րդ հոդվածով նկարագրված արարքով հանցավորը շարունակում է քրեաիրավական պաշտպանության օբյեկտը պահել հանցավոր իրադրության մեջ, ապա քննարկվող նորմերի միջև չի կարող գոյություն ունենալ այնպիսի հարաբերություն, որը բնորոշ է ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցությանը:

Այսպես, օրինակ՝ եթե անձը 2000 թվականի հունվարի 10-ին ձեռք է բերել և մինչև 2020 թվականի հունիսի 1-ը շարունակել պահպանել քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակը, իսկ այդ ընթացքում՝ 2020 թվականի մարտի 20-ին, կազմակերպել քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մեկօրյա հավաք, ապա վերջինիս արարքը պետք է որակվի « քր. օր.-ի ինչպես 223.1.-րդ հոդվածի 1-ին մասով, այնպես էլ 223.3-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով: Նկարագրված իրավիճակում՝ անձը, ինչպես

<sup>123</sup> Տե՛ս Բիշարյան Կ. Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը, էջեր 16-19:

223.3-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցանք կատարելուց առաջ, այնպես էլ հետո, շարունակել է պահպանել քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակը, որը՝ որպես ինքնուրույն հանցագործություն, նախատեսված է ՀՀ քր. օր.-ի 223.1-րդ հոդվածով:

Թերևս պետք է փաստել, որ բերված օրինակում անձի արարքը միայն ՀՀ քր. օր.-ի 223.3-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով որակելը կլիներ ընդունելի, եթե քր. օր.-ի 223.1-րդ հոդվածը, որպես հանցակազմի նեգատիվ հատկանիշ, բովանդակեր «եթե բացակայում են սույն օրենսգրքի 223.3-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները» ձևակերպումը, ինչը քրեական գործող օրենսգրքի պարագայում բացակայում է:

Բացի այդ՝ հեղինակի բերած այն փաստարկը, որ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ պահպանելու դեպքում անձին մեղսագրվող հանրորեն վտանգավոր վարքագիծը (արարքը) «օրենքով գողի» կամ «քրեական հեղինակության» կարգավիճակ կրելն է, «քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող» հասկացության շրջանակներում նկարագրված գործողությունների կատարման հնարավորություն ունենալը, որոշակի առումով թվում է խոցելի: Մասնավորապես, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցողի հասկացությունը սահմանող քրեափրավական նորմի (ՀՀ քր. օր.-ի 223.1-րդ հոդվածի 2-րդ մաս) ձևակերպումից բխում է, որ անձը չի կարող համարվել քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող (պահպանող), եթե, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն, միայն համարվում է հեղինակություն: Բացի այդպիսին համարվելուց՝ նա պետք է փաստացի իրականացնի նշված հասկացության ձևակերպման մեջ տեղ գտած երկրնտրելի գործողություններից առնվազն մեկը (հրահանգներ տալը, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կազմակերպելը կամ դրանց մասնակցելը, դրանց դրամական միջոցների հավաքագրում կազմակերպելը կամ իրականացնելը և այլն), և ոչ թե հանդիսանա այդ գործողությունների իրականացման փաստացի հնարավորության կրող:

Այլ խոսքով, միայն, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանաձև և ճանաչված վարքագծի կանոնների համաձայն, հեղինակություն համարվելը, չի կարող ձևավորել քննարկվող հոդվածով նախատեսված ավարտված հանցագործություն: Անհրաժեշտ է, որ այդպիսի հեղինակությունը կատարի ՀՀ քր. օր.-ի 223.1.-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքներից առնվազն մեկը: Մեր այս դիրքորոշումը գլխավորապես պայմանավորված է այն իրողությամբ, որ քննարկվող հասկացության ձևակերպման մեջ օգտագործվում է «և» շաղկապը, որը միացնում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանաձև և ճանաչված վարքագծի կանոնների համաձայն, անձի հեղինակություն համարվելու և նրա կողմից կոնկրետ արարքներ կատարելու հանգամանքները:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչպիսին է ՀՀ քր. օր.-ի 223.1-րդ և 223.2-րդ հոդվածներով նկարագրված նորմերի հարաբերակցությունը՝ հարկ է նկատել, որ օրենսդիրը, կարծես, ձևավորել է հանցագործության բաղկացական կառույց: Այլ խոսքով՝ ՀՀ քր. օր.-ի 223.2.-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, ինչպես նաև 223.3-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետերում օրենսդիրն ուղղակիորեն ամրագրել է նաև քր. օր.-ի 223.1.-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները՝ ստեղծելով բարդ կառուցվածքով եզակի հանցագործություն: Հետևաբար, եթե քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ պահպանելը դրսևորվել է քր. օր.-ի 223.2-րդ կամ 223.3-րդ հոդվածներով նկարագրված արարքները կատարելով, ապա կատարվածը պետք է որակվի միայն ՀՀ քր. օր.-ի 223.2-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով կամ 223.3-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով:

Ասվածը, թերևս, խոցելի է թվում այն տեսանկյունից, որ ՀՀ քր. օր.-ի 223.3-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված, այսպես ասած, առավել որակյալ հանգամանքի համար օրենսդիրը նախատեսել է առավել մեղմ պատիժ, քան դրա բաղկացուցիչ հանցանքի համար, որը նկարագրված է քր. օր.-ի 223.1-րդ հոդվածով:

Վերոգրյալի համատեքստում կարծում ենք, որ օրենսդիրը, քննարկվող նորմերի սանկցիաները սահմանելիս, հաշվի չի առել հանցագործությունների որակման կանոնները, և այդ քայլով ստեղծել է անտրամաբանական վիճակ: Ուստի գտնում ենք, որ այդ վի-

ճակի հաղթահարման հնարավոր լուծումը 223.3-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հանցանքի համար սահմանված պատժի այնպիսի խստացումն է, որը կգերազանցի ՀՀ քր. օր.-ի 223.1-րդ հոդվածի սանկցիայով նախատեսված պատժը: Միևնույն ժամանակ, քննարկվող հանցանքները որակելիս քրեաիրավական նորմերի ընտրությունը տվյալ պարագայում կլինի ողջամիտ և կրացառի այդ ոլորտում հնարավոր տարամեկնաբանությունները:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել հետևյալը.

1. Եթե քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ պահպանելն ամբողջ տևական ժամանակահատվածում դրսևորվում է միայն այնպիսի արարքների կատարմամբ, որոնք ՀՀ քր. օր.-ի 223.2.-րդ և 223.3-րդ հոդվածներով նկարագրված ինքնուրույն հանցակազմ են պարունակում, ապա արարքը պետք է որակվի միայն ՀՀ քր. օր.-ի 223.2.-րդ կամ 223.3-րդ հոդվածների համապատասխան մասի այն կետով (3-րդ մասի 5-րդ կետ), որով պատասխանատվություն է նախատեսվում տվյալ արարքը քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից կատարելու համար (թերևս այս մոտեցումը թվում է նվազ խնդրահարույց):

2. Եթե քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ պահպանելն ամբողջ տևական ժամանակահատվածում, բացի ՀՀ քր. օր.-ի 223.2.-րդ և 223.3-րդ հոդվածներով նկարագրվածից, դրսևորվում է նաև այլ արարքների կատարմամբ, ապա տեղի ունեցածը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ (քր. օր.-ի 223.1.-րդ և 223.2.-րդ կամ 223.3.-րդ հոդվածներով):

Ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցությունը բացակայում է նաև այն դեպքում, երբ անձն իր հատկանիշներով չի համապատասխանում հատուկ նորմով նախատեսված հանցագործության սուբյեկտի հատկանիշներին (օրինակ՝ հասած չի լինում հատուկ նորմով նախատեսված հանցագործության սուբյեկտի տարիքի): Այսպես՝ պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության դեպքում տասնվեց տարին չլրացած անձի քրեական պատասխանատվությունը վրա կհասնի ոչ թե քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածով, այլ 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, քանի որ 305-

րդ հողվածով նախատեսված հանցագործության սուբյեկտ կարող է լինել միայն տասնվեց տարին լրացած անձը: Չնայած նրան, որ ՀՀ քր. օր.-ի 104-րդ և 305-րդ հոդվածները հարաբերակցվում են որպես ընդհանուր և հատուկ նորմեր, այնուամենայնիվ, նկարագրված իրավիճակում դրանց միջև մրցակցությունը բացակայում է:

Մինևույն ժամանակ, քրեաիրավական ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցությունն անհրաժեշտ է տարբերակել հանցագործությունների համակցությունից: Այդ կապակցությամբ հարկ է նկատել, որ, *եթե անձի կատարած արարքը միաժամանակ պարունակում է ընդհանուր և հատուկ նորմերով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, ապա առկա է նորմերի մրցակցություն և կատարվածը պետք է որակվի միայն հատուկ նորմով: Մինչդեռ, եթե հանցագործությունը, որը նախատեսված է ընդհանուր և հատուկ նորմերով, կատարվում է միասնական դիտարկությամբ չընդգրկված արարքեր (ինքնուրույն) արարքներով, ապա առկա է հանցագործությունների բազմակիություն, և կատարվածն անհրաժեշտ է որակել հանցագործությունների իրական համակցության կանոններով:*

Ընդ որում, արարքն ընդհանուր և հատուկ նորմերի համակցությամբ կարող է որակվել միայն իրական համակցության դեպքում: *Ընդհանուր և հատուկ նորմերը չեն կարող ձևավորել իդեալական համակցություն: Օրինակ՝ եթե պաշտոնատար անձը շահադիտական նպատակով կամ անձնական այլ դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ է մտցնում պաշտոնական փաստաթղթերում, ապա նրա արարքը պետք է որակվի միայն որպես պաշտոնեական կեղծիք (ՀՀ քր. օր.-ի հոդված 314-րդ): Մինչդեռ, եթե վերջինս, ի թիվս պաշտոնեական կեղծիքի, կատարում է նաև այլ գործողություններ, որոնք ինքնուրույն հանցակազմ են պարունակում (մասնավորապես, այդ կեղծ փաստաթղթերի հիման վրա, պաշտոնեական դիրքն օգտագործելով, կատարում է նաև զգալի չափերի յուրացում), ապա վերջինիս արարքը, բացի ՀՀ քր. օր.-ի 314-րդ հոդվածից, անհրաժեշտ է որակել նաև 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (յուրացնելը կամ վատնելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով):*

## **2. Հարուկ նորմերի մրցակցություն:**

Հատուկ նորմերի մրցակցությունը կարող է առաջանալ այն դեպքերում, երբ հանցագործությունը միաժամանակ համապատասխանում է երկու կամ ավելի իրար չստորակարգված քրեաիրավական նորմերով նախատեսված հանցակազմերի հատկանիշներին, որոնցից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես հատուկ՝ մեկ ընդհանուր նորմի համեմատ:

Քրեաիրավական նորմերի մրցակցության այս տեսակն ունի հետևյալ դրսևորումները՝ մրցակցությունը հաղթահարելու սեփական կանոններով.

– *Որակյալ (ծանրացնող) և արտոնյալ (մեղմացնող) նորմերի մրցակցություն:* Քրեաիրավական նորմերի մրցակցության այս ձևի դեպքում արարքը միաժամանակ պարունակում է տվյալ հանցակազմի ինչպես որակյալ, այնպես էլ արտոնյալ հանգամանքներ: Այս դեպքում մեղմացնող հանգամանքով նորմն առավելություն ունի նույն արարքի ծանրացնող հանգամանքով նորմի նկատմամբ: Այլ խոսքով՝ տվյալ դեպքում *նախապատվությունը տրվում է արտոնյալ նորմին, և անձի արարքը որակվում է միայն այդ նորմով:*

Ներկայումս համընդհանուր ճանաչում է գտել այն կանոնը, համաձայն որի՝ որակյալ (ծանրացնող) և արտոնյալ (մեղմացնող) նորմերի մրցակցության դեպքում հանցագործությունները որակելիս նախապատվությունը պետք է տրվի արտոնյալ նորմին: Արտոնյալ նորմի ընտրության հիմքում ընկած է այն գաղափարը, որ տվյալ իրավիճակում մի շարք պատճառներով տեղի է ունենում կատարվածի հանրային վտանգավորության աստիճանի կտրուկ նվազում: Արտոնյալ նորմը համահարթեցնում է որակյալ նորմով սահմանված խիստ պատժվող արարքը<sup>124</sup>:

Մրցակցության այս տեսակը ամենից շատ հանդիպում է սպանությունների որակման գործընթացում: Այսպես, օրինակ՝ հոգեկան խիստ հուզմունքի վիճակում առանձին դաժանությամբ կատարված սպանությունը պետք է որակվի միայն որպես հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանություն:

<sup>124</sup> Տե՛ս Костарева Т.А. Квалифицирующие обстоятельства в уголовном праве (понятие, законодательная регламентация, влияние на дифференциацию ответственности). Ярославль: Изд-во Ярославск. ун-та, 1993, էջ 149:

– *Որակյալ և առավել որակյալ նորմերի մրցակցություն*: Քրեաիրավական նորմերի մրցակցության այս ձևն առկա է այն դեպքում, երբ անձի արարքում միաժամանակ առկա են որակյալ (ծանրացնող) և առավել որակյալ (առավել ծանրացնող) հանգամանքներ: Այս դեպքերում արարքը որակվում է առավել որակյալ նորմով: Օրինակ՝ եթե անձի կողմից, բնակարան ապօրինի մուտք գործելով (<< քր. օր.-ի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետ), կատարվել է խոշոր չափերի (նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ) գողություն, ապա արարքը որակվում է միայն որպես բնակարան ապօրինի մուտք գործելու եղանակով կատարված գողություն:

Հատուկ նորմերի մրցակցության հաղթահարման այս կանոնն իր արտահայտությունն է ստացել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Գ. Ոսկանյանի վերաբերյալ գործով կայացված որոշման մեջ: Այս որոշմամբ Դատարանն արձանագրել է. «Անձի մեկ արարքում միևնույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված հանցագործությունների հատկանիշների առկայության դեպքում (հիմնական, ծանրացնող և (կամ) առավել ծանրացնող) համապատասխան նորմերը միմյանց հետ սերտ կապի մեջ են գտնվում և իրենց հիմնական հատկանիշներով համընկնում են: Դրանցից յուրաքանչյուրն իր ծավալով և բովանդակությամբ համապատասխանում է մյուսին, սակայն առանձնացվում է օբյեկտիվ կամ սուբյեկտիվ որևէ հատկանիշի առանձնահատկությամբ: Այս դեպքում արարքը որակվում է միայն այն նորմով, որն առավել ամբողջական է պարունակում կատարված հանցանքի բոլոր հատկանիշները: Այլ խոսքով՝ եթե անձի կատարած մեկ արարքում միաժամանակ առկա են հիմնական և ծանրացնող կամ ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքներով հանցակազմերի հատկանիշներ, ապա արարքը գնահատվում է որպես մեկ հանցագործություն և որակվում միայն ծանրացնող (կամ առավել ծանրացնող) հանգամանքը նախատեսող մասով:

Այս առումով Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ հիմնական և ծանրացնող հանգամանքով հանցակազմերի մրցակցության դեպքում արարքը ծանրացնող հանգամանքով որակելը, ինչպես նաև ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքներով հանցակազմերի մրցակցության դեպքում արարքը առավել ծանրացնող հանցակազմով որակելը չի նշանակում, որ անձի արարքում առկա մյուս



*ծանրացնող հանգամանքներն անտեսվում են: Նախաքննական մարմինն անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման և մեղադրական եզրակացության մեջ, իսկ դատարանը դատավճռի նկարագրական հատվածում պարտավոր են արտացոլել արարքում առկա բոլոր ծանրացնող հանգամանքները, ինչը թույլ է տալիս ամբողջությամբ գնահատել հանցագործության հանրային վրանգավորությունը և մեկից ավելի ծանրացնող հանգամանքների առկայությունը հաշվի առնել պարիստ նշանակելիս»<sup>125</sup>:*

Հարկ է նկատել, որ մրցակցության այս ձևն առկա է այն պարագայում, երբ անձի արարքը միաժամանակ համապատասխանում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի միևնույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված հանցագործությունների հատկանիշներին, որոնք հիմնականի համեմատ հանդես են գալիս որպես որակյալ և առավել որակյալ հանցակազմեր: Մինչդեռ, եթե անձի արարքը միաժամանակ համապատասխանում է քրեական օրենսգրքի հատուկ մասի միևնույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված հանցագործությունների հատկանիշներին, որոնք ոչ թե նույն հոդվածի ծանրացնող և առավել ծանրացնող հատկանիշներ են, այլ իրենցից ինքնուրույն (տարբեր) հանցագործությունների հանցակազմեր են ներկայացնում, ապա քրեաիրավական նորմերի մրցակցությունը բացակայում է, և կատարվածը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ: Օրինակ՝ երբ անձը միաժամանակ ապօրինի կերպով կրում է ինչպես հրազեն, այնպես էլ սառը զենք, նրա արարքը միաժամանակ համապատասխանում է ՀՀ քր. օր.-ի 235-րդ հոդվածի ինչպես 1-ին, այնպես էլ 4-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներին: Ուստի, քանի որ նշված հոդվածի առաջին և չորրորդ մասերով նախատեսված հանցագործություններն իրար հետ չկապված (հանցագործության առարկայով պայմանավորված) ինքնուրույն (տարբեր) հանցագործություններ են, քրեաիրավական նորմերի մրցակցությունը բացակայում է, իսկ հանցավորի արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի 235-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով նախատեսված հանցագործությունների համակցությամբ:

<sup>125</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Գարսևան Ոսկանյանի վերաբերյալ 31.10.2014թ. թիվ ԵԷԴ/0119/01/13 գործով որոշումը:

– *Երկու արտոնյալ նորմերի մրցակցություն*: Այն դեպքում, երբ անձի արարքը միաժամանակ պարունակում է երկու կամ ավելի մեղմացնող հանգամանքներ, ապա *նախապարվությունը* *տրվում է առավել արտոնյալ նորմին, կամ, որ նույնն է՝ այն նորմին, որով ավելի մեղմ պատասխանարվություն է նախատեսվում*: Օրինակ՝ եթե հոգեկան խիստ հուզմունքի վիճակում (<< քր. օր.-ի հոդված 105) անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ (<< քր. օր.-ի հոդված 108) սպանություն է կատարվում, ապա արարքը պետք է որակել որպես անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ սպանություն, քանի որ վերջինս ավելի մեղմ է պատժվում:

Ամփոփելով ասվածը՝ հարկ է ընդգծել նաև, որ, եթե անձի արարքում միաժամանակ առկա են քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի միևնույն մասի տարբեր կետերով նախատեսված հանցագործության հատկանիշները, ապա *նորմերի մրցակցությունը բացակայում է, և կատարվածը որակվում է համապատասխան բոլոր կետերով՝ որպես մեկ հանցագործություն*: Օրինակ՝ եթե անձն առանձին դաժանությամբ կատարում է երկու ակնհայտ հղի կնոջ սպանություն, ապա նրա արարքում առկա են << քր. օր.-ի 104-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված որակյալ հատկանիշները, և կատարվածը պետք է որակվի համապատասխան բոլոր կետերով:

Նշվածից բացառություն պետք է համարել «շարժառիթների մրցակցությունը»: Այսինքն՝ անձին չեն կարող միաժամանակ մեղսագրվել մի քանի շարժառիթներ: Բանն այն է, որ հանցագործությունը չի կարող միաժամանակ կատարվել մի քանի շարժառիթներով, օրինակ՝ շահադիտական և խուլիգանական: Այս կապակցությամբ ՌԴ Գերագույն դատարանի պլենումն իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ կյանքի կամ առողջության դեմ ուղղված հանցագործությունների կատարումը ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով բացառում են արարքը միաժամանակ այլ շարժառիթով որակելը<sup>126</sup>:

<sup>126</sup> Ст'а пункт 3 постановления Пленума Верховного Суда РФ от 28 июня 2011 года № 11 «О судебной практике по уголовным делам о преступлениях экстремистской направленности»:

Միաժամանակ, հանցագործության նպատակը և շարժառիթը, հանցանքին ուղղվածություն տալով քրեաիրավական պաշտպանության այս կամ այն օբյեկտի դեմ, կրում են հավասարաթեք նշանակություն, հետևաբար, որպես կանոն, բացառում են մեկը մյուսին: Այս առումով ևս ՌԴ Գերագույն դատարանի պլենումը մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ սպանությունն այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով կատարելը նույնպես բացառում է կատարվածը հողվածի միևնույն մասի այնպիսի այլ կետով որակելը, որը պատասխանատվություն է նախատեսում տվյալ հանցանքը այլ նպատակով կամ շարժառիթով կատարելու համար<sup>127</sup>:

Հանցագործությունները որակելիս անձին միանգամից մի քանի շարժառիթ կամ նպատակ մեղսագրելու իրավաչափության վերաբերյալ քրեական իրավունքի տեսության մեջ չկա միասնական մոտեցում: Հեղինակներից ոմանք հնարավոր են համարում անձին միանգամից մի քանի շարժառիթի մեղսագրումը<sup>128</sup>, իսկ մյուսները հերքում են այդ մոտեցումը<sup>129</sup>:

Այս կապակցությամբ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, Ա. Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի վերաբերյալ թիվ ՎԲ-48/08 գործով Դատարանը դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) *խուլիգանական դրդումներով կատարված սպանությունը պետք է տարբերել վրեժի շարժառիթով կատարվածից: Խուլիգանական դրդումներով սպանությանը հատուկ է բազմաթիվ, այդ թվում՝ մրցակցային շարժառիթների առկայությունը, որի պայմաններում կարևոր է այն հիմնական, առաջատար, գլխավոր շարժառիթը, որով ղեկավարվել է հանցավորը սպանություն կատարելիս: Վրեժի շարժառիթի դեպքում՝ հանցավորը ցանկանում է բավարարում ստանալ տուժողի գործողությունների արդյունքում ձևավորված վիրավորանքի դիմաց: Այն*

<sup>127</sup> Տե՛ս пункт 13 постановления Пленума Верховного Суда РФ от 27 января 1999 года № 1 «О судебной практике по уголовным делам об убийстве»:

<sup>128</sup> Տե՛ս, օրինակ՝ Уголовное право Российской Федерации. Общая часть / Под ред. Р.Р. Галиакбарова. Саратов, 1997, էջ 210:

<sup>129</sup> Տե՛ս, օրինակ՝ Волков Б.С. Мотив и квалификация преступлений / Под ред. Ф.Н. Фаткуллина. - Казань: Изд-во Казан. ун-та, 1968, էջ 28:

դեպքերում, երբ սպանությունը տեղի է ունենում որպես աննշան առիթին տրված պատասխան գործողություն, դրանով արտահայտվում է և՛ հանցավորի անհարգալից, արհամարհական վերաբերմունքը հասարակության, և՛ վրեժի զգացումը տուժողի նկատմամբ: Այստեղ մրցակցող շարժառիթների դեպքում անհրաժեշտ է պարզել սպանության հիմնական շարժառիթը, որով էլ պայմանավորված՝ արարքը ենթակա է որակման կա՛մ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով, կա՛մ նույն հոդվածի 1-ին մասով»<sup>130</sup>:

### **3. Մասի և ամբողջի մրցակցություն:**

Մրցակցության տվյալ տեսակի էությունն այն է, որ հանրորեն վտանգավոր արարքն իր հատկանիշներով միաժամանակ համապատասխանում է քրեական օրենսգրքի երկու կամ ավելի հոդվածներով նախատեսված հանցակազմերի հատկանիշներին, որոնցից միայն մեկն է արտացոլում արարքն ամբողջությամբ, իսկ մյուսը (մյուսները) միայն մասամբ է (են) պարունակում արարքի հատկանիշները: Կարելի է ասել, որ մասի և ամբողջի մրցակցության դեպքերը հիմնականում վերաբերում են բարդ, մասնավորապես՝ բաղկացական հանցագործությունների կառույցին<sup>131</sup>: Նշված պայմաններում հատուկ հանցակազմը կառուցված է այնպես, որ մի հանցագործության հանցակազմի բաղկացուցիչ մաս է հանդես գալիս մեկ այլ հանցանքի կատարումը:

Քրեաիրավական նորմերի մրցակցության այս տեսակի դեպքում նախ և առաջ հարկ է պարզել, թե հանցակազմի որ հատկանիշն է պայմանավորում նորմերի մրցակցությունը: Մասնավորապես, այն կարող է կախված լինել հանցակազմի օբյեկտը, օբյեկտիվ կողմը,

<sup>130</sup> Տես ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի վերաբերյալ 25.07.2008թ. թիվ ՎԲ-48/08 գործով, ինչպես նաև Կ.Մարկոսյանի վերաբերյալ 01.02.2008թ. թիվ ՎԲ-03/08 գործով որոշումները:

<sup>131</sup> Մասնագիտական գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ մասի և ամբողջի մրցակցություն կոչվող դեպքերը չպետք է առանձնացվեն որպես քրեաիրավական նորմերի մրցակցության ինքնուրույն տեսակ (տե՛ս, օրինակ՝ Зацепин А.М. Дополнительная квалификация преступления. Общие и специальные вопросы. Монография. М.: Проспект, 2019, էջեր 25-36):

սութեկտըր և սութեկտիվ կողմը բնութագրող յուրաքանչյուր հատկանիշից:

Այսպես, օրինակ՝ բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության (<< քր. օր.-ի հոդված 177-ի 3-րդ մասի 1.1 կետ) հանցակազմը ձևավորվել է գողության հիմնական հանցակազմի (քր. օր.-ի 177-րդ հոդված) և բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու հանցակազմի (քր. օր.-ի 147-րդ հոդված) օրենսդրական համակցման արդյունքում: Բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողության դեպքում քր. օր.-ի 147-րդ հոդվածը մասամբ է արտացոլում կատարվածի էությունը և թույլ է տալիս արարքին քրեաիրավական գնահատական տալ միայն բնակարան ապօրինի մուտք գործելու փաստի մասով: Մինչդեռ 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետը ամբողջությամբ ընդգրկում է կատարված հանցագործությունը և արտացոլում դրա սոցիալական նշանակությունը:

Այսպիսով, ընդհանուր կանոնի համաձայն՝ *մասի և ամբողջի մրցակցության դեպքում հանցավորի արարքը որակվում է միայն այն հոդվածով, որն առավել ամբողջական է արտացոլում կատարված արարքի փաստական հատկանիշները:*

Մասի և ամբողջի մրցակցության դեպքում հանցագործությունների որակման դժվարությունը հիմնականում պայմանավորված է այն իրավիճակներով, երբ նորմի դիսպոզիցիայում ամրագրված մի հանցագործությունը հանդես է գալիս որպես մյուս հանցագործության կատարման եղանակ (միջոց), որը միևնույն ժամանակ, որպես ինքնուրույն հանցագործություն, նախատեսված է քրեական օրենսգրքի առանձին հոդվածով: Օրինակ՝ << քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետը՝ որպես ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ զորավարժանքից խուսափելու եղանակ է նախատեսում *փաստաթուղթ կեղծելը*: Միևնույն ժամանակ, փաստաթուղթ կեղծելը, որպես առանձին հանցագործություն, նախատեսված է << քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածով: Սակայն, քանի որ տվյալ դեպքում փաստաթուղթ կեղծելն օրենսդիրը նախատեսել է որպես զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ զորավարժանքից խուսափելու առավել վտանգավոր եղանակ (օրենսդրորեն հա-

մակցվել են այս երկու արարքները), հանցավորի արարքը պետք է որակվի միայն ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Կա՛մ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 240.1 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը՝ որպես առանց լիազոր մարմնի թույլտվության կամ լիազոր մարմնի թույլտվությամբ նախատեսված պայմանների խախտմամբ դիտավորությամբ երկակի նշանակության տեղեկատվությունը և մտավոր գործունեության արդյունքները փոխանցելու եղանակ է նախատեսում արարքը պաշտոնեական դիրքը չարաշահելով կատարելը: Միևնույն ժամանակ, պաշտոնեական դիրքը (լիազորությունները) չարաշահելը՝ որպես ինքնուրույն հանցագործություն, նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով: Բայց, քանի որ օրենսդիրն արդեն իսկ ՀՀ քր. օր.-ի 240.1 հոդվածի 2-րդ մասով պաշտոնեական դիրքը չարաշահելը նախատեսել է որպես այդ հանցագործության առավել վտանգավոր դրսևորում, և այդ ամբողջ զուգակցված հանցագործության համար սահմանել է առավել խիստ պատիժ, կատարվածը չպետք է լրացուցիչ որակվի ՀՀ քր. օր.-ի հոդված 308-ով:

Այսպիսով, կարելի է ասել, որ, *եթե քրեական օրենսգրքի Հատուկ մասի ինքնուրույն հոդվածով նախատեսված այս կամ այն հանցագործությունը հանդես է գալիս որպես մյուսի՝ ավելի ծանր հանցագործության եղանակ (միջոց), ապա հանցագործությունների համակցությունը բացակայում է, և կատարվածը որակվում է որպես մեկ միասնական բարդ հանցագործություն:*

Հանցագործությունների որակման այս կանոնը բխում է ընդհանուրի և մասի դիալեկտիկայի մրցակցության էությունից: Վերջինս ենթադրում է, որ, եթե հանցանքի կատարման եղանակը նախատեսվում է որպես ինքնուրույն հանցագործություն, ապա այն չի մեղսագրվում անձին հիմնական հանցագործությունից առանձին<sup>132</sup>:

Միևնույն ժամանակ, որոշ քրեագետներ գտնում են, որ մասի և ամբողջի մրցակցություն տեղի է ունենում, անգամ, այն դեպքերում,

<sup>132</sup> Տե՛ս Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений. М., 1999, էջեր 211, 229:

երբ բացակայում է հանցակազմի բաղկացական կառույցը և խոսք է գնում եզակի պարզ հանցագործությունների մասին<sup>133</sup>: Մասնավորապես, նրանք նշում են, որ, եթե եզակի պարզ հանցագործությունը իրականացվում է հանցավոր եղանակով, ապա հնարավոր է քրեաիրավական նորմերի մրցակցություն: Որպես օրինակ է բերվում պաշտոնական կեղծ փաստաթուղթ օգտագործելով խարդախություն կատարելը: Այսպես, նշվում է, որ խարդախությունը բաղկացական հանցակազմով հանցագործություն չէ: Այնուհանդերձ, այս հանցանքի կատարումը կարող է առաջ բերել մասի և ամբողջի մրցակցություն: Մասնավորապես, եթե խաբեությունն իրականացվում է պաշտոնական կեղծ փաստաթուղթ օգտագործելով, ապա մրցակցություն է առաջանում իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող պաշտոնական կեղծ փաստաթուղթ իրացնելու կամ օգտագործելու և խարդախության համար պատասխանատվություն նախատեսող նորմերի միջև: Ընդ որում, նշված արարքներից առաջինը նախատեսող հողվածը հանդես է գալիս որպես «մաս», քանզի այն թույլ է տալիս քրեաիրավական գնահատական տալ միայն կեղծ փաստաթուղթ օգտագործելու փաստին: Մինչդեռ, որպես «ամբողջ» հանդես եկող մյուս հողվածը հնարավորություն է տալիս միաժամանակ որակել և՛ կատարված խարդախությունը, և՛ կեղծ փաստաթուղթ օգտագործելու փաստը՝ որպես խարդախության եղանակ: Ուստի, առաջարկվում է այն դեպքերում, երբ անձը խարդախությամբ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով օգտագործում է պաշտոնական կեղծ փաստաթուղթ, կատարվածը որակել միայն որպես խարդախություն<sup>134</sup>:

Հարկ ենք համարում նշել, սակայն, որ նկարագրված իրավիճակում հանցագործությունների որակման կանոնի ընտրությունը դժվարություն չի առաջացնում այն դեպքերում, երբ անձն ինքնու-

---

<sup>133</sup> Տե՛ս Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений, էջեր 211, 229, Գրիգորյան Մ.Վ. Հանցագործությունների որակման գիտական հիմունքները: Եր.: ՀՌՀ հրատ., 2009, էջեր 305-307, Курс уголовного права. В 5-ти т. Т. 3. М.: Зерцало-М, 2002, էջ 74:

<sup>134</sup> Տե՛ս, օրինակ՝ Квалификация преступлений: Учеб. пособие / Под ред. докт. юрид наук, проф. К.В. Ображиева и докт. юрид наук, проф. Н.И. Пикурова. 2-е изд., перераб. и доп. М.: Юрлитинформ, 2019, էջեր 165-166:

րույն (առանձին) գործողություններով կեղծում է իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող վկայական կամ պաշտոնական այլ փաստաթուղթ, որից հետո, այն օգտագործելով, կատարում է խարդախություն: Այստեղ քրեախրավական նորմերի մրցակցությունը բացակայում է, իսկ անձի արարքը ենթակա է որակման հանցագործությունների իրական համակցության կանոններով՝ որպես իրավունք վերապահող կամ պատասխանատվությունից ազատող վկայական կամ պաշտոնական այլ փաստաթուղթ կեղծել (<< քր. օր.-ի հոդված 325) և խարդախություն (<< քր. օր.-ի հոդված 178-րդ):

Մինդեռ, խարդախությունը կեղծ փաստաթուղթ օգտագործելու եղանակով կատարելու պարագայում ողջամտորեն հարց է ծագում. արդյո՞ք առկա է քրեախրավական նորմերի մրցակցություն, թե՞ կատարվածն անհրաժեշտ է որակել հանցագործությունների համակցությամբ: Եթե այս հարցադրումը չտարածենք միայն պաշտոնական կեղծ փաստաթուղթ օգտագործելու եղանակով կատարվող խարդախությունների որակման դեպքերի վրա, այլ ինդուկտիվ դատողությամբ դրան հաղորդենք ընդհանուր բնույթ, ապա առավել ընդհանրական հարցադրումը կունենա հետևյալ բովանդակությունը. երբ քրեական օրենսգրքով որպես պարզ հանցագործության եղանակ (միջոց) է «օգտագործվում» Հատուկ մասի մեկ այլ հոդվածով նախատեսված ինքնուրույն հանցագործությունը, կատարվածը պետք է որակել որպես մեկ միասնական բարդ հանցագործություն՝, թե՞ երկու պարզ հանցագործությունների համակցություն:

Այս առումով կարծում ենք, որ քրեախրավական նորմերի ընդհանուրի և մասի դիալեկտիկական մրցակցությունը բացակայում է, երբ քրեական օրենսգրքի հոդվածի հանցակազմը՝ որպես նորմ-ամբողջի դրսևորում, չի բովանդակում նորմ-մասի (հանցավոր եղանակի) վերաբերյալ որևէ նշում: Եթե օրենսդիրը կոնկրետ հոդվածով նախատեսված հանցակազմով (հիմնական, որակյալ, առավել որակյալ) որպես դրա կատարման եղանակ չի առանձնացրել քրեական օրենսգրքի մեկ այլ հոդվածով նախատեսված ինքնուրույն հանցագործություն, և հիմնական հանցագործության հնարավոր եղանակը դիտարկել է ինչպես հանցավոր, այնպես էլ ոչ հանցավոր, ապա



հանցանքը հանցավոր եղանակով կատարվելու դեպքում մասի և ամբողջի մրցակցությունը կբացակայի, իսկ հանցավոր եղանակն ինքնին պետք է արժանանա լրացուցիչ քրեաիրավական գնահատականի:

Այս մոտեցումը բխում է նաև այն տրամաբանությունից, որ նույն հանցագործությունը չի կարող հավասար պատժվել, երբ, մի դեպքում, կատարվում է հանցավոր, իսկ մյուս դեպքում՝ ոչ հանցավոր եղանակով (միջոցով): Այսպես, օրինակ՝ խարդախության եղանակ կարող է լինել ինչպես հանցավոր, այնպես էլ ոչ հանցավոր արարքը: Եթե այն կատարվում է պաշտոնական կեղծ փաստաթուղթ օգտագործելով, որի համար ինքնուրույն պատասխանատվություն է նախատեսված ՀՀ քր. օր.-ի 325-րդ հոդվածի 1-ին մասով, ապա քրեաիրավական նորմերի մրցակցությունը բացակայում է, և կատարվածը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ: Միևնույն ժամանակ՝ եթե խարդախության կատարման համար օգտագործված փաստաթուղթը չի համապատասխանում 325-րդ հոդվածով նախատեսված հանցագործության առարկայի հատկանիշներին, ապա արարքը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի 178-րդ հոդվածի համապատասխան մասով (կետով):

Բացի այդ՝ պետք է նկատել, որ խարդախության հանցակազմը չի իրականացնում կառավարման կարգն ապահովող հասարակական հարաբերությունների քրեաիրավական պաշտպանությունը: Այսինքն՝ այս հասարակական հարաբերությունները դուրս են գտնվում խարդախության տեսակային օբյեկտի շրջանակներից: Ուստի, խարդախություն կատարելիս քրեաիրավական պաշտպանության միանգամայն այլ օբյեկտին վնաս պատճառելը պետք է արժանանա ինքնուրույն քրեաիրավական գնահատականի:

*Այսպիսով, եթե եզակի հանցագործության եղանակը (միջոցը) նախատեսված չէ որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ (բացակայում է հանցագործության բաղկացական կառույցը), և դրա կատարման համար կիրառվում է հանցավոր եղանակ (միջոց), որը նախատեսված է քրեական օրենսգրքի ինքնուրույն հոդվածով (հոդվածի մասով կամ կետով), ապա տվյալ եղանակը պետք է արժանանա ինքնուրույն քրեաիրավական գնահատականի:*

Հարկ է առանձնահատուկ ընդգծել նաև, որ հանցագործությունը, որը նախատեսված է ամբողջ նորմով, չի կարող ներառել այնպիսի արարք, որի համար քրեական օրենսգրքով նախատեսվում է **հավասար** կամ **առավել խիստ** պատիժ, քան ամբողջ հանցագործության համար ինքնին: Ուստի, քրեաիրավական նորմերի մրցակցության այս տեսակը առաջանում է այն պայմաններում, երբ նորմ-մասը նվազ խիստ է պատժվում, քան նորմ-ամբողջը: Եթե նորմ-մասն ունի հավասար կամ ավելի խիստ սանկցիա, ապա քրեաիրավական նորմերի մրցակցությունը բացակայում է, և կատարվածը կազմում է հանցագործությունների համակցություն:

Այս մոտեցումը, մասնավորապես, բխում է մասի և ամբողջի դիալեկտիկական մրցակցության էությունից և այն տրամաբանությունից, որ չի կարող որպես մեկ հանցանքի կատարման եղանակ օգտագործվել մեկ այլ հանցավոր արարք, որը հավասար կամ առավել խիստ է պատժվում, քան ամբողջ հանցագործությունն ինքնին: Ասվածը ցայտուն արտահայտվում է այն հանցագործությունների որակման գործընթացում, որոնց հանցակազմերի (որակյալ կամ առավել որակյալ) հատկանիշ է բռնության գործադրումը: Դրանով պայմանավորված՝ բռնության գործադրմամբ զուգորդված հանցանքները որակելիս կարևոր նշանակություն են ձեռք բերում քրեաիրավական նորմերի մրցակցության և հանցագործությունների իդեալական համակցության տարանջատման հարցերը:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի բազմաթիվ հոդվածներում բռնության<sup>135</sup> հատկանիշը հանդես է գալիս և՛ որպես հիմնական հանցակազմի պարտադիր հատկանիշ, և՛ որակյալ կամ առավել որակյալ հանգամանք: Մի դեպքում, այդ հոդվածների դիսպոզիցիաներում բռնությունը նկարագրվում է ընդհանուր ձևով

---

<sup>135</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Ա. և Ծ. Սահակյանների վերաբերյալ գործով 01.11.2012թ. թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշման 18-րդ կետը, որի համաձայն՝ «(...) բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիսպոզիցիայամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տրամադրություն»:

(օրինակ՝ «կատարվել է բռնություն գործադրելով», որի տակ պետք է հասկանալ բռնության ցանկացած աստիճան), մեկ այլ դեպքում՝ կոնկրետացվում է բռնության տեսակը (օրինակ՝ «կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնությունը» (հոդված 176-ի 2-րդ մասի 4-րդ կետ) կամ «կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը» (ՀՀ քր.օր.-ի հոդված 175-րդ) և այլն)<sup>136</sup>:

Հարց է առաջանում՝ ինչպե՞ս որակել այն հանցանքները, որոնց կատարման եղանակ բռնությունը՝ որպես ինքնուրույն հանցագործություն, նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ գլխում: Խոսքն այն մասին է, թե ինչ բնույթի կամ ծանրության աստիճանի բռնությունն է, որ ընդգրկվում է քննարկվող հանցագործության հանցակազմի սահմաններում՝ առանց լրացուցիչ քրեաիրավական գնահատականի, և որ դեպքում է, որ պահանջվում է լրացուցիչ որակում անձի կյանքի կամ առողջության դեմ ուղղված հանցագործությունների համար քրեական պատասխանատվություն նախատեսող ինքնուրույն հոդվածներով:

Հարկ է արձանագրել, որ այս հանցագործությունների որակման հիմնական չափանիշը հանցակազմի և դրա կատարման եղանակ հանդիսացող հանցագործության տեսակների համադրելիությունն է: Այլ խոսքով՝ նշված խնդրի լուծումը պայմանավորված է հիմնական

---

<sup>136</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Ժ. Ղուկասյանի և այլոց վերաբերյալ գործով 15.02.2013թ. թիվ ԵԷԴ/0091/01/11 որոշումը, որի համաձայն՝ «(...) ավագակության հասարակ և որակյալ տեսակների դեպքում օբյեկտիվ կողմի պարտադիր հարկանիշ հանդիսացող բռնությունը կամ դրա սպառնալիքը կարող են լինել բացառապես կյանքի կամ առողջության համար վտանգավոր, իսկ կողոպուտի որակյալ տեսակի դեպքում բռնությունը կամ դրա սպառնալիքը պետք է լինեն կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր: (...) բռնության՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր կամ ոչ վտանգավոր լինելու հիմնական չափանիշը առողջությանը պատճառված վնասի վերաբերյալ բժշկական ցուցանիշներն են, որոնցից կախված են արարքի, այդ թվում՝ ավագակության իրավաբանական գնահատման առանձնահատկությունները: (...) բռնության տարբեր դրսևորումների՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր լինելը որոշվում է, ելնելով՝ ա) կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի ծանրության աստիճանից, բ) հանցագործության բնույթից, կատարման եղանակից, կատարման մեխանիզմի առանձնահատկություններից և այլն»:

հանցավոր արարքի և դրա կատարման եղանակ հանցագործության հանրային վտանգավորության բնույթով և աստիճանով, որն արտացոլվում է համապատասխան հողվածի սանկցիայով նախատեսված պատժի տեսակում և խստության աստիճանում:

Այսպես՝ *այն դեպքում, երբ բարդ բռնարարքային հանցագործության համար քրեական օրենսգրքով նախատեսվում է առավել խիստ պարզ, քան այդ հանցագործության կատարման եղանակ համարվող բռնության համար է, արարքը որակվում է միայն բարդ հանցագործության համար պարասխանավորություն նախատեսող հողվածով (հողվածի մասով կամ կետով), և բռնության գործադրման փաստն առանձին չի որակվում: Մինչդեռ, երբ բարդ բռնարարքային հանցագործության համար քրեական օրենսգրքով նախատեսված պարզից առավել մեղմ է, քան գործադրված բռնության համար ինքնուրույն պարասխանավորություն նախատեսող հողվածի սանկցիան է, կամ նախատեսված է դրան հավասար պարզ, կատարվածը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ:* Օրինակ՝ եթե բռնաբարությունը կատարվում է անձի առողջությանը դիտավորությամբ թեթև կամ միջին ծանրության վնաս պատճառելով, ապա կատարվածը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի 138-րդ հոդվածով: Մինչդեռ, եթե բռնաբարություն կատարելիս տուժողի առողջությանը դիտավորությամբ պատճառվում է ծանր վնաս, ապա կատարվածը, բացի ՀՀ քր. օր.-ի 138-րդ հոդվածից, անհրաժեշտ է որակել նաև ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով:

Նույն կանոնը կգործի այն հանցագործությունները որակելիս, որոնց հանցակազմի հիմնական, որակյալ կամ առավել որակյալ հանգամանք է *կյանքի կամ առողջության համար վրանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքը:* Այս պարագայում, սակայն, մրցակցությունը պետք է դիտարկել նորմ-ամբողջի և ՀՀ քր. օր.-ի 137-րդ հոդվածի (սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքը)՝ որպես նորմ-մասի դիսպոզիցիաների բովանդակության և սանկցիաների խստության համադրմամբ: Այսպես, օրինակ՝ եթե անձին գործադուլի մասնակցելուն կամ գործադուլի մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելը իրականացվել է վերջինիս սպանելու կամ նրա առողջությանը ծանր վնաս պատճա-

ռելու սպառնալիքով, ապա հանցավորի արարքը, բացի ՀՀ քր. օր.-ի 155-րդ հոդվածից, պետք է որակվի նաև 137-րդ հոդվածով: Բանն այն է, որ ՀՀ քր. օր.-ի 137-րդ հոդվածով նախատեսված հանցանքն առավել խիստ է պատժվում, քան 155-րդ հոդվածով նախատեսվածն է:

Միևնույն ժամանակ, եթե անձին օրինական հավաքներին մասնակցելուն հարկադրելն է իրականացվել վերջինիս սպանելու կամ նրա առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքով, ապա հանցավորի արարքը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի 163-րդ հոդվածի 2-րդ մասով: Վերոհիշյալ հիմնավորմամբ, լրացուցիչ որակում ՀՀ քր. օր.-ի 137-րդ հոդվածով տվյալ դեպքում չի պահանջվում:

Այսպիսով, հանցագործությունների որակման գործընթացում մասի և ամբողջի մրցակցությունը հանցագործությունների համակցությունից տարանջատելու համար հարկ է ուշադրություն դարձնել համապատասխան նորմերի սանկցիաներին, քանի որ նշված դեպքերում հանցագործության որակման կանոնի ընտրությունը կատարվում է հենց դրանցով պայմանավորված: Հետևաբար, անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ օրենսդրի կողմից համապատասխան քրեաիրավական նորմի սանկցիայի փոփոխությունը կարող է հանգեցնել նաև որակման փոփոխության:

Անդրադառնանք նաև այն հարցին, թե ինչպե՞ս պետք է որակվի կատարվածը, եթե իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի առողջությանը պատճառվում է տարբեր աստիճանի վնաս՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ:

Այդ կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնաս պատճառելու դեպքում արարքը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի հոդված 316-ի 2-րդ մասով: Մինչդեռ, եթե նշված անձանց առողջությանը ծանր վնաս է պատճառվում, ապա արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ: Ընդ որում, եթե նշված անձանց առողջությանը ծանր վնաս պատճառելու հետևանքով անզուգուրությամբ առաջանում է տուժողի մահ, կամ՝ եթե առկա են ՀՀ քր. օր.-ի հոդված 112-ով նախատեսված այլ ծանրացնող հանգա-

մանքներ, ապա արարքը պետք որակել քր. օր.ի հոդված 316-ով և հոդված 112-ի երկրորդ մասի համապատասխան կետով (կետերով)<sup>137</sup>:

Ասվածի համատեքստում անհրաժեշտ է առաջին հերթին պարզել, թե ինչպես են հարաբերակցվում ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասը և 112-րդ հոդվածը: Եթե ելնենք այն գաղափարից, որ քննարկվող հոդվածներով նախատեսված նորմերի հարաբերությունը մասի և ամբողջի մրցակցություն է, ապա մասնագետների առաջարկած որակման վերոնշյալ տարբերակը կլինի ընդունելի: Պարզապես այս նորմերի համադրական վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանք հարաբերակցվում են ոչ թե որպես մասը և ամբողջը, այլ ընդհանուրն ու հատուկը: Բանն այն է, որ, թեև ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի երկրորդ մասը՝ որպես հատուկ նորմ, բովանդակում է քր. օր.-ի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նկարագրված հանցակազմի (ընդհանուր նորմի) հատկանիշները, սակայն տարբերվում է տուժողների շրջանակի առանձնահատկությամբ. ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության տուժող կարող են լինել միայն իշխանության ներկայացուցիչը կամ նրա մերձավոր ազգականը:

Հետևաբար, ասվածով պայմանավորված, կարելի է պնդել, որ, եթե իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի առողջությանը ծանր վնաս է հասցվում, արարքը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի հոդված 316-ի 2-րդ մասով և լրացուցիչ որակում 112-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով չի պահանջվում: Միևնույն ժամանակ, հանցավորի արարքում ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված այլ ծանրացնող հանգամանքների առկայությունը, որոնք նկարագրված են նաև ՀՀ քր. օր.-ի 63-րդ հոդվածում՝ որպես ծանրացնող հանգամանքներ, պետք է հաշվի առնվի անձի պատժի և պատասխանատվության հարցը լուծելիս:

Այս առումով կարևորվում է նաև այն հարցի պարզաբանումը, թե ինչպե՞ս պետք է որակվեն իշխանության ներկայացուցչի կամ նրա

---

<sup>137</sup> Տե՛ս, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով): Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 840:

մերձավոր ազգականի սպանությունն ու դրա փորձը՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ: Մասնավորապես, մասնագիտական գրականության մեջ առաջարկվում է իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի սպանության փորձը որակել հոդված 316-ի 2-րդ մասով և 34-104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ որպես անձի կամ նրա մերձավորի սպանության փորձ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ: Մինչդեռ ավարտված սպանությունն առաջարկվում է որակել միայն հոդված 104-ի 2-րդ մասի 2-րդ կետով՝ անձի կամ նրա մերձավորի սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ<sup>138</sup>:

Ասվածի կապակցությամբ գտնում ենք, որ իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի սպանությունը միայն հոդված 104-ի 2-րդ մասի 2-րդ կետով որակելն արդարացված է, քանզի քննարկվող նորմն ամբողջությամբ պարունակում է կատարվածի իրավաբանական նշանակություն ունեցող հատկանիշները, իսկ իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի սպանությունը դուրս է 316-րդ հոդվածով նկարագրված հանցակազմի շրջանակներից:

Ինչ վերաբերում է իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի սպանության փորձը ՀՀ քր. օր.-ի հոդված 316-ի 2-րդ մասով և 34-104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նկարագրված հանցանքների համակցությամբ որակելուն, ապա կարծում ենք, որ նման պարագայում արարքը լրացուցիչ քր. օր.-ի 316-րդ հոդվածի 2-րդ մասով որակելը խախտում է սուբյեկտիվ մեղսայնացման սկզբունքը և հանգեցնում կրկնակի մեղսայնացման արգելքի խախտման: Քննարկվող իրավիճակներում, հաշվի առնելով հանցավորի դիտավորության ուղղվածությունը և քննարկվող հանցակազմերի հարաբերակցությունը, կատարվածը պետք է որակվի միայն ՀՀ քր. օր.-ի 34-104 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ որպես անձի կամ նրա մերձավորի սպանության փորձ՝ կապված այդ անձի

---

<sup>138</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս, էջ 840:

կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ:

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մեկ հանցանք կատարելուն ուղղված անձի միասնական դիտավորությունը չի կարող ձևավորել համակցություն: Միևնույն ժամանակ, քննարկվող իրավիճակում անձի արարքը փաստացի կատարվածով լրացուցիչ (<< քր. օր.-ի 316-րդ հոդվածի 2-րդ մասով) որակելը հակադրության մեջ է մտնում որակման այն կանոնի հետ, ըստ որի, եթե անձի արարքում միաժամանակ առկա են ինչպես չավարտված առավել ծանր հանցանքի, այնպես էլ ավարտված նվազ ծանր հանցանքի հատկանիշներ, ապա այն պետք է որակել միայն որպես չավարտված առավել ծանր հանցագործություն (իհարկե, հաշվի առնելով այդ հանցանքների հարաբերակցությունը և սուբյեկտի դիտավորության ուղղվածությունը):

Մեր կարծիքով, նման դեպքերում կատարվածը հանցագործությունների համակցությամբ որակելու հիմքում այն մտայնությունն է, որ հանցավորի նկատմամբ պատիժ նշանակելիս ապահովվի, այսպես ասած, արադարացի պատիժ նշանակելու հնարավորությունը, ինչին երբեմն խոչընդոտում են չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելու՝ օրենքով նախատեսված սահմանափակումները: Մինչդեռ ևս մեկ անգամ հարկ է արձանագրել, որ արարքի որակումը չի կարող պայմանավորված լինել անձի նկատմամբ առավել խիստ պատիժ նշանակելու ձգտումով: Այլ խոսքով՝ արարքի որակումը չի կարող հարմարեցվել կամ այլ ձևով ուղղորդվել միայն անձի նկատմամբ հնարավորինս խիստ պատժի նշանակումն ապահովելու ցանկությամբ՝ անտեսելով որակման գործընթացը պայմանավորող նորմատիվ և դրանցից բխող դոկտրինալ մոտեցումները:

Հարկ է նկատել, որ մասի և ամբողջի մրցակությունն առկա է նաև հետևյալ դեպքերում.

1. *Երբ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի հարկանիշ է հետևանքի պատճառումը, և, միևնույն ժամանակ, միայն հետևանքի պատճառումը՝ որպես ինքնուրույն հանցագործություն, նախատեսված է քր. օր.-ի առանձին հոդվածով:* Այսպես, օրինակ՝ << քր. օր.-ի 175-րդ



հողվածի 3-րդ մասի 3-րդ կետը պատասխանատվություն է նախատեսում առողջությանը ծանր վնաս պատճառելով ավազակություն կատարելու համար: Միննույն ժամանակ, ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար: Փաստորեն, օրենսդիրն առողջությանը ծանր վնաս պատճառելը՝ որպես ավազակության հետևանք և առավել որակյալ հատկանիշ, ընդգրկել է ավազակության հանցակազմում՝ ամբողջ բաղկացական հանցագործության համար սահմանելով ավելի խիստ պատասխանատվություն, քան նշված հետևանքի համար ինքնին: Հետևաբար, եթե ուրիշի գույքը հափշտակելու նպատակով կատարված հարձակման արդյունքում անձի առողջությանը ծանր վնաս է պատճառվում, ապա արարքը որակվում է միայն ՀՀ քր. օր.-ի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, և լրացուցիչ որակում ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդվածով չի պահանջվում:

Թվում է, թե նույն տրամաբանությունն է գործում այն դեպքում, երբ ավազակություն կատարելիս տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելու արդյունքում առաջանում է տուժողի մահ, որի նկատմամբ հանցավորը դրսևորում է անզգուշություն: Բայց, քանի որ տուժողին անզգուշությամբ մահ պատճառելը դուրս է ավազակության հանցակազմի շրջանակներից, և, միայն դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելով կատարված ավազակության փաստին գնահատական տալով, չի իրականացվի տուժողի կյանքի իրավունքի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների քրեաիրավական պաշտպանությունը: Ուստի, կատարվածը պահանջում է ձևավորել ՀՀ քր. օր.-ի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով նկարագրված հանցագործությունների համակցություն<sup>139</sup>:

2. Մասնագիտական գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ մասի և ամբողջի մրցակցություն առկա է նաև այն դեպքում, երբ *քրեական օրենսգրքի հոդվածով նախատեսված հանցագործության կատարումը կապվում է զենքի կամ այլ միջոցի գոր-*

<sup>139</sup> Այս մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության՝ «Հանցագործությունների բազմակիության որակումը և սահմանազատումը եզակի բարդ հանցագործություններից» պարագրաֆում:

ծաղրման հետ, իսկ մյուս հոդվածը պատասխանատվություն է նախատեսում միայն այդ զենքի կամ այլ միջոցի գործադրման համար: Նման դեպքերում առաջարկվում է արարքը որակել միայն այն հոդվածով, որը պատասխանատվություն է նախատեսում զենքի կամ այլ միջոցի գործադրմամբ կատարված հանցագործության համար<sup>140</sup>:

Մեր կարծիքով, սակայն, որակման տվյալ կանոնը չպետք է տարածվի այն իրավիճակների վրա, երբ անձի արարքում, բացի զենքի կամ այլ միջոցի գործադրումից, առկա են դրանց ապօրինի շրջանառության այլ հատկանիշներ (օրինակ՝ փոխադրելու, կրելու և այլն): Օրինակ՝ եթե բռնությամբ զուգորդված խուլիգանությունը կատարվում է ապօրինի կերպով ձեռք բերված և կրվող հրազենի գործադրմամբ, ապա կատարվածը, բացի ՀՀ քր. օր.-ի 258-րդ հոդվածի 4-րդ մասից, պետք է որակվի նաև 235-րդ հոդվածով:

Տեսական և գործնական կարևոր նշանակություն ունեն նաև **զուգակցված հանցագործությունների մրցակցության** հարցերը: Այսպես՝ եթե քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածում, հոդվածի մասում կամ կետում առկա է մեկ հանցակազմը մյուսի հետ զուգակցված լինելու մասին նշում, ինչը նշանակում է, որ մեկ հանցակազմն իրականացվում է մյուսը կատարելու ընթացքում, ապա, զուգակցված հանցագործությունների տեսակներից ելնելով՝ համապատասխան արարքները պետք է որակվեն կա՛մ համակցությամբ, կա՛մ՝ որպես որակյալ հանցակազմով հանցագործություն: Օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասով որպես ծանրացնող հանգամանքներ են նախատեսված սպանությամբ զուգակցված՝ մարդուն առևանգելը կամ պատանդ վերցնելը (3-րդ կետ), շորթումը, ավագակությունը կամ բանդիտիզմը (8-րդ կետ) և այլն:

Նման հանցագործությունների որակման կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ առկա են տարբեր մոտեցումներ: Քրեագետների մի մասն առաջարկում է, կախված դիտավորության ուղղվածությունից, երկօբյեկտ (բազմօբյեկտ) դիտավորության մեջ այս կամ այն օբյեկտի առաջնայնությունից, զուգակցված հանցագործությունները որակել համակցությամբ: Օրինակ՝ մարդուն ա-

<sup>140</sup> Տե՛ս Տե՛ս Зацепин А.М. Дополнительная квалификация преступления. Общие и специальные вопросы. Монография. М.: Проспект, 2019, էջ 57:

ռևանգելով կամ պատանդ վերցնելով զուգորդված սպանությունը որակել որպես ծանրացնող հանգամանքով սպանություն և մարդուն առևանգել կամ պատանդ վերցնել, քանի որ այդ արարքները չեն ընդգրկվում սպանության հանցակազմում<sup>141</sup>:

Մյուս մոտեցման կողմնակիցները գտնում են, որ, եթե օրենսդիրը քրեական օրենսգրքի կոնկրետ հոդվածով ձևավորել է զուգակցված հանցագործություն, որի համար սահմանել է ավելի խիստ պատիժ, քան դրա բաղկացուցիչ ինքնուրույն հանցագործության համար, ապա առկա է մասի և ամբողջի մրցակցություն, և կատարվածը պետք է որակել միայն մեկ հոդվածով՝ զուգակցված հանցագործությունների հանցակազմով: Նրանց կարծիքով, արարքը միաժամանակ զուգորդված հանցագործությունների և բաղկացուցիչ հանցագործության համակցությամբ որակելը խախտում է կրկնակի մեղսայնացման անթույլատրելիության սկզբունքը, քանի որ կատարված փաստը կրկնակի արժանանում է քրեաիրավական գնահատականի (սկզբում սպանության որակյալ հանցակազմի շրջանակներում, հետո՝ ինքնուրույն): Բացի այդ՝ զուգորդված հանցագործությունների հանցակազմը ներառում է ինչպես հիմնական, այնպես էլ բաղկացուցիչ հանցագործության հանցակազմի բոլոր հատկանիշները, ինչով պայմանավորված՝ առավել բարձր է գնահատվում արարքի հանրային վտանգավորությունը և ավելի խիստ է պատժվում: Ուստի, հիմնագուրկ են այն պնդումները, որ զուգորդված հանցագործությունների դեպքում հիմնական հանցակազմը չի ներառում դրա բաղկացուցիչ ինքնուրույն հանցակազմի հատկանիշները, ինչը պահանջում է հանցանքների համակցում<sup>142</sup>:

Մեր կարծիքով, զուգակցված հանցագործությունների դեպքում ևս առկա է մասի և ամբողջի մրցակցություն: Հետևաբար, այս հանցագործությունները որակելիս հարկ է առաջնորդվել մասի և ամբողջի մրցակցության դեպքում հանցագործությունների որակման կանոններով: Օրինակ՝ ավազակության ընթացքում գույքի տիրապե-

---

<sup>141</sup> Տե՛ս, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով): Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 68:

<sup>142</sup> Տե՛ս, օրինակ՝ Иногамова-Хегай Л.В. Конкуренция уголовно-правовых норм при квалификации преступлений. Учебное пособие. М., 2002, էջ 144:

տողին կամ այլ անձին դիտավորությամբ կյանքից զրկելու դեպքում կատարվածը պետք է որակվի միայն ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով՝ որպես ավազակության հետ զուգորդված սպանություն: Թեև նման դեպքերում անձի դիտավորությունն առաջնային ուղղված է տուժողի սեփականության իրավունքն ապահովող հասարակական հարաբերությունների դեմ, այնուամենայնիվ, նրան կյանքից զրկելու դեպքում այդ փաստին պետք է տրվի առաջնային նշանակություն. կյանքի իրավունքի ապահովումն առավել խիստ քրեաիրավական պաշտպանության տակ է առնված: Ուստի, կատարվածը անձի կյանքի դեմ ուղղված հանցագործությունների գլխում նախատեսված հոդվածով որակելն ամենևին չի հակասում քրեաիրավական սկզբունքների էությանը, առավել ևս այն դեպքում, երբ անձի կատարած յուրաքանչյուր փաստին տրվում է քրեաիրավական գնահատական՝ չխախտելով կրկընակի մեղսայնացման արգելքը:

Այս առումով ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ ՀՀ քր. օր.-ի 341-րդ հոդվածի 2-րդ մասով (դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից ցուցմունք կամ բացատրություն կամ կեղծ եզրակացություն տալուն կամ սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելը՝ զուգորդված խոշտանգմամբ) նկարագրված ծանրացնող հանգամանքի ձևակերպման մեջ նշվում է «զուգորդվել» բառը: Հարց է առաջանում՝ տվյալ և քր. օր.-ի 309<sup>1</sup>-րդ հոդվածով նկարագրված հանցակազմերի դեպքում նույնպես պետք է գործի՞ զուգորդական հանցագործությունների որակման վերը նշված կանոնը, թե՞ ոչ: Եթե ելնենք վերը նշված կանոնից, ապա կատարվածը պետք է որակենք հանցանքների համակցությամբ՝ որպես խոշտանգում և խոշտանգմամբ զուգորդված՝ դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից ցուցմունք կամ բացատրություն կամ կեղծ եզրակացություն տալուն կամ սխալ թարգմանություն կատարելուն հարկադրել, քանզի ինքնուրույն խոշտանգման համար քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը հավասար է քննարկվող նորմով նախատեսվածին:

Ուսումնասիրելով նշված նորմերի հարաբերությունը, սակայն, կարելի է եզրակացնել, որ այս դեպքում գործ ենք ունենում ոչ թե

մասի և ամբողջի, այլ ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության հետ: Եթե խոշտանգման և պաշտոնեական լիազորություններն անցնելու պարագայում առաջինը համարվում է երկրորդի հատուկ դրսևորում, ապա այս դեպքում որոշակի առումով հենց քննարկվող հոդվածով նախատեսված նորմն է խոշտանգման ընդհանուր նորմի համեմատ հանդես գալիս որպես հատուկ<sup>143</sup>: Ընդ որում, այն հատուկ է ինչպես սահմանափակ սուբյեկտային կազմի, այնպես էլ հնարավոր տուժողների առումով: Մասնավորապես՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 341-ով նախատեսված հանցագործության սուբյեկտ կարող են լինել դատավորը, դատախազը, քննիչը կամ հետաքննություն կատարող անձը, իսկ տուժող՝ դատավարությանը մասնակցող ցուցմունք կամ բացատրություն տվող անձը, փորձագետը, թարգմանիչը կամ վկան:

Քննարկվող հոդվածների տարանջատման բարդությունը հիմնականում այն է, որ երկու դեպքում էլ հանցակազմերի օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել բռնության գործադրմամբ: Բացի այդ, խառնաշփոթ է առաջանում՝ կապված այն հանգամանքի հետ, որ ՀՀ քր. օր.-ի 341-րդ հոդվածի օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել ցուցմունք տալուն հարկադրելով, իսկ խոշտանգման հանցակազմում նախատեսված է խոստովանություն ստանալու նպատակը:

Ինչպես այս կապակցությամբ արդարացիորեն նշվում է մասնագիտական գրականության մեջ՝ գործնականում բացառված չէ, որ խոստովանությունը մեկնաբանվի որպես ցուցմունքի մասնավոր դրսևորում՝ նույնացնելով խոստովանությունն ու ինքնախոստովանական ցուցմունքը, և արարքին գնահատական տալիս նախապատվությունը տրվի խոշտանգման հոդվածին՝ որպես այս առումով հատուկ նորմ<sup>144</sup>:

Նման մոտեցումը, սակայն, ընդունելի չէ: ՀՀ քր. օր.-ի 309.1-րդ հոդվածում առկա «խոստովանություն» հասկացությունը հարկ է մեկնաբանել այնպես, որպեսզի բացառվի դրա և ինքնախոստովանական ցուցմունքի նույնացումը: Այսպիսով, ինչպես նշվեց, հաշվի

<sup>143</sup> Տե՛ս Գալյան Ս., Թումայան Դ., Նիկողոսյան Ա. Խոշտանգման քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները: Ուս. ձեռնարկ: Եր., 2018, էջեր 36-38:

<sup>144</sup> Տե՛ս նույն տեղում:

առնելով այն, որ ՀՀ քր. օր.-ի 341-րդ հոդվածի 2-րդ մասով նկարագրված նորմը քր. օր.-ի հոդված 309.1-ում նկարագրվածի համեմատ հանդես է գալիս որպես հատուկ, նախապատվությունը պետք է տրվի 341-րդ հոդվածի 2-րդ մասին, քանի որ նշված հոդվածներում նկարագրված արարքներն, ըստ էության, նույնանում են: Այսինքն՝ այն դեպքերում, երբ խոշտանգումը կատարում է դատավորը, դատախազը, քննիչը կամ հետաքննություն կատարող անձը՝ ցուցմունք կամ բացատրություն կամ կեղծ եզրակացություն տալուն կամ սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելու համար, արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի ոչ թե հոդված 309.1-ով, այլ հոդված 341-ի 2-րդ կամ 3-րդ մասով, եթե առկա են առավել ծանրացնող հանգամանքներ:

Ուշագրավ է նաև այն իրողությունը, որ զուգորդված հանցագործությունների դեպքում արարքը այդ հանցագործությունների համակցությամբ որակելը բացառելու և դրա հետևանքով կրկին դատվելու անթույլատրելիության սկզբունքի խախտումը կանխելու նպատակով ՌԴ քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրվել է. *«հանցագործությունների համակցություն է համարվում անձի կողմից երկու կամ ավելի հանցագործություններ կատարելը, որոնց համար անձը չի դատապարտվել, բացառությամբ այն դեպքերի, երբ երկու կամ ավելի հանցանքների կատարումը նախատեսված է քրեական օրենսգրքի Հատուկ մասով՝ որպես առավել խիստ պատժվող հանգամանք»:*

Քրեական իրավունքի գիտության մեջ առանձնացվում են նաև մասի և ամբողջի մրցակցության հետևյալ իրավիճակները.

- *եթե քրեաիրավական նորմերից մեկում նկարագրված է մի քանի հանցավոր արարք, իսկ մյուսում՝ այդ արարքներից միայն մեկը, ապա որակումն իրականացվում է առաջին նորմով (օրինակ՝ անձին առևանգելու և ազատությունից ապօրինի զրկելու պարագայում արարքը պետք է որակել որպես առևանգում),*
- *եթե քրեաիրավական նորմերից մեկում նկարագրված է մեղքի երկու ձևող կատարվող հանցագործություն, իսկ մյուսում՝ միայն անզգուշությամբ, ապա որակումն իրականացվում է առաջին նորմով (օրինակ՝ անզգուշությամբ տուժողի մահ առաջացրած բռնաբարության և անզգուշությամբ մահ պատճառելու պարա-*

- գայում արարքը պետք է որակել որպես բռնաբարություն, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ),
- եթե արարքը միաժամանակ պարունակում է ինչպես ավարտված, այնպես էլ չավարտված հանցագործության հատկանիշներ, ապա որակումն իրականացվում է այն նորմով, որը պատասխանավորություն է նախատեսում առավել ծանր չավարտված հանցագործության համար (օրինակ՝ եթե անձը ցանկանում է տուժողի առողջությանը պատճառել ծանր, սակայն հաջողվում է պատճառել միայն միջին ծանրության վնաս, ապա նրա արարքը պետք է որակվի որպես տուժողի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու փորձ՝ ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 34-112-րդ), իսկ տուժողի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու փաստը կլանվում է առավել ծանր չավարտված հանցագործությամբ և ինքնուրույն չի որակվում<sup>145</sup>:

Քրեաիրավական նորմերի մրցակցությունն ի հայտ է գալիս նաև հանցակցության պարագայում: Տվյալ ինստիտուտի շրջանակներում հանցավոր արարքների որակման հետ կապված հարցերը կքննարկվեն սույն աշխատության՝ «Հանցակցության որակումը» պարագրաֆում:

#### **4.3. Քրեաիրավական նորմերի ժամանակային (տեմպորալ) մրցակցություն**

Քրեաիրավական նորմերի ժամանակային մրցակցությունն առաջանում է նույն քրեաիրավական հարաբերությունը կարգավորող նորմերի միջև, որոնք ունենում են տարբեր ժամանակային գործողություն: Այսինքն՝ երբ հանցանքը կատարելուց հետո այդ արարքի համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմը ենթարկվում է փոփոխությունների. ա) ընդունվում է քրեական նոր օրենք, կամ գործող օրենքը խմբագրվում, ուղղվում է, բ) փոփոխություն է կատարվում այն իրավական ակտերում, որոնք բլանկետ են

---

<sup>145</sup> Ст'а Зацепин А.М. Дополнительная квалификация преступления. Общие и специальные вопросы. Монография. М.: Проспект, 2019, էջեր 46-72:

հանդիսանում քրեական օրենսգրքի համար<sup>146</sup>: Այլ խոսքով՝ քրեաիրավական նորմերի ժամանակային մրցակցությունն առաջ է գալիս քրեաիրավական նորմի փոփոխության հետևանքով:

Քրեաիրավական նորմերի ժամանակային մրցակցության հարցի ճիշտ գնահատման անհրաժեշտ նախադրյալ է հանցանքը կատարելու ժամանակի ճշգրիտ որոշումը, քանզի ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով»: Հանցագործությունները որակելիս օրենքի այս կարգավորումը ձեռք է բերում խիստ կարևոր նշանակություն, մասնավորապես՝ այն դեպքերում, երբ հանրորեն վտանգավոր արարքի ու դրա վտանգավոր հետևանքների միջև առկա է լինում ժամանակային խզում (արարքը կատարվում է քրեաիրավական մի նորմի գործողության ընթացքում, բայց հանրորեն վտանգավոր հետևանքները վրա են հասնում մեկ այլ (փոփոխված) նորմի գործողության ընթացքում):

ՀՀ քր. օր.-ի 12-րդ հոդվածի 2-րդ մասում ուղղակիորեն սահմանված դրույթի ուժով՝ *հանցանքը կատարելու ժամանակ է համարվում հանրության համար վտանգավոր գործողությունը (անգործությունը) իրականացնելու ժամանակը՝ անկախ հետևանքները վրա հասնելու պահից*: Հետևաբար՝ այն դեպքում, երբ հանրորեն վտանգավոր արարքի ու դրա վտանգավոր հետևանքների միջև առկա է լինում ժամանակային խզում, հանցանքի կատարման ժամանակը որոշվում է արարքի կատարման, այլ ոչ հետևանքը վրա հասնելու պահով:

***Որոշակի առանձնահատկություններով է բնութագրվում հանցակցությամբ կատարվող և եզակի բարդ հանցագործությունների ավարտի պահի որոշումը, որը գործնական կարևոր նշանա-***

---

<sup>146</sup> Գիտագործնական կարևոր նշանակություն ունեն ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ քրեաիրավական նորմերի բովանդակության վերաբերյալ մեկնաբանությունների փոփոխության դեպքում որոշումներին հետադարձություն շնորհելու հարցերը, որոնք հետագայում կդարձվեն քննարկման առանձին առարկա:



**կություն ունի ժամանակի մեջ քրեահրավական նորմերի մրցակցության հարցի լուծման տեսանկյունից<sup>147</sup>:**

Մասնավորապես.

1. Եթե **տրևոլ** հանցագործության օբյեկտիվ կողմի մի մասը իրականացվում է նոր քրեական օրենքի գործողության ընթացքում (անկախ նրանից՝ նոր օրենքը համարվում է մեղմ, թե խիստ), ապա պետք է կիրառվի նոր օրենքը: Համապատասխանաբար **շարունակվող** հանցագործության կատարման պահ պետք է համարվի նույնաբնույթ արարքներից վերջինը կատարելու ժամանակը: Ընդ որում, տևող հանցագործությունների ավարտի պահ պետք է համարվի անձի բռնվելու, մեղայականով ներկայանալու կամ այլ հանգամանքների ուժով արարքը ավարտվելու ժամանակը: Այլ խոսքով՝ *ժամանակի մեջ տարբեր քրեահրավական նորմերի գործողության ընթացքում տրևոլ և շարունակվող հանցագործությունները կատարելիս նորմերի ժամանակային մրցակցությունը լուծվում է հոգուտայն նորմի, որը գործել է այդ հանցանքի փաստացի ավարտի պահին:*

Միևնույն ժամանակ հարկ է արձանագրել, որ *շարունակվող հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող այն արարքները, որոնք մինչև քրեական նոր օրենքի ուժի մեջ մտնելը չեն համարվել հանցագործություն, չեն կարող մեղսագրվել անձին: Այլ կերպ ասած՝ հանցավորին կարող են մեղսագրվել միայն շարունակվող հանցագործության մաս կազմող այն արարքները, որոնք կատարվել են դրանք քրեականացնող նոր օրենքի ուժի մեջ մտնելուց հետո միայն, իսկ միաբնույթ արարքներից նրանք, որոնք կատարվել են մինչև այդ*

---

<sup>147</sup> Շարունակվող և տևող հանցագործությունների ավարտման պահի հստակեցումը չափազանց կարևոր խնդիր է, քանի որ հանցանքի կատարման ժամանակի ճիշտ որոշման պարագայում միայն հնարավոր կլինի երաշխավորել քրեական օրենքին հետադարձ ուժ տալու կամ չտալու իրավաչափությունը, ինչը մատնանշել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ Եցերը և Չեյրեքն ընդդեմ Թուրքիայի գործով (տե՛ս ECER AND ZEYREK v. TURKEY գործով 2001 թ. փետրվարի 27-ի վճիռը, գանգատ թիվ 29295/95,29363/95, կետ 33):

արարքները քրեականացնող օրենքի ուժի մեջ մտնելը, չեն կարող մեղսագրվել վերջինիս<sup>148</sup>:

2. **Վերաճող** հանցագործությունների կատարման ժամանակ պետք է համարել մեկ հանցագործությունը առավել ծանր հանցագործության վերաճելու պահը: Օրինակ՝ եթե ապրիլի 30-ին սկսված գողությունը մայիսի 1-ին վերաճել է կողոպուտի, ապա կատարվածը պետք է որակվի որպես եզակի հանցագործություն՝ կողոպուտ, այն օրենքով, որը գործել է մայիսի 1-ին:

3. **Երկրնորելի արարքներով** նկարագրված հանցագործությունների կատարման ժամանակի որոշումը կախված է այն հանգամանքից, թե քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով նկարագրված երկրնորելի արարքներից քանիսն է կատարել հանցավորը: Այս հանցագործությունների կատարման ժամանակի հարցի լուծումն իրենից դժվարություն չի ներկայացնում, երբ անձը կատարում է երկրնորելի արարքներից մեկը. տվյալ դեպքում *հանցանքի կատարման ժամանակ է համարվում այդ արարքը իրականացնելու պահը*: Մինչդեռ, եթե անձը միասնական դիտավորությամբ իրականացնում է հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված երկրնորելի արարքներից մի քանիսը, որոնց միջև առկա է ժամանակային խզում, ապա *հանցանքի կատարման ժամանակ պետք է համարել դրանցից վերջինը կատարելու պահը*: Օրինակ՝ եթե անձը, իրացնելու նպատակով ձեռք է բերում և պահում է խոշոր չափերի թմրանյութ, և քրեական օրենսգրքում թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար պատասխանատվություն նախատեսող հոդվածների փոփոխությունից հետո միայն, իրացնում դա, ապա հանցավորի արարքը կատարելու ժամանակ պետք է համարել քրեական նոր օրենքի գործողության ժամանակը և կատարածը որակել նոր օրենքով:

Նշված կանոնը կիրառվում է նաև երկրնորելի առարկաներով (տուժողներով) հանցագործությունների կատարման ժամանակը որոշելիս:

---

<sup>148</sup> Տե՛ս նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Ա.Ստեփանյանի վերաբերյալ 20.10.2011թ. թիվ ԼԴ/0327/01/10 գործով որոշումը:

Ինչ վերաբերում է երկրնտրելի հանրորեն վտանագավոր հետևանքով հանցագործություններին, ապա դրանց կատարման ժամանակը որոշվում է՝ համաձայն ՀՀ քր. օր.-ի 12-րդ հոդվածի 2-րդ մասի:

4. ՀՀ քր. օր.-ի 12-րդ հոդվածը չի բովանդակում դրույթ այն մասին, թե ինչպես պետք է որոշվի հանցագործության **կազմակերպչի, դրդիչի և օժանդակողի** կողմից հանցանքը կատարելու ժամանակը: Մինչդեռ այս հարցի լուծումն առավել կարևոր նշանակություն է ձեռք բերում, երբ հանցագործության օժանդակությունը, դրդչությունը կամ կազմակերպչական գործողությունները կատարվում են քրեական մեկ օրենքի գործողության ընթացքում, սակայն հանցագործության կատարողը հանցանքն իրականացնում է քրեական նոր օրենքն ուժի մեջ մտնելուց հետո: Քրեական իրավունքի տեսության մեջ այս կապակցությամբ առկա են հետևյալ երկու իրարամերժ մոտեցումները: Առաջին մոտեցման համաձայն՝ հանցակիցների կողմից հանցանքը կատարելու ժամանակ պետք է համարել այն պահը, երբ կատարողը իրականացնում է հանցագործությունը<sup>149</sup>: Երկրորդ մոտեցումը հանցակիցների կողմից հանցանքը կատարելու պահ է համարում նրանցից յուրաքանչյուրի դերից բխող գործողությունների (անգործության) իրականացման պահը<sup>150</sup>:

Սուբյեկտիվ մեղսայնացման և իրավական որոշակիության սկզբունքների տեսանկյունից, առավել ընդունելի կարելի է համարել նշված մոտեցումներից երկրորդը, քանի որ այս դեպքում հանցակիցները կարող են կանխատեսել իրենց արարքի հանցավորությունը (քրեականացման սահմանները) և դրա քրեաիրավական հետևանքները: Հետևաբար՝ յուրաքանչյուր հանցակցի (կազմա-

---

<sup>149</sup> Տե՛ս Курс советского уголовного права. Т. 1. М., 1970, էջ 232, Уголовное право России. Практический курс / Под ред. А.И. Бастрыкина, А.В. Наумова. М., 2007, էջ 143, Уголовное право России. Общая часть / Под ред. А.И. Рапога. М., 2007, էջ 34:

<sup>150</sup> Տե՛ս Бойцов А.И. Действие уголовного закона во времени и пространстве. СПб., 1995, էջ 75, Якубов А.Е. Обратная сила уголовного закона: некоторые проблемы совершенствования уголовного кодекса Российской Федерации. СПб., 2003, էջեր 40-42, Аитова О.Ф. Уголовно-правовые проблемы времени преступления: Дис. канд. юрид. наук. Саратов, 2017, էջեր 136-138:

կերպի, դրդիչի, օժանդակողի, կատարողի) կողմից հանցանքը կատարելու ժամանակ պետք է համարել այն պահը, երբ նրանցից յուրաքանչյուրը *կատարում է իր դերից բխող գործողությունները* (այս մոտեցումը բխում է նաև հանցակիցների անհատական պատասխանատվության հայեցակարգից): Այլ հանցակիցների նկատմամբ նոր քրեական օրենքի կիրառումը, որը գործել է կատարողի կողմից հանցագործության օբյեկտիվ կողմը իրականացնելիս, անթույլատրելի է (բացառությամբ օրենքի հետադարձ ուժի կիրառման դեպքերի):

Ակադեմիկոս Վ.Ն. Կուդրյավցևն ուժի մեջ մտած քրեական նոր օրենքի կապակցությամբ առաջ է քաշում հետևյալ հարցադրումները. ա) անրաժեշտ է արդյո՞ք փոփոխել (վերաորակել) արդեն իսկ որակված արարքի քրեաիրավական գնահատականը, բ) եթե հանցագործության վերաորակումը պարտադիր է, ապա ի՞նչ կանոններով այն պետք է իրականացվի<sup>151</sup>:

Ավաճի կապակցությամբ կարելի է նկատել, որ տվյալ հարցադրումների ընդհանրական պատասխանները սահմանվում են ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ և 13-րդ հոդվածներում: Ըստ այդմ՝ քրեաիրավական նորմերի ժամանակային մրցակցությունը պետք է դիտարկել նաև **ՀՀ քր. օր.-ի 12-րդ և 13-րդ հոդվածների փոխադարձ կապի և համադրելիության պայմաններում**: Ըստ էության, քր. օր.-ի 12-րդ հոդվածը սահմանում է ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնը: Դրանից բացառություն է սահմանված ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի՝ *«Արարքի հանցավորությունը վերացնող, պարիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տրամադրվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պարիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»*:

Ժամանակի մեջ քրեական օրենքի գործողությունը կարգավորող իրավանորմերը ՀՀ Վճռաբեկ դատարանը համակարգային վերլուծության է ենթարկել Վ.Գալոյանի գործով որոշման մեջ, որտեղ

<sup>151</sup> Ст'я Кудрявцев В.Н. Избранные труды по социальным наукам. В 3 т. Т. 1. М., 2002, էջ 482:

իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության և քրեական օրենքի հետադարձ ուժի կառուցակարգերը ճիշտ կիրառելու համար ելակետային նշանակություն ունի հանցավոր արարքի կատարման պահը: (...) Հետևաբար իրավասու մարմինը հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական օրենքի այս կամ այն նորմի կիրառելիության հարցը լուծելիս պետք է ղեկավարվի հանցավոր արարքի (գործողության կամ անգործության) փաստացի կատարման պահի և քրեական օրենքի ուժի մեջ մտնելու պահի համադրմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է իրականացվում վարույթը և վարույթն իրականացնելու պահին կիրառման ենթակա օրենքը գործում է, թե ոչ: Նշված կանոնը՝ որպես կամայական մեղադրման, դատապարտման և պարժման դեմ ուղղված արդյունավետ երաշխիք, «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (*nullum crimen, nulla poena sine lege*) սկզբունքի անկյունաքարն է, և դրանից ցանկացած շեղում, բացառությամբ քրեական օրենքի հետադարձ ուժի կանոնի, կհանգեցնի (...) միջազգային և ներպետական իրավանորմերի պահանջների խախտման (...)»<sup>152</sup>:

Այդ կապակցությամբ Կոկկինակիսն ընդդեմ Հունաստանի գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսված չէ միայն այն բանի համար, որ հետադարձության կարգով քրեական օրենքի կիրառումն ի վնաս մեղադրյալի արգելվի: Այն ընդհանուր առմամբ ամրագրում է նաև այն սկզբունքը, որ միայն օրենքը կարող է սահմանել հանցանքը և նախատեսել պատիժը (*nullum crimen, nulla poena sine lege*), ինչպես նաև այն սկզբունքը, որ քրեական օրենքը չպետք է ի վնաս մեղադրյալի տարածական մեկնաբանության ենթարկվի, օրինակ՝ այն չպետք է կիրառվի անալոգիայով: Դրանից հետևում է, որ հանցանքը պետք է հստակորեն սահմանված լինի օրենքում, իսկ այս պայմանն ապահովված է այն դեպքում, երբ անձը համապատասխան դրույթի ձևակերպումից, անհրաժեշտության դեպքում՝

<sup>152</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Վ. Գալոյանի վերաբերյալ 18.10.2013թ. թիվ ԵԷԴ/0008/15/13 գործով որոշման 17-րդ կետը:

դատարանների մեկնաբանության օգնությամբ, կարող է հասկանալ, թե հատկապես ո՞ր գործողության ու անգործության համար է նա ենթակա պատասխանատվության<sup>153</sup>:

Այսպիսով՝ քրեական օրենքի այնպիսի փոփոխությունը, որը հանգեցնում է արարքի հանցավորության վերացման (այդ թվում՝ մասնակի ապաքրեականացման), կամ հանցավորի վիճակի այլ կերպ բարելավման, հիմք է անձի արարքը վերատրակելու համար: Քրեական օրենքի հետադարձության կիրառումը, այն արարքի որակման համար, որը կատարվել է նախկին օրենքի գործողության ընթացքում, թույլատրվում է միայն օրենքով հստակ նախանշված դեպքերում: Այլ խոսքով, ընդհանուր կանոնի («քր. օր.-ի 12-րդ հոդված») համաձայն՝ անձի արարքը որակվում է այն օրենքով, որը գործել է տվյալ հանցանքը կատարելու պահին, և արարքի քրեաիրավական գնահատականը փոխելը՝ նոր օրենքով այն վերատրակելը, իրավաչափ է միայն քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածով սահմանված հետևյալ դեպքերում.

ա) *Քրեական նոր օրենքը վերացնում է արարքի հանցավորությունը*. լրիվ կամ մասնակիորեն ապաքրեականացվում է այն արարքը, որը նախկին օրենքով համարվում էր հանցագործություն: Արարքի հանցավորությունը վերացնող պետք է համարել այն օրենքը, որը լրիվ կամ մասամբ վերացնում է քրեական օրենսգրքով նախատեսված արարքի հանցաձևավորող հատկանիշները, պայմանով, որ այդ արարքի համար քրեական պատասխանատվություն չի նախատեսվում այլ քրեաիրավական նորմով: Այսպես, օրինակ՝ քրեաիրավական հատուկ նորմի ապաքրեականացման դեպքում այդ արարքը ոչ թե դադարում է հանցագործություն համարվելուց, այլ «ընկրնում է» ընդհանուր նորմի գործողության տիրույթ:

բ) *Քրեական նոր օրենքը մեղմացնում է պատիժը*: Նոր քրեական օրենքը համարվում է պատիժը մեղմացնող, եթե՝ 1) սանկցիայում նախատեսված պատժի նվազագույն և առավելագույն չափերը միաժամանակ իջեցվում են, 2) նվազագույն չափը մնում է նույնը, առավելագույնը՝ իջեցվում, 3) առավելագույնը մնում է նույնը, նվազագույնը՝ իջեցվում, 4) սանկցիայում նախատեսված պատժատեսակը փո-

<sup>153</sup> *St'u Kokkinakis v. Greece*, գանգատ թիվ 14307/88, 1993 թվականի մայիսի 25-ի վճիռ, կետ 52:

խարհնվում է ավելի մեղմ պատժատեսակով, 5) սանկցիայում վերացվում է առավել խիստ պատժատեսակը, 6) սանկցիայում նախատեսված պարտադիր լրացուցիչ պատժատեսակը վերացվում է կամ վեր է ածվում ֆակուլտատիվի, 7) նոր օրենքով նախատեսվում է երկրնտրելի առավել մեղմ պատժատեսակ:

գ) *Քրեական նոր օրենքը այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը:* Հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող է այն օրենքը, որը չի վերացնում արարքի հանցավորությունը և չի մեղմացնում պատիժը, սակայն քրեական պատասխանատվության և պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատման կարգի և պայմանների հետ կապված՝ առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում նրա համար: Նման իրավիճակները կարող են ամենաբազմազան լինել և վերաբերել քրեական իրավունքի Ընդհանուր մասի տարբեր ինստիտուտներին, մասնավորապես՝ պատժի կրման կարգին, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելուն, վաղեմության ժամկետներին և այլն:

«Քրեական օրենսգրքի 12-րդ և 13-րդ հոդվածների վերլուծությունից և համակարգային մեկնաբանությունից կարելի է հանգել անհրաժեշտ հետևության, որ քրեական օրենքի փոփոխության դեպքում հանցագործությունների ճիշտ որակման համար անհրաժեշտ է.

1. **Հստակ որոշել մրցակցող նորմերը:** Քրեաիրավական նորմի փոփոխության դեպքում անհրաժեշտություն է առաջանում հանցագործության քրեաիրավական գնահատականը դիտարկել արարքի պահին գործող և նոր ընդունված՝ փոփոխված նորմերի տեսանկյունից:

Այն դեպքում, երբ արարքի պաշտոնական որակման ժամանակ քրեական օրենքը փոփոխվում է երկու կամ ավելի անգամ, իրավակիրառ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի խնդիրը մի փոքր բարդանում է: Այս իրավիճակում անհրաժեշտություն է առաջանում կատարվածը դիտարկելու «միջանկյալ քրեական օրենքի» հետադարձության տեսանկյունից: «Միջանկյալ» է համարվում անձի կողմից հանցանք կատարելուց հետո ուժի մեջ մտած, սակայն մինչ իրավասու մարմնի կողմից անձին քրեական պատասխանատվու-

թյան ենթարկելը կամ դատարանի կողմից դատավճիռ կամ դատական այլ ակտ կայացնելն ուժը կորցրած քրեական օրենքը: Փաստորեն, նշված դեպքերում ժամանակային մրցակցություն կարող է առաջանալ քրեաիրավական երեք և ավելի նորմերի միջև:

2. **Համեմատել մրցակցող նորմերի «խստությունը»**, որը գնահատվում է հանցանք կատարած անձի կարգավիճակի վրա այդ նորմերի ունեցած ազդեցության տեսանկյունից: Կախված այդ համեմատությունից՝ որակումը պետք է իրականացվի հետևյալ կանոններով.

*ա) եթե մրցակցող քրեաիրավական նորմերը տարբերվում են իրենց խստությամբ (օրինակ՝ ունեն տարբեր սանկցիաներ), ապա կիրառվում է նվազ խիստ նորմը,*

*բ) եթե մրցակցող նորմերը չեն տարբերվում իրենց խստությամբ, ապա կիրառվում է այն քրեաիրավական նորմը, որը գործել է հանցանքը կատարելու պահին:*

Ժամանակի մեջ քրեաիրավական նորմերի մրցակցության հաղթահարման նշված կանոնները կիրառելի են նաև այն դեպքում, երբ հանցանք կատարելուց հետո քրեական օրենսդրությունը փոխվում է մի քանի անգամ: Օրինակ՝ հանցագործությունը կատարվել է մի քրեական օրենքի գործողության ժամանակ, այդ հանցագործության վերաբերյալ գործը քննվել է այլ օրենքի գործողության ժամանակ, իսկ դատարանի կողմից դատական ակտ կայացնելիս գործել է նոր ընդունված քրեական օրենքը:

Նկարագրված իրավիճակներում, ինչպես արդեն նշվել է, խոսքը «միջանկյալ քրեական օրենքի» մասին է: Ըստ այդմ, եթե տվյալ մրցակցող նորմերը ունեն միևնույն խստությունը, ապա գործում է հանցանքը կատարելու պահին գործող օրենքը: Մինչդեռ, եթե այդ նորմերը տարբեր կերպ են անդրադառնում հանցանք կատարած անձի վիճակի վրա, ապա նախապատվությունը տրվում է այն նորմին, որն առավել մեղմ է (հանցավորի համար առավել բարենպաստ է), անգամ, եթե այն «միջանկյալ» է և չի գործում կատարված արարքին վերջնական քրեաիրավական գնահատական տալիս:

Հարկ է արձանագրել, որ ՀՀ քրեական գործող օրենսգրքում միջանկյալ քրեական օրենքի հետադարձության հարցերը չեն ստացել իրենց իրավական կարգավորումը: Քրեական իրավունքի գիտու-



թյան մեջ ևս այդ կապակցությամբ չկա միասնական մոտեցում: Մասնավորապես, որոշ քրեագետներ գտնում են, որ անձի վիճակը բարելավող միջանկյալ օրենքին պետք է տրվի հետադարձություն, քանզի այն մարդասիրության սկզբունքի դրսևորում է<sup>154</sup>, իսկ ոմանք հանդես են գալիս հակադիր դիրքերից<sup>155</sup>:

Այս առումով ՀՀ Վճռաբեկ դատարանը Վ.Գալոյանի վերաբերյալ գործով կայացրած որոշմամբ արձանագրել է, որ «(...) քրեական օրենքի հետադարձության կանոնը, ենթադրում է, որ հանցավոր արարքի փաստացի կատարումից հետո ընդունված, հանցանք կատարած անձի համար բարենպաստ հետևանքներ առաջացնող նոր օրենքը պետք է տարածվի այդ անձի վրա: **Այս դեպքում ևս որևէ նշանակություն չունի, թե մեղմացնող օրենքին հետադարձ ուժ տալու հարցը լուծելիս այն գործում է, թե արդեն իսկ կորցրել է իր իրավաբանական ուժը (ընդգծումը մերն է):** Քրեական օրենքի իրավաբանական ուժը կորցնելը նշանակում է, որ այդ օրենքը դադարեցնում է իր գործողությունը, և դրա նորմերը չեն կիրառվում այն հասարակական հարաբերությունների (հանցագործությունների) նկատմամբ, որոնք ծագում են (կատարվում են) դրանից հետո: **Իրավաբանական ուժը կորցրած քրեական օրենքը մինչ այդ ծագած հասարակական հարաբերությունների նկատմամբ կիրառելի է այնքանով, որքանով բարենպաստ հետևանքներ է առաջացնում հանցանք կատարած անձի համար»**<sup>156</sup>:

<sup>154</sup> Տե՛ս Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Отв. ред. В.М. Лебедев. М., 2012, էջ 66, Российское уголовное право. В 2-х томах. Том 1. Общая часть. Учебник / Под ред. Л.В. Иногамовой-Хегай, В.С. Комиссарова, А.И. Рагога. М., 2011, էջ 39:

<sup>155</sup> Տե՛ս Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений. М., 2004, էջ 288:

<sup>156</sup> Միջանկյալ օրենքը հետադարձ ուժ ունի այն մասով, որով լրիվ կամ մասնակիորեն վերացնում է արարքի հանցավորությունը, մեղմացնում է պատիժը կամ այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը: Տե՛ս նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Վ. Գալոյանի վերաբերյալ 2013թ. հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0008/15/13 գործով որոշման 17-րդ կետը, Հ. Չալաբյանի վերաբերյալ 13.07.2017թ. թիվ ՎԲ-136/07 գործով որոշումը:

Ժամանակի մեջ քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում հանցագործությունների որակումը որոշ դժվարություններ է հարուցում, երբ փոփոխված քրեական օրենքը միաժամանակ և՛ անձի վիճակը բարելավող է, և՛ վատթարացնող: Այս պարագայում պետք է նկատի ունենալ, որ, եթե քրեական նոր օրենքը միաժամանակ բովանդակում է անձի վիճակը և՛ բարելավող, և՛ վատթարացնող դրույթներ, ապա այդ օրենքը կիրառվում է միայն այն մասով, որով բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը (<< քր. օր.-ի 13-րդ հոդվածի 3-րդ մաս):

Ինչպես արդեն նշվել է՝ քրեաիրավական նորմի սանկցիան այն առանցքային որոշիչն է, որն անհրաժեշտ ուղղություն է տալիս իրավակիրառողին նորմերի ժամանակային մրցակցության հարցը լուծելիս: Քրեաիրավական նորմերի ժամանակային մրցակցության հաղթահարման համար, սակայն, ոչ միայն անհրաժեշտ է ուշադրություն դարձնել քրեաիրավական նորմերի սանկցիաներին, այլև հարկ է համեմատել մրցակցող հին և նոր նորմերի դիսպոզիցիաները:

Վերոգրյալի համատեքստում՝ կարելի է առանձնացնել քրեական հին և նոր օրենքների մրցակցության հետևյալ հնարավոր տարբերակները.

1. Հին և նոր նորմերի դիսպոզիցիաներն ամբողջովին համընկնում են, սակայն փարբերվում են սանկցիաներով: Տվյալ դեպքում որակումն իրականացվում է այն նորմով, որի սանկցիան առավել մեղմ է:

Այս առումով պետք է նկատի ունենալ, որ, եթե քրեական նոր օրենքը ընդհանուր նորմից առանձնացնում է դրա առանձին որևէ դրսևորում՝ որպես հատուկ հանցակազմ (կատարված արարքը նախատեսվում է հատուկ նորմով, որը նախկինում ընկնում էր ընդհանուր նորմի գործողության տիրույթ), ապա կիրառման ենթակա նորմն ընտրելիս անհրաժեշտ է համեմատել նախկին՝ ընդհանուր, և նոր՝ հատուկ նորմի սանկցիաները: Եթե նոր ուժի մեջ մտած՝ հատուկ նորմի սանկցիան առավել բարենպաստ է հանցանք կատարած անձի իրավական վիճակի տեսանկյունից, քան նախկինն էր, ապա կիրառման է ենթակա նոր ուժի մեջ մտած նորմը: Միևնույն ժամանակ, եթե հատուկ նորմով նախատեսվում է առավել խիստ

պատիժ, քան նախկին՝ ընդհանուր նորմի սանկցիան էր, ապա այդպիսի նոր օրենքին չի կարող շնորհվել հետադարձություն, իսկ կատարվածը պետք է որակվի հին օրենքով:

2. *Նոր քրեական օրենքի դիսպոզիցիան նախատեսում է հանցավոր արարքների առավել նեղ շրջանակ, քան հին օրենքի դիսպոզիցիան:* Ասվածը հնարավոր է, երբ նոր քրեական օրենքով հանցավոր համարվող արարքների շրջանակը նեղանում է, կամ նոր քրեական օրենքի դիսպոզիցիայով նախատեսվում է քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք (խրախուսական նորմ) և այլն: Նկարագրված իրավիճակներում հանցանքը որակելիս *նախապարվությունը պետք է տրվի նոր օրենքին*, քանի որ այն սահմանափակում է քրեական պատասխանատվության շրջանակը և անձի իրավական կարգավիճակի տեսանկյունից նախատեսում առավել նպաստավոր պայմաններ:

Հարկ է նկատի ունենալ, որ նոր քրեական օրենքի գոյությունը, որով նախատեսվում է ինքնուրույն հանցավոր արարք, դեռևս չի վկայում այն մասին, որ այդ արարքն առաջին անգամ (նոր) է քրեականացվում: Հնարավոր են դեպքեր, երբ որպես ինքնուրույն նախատեսված արարքը, նախկինում, թեև ևս հանցավոր էր, սակայն այն կլանվում էր մեկ այլ ընդհանուր նորմում: Իսկ այժմ նոր քրեական օրենքով տվյալ արարքն առանձնացվել է՝ որպես ինքնուրույն հանցագործություն (հատուկ նորմ): Նկարագրված իրավիճակներում կիրառելի նորմի ընտրությունը ևս կատարվում է վերը նշված կանոններով:

3. *Նոր քրեական օրենքի դիսպոզիցիան առավել ընդգրկուն է, այսինքն՝ նախատեսում է հանցավոր համարվող արարքների կամ հանցակազմի այլընտրանքային հատկանիշների առավել լայն շրջանակ, քան հին օրենքինը:* Հաճախ քրեաիրավական նորմի դիսպոզիցիայի այսպիսի ընդարձակումներն ուղեկցվում են դրանց սանկցիաների խստացմամբ կամ պահպանմամբ, ինչի արդյունքում *քրեական օրենքին չի կարող շնորհվել հետադարձություն*<sup>157</sup>:

---

<sup>157</sup> Ст'а Безверхов А. Об обратной силе отдельных положений УК РФ о контрабанде, уклонении от уплаты таможенных платежей и взяточничестве // Уголовное право, 2012, № 5, էջեր 26-27:

4. Հին և նոր քրեական օրենքների դիսպոզիցիաները «խաչվում» են: Ասվածը վերաբերում է այն իրավիճակներին, երբ նոր քրեական օրենքի դիսպոզիցիան որոշակի հարաբերություններում առավել նեղ է, քան հին օրենքինն էր, և, միևնույն ժամանակ, նոր քրեական օրենքը տարածվում է առավել լայն շրջանակի հարաբերությունների նկատմամբ, քան հին օրենքն էր: Դրանով պայմանավորված՝ քրեաիրավական նորմի սանկցիան մնում է նույնը կամ մեղմանում: Նման դեպքերում անհրաժեշտ է վերլուծել մրցակցող քրեական օրենքները և այն, թե կոնկրետ ինչ է կատարել հանցավորը:

Որոշելու համար՝ այս կամ այն քրեական օրենքին պե՞տք է շնորհվի հետադարձ ուժ, թե՞ ոչ, միշտ անհրաժեշտ է ստանալ հետևյալ հարցերի հստակ պատասխանները. ո՞ր օրենքի համեմատ է կոնկրետ քրեական օրենքը մեղմ կամ խիստ համարվում, և տվյալ օրենքով նկարագրված ո՞ր կոնկրետ հանցանքի (իսկ երբեմն՝ տվյալ հանցակազմի ո՞ր այլընտրանքային հատկանիշի) կապակցությամբ է դրսևորվում այդ օրենքի մեղմ կամ խիստ լինելը: Նկարագրված իրավիճակներում քրեաիրավական նորմերի ժամանակային մրցակցության դեպքում կատարվածը կարող է որակվել (վերաորակվել) քրեական նոր օրենքով միայն, եթե կատարված արարքը նախատեսված է ինչպես նախկին, այնպես էլ նոր օրենքներով: Ընդ որում՝ նոր քրեական օրենքը դատարանին հնարավորություն է տալիս նշանակելու առավել մեղմ պատիժ և չի վատթարացնում մեղադրյալի (ամբաստանյալի) վիճակը՝ ի համեմատ հին քրեական օրենքի<sup>158</sup>:

5. *Նոր օրենքը միաժամանակ փոփոխում է նորմի և՛ դիսպոզիցիան, և՛ սանկցիան*: Եթե քրեական նոր օրենքի դիսպոզիցիան առավել նեղ շրջանակի արարքներ է ընդգրկում, իսկ սանկցիան՝ խիստ է կամ մեղմ, ապա անձի արարքում կա՛մ կբացակայի հանցակազմը, կա՛մ կատարվածը ենթակա է որակման այն օրենքի հոդվածով, որի սանկցիան առավել մեղմ է<sup>159</sup>:

<sup>158</sup> Տե՛ս Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений. М., 2004, էջեր 287-289:

<sup>159</sup> Տե՛ս Сабитов Р.А. Теория и практика уголовно-правовой квалификации: Научно-практическое пособие. М., 2013, էջ 566:

Եթե քրեական նոր օրենքով վերացվում է նորմի սանկցիայում նշված պատժի որոշակի տեսակների ստորին սահմանը, ապա դատարանը պետք է վերաորակի արարքը նոր օրենքով՝ նշանակելով առավել մեղմ պատիժ: Միևնույն ժամանակ ենթադրվում է, որ, եթե նոր քրեական օրենքը, մեղմացնելով պատիժը, կատարված արարքի համար սահմանում է պատժի այնպիսի ժամկետ, որն արդեն կրել է դատապարտյալը, ապա վերջինիս պատժի հետագա կրումը պետք է դադարեցվի՝ նոր քրեական օրենքի կիրառմամբ:

Տեսական և գործնական կարևոր նշանակություն ունի նաև հետևյալ հարցի պարզաբանումը. քրեաիրավական նորմերի ժամանակային մրցակցության դեպքում, ո՞ր նորմին պետք է տրվի նախապատվությունը, երբ քրեական նոր օրենքով կատարված փոփոխությամբ, ո՛չ վերացվում է արարքի հանցավորությունը, ո՛չ մեղմացվում պատիժը, ո՛չ էլ այլ կերպ բարելավվում հանցանք կատարած անձի վիճակը, իսկ ընդհանուր նորմից որպես հատուկ նորմ է առանձնացվում դրա առանձին դրսևորում: Այս պարագայում, ըստ էության, չի գործում օրենքի հետադարձ ուժի մեխանիզմը (չի գործում ընդհանուր կանոնից օրենքով սահմանված բացառությունը), և կատարվածը պահանջում է որակում այն կատարվելու պահին գործող օրենքով:

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի՝ ժամանակի մեջ գործողությունը կանոնակարգող հոդվածները միայն քրեական իրավունքի մեկ աղբյուրի շրջանակներում են դիտարկում ժամանակային մրցակցությունը՝ հաշվի չառնելով այլ աղբյուրների բովանդակային փոփոխությունները: Մինչդեռ վերջիններս, առանց քրեական օրենսգրքում կատարվող փոփոխությունների, կարող են փոփոխել քրեաիրավական նորմերի բովանդակությունը և ուղղակիորեն ազդել հանցանք կատարած անձի վիճակի վրա:

Մասնավորապես, դա կարող է տեղի ունենալ քրեաիրավական նորմի **բլանկետային մասի փոփոխության դեպքում**: Բանն այն է, որ քրեաիրավական նորմի բովանդակության «սնուցման աղբյուրը» միայն քրեական օրենսգրքում նկարագրված հոդվածի բովանդակությունը չէ: Քրեական օրենսգրքում նկարագրված որոշ հանցակազմերի հատկանիշների իրավական բովանդակությունը չի կրում խիստ ճյուղային բնույթ՝ սահմանափակվելով միայն քրեական օրեն-

քի շրջանակներում: Այդ նորմերը, ձգվելով իրավունքի համակարգում, իրենց արմատներն են ձգում իրավունքի մյուս ճյուղերում՝ օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում, իրենց մեջ բովանդակելով նաև դրանց իրավադրույթները: Հետևաբար, տվյալ իրավական ակտերի դրույթների փոփոխությունները, որոնք քրեաիրավական նորմերի մաս են դիտարկվում, ուղղակիորեն հանգեցնում են նաև քրեաիրավական նորմերի բովանդակային փոփոխության՝ առաջ բերելով նորմերի ժամանակային մրցակցությունից բխող բարդ և խնդրահարույց հարցեր:

Ասվածի կապակցությամբ նորմերի մրցակցության հաղթահարման խնդրին անդրադառնալիս հարկ է նկատել, որ քրեաիրավական նորմի բլանկետային մասը կարող է արտահայտված լինել իրավունքի այլ ճյուղերի նորմերում (քաղաքացիական, վարչական, հարկային և այլն), այլ օրենքներում («Ձեռքի մասին» ՀՀ օրենք և այլն) կամ ենթաօրենսդրական ակտերում (ՀՀ կառավարության «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, շրջանառությունն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, դրանց մանր, զգալի, խոշոր եվ առանձնապես խոշոր չափերը, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորների խոշոր և առանձնապես խոշոր չափերը. թունավոր նյութերի ցանկը, խիստ ներգործող նյութերի ցանկը և դրանց խոշոր չափերը սահմանելու մասին» 707-Ն որոշում): Ուստի, հարկ է արձանագրել, որ այս կամ այն արարքի ապաքրեականացում կարող է իրականացվել ոչ միայն քրեական օրենսգրքում անմիջականորեն փոփոխություններ կատարելու ճանապարհով, այլև իրավունքի այլ ճյուղի (այլ օրենքների, ենթաօրենսդրական ակտերի) նորմերում փոփոխություններ կատարելով: Դրանով պայմանավորված՝ կարելի է ասել, որ իրավունքի այլ ճյուղի նորմերի փոփոխության դեպքում ևս չի բացառվում քրեական օրենքին հետադարձ ուժ տալու հնարավորությունը այնքանով, որքանով դրանք սահմանափակում են քրեաիրավական կարգավորման ոլորտը:

Բլանկետային նորմերի փոփոխության դեպքում քրեական օրենքին հետադարձություն չնորհելու խնդրին անդրադարձել է ՀՀ Սահ-

մանադրական դատարանը՝ իրավական դիրքորոշում ձևավորելով առ այն, որ. «(...) երբ օրենսդիրը քրեական օրենքը շարադրելիս հղում է կատարում այլ օրենքների նորմերին, ապա դրանք որոշակիորեն վերաձվում են քրեական իրավունքի աղբյուրի: Նորմատիվ իրավական ակտերը, որոնց վրա կատարվում կամ ենթադրվում է հղում քրեաիրավական բլանկետային նորմով, էապես ազդում են հանցանքի իրավական բովանդակության և այդ հանցանքի համար քրեական պատասխանատվության կիրառման սահմանների վրա: Այսպիսով, յուրաքանչյուր փոփոխություն այն օրենքներում, որոնց հղում է կատարվում Օրենսգրքի բլանկետային նորմում, կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության ընդլայնման, նեղացման կամ վերացման: Ամեն պարագայում, թեև միայն քրեական օրենքն է, որ, միացնելով հանցակազմի բոլոր տարրերը, սահմանում է արարքի հանցավորությունը, այնուամենայնիվ, քրեական օրենքը պետք է դիտարկել բլանկետային նորմերի հետ միասնության մեջ: Հետևաբար՝ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքի հետադարձ ուժ ունենալու կանոնը վերաբերում է նաև այն օրենքներին, որոնց հղում է կատարվում Օրենսգրքի բլանկետային նորմով»<sup>160</sup>:

*Հետևաբար, այն դեպքերում, երբ քրեաիրավական նորմի բլանկետային մաս համարվող իրավունքի այլ ճյուղի (այլ օրենքների, ենթաօրենսդրական ակտերի) նորմերում կատարված փոփոխություններով վերանայվում են հանցաձևավորող այն հատկանիշները, որոնք հանգեցնում են այս կամ այն արարքի ապաքրեականացման, կամ անձի վիճակի այլ կերպ բարելավման, ապա հանցագործությունները որակելիս այդ նորմերին պետք է շնորհվի հետադարձություն:*

Մասնագիտական գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ քրեաիրավական նորմի բլանկետային մասի փոփոխությունը, որը կապված է տեխնիկական անվտանգության կանոնների և

---

<sup>160</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 16.04.2019թ. թիվ ՍԴՈ-1453 որոշումը:

տեխնիկա-իրավաբանական նորմերի հետ, չի կարող ունենալ հետադարձ ուժ<sup>161</sup>: Բացի այդ՝ նշվում է, որ քրեական օրենքին չի կարող շնորհվել հետադարձություն, եթե դրա բլանկետ համարվող *իրավունքի այլ ճյուղի նորմերով, այլ օրենքներով կամ ենթաօրենսդրական ակտերով սահմանվում է փոփոխվող նորմին հետադարձ ուժ տրամադրող արգելք*<sup>162</sup>: Այսպես, օրինակ՝ հարկային օրենսգրքում փոփոխություններին, որոնցով փոփոխվում է հարկի հաշվարկման դրույքաչափը, որի կիրառման հետևանքով անձի նախկինում կատարած արարքը այլևս չի համապատասխանում հանցակազմի պարտադիր հատկանիշ առարկայի չափին և, հետևաբար, չի համարվում հանցագործություն, չպետք է տրվի հետադարձ ուժ, եթե այդ փոփոխություններով նախատեսվում է դրա տարածման ուղղակի արգելք նախկինում ծագած հարաբերությունների նկատմամբ<sup>163</sup>:

ՀՀ իրավունքի համակարգում վերը նշված մոտեցումները, կարծես, չեն դիմանում քննադատության: ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Արարքի պատժելիությունը վերացնող կամ պարիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ»: Հարկ է արձանագրել, որ հոդվածում օգտագործվում է ոչ թե «քրեական օրենք», այլ «օրենք» եզրույթը: Վերոնշյալ դրույթի և՛ տառացի, և՛ համակարգային մեկնաբանությունից հետևում է, որ օրենքի հետադարձ ուժի կանոնը տարածվում է ցանկացած այլ օրենքների վրա, որոնց հղում է կատարվում քրեական օրենսգրքի բլանկետային նորմով՝ առանց որևէ բացառության: Հետևաբար՝ սահմանադրական տվյալ նորմի անմիջական գործողության արդյունքում քրեաիրավական հարաբերությունները կարգավորելիս և անձի քրեական պա-

<sup>161</sup> Տե՛ս Пикуров Н.И. Квалификация преступлений с бланкетными признаками состава: Монография. М.: Российская академия правосудия, 2009, էջ 164:

<sup>162</sup> Տե՛ս Сабитов Р.А., Сумский Д.В. Квалификация и переквалификация уголовно-правовых деяний. М.: Юрлитинформ, 2020, էջեր 326-327:

<sup>163</sup> Տե՛ս Пикуров Н.И. Квалификация преступлений с бланкетными признаками состава, էջ 164:



տասխանատվության սահմանները որոշելիս բլանկետային մասի փոփոխության դեպքում անձի վիճակը բարելավող քրեական օրենքին պետք է տրվի հետադարձ ուժ՝ անկախ բլանկետային նորմով կարգավորվող հարաբերությունների բնույթից և այն բանից, թե քրեական օրենքի բլանկետ համարվող իրավական ակտի փոփոխություններով սահմանվել է այդ կարգավորումներին հետադարձ ուժ տալու ուղղակի արգելք, թե՛ ոչ:

Քրեաիրավական նորմերի մրցակցությունն, ինչպես արդեն նշվել է, ոչ թե վերացական երևույթ է, այլ կոնկրետ իրավակիրառ վիճակ: Հետևաբար, ասվածի համատեքստում անհրաժեշտ է արձանագրել, որ կատարված կոնկրետ հանցավոր արարքի գնահատականի կապակցությամբ քրեաիրավական նորմերի ժամանակային մրցակցությունը գործում է, երբ անձի և պետության միջև հանցագործության փաստով ծագած քրեաիրավական հարաբերությունները դեռևս չեն դադարել: Այսինքն՝ նորմերի մրցակցությունը գործում է քրեական վարույթի բոլոր փուլերում, այդ թվում՝ հանցավորի պատժի կրման ամբողջ ընթացքում, մինչև դատվածության վերացումը կամ նրան քրեական պատասխանատվությունից ազատելը: Մինչդեռ, երբ անձի և պետության միջև դադարում են գոյություն ունենալ այդ քրեաիրավական հարաբերությունները, դադարում են նաև նորմերի ժամանակային մրցակցության հարցերը:

Հարկ ենք համարում նշել նաև, որ քրեաիրավական նորմերը մրցակցում են ըստ բովանդակության և ժամանակի մեջ, սակայն չեն հակասում միմյանց, ինչը թույլ է տալիս մրցակցությունը տարբերակել նորմերի կոլիզիայից: Այլ խոսքով՝ *նորմերի մրցակցությունը չպետք է շփոթել կոլիզիայի հետ*: Վերջինս առաջանում է օրենսդրության սխալներից, որոնք կարող են դրսևորվել բացթողումների (ճեղքվածքների), օրենսդրական տեխնիկայի խախտումների, կոլիզիոն հակասությունների լուծումն ուշացնելու տեսքով: Այսինքն, կոլիզիան՝ որպես նորմերի հակասություն, օրենսդրական տեխնիկայի ակնհայտ թերությունն է, որը պահանջում է վերացում, իսկ քրեաիրավական նորմերի մրցակցությունը, որն առաջանում է

հանցագործությունները որակելիս, ունի իր օբյեկտիվ նախադրյալները:

***Այսպիսով, վերոգրյալի հաշվառմամբ կարելի է առանձնացնել քրեահրավական նորմերի մրցակցության դեպքում հանցագործությունների որակման հետևյալ հիմնական կանոնները.***

1. Եթե հանցագործությունը միաժամանակ նախատեսված է ընդհանուր և հատուկ նորմով, հանցագործությունների համակցությունը բացակայում է, և քրեական պատասխանատվությունը վրա է հասնում միայն հատուկ նորմով: Այլ խոսքով՝ եթե անձի կատարած մեկ արարքում միաժամանակ առկա են ընդհանուր և հատուկ նորմերով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, ապա նախապատվությունը տրվում է հատուկ նորմին, և անձի արարքը որակվում է միայն դրանով:

2. Անձի արարքը ընդհանուր և հատուկ նորմերի համակցությամբ կարող է որակվել միայն այն դեպքում, երբ առկա է իրական համակցություն: Ընդհանուր և հատուկ նորմերը չեն կարող ձևավորել իդեալական համակցություն:

3. Եթե անձի կատարած մեկ արարքում միաժամանակ առկա են որակյալ և արտոնյալ նորմերով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, ապա նախապատվությունը տրվում է արտոնյալ նորմին, և անձի արարքը որակվում է միայն դրանով:

4. Եթե անձի կատարած մեկ արարքում միաժամանակ առկա են որակյալ և առավել որակյալ նորմերով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, ապա արարքը որակվում է առավել որակյալ նորմով:

5. Եթե անձի կատարած մեկ արարքում միաժամանակ առկա են հիմնական և ծանրացնող կամ ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքներով հանցակազմերի հատկանիշներ, ապա արարքը գնահատվում է որպես մեկ հանցագործություն և որակվում միայն ծանրացնող (կամ առավել ծանրացնող) հանգամանքը նախատեսող նորմով:

6. Եթե անձի արարքը միաժամանակ պարունակում է երկու կամ ավելի մեղմացնող հանգամանքներով նորմերի հանցակազմերի հատկանիշներ, ապա նախապատվությունը տրվում է առավել արտոնյալ նորմին, կամ որ նույնն է՝ այն նորմին, որով ավելի մեղմ պատասխանատվություն է նախատեսվում կատարված հանցանքի համար:

7. Մասի և ամբողջի մրցակցության դեպքում հանցավորի արարքը որակվում է միայն այն հոդվածով, որն առավել ամբողջական է արտացոլում կատարված արարքի փաստական հատկանիշները:

8. Մասի և ամբողջի մրցակցության դեպքում նորմ-մասի հատկանիշներն ընդգրկվում են նորմ-ամբողջի հանցակազմում: Եթե նորմ-մասի որևէ հատկանիշ չի ներառվում նորմ-ամբողջում, ապա կատարվածը որակվում է հանցագործությունների համակցությամբ:

9. Նորմ – մասը չի կարող հավասար կամ առավել խիստ պատժել, քան նորմ-ամբողջն ինքնին: Եթե քրեական օրենսգրքով նորմ-մասի համար նախատեսվում է հավասար կամ առավել խիստ պատիժ, քան նորմ-ամբողջի համար է, ապա կատարվածը որակվում է հանցագործությունների համակցությամբ:

10. Հանրորեն վտանգավոր արարքը որակվում է քրեական օրենքի այն հոդվածով, որը գործել է այդ արարքը կատարելու պահին:

11. Եթե քրեական նոր օրենքը վերացնում է արարքի հանցավորությունը, ապա անձի արարքը չի կարող որակվել որպես հանցագործություն:

12. Եթե քրեական նոր օրենքը չի վերացնում արարքի հանցավորությունն ամբողջովին, այլ միայն փոփոխում է դրա որակման կանոնը, ապա պատժի մեղմացման դեպքում, անձի արարքը ենթակա է վերաորակման քրեական նոր օրենքի հոդվածով: Պատժի խստացման դեպքում արարքի վերաորակում չի կատարվում, և հանցավորի արարքը որակվում է հին օրենքի հոդվածով:

13. Եթե քրեական նոր օրենքը մեղմացնում է արարքի պատժելիությունը կամ այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի

վիճակը, ապա դրան պետք է տրվի հետադարձ ուժ, իսկ անձի արարքը վերադարձվի նոր քրեական օրենքով:

14. Եթե քրեական նոր օրենքի հոդվածի դիսպոզիցիան և սանկցիան համապատասխանում են հին օրենքի հոդվածի դիսպոզիցիային և սանկցիային, ապա անձի արարքը որակվում է այն օրենքի հոդվածով, որը գործել է դա կատարելու պահին:

15. Եթե քրեական նոր օրենքը խստացնում է արարքի պատժելիությունը, ապա այն չի կարող հետադարձ ուժ ունենալ:

16. Եթե միջանկյալ քրեական օրենքը առավել մեղմ կամ բարենպաստ է հանցանք կատարած անձի համար, քան այն օրենքը, որը գործել է հանցանք կատարելու պահին, ապա գործում է միջանկյալ օրենքը: Եթե միջանկյալ քրեական օրենքը առավել մեղմ կամ բարենպաստ է հանցանք կատարած անձի համար, քան այն օրենքը, որը գործել է հանցանք կատարելու պահին, սակայն առավել խիստ է, քան քրեական նոր օրենքը, ապա գործում է քրեական նոր օրենքը, և անձի արարքը պետք է վերադարձվի քրեական նոր օրենքով:

17. Եթե քրեաիրավական նորմի բլանկետային մաս համարվող իրավունքի այլ ճյուղի (այլ օրենքների, ենթաօրենսդրական ակտերի) նորմերում կատարված փոփոխություններով վերանայվում են հանցաձևավորող հատկանիշները, որոնք հանգեցնում են այս կամ այն արարքի ապաքրեականացման կամ անձի վիճակի այլ կերպ բարելավման, ապա հանցագործությունները որակելիս այդ նորմերին շնորհվում է հետադարձություն:

## ԳԼՈՒԽ 5.

### ՀԱՆՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐԱԿՈՒՄԸ

#### 5.1. Որակումն ըստ հանցակցության ընդհանուր հատկանիշների

Հանցակցությամբ կատարված հանցագործությունների որակումը քրեական իրավունքի գիտության և դատական պրակտիկայի առավել բարդ ու վիճահարույց հարցերից է: Չնայած հանցակցությունը՝ որպես քրեաիրավական ինստիտուտ, բազմիցս քննարկվել է իրավաբանական գրականության մեջ, սակայն մինչ օրս բացակայում են դրա որակման հարցերի վերաբերյալ միասնական մոտեցումներն ու տեսակետները: Հանցակցության տիրույթում այս ինստիտուտին բնորոշ խնդիրները սերտորեն միահյուսվում են քրեական իրավունքի ճյուղային հիմնախնդիրներին՝ այդպես առավել դժվարեցնելով խնդրո առարկա հարցերի կապակցությամբ առաջարկվող լուծումները: Իր հերթին՝ հանցակիցների արարքների քրեաիրավական գնահատականի՝ գիտագործնական տեսանկյունից մեծ հետաքրքրություն ներկայացնող առանձին հարցադրումներ շարունակում են մնալ չքննարկված: Արդյունքում, իրավակիրառ պրակտիկան ընթանում է տարբեր ճանապարհներով՝ զրկվելով իր միասնականությունից: Ուստի, պատահական չէ, որ դեռևս XIX դարում գերմանացի քրեաբան Շյուտցը նկատել է, որ հանցակցության վերաբերյալ դոկտորինն այնպիսի ավգյան ախոռ է, որը մաքրելու համար անհրաժեշտ է ամբողջ հարյուրամյակ<sup>164</sup>:

Ասվածով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում քննարկելու այն հիմնախնդիրները, որոնք առնչվում են համատեղ հանցավոր գործունեության մեջ անձանց արարքներին քրեաիրավական գնահատական տալու հարցերին:

Ընդհանուր հանցավոր մտադրությունը և արարքների փոխլրացմամբ միասնական հանցավոր արդյունքին հասնելու գաղափարը հանցակիցների միջև ստեղծում են յուրատիպ օբյեկտիվ և սուբյեկտիվ կապեր, որոնք դրսևորվում են նրանց դերից բխող արարքների

<sup>164</sup> Տե՛ս Таганцев Н.С. Русское уголовное право. Т. 1. Тула, 2001, էջ 778:

համատեղության և այդ վարքագծի ու համատեղ ջանքերի արդյունքում հանցավոր հետևանքների հասնելու ցանկության մեջ<sup>165</sup>:

Հանցակիցների միջև գոյություն ունեցող այս կապերն առաջացնում են նրանց արարքների փոխազդեցություն և դրանից բխող իրավական նշանակության բարդ ու խնդրահարույց հարցեր: Հանցակիցների արարքների փոխազդեցության շնորհիվ նրանցից յուրաքանչյուրի վարքագծին տրվելիք քրեաիրավական գնահատականն իր ազդեցությունն է ունենում մյուս հանցակիցների արարքների որակման վրա, ինչը պահանջում է ինչպես հանցակցության, այնպես էլ քրեական իրավունքի ընդհանուր այլ ինստիտուտները կանոնակարգող իրավանորմերի ճշգրիտ մեկնաբանում և կիրառում:

Հարկ է նկատի ունենալ, որ *յուրաքանչյուր դեպքում հանցակցության որակման գործընթացը սկսվում է ոչ թե դրա ձևի կամ տեսակի պարզումից, այլ հանցակցության ընդհանուր հատկանիշների (օբյեկտիվ և սուբյեկտիվ) վեր հանումից և հաստատումից:*

«Հ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցակցություն է համարվում երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը»: Տվյալ հոդվածով թվարկվում են հանցակցության պարտադիր հատկանիշները. 1) անձանց բազմակիություն, 2) արարքների համատեղություն, 3) հանցակցության դիտավորյալ բնույթ և 4) դիտավորյալ հանցագործությանը հանցակցություն: Օրենսդրական վերոհիշյալ ձևակերպման՝ վեճերի և տարակարծիք մեկնաբանությունների տեղիք տվող խնդիրը թերևս այն է, որ հոդվածում բացակայում է հանցակիցների քրեական դեյլիկտունակության վերաբերյալ հստակ նշումը: Այլ խոսքով՝ հարց է առաջանում. հոդվածում օգտագործված «անձ» եզրույթը պետք է հասկանալ միայն որպես քրեական իրավունքի իմաստով պատասխանատվության ենթակա՝, թե՞ երկու անձանցից միայն մեկի հանցագործության սուբյեկտ լինելը բավարար

<sup>165</sup> Քրեական իրավունքի տեսության մեջ հանցակցության այս հատկանիշը հաճախ անվանվում է «երկկողմանի սուբյեկտիվ կապ» կամ հանցակիցներից յուրաքանչյուրի կողմից մյուսի վարքագծի վերաբերյալ «փոխադարձ տեղեկացվածություն»: Տե՛ս Водько Н.П. Уголовно–правовая борьба с организованной преступностью. М., 2000, էջ 15:

է վերջինիս արարքը հանցակցության տիրույթում դիտարկելու համար<sup>166</sup>:

«Հ իրավակիրառ պրակտիկայում նշված տարակարծությունների առիթը, կարելի է ասել՝ չեզոքացվեց ՀՀ Վճռաբեկ դատարանի համապատասխան որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներով:

Այսպես, անդրադառնալով հանցակցության հատկանիշների վերլուծությանը, Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի վերաբերյալ գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «(...) *հանցակցությանը բնորոշ են երեք հիմնական հատկանիշ, դրանք են՝*

1) *հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից,*

2) *գործողությունների համարեղությունը,*

3) *հանցակցության դիպավորյալ բնույթը:*

*Հանցակցության առաջին օբյեկտիվ հատկանիշը՝ հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից, արտահայտվում է այն բանում, որ հանցագործությունը պետք է կատարեն հանցագործության սուբյեկտ հանդիսացող երկու կամ մի քանի անձ: Հանցակիցներ կարող են լինել քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի հասած մեղսունակ ֆիզիկական անձինք: Հանցակցության համար անհրաժեշտ է հանցագործության սուբյեկտի բոլոր հատկանիշներով օժտված ոչ պակաս երկու անձի առկայությունը: (...):»<sup>167</sup>*

<sup>166</sup> Այս հարցադրմանն են առնչվում նաև Ռուսաստանի Դաշնության դատական պրակտիկայում տրված տարաբնույթ մեկնաբանությունները: Այսպես, հանցակցությունը, մի դեպքում, մեկնաբանվում է որպես քրեական պատասխանատվության ենթակա երկու կամ ավելի անձի առկայություն, մյուս դեպքում՝ երկու անձանցից միայն մեկի սուբյեկտ լինելով՝ կատարվածում հավաստվում է հանցակցության առկայությունը: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Пудовочкин Ю.Е. Судебная практика квалификации преступлений, совершенных в соучастии // Криминологический журнал Байкальского государственного университета экономики и права. № 2. Иркутск, 2011, էջեր 5-15:

<sup>167</sup> Տե՛ս Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի վերաբերյալ գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 25.07.2008թ. թիվ ՎԲ-48/08 որոշման 28-րդ կետը:

Այսինքն, հանցակցության առաջին օբյեկտիվ չափանիշն, ըստ ՀՀ Վճռաբեկ դատարանի, հանցանքը քրեական պատասխանատվության **սուբյեկտ հանդիսացող առնվազն երկու անձի կողմից կատարելն է**: Պրակտիկայում, սակայն, պատահում են դեպքեր, երբ հանցանքի կատարմանը մասնակցած երկու անձանցից միայն մեկն է լինում տվյալ հանցագործության սուբյեկտ, իսկ մյուսը՝ ոչ (կա՛մ հասած չի լինում քրեական պատասխանատվության տարիքի, կա՛մ չի համապատասխանում տվյալ հանցագործության սուբյեկտի՝ օրենքով նախատեսված չափանիշներին, կա՛մ հանցանքը կատարում է անմեղսունակության վիճակում և այլն): Փաստորեն՝ նկարագրված իրավիճակներում բացակայում է հանցակցությունը, և հարց է ծագում, թե ինչպե՛ս որակել կատարվածը, եթե հանցագործության մասնակից երկու անձանցից միայն մեկն է բավարարում տվյալ հանցագործության սուբյեկտի համար օրենքով որոշված չափանիշներին (կամ միայն մեկն է ենթակա պատասխանատվության տվյալ հանցանքը կատարելու համար):

Դրանով պայմանավորված՝ հնարավոր են որակման հետևյալ իրավիճակները.

*ա) եթե անձը հանցագործության օբյեկտիվ կողմի կատարմանը մասնակցում է այլ անձի հետ համատեղ, չգիտակցելով, որ վերջինս տվյալ հանցագործության համար ենթակա չէ քրեական պատասխանատվության, ապա առկա է փաստական սխալ, և նրա արարքը պետք է որակվի որպես հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարելու փորձ (եթե, իհարկե, հանցակազմը պարունակում է այդպիսի ծանրացնող հատկանիշ):* Օրինակ՝ եթե անձը, նախնական համաձայնությամբ, գողության օբյեկտիվ կողմն իրականացնում է այնպիսի անձի հետ, ում 14 տարին չի լրացել, չգիտակցելով այդ հանգամանքը, ապա նրա արարքը, այլ ծանրացնող հանգամանքների բացակայության դեպքում, անհրաժեշտ է որակել ՀՀ քր. օր.-ի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ որպես մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված գողության փորձ,

*բ) եթե անձը հանցագործության օբյեկտիվ կողմի կատարմանը մասնակցում է այլ անձի հետ համատեղ, բայց գիտակցում է, որ վերջինս տվյալ հանցագործության համար ենթակա չէ քրեական*



պատասխանատվության, ապա նրա արարքը ենթակա է որակման որպես տվյալ հանցագործության հասարակ տեսակ: Օրինակ՝ եթե անձը, նախնական համաձայնությամբ, գողության օբյեկտիվ կողմն իրականացնում է այնպիսի անձի հետ, ում 14 տարին չի լրացել, և գիտակցում է վերջինիս՝ քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելը, ապա նրա արարքը, այլ ծանրացնող հանգամանքների բացակայության դեպքում, ենթակա է որակման ՀՀ քր. օր.-ի 177-րդ հոդվածի 1-ին մասով՝ որպես հասարակ գողություն,

գ) եթե անձը գիտակցում է, որ հանցագործության օբյեկտիվ կողմի կատարմանը մասնակցում է տվյալ հանցագործության համար պատասխանատվության ոչ ենթակա անձի հետ, մինչդեռ հանցանքը կատարելուց հետո պարզվում է, որ վերջինս այդ հանցագործության սուբյեկտ էր, ապա հանցավորի արարքը այս դեպքում ևս պետք է որակվի որպես տվյալ հանցագործության հասարակ տեսակ, քանի որ հանցակազմի ծանրացնող հատկանիշը չի կարող մեղսագրվել անձին, եթե չի գիտակցվել վերջինիս կողմից (ՀՀ քր. օր.-ի 29-րդ հոդվածի 5-րդ մաս): Օրինակ՝ եթե անձը համոզված է, որ գողության օբյեկտիվ կողմի կատարմանը մասնակցում է 14 տարին չլրացած անձի հետ, մինչդեռ հանցանքը կատարելուց հետո պարզվում է, որ վերջինս 16 տարեկան էր, ապա նրա արարքը, այլ ծանրացնող հանգամանքների բացակայության դեպքում, ենթակա է որակման ՀՀ քր. օր.-ի 177-րդ հոդվածի 1-ին մասով՝ որպես հասարակ գողություն: Իսկ 16 տարին լրացած անձի արարքը, եթե նա գիտակցել է, որ գողությունը կատարում է տվյալ հանցագործության սուբյեկտ համարվողի հետ, այլ ծանրացնող հանգամանքների բացակայության դեպքում, պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ որպես մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված գողություն,

դ) եթե հանցագործության օբյեկտիվ կողմի կատարմանը մասնակցում են երկու անձ, որոնցից միայն մեկն է համապատասխանում տվյալ հանցագործության սուբյեկտի հատկանիշներին, ապա այդ հանցագործության սուբյեկտի հատկանիշներին չհամապատասխանող անձի արարքը որպես հանցագործություն կարող է որակվել, միայն, եթե նրա փաստացի կատարածը պարունակի այլ հանցակազմ: Օրինակ՝ եթե հասարակական, քաղաքական կամ պե-

տական գործչի սպանությանը, համապատասխան նպատակով, մասնակցում են երկու անձ, որոնցից մեկը 18 տարեկան է, իսկ մյուսը՝ 15, վերջինիս արարքը, այլ հատկանիշների առկայության դեպքում, պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի հոդված 104-ով:

ե) եթե ընդհանուր հանցակցության ձևի դեպքում (հանցակցություն՝ դերերի բաժանմամբ) հանցագործության կատարմանը մասնակցող երկու անձանցից միայն մեկն է ենթակա քրեական պատասխանատվության տվյալ հանցագործության համար, իսկ հանրորեն վրանգավոր արարքի անմիջական կատարողը՝ ոչ, ապա հանցակցությունը բացակայում է: Նշված իրավիճակում կարող է խոսք գնալ կա՛մ միջնորդավորված կատարման, կա՛մ չհաջողված հանցակցության մասին՝ համապատասխան քրեաիրավական բընույթի հետևանքներով (յուրաքանչյուր իրավիճակ կքննարկվի սույն պարագրաֆի համապատասխան հատվածում):

Հանցակցության մյուս օբյեկտիվ հատկանիշը՝ **հանցակիցների գործունեության համատեղությունը**, ըստ ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ «(...) նշանակում է, որ հանցագործության մասնակիցներից յուրաքանչյուրի գործողությունները փոխադարձ լրացնում են միմյանց և ուղղված են կոնկրետ հանցանքի կատարմանը: Հանցակիցները, միացնելով իրենց համատեղ ջանքերը, ձգտում են միասնական արդյունքի, և դրա համար յուրաքանչյուրն իր ներդրումն է ունենում ընդհանուր գործում (...):»<sup>168</sup>:

Այս կապակցությամբ անվանի քրեագետ Ն.Ս. Տազանցևն արդարացիորեն ընդգծում է. «Ինչպես նվագախմբում չի կարելի երաժշտական կատարումը վերագրել մեկ անձի, այնպես էլ հանցակցության դեպքում հնարավոր չէ առանձնացնել մեկ պատճառողին ընդհանուր արդյունքից»<sup>169</sup>:

Արարքների համատեղությունը դրսևորվում է բոլոր հանցակիցների համար ցանկալի հանցավոր հետևանքի առաջացման մեջ: Այս կապակցությամբ իրավակիրառողը կրում է ուղղակի պարտականություն ապացուցելու յուրաքանչյուր հանցակցի անհատական

<sup>168</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 25.07.2008թ. թիվ ՎԲ-48/08 որոշման 28-րդ կետը:

<sup>169</sup> Տե՛ս Таганцев Н.С. Русское уголовное право: в 2 т. Т. 1. СПб., 1902, էջ 743:

ներդրումը ընդհանուր գործում: Դա էլ, իր հերթին, պահանջում է, որ դատավարական համապատասխան ակտերում (որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, մեղադրական եզրակացություն, դատավճիռ և այլն) իրավախախտման փաստը կոնկրետացվի յուրաքանչյուր հանցակցի մասով, իսկ դրա հանգամանքներն անհատականացվեն: Այսինքն՝ յուրաքանչյուր հանցակցի ներդրումը պետք է իր իրավական արտահայտությունը գտնի հանցակիցների մեղադրանքը բովանդակող դատավարական փաստաթղթերում:

Հանցակիցների գործունեության համատեղությունը ենթադրում է նաև յուրաքանչյուր հանցակցի գործողությունների և ընդհանուր հանցավոր հետևանքի միջև **պատճառական կապի** առկայություն: Պատճառական կապը համարվում է անհրաժեշտ և պարտադիր պայման՝ անձի արարքը հանցակցության տիրույթում դիտարկելու և վերջինիս, որպես հանցակից, քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Կազմակերպչի, դրդիչի և օժանդակողի արարքների ու հանցավոր արդյունքի միջև առկա պատճառական կապը կրում է միջնորդավորված բնույթ, որը հիմնվում է քրեական իրավունքում հայտնի «causa causae est causa causati» (պատճառի պատճառն արդյունքի պատճառն է) սկզբունքի վրա: Հանցակցության պարագայում պատճառական կապը դրսևորվում է. առաջին՝ մյուս հանցակիցների արարքների և կատարողի արարքների միջև, այսինքն՝ հանցակիցների արարքներն անհրաժեշտ պայման են հանդիսանում կատարողի կողմից արարք կատարելու համար, երկրորդ՝ կատարողի արարքների և հանցավոր հետևանքի միջև:

Բացի այդ՝ մյուս հանցակիցների արարքների և հիմնական հանցավոր արդյունքի միջև պատճառական կապի առկայությունն այն հիմնական չափանիշն է, որը թույլ է տալիս հանցակցությունը տարանջատել դրան հարակից մեկ այլ ինստիտուտից՝ առնչակցությունից:

Հանցակցության վերջին հատկանիշն, ըստ ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ «(...) **գործունեության դիֆավորյալ բնույթն է:** ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածը, որը տալիս է հանցակցության հասկացությունը, կոնկրետ մատնանշում է անձանց դիֆավորյալ մասնակցությունը դիֆավորյալ հանցագործության կատարմանը: Հանցակցության նման բնորոշումը հստակ ընդգծում է, որ անձինք գոր-

ծում են միայն դիտարկողյալ մեղքով և միայն դիտարկողյալ հանցագործություններում»<sup>170</sup>:

Հանցակցության այս հատկանիշից հետևում է, որ՝

ա) *անզգույշ հանցագործություններում հանցակցությունը բացառվում է,*

բ) *հանցակցությունն անզգուշությամբ հնարավոր չէ:*

Անձանց դիտարկողյալ մասնակցությունը դիտարկողյալ հանցագործությանը նշանակում է, որ յուրաքանչյուր հանցակցի մեղքի բովանդակության մեջ պետք է արտացոլվեն այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք կազմում են հանցակցության օբյեկտիվ հատկանիշները: Չնայած նրան, որ հանցակիցները միավորում են իրենց համատեղ ուժերը ցանակալի հանցավոր արդյունքին հասնելու համար, պայմանավորված դերով՝ հանցագործությանը նրանց մասնակցության բնույթը կարող է տարբեր լինել: Կախված այդ դերից՝ կարող է տարբերվել նաև հանցակիցների դիտարկողության բովանդակությունը, որը երբեմն անտեսվում է իրավակիրառողների կողմից:

Հանցակցի դիտարկողության ինտելեկտուալ (գիտակցական) չափանիշը բնութագրող առաջին առանձնահատկությունը, ինչպես արդարացիորեն նկատում է Մ.Ի.Կովալյովը, այն է, որ, *ի տարբերություն միայնակ գործող անձի վարքագծի, հանցակիցը գիտակցում է ոչ միայն այն հանգամանքները, որոնք բնութագրում են սեփական վարքագիծը, այլև նրանք, որոնք բնորոշ են մյուս հանցակիցների հանցավոր գործունեությանը*<sup>171</sup>:

Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր հանցակից պետք է գիտակցի այն հանգամանքը, որ հանցանքը կատարում է այլ անձանց (հանցակիցների) հետ համատեղ:

Քրեական իրավունքի գիտության մեջ հանցակիցների այդպիսի փոխադարձ տեղեկացվածությունն անվանվում է **երկկողմանի սուբյեկտիվ կապ**, ինչի շնորհիվ հանցակիցների դիտարկողությունը համարվում է միասնական:

<sup>170</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 25.07.2008թ. թիվ ՎԲ-48/08 որոշման 28-րդ կետը:

<sup>171</sup> Տե՛ս Ковалев М.И. Соучастие в преступлении: Монография. Екатеринбург, 1999, էջ 72:

Հանցակցության առկայությունը հավաստելու համար անհրաժեշտ է կատարողի և առնվազն մեկ այլ հանցակցի հանցավոր գործունեության փոխադարձ տեղեկացվածություն: Ասվածից ենթադրվում է, որ հանցագործության անմիջական կատարողը պետք է գիտակցի, որ իր հետ հանցագործությանը մասնակցում է կազմակերպիչը, դրդիչը, օժանդակողը կամ այլ կատարողը (համակատարողը), իսկ վերջիններս էլ, իրենց հերթին, պետք է գիտակցեն կատարողի գոյության մասին և հասկանան, որ իրենց գործողություններով նպաստում են բոլորի համար ցանկալի հանցավոր արդյունքի առաջացմանը: Միևնույն ժամանակ, կազմակերպիչի, դրդիչի և օժանդակողի միջև փոխադարձ սուբյեկտիվ կապի պարտադիր առկայություն չի պահանջվում, ինչը նշանակում է, որ հանցագործության դրդիչը կարող է չիմանալ օժանդակողի գոյության մասին և հակառակը: Այդպիսով՝ նշված հանգամանքը չի բացառում հանցակցության առկայությունը:

Հանցակցի դիտավորության հաջորդ առանձնահատկությունը դրա կամային չափանիշի մեջ է: Հանցակիցների դիտավորության կամային չափանիշին բնորոշ է այն, որ *հանցակիցներից յուրաքանչյուրը փոխադարձ համաձայնությամբ ցանկանում է հանցանքի կատարմանը մասնակցել այլ անձի հետ համատեղ*: Այդ համաձայնեցվածությունը հանցակիցների միջև գոյություն ունեցող այն հոգեբանական կապն է, որը սուբյեկտիվ կողմից բնութագրում է նրանց արարքների համատեղությունն ու արարքների փոխլրացմամբ ցանկալի հանցավոր արդյունքի առաջացումը: Հանցակցության այդ անխզելի տարրի բացակայությունը բացառում է վերջինիս գոյությունը:

Ուշագրավ է այն իրողությունը, որ կազմակերպիչի, դրդիչի և օժանդակողի դիտավորության կամային չափանիշի բովանդակությունը սպառվում է ոչ միայն նրանց դերից բխող գործողություններում, այլև կատարողի կողմից առաջացրած հանցավոր արդյունքի մեջ: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ հանցանքի կապակցությամբ կատարողի և մյուս հանցակիցների դիտավորության տեսակը կարող է լինել տարբեր: Հնարավոր է՝ կատարողը հանցանքը կատարի ուղղակի դիտավորությամբ, մինչդեռ օժանդակողը, նրան օգնություն ցույց տալիս, հանցավոր հետևանքի նկատմամբ դրսևորի անուղղակի դիտավորություն: Այսինքն՝ թեև օժան-

դակողը չցանկանա, սակայն գիտակցի կատարողի կողմից իր տրամադրած օգնությամբ հանցանքի կատարումը: Այս կապակցությամբ Մ.Ի.Կովալյովն արդարացիորեն նկատում է. «Օժանդակության դեպքում ուղղակի դիտավորություն առկա է այնտեղ, որտեղ առկա է հանցանքի կատարմանն օգնություն ցույց տալու ցանկությունը, և ոչ թե այնտեղ, որտեղ կա ցանկություն տուժողին մահացած տեսնելու»<sup>172</sup>:

Հարկ է փաստել, սակայն, որ, եթե այլ հանցակիցը հանցագործությանը մասնակցում է անուղղակի դիտավորությամբ, ապա, կատարողի կողմից հանցանքը իր կամքից անկախ հանգամանքներով ավարտին չհասցնելու դեպքում, նրա արարքը չի կարող որակվել որպես չավարտված հանցագործություն: Այս մոտեցումը բխում է չավարտված հանցագործության օրենսդրական այն բնորոշումից, որ չավարտված հանցագործությանը բնութագրական է միայն ուղղակի դիտավորությունը (ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 34 և 35):

Հանցակցության սուբյեկտիվ հատկանիշներին ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև Ա.Միքայելյանի և Ա.Վաղարշալյանի գործով կայացված որոշման մեջ՝ արձանագրելով, որ «(...) հանցակցի քրեական պատասխանատվության հիմքում ընկած է ոչ միայն նրա և կատարողի արարքի միջև պատճառական կապի առկայությունը, այլ նաև նրա կողմից կատարողի արարքի և դրա հետևանքների նկատմամբ որոշակի գիտակցական-կամային վերաբերմունք դրսևորելը: Այսպես՝ հանցակցության սուբյեկտիվ կողմը նախատեսում է մեղքի բացառապես դիտավորյալ ձև, ընդ որում, որոշակի հանցանքի կատարմանն այլ անձանց հետ համատեղ մասնակցելու դիտավորությունն արտահայտվում է միայն ուղղակի ձևով, իսկ հանցագործության վրանգավոր հետևանքների նկատմամբ դրսևորվող դիտավորյալ մեղքի տեսակը կարող է լինել և՛ ուղղակի, և՛ անուղղակի:

(...) Հանցակցության սուբյեկտիվ կողմին բնորոշ է այն, որ յուրաքանչյուր հանցակից պետք է՝

1) գիտակցի, որ համատեղ գործում է կատարողի կամ այլ հանցակցի հետ.

2) գիտակցի, որ իր արարքն անհրաժեշտ պայման է մյուս հան-

<sup>172</sup> Տե՛ս Ковалев М.И., նույն աշխատ., էջ 86:

ցակցի կողմից արարք կատարելու համար և ցանկանա համարել նասնակցել հանցագործությանը.

3) նյութական հանցակազմի դեպքում նախատեսի հանրորեն վրանգավոր հետևանքը և ցանկանա կամ գիտակցաբար թույլ տա դրա առաջացումը»<sup>173</sup>:

Ինչպես քրեական իրավունքի ազգային դոկտրինը, այնպես էլ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ հանցակցության սուբյեկտիվ կողմին տրված մեկնաբանությունները, հիմնվում են հանցակիցների միջև **երկկողմանի սուբյեկտիվ կապի** գաղափարի վրա, ինչը բացառում է հանցակցությունն այն դեպքերում, երբ մեկը մասնակցում է հանցագործությանը մյուսից գաղտնի: Մինչդեռ, քրեական իրավունքի գիտության մեջ բացակայում է միանշանակ դիրքորոշում այն հարցի կապակցությամբ, թե ինչպես պետք է որակվի անձանց արարքը նրանց միջև **միակողմանի սուբյեկտիվ կապի** առկայության դեպքում:

Միակողմանի սուբյեկտիվ կապի առկայությունը նշանակում է, որ հանցավոր հետևանքը օբյեկտիվորեն առաջանում է երկու կամ ավելի անձանց արարքների հետևանքով, սակայն մասնակիցներից միայն մեկն է գիտակցում, որ հանդես է գալիս «գաղտնի հանցակցի» դերում: Օրինակ՝ անձը, իմանալով, որ հափշտակություն է նախապատրաստվում պահեստարանից, նախօրոք անջատում է ազդանշանային համակարգը՝ հափշտակություն կատարողին օգնած լինելու նպատակով: Թեև նշված իրավիճակում ազդանշանային համակարգն անջատող անձի արարքների և հանցավոր հետևանքի միջև առկա է պատճառական կապ, և այդ արարքն անհրաժեշտ պայման է կատարողի կողմից հանացանքը հաջողությամբ իրականացնելու համար, սակայն, միևնույն է, ՀՀ քր. օր.-ում ամրագրված հանցակցության հասկացությունը և հանցակցության հատկանիշներին ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանությունները բացառում են տվյալ իրավիճակում անձի արարքը որպես հանցակցություն գնահատելու հնարավորությունը: Լավագույն դեպքում, երբ խոսքը վերաբերի ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններին, «գաղտնի հանցակցող» անձի արարքը կարող է

<sup>173</sup> Տե՛ս Արամ Արշավիրի Միքայելյանի և Արայիկ Ժորժիկի Վաղարշակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԱԲԴ/0174/01/11 որոշման 17-րդ կետը:

որակվել որպես համապատասխան հանցագործության նախապատրաստություն, նույնիսկ այն պարագայում, երբ կատարողը ավարտին հասցնի հանցավոր մտադրության իրականացումը<sup>174</sup>:

Նկարագրված իրավիճակները, կարծես, անհրաժեշտություն են առաջացնում վերանայելու հանցակցության սուբյեկտիվ հատկանիշների քրեաիրավական բովանդակությունը: Կարծում ենք, որ տրամաբանական կլինի հետևյալ մոտեցումը.

- այն անձի արարքը, ով «գաղտնի հանցակցում է» մյուս անձի կողմից իրականացվող հանցագործությանը, պետք է որակվի հանցակցության կանոններով,:
- այն անձի արարքը, ով չի գիտակցել մեկ այլ անձի հետ համատեղ հանցանքը կատարելու հանգամանքը, չի կարող քննարկվել հանցակցության տիրույթում:

Այսպես, օրինակ՝ եթե Ա-ն սպանություն կատարելիս չի գիտակցում, որ իրեն օգնելու նպատակով տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմի իրականացմանը մասնակցում է Բ-ն, ապա նրա արարքը, այլ ծանրացնող հանգամանքների բացակայության դեպքում, կորակվի ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 1-ին մասով՝ որպես հասարակ, իսկ Բ-ի արարքը՝ նույն հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով՝ որպես խմբի կողմից կատարված սպանություն: Մինևնույն ժամանակ, եթե նկարագրված իրավիճակում Բ-ն հանդես գա ոչ թե որպես տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմի կամ դրա մի մասի իրականացնող, այլ տվյալ հանցագործության, օրինակ՝ օժանդակողի դերից բխող գործողությունների կատարող, ապա նրա արարքը կորակվի ՀՀ քր. օր.-ի 38–104-րդ հոդվածի 1-ին մասով՝ որպես հասարակ սպանության օժանդակություն:

*Հանցակցության սուբյեկտիվ կողմին բնորոշ է նաև հանցակիցների մոտ ընդհանուր հանցավոր նպատակին հասնելու դիտավորությունը:* Ասվածը նշանակում է, որ հանցակիցներից յուրաքանչյուրը ցանկանում է իրականացնել հանրորեն վտանգավոր արարք (ձևական հանցակազմերի դեպքում) կամ հասնել իրենց համար ցանկալի հանցավոր հետևանքի առաջացմանը (նյութական հանցակազմերի

---

<sup>174</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով): Դասագիրք բուհերի համար: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 265:



դեպքում): Քրեաիրավական պաշտպանության օբյեկտի դեմ ոտնձգությունը կամ այդպիսի սպառնալիքի առաջացումը հանցակիցների համատեղ գործունեության ընդհանուր և միասնական արդյունքն է: Հետևաբար, հանցակցությունը բացակայում է այն դեպքերում, երբ հանցավոր իրադարձությանը մասնակից անձանցից յուրաքանչյուրի դիտավորության մեջ ընդգրկված է լինում տարբեր հանցավոր արդյունքի հասնելու մտադրությունը<sup>175</sup>:

Հանցակցությունը բնութագրող ընդհանուր հատկանիշների, մասնավորապես, հանցակցի դիտավորության կամային չափանիշի առանձնահատկությունները, դատական պրակտիկայում երբեմն արժանանում են խիստ վիճահարույց մեկնաբանության (այդ թվում՝ նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից): Խոսքը վերաբերում է նրան, որ հանցակցություն է գնահատվում նույնիսկ այն անձի արարքը, որը գիտակցել է կատարողի կողմից հանցանքը կատարելու անհնարինությունը՝ կապված իր կողմից ձեռնարկված գործողությունների հետ: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը Ռ.Պապյանի վերաբերյալ թիվ ՏԴ/0053/01/12 քրեական գործով սահմանել է «կարծեցյալ միջնորդի» արարքի որակման հետևյալ կանոնը. Այն դեպքում, երբ *կաշառք տալու նախաձեռնություն ցուցաբերում է «կարծեցյալ միջնորդը», ով համոզում է կաշառք տվողին, որ ինքն անհրաժեշտ կապեր ունի համապատասխան պաշտոնատար անձի հետ, և դրդում է իրեն տալ կաշառքի առարկան՝ համապատասխան պաշտոնատար անձին փոխանցելու համար, սակայն չի կատարում իր խոստումը և չի փոխանցում կաշառքի առարկան, «կարծեցյալ միջնորդի արարքը պետք է որակվի համակցության կանոններով՝ որպես խարդախություն և կաշառք տալու փորձի դրդչություն»<sup>176</sup>:*

Կարծում ենք, սակայն, որ այսօրինակ որակումը չի բխում քրեական իրավունքի ազգային դոկտրինում հանցակցության էությունից և ՀՀ քրեական օրենսգրքում հանցակցության ինստիտուտը կանոնակարգող նորմերի բովանդակությունից: Մեր այս դիրքորոշումը

<sup>175</sup> Տե՛ս Гаухман Л.Д. Квалификация преступлений: закон, теория и практика 4-е изд., перераб. и доп. М., 2010, էջ 191:

<sup>176</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Ռ.Պապյանի վերաբերյալ 18.04.2013թ. թիվ ՏԴ/0053/01/12 քրեական գործով որոշումը:

պայմանավորված է այն իրողությամբ, որ հանցավորի արարքը հանցագործության դրդչություն որակելու համար նախ և առաջ անհրաժեշտ է, որ այն պարունակի ինչպես հանցակցության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներն ընդհանրապես, այնպես էլ դրդչության՝ օրենքով նախատեսված հատկանիշները մասնավորապես<sup>177</sup>: «Կարծեցյալ միջնորդության» պարագայում բացակայում են հանցակցության ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ հատկանիշները: Հանցակցության դեպքում անհրաժեշտ է, որ հանցակիցներն ունենան միասնական դիտավորություն (սուբյեկտիվ հատկանիշ) և նրանց գործողություններն ուղղված լինեն բոլորի համար ցանկալի հանցավոր նպատակի իրագործմանը (գործողությունների համատեղության հատկանիշ): Այլ խոսքով՝ հանցակիցների գործողությունների նույնօբյեկտ ուղղվածությունը և միևնույն հանցավոր

---

<sup>177</sup> Մասնագիտական գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ հանցագործությանն առանձին անձանց մասնակցության բնույթը կարող է լինել տարբեր, նրանք կարող են ունենալ հանցագործությանը մասնակցության տարբեր ինտենսիվություն: Ավելին, անգամ կարող են տարբերվել ոտնձգության օբյեկտները: Այսինքն՝ հանցակցություն կարող են գնահատվել նաև այն անձանց արարքները, ովքեր գործել են տարբեր շարժառիթով կամ նպատակով, և ոտնձգել են քրեաիրավական պաշտպանության միանգամայն տարբեր օբյեկտների դեմ (տե՛ս Кузнецова Н.Ф., Тяжкова И.М. Курс уголовного права в пяти томах. Том 1. Общая часть: Учение о преступлении. М.: Зерцало, 2002, էջ 395): Սակայն այս տեսակետն ունի որոշակի խոցելի պահեր: Բանն այն է, որ քրեական օրենքում նշվում է ոչ թե ընդհանրապես հանցագործություններին, այլ՝ հանցագործությանը հանցակցելու մասին: Հետևաբար՝ հանցակցություն պետք է գնահատվի միայն երկու կամ ավելի անձանց մասնակցությունը հենց միևնույն դիտավորյալ հանցագործությանը: Դա ենթադրում է միասնական օբյեկտ, որի դեմ ոտնձգում են հանցակիցները: «Ուստի, - նշում է Ֆ.Գ.Բուրչակը, - հանցագործության օբյեկտը բոլոր հանցակիցների համար պետք է համընկնի ոչ միայն տեսակով, այլև լինի անհատապես որոշված» (տե՛ս Бурчак Ф.Г. Соучастие в преступлении. Социальные, криминологические и правовые проблемы: автореф. Дис. ... д-ра юрид. Наук. М., 1986, էջ 20): Եթե տարբեր օբյեկտների դեմ ոտնձգությունը պահանջում է քրեական օրենսգրքի միանգամայն տարբեր հոդվածներով որակում, ապա այդպիսի իրավիճակը իրավաբանական տեսանկյունից դիտել որպես հանցակցություն, կարծում ենք, առնվազն խնդրահարույց է:

արդյունքին հասնելու նպատակով արարքների համատեղումը հանցակցության բնութագրիչ հատկանիշներն են: Մինչդեռ, «կարծեցյալ միջնորդության» դեպքում ինչպես մասնակիցների արարքների ուղղվածությունը, այնպես էլ նրանց դիտավորության բովանդակությունը չեն համընկնում. կաշառք տվողը նպատակ է հետապնդում կաշառքի միջոցով բավարարել իր ապօրինի շահերը, իսկ «կարծեցյալ միջնորդը»՝ խաբեության միջոցով նյութական օգուտ քաղել դրանից:

Բացի այդ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 5-րդ մասի ձևակերպումից ակնհայտ է դառնում, որ ընդհանուր հանցակցության ձևի դեպքում հանցակիցը հանցակցում է ավարտված հանցագործությանը: Նրա արարքը չավարտված հանցագործության կանոններով որակվում է միայն այն դեպքում, երբ կատարողն իր կամքից անկախ հանգամանքներով ավարտին չի հասցնում հանցագործությունը:

Չավարտված հանցագործության հանցակցությունը ենթադրում է ոչ միայն կատարողի, այլև մնացած բոլոր հանցակիցների կամքը, քանի որ հանցակցության մյուս բնութագրիչ հատկանիշը հանցակիցների կամքի մեկտեղումն է ընդհանուր հանցավոր արդյունքին հասնելու նպատակով: Այսինքն՝ այն դեպքում, երբ հանցագործությունն ավարտին չի հասցվում հանցակցի կամքով ու նրա գործողությունների հետևանքով, ապա խոսք չի կարող գնալ անձի՝ որպես հանցակից հանդես գալու մասին: Նրա արարքը պետք է քննարկվի կամ՝ հանցակցության ինստիտուտի շրջանակներից դուրս, կամ՝ հանցակցի կամովին հրաժարման համատեքստում:

Ինչ վերաբերում է «կարծեցյալ միջնորդությանը», ապա տվյալ դեպքում կաշառք տալու հանցագործությունն ավարտին չի հասցվում ոչ թե «կարծեցյալ միջնորդի» կամքից անկախ հանգամանքներով, այլ վերջինիս կամքով և գործողությունների հետևանքով: Ուստի՝ **«կարծեցյալ միջնորդին» որպես հանցակից ճանաչելը ոչ իրավաչափ է և չի բխում հանցակցության ընդհանուր էությունից:**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը, վերոնշյալ որոշմամբ, «կարծեցյալ միջնորդի» արարքը մեկնաբանել է ընդհանուր հանցակցության ինստիտուտից կտրված՝ ակցենտավորելով դրդչության օբյեկտիվ կողմը միայն

(պոտենցիալ կաշառք տվողի մոտ կաշառք տալու դիտավորություն առաջացնելը): Արդյունքում «կարծեցյալ միջնորդի» արարքին, կաշառք տալու փորձի դրդչության մասով, տրվել է քրեափրավական սխալ գնահատական: Այդ ամենով պայմանավորված՝ խախտվել է նաև կրկնակի մեղսայնացման արգելքի սկզբունքը<sup>178</sup>:

Այսպիսով, **«կարծեցյալ միջնորդության» յուրաքանչյուր իրավիճակում «կարծեցյալ միջնորդի» արարքը, համապատասխան հատկանիշների առկայության դեպքում, պետք է որակվի միայն որպես խարդախություն:** Այս մոտեցումը համահունչ է նաև վերջին տարիներին ՌԴ-ում ձևավորված իրավակիրառ պրակտիկային<sup>179</sup>:

Հայտնի է, որ հանցագործության նպատակը և շարժառիթը հանցագործության սուբյեկտիվ կողմի ֆակտուալորեն՝ ոչ պարտադիր, հատկանիշներ են, այդ թվում՝ հանցակցությամբ կատարված հանցագործությունների պարագայում: Ասվածը ենթադրում է, որ հանցագործության նպատակը և շարժառիթը հանցակիցների մոտ կարող են չհամընկնել՝ տարբերվել իրարից: Օրինակ՝ դրդիչը կատարողին սպանության մղելիս կարող է առաջնորդվել շահադիտական շարժառիթով, մինչդեռ կատարողը հանցանքն իրականացնելիս ունենա վրեժի շարժառիթ: Հարկ է նկատել, սակայն, որ հանցագործության նշված հատկանիշները պարտադիր նշանակություն են ձեռք բերում և հանցակցության որակման գործընթացում էական ազդեցություն են ունենում, երբ ուղղակիորեն նախատեսված են լինում քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում:

Այն հանցագործությունները, որոնց հանցակազմում, որպես պարտադիր հատկանիշներ, նշված են հանցագործության նպատակը կամ շարժառիթը, հանցակցությամբ կարող են կատարվել, եթե մասնակիցներից յուրաքանչյուրը գործել է տվյալ շարժառիթով կամ նպատակով: Այլ խոսքով՝ եթե նպատակը կամ շարժառիթը հանցա-

<sup>178</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս Առաքելյան Ս., Մկրտչյան Պ., Կաշառքի «կարծեցյալ» միջնորդության որակման որոշ հիմնահարցեր // Բանբեր Արդարադատության ակադեմիայի, № 1 (1), 2019, էջեր 50-60:

<sup>179</sup> Տե՛ս Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 9 июля 2013 года № 24 “О судебной практике по делам о взяточничестве и об иных коррупционных преступлениях” // СПС “КонсультантПлюс”:

կազմի պարտադիր հատկանիշ է, ապա հանցակիցների մոտ այն պետք է համընկնի՝ հակառակ դեպքում հանցակցությունը կբացակայի: Օրինակ՝ եթե երկու անձ համատեղ, ընդհանուր միջոցներով խոշոր չափերի թմրամիջոց են ձեռք բերում, որոնցից առաջինն իրացնելու նպատակով, իսկ մյուսը՝ անձնական գործածության համար, ապա հանցակցությունը բացակայում է: Նրանցից առաջինի արարքը ենթակա է որակման ՀՀ քր. օր.-ի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, իսկ երկրորդինը՝ 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Հանցակցության որակման հիմնախնդիրների շարքում տեսագործնական առանձին հետաքրքրություն է ներկայացնում **մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություններում հանցակցության հնարավորության հարցը:**

Ներկայումս քրեական իրավունքի դոկտրինում իշխում է այն մոտեցումը, որ մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություններում հանցակցություն հնարավոր է: Որպես այս մոտեցման իրավական հիմնավորում, բերվում է այն հանգամանքը, որ մեղքի երկու ձևով կատարվող հանցագործությունները համարվում են դիտավորյալ հանցագործություններ (ՀՀ քր. օր.-ի 32-րդ հոդված), ինչն օրենսդրոտն չի բացառում դրանց կատարումը հանցակցությամբ<sup>180</sup>:

Մասնագիտական գրականության մեջ, սակայն, արտահայտվել է նաև դրան հակադիր մոտեցում, համաձայն որի՝ մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություններում հանցակցության հնարավորությունը բացառվում է: Հիմնավորումն այն է, որ հանցակցության սուբյեկտիվ կողմին բնորոշ է միայն դիտավորյալ մեղքի ձևը: Ինչ վերաբերում է անզգույշ հետևանքների առաջացմանը, ապա դա դուրս է հանցակցության շրջանակներից և դրանց մեղսագրումն այլ հանցակիցներին անթույլատրելի է: Անզգույշ մեղքի ձևի դեպքում չի կարող առաջանալ հանցակիցների արարքների միջև այն ներքին

---

<sup>180</sup> Տե՛ս, օրինակ՝ Сорочкин Р.А. Правила квалификации преступлений с двумя формами вины // Российский следователь, 2007, № 24:

համաձայնեցվածությունը, որը բնորոշ է հանցակցությանը<sup>181</sup>: Այս վերջին տեսակետի օգտին է վկայում այն, որ ներկայումս ՀՀ քրեական օրենսգրքում իր օրենսդրական արտահայտությունը չի ստացել անզգույշ համապատճառման ինստիտուտը, որի պայմաններում երկու կամ ավելի անձանց արարքների անզգույշ հետևանքը դիտվում է որպես համատեղ պատճառված և մեղսագրվում վերջիններիս:

Մեր կարծիքով, մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություններում հեռավոր ոչ անմիջական հետևանքը մյուս հանցակիցներին (կազմակերպչին, դրդիչին, օժանդակողին) կարող է մեղսագրվել միայն, եթե վերջիններս այդ հանգամանքի նկատմամբ դրսևորել են անզգույշ մեղքի ձև: Այսպես, օրինակ՝ եթե դրդիչը կատարողին դրդել է տուժողի ձեռքը կտրելու եղանակով վերջինիս առողջությանը ծանր վնաս պատճառելուն, ապա արնահոսությունից տուժողի մահվան դեպքում, ինչպես կատարողը, այնպես էլ դրդիչը պետք է պատասխանատվության ենթարկվեն ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով (դրդիչի արարքի որակման դեպքում՝ հղում կատարելով հոդված 38-ին):

Ինչևէ, մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություններում հանցակցության հնարավորության համար իրավական հիմքերն առավել հստակ դարձնելու և տարամեկնաբանությունները բացառելու նպատակով, կարծում ենք, անհրաժեշտ է օրենսդրական մակարդակում նախատեսել համապատասխան իրավակարգավորումներ<sup>182</sup>:

Այսպիսով, հանցակցությունը՝ որպես հանցավոր գործունեության յուրատիպ դրսևորում, բնութագրվում է այնպիսի *օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների անխզելի կապով, որոնք թույլ են տալիս*

<sup>181</sup> Ст'ю Даниелян Р.С. Квалификация преступлений, совершенных в соучастии: Учебное пособие. - М.: МГПУ, 2012, էջ 11:

<sup>182</sup> Այս տեսանկյունից լիովին ընդունելի կարելի է համարել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի 48-րդ հոդվածի 6-րդ մասի ձևակերպումը, համաձայն որի՝ *եթե դիտարկողը հանցագործության ծանրացնող հանգամանք է անզգույշությամբ վրանգավոր հետևանքներ առաջացնելը, ապա հանցակիցներն այդ ծանրացնող հանգամանքի համար ենթակա են պատասխանատվության այն դեպքում, երբ այդ հետևանքների նկատմամբ առկա է նրանց անզգույշությունը:*

այս երևույթը փարբերակել երկու անձանց հանցավոր գործունեության պատահական համընկնումից: Այդ հատկանիշների համակցությունը հնարավորություն է ընձեռում կատարվածը հանցակցության տիրույթում դիտարկելու և անձանց արարքներն այս ինստիտուտի կանոններով որակելու համար:

## 5.2. Հանցակցության սահմանագատումն առնչակցությունից

Հանցակցությամբ կատարված հանցագործությունները որակելիս անհրաժեշտ է այդ ինստիտուտը **սահմանագափել առնչակցությունից**: Որպես ինքնուրույն քրեաիրավական ինստիտուտ՝ վերջինս բնութագրվում է իբրև անձի հանցավոր գործունեություն, որը թեև առնչվում է այլ անձի կողմից կատարված հանցագործությանը, սակայն չի գտնվում դրա հետ պատճառական կապի մեջ:

Ընդհանուր առմամբ առանձնացվում են առնչակցության հետևյալ հատկանիշները.

- անձի կողմից այնպիսի հանցագործությանն առնչակցություն, որի կատարմանն ինքը չի մասնակցել,
- առնչակից անձանց արարքների և այլ անձի կողմից կատարված հիմնական (հաջորդող) հանցագործության միջև պատճառական կապի բացակայությունը,
- առնչակից անձանց արարքների դիտավորյալ բնույթը,
- առնչակցության նախապես չխոստացված բնույթը,
- առնչակցություն հնարավոր է միայն արդեն իսկ կատարված հանցագործություններում, այսինքն՝ այնպիսի հանցագործություններում, որոնց օբյեկտիվ կողմն արդեն ավարտվել է, կամ օբյեկտիվ կողմը չի ավարտվել հանցավորի կամքից անկախ հանգամանքերով (հանցագործության նախապատրաստություն, հանցափորձ):

Քրեական իրավունքի գիտությունն առնչակցությունը բաժանում է երեք տեսակի՝ ա) պարտական, բ) իմանալ չհայտնել և գ) թողտվություն<sup>183</sup>:

<sup>183</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով): Դասագիրք բուհերի համար: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջեր 291-295:

Կարծում ենք, որ առնչակցության ինքնուրույն դրսևորումներ են նաև ՀՀ քր. օր.-ի 190-րդ (հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողերի լվացումը)), 216-րդ (ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք ձեռք բերելը կամ իրացնելը) հոդվածներով նախատեսված հանցագործությունները:

Այսպիսով, քննարկվող երկու ինստիտուտների տարանջատման առանցքային որոշիչն այլ հանցակիցների արարքի և հիմնական հանցավոր արդյունքի միջև պատճառական կապի առկայությունն է: Բանն այն է, որ հանցակցի արարքի օբյեկտիվ կողմի որոշակի դրսևորումներ գրեթե նույնանում են առնչակցություն համարվող հանցագործությունների օբյեկտիվ կողմին: Դրանով պայմանավորված՝ գործնականում երբեմն ի հայտ են գալիս այնպիսի իրավիճակներ, որոնցում հանցակցության և առնչակցության տարանջատման սահմանը շատ դժվար է լինում որոշել:

Այս երկու ինստիտուտների տարանջատման հիմնական բարդությունը, կարծում ենք, հանցագործության ավարտի պահի ճիշտ որոշումն է, և դրանով պայմանավորված՝ անձի արարքի և հիմնական հանցագործության միջև պատճառական կապի հաստատումը կամ բացառումը: Հանցակցության դեպքում պատճառական կապի գոյությունը թույլ է տալիս գծել այն ժամանակային սահմանները, որի ընթացքում իրականացված հանցավոր վարքագիծը կարող է որակվել որպես հանցակցություն: Պետք է նկատել, որ ժամանակագրական առումով *հանցակցի միացումը հանցագործությանն իրականացվում է հիմնական հանցանքի կատարումը սկսելուց առաջ կամ դրա ընթացքում, այսինքն՝ մինչև դրա ավարտը*: Մինչդեռ առնչակցության դեպքում անձն իր արարքներով միանում է կատարողի կողմից իրականացված հանցագործությանը *միայն դրա ավարտից հետո*:

Ասվածով պայմանավորված՝ կարելի է առանձնացնել **որակման հետևյալ կանոնները**.

*ա) եթե անձն իր արարքներով հանցագործության կատարմանը միանում է մինչև դրա ավարտը (խոստանում է պարտակել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները, ինչպես նաև խոստանում է ձեռք բերել կամ իրացնել*



այդպիսի առարկաները), ապա այդ անձի արարքը պետք է որակել որպես հանցագործության հանցակցություն՝ օժանդակության ձևով<sup>184</sup>,

բ) եթե անձն իր արարքներով հանցանքի կատարմանը միանում է այդ հանցագործության ավարտից հետո (պարտական է հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները, ինչպես նաև ձեռք է բերում կամ իրացնում է այդպիսի առարկաները և այլն), ապա այդ անձի արարքը պետք է որակել որպես առնչակցություն,

Օրինակ՝ Ա-ն հափշտակված անասունները հանդամասից գյուղ տեղափոխելու համար խնդրում է իր համագյուղացի Բ-ին, որ վերջինս իրեն պատկանող «ԶԻԼ» մակնիշի բեռնատար ավտոմեքենան տրամադրի, անասուններին տեղափոխելու համար: Այն իրավիճակում, երբ Բ-ն Ա-ի հանցավոր գործունեության մասին տեղեկանում է մինչև հափշտակության սկսելը կամ վերջինիս կողմից հափշտակված անասուններին օգտագործելու կամ տնօրինելու իրական հնարավորություն ունենալը և համաձայնում է օգնել նրան, առկա կլինի հանցակցություն՝ օժանդակության ձևով: Մինչդեռ, եթե Բ-ն Ա-ի կողմից անասունների հափշտակության փաստի մասին տեղեկանա հափշտակության օբյեկտիվ կողմի ավարտից հետո և, շարունակելով իր գործողությունները, Ա-ին տեղափոխի ապահով տեղ, ապա առկա կլինի առնչակցություն՝ պարտական ձևով:

Իմանալ չհայտնելու՝ որպես առնչակցության ինքնուրույն դրսևորման համար անձի քրեական պատասխանատվությունը կարող է վրա հասնել միայն այն պարագայում, երբ հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին անձը չի հայտնում իրավապահ մարմիններին, թեև, ունենում է դա կատարելու օբյեկտիվ հնարավորություն

---

<sup>184</sup> Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պարտական, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաների ձեռք բերման կամ իրացման նախապես տրված խոստումը ոչ թե ֆիզիկական, այլ ինտելեկտուալ օժանդակություն է: Այլ կերպ՝ արարքն օժանդակություն որակելու համար այս դեպքերում չի պահանջվում խոստման ռեալ (իրական) կատարում և նույնիսկ այն կատարելու մտադրություն:

(« քր. օր.-ի հոդված 335-րդ): Միևնույն ժամանակ, չհայտնելու համար քրեական պատասխանատվություն չի առաջանում, եթե անձը որևէ ձևով մասնակցում է հանցագործությանը (որպես կազմակերպիչ, դրդիչ, օժանդակող կամ համակատարող): Ընդ որում, առնչակցության տվյալ դրսևորման համար անձի քրեական պատասխանատվությունը կարող է առաջանալ՝ անկախ այն բանից, իմանալ չհայտնելը եղե՞լ է նախապես խոստացված, թե՞ ոչ:

Հարկ ենք համարում նշել նաև, որ մինչև հանցագործության օբյեկտիվ կողմի լրիվ ավարտը մեկ այլ անձի միացումը տվյալ հանցագործությանը միշտ չէ, որ կարող է գնահատվել որպես հանցակցություն: Այստեղ ելակետայինը այդ անձի արարքների և հանցավոր արդյունքի միջև պատճառական կապի առկայությունն է, որը կարող է բացակայել, նույնիսկ, դեռ չավարտված հանցանքին անձի միանալու դեպքում:

Այսպես, **ինտելեկտուալ օժանդակության** պարագայում օժանդակողի և հիմնական հանցավոր արդյունքի միջև պատճառական կապ ստեղծվում է բացառապես կատարողի կողմից իրականացվող արարքի (գործողության կամ անգործության) միջոցով: Ասվածից ենթադրվում է, որ ինտելեկտուալ օժանդակություն հնարավոր է կա՛մ հանցագործության նախապատրաստության, կա՛մ չավարտված հանցափորձի փուլում: Այսինքն՝ երբ կատարողը դեռևս չի իրականացրել արարքն ամբողջությամբ, որն անհրաժեշտ է հանցավոր հետևանքն առաջացնելու համար: Ավարտված հանցափորձի պարագայում, երբ կատարողն իրականացրել է քրեական օրենքի Հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված ամբողջ արարքը, սակայն հանրորեն վտանգավոր հետևանքները դեռ վրա չեն հասել, անձի կողմից խորհուրդների, ցուցումների կամ տեղեկատվության տրամադրումը կարող է գնահատվել ոչ թե որպես ինտելեկտուալ օժանդակություն, այլ առնչակցություն: Օրինակ՝ եթե անձը մարդասպանին թաքցնելու խոստում է տվել այն ժամանակ, երբ վերջինս արդեն թույնած է եղել տուժողին, սակայն նրա մահը դեռ չի առաջացել, ապա նրա արարքը պետք է որակվի ոչ թե որպես օժանդակություն, այլ՝ նախապես չխոստացված պարտականում:

**Ֆիզիկական օժանդակության** պարագայում, երբ օժանդակողի արարքների և հիմնական հանցավոր արդյունքի միջև պատճառա-

կան կապը ձևավորվում է ոչ միայն կատարողի գործողության (անգործության), այլև հանցավոր հետևանք առաջացնելու միջոցով, հանցակցություն հնարավոր է այն անձի արարքներում, ով հանցանքի կատարմանը միանում է, նույնիսկ, ավարտված հանցավորձի փուլում: Օրինակ՝ եթե պահակը, գործարանի հսկիչ-անցագրային կետում նկատելով գողին, պայմանավորվածություն ձեռք բերելով նրա հետ, թողնում է վերջինիս (իրեն՝ որպես խոչընդոտ վերացնելով) հափշտակվածը դուրս հանել պահպանվող տարածքից:

Հարկ է փաստել, որ, ի տարբերություն առնչակցության, հանցագործության նախապես խոստացված պարտական կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները նախապես խոստացված ձեռք բերելու կամ իրացնելու եղանակով նպաստելը օժանդակության ինտելեկտուալ ձևեր են, որոնց պարագայում չի պահանջվում որոշակի գործողությունների կատարում: Այսինքն՝ այդպիսի գործողություններ կատարելու նախապես տրված խոստումն ինքնին բավարար է օժանդակությունն ավարտված համարելու համար: Մինչդեռ՝ առնչակցության դեպքում պահանջվում է առարկայական գործողությունների ռեալ կատարում՝ հակառակ դեպքում ավարտված անչակցության մասին խոսք գնալ չի կարող:

Պրակտիկայում առնչակցության որակման որոշակի բարդություններ են առաջանում **սուբյեկտիվ սխալի առկայության դեպքում**: Խոսքն այն մասին է, երբ անձը կարծում է, որ առնչակցում է հանցագործության, մինչդեռ կատարվածը չի համարվում հանցագործություն: Ասվածով պայմանավորված՝ հնարավոր են հետևյալ իրավիճակները՝

ա) անձը կարծում է, որ պարտակում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն, մինչդեռ այլ անձի կողմից կատարված արարքը նախատեսված չի լինում քրեական օրենսգրքում, կամ անձը, կարծելով, որ նախապատրաստվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն, այդ մասին չի հայտնում, մինչդեռ այդ արարքը քրեորեն պատժելի չի լինում: Նման դեպքերում, կարծում ենք, *առկա է իրավաբանական սխալ, և ենթադրյալ առնչակիցը ենթակա չէ քրեական պատասխանատվության*,

բ) անձը կարծում է, որ պարտակում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն, մինչդեռ այլ անձի կողմից կատարված

արարքը, թեև, նախատեսված է լինում քրեական օրենսգրքում, սակայն այն կատարած անձի քրեական պատասխանատվության տարիքի չհասած լինելու կամ անմեղսունակության պատճառով չի ճանաչվում հանցագործություն: Այս իրավիճակում *առկա է փաստական սխալ, և առնչակցի արարքը ենթակա է որակման որպես համապատասխան հանցագործության փորձ* (<< քր. օր.-ի հոդված 34-334),

գ) անձը գիտակցում է, որ ձեռք է բերում կամ իրացնում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք, մինչդեռ գույքը ձեռք բերված է լինում օրինական հիմքերով և այլն: *Այս իրավիճակում ևս, հանցավորի արարքը ենթակա է որակման որպես համապատասխան հանցագործության փորձ* (<< քր. օր.-ի հոդված 34-216):

Ինչպես արդեն նշվել է, հանցակցի միացումը հանցագործությանը կարող է իրականացվել կա՛մ հիմնական հանցանքը սկսվելուց առաջ, կա՛մ դրա ընթացքում: Իսկ հանցագործության ավարտից հետո անձի միացումը հանցագործությանը բացառում է վերջինիս արարքի և հանցավոր հետևանքի միջև պատճառական կապի գոյությունը, ինչն էլ բերում է հանցակցության բացակայության: Ասվածով պայմանավորված՝ ծագում է տեսագործնական տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող հետևյալ հարցը՝ այս համատեքստում հանցագործության ավարտ ասելով՝ պետք է հասկանանք դրա փաստակա՞ն, թե՞ իրավաբանական ավարտը:

Նշված հարցադրումը հիմնականում առաջ է գալիս այն իրավիճակներում, երբ անհրաժեշտություն է առաջանում որոշելու հանցակցության առկայության հարցը ձևական (հատված) հանցակազմերով նկարագրված հանցագործություններում, որոնց պարագայում հանցանքի փաստացի ավարտն անցնում է իրավաբանականին: Օրինակ՝ ավազակության հանցակազմում հանցագործությունն ավարտված է համարվում հարձակման, իսկ շորթման հանցակազմում՝ հանցավորի կողմից գույքային բնույթի պահանջը ներկայացնելու պահից և այլն: Հետևաբար, առկա է արդյո՞ք հանցակցություն, երբ օժանդակողը չիրկիզվող պահարանի բանալին փոխանցում է կատարողին, վերջինիս կողմից տուժողի վրա հարձակվելուց հետո միայն: Կամ՝ առկա է արդյո՞ք հանցակցություն, երբ հանցավորը գույքային պահանջ ներկայացնելուց հետո խնդրում է իր ընկերոջը,

որպեսզի նա շորթված գումարը վերցնի տուժողից և փոխանցի իրեն:

Այս կապակցությամբ գտնում ենք, որ ձևական (հատված) հանցակազմերում հանցակցության հնարավորության հարցը դիտարկելիս պետք է ելակետ ընդունել ոչ թե տվյալ հանցագործության իրավաբանական, այլ փաստացի ավարտի պահը: Դա ենթադրում է, որ ձևական (հատված) հանցակազմերի դեպքում հանցակցություն հնարավոր է, թեև իրավաբանորեն ավարտված, սակայն, փաստացի չավարտված հանցագործություններում: Այս մոտեցումը հիմնավորվում է նաև այն իրողությամբ, որ տվյալ հանցագործություններում հանցակցի արարքը, այնուամենայնիվ, պատճառական կապի մեջ է ընդհանուր հանցավոր արդյունքի հետ և անհրաժեշտ պայման է կատարողի կողմից հանցանքը հաջողությամբ կատարելու համար:

Հարկ է փաստել նաև, որ հակառակ մոտեցման պարագայում պետք է մերժվի նաև տևող հանցագործությանը հանցակցելու հնարավորությունը, երբ անձը տվյալ հանցագործությանը միանում է հանցավորի առաջին ակտի սկսելուց հետո միայն, որն իր մեջ արդեն իսկ պարունակում է ավարտված հանցակազմի բոլոր հատկանիշները: Ընդհակառակը, նույն կերպ պետք է լուծվի նաև տևող և շարունակվող հանցագործություններում հանցակցության հարցը: Այսինքն՝ պետք է նկատի ունենալ, որ *տևող հանցագործություններում հանցակցությունը հնարավոր է տվյալ հանցագործության հանցակազմն իրականացնելու առաջին փուլից, մինչև դրա լրիվ ավարտը (դադարեցվելու պահը), շարունակվող հանցագործություններում՝ մինչև դրա բաղկացուցիչ վերջին արարքը կատարելու պահը* և այլն:

Բերենք պրակտիկայից մեկ օրինակ. անձն ամուսնության նպատակով առևանգում է ընկերուհուն և, տանելով իր ամառանոց, նրան այնտեղ պահում է երեք օր: Այնուհետև, բացահայտվելու իրական վտանգ զգալով, զանգահարում է ընկերոջը, ներկայացնում իրողությունը և խնդրում օգնել: Վերջինս իր մեքենան տրամադրում է կատարողին՝ տուժողին այլ վայր տեղափոխելու նպատակով: Քանի որ նկարագրված իրավիճակում առևանգումն ընթացքի մեջ էր, հետևաբար անձի կողմից տուժողին այլ վայր փոխադրելու նպատա-

կով տրամադրված մեքենան՝ որպես հանցագործության միջոց, պետք է որակվի առևանգման հանցակցություն՝ օժանդակության ձևով:

Հանցակցության և առնչակցության տարանջատման տեսանկյունից տեսագործնական կարևորություն է ներկայացնում նաև այն հարցը, թե արդյո՞ք հնարավոր է, որ հիմնական հանցագործության հանցակիցը լինի նաև այդ հանցագործության առնչակից: Այլ կերպ ասած՝ կարո՞ղ է անձի արարքը որակվել հանցանքների համակցությամբ. որպես հիմնական հանցագործության հանցակցություն (օժանդակություն, դրդչություն, կազմակերպչական գործունեություն) և այդ հանցագործության առնչակցություն: Այսպես, որպես առնչակցության դրսևորում՝ ՀՀ քր. օր.ի հոդված 216-ի դիսպոզիցիայում ուղղակի նշված է, որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը ձեռք բերելը կամ իրացնելը չպետք է նախապես խոստացված լինի: Հակառակ դեպքում գործ կունենանք հանցակցության հետ՝ օժանդակության ձևով (քր. օր.-ի հոդված 38-ի 5-րդ մաս):

Այս առումով հարկ է արձանագրել, սակայն, որ նշված հոդվածը բացառում է միայն ինտելեկտուալ օժանդակության այն եղանակը, որը դրսևորվում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքն իրացնելու կամ ձեռքբերելու նախապես տրված խոստման ձևով: Մինչդեռ հիմնական հանցագործության օժանդակությունը, որը դրսևորվել է այլ եղանակներով, մասնավորապես, միջոց, գործիք, տեղեկատվություն և այլն տրամադրելով, ինչպես նաև հանցակցության այլ ձևերը՝ դրդչությունը, կազմակերպչական գործունեությունը, ըստ էության, կարող են ՀՀ քր. օր.-ի հոդված 216-ով նախատեսված հանցագործության հետ կազմել համակցություն, երբ տվյալ հանցակիցների դերից բխող գործողությունները չեն դրսևորվել հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքը ձեռք բերելու կամ իրացնելու նախապես տրված խոստմամբ:

Նույն կանոնն է գործում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածով նկարագրված հանցագործության որակման պարագայում, որտեղ նշվում է, որ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության պարտակումը չպետք է լինի նախապես խոստացված: Այսինքն՝ պետք է այն իրականացնելու խոստումը տրված չլինի մինչև սկզբնական հանցագործության ավարտը: Հակառակ դեպ-

քում անձի արարքը ենթակա է որակման՝ որպես համապատասխան հանցագործության օժանդակություն: Այլ խոսքով, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների նախապես խոստացված պարտակումը՝ որպես օժանդակություն, և նախապես չխոստացված պարտակումը՝ որպես առնչակցություն, որևէ կերպ չեն կարող ձևավորել հանցանքների համակցություն: Հիմնական հանցագործության նախապես չխոստացված պարտակումն այդ հանցագործության հետ կարող են ձևավորել հանցանքների համակցություն, եթե հիմնական հանցագործության հանցակցությունը դրսևորվել է կա՛մ դրդչության, կա՛մ կազմակերպման, կա՛մ օժանդակության այնպիսի եղանակով, որը չի դրսևորվել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները նախապես խոստացված պարտակման ձևով:

Ինչպես արդեն նշվել է՝ ՀՀ քր. օր.-ի 190-րդ հոդվածով նկարագրված հանցագործությունը (հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը /փողերի լվացումը/)՝ որպես առնչակցության դրսևորում, սկզբնական (պրեդիկատային) հանցագործության հանցակցության հետ կարող է կազմել համակցություն՝ անկախ նրանից, թե ինչպիսին է եղել սկզբնական հանցագործությանը հանցակցի մասնակցության բնույթը (կազմակերպիչ, դրդիչ, օժանդակող, թե համակատարող):

Ինչ վերաբերում է հանցագործության մասին չհայտնելուն (ՀՀ քր. օր.-ի հոդված 335), ապա հարկ է նկատել, որ սկզբնական հանցագործությանը անձի ցանկացած բնույթի մասնակցությունը բացառում է առնչակցության տվյալ տեսակի համար վերջինիս քրեական պատասխանատվությունը:

### 5.3. Հանցակցի տեսակի որակումը

Հանցակցությամբ կատարված հանցագործությունների որակումը շաղկապված է նաև **հանցակցի տեսակի** պարզաբանման հարցի հետ: Այդ իսկ պատճառով հանցակցության որակման գործընթացում կարևոր նշանակություն ունի հանցագործությանը մասնակից անձանց գործառութային դերի պարզումը, համատեղ հանցա-

վոր գործունեության մեջ նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթի և աստիճանի ճիշտ որոշումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կատարողի հետ մեկտեղ հանցակիցներ են համարվում կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը»:

Անհրաժեշտ է նշել, որ հանցակիցների տեսակների քրեաիրավական բնութագրի հարցերը քրեական իրավունքի գիտակարգի տիրույթում են: Տվյալ աշխատության շրջանակներում հանցակցի տեսակին վերաբերող հարցերը քննության առարկա կդարձվեն այնքանով, որքանով վերաբերում են նրանց արարքների քրեաիրավական գնահատականի առանձնահատկություններին:

#### **Ա. Հանցագործության կատարողը:**

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Կատարող է համարվում այն անձը, ով անմիջականորեն կատարել է հանցանքը կամ դրա կատարմանն անմիջականորեն մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ համատեղ, ինչպես նաև հանցանքը կատարել է այլ այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել են անզգուշությամբ:»:

Հարկ է փաստել, որ **առանց կատարողի խոսք չի կարող գնալ հանցակցության մասին:** Այն հանցակիցների մեջ էական և հանցակցությունը ձևավորող կենտրոնական սուբյեկտն է: Բանն այն է, որ միայն կատարողի ի հայտ գալով է, որ հանցակցությունը ձեռք է բերում իրավաբանական բնույթ, իսկ կատարողի բացակայությունը կա՛մ բացառում է հանցակցությունը, կա՛մ հանգեցնում հանցակցության կազմալուծման:

Բացի այդ՝ մյուս հանցակիցների արարքների որակումը մեծ մասամբ պայմանավորված է կատարողի արարքի քրեաիրավական գնահատականով: Այդ իսկ պատճառով բարդ հանցակցության (ընդհանուր դերաբաշխմամբ) ձևի դեպքում մյուս հանցակիցների արարքների քրեաիրավական գնահատումն անհրաժեշտ է սկսել կատարողի արարքի որակումից:

Դժվար չէ նկատել, որ ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածի 2-րդ մասն առանձնացնում է հանցագործության **կատարողի երեք տեսակ.**

ա) անձ, ով անմիջականորեն կատարել է հանցագործությունը,



բ) անձ, ով հանցագործության կատարմանը մասնակցել է այլ անձի (անձանց) հետ համատեղ (համակատարող),

գ) անձ, ով հանցանքը կատարել է այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել են անգույշությամբ (միջնորդավորված կատարող):

Այսպիսով՝ օրենքի իմաստով հանցագործության կատարող է համարվում այն անձը, ով անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով իրականացրել է հանցագործության *օբյեկտիվ կողմը* (ամբողջությամբ կամ մասամբ): Իր հերթին, հանցագործության *անմիջական կատարում ասելով՝ հասկացվում է անձի կողմից քրեական օրենսգրքի Հարուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում նախատեսված արարքների (գործողության կամ անգործության) ամբողջ ծավալով կամ մասամբ իրականացում՝ անձամբ, սեփական վարքով և առանց որևէ միջնորդության:*

Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ ՀՀ քր. օր.-ում նկարագրված որոշ հանցագործությունների օբյեկտիվ կողմը, օրենսդրական նկարագրմամբ պայմանավորված, կարող է չհամապատասխանել դրանց փաստացի ավարտի պահի հետ (լինել ավելի լայն): Օրինակ՝ ավազակությունն, ըստ օրենսդրական նկարագրման, ավարտված է համարվում ուրիշի գույքը հափշտակելու նպատակով կատարված հարձակման պահից (քր. օր.-ի հոդված 175): Ավազակային հարձակման օբյեկտիվ կողմը, սակայն, իր մեջ ներառում է ոչ միայն կատարվող հարձակումը, այլ նաև ուրիշի գույքի հափշտակությանն ուղղված հակաիրավական գործողությունները: Հետևաբար՝ այն անձը, ով չի մասնակցել հարձակմանը, սակայն անմիջական մասնակցություն է ունեցել ուրիշի գույքին տիրանալու գործընթացին, որը փաստացի ավազակության օբյեկտիվ կողմի մաս է կազմում, կհամարվի տվյալ հանցագործության համակատարող<sup>185</sup>:

---

<sup>185</sup> Դատական պրակտիկան ցույց է տալիս, որ համակատարողն իր գործողություններով կարող է միանալ այլ համակատարողի գործողություններին անգամ հանցագործության իրավաբանական ավարտից հետո, բայց մինչև հանցավոր գործունեության փաստացի ավարտը (օբյեկտիվ կողմի լրիվ կատարումը): Խոսքը վերաբերում է նաև տևող և շարունակվող հանցագործություններին:

Նույնը վերաբերում է նաև ձևական (հատած) հանցակազմով նկարագրված այլ հանցագործություններին, օրինակ՝ կաշառք ստանալուն<sup>186</sup> և այլն:

Քրեական օրենքի իմաստով *կատարող* է համարվում նաև այն անձը, ով հանցագործության օբյեկտիվ կողմն իրականացրել է ոչ թե անձամբ, այլ քրեական իրավունքի իմաստով «անպիտան անձի օգտագործելու» միջոցով, այսինքն՝ հանցանքը կատարել է միջնորդավորված կերպով:

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչպես արդեն նշվել է, սահմանում է, որ կատարող է համարվում նաև այն անձը, ով հանցանքը կատարել է այլ այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել են անզգուշությամբ: Այս առումով հարկ է նկատել, որ հանցագործության *միջնորդավորված կատարման դեպքում հանցակցությունը բացակայում է, ուստի խոսք չի կարող գնալ հանցակիցների մասին:*

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են հանցագործության ***միջնորդավորված կատարման հետևյալ հնարավոր դրսևորումները՝***

ա) քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի օգտագործումը,

բ) անմեղսունակության վիճակում արարքը կատարող անձի օգտագործումը,

գ) այսպես կոչված՝ տարիքային անմեղսունակության վիճակում գտնվող անձի օգտագործումը,

դ) ծայրահեղ անհրաժեշտության վիճակում գտնվող անձի օգտագործումը,

ե) ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ արարք կատարող անձի օգտագործումը,

զ) հատուկ սուբյեկտի կողմից տվյալ հանցագործության սուբյեկտ չհամարվող անձի օգտագործումը,

<sup>186</sup> Այս մասին տե՛ս, օրինակ՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Ք.Ջամայանի և ուրիշների վերաբերյալ 24.12.2018 թ. թիվ ԵԷԴ/0040/01/16 գործով որոշման 28-րդ կետը:

է) հրամանի կամ կարգադրության հիման վրա առանց մեղքի կամ անզգուշությամբ գործող անձի օգտագործումը,

ը) փաստական սխալի ազդեցությամբ առանց մեղքի կամ անզգուշությամբ գործող անձի օգտագործումը:

Հարկ է նկատել, որ քրեական օրենքի տեքստում գործածված այն ձևակերպումը, որ *կատարող է համարվում նաև այն անձը, ով հանցանքը կատարել է այլ այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության*, պետք է մեկնաբանվի այնպես, որ որպես *օրենքի ուժով քրեական պատասխանատվության ոչ ենթակա* անձինք ընկալվեն ոչ միայն նրանք, ովքեր ենթակա չեն քրեական պատասխանատվության ընդհանրապես (տարիք, մեղսունակություն), այլև նրանք, ովքեր ենթակա չեն քրեական պատասխանատվության տվյալ կոնկրետ հանցագործության համար: Հետևաբար՝ միջնորդավորված կատարման հետ է առնչվում այնպիսի անձի օգտագործումը, ով թեև գործում է դիտավորությամբ, սակայն չի գիտակցում հանցակազմի պարտադիր հատկանիշի առկայությունը, սակայն այն ընդգրկված է լինում միջնորդավորված կատարողի դիտավորությամբ:

Այս իրավիճակը հիմնականում վերաբերում է մրցակցող նորմերին, երբ անձը քրեական օրենսգրքով նախատեսված հանցանքը կատարելու համար օգտագործում է մեկ այլ անձի, սակայն վերջինս հանցանքը կատարելիս չի գիտակցում այդ հանցագործության այն հատկանիշը, որով պայմանավորված փոխվում է հանցանքի սոցիալ-իրավական բնութագիրը: Օրինակ՝ եթե սպանությունն անմիջականորեն իրականացնողը համոզված է լինում, որ կատարում է մարդու կյանքի, այլ ոչ թե պետության անվտանգության դեմ ուղղված հանցանք, իսկ իրականում տեղի է ունենում պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանություն (որն էլ լինում է պատվիրատուի նպատակը), արարքը պետք է որակվի հետևյալ կերպ. անմիջական կատարողի արարքը՝ որպես ծանրացուցիչ հանգամանքներում սպանություն՝ ՀՀ քր. օր.-ի հոդված 104-ի 2-րդ մասի 8-րդ կետով (պատվերով սպանություն), իսկ պատվիրատուինը՝ հոդված 305-ով նախատեսված հանցանքի կատարում, այլ ոչ թե դրա դրոշություն: Այստեղ, փաստորեն, առկա է պետական,

քաղաքական կամ հասարակական գործչի, ոչ թե անմիջական, այլ միջնորդավորված սպանություն, քանի որ հանցավորը, ըստ էության, անմիջական մարդասպանին դարձնում է նշված հանցագործության կույր գործիք:

Հարկ է արձանագրել, որ հանցագործության միջնորդավորված կատարում հնարավոր է միայն այն դեպքերում, երբ անձը, ով օգտագործել է քրեաիրավական իմաստով «անպիտան» կամ հանցանքն անզուտությամբ կատարող անձի, *պետք է գիտակցի այդ հանգամանքը, և ինքն անձամբ պետք է համապատասխանի այն հանցագործության սուբյեկտի հատկանիշներին, որի կատարման համար օգտագործում է «միջնորդին»*: Հետևաբար, այն պարագայում, երբ մեկ ուրիշին օգտագործող անձը չի համապատասխանում կոնկրետ հանցագործության սուբյեկտի (այդ թվում՝ հատուկ սուբյեկտի)՝ օրենքով նախատեսված հատկանիշներին, *միջնորդավորված կատարումը բացակայում է*:

Միջնորդավորված կատարումը, փաստորեն, մի իրավիճակ է, երբ միջնորդավորված կատարման շղթայում միջնորդի բացակայության և նրա գործողությունները վերջինիս օգտագործող անձի կողմից կատարվելու դեպքում նույնպես առկա կլիներ համապատասխան հանցակազմը: Հետևաբար՝ միջնորդավորված կատարման հարցը չի կարող քննարկվել, օրինակ, այն դեպքերում, երբ պաշտոնատար անձը, մեկ ուրիշին գցելով մոլորության մեջ, այնպես է անում, որ նա իրեն փոխանցի կաշառքի առարկան՝ չգիտակցելով, որ տալիս է կաշառք: Չնայած, այս իրավիճակում պաշտոնատար անձն օգտագործում է մեկ ուրիշին, ով գործում է առանց մեղքի, այնուհանդերձ խոսք չի կարող գնալ կաշառք տալու միջնորդավորված կատարման մասին, քանի որ պաշտոնատար անձը չի կարող հանդիսանալ ինքն իրեն կաշառք տալու սուբյեկտ:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ *միջնորդավորված կատարման դեպքում անձի արարքը որակվում է քրեական օրենսգրքի այն հոդվածով, որի կատարման համար վերջինս օգտագործել է տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության համար քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձի՝ առանց հղում կատարելու* ՀՀ քր. օր.-ի հոդված 38-ին: Պրակտիկայում, սակայն, պատահում են դեպքեր, երբ միջնորդին օգտագործած անձի դիտավորությամբ

ընդգրկված հանցագործության և միջնորդի կողմից կատարված հանցագործության միջև առկա է լինում փաստացի անհամապատասխանություն (սուբյեկտիվ սխալ): Մասնավորապես, մի դեպքում, միջնորդի կողմից ընդհանրապես չի կատարվում կամ անավարտ է մնում հանցագործությունը, մյուս դեպքում՝ կատարվում է միաբնույթ կամ տարաբնույթ մեկ ուրիշ կամ առավել ծանր հանցանք, կամ մտադրվածից բացի՝ կատարվում է ևս մեկ այլ հանցանք: Այսինքն՝ միջնորդի կողմից թույլ է տրվում, այսպես ասած, սահմանազանցում: Հնարավոր են նաև դեպքեր, երբ միջնորդավորված կատարողը սուբյեկտիվ սխալ դրսևորի միջնորդի քրեական իրավասուբյեկտության կապակցությամբ:

Նկարագրված յուրաքանչյուր դեպքում, կարծում ենք, միջնորդավորված կատարողի արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու համար՝ որպես ելակետ, պետք է դիտարկվի անձի դիտավորության ուղղվածությունը և բովանդակությունը (սուբյեկտիվ չափանիշ) և հանցավոր նպատակի իրականացման աստիճանը: Այսինքն՝ այն հանգամանքը, թե ինչքանով է օբյեկտիվորեն իրականացվել անձի դիտավորությամբ ընդգրկված հանցագործությունը (օբյեկտիվ չափանիշ): Ասվածով պայմանավորված՝ հնարավոր են միջնորդավորված կատարման որակման հետևյալ իրավիճակները.

1. *Եթե միջնորդավորված կատարողը հանցանքը կատարելու համար օգտագործում է քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձի, սակայն հանցագործությունն ավարտին չի հասցվում վերջինիս կամքից անկախ հանգամանքներով, ապա օգտագործողի արարքը պետք է որակվի կա՛մ որպես հանցագործության նախապարաստություն (ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության դեպքում), կա՛մ հանցագործության փորձ՝ կախված հանցավոր մտադրության իրականացման աստիճանից:* Այսպես, օրինակ՝ եթե միջնորդավորված կատարողը ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով (սպանություն) նախատեսված հանցանքը կատարելու համար օգտագործում է քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձի, սակայն միջնորդը զենք ձեռք բերելիս բռնվում է, ապա միջնորդավորված կատարողի արարքը կորակվի ՀՀ քր. օր. ի 35-104-րդ հոդվածի 1-ի մասով՝ որպես սպանության նախապատ-

րաստություն: Մինչդեռ, եթե միջնորդը իր կամքից անկախ հանգամանքներով սպանությունը չի հասցնում ավարտին և հանցավոր գործունեությունը խափանվում է հանցավործի փուլում, ապա միջնորդավորված կատարողի արարքը պետք է որակվի 34-104-րդ հոդվածի 1-ի մասով՝ որպես սպանության փորձ:

2. *Եթե միջնորդը վնաս է հասցնում այն օբյեկտին, որն ընդգրկված է միջնորդավորված կատարողի դիտավորությամբ, սակայն հասցված վնասն ավելի մեծ է լինում, քան նրա դիտավորությամբ ընդգրկվածը, ապա միջնորդավորված կատարողի արարքը որակվում է իր դիտավորությամբ ընդգրկված հանցագործության համար պատասխանատվություն նախատեսող հոդվածով:* Օրինակ՝ եթե միջնորդավորված կատարողը ՀՀ քր. օր.-ի 104 հոդվածի 1-ին մասով նախատեսված սպանություն կատարելու համար օգտագործում է քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձի, սակայն վերջինս այն կատարում է առանձին դաժանությամբ, ապա օգտագործողի արարքը պետք է որակվի քր. օր.-ի 104 հոդվածի 1-ին մասով՝ որպես հասարակ սպանություն: Մեկ այլ օրինակում՝ եթե միջնորդավորված կատարողը քր. օր.-ի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (խոշոր չափերով գողություն) նախատեսված հանցանքը կատարելու համար օգտագործում է քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձի, սակայն վերջինս կատարում է առանձնապես խոշոր չափերով գողություն, ապա օգտագործողի արարքը ենթակա է որակման քր. օր.-ի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ որպես խոշոր չափերով գողություն:

3. *Եթե միջնորդը, բացի միջնորդավորված կատարողի դիտավորությամբ ընդգրկվածից, կատարում է նաև այլ հանցանք, ապա միջնորդավորված կատարողի արարքը որակվում է միայն իր դիտավորությամբ ընդգրկված հանցագործության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածով:* Օրինակ՝ եթե միջնորդավորված կատարողը ՀՀ քր. օր.-ի 131 հոդվածի 1-ին մասով (մարդուն առևանգել) նախատեսված հանցանքը կատարելու համար օգտագործում է քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձի, սակայն վերջինս, բացի դրանից, կատարում է նաև քր.

օր.-ի 138 հոդվածի 1-ին մասով (բռնաբարություն) նախատեսված արարք, ապա միջնորդավորված կատարողի արարքը որակվում է միայն քր. օր.-ի 131 հոդվածի 1-ին մասով՝ որպես մարդուն առևանգել:

4. *Եթե միջնորդավորված կատարողը հանցանքը կատարելու համար օգտագործում է քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձի, սակայն վերջինս իր կամքով այդ արարքը կա՛մ ընդհանրապես չի իրականացնում, կա՛մ դրա փոխարեն կատարում է քրեական օրենսգրքի մեկ այլ հոդվածով նախատեսված արարք, ապա միջնորդավորված կատարողի արարքը ենթակա է որակման որպես իր դիտավորությամբ ընդգրկված հանցագործության նախապատրաստություն:* Օրինակ՝ եթե միջնորդավորված կատարողը ՀՀ քր. օր.-ի 131 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով (անչափահասի առևանգում) նախատեսված հանցանքը կատարելու համար օգտագործում է քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձի, սակայն վերջինս իր կամքով այդ արարքը չի իրականացնում, կամ դրա փոխարեն կատարում է ՀՀ քր. օր.-ի 138 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (անչափահասի բռնաբարություն) նախատեսված արարք, որի արդյունքում տուժողի առողջությանը պատճառվում է միջին ծանրության վնաս, ապա օգտագործողի արարքը պետք է որակվի քր. օր.-ի 35-131 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով՝ որպես անչափահասին առևանգելու նախապատրաստություն:

5. *Եթե միջնորդավորված կատարողը հանցանքը կատարելու համար օգտագործում է քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձի, սակայն դրա կատարման ընթացքում արարքը վերաճում է քր. օր.-ով նախատեսված դրան միաբնույթ մեկ այլ հանցանքի, ապա միջնորդավորված կատարողի արարքը որակվում է իր դիտավորությամբ ընդգրկված հանցագործության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածով:* Օրինակ՝ եթե միջնորդավորված կատարողը քր. օր.-ի 177 հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով (բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողություն) նախատեսված հանցանքը կատարելու համար օգտագործում է քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձի, սակայն դրա կատարման ընթացքում արարքը վերաճում է բնակարան ապօրինի մուտք գործելով կողոպուտի, ապա օգտագործողի արարքը

որակվում է քր. օր.-ի 177 հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով՝ որպես բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողություն:

6. *Եթե միջնորդավորված կատարողը հանցանքը կատարելու համար օգտագործում է քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձի, սակայն արդյունքում կատարվում է նվազ վրանգավոր արարք, ապա միջնորդավորված կատարողի արարքը որակվում է իր դիտարկությամբ ընդգրկված հանցագործության փորձ:* Օրինակ՝ եթե միջնորդավորված կատարողն առանձին դաժանությամբ սպանություն կատարելու համար օգտագործում է քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձի, սակայն վերջինս կատարում է ՀՀ քր. օր.-ի 104 հոդվածի 1-ին մասով նախատեսված սպանություն, ապա օգտագործողի արարքը պետք է որակվի քր. օր.-ի 34-104 հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով՝ որպես առանձին դաժանությամբ կատարված սպանության փորձ:

7. *Եթե միջնորդավորված կատարողը հանցանքը կատարելու համար օգտագործում է, իր կարծիքով, քրեական պատասխանատվության փարիքի չհասած անձի, սակայն հետագայում պարզվում է, որ վերջինս հասած է եղել հանցագործության սուբյեկտի համար օրենքով սահմանված փարիքի, ապա օգտագործողի արարքը պետք է որակվի ըստ դիտարկության ուղղվածության՝ որպես համապատասխան հանցագործության միջնորդավորված կատարում:* Օրինակ՝ եթե անձը ՀՀ քր. օր.-ի 177 հոդվածով նախատեսված հանցանքը (գողություն) կատարելու համար օգտագործում է, իր կարծիքով, տասներեք տարեկան անձի, սակայն հետագայում պարզվում է, որ վերջինս տասնհինգ տարեկան է, ապա օգտագործողի արարքը պետք է որակվի քր. օր.-ի 177 հոդվածի համապատասխան մասով կամ կետով: Պարզապես այս պարագայում հանցագործության անմիջական կատարողը ևս պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության. նրա արարքը պետք է որակվի քր. օր.-ի 177 հոդվածի համապատասխան մասով և/ կամ կետով:

8. *Եթե անձը հանցանքը կատարելուն դրդում է, իր կարծիքով, քրեական պատասխանատվության փարիքի հասած անձի, սակայն հետագայում պարզվում է, որ վերջինս դեռ չէր հասել հանցագործության սուբյեկտի համար օրենքով նախատեսված փարիքի, ապա առկա է չհաջողված հանցակցություն, և քրեական պատասխանատվ-*



վության փարիքի չհասած անձի հանցանքի կատարմանը դըրդողի արարքը պետք է որակվի որպես հանցագործության նախապարաստություն (եթե, իհարկե, կատարվածը ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն է): Այդ անձի արարքը, համապատասխան հարկանիշների առկայության դեպքում, պետք է որակվի նաև ՀՀ քր. օր.-ի 34-165-րդ հոդվածով՝ որպես քրեական պատասխանավության փարիքի հասած անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու փորձ: Այսպես, օրինակ՝ եթե տասնութ տարին լրացած անձը, ով քր. օր.-ի 177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքը (առանձնապես խոշոր չափերով կատարված գողություն) կատարելուն դրդում է, իր կարծիքով, տասնվեց տարեկան անձի, սակայն հետագայում պարզվում է, որ վերջինս տասներեք տարեկան է, ապա դրդողի արարքը պետք է որակվի քր. օր.-ի 35-177 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 34-165-րդ հոդվածի 4-րդ մասով՝ որպես առանձնապես խոշոր չափերով գողության նախապատրաստություն և քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասին ծանր հանցանքի կատարմանը ներգրավելու փորձ:

Հարկ է նշել նաև, որ հատուկ սուբյեկտով որոշ հանցագործություններում, այդ հանցագործությունների բնույթով պայմանավորված, միջնորդավորված կատարումն անհնար է: Օրինակ՝ դասալքության պարագայում:

Դատական պրակտիկայում հանդիպող իրավիճակները երբեմն առաջ են քաշում հետևյալ հարցադրումը. արդյո՞ք առկա է համակատարում այն դեպքում, երբ տվյալ հանցագործության սուբյեկտ համարվող անձը հանցանքը կատարում է (մասամբ կամ ամբողջությամբ) այնպիսի անձի հետ, ով տվյալ հանցագործությանը մասնակցում է միջնորդավորված ձևով: Այլ խոսքով՝ առկա՞ է համակատարում այն դեպքում, երբ հանցագործությանը մասնակցում են երկու կատարող, որոնցից մեկը տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմն իրականացնում է անմիջականորեն, իսկ մյուսը՝ միջնորդավորված կատարման ձևով:

Խնդիրն այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքում առկա կատարողի հասկացության ձևակերպումից (հոդված 38-ի 2-րդ մաս) ստացվում է այնպես, որ երկու կամ ավելի անձանց արարքները կարող են

համակատարում որակվել միայն այն դեպքում, երբ նրանք **անմիջականորեն** են մասնակցում հանցանքի կատարմանը<sup>187</sup>: Այսինքն՝ եթե անձը միջնորդավորված ձևով է կատարում հանցանքը, ապա նա համակատարող չի կարող համարվել: Օրինակ՝ եթե հանցավորն իր տասներեքամյա որդուն ներգրավում է հանցանքի կատարմանը, որպեսզի վերջինս մեկ այլ հանցագործության սուբյեկտ համարվող անձի հետ համատեղ մասնակցի զգալի չափերի գողության իրականացմանը, ապա, ըստ օրենսդրական ձևակերպման, կբացակայի խմբի կազմում նախնական համաձայնությամբ հանցանքը կատարելու որակյալ հատկանիշը, քանզի գողության օբյեկտիվ կողմն անմիջականորեն իրականացնող անձանցից միայն մեկն է եղել քրեական պատասխանատվության սուբյեկտ:

Արդյունքում ստեղծվում է անտրամաբանական մի վիճակ, որը կարող է հաղթահարվել օրենսդրական փոփոխությունների ճանապարհով: Այսպես, քննարկվող օրինակում, երբ գողության օբյեկտիվ կողմը քրեական պատասխանատվության մի սուբյեկտի կողմից իրականացվում է անմիջականորեն, իսկ մյուսի կողմից՝ միջնորդավորված՝ օգտագործելով քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի, ապա, անկախ այդ հանգամանքից, կատարվածը պետք է դիտել համակատարում, և նրանց արարքը որակելիս, այլ առավել որակյալ հանգամանքների բացակայության դեպքում, հղում կատարել հանցանքը խմբի կողմից կատարված լինելու որակյալ հանգամանքին:

Հարկ է արձանագրել նաև, որ ՀՀ քրեական գործող օրենսգիրքը միջնորդավորված կատարումը հնարավոր է համարում միայն կատարողի պարագայում: Մյուս հանցակիցների կողմից իրենց դերից բխող արարքները միջնորդավորված կատարելու հնարավորության վերաբերյալ չկա որևէ կարգավորում: Տվյալ իրավիճակը, կարծում ենք, անտրամաբանական է, քանի որ միջնորդավորված կարող է իրականացվել նաև հանցագործության կազմակերպումը, դրոշությունը և օժանդակությունը: Օրինակ՝ օժանդակողը հանցագործության գործիքը կարող է կատարողին փոխանցել ոչ թե անձամբ, այլ 14 տարին չլրացած անչափահասի միջոցով: Նկարագրված օրինա-

---

<sup>187</sup> Համակատարման՝ որպես կատարման ինքնուրույն ձևի որակման առանձնահատկություններին անդրադարձ կկատարվի հաջորդիվ:

կում, ըստ էության, առկա է միջնորդավորված օժանդակություն, իսկ օրենսդրական այն հիմքը, որով հնարավոր կլինի լուծել տվյալ անձի քրեական պատասխանատվության հարցը, կարծես, բացակայում է: Ուստի՝ օրենսդրական փոփոխություններով անհրաժեշտ է լրացնել այս բացը՝ սահմանելով միջնորդավորված կատարման հնարավորություն ոչ միայն կատարողի, այլև կազմակերպչի, դրդիչի և օժանդակողի համար:

Այս առումով հարկ է նշել, որ, եթե քրեաիրավական իմաստով «արարք» է համարվում ոչ միայն անձի կողմից հանցավոր արդյունքին ուղղված սեփական մարմնաշարժումների համակցությունը, այլև հանցավոր մտադրության իրականացման նպատակով բնական որոշ օրինաչափությունների, բնության ուժերի, կենդանիների կամ այլ անձանց՝ որպես «հանցագործության գործիքների» օգտագործումը<sup>188</sup>, ապա հանցակցությունն ընդհանրապես և օժանդակությունը, մասնավորապես՝ որպես ինքնուրույն հանցավոր արարքի կատարում, կարող է իրականացվել ինչպես անձի կողմից սեփական մարմնաշարժումների (անմիջականորեն), այնպես էլ այլ անձանց «օգտագործելու» (միջնորդավորված կերպով) միջոցով, ինչը չի զրկում տվյալ արարքն իր քրեաիրավական նշանակությունից:

#### **Բ. Հանցագործության կազմակերպիչը:**

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

#### **1) Կազմակերպիչ է համարվում այն անձը, ով կազմակերպել է հանցանքի կախարումը:**

Դատական պրակտիկայում հանցանքի կատարումը կազմակերպել ասելով՝ հասկացվում է հանցանքը համատեղ կատարելու համար պլանների մշակումը, հանցակիցների որոնումը, նրանց միջև դերերի բաշխումը, նյութատեխնիկական ապահովումն իրականացնելը, անվտանգության միջոցներ ձեռնարկելը՝ համատեղ հանցավոր գործունեությունը չբացահայտվելու, հանցակիցների գաղտնի մնալու ուղղությամբ և այլն:

---

<sup>188</sup> Տե՛ս, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով): Դասագիրք բուհերի համար: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 135:

**2) Կազմակերպիչ է համարվում այն անձը, ով ղեկավարել է հանցանքի կատարումը:**

Հանցանքի կատարումը ղեկավարելը ենթադրում է հանցակիցների գործողությունների համակարգում, հանցագործության ընթացքում նրանց արարքների կառավարում: Ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկան՝ անձը, ով ղեկավարում է հանցանքի կատարումը, կարող է անձամբ ներկա չգտնվել դեպքի վայրում, այլ կառավարումն իրականացնել միանգամայն այլ վայրից, այդ թվում՝ այլ երկրից, կապի տարբեր միջոցներով:

Պետք է նկատի ունենալ, որ հանցանքի կատարումը ղեկավարելը հնարավոր է նաև առանց նախնական կազմակերպչության, օրինակ՝ երբ խմբի մեկ անդամը սեփական նախաձեռնությամբ իր վրա է վերցնում այլ հանցակիցների գործողությունների համակարգման ու ղեկավարման գործառույթը: Այս դեպքում, սակայն, հանցանքը ղեկավարող անձի գործողությունները՝ որպես կազմակերպչություն, իրենց արտահայտությունը չեն գտնում արարքի որակման բանաձևում, քանի որ տվյալ հանցակիցը միաժամանակ հանդես է գալիս որպես կատարող: Ասվածը չի նշանակում, որ անտեսվում է այդ հանգամանքը, պարզապես հանցավոր գործունեության մեջ անձի ակտիվ դերը գնահատվում է որպես պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք (ՀՀ քր. օր.-ի 63-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ):

**3) Կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն կամ ղեկավարել է դրանք:**

Կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն ստեղծած կամ ղեկավարած անձի արարքի քրեաիրավական գնահատականի հարցը լուծելիս պետք է նկատի ունենալ, որ կատարվածի որակման բանաձևում չի արտացոլվում ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածը: ՀՀ քր. օր.-ի 41-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կազմակերպված խումբ, հանցավոր համագործակցություն ստեղծած կամ դրանք ղեկավարած անձը ենթակա է պատասխանատվության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված դեպքերում կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ ղեկավարելու համար, ինչպես նաև

դրանց կողմից կատարված բոլոր հանցանքների համար, եթե դրանք ընդգրկվել են նրա դիտարկությանը: Այդ իսկ պատճառով, ՀՀ քր. օր.-ի 162-րդ, 222-րդ, 223-րդ, 224-րդ հոդվածներով նախատեսված հանցավոր միավորումներ ստեղծած կամ ղեկավարած անձը պատասխանատվության է ենթակա որպես կատարող, և վերջինիս արարքը որակելիս ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածին հղում չի կատարվում:

Միևնույն ժամանակ, եթե անձի կողմից հանցավոր խումբ ստեղծելը կամ ղեկավարելը՝ որպես ինքնուրույն հանցագործություն, նախատեսված չէ քրեական օրենսգրքի Հատուկ մասում, և այդ խումբը դեռևս չի հասցրել այլ հանցանք կատարել, ապա նշված խումբը ստեղծած անձը ենթակա է պատասխանատվության համապատասխան հանցագործության նախապատրաստության համար<sup>189</sup>:

#### **Գ. Հանցագործության դրդիչը:**

Հանցագործության դրդիչության որակումը ևս ունի իր առանձնահատկությունները, որը պահանջում է առանձին ուշադրություն և առաջացնում պարզաբանման լրացուցիչ անհրաժեշտություն: Այսպես՝ ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Դրդիչ է համարվում այն անձը, ով մեկ ուրիշ անձի դրդել է հանցանք կատարելու՝ համոզելու, նյութապես շահագրգռելու, սպառնալիքի միջոցով կամ այլ եղանակով»:

Դրդիչությունն անձի նպատակաուղղված գործունեությունն է՝ այլ անձին (պոտենցիալ կատարողին) հակելու հանցագործության կատարմանը: Դրդիչության առկայության համար անհրաժեշտ է, որ անձն իր գործողություններով **կոնկրետ անձի** (անձանց խմբի) մոտ առաջացնի **կոնկրետ հանցանքը կատարելու դիտարկություն**, կամ իր այդ գործողություններով **ամրապնդի այլ անձի մոտ առկա դիտարկությունը**: Հետևապես, հանցագործության դրդիչություն չի կարող համարվել անորոշ շրջանակի անձանց հանցագործության

<sup>189</sup> Այս կապակցությամբ տրամաբանական կլիներ, որ ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածի 3-րդ մասի ձևակերպումից (կազմակերպչի հասկացությունից) հանվեր հետևյալ հատվածը. «(...), ինչպես նաև ստեղծել է կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն կամ ղեկավարել է դրանք»:

հակելը: Օրինակ՝ հանցանք կատարելու հրապարակային կոչերը<sup>190</sup>, ինչպես նաև հանցագործության ընդհանուր քարոզչությունը, այս կամ այն հանցագործությունների նրբությունները սովորեցնելը, անձի անբարենպաստ ազդեցությունն այլ անձի վրա՝ առանց կոնկրետության և այլն:

Հանցակցությամբ կատարված հանցագործությունները որակելիս պետք է նկատի ունենալ, որ որոշ դեպքերում դրդիչի արարքը կարող է պարունակել ինքնուրույն հանցակազմ, այսինքն՝ **դրդչության օբյեկտիվ կողմը կարող է ձևավորել իդեալական համակցություն**, ինչը հնարավոր է հետևյալ իրավիճակներում.

1) *Երբ որպես դրդչության եղանակ օգտագործվում է բռնությունը, սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքը*: Այս պարագայում հանցավորի արարքը որակվում է որպես անձի առողջության դեմ ուղղված համապատասխան հանցագործության համար պատասխանատվություն նախատեսող հողվածով և որպես այլ հանցագործության դրդչություն:

2) *Երբ որպես դրդչության եղանակ օգտագործվում է կաշառք տալը*: Օրինակ՝ երբ անձը կաշառք է տալիս քննիչին հանցագործության մեջ մեղադրվող որդուն քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելու նպատակով: Քննիչի կողմից պայմանավորված գործողությունները կատարելու դեպքում անձի արարքը ենթակա է որակման հանցագործությունների համակցությամբ. որպես կաշառք տալ (ՀՀ քր. օր.-ի հողված 312) և քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելու հանցակցություն՝ դրդչության ձևով (ՀՀ քր. օր.-ի հողված 38-351):

3) *Երբ դրդիչը հանցագործության կատարմանն է ներգրավում տվյալ հանցագործության համար քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասի*: Քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասի կողմից հանցանքը կատարելու դեպքում դրդիչի արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի 165-

<sup>190</sup> Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ քրեական օրենսգրքում պատասխանատվություն է նախատեսված կոնկրետ հանցագործություններ կատարելուն ուղղված հրապարակային կոչերի համար: Այս դեպքերում, սակայն, խոսքն անմիջական կատարման մասին է: Օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի հողվածներ 301-ով, 385-ով նախատեսված հանցագործությունները և այլն:

րդ հողվածի համապատասխան մասով, և՛ որպես այն հանցագործության դրոշմություն, որի կատարմանը դրդել է տվյալ հանցագործության սուբյեկտ հանդիսացող անչափահասին՝ հղում կատարելով ՀՀ քր. օր-ի 38-րդ հոդվածին:

4) *Երբ պաշտոնատար անձի կողմից որպես հանցագործության դրոշմության եղանակ է օգտագործվում ակնհայտ ապօրինի հրամանը կամ կարգադրությունը:* Այն դեպքում, երբ պաշտոնատար անձը իր ենթակայի կողմից հանցանքը կատարելու համար վերջինիս տալիս է ապօրինի հրաման կամ կարգադրություն, ով գործում է, գիտակցելով այդ հրամանի (կարգադրության) ապօրինի լինելը, պաշտոնատար անձի արարքը, բացի համապատասխան հանցագործության դրոշմությունից, համակցությամբ պետք է որակել նաև ՀՀ քր. օր.-ի 308-րդ (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը) կամ 309-րդ (պաշտոնեական լիազորություններն անցնելը) հոդվածով:

5) *Երբ անձը կատարում է շորթում՝ դրանով իսկ դրդելով գույքը փրկապետողին իրեն հանձնել երրորդ անձին պատկանող գույքը, այսինքն՝ իրականացնել հափշտակություն:* Նկարագրված իրավիճակում, համապատասխան հատկանիշների առկայության դեպքում, դրդիչի արարքը պետք է որակվի որպես շորթում և հափշտակության համապատասխան եղանակի դրոշմություն: Կամ, օրինակ՝ երբ անձը կատարում է թմրամիջոցի շորթում՝ դրանով իսկ դրդելով այլ անձի իրեն ապօրինի իրացնել թմրամիջոցը: Տվյալ դեպքում արարքը պետք է որակվի որպես թմրամիջոցի շորթում և թմրամիջոցի ապօրինի իրացման դրոշմություն:

Հանցանքների համակցությամբ է որակվում նաև այն դրդիչի գործողությունները, որը դրդում է այլ անձի իրեն ապօրինի իրացնել թմրամիջոց, հետո ապօրինի ձեռք է բերում այն, կամ՝ դրդում է այլ անձի իրեն ապօրինի իրացնել հրազեն, այնուհետև ապօրինի ձեռք է բերում այդ հրազենը և այլն:

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ դրոշմությունը ձևավորվում է այն դեպքում, երբ համատեղ հանցավոր գործունեության մեջ ի հայտ է գալիս կատարողի անձը: Այսինքն՝ երբ դրդիչը հաջողությամբ կարողանում է կատարողին հակել հանցանքի կատարմանը (ինչպես ավարտված, այնպես էլ չավարտված): Մինչդեռ, եթե անձին չի հա-

ջողվում մեկ ուրիշի (պոտենցիալ կատարողի) մեջ հանցանքը կատարելու դիտավորություն առաջացնել իր կամքից անկախ հանգամանքներով, ապա հանցակցության մասին խոսք չի կարող գնալ: Նկարագրված իրավիճակում առկա կլինի չհաջողված հանցակցություն՝ համապատասխան քրեաիրավական հետևանքներով:

Դատական պրակտիկայում դրդիչի արարքին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու համար երբեմն անհրաժեշտություն է առաջանում դրդչությունը տարբերակելու հանցակցության մյուս տեսակներից: Ասվածի կապակցությամբ անհրաժեշտ է հաշվի առնել, որ.

1) *Հանցագործությանը բռնության կամ սպառնալիքի եղանակով հակելը կարող է դրդչություն որակվել միայն այն պարագայում, երբ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը չեն բացառում անձի արարքի հանցավորությունը (ՀՀ քր. օր.-ի 45-րդ հոդված):* Հակառակ դեպքում՝ անձը, ով բռնության կամ սպառնալիքի եղանակով հակել է մեկ ուրիշին հանցանքի կատարմանը, ինչի արդյունքում վերջինս չի ղեկավարել սեփական գործողությունները, պետք է պատասխանատվության ենթարկվի որպես այդ հանցագործության միջնորդավորված կատարող:

2) *Նույն կերպ պետք է որակվեն այն վերադասի գործողությունները, ով ենթակային տալիս է նրա համար պարտադիր հրաման կամ կարգադրություն՝ պայմանով, որ վերջինս չի գիտակցում դրա հանցավոր լինելը:* Այս իրավիճակում հարցը լուծվում է ՀՀ քր. օր.-ի հոդված 47-ի կանոններով: Հանցավոր հրաման տվողը հանդես է գալիս որպես հանցագործության միջնորդավորված կատարող:

3) *Դրդչություն չեն կարող որակվել այն դեպքերը, երբ անձը հանցագործության կատարմանն է հակում տվյալ հանցագործության համար քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձի:* Օրինակ՝ հանցավորը համոզելու եղանակով իր տասներեքամյա որդու մոտ առաջացնում է բնակարանային գողություն կատարելու դիտավորություն: Հանցանքը կատարվելու դեպքում հանցակցությունը կբացակայի, իսկ քրեական պատասխանատվության տարիքի չհասած անչափահասին հանցանքի կատարմանը դրդած անձի արարքը կքննարկվի միջնորդավորված կատարման համատեքստում:



4) *Կազմակերպչի և դրդիչի փարբերությունն այն է, որ դրդիչը չի պլանավորում հանցանքի կատարումը և չի ղեկավարում այն: Այն դեպքերում, երբ անձը ոչ միայն մեկ ուրիշին հակում է հանցանքի կատարմանը, այլև իրականացնում է կազմակերպչական գործունեություն, նրա արարքը որակվում է միայն որպես հանցագործության կազմակերպչություն, քանզի այն համարվում է առավել վտանգավոր եղանակ, քան դրդչությունն է:*

5) *Հանցագործություն կազմակերպելուն դրդելը պետք է որակել որպես հանցագործության կազմակերպում, դրդչությանը դրդելը՝ դրդչություն, իսկ օժանդակելուն դրդելը՝ օժանդակություն: Այս առումով հարկ է նկատել, որ ՀՀ քր. օր.-ը չի օգտագործում կատարողին հանցակցելու պայմանը, այլ նախատեսում է հանցագործությանը հանցակցելու գաղափարը, ինչը ենթադրում է, որ հանցակցել (կազմակերպել, դրդել, օժանդակել) հնարավոր է ոչ միայն կատարողին, այլև մյուս հանցակիցներին:*

#### **Դ. Հանցագործության օժանդակողը:**

Գործնականում առանձին խնդիրներ են ի հայտ գալիս նաև օժանդակողի արարքի քրեաիրավական գնահատականի հարցը որոշելիս: Այսպես, ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Օժանդակող է համարվում այն անձը, ով հանցագործությանն օժանդակել է խորհուրդներով, ցուցումներով, փեղեկատվություն կամ միջոցներ, գործիքներ փրամադրելով կամ խոչընդոտները վերացնելով, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է պարտակել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է ձեռք բերել կամ իրացնել այդպիսի առարկաները»:*

Հարկ է նկատել, որ հանցագործությանն օժանդակելու վերոհիշյալ եղանակներն ու միջոցները սպառիչ են, ինչը ենթադրում է, որ օրենքում չնշված եղանակներով կամ միջոցներով օժանդակությունը բացառվում է: Դատական պրակտիկայում, սակայն, օժանդակության եղանակներին երբեմն տրվում է լայն մեկնաբանություն, ինչի արդյունքում որպես օժանդակություն են գնահատվում նաև անձի այն արարքները, որոնք ուղղակիորեն նախատեսված չեն ՀՀ

քր. օր.-ի 38-րդ հոդվածի 5-րդ մասով: Մասնավորապես, այդ դեպքերին են առնչվում:

**1. Մի շարք հանցագործությունների ֆիզիկական միջնորդությունը, որը դրսևորվում է ապօրինի գործարքների շղթայում (օրինակ՝ թմրամիջոցների, ռազմամթերքի ապօրինի շրջանառությունում):**

Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության վերաբերյալ դատական պրակտիկայի ուսումնասիրությունները փաստում են, որ, եթե միջնորդը ձեռք է բերում թմրամիջոցը այն ձեռք բերողի խնդրանքով և դրամական միջոցներով ու փոխանցում վերջինիս, ապա այդ անձը հանդիսանում է թմրամիջոցի ձեռքբերման օժանդակող:

Այս կապակցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ *Ա.Ասլանյանի* վերաբերյալ գործով, վերլուծելով «իրացում» եզրույթի քրեաիրավական բովանդակությունը, արձանագրել է, որ «(...) *իրացման նպատակը և իրացումը բացակայում են, եթե թմրամիջոցները կամ հոգեմետ նյութերը միջնորդի կողմից ձեռք են բերվել հետևյալ չորս պայմանների միաժամանակյա առկայությամբ.*

ա) սպառողի խնդրանքով և դրամական միջոցներով,

բ) սպառողի անձնական գործածմանը համապատասխան քանակով,

գ) առանց դրանց նկատմամբ տնօրինման իրավունքի,

դ) միջնորդի դիտարկությունն ընդգրկում է ոչ թե իրացումը, այլ ձեռքբերմանն աջակցելը:

*Ընդ որում, կախված այն հանգամանքից, թե կոնկրետ ո՞ր դերակատարի՝ իրացնողի՞, թե՞ ձեռք բերողի շահերից ելնելով է գործում միջնորդը, նրա գործողությունները պետք է որակվեն որպես իրացման կամ ձեռքբերման հանցակցություն՝ օժանդակության ձևով»<sup>191</sup>:*

Պետք է նկատել, որ թմրամիջոցների առուվաճառքի հանցավոր գործարքի միջնորդությունը՝ որպես օժանդակություն գնահատելը, չի բխում քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի ձևակերպումից, քանի որ հանցագործության *առարկան* (տվյալ դեպքում՝ թմրամիջոցը) այլ անձի փոխանցելը, հանձնելը կամ տրամադրելը՝ որպես

<sup>191</sup> Տե՛ս Ա.Ասլանյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 23.12.2010թ. թիվ ԵԷԴ/0125/01/09 որոշումը:

օժանդակության եղանակ, ուղղակիորեն նախատեսված չէ սույն հոդվածով (հոդվածում խոսվում է միայն *միջոցներ, գործիքներ* տրամադրելու մասին)<sup>192</sup>: Բացի այդ՝ եթե, նույնիսկ, դիտենք, որ նկարագրված դեպքերում գործ ունենք հանցագործության առարկան նախապես խոստացված ձեռքբերման՝ որպես օժանդակության եղանակի հետ (թեև օժանդակության տվյալ եղանակն ունի բուրովին այլ քրեաիրավական բովանդակություն), միևնույնն է, սպառողին թմրամիջոց փոխանցած անձի արարքը որակելիս չի կարող հղում կատարվել ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածին, քանզի տվյալ անձի արարքն իր մեջ պարունակում է համապատասխան հանցագործությունների (ՀՀ քր. օր.-ի հոդված 266 կամ 268) օբյեկտիվ կողմի այս կամ այն դրսևորումը (փոխադրելը, առաքելը, պահելը): Իսկ այն դեպքում, երբ անձը մասնակցում է հանցագործության օբյեկտիվ կողմի կամ դրա մասի կատարմանը, նրա արարքը որակելիս ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածին հղում չի կատարվում (հոդված 39-ի 2-րդ մաս):

**2. Հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմն այնպիսի անձի կողմից կատարելը, ով օժտված չէ այդ հանցագործության սուբյեկտի հատկանիշներով:**

ՀՀ քր. օր.-ի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածում նշված հանցագործության հատուկ սուբյեկտ չհամարվող անձը, ով մասնակցել է այդ հոդվածով նախատեսված հանցանքի կատարմանը, տվյալ հանցագործության համար կարող է պատասխանատվություն կրել միայն որպես կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող: Այս առումով, թեև հանցագործության օբյեկտիվ կողմի կատարումն, ինքնին, որպես օժանդակության եղանակ նկարագրված չէ ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածի հինգերորդ մասում, սակայն երբեմն տվյալ դեպքերը գնահատվում են որպես օժանդակություն: Անշուշտ, առկա է օրենսդրա-

<sup>192</sup> Ա.Ասլանյանի վերաբերյալ գործով թիվ ԵԷԴ/0125/01/09 որոշմամբ՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը միջնորդի գործողությունները գնահատել է որպես ինտելեկտուալ օժանդակություն այն հիմնավորմամբ, որ Ա.Ասլանյանը, գործելով թմրամիջոց սպառողի՝ Կ.Պետրոսյանի շահերից ելնելով, նրան խոստացել է ձեռք բերել հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկա՝ թմրամիջոց:

կան կարգավորման խնդիր, որը պետք է հաղթահարվի (կքըննարկվի հետագայում):

**3. Տուժողին (խաբեությամբ, վստահությունը չարաշահելով, բռնություն գործադրելով և այլ եղանակով) հանցագործության կատարման վայր բերելը նույնպես երբեմն որակվում է որպես օժանդակություն:**

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատել, որ տուժողին (խաբեությամբ, վստահությունը չարաշահելով, բռնություն գործադրելով կամ այլ եղանակով) հանցագործության կատարման վայր բերելը, թեև, որպես օժանդակության ինքնուրույն եղանակ նկարագրված չէ ՀՀ քր. օր.-ի հոդված 38-ում, սակայն դրա նախատեսված առանձին եղանակի՝ խոչընդոտ վերացնելու, տարածական մեկնաբանությունը, այնուամենայնիվ, կարող է բովանդակել նաև քննարկվող իրավիճակը:

**4. Կատարողի հեղինակավոր վարքագծին առնչվող, մասնավորապես՝ հանցանքը թաքցնելու մեխանիզմների վերաբերյալ նախապես տրված խորհուրդները և ցուցումները որակվում են որպես ինտելեկտուալ օժանդակություն, այն էլ, ոչ թե հանցանքը կատարելու վերաբերյալ տեղեկատվություն կամ ցուցումներ տրամադրելու եղանակով, այլ՝ որպես նախապես խոստացված պարտականություն:**

Համատեղ հանցավոր գործունեությունում օժանդակողը, որպես կանոն, օգնություն է ցույց տալիս կատարողին (համակատարողներին): Ասվածը, սակայն, չի բացառում, որ օժանդակություն ցույց տրվի ոչ միայն կատարողին, այլև մյուս հանցակիցներին (կազմակերպչին, դրդիչին, օժանդակողին), ինչը ևս պետք է քրեաիրավական գնահատականի արժանանա:

Անձին հանցագործության օժանդակող ճանաչելու համար բավարար է, որ վերջինս ընդհանուր գծերով պատկերացնի այն հանցագործության ընդհանուր բնութագիրը, որի կատարմանն ինքը մասնակցում է: Դրանով պայմանավորված՝ օժանդակողը կարող է գործել անորոշ (չկոնկրետացված) դիտավորությամբ անգամ այն պարագայում, երբ կատարողի դիտավորությունը կոնկրետ-որոշակի է: Նման դեպքերում օժանդակողի արարքը որակվում է ըստ կատարողի կողմից իրականացված հանցագործության փաստացի վրա հասած հետևանքների: Հարկ է նշել, որ տվյալ հանգամանքի

պարզումը կարևոր նշանակություն ունի կատարողի սահմանազանցման հարցը որոշելու տեսանկյունից, ինչը կքննարկվի հաջորդիվ:

Բացի այդ, հանցագործության օժանդակությունը դրդչությունից տարբերվում է նրանով, որ, եթե դրդչության դեպքում անձի արարքներն ուղղվում են պոտենցիալ կատարողի մեջ հանցանքը կատարելու ցանկություն (դիտավորություն) առաջացնելուն, որը հետագայում նրան մղելու է հանցանքի կատարմանը, ապա օժանդակության պարագայում անձն օգնում է կատարողին իրականացնել արդեն ձևավորված հանցավոր դիտավորությունը:

Միևնույն ժամանակ, հանցանքը կատարելու վերաբերյալ խորհուրդ կամ ցուցում տալու եղանակով կատարվող օժանդակությունը դրդչությունից տարանջատելու համար հարկ է ելնել այն գաղափարից, որ այս եղանակով օժանդակությունն իրականացվում է հանցանքի օբյեկտիվ հանգամանքների կապակցությամբ, և չի առնչվում հանցակցի սուբյեկտիվ ոլորտում ընթացող հոգեբանական գործընթացներին (հանցանքը կատարելու դիտավորության առաջացմանը): Այսպես, եթե խորհուրդը կամ ցուցումը, որը մի հանցակիցը տալիս է մյուսին, վերաբերում է ոչ թե հանցանքի օբյեկտիվ կողմի կատարմանը կամ այն քողարկելուն, այլ պարունակում է հավաստիացում կոնկրետ հանցանքը կատարելու անհրաժեշտության, նպատակահարմարության, «օգտակարության» վերաբերյալ, որով առաջանում կամ ամրապնդվում է մյուս հանցակցի դիտավորությունը, ապա տրված խորհուրդը կամ ցուցումը պետք է դիտել ոչ թե որպես օժանդակություն, այլ հանցագործության դրդչություն:

Հանցակիցների դերերով պայմանավորված, հանցագործությունների որակման առանձնահատկությունները քննարկելիս հարկ է ուշադրություն հրավիրել նաև այն հանգամանքին, որ նույն անձը կարող է միաժամանակ կամ հաջորդաբար իրականացնել միանգամից մի քանի հանցակցի գործառույթ: Նման դեպքերում անձի արարքի քրեաիրավական գնահատականի հարցը լուծվում է հետևյալ կանոնների հաշվառմամբ.

*ա) եթե մյուս հանցակիցները (կազմակերպիչը, դրդիչը, օժանդակողը) միաժամանակ մասնակցում են հանցագործության օբյեկտիվ կողմի կատարմանը (համակատարողներ), ապա նրանց արարք-*

ները որակելիս ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածին հղում չի կատարվում (քր. օր.-ի 39-րդ հոդվածի 2-րդ մաս),

բ) եթե հանցագործության կազմակերպիչը միաժամանակ իրականացրել է դրդիչի կամ (և) օժանդակողի դերից բխող գործողություններ, ապա վերջինիս մեղսագրվում է միայն հանցագործության կազմակերպչությունը, քանզի այն իր մեջ ներառում է ինչպես հանցագործության դրդչությունը, այնպես էլ օժանդակությունը,

գ) եթե անձը հանցանքը կատարելիս միաժամանակ կամ հաջորդաբար իրականացնում է ինչպես հանցագործության դրդիչի, այնպես էլ օժանդակողի դերից բխող գործողություններ, ապա նրա արարքը որակելիս պետք է հղում կատարվի ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածի ինչպես 4-րդ, այնպես էլ 5-րդ մասերին:

Այս կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ, եթե անձը, բացի մեկ ուրիշին հանցանքի կատարման դրդելուց, նաև օժանդակել է նրան, ապա նա հանդիսանում է ոչ թե դրդիչ կամ օժանդակող, այլ կազմակերպիչ<sup>193</sup>: Դժվար է համաձայնել այս մոտեցմանը, քանզի ՀՀ քրեական գործող օրենսգրքում բացակայում է այն օրենսդրական կոնկրետ հիմքը, որը նման իրավիճակներում հնարավոր կդարձնի անձի արարքը մեխանիկորեն որպես հանցագործության կազմակերպչություն որակելը:

Բացի այդ՝ բարդ է պատկերացնել, որ կատարողի մեջ հանցանքը կատարելու դիտավորություն առաջացրած անձի կողմից տվյալ կատարողին հանցանքի միջոց կամ գործիք տրամադրելը, բոլոր իրավիճակներում, կարելի է դիտարկել որպես հանցագործության ղեկավարում կամ կազմակերպում, ինչը պահանջում է կազմակերպչի օրենսդրական բնորոշումը (ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածի 3-րդ մաս):

Պրակտիկայում որոշակի դժվարություններ են առաջանում նաև օժանդակողին կատարողից սահմանազատելու հարցերում: Այդ կապակցությամբ համապատասխան չափանիշներին անդրադարձել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, համապատասխան որոշումներով Դատարանն արձանագրել է.

<sup>193</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով): Դասագիրք բուհերի համար: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 271:

«(...) Եթե երկու կամ ավելի հանցակիցներ անմիջականորեն կատարում են հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող գործողությունները կամ դրանց մի մասը, ապա հանցակցությունը դրսևորվում է համակատարման ձևով: Համակատարում չէ հանցագործությանն այնպիսի մասնակցությունը, երբ հանցակիցներից մեկը փոխալ հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող ոչ մի գործողություն չի կատարել, այլ միայն օժանդակել է հանցագործությանը, այսինքն՝ եղել է օժանդակող ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով: Այսպիսով՝ օժանդակողը կատարողից տարբերվում է նրանով, որ նա հանցագործության օբյեկտիվ կողմն անմիջականորեն չի կատարում, այլ հանցագործությունը նախապատրաստելու ընթացքում կամ դրա ավարտման փուլում աջակցություն է ցույց տալիս կատարողին՝ սրեղծելով հանցագործության ավարտման իրական հնարավորություններ»<sup>194</sup>:

Այս հարցի առնչությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով գողությունը՝ խմբի կողմից նախնական համաձայնությամբ կատարված լինելու (համակատարում) հանգամանքին, արձանագրել է, որ «(...) այն դեպքում, երբ բնակարան ապօրինի մուտք գործելով գողությունը կատարվում է մեկից ավելի անձանց կողմից, արարքը կարող է որակվել որպես համակատարում, երբ անձը լրիվ կամ մասամբ կատարում է հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող գործողություններ: Հակառակ պարագայում անձի գործողությունները համապատասխան հանգամանքների առկայության դեպքում կարող են որակվել հանցակցության այլ ձևերով: Մասնավորապես, եթե հանցակիցը հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող գործողություն չի կատարել, սակայն հանցագործության կատարմանն աջակցել է, օրինակ, խորհուրդներով, ցուցումներով, փողեկափակություն կամ միջոցներ, գործիքներ տրամադրելով կամ խոչընդոտները վերացնելով (օրինակ՝ հսկում է դրսում, որպեսզի կատարողն առանց խոչընդոտի կատարի հափշտակությունը, սպասում է ավտոմեքենայի մեջ կատարողի կողմից գողացված իրերը հե-

<sup>194</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Ա.Մաթևոսյանի և Ռ.Հարությունյանի վերաբերյալ գործով 25.07.2008թ. թիվ ՎԲ-48/08 որոշման 29-30-րդ կետերը և Ա.Ասլանյանի վերաբերյալ գործով 23.12.2010թ. թիվ ԵԷԴ/0125/01/09 որոշումը:

*տազայում նրա հետ միասին ապահով վայր տեղափոխելու նպատակով և այլն), ապա նրա արարքը պետք է որակվի որպես բնական ասօրինի մուտք գործելով գողության օժանդակություն: (...)*<sup>195</sup>:

Այսպիսով, համակատարում է համարվում հանցագործությանն այնպիսի մասնակցությունը, որի պարագայում հանցակիցներից առնվազն երկուսն իրականացնում են տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը կամ դրա մասը: Միևնույն ժամանակ, համակատարում չի կարող համարվել հանցագործությանն այնպիսի մասնակցությունը, որի պարագայում անձանցից միայն մեկն է կատարում հանցագործության օբյեկտիվ կողմը, իսկ մյուսը (մյուսները) տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող որևէ գործողություն (անգործություն) չի (չեն) իրականացնում, այլ, օրինակ՝ օժանդակում է (են) հանցագործությանը:

#### **5.4. Հանցակցության ձևի որակումը**

Հանցակիցների դերերի (հանցակցի տեսակի) հստակ որոշումը հնարավորություն է տալիս անցում կատարելու հանցակցության համապատասխան ձևի բացահայտմանը: Ընդ որում՝ հանցակցության ձևի ճշգրիտ հաստատումն անհրաժեշտ է ոչ միայն այն դեպքում, երբ քր. օր.-ի Հատուկ մասի հոդվածում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարելը (նախնական համաձայնությամբ կամ առանց նախնական համաձայնության, կազմակերպված խմբի կողմից), այլև՝ երբ այդպիսի ծանրացնող հանգամանքի վերաբերյալ նշումը բացակայում է: Բացի այդ՝ հանցակիցների արարքների քրեաիրավական գնահատականի հարցը լուծելու, պատժի և պատասխանատվության անհատականացման տեսանկյունից կարևոր է հանցակցության այն ձևի որոշումը, որով դրսևորվել է երկու կամ ավելի անձանց համատեղ հանցավոր գործունեությունը:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգիրքն առանձնացնում է **հանցակցության հետևյալ ձևերը՝**

<sup>195</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Գ.Ղլիջյանի վերաբերյալ գործով 27.02.2015թ. թիվ ԳԴ5/0005/01/14 որոշման 13-րդ կետը:



ա) պարզ հանցակցություն (համակատարում),  
բ) բարդ կամ ընդհանուր հանցակցություն (հանցակցություն՝  
ընդհանուր դերաբաշխմամբ):

Հանցակցության ձևերի տարբերակման հիմքում հիմնականում ընկած է երկու չափանիշ՝ *հանցագործության մասնակիցների (հանցակիցների) միջև գոյություն ունեցող համաձայնության բնույթը* (սուբյեկտիվ չափանիշ) և *հանցանքը համարելու կատարելու եղանակը* (օբյեկտիվ չափանիշ): Հանցակցության յուրաքանչյուր ձևով և դրանում դրսևորվող հանցակցի տեսակով պայմանավորված, առանձնացվում են նաև համատեղ հանցավոր գործունեության որակման տարբեր իրավիճակներ:

**Ընդհանուր հանցակցության ձևը** բնութագրվում է նրանով, որ դերերը բաժանվում (բաշխվում) են հանցակիցների միջև. առկա է կատարող, ով անմիջականորեն իրականացնում է հանցագործության օբյեկտիվ կողմը, և նրա հետ հանդես են գալիս կազմակերպիչը, դրդիչը կամ օժանդակողը, ովքեր անմիջականորեն չեն մասնակցում հանցագործության օբյեկտիվ կողմի կատարմանը, այլ միայն պայմաններ են ստեղծում կատարողի կողմից հանցանքը հաջողությամբ կատարելու համար:

Հանցակցության այս ձևի առանձնահատկությունը հանցակիցների միջև դերերի բաշխումն է. մեկը դրդում է հանցանքի կատարմանը, մյուսը՝ կազմակերպում դրա կատարումը, երրորդը՝ օժանդակում դրա իրականացմանը, չորրորդը՝ կատարում այն: Դրանով պայմանավորված՝ հանցագործությանը մասնակցող անձանց կազմը կարող է տարբեր լինել:

Հանցակիցների քրեական պատասխանատվության պարադիգմայի ուսումնասիրությունները փաստում են, որ հանցակցության որակումն ընդհանրապես, ընդհանուր դերաբաշխմամբ հանցակցության ձևի դեպքում հանցակիցների արարքների որակումը մասնավորապես, իրականացվում է նորմատիվ և դոկտրինալ այն կանոններով, որոնց հիմքում ընկած են երկու առանցքային տեսությունների գաղափարական հիմնադրույթները. հանցակիցների աքցեստորային և նրանց անհատական պատասխանատվության տեսությունները:

**Հանցակիցների արցեստրային պատասխանատվության փեսություն** (լատ. accessories՝ լրացուցիչ) էությունն այն է, որ հանցակցության մեջ կենտրոնական դեմքը կատարողն է, ում շուրջ ծավալվում է մյուս հանցակիցների (կազմակերպչի, դրդիչի և օժանդակողի) ֆունկցիոնալ գործունեությունը: Հետևաբար, մյուս հանցակիցների արարքների քրեաիրավական գնահատականը մեծ մասամբ կախված է կատարողի (համակատարողների) գործողության (անգործության) քրեաիրավական գնահատականից, ինչը դրսևորվում է որակման հետևյալ կանոններում.

1. *Կատարողի արարքը որակվում է քրեական օրենսգրքի այն հոդվածով, որով պատասխանատվություն է նախատեսվում վերջինիս կողմից կատարված արարքի համար: Կազմակերպչի, դրդիչի և օժանդակողի արարքները ևս որակվում են քրեական օրենսգրքի Հատուկ մասի այն հոդվածով, որով որակվում է կատարողի արարքը՝ միաժամանակ հղում կատարելով ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածին (քր. օր.-ի 39-րդ հոդվածի 2-րդ մաս):* Տվյալ կանոնից բացառություն թույլատրվում է միայն հետևյալ իրավիճակներում՝

ա) եթե հանցակիցներից մեկը չի հասել այն հանցագործության համար քրեական պատասխանատվության տարիքի, որի համար կատարողը ենթակա է պատասխանատվության, ապա նրա արարքը կարող է որակվել այն հանցագործության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածով, որի հատկանիշները փաստացի առկա են նրա արարքում (օրինակ՝ եթե 14 տարին լրացած, սակայն 16 տարին չլրացած անձը դրդում (օժանդակում, կազմակերպում) է այլ անձի (16 տարին լրացած) պետական քաղաքական կամ հասարակական գործչի սպանության՝ նրա նշված գործունեությունը դադարեցնելու նպատակով, ապա հանցագործությունը կատարվելու դեպքում կատարողի արարքը կորակվի ՀՀ քր. օր.-ի հոդվածով 305-ով, իսկ դրդիչինը (կազմակերպչինը, օժանդակողինը)՝ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ հղում պարունակելով քր. օր.-ի 38-րդ հոդվածին),

բ) եթե կատարողի կողմից իրականացրած հանցագործության հատկանիշները ոչ ամբողջությամբ են ընդգրկվում մյուս հանցակիցների դիտավորությամբ (օրինակ՝ կատարողն առևանգում է ան-

չափահասի, մինչդեռ օժանդակողը կարծում է, որ տուժողը չափահաս է), ապա կատարողի արարքն անհրաժեշտ է որակել ՀՀ քր. օր.-ի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, իսկ օժանդակողինը՝ նույն հոդվածի 1-ին մասով՝ հղում կատարելով ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածին),

գ) եթե տեղի է ունեցել կատարողի սահմանազանցում (մանրամասն կքննարկվի հետագայում):

2. *Կազմակերպչին, դրդիչին և օժանդակողին մեղսագրվում են հանցակազմի այն ծանրացնող հանգամանքները, որոնք առկա են կատարողի արարքում (պայմանով, որ դրանք գիտակցվել են հանցակիցների կողմից):*

3. *Հանցակցության արքեստոր բնույթով պայմանավորված՝ այլ հանցակիցների արարքների քրեաիրավական գնահատականի հարցը լուծվում է՝ ելնելով կատարողի հանցավոր մտադրության իրականացման աստիճանից, ինչը ցայտուն կերպով արտահայտվում է չավարտված հանցագործություններում հանցակցության որակման հետևյալ կանոններում.*

*ա) եթե կատարողն իր կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չի հասցնում, և հանցավոր գործունեությունը խափանվում է հանցագործության նախապատրաստության փուլում, ապա մյուս հանցակիցների արարքները որակվում են որպես կատարողի կողմից իրականացվող հանցագործության նախապատրաստություն: Այսինքն՝ մյուս հանցակիցների արարքները որակելիս հղում է կատարվում միայն ՀՀ քր. օր.-ի 35-րդ հոդվածին: Օրինակ՝ անձը դրդում է մեկին սպանության կատարման, սակայն կատարողը զենք ձեռք բերելիս բռնվում է: Այս դեպքում և՛ կատարողի, և՛ դրդիչի արարքները ենթակա են որակման ՀՀ քր. օր.-ի հոդված 35-104-ի համապատասխան մասով կամ (և) կետով,*

*բ) եթե կատարողն իր կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չի հասցնում, և հանցավոր գործունեությունը խափանվում է հանցագործության փորձի փուլում, ապա մյուս հանցակիցների արարքները որակվում են կատարողի կողմից իրականացվող հանցագործության փորձի հանցակցություն: Այս դեպքում մյուս հանցակիցների արարքները որակելիս անհրաժեշտ է հղում կատարել ՀՀ քրեական օրենսգրքի ինչպես 34-րդ, այնպես էլ*

38-րդ հոդվածներին (քր. օր.-ի հոդված 39-ի 4-րդ մաս): Օրինակ՝ եթե անձը դրդում է մեկին սպանության կատարմանը, սակայն վերջինս, զոհի վրա նշան բռնելիս, բռնվում է: Այս դեպքում, կատարողի արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի հոդված 34-104-ի համապատասխան մասով կամ (և) կետով, իսկ դրդիչի արարքը՝ հոդված 38-34-104-ի համապատասխան մասով կամ (և) կետով:

Անհրաժեշտ է արձանագրել, սակայն, որ կազմակերպչի, դրդիչի և օժանդակողի արարքի քրեաիրավական գնահատականի կախվածությունը կատարողի արարքի որակումից բացարձակ չէ: Այսինքն՝ բացառվում է կատարողից մյուս հանցակիցների «կոյր» կախվածության մոտեցումը: Բանն այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքում իրենց արտահայտությունն են գտել նաև **հանցակիցների անհատական պատասխանատվության տեսության** որոշ դրույթներ: Այս տեսության էությունը ցայտուն արտացոլված է ՀՀ քր. օր.-ի 39-րդ հոդվածի 7-րդ մասում, համաձայն որի՝ «Հանցակիցներին պատասխանատվության ենթարկելիս հաշվի են առնվում հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթը և աստիճանը»: Մյուս հանցակիցների արարքները որակելիս այս սկզբունքային մոտեցումը դրսևորվում է հետևյալում.

**1. Սուբյեկտիվ մեղսայնացման սկզբունքի համաձայն՝ հանցակիցները ենթակա են քրեական պատասխանատվության միայն իրենց դիտավորության բովանդակության շրջանակներում, ինչը բացառում է հանցակիցներին հանցակազմի այնպիսի հատկանիշների մեղսագրումը, որոնք ընդգրկված չեն եղել նրանց դիտավորությամբ:** Այս կապակցությամբ կարևորագույն նշանակություն ունեն նաև հանցագործության ծանրացնող և մեղմացնող հանգամանքները հանցակիցներին մեղսագրելու հարցերը: ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրված իրավադրույթը, սակայն, մասամբ է տալիս այդ հարցերի պատասխանները:

Այսպես՝ հանցակիցների արարքներին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հանցակիցը կարող է ենթարկվել պատասխանատվության միայն սեփական դիտավորության բովանդակության սահմաններում: Այլ խոսքով՝ այն, ինչ մեղսագրվում է հանցակցին, պետք է ընդգրկված

լինի վերջինիս դիտավորությամբ: Հանցակազմի այն հատկանիշը, որը հանցակիցը չի գիտակցել, նրան մեղսագրվել չի կարող. այդ է պահանջում սուբյեկտիվ մեղսայնացման սկզբունքը (ՀՀ քր. օր.-ի հոդված 9-ը):

Այն հանգամանքները, որոնց գիտակցումն անհրաժեշտ է հանցակցության առկայության համար, կարող են լինել ամենատարբեր և վերաբերել ինչպես հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի առանձնահատկություններին, այնպես էլ՝ բացառապես հանցակցի անձին:

Հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրող ծանրացնող հանգամանքները կարող են վերաբերել հանցագործության եղանակին, ժամանակին, տեղին, հանրորեն վտանգավոր հետևանքներին և այլն: Հանցակիցների դիտավորության բովանդակության մեջ ընդգրկված հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են, ազդում են արարքի որակման վրա: Այսպես, օրինակ՝ դրդիչը պատասխանատվության կենթարկվի առանձին դաժանությամբ սպանության դրդելու համար, եթե գիտակցի, որ կատարողը սպանությունն իրականացնում է հենց այդ եղանակով: Մինչդեռ, եթե դրդիչը չի գիտակցում կատարողի կողմից սպանությունն այդ եղանակով իրականացնելու փաստը, ապա նրա արարքը պետք է որակվի որպես հասարակ սպանության դրդչություն:

Եթե հանցագործության առարկան հանցակազմի պարտադիր հատկանիշ է, և, դրանով պայմանավորված, ՀՀ քր. օր.-ով նախատեսված է ինքնուրույն հանցակազմ, ապա այդ հանգամանքը պետք է գիտակցվի հանցակցի կողմից: Եթե հատուկ կազմով հանցագործության առարկան հանցակիցը չի գիտակցել, ապա նրա արարքը կորակվի ընդհանուր նորմով: Այսպես՝ օժանդակողը պատասխանատվության կենթարկվի առանձնակի արժեք ունեցող առարկաների հափշտակությանը օժանդակելու համար, եթե գիտակցի, որ կատարողը հափշտակում է հենց նման առարկաներ: Եթե օժանդակողի մոտ բացակայում է նշված հանգամանքի գիտակցումը, ապա նրա արարքը, համապատասխան հատկանիշների առկայության դեպքում, կորակվի հափշտակությունների համար պատասխանատվություն նախատեսող ընդհանուր նորմով:

Հանցագործության սուբյեկտիվ կողմի հատկանիշները ևս մեղսագրվում են այն հանցակիցներին, ում մոտ դրանք առկա են: Կատարողի արարքի սուբյեկտիվ կողմի հատկանիշները մեղսագրվում են մյուս հանցակիցներին, եթե նշված հատկանիշները գիտակցվել են նրանց կողմից: Օրինակ՝ կազմակերպիչը վրեժի շարժառիթով սպանություն է կազմակերպում: Դրա համար նա կատարողին ներգրավում է հանցագործությանը դրամական պարգևատրման խոստումով: Կատարողը, փաստորեն, սպանությունն իրականացնում է շահադիտական շարժառիթով (դրդումներով): Այս իրավիճակում կազմակերպիչը պատասխանատվության կենթարկվի շահադիտական շարժառիթով սպանությունը կազմակերպելու համար, չնայած այն հանգամանքին, որ իր մոտ այդ դրդումները բացակայում են:

Հանցակիցների արարքները տարբեր հանցակազմերով են որակվում նաև այն դեպքում, երբ նրանցից մեկը բավարարում է հատուկ սուբյեկտին բնորոշ անձնային հատկանիշներին, որոնք ունենում են խիստ ընդձեռն անհատական բնույթ, ինչով պայմանավորված՝ նրա արարքը որակվում է առանձին նորմով: Մասնագիտական գրականության մեջ՝ որպես նման իրավիճակի օրինակ է բերվում մոր կողմից նորածին երեխայի սպանությունը<sup>196</sup>: Այսպես՝ մոր կողմից նորածին երեխային սպանելու դեպքում մայրը՝ որպես կատարող, ենթակա է պատասխանատվության ՀՀ քր. օր.-ի 106-րդ հոդվածով, իսկ մյուս հանցակից համակատարողը՝ հասարակ սպանության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածով (քր. օր.-ի 104-րդ հոդված):

Քրեաիրավական տարբեր գնահատականներ կարող են տրվել նաև, օրինակ՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից համատեղ լրտեսություն կատարելու դեպքին, երբ ՀՀ քաղաքացու արարքը կորակվի ՀՀ քր. օր.-ի 299-րդ հոդվածով (պետական դավաճանությունը), իսկ քաղաքացիություն չունեցողինը՝ քր. օր.-ի 302-րդ հոդվածով (լրտեսությունը):

---

<sup>196</sup> Տե՛ս, օրինակ՝ Рагоз А.И. Проблемы квалификации преступлений по субъективным признакам: Монография. М.: Проспект, 2015, էջեր 191-192, Волженкин Б.В. Некоторые проблемы соучастия в преступлениях, совершенных специальными субъектами // Уголовное право, 2000, № 1, էջ 14:

« քրեական օրենսգրքում կարգավորված չեն մեղմացնող հանգամանքները մյուս հանցակիցներին մեղսագրելու հարցերը: Մինչդեռ, դրանք լայնորեն քննարկվել են տեսության մեջ: Այդ կապակցությամբ ընդհանուր կարծիքն այն է, որ հանցակազմի հատկանիշ հանդիսացող մեղմացնող հանգամանքները, որոնք առկա են կատարողի արարքում և գիտակցվել են մյուս հանցակիցների կողմից, պետք է մեղսագրվեն նրանց: Այսպես, եթե անձը դրդում է անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ սպանության, ապա նա պատասխանատվության պետք է ենթարկվի նշված սպանությանը հանցակցելու համար (« քր. օր.-ի 38-108-րդ հոդված):

Ինչ վերաբերում է կազմակերպչին, դրդիչին կամ օժանդակողին բնութագրող ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքներին, ապա դրանք մեղսագրվում են միայն նրան, ում մոտ առկա են: Այսպես՝ եթե անձը սպանության է դրդում՝ գտնվելով հոգեկան խիստ հուզմունքի վիճակում, նա պատասխանատվության պետք է ենթարկվի հոգեկան խիստ հուզմունքի վիճակում սպանության դրդելու (« քր. օր.-ի 38-105-րդ հոդված), իսկ կատարողը, որի մոտ այդ վիճակը բացակայում է՝ հասարակ սպանություն կատարելու համար (« քր. օր.-ի 104-րդ հոդվածի 1-ին մաս)<sup>197</sup>:

*Քննարկվող հիմնախնդրի առնչությամբ տեսագործական հետաքրքրություն է ներկայացնում նաև մյուս հանցակիցների (կազմակերպչի, դրդիչի, օժանդակողի) մոտ առկա հատուկ նպատակը և շարժառիթը կատարողին մեղսագրելու հարցը:*

Ինչպես արդեն նշվել է, եթե կատարողը չի գիտակցում մյուս հանցակցի մոտ հատուկ նպատակի կամ շարժառիթի առկայությունը, ապա հանցանքն այդ նպատակով կամ շարժառիթով կատարելը չի կարող մեղսագրվել նրան: Մինչդեռ, եթե կատարողը տեղեկացվում է մյուս հանցակցի հատուկ նպատակի կամ շարժառիթի մասին, ապա առաջ է գալիս նրա մեղքի ծավալի գնահատման և այդ հանգամանքը նրան մեղսագրելու խնդիրը:

Այս առումով գտնում ենք, որ այն հատուկ նպատակը կամ շարժառիթը, որով գործում են մյուս հանցակիցները՝ կազմակերպիչը,

<sup>197</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով): Դասագիրք բուհերի համար: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջեր 288-289:

դրդիչը կամ օժանդակողը, պետք է մեղսագրվեն կատարողին, եթե վերջինս գիտակցել է դրանք: Օրինակ՝ Բ.-ն կազմակերպում է քաղաքական գործիչ Ջ.-ի սպանությունը՝ նրա քաղաքական գործունեությունը դադարեցնելու նպատակով: Դրա համար, նյութապես շահագրգռելով, որպես կատարող է ներգրավում վարձու մարդասպան Ա.-ին: Վերջինս, թեև, գիտակցում է կազմակերպչի մոտ նշված հատուկ նպատակի առկայությունը, սակայն գործում է շահադիտական շարժառիթով՝ առաջնահերթ նպատակ չունենալով սպանել Ջ.-ին, որպեսզի դադարեցվի նրա քաղաքական գործունեությունը: Տվյալ իրավիճակում կատարողի արարքը պետք է որակել հատուկ նորմով՝ որպես ՀՀ քր. օր.-ի 305-րդ հոդվածով նախատեսված սպանություն: Տվյալ մոտեցման տրամաբանությունն այն է, որ կատարողը նման իրավիճակներում, ըստ էության, գիտակցաբար մասնակցում է հատուկ նպատակով կամ շարժառիթով հանցավոր հետևանք առաջացնելուն:

**2. Կատարողի սահմանազանցման (էքսցեսի), այսինքն՝ կատարողի կողմից այնպիսի հանցանք կատարելու դեպքում, որն ընդգրկված չի եղել մյուս հանցակիցների դիտավորությամբ, կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը ենթակա չեն քրեական պատասխանատվության (ՀՀ քր. օր.-ի հոդված 40):** Մյուս հանցակիցները ենթակա կլինեն պատասխանատվության միայն այն հանցագործության համար, որն ընդգրկված է եղել նրանց դիտավորությամբ: Հանցակցի սահմանազանցման հարցին առավել մանրամասն անդրադարձ կկատարվի հաջորդիվ:

**3. Կատարողին քրեական պատասխանատվությունից ոչ արդարացնող (ոչ ռեաբիլիտացնող) հիմքով ազատելն ինքնաբերաբար չի հանգեցնում մյուս հանցակիցների քրեական պատասխանատվությունից ազատմանը և, միաժամանակ, չի բացառում նրանց՝ որպես հանցակից քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը:** Թերևս, բացառություն են կազմում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ (անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին) և 11-րդ (անձը կամովին հրաժարվել է հանցագործությունը մինչև վերջ հասցնելուց, եթե նրա փաստորեն կատարած ա-



րարքն այլ հանցակազմ չի պարունակում) կետերով նախատեսված հիմքերը, որոնք ինքնին վկայում են հանցակցության բացակայության մասին:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործությունը մինչև վերջ հասցնելուց կամովին հրաժարվելու դեպքում քրեական վարույթն ավարտելու հիմքը դասվում է ոչ արդարացնողների թվին: Անհրաժեշտ է նկատել, սակայն, որ այս մոտեցումը չի համապատասխանում ՀՀ քրեական իրավունքում կամովին հրաժարման ինստիտուտի էությանը: Մասնավորապես, քրեական իրավունքի գիտության մեջ գերակշռում է այն մոտեցումը, որ *չավարտված հանցավոր գործունեությունից կամովին հրաժարվելը լիովին բացառում է անձի քրեական պատասխանավորությունը, քանզի փաստացի կատարվածում բացակայում է հանցակազմը*<sup>198</sup>:

Հարկ է ընդգծել, որ անձի քրեական պատասխանատվության համար անհրաժեշտ է կա՛մ ավարտված, կա՛մ չավարտված հանցագործության հանցակազմի առկայություն: Հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքում, ակնհայտ է, որ ավարտված հանցագործության հանցակազմի մասին խոսք գնալ չի կարող: Ինչ վերաբերում է չավարտված հանցագործության հանցակազմի առկայությանը, ապա դրա համար անհրաժեշտ է, որ անձը հանցանքն ավարտին հասցրած չլինի իր կամքից անկախ հանգամանքներով (ՀՀ քր. օր.-ի 34-րդ և 35-րդ հոդվածներ), ինչը կամովին հրաժարման դեպքում բացառվում է: Տվյալ դեպքում հանցագործությունն ավարտին չհասցնելն արդյունք է ոչ թե անձի կամքից անկախ հան-

---

<sup>198</sup> Տե՛ս, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով): Դասագիրք բուհերի համար: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 254, Аветисян С.С. Проблемы разграничения преступного поведения от не преступного в уголовном праве (теория и практика уголовно-правового обеспечения безопасности человека). Ер.: Изд-во РАУ, 2011, էջեր 120-121, Գրիգորյան Մ.Վ. Քրեական իրավունք: Ուսումնական ձեռնարկ: Եր.: Հեղինակային հրատ., 2007, էջ 297, Թադևոսյան Լ.Ջ. Չավարտված հանցավոր գործունեության համար քրեական պատասխանատվության հիմնահարցերը: Եր.: Ֆենոմեն հրատ., 2007, էջ 109:

գամանքների, այլ՝ հենց նրա կամքի: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ, եթե հանցագործությունից կամովին հրաժարումը դիտարկվի քրեական վարույթը բացառող ոչ ռեաբիլիտացնող հիմք, առնվազն քրեական իրավունքի տեսանկյունից կատարողի արարքում պետք է արձանագրվի հանցակազմի առկայության փաստը, ինչը կնշանակի մյուս հանցակիցների քրեական պատասխանատվության հարցի այնպիսի լուծում, որն ուղղակիորեն կհակասի քրեական իրավունքի գիտության մեջ առկա գաղափարներին: Ուստի՝ քննարկվող հիմքը ևս պետք է դիտվի որպես արդարացնող:

Հանցագործությունը մինչև վերջ հասցնելուց կամովին հրաժարվելու հիմքով (եթե անձի փաստորեն կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում) կատարողի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու պարագայում մյուս ենթադրյալ հանցակիցների (կազմակերպչի, դրդիչի, օժանդակողի) արարքները պետք է քննարկվեն չհաջողված հանցակցության սահմաններում: Այսինքն՝ եթե ենթադրյալ հանցագործության դեպքը առերևույթ պարունակում է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի հատկանիշներ, ապա մյուս ենթադրյալ հանցակիցների նկատմամբ պետք է կայացվի քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում՝ նրանց արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Մինչդեռ, եթե հանցագործության դեպքին տրված իրավական գնահատականը համապատասխանում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության, ապա մյուս ենթադրյալ հանցակիցների մեղադրանքները պետք է բովանդակեն տվյալ հանցագործության նախապատրաստության իրավական որակումը:

Ինչ վերաբերում է ենթադրյալ կատարողին քրեական պատասխանատվության տարիքի չհասած լինելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելուն, ապա այս պարագայում մյուս մասնակիցները (կազմակերպիչը, դրդիչը, օժանդակողը)՝ որպես հանցակից, ինչպես ավարտված, այնպես էլ չավարտված հանցագործության համար չեն կարող ենթարկվել քրեական պատասխանատվության: Նրանց մեղադրանքը պետք է բովանդակի կա՛մ միջնորդավորված կատարման, կա՛մ չհաջողված հանցակցության քրեաիրավական գնահատականը (այս մասին հաջորդիվ):

Կատարողին քրեական պատասխանատվությունից արդարաց- նող (ռեաբիլիտացնող) հիմքով ազատելը չի բացառում մյուս մաս- նակիցների քրեական պատասխանատվությունը: Միևնույն ժամա- նակ, սակայն, անհնար է դարձնում նրանց՝ որպես հանցակից պա- տասխանատվության ենթարկելը:

Այսպիսով՝ ՀՀ քրեական գործող օրենսգիրքը հանցակիցների քրեական պատասխանատվության հարցերը կանոնակարգելիս հիմնվում է երկու տեսությունների՝ հանցակիցների աքցեսորային և նրանց անհատական պատասխանատվության տեսությունների հիմնական դրույթների վրա: Ընդ որում, մի կողմից, ազգային քրեա- կան օրենսդրությունը ճանաչում է հանցակցության աքցեսոր բնույ- թը և բացառում հանցակցությունն այն դեպքում, երբ բացակայում է կատարող-սուբյեկտը: Մյուս կողմից՝ չի բացառվում հանցագործու- թյան մյուս մասնակիցների անհատական (ինքնուրույն) պատաս- խանատվությունը:

Ասվածը ենթադրում է, որ հանցակցության համար քրեական պատասխանատվություն կարող է առաջանալ միայն այն դեպքում, երբ առկա է կատարողին քրեական պատասխանատվության են- թարկելու քրեական օրենքով նախատեսված հիմքը: Հակառակ դեպքում՝ երբ բացառվում է կատարողի քրեական պատասխանատ- վությունը (օրինակ՝ վերջինս հասած չի լինում քրեական պատաս- խանատվության տարիքի կամ կամովին հրաժարվում է հանցագոր- ծությունից), անհնար է դառնում մյուս մասնակիցների արարքը հան- ցակցության կանոններով որակելու իրավաչափ հնարավորությունը: Դա, սակայն, չի բացառում վերջիններիս անհատական պատաս- խանատվությունը՝ որպես հանցագործության ինքնուրույն կատա- րող:

Վերոգրյալ դրույթներն այն ընդհանուր կանոններն են, որոնք կիրառվում են հանցակցությամբ կատարված հանցագործություննե- րը որակելիս: Դատական պրակտիկայում հանդիպող որոշ դեպքեր, սակայն, չեն ենթարկվում այս կանոնների կարգավորմանը և պա- հանջում են այլ մոտեցումներ: Մասնավորապես, երբ ընդհանուր հանցակցության (կազմակերպչական գործունեություն, դրդչություն, օժանդակություն) առանձին դրսևորումներ նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքում որպես ինքնուրույն հանցագործություններ:

Կարելի է ասել, որ նման իրավիճակներում գործ ենք ունենում քրեաիրավական նորմերի մրցակցության հետ, սակայն, արդեն հանցակցության ինստիտուտի համատեքստում: Ու թեև հանցակցության որակման տվյալ կանոններն իրենց իրավական կարգավորումը չեն ստացել ՀՀ քրեական օրենսգրքում, այնուհանդերձ, հաշվի առնելով հանցակցության և քրեաիրավական նորմերի մրցակցության ինստիտուտների էությունը և հանցագործությունների որակման տեսության ընդհանուր դրույթները, կարելի է ընդունելի համարել որակման հետևյալ կանոնը.

*Եթե հանցակցի որևէ տեսակի դրսևորում (կազմակերպություն, դրդչություն, օժանդակություն) նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքով՝ որպես ինքնուրույն հանցագործություն, ապա անձի արարքը որակվում է ոչ թե որպես հանցագործության հանցակցություն՝ հղում պարունակելով ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածին, այլ այդ դրսևորման համար քրեական պատասխանատվություն նախատեսող ինքնուրույն հոդվածով: Օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 340-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում սուտ ցուցմունք տալու նպատակով վկային կամ տուժողին կամ կեղծ եզրակացություն կամ սուտ ցուցմունք տալու նպատակով փորձագետին, ինչպես նաև սխալ թարգմանություն կատարելու համար թարգմանչին կաշառելու, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը՝ վկային կամ տուժողին սուտ ցուցմունք տալուն, փորձագետին կեղծ եզրակացություն տալուն կամ թարգմանչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելու, ինչպես նաև ցուցմունք տալուց խուսափելուն հարկադրելու համար՝ զուգորդված այդ անձանց կամ նրանց մերձավորի նկատմամբ շանտաժով, սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու սպառնալիքով:*

Տվյալ հոդվածով, փաստորեն, որպես ինքնուրույն հանցագործություն, նախատեսված են ՀՀ քր. օր.-ի 338-րդ (սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալը կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը) և 339-րդ հոդվածներով (ցուցմունք տալուց հրաժարվելը) նկարագրված հանցագործությունների հանցակցության (դրդչության) ինքնուրույն դրսևորումները: Հետևաբար, այն անձի արարքը, ով սուտ ցուցմունք տալու նպատակով կկաշառի վկային կամ գույքը ոչնչացնելու սպառնալիքով կհարկադրի տուժողին հրաժարվել ցուց-

մունք տալուց, պետք է որակվի ոչ թե քր. օր.-ի 38-338-րդ կամ 38-339-րդ հոդվածներով՝ որպես սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն տալու, ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու դրոշմություն, այլ 340-րդ հոդվածի համապատասխան մասով և (կամ) կետով՝ որպես ինքնուրույն հանցագործություն:

Նույնն է հարաբերությունը կաշառքի միջնորդության և կաշառք տալու կամ ստանալու օժանդակության միջև: Այսպես, եթե կաշառք տալու (<< քր. օր.-ի 312-րդ հոդված) կամ ստանալու (<< քր. օր.-ի 311-րդ հոդված) հանցակցությունը դրսևորվել է << քր. օր.-ի 313-րդ հոդվածով նկարագրված արարքներով միայն, ապա կատարվածը որակվում է << քր. օր.-ի 313-րդ հոդվածով՝ որպես հատուկ նորմ, և լրացուցիչ որակում 38-311-րդ կամ 38-312-րդ հոդվածներով չի պահանջվում:

**Համակապարումը (պարզ հանցակցությունը)** ենթադրում է հանցակցության այնպիսի ձև, որում երկու կամ ավելի անձինք իրենց համատեղ գործողություններով (անգործությամբ) անմիջական մասնակցություն են ունենում հանցագործության օբյեկտիվ կողմի կամ դրա մասի կատարմանը, ինչպես համաժամանակյա, այնպես էլ ժամանակային որոշակի խզումով: Յուրաքանչյուր համակատարող հանդես է գալիս որպես հանցագործության ինքնուրույն կատարող (համակատարող):

<< քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածով կարգավորվում են համակատարման դրսևորման տեսակները. անձանց խումբ, անձանց խումբ նախնական համաձայնությամբ, կազմակերպված հանցավոր խումբ և հանցավոր համագործակցություն: Մասնավորապես, նշված հոդվածի համաձայն, հանցանքը համարվում է՝

- մի խումբ անձանց կողմից առանց նախնական համաձայնության կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես չեն պայմանավորվել հանցանքը համատեղ կատարելու մասին,
- մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես՝ մինչև հանցագործությունն սկսելը, պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին,

- *կազմակերպված խմբի կողմից կատարված*, եթե դա կատարվել է այնպիսի անձանց կայուն խմբի կողմից, ովքեր նախապես միավորվել են մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար,
- *հանցավոր համագործակցության կողմից կատարված*, եթե դա կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ կատարելու համար ստեղծված, համախմբված, կազմակերպված խմբի կողմից կամ նույն նպատակներով ստեղծված կազմակերպված խմբերի միավորմամբ, ինչպես նաև, եթե դա կատարվել է այդպիսի համագործակցության անդամի (անդամների) կողմից ի կատարումն դրա հանցավոր նպատակների, ինչպես նաև հանցավոր համագործակցության առաջադրանքով դրա անդամ չհամարվող անձի կողմից:

Այսպիսով՝ համակատարում չէ հանցագործությանն այնպիսի մասնակցությունը, երբ անձանցից մեկը տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող որևէ գործողություն չի կատարել, այլ միայն օժանդակել է հանցագործությանը: Միևնույն ժամանակ, նախնական համաձայնությամբ խմբի և առանց նախնական համաձայնության խմբի կողմից հանցանքը կատարելու ձևերի տարանջատման հիմքում ընկած է խմբի անդամների միջև *հանցանքը համատեղ կատարելու վերաբերյալ ձեռք բերված համաձայնությունը*, որն առաջին դեպքում կայացվում է *մինչև հանցագործության օբյեկտիվ կողմն սկսելը*, իսկ երկրորդ դեպքում՝ հանցագործության օբյեկտիվ կողմն սկսելուց հետո, *բայց մինչև այն ավարտելը*:

Համակատարումը հանցակցության մյուս ձևերից հստակ սահմանազատելն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն: Մասնավորապես, այն խիստ կարևորվում է հանցագործությունների որակման գործընթացում:

ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի բազմաթիվ հոդվածներում՝ որպես հանցագործությունը ծանրացնող հանգամանք, նախատեսված է հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարելը: Արարքը պետք է որակել այդ ծանրացնող հանգամանքում կատարված միայն այն դեպքում, երբ առկա է համակատարում, այսինքն՝ երբ հանցագործության մասնակիցներից առնվազն երկուսը համարվում են կատարող: Մինչդեռ, եթե կատարողը մեկն է, իսկ մյուսներն այլ հանցակիցներ են, ապա կատարողի արարքը (եթե չկա այլ ծանրաց-

նող հանգամանք) պետք է որակել որպես տվյալ հանցագործության հասարակ տեսակ, իսկ մյուսներինը՝ այդ արարքի հանցակցություն<sup>199</sup>:

Նախնական համաձայնությամբ կամ առանց նախնական համաձայնության խմբի կողմից իրականացրած հանցագործությանը, բացի համակատարողներից, կարող են մասնակցել նաև այլ հանցակիցներ (կազմակերպիչ, դրդիչ, օժանդակող): Այն հանցակիցների արարքները որակելիս, որոնք անմիջական մասնակցություն չեն ունեցել հանցագործության օբյեկտիվ կողմի կատարմանը, պետք է հղում կատարել ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածի համապատասխան մասին՝ որպես խմբի կողմից իրականացրած հանցագործության հանցակցություն:

Ինչպես արդեն նշվել է՝ նախնական համաձայնությամբ խմբի և առանց նախնական համաձայնության խմբի կողմից հանցանքը կատարելու ձևերի տարանջատման հիմքում ընկած է խմբի անդամների միջև հանցանքը համատեղ կատարելու վերաբերյալ ձեռք բերված համաձայնությունը (գրավոր, բանավոր, կոնկյուրենտ գործողություններով կամ այլ ձևերով), որն առաջին դեպքում կայացվում է մինչև հանցագործության օբյեկտիվ կողմն սկսելը, իսկ երկրորդում՝ հանցագործության օբյեկտիվ կողմն սկսելուց հետո, բայց մինչև ավարտելը: Հետևաբար, *դատավարական համապատասխան փաստաթղթերում անհրաժեշտ է արտացոլել այն բոլոր հանգամանքները, որոնց պայմաններում ձեռք է բերվել հանցանքը կատարելու համաձայնությունը, դա ձեռք բերելու ժամանակը և համաձայնության առարկան (բովանդակությունը), որը կարող է վերաբերել ինչպես ամբողջ հանցագործությանը, այնպես էլ դրա առանձին հանգամանքներին (օրինակ՝ եղանակին, վայրին, ժամանակին, գործիքին, առարկային, դրա հետագա տնօրինման հարցերին և այլն):*

Հանցանքը կատարելու նախնական համաձայնությունն ինքնին ոչ այլ ինչ է, քան հանցանքը կատարելու համար պայմանների դիտավորյալ ստեղծում, որը գնահատվում է որպես հանցագործության

---

<sup>199</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով): Դասագիրք բուհերի համար: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 268:

նախապատրաստություն (<< քր. օր.-ի հոդված 35): Քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված դեպքերում, երբ այդպիսի համաձայնության արդյունքը լինում է հանցավոր համագործակցության կամ դրա վերափոխված ձևերի ստեղծումը, կատարվածը պետք է որակվի որպես ավարտված հանցագործություն (օրինակ՝ << քր. օր.-ի հոդվածներ 222-ով, 223-ով, 223.2-ով և այլն):

Հանցակիցների (համակատարողների) պարագայում հանցանքը նախնական համաձայնությամբ կատարելու հանգամանքը գնահատելիս անհրաժեշտ է պարզել նաև, թե արդյո՞ք նրանք բոլորն են մասնակցել այդ համաձայնության ձեռքբերմանը: Եթե, նախնական համաձայնություն ձեռքբերած հանցակիցներից բացի, այլ անձ, սեփական նախաձեռնությամբ միացել է հանցանքի օբյեկտիվ կողմի կատարմանը դա սկսելուց հետո միայն, ապա նրա արարքը որակելիս չի կարող հղում կատարվել հանցանքը նախնական համաձայնությամբ խմբի կողմից կատարված լինելու ծանրացնող հանգամանքին:

Հանցավոր ոտնձգությունն իրականացնելիս հանցակիցների դիտավորությունը կարող է վերափոխվել՝ վերաճելով առավել ծանր հանցանք կատարելու դիտավորության (օրինակ, գողությունը՝ ավազակության, ծեծը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու և այլն): Առավել ծանր հանցագործությունը համատեղ կատարելու հարցը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ հանցանքը կատարելու նախնական համաձայնության առկայությունը և այն ձեռք բերելու ժամանակը: Այսպես.

- Եթե առավել ծանր հանցանք կատարելու դիտավորության վերաճումը կատարվում է առանց հանցակիցների նախապես ձեռք բերված համաձայնության, ապա բացառվում է հանցանքը խմբի կողմից նախնական համաձայնությամբ կատարվելու ծանրացնող հանգամանքի վերագրումը հանցակիցներին: Օրինակ՝ համակատարողը, հափշտակված գույքը մեքենան դնելիս, նկատում է տուժողին, և, հասկանալով, որ նկատվել է, նստում է մեքենան և, առանց մյուս մասնակցին տեղյակ պահելու, շտապ հեռանում՝ իր հետ տանելով հափշտակված գույքի մի մասը: Մինչդեռ մյուս համակատարողն ավելի ուշ է նկատում մոտեցող տուժողին, և դարձյալ, հասկանալով, որ բացահայտվել է, դիմում է փախուս-



տի՝ տանելով հափշտակված գույքի մյուս մասը: Քանի որ քննարկվող իրավիճակում հանցակիցների դիտավորության վերաճումը կատարվում է առանձին-առանձին, առանց նախապես ձեռք բերված համաձայնության, հետևաբար կատարվածը կողոպուտ որակելիս (<< քր. օր.-ի հոդված 176-րդ) նրանց չի կարող մեղսագրվել հանցանքը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարելու ծանրացնող հանգամանքը (քր. օր.-ի հոդված 176-ի 2-րդ մասի 1-ին կետ):

- Եթե այդ վերաճումը իրականացվում է նախնական համաձայնությամբ, ապա տվյալ ծանրացնող հանգամանքի մեղսագրումը հանցակիցներին ոչ միայն լիովին իրավաչափ է, այլև պարտադիր: Օրինակ՝ գողություն կատարելու նպատակով տուժողի առանձնատան բակ մուտք գործած համակատարողները նկատում են, որ տուժողը վերադառնում է: Նրանք պայմանավորում են վերջինիս հայտնվելուն պես, առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով, կողոպտել նաև նրան, և իրենց հետ տանել ամբողջ հափշտակվածը: Տվյալ իրավիճակում կատարվածն անհրաժեշտ է որակել որպես մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված կողոպուտ՝ << քր. օր.-ի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով:
- Եթե կատարված առավել ծանր հանցագործությունը համակատարողի թույլ տված սահմանազանցման արդյունք է, իսկ մնացած հանցակիցները դուրս չեն գալիս նվազ ծանր հանցանքը կատարելու վերաբերյալ նախապես ձեռք բերված համաձայնության շրջանակներից, ապա սահմանազանցում թույլ տված համակատարողի արարքը որակվում է որպես ինքնուրույն կատարված, իսկ մյուս հանցակիցներին՝ որպես այդ նվազ ծանր հանցագործության համակատարում՝ նախնական համաձայնությամբ: Օրինակ՝ նախապես ձեռք բերված համաձայնությամբ երեք համակատարողները տուժողի առանձնատան բակից կատարում են զգալի չափերի գողություն: Դրանից հետո հանցակիցներից երկուսը, չտրվելով մյուս համակատարողի հորդորներին՝ հափշտակությունը տուժողի բնակարանից կատարելու վերաբերյալ, հեռանում են: Մինչդեռ երրորդը, շարունակելով գողությունը, կատարում է այն բնակարան ապօրինի մուտք գործելով: Տվյալ իրա-

վիճակում հանցակիցներից երկուսի արարքը պետք է որակել որպես մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված գողություն (ՀՀ քր. օր.-ի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ), իսկ սահմանազանցում թույլ տվածինը՝ բնակարան ապօրինի մուտք գործելով կատարված գողություն (քր. օր.-ի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետ):

Այսպիսով, նախնական համաձայնությամբ խմբի և առանց նախնական համաձայնության խմբի կողմից հանցանքը կատարելը՝ որպես հանցակցության ձև որակելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ, եթե.

ա) ՀՀ քր. օր.-ի Հատուկ մասի հոդվածում հանցանքը խմբի կամ նախնական համաձայնությամբ խմբի կողմից կատարելը նախատեսված է որպես ծանրացնող հանգամանք, ապա արարքը կարող է որակվել նշված ծանրացնող հանգամանքով, եթե հանցագործությանը մասնակցել են առնվազն երկու կատարող (համակատարող), ընդ որում՝ համակատարողների արարքները որակելիս քր. օր.-ի հոդված 38-ի վրա հղում չի կատարվում,

բ) հանցանքի կատարմանը, համակատարողներից բացի, մասնակցում է նաև այլ հանցակից (կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող), որն անմիջականորեն չի իրականացնում հանցագործության օբյեկտիվ կողմը, ապա նրա արարքը որակելիս պետք է հղում կատարել հոդված 38-ի վրա,

գ) Հատուկ մասի հոդվածում հանցանքը խմբի կամ նախնական համաձայնությամբ խմբի կողմից կատարելը նախատեսված է որպես ծանրացնող հանգամանք, ապա վերոնշյալ դեպքում այլ հանցակցի (կազմակերպիչի, դրդիչի կամ օժանդակողի) արարքը որակվում է որպես այդ ծանրացնող հանգամանքով հանցագործության հանցակցություն,

դ) Հատուկ մասի հոդվածում որպես ծանրացնող հանգամանք է նախատեսված միայն «հանցանքը նախնական համաձայնությամբ խմբի կողմից կատարելը», ապա այն չի ներառում առանց նախնական համաձայնության հանցակցությունը,

ե) Հատուկ մասի հոդվածում որպես ծանրացնող հանգամանք է նախատեսված «հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարելը»,

ապա այն ներառում է ինչպես նախնական համաձայնությամբ, այնպես էլ առանց նախնական համաձայնության հանցակցությունը:

Միևնույն ժամանակ, տեսական և գործնական կարևոր նշանակությամբ առանձնանում են *երկրնտրելի օբյեկտիվ կողմ ունեցող հանցակազմերում համակատարման ձևի որոշման և որակման հարցերը*:

Այսպես, երկրնտրելի օբյեկտիվ կողմ ունեցող հանցակազմի օրինակ է ՀՀ քր. օր.-ի 266-րդ հոդվածով նկարագրվածը, որի 1-ին մասում թվարկված արարքներից (թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ դրանք ապօրինի իրացնելը) յուրաքանչյուրի կատարումը հանգեցնում է ավարտված հանցագործության: Տվյալ հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված արարքները երկու կամ ավելի անձանց կողմից կատարելը, մի դեպքում, կարող է որակվել որպես համակատարում, մյուսում՝ ինքնուրույն հանցագործություն:

Այսպիսի օբյեկտիվ կողմ ունեցող հանցագործություններում թյուրըմբռնում կարող է առաջացնել այն, որ համակատարումը օբյեկտիվ կողմի կամ դրա մի մասի կատարումն է: Հարկ է նկատել, սակայն, որ նման հանցագործություններում համակատարման համար անհրաժեշտ է, որ երկու անձանց կողմից կատարվեն ոչ թե հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված բոլոր արարքները, այլ թեկուզ մեկ կոնկրետ արարքը կամ դրա մի մասը: Հետևաբար, բերված օրինակում համակատարում կարող են համարվել այն անձանց արարքները, ովքեր համատեղ, իրացնելու նպատակով պատրաստում են թմրամիջոցը, կամ համատեղ իրացնում են այն: Մինչդեռ, իրացնելու նպատակով թմրամիջոց ձեռք բերողը և իրացնողը, եթե չեն գործել համատեղ և նույն նպատակով, չեն կարող համարվել համակատարողներ, որովհետև նրանց արարքները թեև ուղղված են ՀՀ քր. օր.-ի միևնույն հոդվածով նախատեսված, սակայն տարբեր հանցագործությունների կատարմանը: Այստեղ, ըստ էության, բացակայում է արարքների համատեղության օբյեկտիվ չափանիշը և հանցակցությանն իրավաբանական բնույթ հաղորդող սուբյեկտիվ հատկանիշը: Ուստի՝ համակատարում չի կարող որակվել, երբ իրա-

րից անկախ՝ մեկը պատրաստում, մյուսը՝ պահում, իսկ երրորդը փոխադրում է թմրամիջոցը:

Միևնույն ժամանակ, երկրնտրելի օբյեկտիվ կողմ ունեցող հանցագործություններում անձանց տարաբնույթ արարքները կարող են կազմել համակատարում, երբ խոսքն այնպիսի մասնակիցների մասին է, որոնցից յուրաքանչյուրը գիտի իր անելիքը, և նրանց արարքներն ուղղված են բոլորի համար ցանկալի հանցավոր հետևանքի առաջացմանը: Այսինքն՝ երբ հանցակիցները համատեղ գործողություններով փոխլրացնում են միմյանց և հետապնդում միևնույն հանցավոր նպատակը: Օրինակ՝ եթե իրացնելու նպատակով հանցակիցներից մեկը կեղծ փողեր կամ արժեթղթեր է պատրաստում, մյուսը՝ պահում, իսկ մնացածն իրացնում են դրանք՝ խմբի կարիքների բավարարման նկատառումներով, ապա խմբի բոլոր անդամները կդիտվեն համակատարողներ, իսկ նրանց արարքները կորակվեն ՀՀ քր. օր.-ի 202-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (կամ 3-րդ մասի 1-ին կետով՝ կազմակերպված խմբի հատկանիշների առկայության պարագայում):

Հանցակցության հաջորդ երկու ձևերը՝ **կազմակերպված հանցավոր խումբը** և **հանցավոր համագործակցությունը**, նախնական համաձայնությամբ հանցակցության բարդ և առավել վտանգավոր ձևերն են, որոնց հատկանիշների վեր հանման, հանցակցության այս երկու ձևերն իրարից տարանջատելու և կատարվածը ճիշտ քրեաիրավական գնահատականի արժանացնելու գործընթացում ի հայտ են գալիս որոշակի խնդիրներ: Ավելին, հանցակցության այս և մյուս ձևերն իրարից տարանջատելու խնդիրը ևս ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական մեծ նշանակություն: Բանն այն է, որ այս ձևերի որոշումն ուղղակիորեն ազդում է անձի արարքի քրեաիրավական գնահատականի և պատժի ու պատասխանատվության հարցի լուծման վրա:

Հանցակցության ձևերը միմյանցից տարանջատելու հիմնախնդիրն ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Հասմիկ Ժորայի Մալխասյանի և այլոց վերաբերյալ գործով 2011 թ. մայիսի 11-ի թիվ ԼԴ/0136/01/10 որոշմամբ: Սույն գործով, ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համեմատական վերլուծության հիման վրա, Վճռաբեկ դատարանը որոշել է, որ հանցակցության

երկու ձևերը՝ նախնական համաձայնությամբ գործող անձանց խումբը և կազմակերպված խումբը, միմյանցից տարբերակելու համար էական նշանակություն ունեն հետևյալ երեք չափանիշները. ա) կայունությունը, բ) միավորվածությունը և գ) մեկ կամ մի քանի հանցանք կատարելը:

*Կայունությունն* արարքը որպես կազմակերպված խմբի կողմից կատարված որակելու համար անհրաժեշտ, հիմնական չափանիշն է: Այն դրսևորվում է խմբի ամրությամբ, անդամների կողմից իրենց առջև դրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ կազմակերպվածությամբ, խմբի անդամների ջանքերի համաձայնեցվածությամբ, խմբի մեկ կամ մի քանի անդամների կողմից մյուսներին ղեկավարելով, հատուկ՝ խմբի գործունեության համար անհրաժեշտ ներխմբային նորմերի առկայությամբ: Անհրաժեշտ է ընդգծել, որ յուրաքանչյուր դեպքում կայունությունը բնութագրող վերոնշյալ հատկանիշները պետք է գնահատվեն գործի կոնկրետ հանգամանքների լույսի ներքո:

Կազմակերպված խմբի *միավորվածության չափանիշը* ենթադրում է մեկ կամ մի քանի հանցագործություն կատարելու մշակված ծրագրերի առկայություն, այդ ծրագրերի ակտիվ իրականացում, ոտնձգությունը համատեղ կատարելու մշակված եղանակների առկայություն, դերերի մշակված տեխնիկական բաշխում, հանցանքի կատարումը դյուրին դարձնելուն ուղղված՝ նախապես պայմանավորված գործողությունների կատարում, հանցանքի կատարման համար բարենպաստ պայմանների ստեղծում: Կազմակերպված խումբը միավորվում է տևական ժամանակ հանցավոր գործունեությամբ զբաղվելու նպատակով: Դրա ստեղծման նպատակը, որպես կանոն, մի շարք հանցագործություններ, այդ թվում՝ համասեռ հանցանքներ կատարելն է:

«Քրեական օրենսդրությունը չի բացառել, սակայն, որ խումբը կարող է ստեղծվել մեկ, սակայն երկարատև և մանրակրկիտ պլանավորված հանցագործություն կատարելու նպատակով: Այս առումով կարևորվում են կազմակերպված խմբին բնորոշ վերոնշյալ երկու չափանիշները՝ կայունությունը և միավորվածությունը, երբ կազմակերպված խմբի յուրաքանչյուր անդամ գիտակցում է, որ կայուն և միավորված խմբի կազմի մեջ է մտնում, մասնակցում է խմբի ան-

դամների փոխադարձ համաձայնությամբ կատարվող արարքներին կամ դրանց մի մասին:

Վճռաբեկ դատարանն այդ կապակցությամբ ընդգծել է, որ վերոհիշյալ որոշմամբ նշված և վերլուծված չափանիշների հետ մեկտեղ առկա են նաև նախնական համաձայնությամբ գործող անձանց և կազմակերպված խմբի տարբերակման լրացուցիչ չափանիշներ, որոնք պետք է հաշվի առնվեն հիմնական չափանիշները գնահատելիս: Դրանք են՝

- կազմակերպված խմբի կողմից կատարվող հանցագործության երկարատև պլանավորումը,
  - տևական ժամանակով հանցավոր գործունեությամբ զբաղվելու նպատակը,
  - խմբի նյութատեխնիկական հագեցվածությունը,
  - ընդհանուր ֆինանսական միջոցների առկայությունը և այլն:
- Ընդ որում, այս դիրքորոշումը լիովին արտացոլում է նաև քրեական իրավունքի տեսության մեջ առկա մոտեցումները:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, նշված գործով որոշման մեջ հստակ արտահայտելով իր դիրքորոշումը, արձանագրել է նաև.

*«(...) Այսպիսով՝ կազմակերպված խմբին բնորոշ հիմնական առանձնահատկություններն են՝*

*ա) հանցանքի կատարմանը երկու կամ ավելի անձանց մասնակցությունը,*

*բ) մասնակից անձանց միջև առկա ամուր սուբյեկտիվ կապը, հանցանքը համատեղ կատարելու վերաբերյալ նախապես ձեռքբերված համաձայնությունը,*

*գ) հանցանքի կատարումը խմբի մեկ կամ մի քանի անդամների կողմից այն պայմաններում, երբ խմբի մյուս անդամները կազմակերպել, դրդել կամ օժանդակել են հանցանքի կատարումը,*

*դ) հանցանքը համատեղ, միասնական ջանքերով կատարելը,*

*ե) յուրաքանչյուր անձի՝ հանցանքը համատեղ կատարելուն ուղղված դիտավորությունը,*

*զ) յուրաքանչյուրի գործողության համաձայնեցվածությունը մյուսի գործողության հետ, ինչն արտացոլում է հանցանքի կատարման վերաբերյալ նրանցից յուրաքանչյուրի տեղեկացվածությունը:*

Նախնական համաձայնությամբ գործող անձանց պարագայում (ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մաս) հանցագործության մասնակիցները մինչև հանցանքի օբյեկտիվ կողմը կազմող գործողություններն սկսելը պայմանավորվում են հանցանքը համարել կատարելու մասին: Ընդ որում՝ համաձայնությունը ձեռք է բերվում խմբի անդամների կողմից գործողությունների համարել կատարման ուղղվածության, հանցագործության կատարման տեղի, ժամանակի, եղանակի և միջոցների, ինչպես նաև խմբի անդամների միջև դերաբաշխման շուրջ: Հանցակցության այս ձևում հանցագործության կատարման մեխանիզմների կոնկրետացումը թերի է և ոչ լիարժեք, թերի են նաև հանցակիցների միջև դերակատարման բաշխումը և պայմանները: Ի համեմատ նախնական համաձայնությամբ խմբի՝ կազմակերպված խմբի պարագայում (ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մաս) առկա է կազմակերպվածության առավել բարձր աստիճան: Հանցակցության այս ձևը բնութագրվում է պլանավորվածությամբ, մանրակրկիտ նախապարաստրվածությամբ, ինչպես նաև հանցակիցների միջև դերերի բաշխմամբ ու անդամների մասնագիտացվածությամբ: Կազմակերպված խմբի անդամները ոչ թե պարզապես համաձայնության են գալիս հանցանքը համարել կատարելու մասին, ինչպես դա առկա է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցանք կատարելու դեպքում, այլ համաձայնություն են ձեռք բերում մեկ կամ մի քանի հանցագործություն համարել կատարելու շուրջ (...):»:

Ներկայացված դիրքորոշման մեջ ՀՀ Վճռաբեկ դատարանը, փաստորեն, հստակ առանձնացրել է այն հատկանիշները, որոնք պետք է հաշվի առնվեն հանցանքը կազմակերպված խմբի կողմից կամ մի խումբ անձանց կողմից կատարված լինելու տարանջատման ժամանակ: Մասնավորապես՝ նման պարագայում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել խմբի կազմակերպվածության աստիճանին, հանցավոր վարքագծի պլանավորվածությանը, մանրակրկիտ նախապարաստրվածությանը, հանցակիցների միջև դերերի բաշխմանն ու անդամների մասնագիտացվածությանը:

Հ. Մալխասյանի վերաբերյալ գործով որոշման մեջ ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև հանցավոր համագործակցությանը:

նը և ընդգծել այն առանձնահատկությունները, որոնք հնարավորություն են տալիս այն տարբերել կազմակերպված խմբից:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված իրավական դրույթի վերլուծությունից հետևում է, որ **հանցավոր համագործակցության բնութագրական առանձնահատկություններն են.**

- 1) խմբի առավել մեծ կայունությունը և համախմբվածությունը,
- 2) առավել բարդ ներքին կառուցվածքը,
- 3) ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ կատարելու հատուկ նպատակը:

Վերլուծության ենթարկելով նշված նորմը՝ ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրել է.

*«(...) Համախմբվածությունը հանցավոր համագործակցության սոցիալ-հոգեբանական բնութագիրն է, որն արտացոլում է հանցավոր նպատակների իրականացման համար մասնակիցների ընդհանրությունը:*

*Հանցավոր համագործակցության կայունությունը և համախմբվածությունը որոշվում են առավել երկար տևողությամբ հանցավոր գործունեությամբ զբաղվելու նպատակով և այն հանցագործությունների ծանրությամբ, որոնք նպատակ ունեն կատարել համագործակցության անդամները: Համախմբվածությունը, որով հանցավոր համագործակցությունը փարբերվում է կազմակերպված խմբից, բնութագրվում է նաև համագործակցության բարդ կառուցվածքով և առավել բարձր աստիճանի կազմակերպվածությամբ: Հանցավոր համագործակցությունը բնութագրվում է հիերարխիկ կառուցվածքով: Որպես կանոն, հանցավոր համագործակցությունն ունի ոչ թե մեկ հեղինակավոր կազմակերպիչ կամ ղեկավար, այլ կառավարվում է մի քանի անձանց կողմից, որոնցից մեկը, այնուամենայնիվ, համագործակցության պարագլուխն է: Բացի այդ, հանցավոր համագործակցությունը կարող է ընդգրկել մի քանի կազմակերպված խմբեր և հանդես գալ որպես դրանց միավորում, որը ղեկավարվում է մեկ ընդհանուր կենտրոնից (...):»:*

Փաստորեն, ՀՀ Վճռաբեկ դատարանը հատուկ ընդգծել է, որ հանցավոր համագործակցությունը կազմակերպված խմբից պետք է



տարբերակել ոչ միայն ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ կատարելու նպատակով ստեղծված լինելու, այլև համախմբվածության հատկանիշով<sup>200</sup>:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն Ա. Մովսիսյանի վերաբերյալ գործով որոշմամբ ընդգծել է, որ. «(...) ի տարբերություն նախնական համաձայնության խմբի, կազմակերպված խումբն աչքի է ընկնում կազմակերպվածության առավել բարձր աստիճանով, կատարվող հանցանք(ներ)ի մանրակրկիտ պլանավորմամբ և հստակ դերաբաշխմամբ, խմբի անդամների միջև կայուն կապով: Կազմակերպված խմբի կայունությունը, միավորվածությունը և մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու անխախտ համաձայնությունը փաստելու փեսանկյունից կարևոր է գործի նյութերից բխող փաստական փյալների բավարար ամբողջությամբ հիմնավորել հանցակցության այնպիսի կարևոր հատկանիշների առկայությունը, ինչպիսին հանցանքը կատարելու համատեղությունն է, խմբի անդամների միջև ամուր սուբյեկտիվ կապը: Այլ կերպ՝ թեև ամենևին պարտադիր չէ, որ խմբի անդամներն անձամբ ճանաչեն միմյանց, այնուամենայնիվ անհրաժեշտ է, որ կազմակերպված խմբի յուրաքանչյուր անդամ գիտակցի, որ մտնում է կայուն և միավորված խմբի կազմի մեջ, մասնակցում է խմբի անդամների փոխադարձ համաձայնությամբ կատարվող արարքներին կամ դրանց մի մասին, առկա է յուրաքանչյուր անձի՝ հանցանքը համատեղ կատարելուն ուղղված դիտավորություն, և յուրաքանչյուրի գործողությունը համաձայնեցված է մյուսների հետ, ինչն էլ արտացոլվում է հանցանքի կատարման վերաբերյալ նրանցից յուրաքանչյուրի տեղեկացվածությամբ»<sup>201</sup>:

Համատեղ հանցավոր գործունեության որակման գործընթացում հանցակցության ձևի որոշումից հետո անհրաժեշտություն է առաջանում ընտրել այն քրեաիրավական նորմը, որն ամբողջությամբ արտացոլում է այդ ձևի էությունը և սոցիալական նշանակությունը: Գործնականում պատահում են դեպքեր, երբ հանցագործությունը

<sup>200</sup> Տե՛ս Հ.Մալխասյանի և մյուսների վերաբերյալ գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 11.05.2011 թ. թիվ ԼԴ/0136/01/10 որոշման 12-18-րդ կետերը:

<sup>201</sup> Տե՛ս Ա.Մովսիսյանի վերաբերյալ գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 01.08.2018թ. թիվ ԵԱԴԴ/0051/01/17 որոշման 12.1 կետը:

կատարվում է հանցակցության մի ձևով, մինչդեռ քրեական օրենքի Հատուկ մասի հոդվածում այդ ձևը՝ որպես ծանրացնող հանգամանք, չի նախատեսվում: Մասնավորապես, այդպիսի իրավիճակ ի հայտ է գալիս հանցանքը հանցավոր համագործակցության կողմից կատարվելու դեպքում: Այսպիսի իրավիճակներում, կարծում ենք, որ որակում իրականացնող սուբյեկտների համար որպես ուղենիշ կարող են ծառայել հետևյալ դրույթները.

- 1) եթե Հարուկ մասի հոդվածում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է հանցակցության որևէ ձև, արարքը որակվում է այդ հոդվածի այն մասով կամ կետով, որով այդ ծանրացնող հանգամանքը նախատեսված է,
- 2) եթե Հարուկ մասի հոդվածում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված չէ հանցակցության որևէ ձև, այլ ծանրացնող հանգամանքների բացակայության դեպքում, անձանց արարքները պետք է որակել որպես այդ հանցագործության հասարակ տեսակ,
- 3) եթե Հարուկ մասի հոդվածում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է հանցակցության որևէ ձև, ապա հանցակցությունն առավել վրանգավոր ձևերով կատարելու դեպքում, արարքը պետք է որակել տվյալ հոդվածի համապատասխան մասով կամ (և) կետով,
- 4) եթե Հարուկ մասի հոդվածում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է հանցակցության որևէ կոնկրետ ձև, հանցակցության առավել նվազ վրանգավոր ձևերով հանցանքը կատարելու դեպքում, արարքը պետք է որակվի հիմնական հանցակազմով (որպես այդ հանցագործության հասարակ տեսակ):

Հարկ է նկատի ունենալ նաև, որ խմբի կողմից հանցանքի կատարումն առավել նվազ վտանգավոր հանցակցության ձևն է, որին վտանգավորությամբ համապատասխանաբար հաջորդում են նախնական համաձայնությամբ խումբը, կազմակերպված հանցավոր խումբը և հանցավոր համագործակցությունը: Հետևաբար՝ Հատուկ մասի հոդվածում հանցակցության ձևի և կատարված հանցագործության հանցակցության ձևի միջև անհամապատասխանության դեպքում, վերոգրյալ կանոնների կիրառմամբ, արարքը որակելիս հարկ է հաշվի առնել այդ ձևերի վտանգավորությունը:

Միևնույն ժամանակ, եթե հանցավոր խումբ ստեղծելը, ղեկավարելը կամ դրան մասնակցելը նախատեսված է ՀՀ քր. օր.-ի Հատուկ մասում՝ որպես ինքնուրույն հանցագործություն (հոդվածներ 222, 223, 224 և այլն), ապա կատարվածը ենթակա է որակման այդ հոդվածով: Այդ խմբերի մասնակիցների կողմից ինքնուրույն հանցագործություն կատարելու դեպքում նրանց արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ: Այսպես, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 223-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում հանցավոր համագործակցություն ստեղծելու, ղեկավարելու կամ դրան մասնակցելու համար: Այն ստեղծած, ղեկավարած կամ դրան մասնակցած անձի կողմից կյանքի համար վտանգավոր բռնություն գործադրելով անչափահասին առևանգելու դեպքում նրա արարքը պետք է որակվի քր. օր.-ի 223-րդ հոդվածի համապատասխան մասով և 131-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կազմակերպված խումբ, հանցավոր համագործակցություն *ստեղծած* կամ դրանք *ղեկավարած* անձը ենթակա է պատասխանատվության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված դեպքերում կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ ղեկավարելու համար: Բացի այդ, նշված հոդվածի 5-րդ մասը սահմանում է կանոն, համաձայն որի՝ կազմակերպված խումբ, հանցավոր համագործակցություն ստեղծած կամ դրանք ղեկավարած անձը կարող է անմիջական մասնակցություն չունենալ հանցավոր խմբի կողմից իրականացվող հանցագործությունների կատարմանը, սակայն նրա արարքը ենթակա է որակման նաև այդ համագործակցության կողմից կատարված այն բոլոր հանցանքների համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածներով, որոնք ընդգրկվել են նրա դիտավորությամբ:

Հանցավոր համագործակցության մեջ մտնող մյուս անձինք պատասխանատվություն են կրում այդ կազմակերպությանը *մասնակցելու* և այն հանցանքների համար, որոնց նախապատրաստությանը կամ կատարմանն իրենք մասնակցել են (ՀՀ քր. օր.-ի 41-րդ հոդվածի 5-րդ մաս): Եթե համագործակցության մասնակից-անդամն անմիջական մասնակցություն չի ունենում այդ համագործակցության

կողմից կատարվող հանցանքների նախապատրաստությանը կամ կատարմանը, ապա նրա արարքը որակվում է միայն այդ կազմակերպությանը մասնակցելու համար պատասխանատվություն նախատեսող հոդվածով (օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 223-րդ հոդվածի 2-րդ մասով):

Հարկ է նկատի ունենալ, որ, ի տարբերություն հանցանքը մի խումբ անձանց կամ նախնական համաձայնությամբ խմբի կողմից կատարելու դեպքերի՝ հանցանքը կազմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության կողմից կատարելն առկա է ոչ միայն այն դեպքերում, երբ դրան մասնակցել են առնվազն երկու կատարող, այլև՝ երբ հանցագործության օբյեկտիվ կողմն իրականացնում է կազմակերպված խմբի կամ համագործակցության թեկուզ մեկ անդամ: Հանցավոր համագործակցության պարագայում՝ նաև համագործակցության անդամ չհամարվող անձը, որը կատարում է վերջինիս առաջադրանքը (օրինակ՝ վարձու մարդասպանը):

Բացի այդ, եթե կազմակերպված խումբ ստեղծելու փաստը նախատեսված չէ ՀՀ քր. օր.-ի Հատուկ մասում՝ որպես ինքնուրույն հանցագործություն, ապա դրա ստեղծումը, համաձայն ՀՀ քր. օր.-ի 35-րդ հոդվածի, ենթակա է որակման որպես այն հանցագործության նախապատրաստություն, որի կատարման համար այդ խումբը ստեղծվել է: Օրինակ՝ եթե խարդախություններ կատարելու համար ստեղծված կազմակերպված հանցավոր խումբը ձերբակալվում է, չհասցնելով իրականացնել մտադրված հանցագործությունները, ապա խմբի անդամների արարքները անհրաժեշտ է որակել որպես խարդախության նախապատրաստություն (ՀՀ քր. օր.-ի 35-178-րդ հոդվածի համապատասխան մասով և/կամ կետով):

Պետք է նշել նաև, որ այն անձի արարքը, ով չի հանդիսացել կազմակերպված խմբի, հանցավոր համագործակցության (բանդայի) անդամ կամ չի մասնակցել դրանց, այլ էպիզոդիկ, մեկանգամյա օգնություն է ցուցաբերել նրանց կողմից իրականացվող հանցագործությանը, պետք է որակվի որպես այդ խմբի կողմից իրականացված հանցագործության օժանդակություն կամ դրդչություն՝ հղում կատարելով ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածի համապատասխան մասին: Օրինակ՝ երբ հանցավոր համագործակցության կողմից իրականացվող հերթական բնակարանային գողությանն օժանդակելու համար

այդ համագործակցության անդամ չհամարվող անձը տեղեկություն է տրամադրում դրա անդամին՝ բնակարանի տիրոջ տանը գտնվելու ժամերի վերաբերյալ, ինչը (տեղեկատվության տրամադրումը) կրում է մեկանգամյա բնույթ և չի ունենում հետագա շարունակություն: Նման դեպքերում հանցավոր համագործակցության անդամների արարքն անհրաժեշտ է որակել ՀՀ քր. օր.-ի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ և 2-րդ կետերով, իսկ դրվագային օժանդակություն ցույց տվողի արարքը՝ նույն հոդվածով՝ հղում կատարելով ՀՀ քր. օր.-ի հոդված 38-ին:

#### **5.5. Շարունակվող հանցագործություններում հանցակցության որակման առանձնահատկությունները**

ՀՀ քրեական օրենսգրքում, ինչպես արդեն նշվել է, ամրագրված է հանցակիցների պատասխանատվության խառը հայեցակարգ: Նման պայմաններում շարունակվող հանցագործությունների պարագայում հանցակցության որակումը ձեռք է բերում որոշակի առանձնահատկություններ, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին.

1. Համակատարողների միջև հանցանքը նախնական համաձայնությամբ կատարելու վերաբերյալ պայմանավորվածության առկայության դեպքում խմբի անդամին պետք է մեղսագրվեն շարունակվող հանցագործության բոլոր դրվագները (շարունակվող հանցագործությունն ամբողջությամբ), այլ ոչ թե միայն նրանք, որոնց կատարմանը նա մասնակցել է:

2. Համակատարողը, որը միանում է արդեն իսկ ընթացքի մեջ գտնվող շարունակվող հանցագործությանը, պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի տվյալ հանցագործության համար՝ հետևյալ պայմանների պահպանմամբ.

- 1) վերջինիս չի կարող մեղսագրվել շարունակվող հանցագործության այն դրվագների կատարումը, որոնք իրականացվել են մինչև նրա միանալը տվյալ հանցանքին,
- 2) նրան չի կարող մեղսագրվել «հանցանքը մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ» կատարելու որակյալ հատկանիշը:

3. Այլ հանցակիցներին (կազմակերպչին, դրդիչին, օժանդակողին) կարող են մեղսագրվել շարունակվող հանցագործության միայն այն դրվագները, որոնք ընդգրկված են եղել նրանց դիտավորությամբ:

4. Հանցագործությունների համակցության օժանդակությունը, դրդչությունը և կազմակերպչական գործունեությունը չեն բացառում տվյալ հանցակցի արարքը որպես շարունակվող հանցագործություն որակելը, եթե վերջինս գործել է միասնական դիտավորությամբ:

5. Միևնույն ժամանակ, շարունակվող հանցագործության օժանդակության, դրդչության և կազմակերպչական գործունեության բազմակի ակտերը կարող են որակվել հանցագործությունների համակցությամբ, եթե հանցակցի դիտավորությունը յուրաքանչյուր անգամ ծագել է ինքնուրույն: Այսպես, օրինակ՝ եթե հափշտակությունը հաջողությամբ իրականացնելու համար օժանդակողը կատարողին օգնություն է ցույց տալիս յուրաքանչյուր անգամ նոր ծագած դիտավորությամբ, իսկ կատարողը այդ հափշտակության օբյեկտիվ կողմը կազմող ինքնուրույն հանցավոր դրվագներն իրականացնում է միասնական դիտավորությամբ, ապա օժանդակողի արարքը որակելիս պետք է հաշվի առնել վերջինիս դիտավորությունը, և յուրաքանչյուր դրվագ նրան մեղսագրելիս որակումն իրականացնել իրական համակցության կանոններով: Մինչդեռ, կատարողի արարքը տվյալ դեպքում պետք է որակել որպես մեկ շարունակվող հանցագործություն: Հակառակ դեպքում՝ եթե օժանդակողն է օգնություն ցույց տալիս միասնական դիտավորությամբ, իսկ կատարողի մոտ յուրաքանչյուր հափշտակության դրվագի դիտավորությունն ամեն անգամ ինքնուրույն է ծագում, ապա օժանդակողի արարքն անհրաժեշտ է որակել որպես մեկ ամբողջական շարունակվող հանցագործության օժանդակություն, իսկ կատարողինը՝ իրական համակցության կանոններով:

Ասվածից հետևում է, որ, անկախ հանցագործության կատարողի մոտ միասնական դիտավորության առկայությունից՝ երկու կամ ավելի հանցավոր դրվագների հանցակցությունը կարող է որակվել կա՛մ որպես շարունակվող հանցագործություն, կա՛մ հանցագործությունների համակցություն՝ պայմանավորված այն բանով, թե այդ դրվագներին անձի հանցակցելու (կազմակերպելու, օժանդակելու,

դրդելու) դիտավորությունը եղել է միասնակա՞ն, թե՞ յուրաքանչյուր դեպքում ծագել է ինքնուրույն (առանձին):

### 5.6. Հանցակցի սահմանազանցման որակումը

Համընդհանուր ճանաչում գտած մոտեցման համաձայն՝ հանցակիցների քրեական պատասխանատվության սահմանները որոշվում են նրանց դիտավորության ծավալով և ձեռք բերված համաձայնության բովանդակությամբ: Պրակտիկայում, սակայն, պատահում են դեպքեր, երբ հանցակիցն ընդհանուր վարքագծի համաձայնեցված գծից շեղում է թույլ տալիս: Ընդհանուր համատեղ հանցավոր վարքագծից այսպիսի շեղումները քրեական իրավունքի գիտության և քրեական օրենսդրության մեջ անվանվում են հանցակցի սահմանազանցում (էքսցես):

«Հ քրեական օրենսգրքում հանցակցի սահմանազանցմանը վերաբերող 40-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցակցի սահմանազանցում է համարվում անձի կողմից այնպիսի հանցանք կատարելը, որը չի ընդգրկվում մյուս հանցակիցների դիտավորությամբ:

2. Հանցակցի սահմանազանցման համար մյուս հանցակիցները պատասխանատվություն չեն կրում»:

Ընդհանուր դիտավորությունից հանցակցի շեղվելու աստիճանով պայմանավորված՝ տարբերակվում են *քանակական* և *որակական* սահմանազանցումներ:

**Քանակական սահմանազանցման** դեպքում հանցակիցների արարքներն ընդհանուր գծերով պատճառական կապի մեջ են գտնվում կատարողի արարքի հետ, սակայն սահմանազանցում համարվող բուն արարքը դուրս է գալիս նրանց դիտավորության սահմաններից: Քանակական սահմանազանցման դեպքում, ըստ էության, իրականացվում է հանցակիցների համատեղ դիտավորությամբ ընդգրկված և նրանց համար ցանկալի հանրորեն վտանգավոր արարքը, սակայն ընդհանուր մտադրությունից շեղումը պայմանավորված է լինում որակյալ դարձնող հանգամանքով կամ հանցավոր ոտնձգության ձևով: Այսպիսով, քանակական սահմանազանցումը հնարավոր է հետևյալ իրավիճակներում.

1. Կատարողը վնաս է հասցնում այն օբյեկտին, որը, մյուս հանցակիցների հետ պայմանավորվածության համաձայն, ընդգրկված էր նրանց դիտավորությամբ, սակայն պատճառված վնասն ավելի մեծ է լինում, քան պայմանավորվածն էր: Օրինակ՝ հանցակիցները պայմանավորվում են միջին ծանրության վնաս պատճառել տուժողի առողջությանը, սակայն կատարողը ծանր վնաս է հասցնում: Այս իրավիճակում մյուս հանցակիցների արարքները որակվում են ուրիշի առողջությանը դիտավորությամբ միջին ծանրության վնաս պատճառելու հանցակցություն (ՀՀ քր. օր.-ի 38-113-րդ հոդված), իսկ կատարողին՝ որպես առողջությանը դիտավորությամբ ծանր վնասի պատճառում (ՀՀ քր. օր.-ի 112-րդ հոդված):

2. Կատարողը վնաս է հասցնում այն օբյեկտին, որը, մյուս հանցակիցների հետ պայմանավորվածության համաձայն, ընդգրկված էր նրանց դիտավորությամբ, սակայն մյուս հանցակիցների դիտավորությամբ ընդգրկված է լինում տվյալ հանցագործության հասարակ տեսակը, իսկ կատարողն իրականացնում է որակյալ հանգամանքով նկարագրված հանցագործությունը: Այսինքն՝ այս դեպքում քանակական սահմանազանցումը վերաբերում է ծանրացնող հանգամանքներին: Օրինակ՝ հանցակիցները պայմանավորվում են հասարակ սպանություն կատարել, սակայն կատարողն իրականացնում է առանձին դաժանությամբ սպանություն: Այս դեպքում մյուս հանցակիցների արարքը որակվում է որպես հասարակ սպանության հանցակցություն (ՀՀ քր. օր.-ի 38-104-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ կատարողին՝ առանձին դաժանությամբ կատարված սպանություն (ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ):

3. Կատարողը վնաս է հասցնում այն օբյեկտին, որը, մյուս հանցակիցների հետ պայմանավորվածության համաձայն, ընդգրկված էր նրանց դիտավորությամբ, սակայն պայմանավորված հանցագործության փոխարեն կատարվում է դրան միաբնույթ այլ հանցագործություն: Օրինակ՝ պայմանավորված գաղտնի հափշտակության փոխարեն, կատարվում է բացահայտ հափշտակություն: Այս իրավիճակում, մյուս հանցակիցների արարքները պետք է որակվեն որպես գաղտնի հափշտակության հանցակցություն (ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 38-177-րդ), իսկ կատարողին՝ որպես բացահայտ հափշտակություն (ՀՀ քր. օր.-ի հոդված 176-րդ):



4. Կատարողը, թեև, վնաս է հասցնում այն օբյեկտին, որը, մյուս հանցակիցների հետ պայմանավորվածության համաձայն, ընդգրկված էր նրանց դիտավորությամբ, սակայն պատճառված վնասը ավելի թեթև է լինում, քան պայմանավորվածն էր: Օրինակ՝ հանցակիցները պայմանավորվում են ծանր վնաս պատճառել տուժողի առողջությանը, սակայն կատարողը դիտավորությամբ միջին ծանրության վնաս է հասցնում: Այս իրավիճակում, տեսության մեջ ընդունված մոտեցման համաձայն, առկա կլինի չհաջողված հանցակցություն: Ուստի, մյուս հանցակիցների արարքները ենթակա են որակման՝ դիտավորությամբ ուրիշի առողջությանը ծանր վնաս պատճառելու նախապատրաստություն (<< քր. օր.-ի 35-112-րդ հոդված), իսկ կատարողին՝ որպես դիտավորությամբ միջին ծանրության վնասի պատճառում (<< քր. օր.-ի 113-րդ հոդված)<sup>202</sup>:

Մեր կարծիքով, սակայն, այն դեպքում, երբ կատարողը վնաս է հասցնում այն օբյեկտին, որը, մյուս հանցակիցների հետ պայմանավորվածության համաձայն, ընդգրկված էր նրանց դիտավորությամբ, սակայն պատճառված վնասն ավելի թեթև է լինում, քան պայմանավորվածն էր (այսինքն՝ մյուս հանցակիցները, թեև, չեն հասնում իրենց հանցավոր նպատակի իրագործմանը, բայց նրանց դիտավորությամբ ընդգրկված օբյեկտը ոտնձգվում և վնասվում է), մյուս հանցակիցների պատասխանատվության հարցն առավել նպատակահարմար է լուծել՝ *արարքը ոչ թե նրանց դիտավորությամբ ընդգրկված հանցագործության նախապատրաստություն, այլ այդ հանցագործության փորձ որակելով*: Այսինքն, նկարագրված օրինակում առավել արդարացված կլինի մյուս հանցակիցների արարքները որպես ոչ թե դիտավորությամբ ուրիշի առողջությանը ծանր վնաս պատճառելու նախապատրաստություն, այլ դրա փորձ որակելը:

Մինչդեռ, << քրեական գործող օրենսգրքի պայմաններում այդպիսի որակումն անհնար է: Ուստի՝ կարծում ենք, որ չհաջողված հանցակցության նման իրավիճակների համար << քր. օր.-ում անհրաժեշտ է նախատեսել մյուս անձանց (ենթադրյալ հանցակից-

<sup>202</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով): Դասագիրք բուհերի համար: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 289:

ների) քրեական պատասխանատվություն նաև *հանցափորձի* համար: Այս մոտեցումը, կարծում ենք, առավել հստակ կարտացոլի հանցակիցների անհատական պատասխանատվության գաղափարը:

**Որակական սահմանազանցման** դեպքում հանցակիցների վարքագծի և կատարողի կողմից իրականացված հանցագործության միջև պատճառական և մեղավոր կապն ընդհատուն է, ինչը բացառում է մյուս անձանց քրեական պատասխանատվության հարցը հանցակցության տիրույթում քննարկելու իրավաչափ հնարավորությունը: Հարկ է նկատել, որ կատարողի որակական սահմանազանցման դեպքում մյուս հանցակիցները ենթակա չեն քրեական պատասխանատվության սահմանազանցում համարվող արարքի համար: Միննույն ժամանակ, սակայն, նրանց քրեական պատասխանատվությունը պետք է քննարկել՝ հիմք ընդունելով չհաջողված հանցակցության կանոնները (ՀՀ քր. օր.-ի 39-րդ հոդվածի 5-րդ մաս):

Այսպիսով, կատարողի որակական սահմանազանցումն ունենում է մի քանի դրսևորումներ, որոնց դեպքում տարբեր են նաև մյուս հանցակիցների արարքներին տրվող քրեաիրավական գնահատականները: Մասնավորապես.

1. *Կատարողը պայմանավորված հանցագործության փոխարեն իրականացնում է իր բնույթով բոլորովին այլ հանցանք, այսինքն՝ ոտնձգում է քրեաիրավական պաշտպանության միանգամայն այլ օբյեկտի դեմ, քան պայմանավորվածն էր:* Օրինակ՝ հանցակիցները պայմանավորվում են առանձնապես խոշոր չափերով գաղտնի հափշտակություն կատարել, սակայն հանցանք կատարողն իրականացնում է բռնաբարություն: Այս դեպքում կատարողի արարքը որակվում է որպես բռնաբարություն, իսկ մյուս հանցակիցների արարքները՝ առանձնապես խոշոր չափերով հափշտակության նախապատրաստություն:

Մասնագիտական գրականության մեջ որակական սահմանազանցման այս իրավիճակներում առաջարկվում է կատարողի արարքը որակել նաև այն հանցագործության նախապատրաստություն, որն ընդգրկված էր եղել հանցակիցների ընդհանուր դիտավորությամբ: Այսինքն՝ վերոնշյալ օրինակում, բացի բռնաբարությու-

նից, կատարողի արարքն առաջարկվում է որակել նաև որպես առանձնապես խոշոր չափերով հափշտակության նախապատրաստություն<sup>203</sup>:

Մինչդեռ, դժվար է անվերապահորեն համաձայնել վերոգրյալ մոտեցմանը, քանի որ կատարողի կողմից մտադրված հանցագործությունը չկատարելը կարող է պայմանավորված լինել տարբեր պատճառներով: Հանցագործության որակման տեսանկյունից, այդ պատճառներով պայմանավորված, կարելի է առանձնացնել հետևյալ իրավիճակները.

ա) կատարողը չի իրականացնում մյուս հանցակիցների հետ պայմանավորված հանցագործությունն *իր կամքով*, և դրա փոխարեն կատարում է միանգամայն այլ հանցանք,

բ) կատարողը չի իրականացնում մյուս հանցակիցների հետ պայմանավորված հանցագործությունն *իր կամքից անկախ հանգամանքներով*, և դրա փոխարեն կատարում է միանգամայն այլ հանցանք:

Այն դեպքում, երբ կատարողը մյուս հանցակիցների հետ պայմանավորված հանցագործությունը չի իրականացնում իր կամքով, նրա արարքը պետք է գնահատվի հանցագործությունից կամովին հրաժարում (եթե, իհարկե, հանցագործության նախապատրաստության կամ փորձի փուլում է որոշել հետ կանգնել իր հանցավոր մտադրությունն ավարտին հասցնելուց): Տվյալ հանգամանքը բացառում է կատարողի արարքն այն հանցագործության նախապատրաստություն որակելը, որն ընդգրկված էր մյուս հանցակիցների ընդհանուր դիտավորությամբ:

Մինչդեռ այն դեպքում, երբ կատարողը մյուս հանցակիցների հետ պայմանավորված հանցագործությունը չի իրականացնում իր կամքից անկախ հանգամանքներով, իրավիճակն այլ է: Մասնավորապես՝ մյուս հանցակիցների պատասխանատվության հարցը պետք է լուծվի չավարտված հանցագործության դեպքում հանցակցության որակման կանոններով (<< քր. օր.-ի 39-րդ հոդվածի 4-րդ մաս), իսկ կատարողի արարքը պետք է որակվի հանցագործություն-

---

<sup>203</sup> Այս մասին տե՛ս Энциклопедия уголовного права. Том 6. Соучастие в преступлении / Отв. ред. В.Б. Малинин. СПб., 2007, էջ 490, ինչպես նաև՝ Лучший учебник уголовного права (Общая часть). СПб., 2011, էջ 309:

ների համակցությամբ. մյուս հանցակիցների ընդհանուր դիտավորությամբ ընդգրկված հանցագործության նախապատրաստություն կամ փորձ, կախված նրանից, թե որ փուլում է ընդհատվել վերջինիս արարքը, և Հատուկ մասի այն հոդվածով, որով քրեական պատասխանատվություն է նախատեսվում սահմանազանցում համարվող բուն արարքի համար:

2. *Կատարողը, պայմանավորվածից բացի, իրականացնում է ևս մեկ այլ հանցանք:* Օրինակ՝ պայմանավորված գողությունից բացի, իրականացնում է նաև բռնաբարություն: Այս դեպքում կատարողի արարքը որակվում է հանցագործությունների համակցությամբ. բռնաբարություն և գողություն, իսկ մյուս հանցակիցների արարքները՝ որպես գողության հանցակցություն:

3. *Կատարողը, մյուս հանցակիցների հետ պայմանավորվածի փոխարեն, իրականացնում է միանգամայն այլ հանցագործություն, սակայն մյուս հանցակիցների դիտավորությամբ ընդգրկված օբյեկտը՝ որպես կատարված հանցագործության պարտադիր կամ ֆակտուրադիր լրացուցիչ օբյեկտ, ուրն ձգվում և վնասվում է:* Այլ կերպ ասած՝ կատարողը, պայմանավորվածի փոխարեն, վնաս է պատճառում մեկ այլ օբյեկտի, սակայն հանցակիցների դիտավորության մեջ ընդգրկված հանցանքը հանդիսանում է դրա բաղկացուցիչ մաս ու կլանվում կատարողի հանցագործությամբ: Այս դեպքում, ըստ էության, իրականացվում է հանցակիցների մտադրությունը, և նրանք հասնում են իրենց հանցավոր նպատակի իրականացմանը: Ուստի, կատարողի արարքը պետք է որակվի նրա կողմից փաստացի կատարած հանցանքի համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածով, իսկ մյուս հանցակիցները ենթակա են պատասխանատվության իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությանը հանցակցելու համար: Օրինակ՝ եթե անձը դրդում է կատարողին տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելու, սակայն կատարողն իրականացնում է ավազակային հարձակում, որը զուգորդվում է տուժողի առողջությանը ծանր վնաս պատճառելով, ապա կատարողի արարքը որակվում է ՀՀ քր. օր.-ի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, իսկ դրդիչինը՝ ՀՀ քր. օր.-ի 38-112-րդ հոդվածով:

Կա՛մ՝ եթե դրդիչը դրդում է կատարողին ծանր վնաս պատճառել տուժողի առողջությանը, մինչդեռ կատարողը պատճառում է կյանքի հետ անհամատեղելի ծանր վնաս, ինչի հետևանքով տուժողը զրկվում է կյանքից: Վերջին իրավիճակում, թեև կյանքն ու առողջությունը քրեաիրավական պաշտպանության միանգամայն տարբեր օբյեկտներ են, սակայն մասնակիցների քրեական պատասխանատվության հարցը պետք է լուծվի ոչ թե որակական, այլ քանակական սահմանազանցման կանոններով: Բանն այն է, որ նկարագրված իրավիճակում հանցակցի դիտավորությամբ ընդգրկված հանցագործությունը լրիվությամբ իրականացվում է: Կատարողի արարքը և դրա արդյունքում վրա հասած հետևանքն ամբողջովին կլանում են դրդիչի դիտավորությամբ ընդգրկված հանցանքը, իսկ վերջինս, ըստ էության, հասնում է իր հանցավոր նպատակի իրականացմանը: Այսինքն՝ նկարագրված իրավիճակում դրդիչը պետք է պատասխանատվության ենթարկվի ոչ թե առողջությանը վնաս պատճառելու հանցագործության նախապատրաստության, այլ իր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությանը, այն է՝ տուժողի առողջությանը վնաս պատճառելուն հանցակցելու համար, իսկ կատարողը՝ ավարտված սպանության համար:

Միևնույն ժամանակ, ***հանցակցի սահմանազանցումից հարկ է տարբերել վարքագծի համաձայնեցված գծից այնպիսի շեղումը, որը դուրս չի գալիս ընդհանուր հանցավոր մտադրության սահմաններից և չի ազդում արարքի քրեաիրավական գնահատականի վրա:***

Այսպես՝ եթե սպանություն կատարողը հրազեն գործադրելու փոխարեն գործադրում է դանակ, կամ գույքը պահարանից հափշտակելու փոխարեն հափշտակություն է կատարում գրասեղանի դարակից, ապա այդ շեղումներն ընդհանուր առմամբ դուրս չեն գալիս մյուս հանցակիցների դիտավորության սահմաններից, և համաձայնության շրջանակներն, ըստ էության, չեն փոխվում, քանզի այդ հանգամանքները չունեն որևէ իրավական նշանակություն և չեն կարող ազդել արարքի որակման վրա:

Անհրաժեշտ է նկատել նաև, որ սահմանազանցում կարող է թույլ տրվել ոչ միայն կատարողի կողմից: Մյուս հանցակիցները (կազմա-

կերպիչ, դրդիչ, օժանդակող) ևս կարող են խախտել ընդհանուր համաձայնեցված վարքագիծը՝ կատարելով այնպիսի հանցագործություն, որը «սանկցիավորված» չի եղել այլ հանցակիցների կողմից: Այսպես, օրինակ՝ օժանդակողը խոստանում է որպես միջոց տրամադրել ավտոմեքենա, սակայն առանց մյուս հանցակիցների գիտության, հափշտակում է այն, կամ ավտոմեքենային առանց հափշտակելու նպատակի տիրանալիս սպանում է դրա սեփականատիրոջը և այլն: Նման դեպքերում սահմանազանցում թույլ տված հանցակցի արարքը, բացի հիմնական հանցագործության հանցակցությունից, հարկ է որակել նաև սահմանազանցում համարվող բուն արարքի համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմով:

Բացի այդ՝ սահմանազանցում (էքսցես) հնարավոր է հանցակցության յուրաքանչյուր ձևի պարագայում: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունները, սակայն, վկայում են, որ հիմնականում այն թույլ է տրվում նախնական համաձայնությամբ խմբի կողմից հանցանքը կատարելու դեպքերում:

*Հանցակցի սահմանազանցումը բացակայում է, երբ համակարարողի կողմից թույլ է տրվում սահմանազանցում, իսկ մյուս հանցակիցներն իրենց գործողություններով միանում են սահմանազանցում համարվող բուն արարքին կամ օգտվում են դրա արդյունքներից:* Օրինակ՝ երբ նախնական համաձայնությամբ խմբի կողմից գործություն կատարելիս հանցակիցներից մեկը դուրս է գալիս պայմանավորվածության շրջանակներից և կատարում այնպիսի գործողություններ, որոնք իրենց ամբողջությամբ կազմում են ավազակային հարձակման կամ կողոպուտի որակյալ հանցակազմի օբյեկտիվ կողմը (օրինակ՝ բռնություն է գործադրում պահակի նկատմամբ), իսկ մյուս համակատարողները դրանից հետո շարունակում են հանցագործությանն իրենց մասնակցությունը: Տվյալ դեպքում նրանց արարքները պետք է որակվեն որպես նախնական համաձայնությամբ խմբի կողմից ավազակային հարձակում կամ ծանրացնող հանգամանքով կողոպուտ կատարելու համար պատասխանատվություն նախատեսող հոդվածով:

**Հանցակցի սահմանազանցման սուբյեկտիվ կողմի համար բնութագրական է այն, որ սահմանազանցում հնարավոր է միայն կոնկրետացված դիտարկության դեպքում:**

Չկոնկրետացված դիտարկության պարագայում, քանզի հստակ չեն ընդգծվում հանցակցի դիտարկության սահմանները, և ցանկացած հանցավոր հետևանքի պատճառում վերջինիս համար ցանկալի է, ուստի, մյուս հանցակիցների դիտարկության շրջանակներից դուրս գալը և սահմանազանցում (էքսցես) թույլ տալը հնարավոր չէ:

Այս կապակցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ. «(...) հանցակցի սահմանազանցման հարցը քննարկելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձրնել ոչ միայն երկու կամ ավելի անձանց վարքագծի միջև պատճառական կապի առկայությանը, նրանց տեղեկացվածությանը այդ առումով, այլև նրանց դիտարկության կոնկրետացված կամ չկոնկրետացված բնույթին: Հետևաբար՝ հանցակցի սահմանազանցում առկա չէ այն դեպքում, երբ հանցակցության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներն օրգանական ամբողջության մեջ գնահատելու արդյունքում կպարզվի, որ՝

ա) միևնույն հանցանքը կատարող երկու կամ ավելի անձինք փոխադարձաբար տեղյակ են եղել, որ իրենց արարքները գտնվում են պատճառական կապի մեջ (համատեղ են) և ուղղված են միևնույն հանցագործության կատարմանը,

բ) յուրաքանչյուր հանցակից նախատեսել է հանցագործության՝ հանրության համար վրանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը և ցանկացել կամ գիտակցաբար թույլ է տվել դրանց առաջացումը»<sup>204</sup>:

Այսպիսով՝ սահմանազանցում համարվող բուն արարքի համար մյուս հանցակիցները ենթակա չեն քրեական պատասխանատվության: Այդ հանցագործության համար քրեական պատասխանատվության է ենթակա միայն այն հանցակիցը, ում կողմից թույլ է տրվել սահմանազանցումը (ՀՀ քր. օր.-ի հոդված 40-ի 2-րդ մաս):

<sup>204</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Ա.Միքայելյանի և Ա.Վաղարշակյանի վերաբերյալ 05.12.2012թ. թիվ ԵԱԲԴ/0174/01/11 գործով որոշման 19-րդ կետը:

Կատարողի հանցավոր գործողությունները (անգործությունը), որն ընդգրկված չի եղել մյուս հանցակիցների դիտավորությամբ, պետք է որակվի որպես ինքնուրույն կատարված: Հետևաբար, հանցանքը խմբի կամ կազմակերպված խմբի կողմից կատարելու ծանրացնող հանգամանքները չեն կարող մեղսագրվել վերջինիս՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի սահմանազանցում թույլ են տալիս երկու կամ ավելի համակատարողներ:

### 5.7. Չհաջողված հանցակցության որակումը

Դատական պրակտիկայի մեր ուսումնասիրությունները վկայում են, որ երբեմն չհաջողված հանցակցության դեպքերը դուրս են մնում իրավակիրառողների ուշադրության շրջանակներից և չեն արժանանում որևէ իրավական գնահատականի: Քրեական գործող օրենսդրությունն, իր հերթին, չի օգտագործում «չհաջողված հանցակցություն» եզրույթը: Օրենսդիրը, փորձելով կարգավորել չհաջողված հանցակցության հետ կապված հարցերը, ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 5-րդ մասում շարադրել է հետևյալ դրույթը. *«Եթե կազմակերպչի, դրդիչի, կամ օժանդակողի գործողությունները չեն հաջողվում իրենցից անկախ հանգամանքներով, ապա այդ անձանց պատասխանատվությունը վրա է հասնում համապատասխան հանցագործության նախապատրաստության համար»:* Օրենսդրական այս նորմի տառացի մեկնաբանությունը և գործնական կիրառումը, սակայն, առաջ են բերում մի շարք խնդիրներ ու բարդություններ:

Հիմնական խնդիրը հանգում է նրան, որ հոդվածի ձևակերպումը հնարավորություն չի տալիս բացահայտելու չհաջողված հանցակցության ձևի շրջանակը: Նորմի բովանդակային տարրնկալումը, մասնավորապես, կապված է այն հանգամանքի հետ, որ օրենքում պարզաբանված չէ, թե ինչ հասկանալ՝ կազմակերպչի, դրդիչի կամ օժանդակողի չհաջողված գործողություններ ասելով: Արդյո՞ք դրանք միայն այն դեպքերն են, երբ կազմակերպչին, դրդիչին կամ օժանդակողին չի հաջողվում իրականացնել իրենց վարքագծի արտաքին դրսևորումը: Այսինքն՝ երբ օժանդակողը չի կարողանում



գործիք կամ միջոց տրամադրել կատարողին, դրդիչին չի հաջողվում ենթադրյալ կատարողի մեջ հանցանքը կատարելու դիտավորություն առաջացնել և այլն<sup>205</sup>:

Միևնույն ժամանակ, եթե մյուս հանցակիցներին հաջողվում է իրականացնել իրենց համապատասխան դերից բխող գործողությունները, սակայն կատարողը հետագայում կա՛մ ընդհանրապես ձեռնամուխ չի լինում հանցանքի կատարմանը, կա՛մ կամովին հրաժարվում է հանցագործությունից, ապա այս դեպքերում ևս մյուս հանցակիցների գործողությունները պե՛տք է համարել չհաջողված, թե՛ ոչ: Կամ՝ չհաջողված հանցակցությունը կարո՞ղ է ընդհանրապես հանցակցություն համարվել, իսկ անձանց քրեական պատասխանատվության հարցը լուծվել հանցակցության շրջանակներում: Ուստի՝ այս ինստիտուտի էությունը բացահայտելու և իրավակիրառ պրակտիկայում ճիշտ կողմնորոշվելու համար, նախ, հարկ է անդրադառնալ մասնագիտական գրականության մեջ առաջ քաշված «չհաջողված հանցակցություն» եզրույթի տեսական, իրավագիտական մեկնաբանմանը<sup>206</sup>:

Քրեական իրավունքի գիտության մեջ տարածված մոտեցման համաձայն՝ չհաջողված հանցակցությունը բնորոշվում է որպես անարդյունք, անհետևանք հանցակցություն: Ի տարբերություն հանցակցության, որի պարագայում մյուս հանցակիցների արարքները կատարողի հանցավոր գործունեության հետ գտնվում են մեղավոր և պատճառական կապի մեջ, չհաջողված հանցակցության պարագայում մասնակիցների արարքներն՝ ուղղված կատարողի հետ համատեղ հանցանքի կատարմանը, մատնվում են անհաջողության:

---

<sup>205</sup> ՀՀ քր. օր.-ի 39-րդ հոդված 5-րդ մասում ամրագրված «գործողություններ» եզրույթի ներքո օրենսդիրը, ըստ էության, նկատի է ունեցել նաև անձի վարքագծի պասիվ դրսևորումը: Անվիճելի է, որ հանցակցել հնարավոր է նաև անգործությամբ: Ուստի՝ ճիշտ կլիներ, որ օրենսդրական ձևակերպման մեջ տեղ գտած «գործողություն» եզրույթը փոխարինվեր «արարք»-ով, որն իր մեջ ընդգրկում է անձի վարքագծի ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ դրսևորումը:

<sup>206</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Պ.Մկրտչյան, «Չհաջողված հանցակցության որոշ հիմնահարցեր»: ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 2017, 1.6 (23), հասարակական գիտություններ, էջեր 230-241:

կա՛մ ընդհանրապես բացակայում է կատարողի անձը՝ որպես հանցակցությունը ձևավորող հիմնական սուբյեկտ, կա՛մ մասնակիցների և կատարողի միջև չի ձևավորվում երկկողմանի սուբյեկտիվ կապ, կա՛մ էլ բացակայում է հանցակցությունը բնութագրող արարքների համատեղության օբյեկտիվ հատկանիշը (այդ թվում՝ պատճառական կապը)՝ մյուս հանցակիցների (կազմակերպչի, դրդիչի և օժանդակողի) կամքից անկախ հանգամանքներով<sup>207</sup>:

Դրանով պայմանավորված՝ հնարավոր են չհաջողված հանցակցության հետևյալ հիմնական իրավիճակները.

1) *անձի արարքներն՝ ուղղված ենթադրյալ կատարողի մեջ հանցանք կատարելու դիտարկություն առաջացնելուն, չեն հաջողվում. կատարողի մոտ ընդհանրապես հանցանք կատարելու մտադրություն չի առաջանում,*

2) *անձին, թեև, հաջողվում է կատարողի մեջ առաջացնել հանցանք կատարելու դիտարկություն, սակայն վերջինս ձեռնամուխ չի լինում հանցանքի կատարմանը այլ պատճառներով:*

Նշված իրավիճակներում մյուս հանցակիցների (կազմակերպչի, դրդիչի, օժանդակողի)<sup>208</sup> արարքները պետք է որակվեն որպես **հանցագործության նախապատրաստություն**: Բանն այն է, որ ենթադրյալ կատարողին հանցագործության մղելուն և նրա հետ համատեղ հանցանք կատարելուն ուղղված արարքներն արդեն զուտ դիտարկության բացահայտում չեն: Դրանք օբյեկտիվանում, առարկայանում են հանրորեն վտանգավոր կոնկրետ արարքներում:

---

<sup>207</sup> Տե՛ս, նույն տեղում:

<sup>208</sup> Չհաջողված հանցակցության վերաբերյալ օրենսդրական ձևակերպման մեջ օգտագործված «կազմակերպիչ», «դրդիչ» և «օժանդակող» հասկացությունները, դրանց դասական իմաստով, կիրառելի չեն, ինչը ևս պետք է օրենսդրի կողմից վերանայման առարկա դառնա: Մեր այս դիրքորոշումը պայմանավորված է այն իրողությամբ, որ հանցակցությունն առկա է այն դեպքում, երբ առկա են հանցակցության օբյեկտիվ և սուբյեկտիվ բոլոր հատկանիշները, իսկ չհաջողված հանցակցության պարագայում կա՛մ բացակայում է կատարողի անձը, կա՛մ ընդհանրապես մասնակիցների և կատարողի միջև չի ձևավորվում սուբյեկտիվ կապ, կա՛մ էլ բացակայում է արարքների համատեղության օբյեկտիվ չափանիշը: Ուստի՝ չհաջողված լինելու դեպքում խոսք չի կարող գնալ հանցակցության մասին:

Մյուս մասնակիցները հանդես են գալիս որպես հանցագործության ինքնուրույն նախաձեռնողներ, փորձում կատարողի գիտակցության մեջ ստեղծել շարժառիթներ՝ նպատակ ունենալով նրան մղել հանցանքի կատարմանը: Եթե նրանց արարքները չեն հանգեցնում ցանկալի արդյունքի, ապա դա կախված չի լինում նրանց կամքից: Միաժամանակ, նշված մասնակիցների արարքները սահմանափակվում են հանցանքի կատարման համար պայմաններ ստեղծելով, և այդ իսկ պատճառով՝ որակվում որպես հանցագործության նախապատրաստություն:

Ինչ վերաբերում է պոտենցիալ կատարողին, ապա նրա մեջ հանցանքը կատարելու դիտավորության չառաջանալը կամ առաջանալիս՝ կոնկրետ արարքում չառարկայանալը, այդ թվում՝ հանցանքը կատարելու նրա հրապարակային խոստումները, չեն պարունակում որևէ հանցակազմ: Կատարողի կողմից հանցանքը կատարելու համաձայնությունը ենթադրում է զուտ հանցավոր դիտավորության բացահայտում:

Մասնագիտական գրականության մեջ ընդունված է առանձնացնել նաև չհաջողված հանցակցության հետևյալ դրսևորումները.

*ա) չհաջողված կազմակերպչական գործունեություն*, երբ անձինք, ում ուժերը փորձ է արվում համախմբել հանցանքի կատարման համար, չեն ընդունում առաջարկը, կամ սկզբում համաձայնում են համագործակցել, սակայն հետագայում հրաժարվում են հանցանքի կատարումից, ինչպես նաև, երբ ենթադրյալ կազմակերպիչն անհաջող փորձ է կատարում ստեղծել կազմակերպված հանցավոր խումբ կամ հանցավոր համագործակցություն,

*բ) չհաջողված դրդչություն*, երբ ենթադրյալ կատարողը չի համաձայնում կատարել հանցանքը, կամ համաձայնելուց հետո հրաժարվում է հանցագործությունից,

*գ) չհաջողված օժանդակություն*, երբ ենթադրյալ կատարողը սկզբում ընդունում է օժանդակողի աջակցությունը, իսկ հետագայում, հրաժարվելով հանցագործությունից՝ չի նախաձեռնում անգամ նախապատրաստական գործողություններ, ինչպես նաև ուշացած օժանդակության դեպքում՝ երբ աջակցությունը ցույց է տրվում հանցագործությունից հետո:

Օժանդակությունը չհաջողված է համարվում նաև այն դեպքում, երբ օժանդակողը սխալվում է անձի հարցում և աջակցություն է ցույց տալիս մեկին, ով ընդհանրապես չուներ հանցանքը կատարելու մտադրություն: Չհաջողված օժանդակություն առկա է նաև այն իրավիճակում, երբ օժանդակել ցանկացող անձը փորձում է միջոց կամ գործիք տրամադրել ենթադրյալ կատարողին, սակայն բռնվում է իրավապահ մարմինների կողմից և չի կարողանում դրանք տրամադրել<sup>209</sup>:

Մեր կարծիքով՝ օժանդակությունը կարելի է չհաջողված համարել նաև, երբ օժանդակողը միջոց, գործիք, տեղեկատվություն, խորհուրդ կամ ցուցում է տրամադրում ենթադրյալ կատարողին, իսկ վերջինս ընդհանրապես չի օգտվում դրանցից: Ու, եթե կատարողը հետագայում կատարի հանցանքը, այնուամենայնիվ օժանդակել փորձող անձի և կատարված հանցանքի միջև կբացակայի հանցակցության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ պատճառական կապը: Օրինակ՝ օժանդակողը հրազեն է տրամադրում կատարողին՝ տուժողին կյանքից զրկելու համար, սակայն կատարողը թույնում է վերջինիս: Համապատասխանաբար նման դեպքերում ևս չհաջողված օժանդակությունը պետք է որակել որպես հանցագործության նախապատրաստություն (ներկայացված օրինակում՝ սպանության նախապատրաստություն):

Չհաջողված հանցակցության յուրատիպ դրսևորում է այն իրավիճակը, երբ անձը դրդում է մեկ այլ անձի, որպեսզի վերջինս մի երրորդ մեկի հետ խմբի կազմում մասնակցի հանցանքի կատարմանը, սակայն նա կամովին հրաժարվում է հանցագործությունից: Օրինակ՝ Ա.-ն դրդում է Բ.-ին, որպեսզի վերջինս՝ որպես համակատարող, Գ.-ի հետ համատեղ մասնակցի բնակարանային գողությանը, սակայն, դեռևս բնակարան մուտք չգործած, Բ.-ն մտափոխվում է և հեռանում (կամովին հրաժարվում է): Եթե նույնիսկ Գ.-ի կողմից հանցանքը հաջողությամբ հասցվի ավարտին, միևնույնն է, Ա.-ի արարքը պետք է որակվի որպես բնակարանային գողության նախապատրաստություն, քանի որ նրա արարքը սահմանափակվել է

---

<sup>209</sup> Տե՛ս, օրինակ՝ Питецкий В. Неудавшееся соучастие в преступлении // Российская юстиция, № 4, 2003, էջ 51:

միայն Բ.-ին հանցանքի կատարմանը ներգրավելով: Մինչդեռ այդ անձի կողմից հանցանքը կատարելու դեպքում էր միայն, որ ստեղծըվելու էր պատճառական կապ Ա.-ի արարքների և հանցավոր հետևանքի միջև: Հետևաբար, քանզի Բ.-ի կողմից հանցագործությունից կամովին հրաժարումը հանգեցնում է Ա.-ի արարքի և հիմնական հանցավոր արդյունքի միջև պատճառական կապի ընդհատման, խոսք չի կարող գնալ հանցակցության մասին, իսկ Ա.-ի արարքը պետք է քննարկվի չհաջողված հանցակցության համատեքստում:

Բացի այդ՝ չհաջողված հանցակցության կանոններով պետք է որակել նաև այն անձի արարքը, ով թույլ է տալիս փաստական սխալ հանցակցության հատկանիշների առկայության կապակցությամբ: Այսպես, երբ սուբյեկտի հատկանիշներով օժտված անձը հանցակցությամբ հանցանքը կատարելու նպատակով դրդում կամ օժանդակում է այնպիսի անձի, ով հասած չի լինում քրեական պատասխանատվության տարիքի կամ հանրորեն վտանգավոր արարքը կատարում է անմեղսունակության վիճակում, իսկ նա չի գիտակցում այդ հանգամանքը: Տվյալ դեպքում «անպիտան» անձին հանցանքի կատարմանը ներգրաված (դրդած, օժանդակած, հանցագործությունը կազմակերպած) անձի արարքները պետք է որակվեն որպես համապատասխան հանցագործության նախապատրաստություն (եթե կատարվածը ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն է), անգամ՝ երբ կատարվում է քրեական օրենքով արգելված արարքը կամ վրա է հասնում հանրորեն վտանգավոր հետևանքը: Նկարագրված իրավիճակներում բացակայում է հանցակցությունը, և առավելագույնը կարող է խոսք գնալ դրա չհաջողված լինելու մասին: Օրինակ՝ եթե անձը դրդում է մեկ այլ անձի սպանություն կատարելուն, սակայն չի գիտակցում, որ վերջինս չի հասել քրեական պատասխանատվության տարիքի կամ անմեղսունակ է (հանցանքը կատարում է անմեղսունակության վիճակում), ապա, նույնիսկ, վտանգավոր հետևանքի վրա հասնելու դեպքում, հանցանքի կատարմանը դրդած անձի արարքը պետք է որակվի սպանության նախապատրաստություն:

Մասնագիտական գրկանության մեջ այս հարցի առնչությամբ առաջարկվում է որակման միանգամայն այլ տարբերակ: Այսպես՝

անձի արարքը, ով դրդում է անմեղսունակին (քրեական պատասխանատվության տարիքի չհասածին) հանցանք կատարելուն, սակայն չի գիտակցում վերջինիս անմեղսունակ լինելը (քրեական պատասխանատվության տարիքի չհասած լինելը), առաջարկվում է որակել որպես հանցագործության դրդչության փորձ: Այս մոտեցումը հանդիպում է նաև ՌԴ դատական պրակտիկայում<sup>210</sup>: Մինչդեռ արարքի որակման այս տարբերակին դժվար է համաձայնել, քանզի ՀՀ քրեական օրենսգրքի՝ հանցակիցների պատասխանատվությունը կանոնակարգող իրավանորմերի համատեքստում այն չի դիմանում որևէ քննադատության. այդ նորմերը չեն նախատեսում հանցակիցների արարքի որակման նման հնարավորություն (տարբերակ):

ՀՀ քրեական գործող օրենսգրքին խորթ է «հանցակցության փորձի» ինստիտուտը՝ ի տարբերություն Գերմանիայի քրեական օրենսդրության: ՀՀ քր. օր.-ը չավարտված հանցագործություններում ճանաչում է միայն «փորձի հանցակցության» հնարավորությունը, որն առկա է միայն այն դեպքում, երբ հանցագործության սուբյեկտ-կատարողը, մտնելով հանցափորձի փուլ, հանցանքն ավարտին չի հասցնում իր կամքից անկախ հանգամանքներով: Ընդ որում՝ հանցագործության փորձի փուլում կատարողի կամքից անկախ հանգամանքերով հանցագործությունն ավարտին չհասցնելու դեպքում, մյուս հանցակիցների քրեական պատասխանատվությունը վրա է հասնում ոչ թե հանցակցության փորձի, այլ համապատասխան հանցագործության փորձին հանցակցելու համար (ՀՀ քր. օր.-ի 39-րդ հոդվածի 4-րդ մաս): Հետևաբար, եթե բացակայում է կատարողը՝ որպես հանցագործության սուբյեկտ (հասած չի լինում պատասխանատվության տարիքի կամ քրեական օրենքով արգելված արարքը կատարում է անմեղսունակության վիճակում և այլն), ապա խոսք չի կարող գնալ հանցակցության մասին: Տվյալ դեպքերում առկա է չհաջողված հանցակցություն, և մասնակիցների քրեական

---

<sup>210</sup> Տե՛ս Корнеева А.В. Теория квалификации преступлений: Учебное пособие для магистрантов. М., 2018, էջեր 51-52:

պատասխանատվության հարցը պետք է լուծվի չհաջողված հանցակցության կանոնով (ՀՀ քր. օր.-ի 39-րդ հոդվածի 5-րդ մաս):

ՌԴ դատական պրակտիկայում երբեմն չհաջողված հանցակցության նման իրավիճակներում անձի արարքը որակվում է նաև որպես ավարտված հանցագործությանը հանցակցություն<sup>211</sup>, ինչը դարձյալ, կարելի է ասել, չի բխում ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված հանցակցության ինստիտուտի իրավաբանական բնույթից:

Գործնականում պատահում են դեպքեր, երբ անձը, չկարողանալով այլ անձի մղել հանցանքի կատարմանը, անձամբ է ձեռնամուխ լինում դրա իրականացմանը: Օրինակ՝ Ա.-ն փորձում է համոզել Բ.-ին, որպեսզի նա կատարի բնակարանային գողություն, սակայն վերջինս հրաժարվում է, որից հետո Ա.-ն անձամբ է կատարում այդ հանցագործությունը: Այս իրավիճակում Ա.-ի արարքը պետք է որակվի որպես մեկ հանցագործություն՝ բնակարանային գողություն:

Չհաջողված հանցակցության կանոններով է լուծվում մյուս հանցակիցների արարքների քրեաիրավական գնահատականի հարցը նաև կատարողի կողմից որակական սահմանազանցում (էքսցես) թույլ տալու դեպքում (այդ մասին առավել մանրամասն խոսվել է հանցակցի սահմանազանցման որակումը հատվածում):

Նույն կանոններով է լուծվում նաև մյուս հանցակիցների քրեական պատասխանատվության հարցը կատարողի կողմից հանցագործությունից կամովին հրաժարվելու պարագայում, որին առավել մանրամասն կանդրադառնանք հաջորդիվ:

Ամփոփելով ասվածը՝ հարկ է նշել նաև, որ, քանզի չհաջողված հանցակցության դեպքում անձի արարքը չի որակվում հանցակցության կանոններով, ուստի կատարվածին քրեաիրավական գնահատական տալիս ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 38-ին հղում չի կատարվում:

---

<sup>211</sup> Ст'я Определение Верховного суда РФ № 56-ДП-04-20 от 20 мая 2004 г.; № 85-о11-10сП от 23 июня 2011 г.; № 81-д10-11 от 1 июня 2010 г. Доступ из справ.-правовой системы «Консультант-Плюс»:

### 5.8. Հանցակցի կամովին հրաժարման որակումը

Հանցակցության դեպքում անձը պատասխանատվություն է կրում ոչ միայն իր կատարած արարքի, այլև առանձին հանցակիցների ամբողջ հանցավոր գործունեության համար: Ուստի, համատեղ հանցավոր գործունեությունից մի մասնակցի հրաժարումն առաջ է բերում ոչ միայն իր, այլև մյուս մասնակիցների արարքներին ճիշտ քրեաիրավական գնահատական տալու խնդիր:

Հանցակցի կամովին հրաժարման ինստիտուտին առնչվող ՀՀ քրեական օրենսգրքի 36-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, կարծես, սահմանում են այն իրավական հիմքը, որը թույլ է տալիս լուծել հանցակցիների՝ հանցավոր գործունեությունից հրաժարման հարցերը: Այս նորմերի թերի և անկատար լինելը, սակայն, երբեմն թույլ չի տալիս իրավակիրառողին ճիշտ կողմնորոշվել դատական պրակտիկայում և հստակ իրավական գնահատական տալ հանցակցի կամովին հրաժարման դեպքերին:

Հարկ է արձանագրել, որ հանցակցի կամովին հրաժարման ինստիտուտի կիրառման առանձնահատկությունները, նախ և առաջ, պայմանավորված են հանցավոր գործունեությանն անձի մասնակցության եղանակով (հանցակցության ձև) և հանցակցի տեսակով:

Այսպես՝ **ընդհանուր (դերերի բաժանմամբ) հանցակցության ձևի դեպքում**, երբ համատեղ հանցավոր գործունեությանը, կատարողից բացի, մասնակցում են այլ հանցակիցներ (կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող), կամովին հրաժարում հնարավոր է նրանցից յուրաքանչյուրի կողմից: Կախված հանցագործությունից կամովին հրաժարված հանցակցի տեսակից, սակայն, հնարավոր են որակման տարբեր իրավիճակներ, որոնք, ընդհանուր առմամբ, հանգում են հետևյալին.

1) Եթե ընդհանուր հանցակցության ձևի պարագայում հանցագործությունից *կամովին հրաժարվում է այլ հանցակիցը (կազմակերպիչը, դրդիչը կամ օժանդակողը)*, ապա կատարողի արարքը որակվում է կա՛մ հանցագործության նախապատրաստություն, կա՛մ հանցավորձ՝ կախված նրանից, թե որ փուլում է տեղի ունեցել հանցակցի կամովին հրաժարումը: Ընդ որում, կամովին հրաժարված



հանցակիցը ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում: Օրինակ՝ եթե օժանդակողը սպանության գործիք ակոսափող հրազենն ապօրինի իրացնում է կատարողին, ինչից հետո, կամովին հրաժարվելով հանցագործությունից, կանխում է սպանության կատարումը, ապա, թեև, հանցակիցը կազատվի սպանությանն օժանդակելու համար քրեական պատասխանատվությունից, սակայն կենթարկվի պատասխանատվության ապօրինի կերպով ակոսափող հրազեն իրացնելու համար (ՀՀ քր. օր.-ի հոդված 235-ի 1-ին մաս):

2) Եթե ընդհանուր հանցակցության ձևի պարագայում հանցագործությունից *կամովին հրաժարվում է կատարողը*, ապա, անկախ հանցագործության փուլից, մյուս հանցակիցների արարքը պետք է որակվի որպես հանցագործության նախապատրաստություն: Հանցագործությանը հանցակցելու համար անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության, երբ հնարավոր է կատարողի քրեական պատասխանատվությունը: Կատարողի կողմից հանցագործությունից կամովին հրաժարումը բերում է հանցակցության կազմալուծման, և, ըստ էության, հանգեցնում չհաջողված հանցակցության: Հետևաբար, հանցագործությունից կամովին հրաժարման հիմքով կատարողի քրեական պատասխանատվության բացառումն անհնար է դարձնում մյուս մասնակիցների քրեական պատասխանատվությունը հանցակցության կանոններով լուծելու հնարավորությունը, ինչը, սակայն, չի բացառում նրանց ինքնուրույն պատասխանատվությունը կատարած հանցավոր արարքի համար:

Հարկ է նկատել նաև, որ կատարողի կողմից հանցագործությունից կամովին հրաժարման դեպքում կազմակերպչի, դրդիչի կամ օժանդակողի քրեական պատասխանատվության հարցը լուծող հատուկ նորմ ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված չէ: Միակ նորմը, որն ընդհանուր գծերով կարգավորում է նշված հարաբերությունները, թերևս, ՀՀ քր. օր.-ի 39-րդ հոդվածի 5-րդ մասով ամրագրված այն դրույթն է, համաձայն որի՝ *եթե կազմակերպչի, դրդիչի կամ օժանդակողի գործողությունները չեն հաջողվում իրենցից անկախ*

հանգամանքներով, ապա այդ անձանց պատասխանատվությունը վրա է հասնում համապատասխան հանցագործության նախապատրաստության համար<sup>212</sup>:

Հանցակցության **համակարարման ձևի (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնության կամ առանց նախնական համաձայնության) դեպքում**, երբ հանցագործության օբյեկտիվ կողմի կամ դրա մասի իրականացմանը մասնակցում են երկու կամ ավելի կատարողներ, հանցակցի կամովին հրաժարման խնդիրը լուծելիս առաջ են գալիս որոշակի վիճահարույց հարցեր: Մասնավորապես, ՀՀ քրեական գործող օրենսգրքում առանձին կարգավորված չեն համակատարման պարագայում հանցակցի կամովին հրաժարման հարաբերությունները: Հետևաբար, ողջամտորեն հարց է ծագում՝ արդյո՞ք կարելի է համակատարողի կողմից հանցագործությունից կամովին հրաժարում համարել այն դեպքերը, երբ վերջինս մինչև հանցագործության ավարտը կամովին դադարեցնում է իր դերից բխող գործողությունների կատարումը՝ անկախ մյուս կատարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելուց, թե՛ համակատարողի կամովին հրաժարման դեպքում անհրաժեշտ է, որ նա պետական մարմիններին հաղորդելով կամ ձեռնարկված այլ միջոցներով անպայմանորեն կանխի մյուս համակատարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը:

Այս առումով, կարծում ենք, համակատարման ձևի պարագայում մի կատարողի կողմից կամովին հրաժարման դեպքում պետք է գործի հանցագործությունից կամովին հրաժարման ընդհանուր հիմքը,

---

<sup>212</sup> Այս մոտեցումը, սակայն, չի բխում հանցակիցների անհատական պատասխանատվության հայեցակարգից: Ուստի՝ տրամաբանական կլիներ այնպիսի օրենսդրական փոփոխությունների կատարումը, որը հնարավորություն կտար մյուս հանցակիցների արարքները որակել որպես համապատասխան **հանցագործության փորձ**՝ հանցափորձի փուլում կատարողի կամովին հրաժարվելու դեպքում: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Պ.Մկրտչյան, Չհաջողված հանցակցության որոշ հիմնահարցեր: ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 2017, 1.6 (23), հասարակական գիտություններ, էջեր 230-241:

որին համապատասխան՝ բավարար է միայն վերջինիս կողմից հանցագործության նախապատրաստությունը կամ հանցավորձը դադարեցնելը: Մինչդեռ հարկ է նկատել, որ հանցակիցների միջև այսպիսի տարբերակված մոտեցումը չի կարող արդարացված համարվել: Առավել ընդունելի է, ըստ մեզ, ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում տեղ գտած այն կարգավորումը, համաձայն որի՝ «Համակարարողը հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքում ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա պետական մարմիններին հաղորդելով կամ այլ միջոցներով կանխում է կարարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը»:

Հանցակցության առավել վտանգավոր ձևերի դեպքում (կազմակերպված հանցավոր խումբ, հանցավոր համագործակցություն) ևս հանցակցի կամովին հրաժարումն աչքի է ընկնում որոշակի առանձնահատկություններով: Մասնավորապես՝ **կազմակերպված հանցավոր խմբի կամ հանցավոր համագործակցության կազմում հանցակցի կամովին հրաժարումը** բնութագրվում է նրանով, որ այս դեպքում հանցակիցը ոչ միայն պետք է դադարեցնի իր մասնակցությունն այդ խմբավորումների կազմում, այլև, գործուն միջոցներ ձեռնարկելով, կանխի այն հանցագործությունները, որոնց նախապատրաստությանը կամ կատարմանն ինքն անմիջական մասնակցություն է ունեցել<sup>213</sup>:

Կազմակերպված հանցավոր խմբի կամ հանցավոր համագործակցության կազմում գտնվող հանցակցի կողմից հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքում մյուս հանցակիցների արարքները ենթակա են որակման որպես այդ հանցագործության նախապատրաստություն կամ փորձ՝ կախված նրանից, թե որ փուլում է տեղի ունեցել հանցակցի կամովին հրաժարումը:

Հարկ է նկատել նաև, որ հանցակցության առավել վտանգավոր ձևեր ստեղծելը, ղեկավարելը կամ դրանց մասնակցությունը՝ որպես ինքնուրույն հանցագործություններ, նախատեսված են ՀՀ քր. օր.-ի Հատուկ մասի ինքնուրույն հոդվածներով (222-րդ, 223-րդ և այլն):

---

<sup>213</sup> Ст'и Лучший учебник уголовного права (Общая часть). СПб.: ГКА. Санкт-Петербург, 2011, էջ 323:

Հանցակցության այս ձևերի ստեղծումից կամովին հրաժարում հնարավոր է միայն մինչև այն պահը, երբ դրանք, քրեական օրենքի իմաստով, կհամարվեն ստեղծված: Բանն այն է, որ ստեղծվելուց հետո դրանք ստեղծած, ղեկավարած կամ դրանցում մասնակցություն ունեցող անձի կողմից այդ կազմակերպությունների կատարվելիք հանցագործությունից կամովին հրաժարման պարագայում վերջինիս արարքում արդեն իսկ առկա կլինեն քր. օր.-ի 222-րդ, 223-րդ կամ համապատասխան այլ հոդվածներով նախատեսված հանցակազմի հատկանիշները: Ուստի՝ նման կազմավորման անդամի կողմից այդ հանցավոր խմբավորման իրականացվելիք մյուս հանցագործություններից հրաժարվելու պարագայում նրա արարքը ենթակա է որակման քր. օր.-ի 222-րդ կամ 223-րդ հոդվածներով:

Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ հանցակցության քննարկվող ձևերի պարագայում հանցագործությունից կամովին հրաժարումը գնահատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն ներդրումն ու քայլերը, որոնք տվյալ անձը ձեռնարկել է հանցավոր համագործակցության կայացման և դրա կողմից կոնկրետ հանցանքի կատարման պայմաններ ստեղծելու, ինչպես նաև հանցավոր մտադրության իրականացման համար: Մասնավորապես, եթե անձը, օրինակ, հանցավոր համագործակցության (բանդայի) կազմում որոշակի գործողություններ է ձեռնարկել, որոնք ուղղված են եղել որևէ հանցանքի կատարմանը, ապա վերջինիս կողմից միայն այդ կազմակերպություններին մասնակցությունը դադարեցնելը բավարար չէ հանցագործությունից կամովին հրաժարվելն արձանագրելու համար: Անհրաժեշտ է, որ վերջինս, ձեռնարկած միջոցներով կամ իրավապահ մարմիններին հայտնելու եղանակով, չեզոքացնի այդ խմբի ամբողջ հանցավոր գործունեությունը<sup>214</sup>:

Այսպիսով, ձևավորված հանցավոր համագործակցության մասնակցի կողմից իրավապահ մարմիններին հայտնելու միջոցով տվյալ կազմակերպության կողմից իրականացվող հանցագործությունները կանխելու դեպքում վերջինս, թեև, կազատվի այդ հանցավոր արարքների համար քրեական պատասխանատվությունից, սակայն նրա արարքում արդեն իսկ առկա կլինի ՀՀ քր. օր.-ի 223-րդ հոդվածի հանցակազմը: Պետք է նկատի ունենալ, սակայն, որ տվյալ

<sup>214</sup> Տե՛ս նույ տեղում, էջ 325:

անձի կողմից հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ ղեկավարելու կամ հանցավոր համագործակցությանը մասնակցելու մասին պետական մարմիններին կամովին հայտնելու և դրա գործունեության խափանմանը նպաստելու պայմաններում վերջինս պետք է ազատվի քրեական պատասխանատվությունից նաև ՀՀ քր. օր.-ի 223-րդ հոդվածով նախատեսված հանցագործության համար, բայց ոչ թե որպես կամովին հրաժարում, այլ՝ գործուն զղջալու հատուկ դրսևորում (քր. օր.-ի 223-րդ հոդվածի 4-րդ մաս), եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չպարունակեն:

Ասվածը ևս մեկ վկայությունն է այն բանի, որ ՀՀ քրեական օրենսգրքում անհրաժեշտ և բավարար չափով իրենց իրավական կարգավորումը չեն ստացել համակատարման դեպքում հանցակցի կամովին հրաժարման հարցերը: Հանցակցության տվյալ ձևի պարագայում հանցագործությունների ճշգրիտ որակումը մեծ մասամբ պայմանավորված է հենց քրեական օրենսգրքում նշված հարցերի նորմատիվ կարգավորմամբ: Հետևաբար, քանի դեռ այս հարցերը չեն կարգավորվել պոզիտիվ իրավունքում, նշված ոլորտում հանցագործությունների որակումը մնալու է ենթադրությունների և առաջարկությունների մակարդակում:

Ամփոփելով՝ նշենք, որ հանցագործությունից կամովին հրաժարումն ունի խիստ ընդգծված անհատական բնույթ և կարող է վերաբերել միայն այն հանցակցին, ով իր արարքներով անմիջականորեն խափանել է հանցագործության կատարումը: Եթե կատարողի կողմից հանցագործությունից կամովին հրաժարումն արդյունք է նրա վրա այլ հանցակցի ունեցած ազդեցության, ապա տվյալ հանցակիցը ևս պետք է համարվի կամովին հրաժարված և կատարողի հետ միասին ազատվի քրեական պատասխանատվությունից:

Եթե այլ հանցակցի (կազմակերպչի, դրդիչի, օժանդակողի) կողմից պետական մարմիններին հաղորդելը կամ ձեռնարկված այլ միջոցները չեն հանգեցրել կատարողի հանցագործությունը կանխելուն, ապա կամովին հրաժարումը բացառվում է, իսկ ձեռնարկված միջոցները պատիժ նշանակելիս կարող են հաշվի առնվել որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք (ՀՀ քր. օր.-ի 36-րդ հոդվածի 4-րդ մաս):

Արդի շրջանի քրեական իրավունքի տեսության մեջ առաջարկվում է օժանդակողի կողմից կամովին հրաժարում դիտել նաև այն դեպքերը, երբ վերջինս գործիք կամ միջոց է տրամադրել կատարողին կամ վերացրել է համապատասխան խոչընդոտները, սակայն հետագայում՝ մինչև կատարողի կողմից հանցանքի կատարումը, հետ է վերցրել տրամադրած գործիքը կամ միջոցը կամ վերականգնել վերացրած խոչընդոտները: Այս պարագայում առաջարկվում է անձին օժանդակության համար ազատել քրեական պատասխանատվությունից: Մինչդեռ, եթե նշված գործողությունները չեն հանգեցնում կատարողի հանցագործությունը կանխելուն, ապա անձը պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի հաստատապես հայտնի նախապատրաստվող հանցագործության մասին իմանալ չհայտնելու համար<sup>215</sup>:

### **5.9. Հատուկ սուբյեկտով (կատարողով) հանցագործություններում հանցակցության որակումը**

Հանցակցության քրեաիրավական գնահատականի բարդագույն խնդիրներից է հատուկ սուբյեկտով<sup>216</sup> հանցագործություններում համատեղ հանցավոր գործունեության որակումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածում նշված հանցագոր-*

---

<sup>215</sup> Նշված մոտեցումն իր արտահայտությունն է գտել ՀՀ քրեական նոր օրենսգրքի շրջանավոր նախագծում: Տե՛ս հետևյալ հղմամբ. <https://www.e-draft.am/projects/2115/about>:

<sup>216</sup> «Հատուկ սուբյեկտով հանցագործություն» եզրույթը լայն տարածում է գտել քրեական իրավունքի տեսության մեջ: Մինչդեռ, ինչպես արդարացիորեն նկատում է Ա.Ի. Ռարոզը, այդ անվանումն անճիշտ է, քանզի քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածները քրեական պատասխանատվություն են նախատեսում այն անձի համար, ով անմիջականորեն իրականացնում է հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված արարքը, այսինքն՝ կատարողի: Այդպիսի հանցագործություններում, որպես այլ հանցակից (կազմակերպիչ, դրդիչ, օժանդակող), կարող են հանդես գալ նաև այնպիսի անձինք, ովքեր չեն համապատասխանում տվյալ հանցագործության հատուկ սուբյեկտի հատկանիշներին (Տե՛ս Рагоз А.И. Квалификации преступлений по субъективным признакам. СПб.: Юрид. Центр Пресс, 2002, էջ 264):

ծության հատուկ սուբյեկտ չհամարվող անձը, ով մասնակցել է այդ հողվածով նախատեսված հանցանքի կատարմանը, տվյալ հանցագործության համար կարող է պատասխանատվություն կրել միայն որպես կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող: Քրեաիրավական այս դրույթի վերլուծությունից կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

1) այն հանցակիցը, ով չի բավարարում հատուկ սուբյեկտի հատկանիշներին, հատուկ սուբյեկտով հանցագործությունում չի կարող հանդես գալ ո՛չ որպես հանցագործության կատարող, ո՛չ էլ համակատարող,

2) այն հանցակցի արարքը, ով չի բավարարում հատուկ սուբյեկտի հատկանիշներին, ենթակա է որակման քրեական օրենսգրքի հատուկ մասի նույն հոդվածով, որով որակվում է կատարողի արարքը՝ հղում կատարելով քր. օր.-ի 38-րդ հոդվածին:

Նշված իրավադրույթի գործնական իրացումը որևէ դժվարություն չի հարուցում այն դեպքերում, երբ հանցակիցը, ով չի համապատասխանում հատուկ սուբյեկտի չափանիշներին, հատուկ սուբյեկտով հանցագործությանը մասնակցելիս իրականացնում է կազմակերպիչի, դրդիչի կամ օժանդակողի դերից բխող գործողություններ: Այսինքն՝ տվյալ անձի գործողությունները սահմանափակվում են միայն հատուկ սուբյեկտով հանցագործությունը կազմակերպելով, դրդելով կամ դրա կատարմանն օժանդակելով: Իրավիճակը, սակայն, բարդանում է, երբ հատուկ սուբյեկտի չափանիշներին չհամապատասխանող հանցակիցն անմիջականորեն մասնակցում է հանցագործության օբյեկտիվ կողմի կամ դրա մասի կատարմանը: Նկարագրված իրավիճակում, կարծես, ՀՀ քր. օր.-ի հոդված 39-ի 3-րդ մասը հակադրության մեջ է մտնում հոդված 38-ի հետ:

Քրեական իրավունքի գիտությունը և դատական պրակտիկան առաջարկում են այս հակադրության լուծման երկու տարբերակ:

**Առաջին տարբերակի** համաձայն՝ հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմի կատարմանն անմիջականորեն մասնակցած անձի արարքը, ով չի համապատասխանում հատուկ սուբյեկտի հատկանիշներին, ամեն դեպքում պետք է որակվի որպես տվյալ հանցագործության հանցակցություն, մասնավորապես՝ օժանդակություն:

Օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 358-րդ հոդվածը (պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը) դասվում է հատուկ սուբյեկտով հանցագործությունների շարքին, որոնց կատարող կարող է լինել միայն զինծառայողը: Միաժամանակ, տվյալ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտ (այդ թվում՝ համակատարող) կարող են համարվել միայն այն զինծառայողները, որոնք ստորադաս են պետին, որի նկատմամբ կատարել են բռնի գործողություններ: Արդյունքում՝ պետի նկատմամբ ստորադասի կողմից կիրառած բռնի գործողություններին համատեղ մասնակցած, սակայն տուժողի հետ ստորադասության հարաբերությունների մեջ չգտնվող զինծառայողների, ինչպես նաև քաղաքացիական անձանց արարքները չեն կարող որակվել մի խումբ անձանց կողմից կատարված: Այդ անձինք համարվում են պետին ստորադաս զինծառայողի հանցակիցներ: Ուստի, նրանց գործողությունները պետք է որակվեն քր. օր.-ի 358-րդ հոդվածով՝ հղում կատարելով նույն օրենսգրքի 38-րդ հոդվածին՝ չնայած նրանք փաստացի մասնակցել են հանցագործության օբյեկտիվ կողմի գործողություններին<sup>217</sup>:

Նույն կերպ է առաջարկվում որակել այն դեպքերը, երբ, օրինակ՝ ՀՀ քր. օր.-ի 359-րդ հոդվածով նախատեսված հանցագործության (զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում) տուժողի նկատմամբ ստորադասության հարաբերությունների մեջ չգտնվող զինծառայողների հետ համատեղ հանցագործության կատարմանը մասնակցում է տուժողի պետը կամ ստորադասը կամ քաղաքացիական անձ: Տվյալ իրավիճակներում կատարողի գործողությունները ենթակա են որակման քր. օր.-ի 359-րդ հոդվածով, իսկ պետի կամ ստորադասի, ինչպես նաև քաղաքացիական անձի գործողությունները՝ 359-րդ հոդվածով՝ հղում կատարելով նույն օրենսգրքի 38-րդ հոդվածին: Նման դեպքերում ևս հանցագործությունը չի կարող համարվել մի խումբ անձանց կողմից կատարված, քանի որ հանցա-

<sup>217</sup> Տե՛ս Ա.Գաբրույան, Ա.Հարությունյան, Գ.Կոստանյան, Դ.Ավետիսյան, Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ, գիտագործնական մեկնաբանություններ: Մաս 1: Երևան, 2012, էջեր 32-34:



գործության կատարող է համարվում հատուկ սուբյեկտը: Այդպիսին չհանդիսացող անձինք, կոնկրետ դեպքում՝ պետը, ստորադասը և քաղաքացիական անձը, կարող են հանդես գալ միայն հանցագործության հանցակիցների դերում և պատասխանատվություն կրել որպես կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող<sup>218</sup>:

Հարկ է նկատել, սակայն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի մեկնաբանության տեսանկյունից, հանցագործության այդպիսի որակումն անվիճելի չէ: Նշված հոդվածի, մասնավորապես, 5-րդ մասի համաձայն՝ օժանդակող է համարվում այն անձը, ով հանցագործությանն օժանդակել է խորհուրդներով, ցուցումներով, տեղեկատվություն կամ միջոցներ, գործիքներ տրամադրելով կամ խոչընդոտները վերացնելով, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է պարտակել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է ձեռք բերել կամ իրացնել այդպիսի առարկաները: Քրեական օրենսգրքի այս իրավադրույթի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ հանցագործության օբյեկտիվ կողմի կամ դրա մի մասի անմիջական կատարումը (կոնկրետ դեպքում՝ անձի նկատմամբ բռնություն գործադրելը) չի տեղավորվում օժանդակության թվարկված եղանակներից և ոչ մեկի շրջանակներում: Այդ արարքը չի պարունակում նաև հանցագործության դրոշմային կամ կազմակերպման հատկանիշներ: Ուստի՝ հատուկ սուբյեկտով հանցագործություններում հանցակցության որակման այս մոտեցումը չի կարող ընդունվել միանշանակորեն:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, Ս. Հովսեփյանի վերաբերյալ թիվ ԼԴ/0193/01/10 գործով անդրադառնալով ՀՀ քր. օր.-ի 205-րդ հոդվածով նախատեսված հանցագործության (հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելը) հատուկ սուբյեկտի հիմնախնդրին, արձանագրել է, որ որպես այդպիսին կարող են հանդես գալ այն անձինք, ովքեր համապատասխան իրավական ակտերով սահմանված կարգով պարտավոր են ապահովել հարկերի, տուրքերի կամ պարտադիր այլ վճարումների գանձման հիմք հանդիսացող փաստաթղթերի հավաստիությունը, այդ թվում՝ անձինք, ովքեր

<sup>218</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 52:

պարտավոր են հաստատել այդ փաստաթղթերը (օրինակ՝ անհատ ձեռնարկատերը, կազմակերպության ղեկավարը, գլխավոր (ավագ) կամ հաշվետվություն կազմող հաշվապահը), ինչպես նաև այն ֆիզիկական անձինք, ովքեր պարտավոր են հարկ վճարել: Բացի վերոնշյալ անձանցից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտ կարող են համարվել նաև այն անձինք, ովքեր ժամանակավորապես են իրականացնում ղեկավարի և գլխավոր (ավագ) հաշվապահի պարտականությունները:

Այլ կերպ ասած՝ հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ չվճարելու համար քրեական պատասխանատվության ենթակա սուբյեկտ են միայն այն անձինք, ովքեր իրավական ակտի ուժով կրում են հաշվետվությունը, հաշվարկը, հայտարարագիրը կամ հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթուղթն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնելու, ինչպես նաև նշված փաստաթղթերի հավաստիությունն ապահովելու պարտականություն: Ուստի, բոլոր այն դեպքերում, երբ գործի փաստական տվյալներով հաստատվում է, որ ՀՀ քր. օր.-ի 205-րդ հոդվածի իմաստով հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձը փաստացի այլ անձանց միջոցով իրականացրել է նշված հոդվածի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունները կամ հատուկ սուբյեկտի հետ միասին մասնակցել է հանցագործությանը, ապա *հաշվի առնելով նրա կողմից իրականացված գործողությունների բնույթը՝ օրենքով նախատեսված համապատասխան հատկանիշների առկայության դեպքում քրեական հետապնդման մարմինը կարող է քննարկել անձին որպես հանցագործության կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը*<sup>219</sup>:

Ինդրի լուծման **երկրորդ տարբերակը** հանգում է նրան, որ հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձի կողմից հատուկ սուբյեկտով հանցագործության անմիջական կատարումը պետք է որակվի քրեական օրենսգրքի ինքնուրույն հոդվածով, որի հատկանիշները փաստացի առկա են անձի արարքում՝ որպես կատարող: Այսինքն՝ այն հոդվածով, որով պատասխանատվություն է նախատեսվում

<sup>219</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի Ս.Հովսեփյանի վերաբերյալ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԼԴ/0193/01/10 գործով որոշումը:

նույն արարքն ընդհանուր սուբյեկտի կամ այնպիսի անձի կողմից կատարելու համար, որի հատկանիշներին համապատասխանում է տվյալ անձը: Այս մոտեցումը, սակայն, նույնպես ունի ոչ լիարժեք պահեր: Մասնավորապես, հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձի կողմից հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմի կատարումը ոչ բոլոր դեպքերում է, որ պարունակում է քրեական օրենսգրքի մեկ այլ հոդվածով նախատեսված ինքնուրույն հանցագործության հանցակազմի հատկանիշներ:

Հարց է առաջանում նաև՝ ինչպե՞ս պետք է որակվի հատուկ սուբյեկտ չհանդիսացող այն անձի արարքը, ով տվյալ հանցագործության սուբյեկտ հանդիսացող անձի հետ համատեղ անմիջականորեն մասնակցել է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմի (կամ դրա մի մասի) կատարմանը, և նրա արարքը չի պարունակում այդ հանցագործության ո՛չ դրդչության, ո՛չ օժանդակության, ո՛չ էլ, առավել ևս, կազմակերպչության հատկանիշներ:

Գործող քրեական օրենսգրքի իրավակարգավորումների պայմաններում վերը նկարագրված իրավիճակի իրավաչափ լուծումը, որը չի բերի *contra legem* (օրենքին հակառակ) կիրառման, տեսնում ենք որակման հետևյալ կանոններում.

1. Այն դեպքում, երբ հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձը, տվյալ հանցագործության սուբյեկտ հանդիսացող անձի հետ համատեղ կամ վերջինիս դրդմամբ, անմիջականորեն մասնակցում է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմի (կամ դրա մի մասի) կատարմանը, և նրա արարքը չի պարունակում այդ հանցագործության ո՛չ դրդչության, ո՛չ օժանդակության, ո՛չ էլ, առավել ևս, կազմակերպչության հատկանիշներ, *նրա արարքը ենթակա է որակման այն հոդվածով, որը փաստացի առկա է նրա արարքում*: Այլ կերպ ասած՝ այն հոդվածով, որով պատասխանատվություն է նախատեսում նույն արարքը ընդհանուր սուբյեկտի կողմից կատարելու համար, կամ այնպիսի անձի կողմից կատարելու համար, որի հատկանիշներին համապատասխանում է տվյալ անձի արարքը:

2. Այն դեպքում, երբ հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձը, տվյալ հանցագործության սուբյեկտ հանդիսացող անձի հետ համատեղ կամ վերջինիս դրդմամբ, անմիջականորեն մասնակցում է հա-

տուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմի (կամ դրա մի մասի) կատարմանը, և նրա արարքը չի պարունակում այդ հանցագործության ո՛չ դրդչության, ո՛չ օժանդակության, ո՛չ էլ, առավել ևս, կազմակերպչության հատկանիշներ, ինչպես նաև նրա փաստացի կատարածը չի բովանդակում քրեական օրենսգրքի որևէ այլ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, ապա *նրա արարքը ենթակա չէ որակման որպես հանցագործություն*:

Այս անտրամաբանական վիճակի լուծումը, թերևս, քրեական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելն է: Այսպես, օրինակ՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում, կարծես, տրամաբանական լուծում է տրվել այս հարցին: Մասնավորապես, Նախագծի 49-րդ հոդվածով սահմանվել է.

- Եթե հատուկ սուբյեկտ չհամարվող անձը հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմը կատարել է հատուկ սուբյեկտի դրդմամբ կամ նրա հետ համատեղ, ապա նա ենթակա է պատասխանատվության տվյալ հանցագործությանն օժանդակելու համար, եթե նրա արարքում այլ հանցակազմ չկա:
- Եթե հատուկ սուբյեկտ չհամարվող անձը կատարել է տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը հատուկ սուբյեկտի դրդմամբ կամ նրա հետ համատեղ, և նրա արարքում առկա է այլ հանցակազմ, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության միայն այն հանցագործության համար, որի հատկանիշներն առկա են նրա արարքում, եթե դրա համար ավելի խիստ պատիժ է նախատեսված:
- Եթե հատուկ սուբյեկտ չհամարվող անձը կատարել է տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը հատուկ սուբյեկտի դրդմամբ կամ նրա հետ համատեղ, և նրա արարքում առկա է այլ հանցակազմ, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության միայն հատուկ սուբյեկտով հանցագործությանն օժանդակելու համար, եթե հատուկ սուբյեկտով հանցագործության համար ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան այն հանցագործության համար, որի հատկանիշներն առկա են հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձի արարքում:
- Եթե հատուկ սուբյեկտ չհամարվող անձը կատարել է տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը հատուկ սուբյեկտի դրդմամբ

կամ նրա հետ համատեղ, և նրա արարքում առկա է այլ հատուկ սուբյեկտով հանցագործության հանցակազմ, որի սուբյեկտ է ինքը, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության միայն որպես այդ հանցագործության կատարող:

Այսպիսով, Նախագծի հեղինակները որակման կիրառելի կանոնն արդարացիորեն պայմանավորել են նաև ոչ հատուկ սուբյեկտի արարքում առկա հանցակազմերի հանրային վտանգավորության տարբերությամբ: Սակայն պետք է նկատել, որ վերոգրյալ ձևակերպումները ևս, ըստ մեզ, ունեն ճշգրտման և հստակեցման կարիք. Մասնավորապես.

1. «Դրդմամբ» եզրույթի օգտագործումն աննպատակահարմար է, քանզի համատեղ եզրույթն ամբողջությամբ բովանդակում է հանցակցության ձևերը:

2. Կարող է խնդիր առաջանալ որպես կազմակերպիչ հանդես եկող այն անձի արարքը որակելիս, ով նաև մասնակցում է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմի կատարմանը: Այդ կապակցությամբ հարց է առաջանում՝ արդյո՞ք նրա արարքը ևս պետք է որակվի որպես օժանդակություն: Տվյալ դեպքում, կարծում ենք, պարզապես անհրաժեշտ է նկատի ունենալ, որ, եթե հատուկ սուբյեկտով հանցագործությունը կազմակերպում կամ դրդում է հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձը, ով նաև մասնակցում է հանցագործության օբյեկտիվ կողմի կատարմանը, նրա արարքը որակվում է որպես տվյալ հանցագործության կազմակերպչություն կամ դրդչություն, այլ ոչ թե օժանդակություն:

3. Նախագիծն ուղղակիորեն չի ամրագրում հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձին հատուկ սուբյեկտով հանցագործությանը դրդած անձի արարքի քրեաիրավական գնահատականի հարցը, ով թեև անմիջականորեն չի մասնակցել հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմի կատարմանը, սակայն եղել է դրա սուբյեկտ: Թերևս Նախագծի համակարգային մեկնաբանությունից կարելի է եզրակացնել, որ տվյալ դեպքում հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձին հատուկ սուբյեկտով հանցագործությանը դրդած անձի (ով համապատասխանում է տվյալ հանցագործության սուբ-

յեկտի չափանիշներին) արարքը պետք է որակվի որպես հատուկ սուբյեկտով հանցագործության միջնորդավորված կատարում<sup>220</sup>:

Հարկ է նշել, սակայն, որ մինչև ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի ընդունումը կամ գործող օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելը հատուկ սուբյեկտով հանցագործություններում հանցակցության որակման վերոհիշյալ կանոններով առաջնորդվելը կհամարվի քրեական օրենքի *contra legem* (օրենքին հակառակ) կիրառում, ինչն անթույլատրելի է:

**Կազմակերպված հանցավոր խմբի և հանցավոր համագործակցության ձևերի պայմաններում հատուկ սուբյեկտով (կադրողով) հանցագործություններում** հանցակցության քրեաիրավական գնահատականը նույնպես աչքի է ընկնում իր առանձնահատկություններով: Այս կապակցությամբ ևս մասնագիտական գրականության մեջ առաջարկվում է որակման երկու մոտեցում:

Մի դեպքում, հանցակցության առավել վտանգավոր ձևերի՝ կազմակերպված հանցավոր խմբի կամ հանցավոր համագործակցության կազմում հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձի կողմից հատուկ սուբյեկտով հանցագործություն կատարելը, անկախ հանցագործությանը տվյալ հանցակցի մասնակցության բնույթից, առաջարկվում է որակել որպես համակատարում, առանց հղում կատարելու քր. օր.-ի Ընդհանուր մասի՝ հանցակցության ինստիտուտը կարգավորող հոդվածին: Այս մոտեցումը պաշտպանվում է որոշ գիտնականների կողմից, ինչպես նաև ՌԴ դատական պրակտիկայում՝ որոշակի հանցատեսակների վերաբերյալ գործերով: Մասնավորապես, ՌԴ Գերագույն դատարանի պլենումը «Կաշառքի և այլ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ դատական

---

<sup>220</sup> Այն դեպքում, երբ հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձի արարքը, համաձայն Նախագծի 49-րդ հոդվածի, որակվում է որպես տվյալ հանցանքի օժանդակություն, տվյալ մոտեցումը հակադրության մեջ է մտնում Նախագծի 46-րդ հոդվածի այն ձևակերպման հետ, ըստ որի՝ *հանցակցությունը բացակայում է հանցագործության միջնորդավորված կատարման դեպքում*, (...): Կարծում ենք, Նախագծի 46-րդ հոդվածի 2-րդ մասից պետք է հանվի այդ ձևակերպումը, կամ վերաշարադրվի այնպես, որ նկարագրված օրենսդրական հակասությունը վերանա:

պրակտիկայի մասին» 2013 թվականի հուլիսի 9-ի որոշմամբ արձանագրել է, որ կաշառք կամ առևտրային կաշառք ստանալու համար ստեղծված կազմակերպված խմբի կազմում կարող է ընդգրկվել նաև այնպիսի անձ, ով չի համապատասխանում տվյալ հանցագործությունների հատուկ սուբյեկտի հատկանիշներին: Կազմակերպված խմբի կողմից կաշառք կամ առևտրային կաշառք ստանալու դեպքերում բոլոր անդամների արարքները, ովքեր մասնակցել են այդ հանցագործությունների նախապատրաստությանը և կատարմանը, անկախ նրանից, թե ինչ գործառույթ են իրականացրել (կատարողի, կազմակերպչի, դրդիչի կամ օժանդակողի), ենթակա են որակման ՌԴ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով՝ առանց հղում կատարելու ՌԴ քրեական օրենսգրքի 33-րդ հոդվածին<sup>221</sup> (ինչը համապատասխանում է ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածին):

Այսպիսով՝ ՌԴ բարձր դատարանը սահմանել է, որ ՌԴ քր. օր.-ի 34-րդ հոդվածի 4-րդ մասը (որը տառացիորեն համապատասխանում է ՀՀ քր. օր.-ի 39-րդ հոդվածի 3-րդ մասին), չի տարածվում կազմակերպված խմբի կողմից կատարվող հատուկ սուբյեկտով կոռուպցիոն հանցագործությունների որակման վրա: Կազմակերպված խմբի բոլոր անդամները համարվում են կաշառք կամ առևտրային կաշառք ստանալու համակատարողներ՝ անկախ այն հանգամանքից, թե նրանք օժտված են եղել այդ հանցագործությունների հատուկ սուբյեկտի հատկանիշներով, թե՛ ոչ (այս դեպքում բավարար է, որ նրանցից առնվազն մեկը համապատասխանի հատուկ սուբյեկտի հատկանիշներին): ՌԴ Գերագույն դատարանի պլենումը նույնաբովանդակ դիրքորոշում է արտահայտել նաև բռնաբարությունների վերաբերյալ գործերով:

Երկրորդ մոտեցման համաձայն՝ կազմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության կազմում հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձի կողմից հատուկ սուբյեկտով հանցագործություն կատարելու դեպքում, նրա արարքը չի կարող որակվել որպես համակատարում, այլ՝ կախված հանցագործությանը հանցակցի մասնակ-

---

<sup>221</sup> Ст'а Постановление Пленума Верховного Суда РФ от 9 июля 2013 г. № 24 "О судебной практике по делам о взяточничестве и об иных коррупционных преступлениях:

ցության բնույթից, պետք է որակվի որպես այդ հանցագործության կազմակերպչություն, դրդչություն կամ օժանդակություն<sup>222</sup> (այդ է ուղղակի պահանջում ՀՀ քր. օր.-ի 39-րդ հոդվածի երրորդ մասը):

ՀՀ գործող քր. օր.-ի իրավակարգավորումների պայմաններում, կարծում ենք, առավել հիմնավոր է երկրորդ մոտեցումը:

***Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է առանձնացնել հանցակցությամբ կատարվող հանցագործությունների որակման հետևյալ կանոնները.***

1. Հանցակցությամբ կատարված արարքը որակելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ տեղի է ունեցել հանցավոր արարք, որի կատարմանը մասնակցել են քրեական պատասխանատվության տարիքի հասած, մեղսունակ, ֆիզիկական երկու կամ ավելի անձինք, ովքեր գործել են համատեղ, դիտավորյալ և կատարել են դիտավորյալ հանցագործություն:

2. Եթե հանցավորը հանցագործության օբյեկտիվ կողմի կատարմանը մասնակցում է տվյալ հանցագործության համար քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձի հետ համատեղ, ապա նրա արարքը պետք է որակվի որպես հանցանքը մի խումբ անձանց կողմից կատարելու փորձ, եթե նա չի գիտակցել մյուս մասնակցի քրեական պատասխանատվության ոչ ենթակա լինելը (եթե հանցակազմը պարունակում է այդպիսի ծանրացնող հատկանիշ) կամ տվյալ հանցագործության հասարակ տեսակ, եթե նա գիտակցել է մյուս մասնակցի քրեական պատասխանատվության ոչ ենթակա լինելը:

3. Եթե անձն իր արարքներով հանցագործության կատարմանը միանում է մինչև դրա ավարտը (խոստանում է պարտակել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված

---

<sup>222</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով): Դասագիրք բուհերի համար: Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջեր 267-268: Ինչպես նաև՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի Ս.Հովսեփյանի վերաբերյալ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԼԴ/0193/01/10 գործով որոշումը:



առարկաները, ինչպես նաև խոստանում է ձեռք բերել կամ իրացնել այդպիսի առարկաները), ապա այդ անձի արարքը պետք է որակել որպես հանցագործության հանցակցություն, տվյալ դեպքում՝ օժանդակության ձևով:

4. Եթե անձն իր արարքներով հանցանքի կատարմանը միանում է այդ հանցագործության ավարտից հետո (պարտակում է հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները, ինչպես նաև ձեռք է բերում կամ իրացնում է այդպիսի առարկաները և այլն), ապա այդ անձի արարքը պետք է որակել որպես առնչակցություն:

5. Միջնորդավորված կատարման դեպքում անձի արարքը որակվում է քրեական օրենսգրքի այն հոդվածով, որի կատարման համար վերջինս օգտագործել է այդ հոդվածով նախատեսված հանցագործության համար քրեական պատասխանատվության ոչ ենթակա անձի՝ առանց հղում պարունակելու ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածին:

6. Միջնորդի կողմից սահմանազանցում թույլ տալու դեպքում միջնորդավորված կատարողի արարքը որակվում է կա՛մ հանցագործության նախապատրաստություն (ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության դեպքում), կա՛մ հանցագործության փորձ, կա՛մ ավարտված հանցագործություն՝ կախված վերջինիս հանցավոր մտադրության իրականացման աստիճանից:

7. Կազմակերպված խումբ, հանցավոր համագործակցություն ստեղծած կամ դրանք ղեկավարած անձը ենթակա է պատասխանատվության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված դեպքերում կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ ղեկավարելու համար, ինչպես նաև դրանց կողմից կատարված բոլոր հանցանքների համար, եթե դրանք ընդգրկվել են նրա դիտավորությամբ: Այդ իսկ պատճառով ՀՀ քր. օր.-ի 162-րդ, 222-րդ, 223-րդ, 224-րդ հոդվածներով նախատեսված հանցավոր միավորումներ ստեղծած կամ ղեկավարած անձը պատասխանատվության է ենթակա որպես կատարող, և վերջինիս արարքը որակելիս ՀՀ քր.օր.-ի 38-րդ հոդվածին հղում չի կատարվում:

8. Եթե հանցավոր խումբ ստեղծելը կամ ղեկավարելը, որպես ինքնուրույն հանցագործություն, նախատեսված չէ քրեական օրենսգրքի Հատուկ մասում, և այդ խումբը դեռևս չի հասցրել այլ հանցանք կատարել, ապա նշված խումբը ստեղծած անձը ենթակա է պատասխանատվության համապատասխան հանցագործության նախապատրաստության համար:

9. Դրոշության օբյեկտիվ կողմը կարող է ձևավորել իդեալական համակցություն, երբ՝ ա) որպես դրոշության եղանակ օգտագործվում է բռնությունը, սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքը կամ կաշառք տալը, բ) դրոշիչը հանցագործության կատարմանն է ներգրավում տվյալ հանցագործության համար քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասի, գ) անձը կատարում է շորթում՝ դրանով իսկ դրոշելով գույքը տիրապետողին իրեն հանձնել երրորդ անձի գույքը, այսինքն՝ իրականացնել հափշտակություն:

10. Հանցագործություն կազմակերպելուն դրոշելը պետք է որակել որպես կազմակերպում, դրոշության դրոշելը՝ դրոշություն, իսկ օժանդակելուն դրոշելը՝ օժանդակություն:

11. Եթե մյուս հանցակիցները (կազմակերպիչը, դրոշիչը, օժանդակողը) միաժամանակ մասնակցում են հանցագործության օբյեկտիվ կողմի կատարմանը (հանդիսանում են համակատարողներ), ապա նրանց արարքները որակելիս ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածին հղում չի կատարվում (քր. օր.-ի 39-րդ հոդվածի 2-րդ մաս):

12. Եթե հանցագործության կազմակերպիչը միաժամանակ իրականացրել է դրոշիչի կամ (և) օժանդակողի դերից բխող գործողություններ, ապա վերջինիս մեղսագրվում է միայն հանցագործության կազմակերպչությունը, քանզի հանցագործության կազմակերպչությունն իր մեջ ներառում է ինչպես դրոշությունը, այնպես էլ օժանդակությունը:

13. Եթե անձը հանցանքը կատարելիս միաժամանակ կամ հաջորդաբար իրականացնում է ինչպես հանցագործության դրոշիչի, այնպես էլ օժանդակողի դերից բխող գործողություններ, ապա նրա արարքը որակելիս պետք է հղում կատարվի ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածի ինչպես 4-րդ, այնպես էլ 5-րդ մասերին:

14. Կատարողի արարքը որակվում է քրեական օրենսգրքի այն հոդվածով, որով պատասխանատվություն է նախատեսվում վերջինիս կողմից կատարված արարքի համար: Կազմակերպչի, դրդիչի և օժանդակողի արարքները որակվում են քրեական օրենսգրքի Հատուկ մասի այն հոդվածով, որով որակվում է կատարողի արարքը, միայն այս դեպքում հղում է կատարվում ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածին (քր. օր.-ի 39-րդ հոդվածի 2-րդ մաս):

15. Եթե հանցակիցներից մեկը չի հասել այն հանցագործության համար քրեական պատասխանատվության տարիքի, որի համար պատասխանատվության է ենթակա կատարողը, ապա նրա արարքը կարող է որակվել այն հանցագործության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածով, որի հատկանիշները փաստացի առկա են իր արարքում:

16. Եթե կատարողն իր կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չի հասցնում, և հանցավոր գործունեությունը խափանվում է հանցագործության նախապատասխանության փուլում, ապա մյուս հանցակիցների արարքները որակվում են կատարողի կողմից իրականացվող հանցագործության նախապատրաստություն: Այսինքն՝ մյուս հանցակիցների արարքները որակելիս հղում է կատարվում միայն ՀՀ քր. օր.-ի 35-րդ հոդվածին:

17. Եթե կատարողն իր կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չի հասցնում, և հանցավոր գործունեությունը խափանվում է հանցագործության փորձի փուլում, ապա մյուս հանցակիցների արարքները որակվում են կատարողի կողմից իրականացվող հանցագործության փորձի հանցակցություն: Այս դեպքում մյուս հանցակիցների արարքները որակելիս անհրաժեշտ է հղում կատարել ՀՀ քրեական օրենսգրքի ինչպես 34-րդ, այնպես էլ 38-րդ հոդվածներին (քր. օր.-ի հոդված 39-ի 4-րդ մաս):

18. Եթե հանցակցի որևէ տեսակի դրսևորում (կազմակերպչություն, դրդչություն, օժանդակություն) նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքով՝ որպես ինքնուրույն հանցագործություն, ապա անձի արարքը որակվում է ոչ թե հանցագործության հանցակցություն՝ հղում պարունակելով քր. օր.-ի 38-րդ հոդվածին, այլ տվյալ դրսևորման համար քրեական պատասխանատվություն նախատեսող առանձին հոդվածով:

19. Եթե Հատուկ մասի հոդվածում, որպես ծանրացնող հանգամանք, նախատեսված է հանցակցության որևէ ձև, ապա արարքը որակվում է այդ հոդվածի այն մասով (կետով), որով այդ ծանրացնող հանգամանքը նախատեսված է:

20. Եթե Հատուկ մասի հոդվածում, որպես ծանրացնող հանգամանք, նախատեսված չէ հանցակցության որևէ ձև, ապա այլ ծանրացնող հանգամանքների բացակայության դեպքում, անձանց արարքները պետք է որակել որպես այդ հանցագործության հասարակ տեսակ:

21. Եթե Հատուկ մասի հոդվածում, որպես ծանրացնող հանգամանք, նախատեսված է հանցակցության որևէ ձև, ապա հանցակցությունն առավել վտանգավոր ձևերով կատարելու դեպքում, արարքը պետք է որակել հոդվածի համապատասխան մասով և/կամ կետով:

22. Եթե Հատուկ մասի հոդվածում, որպես ծանրացնող հանգամանք, նախատեսված է հանցակցության որևէ կոնկրետ ձև, ապա հանցակցության նվազ վտանգավոր ձևերով հանցանքը կատարելու դեպքում, արարքը պետք է որակվի հիմնական հանցակազմով (որպես այդ հանցագործության հասարակ տեսակ):

23. Հանցավոր համագործակցության մեջ մտնող մյուս անձինք պատասխանատվություն են կրում այդ կազմակերպությանը մասնակցելու և այն հանցանքների համար, որոնց նախապատրաստությանը կամ կատարմանն իրենք մասնակցել են (<< քր. օր.-ի 41-րդ հոդվածի 5-րդ մաս): Եթե համագործակցության մասնակից-անդամը անմիջական մասնակցություն չի ունենում այդ համագործակցության կողմից կատարվող հանցանքների նախապատրաստությանը կամ կատարմանը, ապա նրա արարքը որակվում է միայն այդ կազմակերպությանը մասնակցելու համար պատասխանատվություն նախատեսող հոդվածով:

24. Անկախ հանցագործության կատարողի մեջ միասնական դիտավորության առկայությունից՝ երկու կամ ավելի հանցավոր դրվագների հանցակցությունը կարող է որակվել կա՛մ որպես շարունակվող հանցագործություն, կա՛մ հանցագործությունների համակցություն՝ կախված նրանից, թե այդ դրվագներին հանցակցելու (կազմակերպելու, օժանդակելու, դրդելու) անձի դիտավորությունը

եղել է միասնակա՞ն, թե՞ յուրաքանչյուր դեպքում ծագել է ինքնուրույն (առանձին):

25. Քանակական սահմանազանցման դեպքում, երբ կատարողը վնաս է հասցնում այն օբյեկտին, որը մյուս հանցակիցների հետ պայմանավորվածության համաձայն, ընդգրկված էր նրանց դիտավորությամբ, սակայն պատճառված վնասն ավելի մեծ է լինում, քան պայմանավորվածն էր, ապա կատարողի արարքը որակվում է նրա կողմից փաստացի կատարած հանցագործության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածով, իսկ մյուս հանցակիցներին՝ որպես իրենց դիտավորությամբ ընդգրկված հանցագործության հանցակցություն:

26. Քանակական սահմանազանցման դեպքում, երբ կատարողը վնաս է հասցնում այն օբյեկտին, որը մյուս հանցակիցների հետ պայմանավորվածության համաձայն, ընդգրկված էր նրանց դիտավորությամբ, սակայն մյուս հանցակիցների դիտավորությամբ ընդգրկված է լինում տվյալ հանցագործության հասարակ տեսակը, իսկ կատարողն իրականացնում է որակյալ հանգամանքով նկարագրված հանցագործությունը, ապա մյուս հանցակիցների արարքը որակվում է որպես մտադրված հանցագործության հասարակ տեսակ, իսկ կատարողին՝ որպես տվյալ հանցագործության որակյալ տեսակ:

27. Քանակական սահմանազանցման դեպքում, երբ կատարողը վնաս է հասցնում այն օբյեկտին, որը մյուս հանցակիցների հետ պայմանավորվածության համաձայն, ընդգրկված էր նրանց դիտավորությամբ, սակայն պայմանավորված հանցագործության փոխարեն կատարվում է դրան միաբնույթ հանցագործություն, ապա կատարողի արարքը որակվում է իր կողմից փաստացի կատարված հանցագործության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածով, իսկ մյուս հանցակիցների արարքը՝ որպես իրենց դիտավորությամբ ընդգրկված հանցագործության հանցակցություն:

28. Երբ կատարողը, թեև վնաս է հասցնում այն օբյեկտին, որը մյուս հանցակիցների հետ պայմանավորվածության համաձայն, ընդգրկված էր նրանց դիտավորությամբ, սակայն պատճառված

վնասն ավելի թեթև է լինում, քան պայմանավորվածն էր, առկա է չհաջողված հանցակցություն, իսկ մյուս հանցակիցների արարքները ենթակա են որակման որպես պայմանավորված վնասը պատճառելու նախապատրաստություն, իսկ կատարողին՝ փաստացի առաջացած հետևանքի պատճառում:

29. Կատարողի որակական սահմանզանցման դեպքում, մյուս հանցակիցների արարքը որակվում է որպես իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցագործության նախապատրաստություն: Մյուս հանցակիցների արարքը որակվում է որպես իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցագործություն, եթե կատարողը, թույլ տալով որակական սահմանազանցում, այնուամենայնիվ իրականացնում է մյուս հանցակիցների մտադրված հանցանքը:

30. Չհաջողված հանցակցության դեպքում, երբ կազմակերպչի, դրդիչի կամ օժանդակողի գործողությունները չեն հաջողվում իրենցից անկախ հանգամանքներով, ապա այդ անձանց պատասխանատվությունը վրա է հասնում համապատասխան հանցագործության նախապատրաստության համար (<< քր. օր.-ի 39-րդ հոդվածի 5-րդ մաս):

31. Եթե ընդհանուր հանցակցության ձևի պարագայում հանցագործությունից կամովին հրաժարվում է հանցակիցը (կազմակերպիչը, դրդիչը կամ օժանդակողը), ապա կատարողի արարքը որակվում է կա՛մ հանցագործության նախապատրաստություն, կա՛մ հանցափորձ՝ կախված նրանից, թե որ փուլում է տեղի ունեցել հանցակցի կամովին հրաժարումը: Կամովին չհրաժարված մյուս հանցակիցների արարքները պետք է որակվեն կա՛մ հանցագործության նախապատրաստություն, կա՛մ հանցափորձի հանցակցություն՝ կախված նրանց հանցավոր մտադրության իրականացման աստիճանից:

32. Եթե ընդհանուր հանցակցության ձևի պարագայում հանցագործությունից կամովին հրաժարվում է կատարողը, ապա, անկախ հանցագործության փուլից, մյուս հանցակիցների արարքը պետք է որակվի որպես հանցագործության նախապատրաստություն:

33. Քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածում նշված հանցագործության հատուկ սուբյեկտ չհամարվող անձը, ով մասնակցել է այդ հոդվածով նախատեսված հանցանքի կատարմանը,

տվյալ հանցագործության համար կարող է պատասխանատվություն կրել միայն որպես կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող (<< քր. օր.-ի 39-րդ հոդվածի 3-րդ մաս):

34. Այն դեպքում, երբ հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձը, տվյալ հանցագործության սուբյեկտ հանդիսացողի հետ համատեղ կամ վերջինիս դրդմամբ, անմիջականորեն մասնակցում է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմի (կամ դրա մի մասի) կատարմանը, և նրա արարքը չի պարունակում այդ հանցագործության ո՛չ դրդչության, ո՛չ օժանդակության, ո՛չ էլ, առավել ևս, կազմակերպչության հատկանիշներ, ապա նրա արարքը ենթակա է որակման այն հոդվածով, որը փաստացի առկա է նրա արարքում: Այլ կերպ ասած՝ այն հոդվածով, որը պատասխանատվություն է նախատեսում նույն արարքը ընդհանուր սուբյեկտի կողմից կատարելու համար, կամ այնպիսի անձի կողմից կատարելու համար, որի հատկանիշներին համապատասխանում է տվյալ անձի արարքը:

35. Այն դեպքում, երբ հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձը, տվյալ հանցագործության սուբյեկտ հանդիսացողի հետ համատեղ կամ վերջինիս դրդմամբ, անմիջականորեն մասնակցում է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմի (կամ դրա մի մասի) իրականացմանը, և նրա արարքը չի պարունակում այդ հանցագործության ո՛չ դրդչության, ո՛չ օժանդակության, ո՛չ էլ, առավել ևս, կազմակերպչության հատկանիշները, ինչպես նաև նրա փաստացի կատարածը չի բովանդակում քրեական օրենսգրքի որևէ այլ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, նրա արարքը ենթակա չէ որակման որպես հանցագործություն:

**SERGEY V. ARAKELYAN**

Doctor of Legal Sciences, Professor, Rector of the Academy of Justice,  
Professor of the YSU Department of Criminal Law

**PETIK V. MKRTCHYAN**

Head of the Unit of Organization of Scientific Research and Programmatic-  
Methodological Activities of the Academy of Justice

**PROBLEMS OF QUALIFICATION  
OF CRIMES**

**АРАКЕЛЯН СЕРГЕЙ ВАГАНОВИЧ**

доктор юридических наук, профессор, ректор Академии юстиции,  
профессор кафедры уголовного права ЕГУ

**МКРТЧЯН ПЕТИК ВАГАНОВИЧ**

руководитель отдела организации научно-исследовательских  
и программно-методических работ Академии юстиции

**ПРОБЛЕМЫ КВАЛИФИКАЦИИ  
ПРЕСТУПЛЕНИЙ**



**ACADEMY OF JUSTICE / АКАДЕМИЯ ЮСТИЦИИ**

**YEREVAN / ЕРЕВАН**

**2020**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

**ԱՌԱՔԵԼՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՎԱՀԱՆԻ**

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ԵՊՀ  
քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր

**ՄԿՐՏՉՅԱՆ ՊԵՏԻԿ ՎԱՀԱՆԻ**

Արդարադատության ակադեմիայի գիտահետազոտական և ծրագրամերթ-  
դական աշխատանքների կազմակերպման բաժնի ղեկավար

**ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՈՐԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Վերստուգող սրբագրիչ՝

**Ա. Մկրտիչյան**

Համակարգչային ձևավորում՝

**Վ. Աթոյան**

Կազմի ձևավորում՝

**Ն. Աբելեան**

ISBN 978-9939-9240-4-5



9 789939 924045

Հանձնվել է տպագրության 05.06. 2020 թ.:  
Տպագրությունը՝ օֆսեթ, ծավալը՝ 25 մամուլ, չափսը՝ 60x84/16:  
Տառատեսակը՝ GHEA Grapalat:  
Տպաքանակը՝ 150 օրինակ:

Տպագրված է Ա/Ձ «Հայկ Հոլստիյան» տպագրատանը:  
Հասցե՝ ք.Երևան, Կիևյան 18/6:  
Հեռախոս՝ +374(10)271122:  
Էլ.փոստ՝ haykprint@mail.ru